ԴԵՐԵՆԻԿ
ԵՄԻՐԶՅԱՆ

Վարդանանք

ԵՐԿՈՒ ԳՐՔՈՎ

Հայաստան
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1968

Ар 2
Դ 35

Նկարիչ՝ Ռ. Պ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

Խմբագրության՝ Ա. Ս. ՔԻՇՈՅԱՆ
Ս. Գ. ՊԱՀԱԿՅԱՆ

Дереник Карапетович Демирчян

Вардананк

Книга первая

7—3—3

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1968



Գիշերը խոժոռվել էր Տարոնի դաշտավայրի վրա։ Ամեն ինչ ընկղմել էր խավարի մեջ։ Միայն հեռուն ալիքավորված լեռներից դեպի վերև բացվում էր հանդիսավոր երկինքը տենգային աստղերով առլցուն։

Օդը ցուրտ էր, վաղ գարնանային։

Ինչպես մռայլ ուրվական, խավարի միջից նայում էր Աշտիշատի վանքը, և ըստ երևույթին ոչինչ բան չէր վրդովում նրա խորհրդավոր անդորրը։ Սառն-հովը սվսվում էր նրա պարիսպներից երկինք միտող անսաղարթ ծառերի ճյուղերի մեջ։

Սակայն վանքի անկենդան լռությունը երևութական էր։ Հանկարծ կարմիր մի լույս ցայտեց պարիսպների շրթունքներից և սկսեց պտտել վանքի խոժոռ պատերին և ծառերի կատարներին։ Լույսը դողաց և ճոճվելով վանքի պատերին՝ առաջ եկավ Ճոնչաց դարբասը, բացվեց և մարմի լույսը վերև բռնած դուրս եկավ մի տլործուն սրամորուք և կորովի վանական, կանգնեց մեկուսի և ճանապարհ տալով մի զորականի՝ լուսավորեց նրա ոտնատակի գետինը։ Զորականը, որ բավականին հասակավոր, ջլուտ, բարձրահասակ մի անձնավորություն էր՝ մտահոգ հայացքը գետնին՝ անցավ իրեն հետևող մի խումբ վանականների միջով և անխոս կանգնեց, անհամբեր սպասելով ինչ-որ մի բանի։ Նա շտկեց իր նուրբ ու պինդ գոտիկը, որից կախված էր ոսկեքանդակ երասանով սուրը և նայեց երկնքին։ Նրա ջլուտ, մկանուտ դեմքը խրոխտանում էր արծվային քթի հպարտ կորագծով և մռայլվում աջ այտին վերից վար գծված մի բարակ սպիով։

Այդ դեմքը՝ արևախանձ, քամահար, մոխրագույն՝ խոսում էր պատերազմներում և աստանդական կյանքով ապրող ոչ տանու մարդու մասին։ Ինչ-որ հնադարյան մարդու շունչ էր փչում նրա ջըլուտ արտաքինից և ներքին լարված հոգեկան մեծ ուժից։ Հազիվ նշմարելի բնական թախիծը, որ շատ ապրումներ կրածի հատկություն էր, և մոխրագույն, մինչև վիզը երկարացրած գանգուր մազերը՝ մեղմացնում էին այս երկաթե մարդու կարծրությունը։ Նա թողնում էր ավելի լռակյաց, քան խոսող և անգամ մտատանջ մարդու տպավորություն։ Զգացվում էր, որ նա միշտ միտում է, վճռում, գործում և գիտե համառել մինչև կռիվ։ Թեև բավականին հասակառած էր, բայց երկաթե մկաններն ու պիրկ կեցվածքը դրսևորում էին արտակարգ եռանդ։

Վանականների խումբը բաժանված էր երկու շարքի և բարև բռնած կանգնել էին նրա երկու կողմը։ Միայն նրանցից մեկը, երազող աչքերով և մոլեռանդ դեմքով մի հասուն երիտասարդ, որ վանական եղբայր էր, այսինքն՝ վանքում ապրող աշխարհական, վառվռուն, խանդավառ դեմքով, մոտեցավ ընդհուպ զորականին։

— Դեռ վաղորդյան ժամ չէ, տեր իմ,— ասաց նա պատկառոտ կարեկցանքով,— կհանգստանայիր և ապա կճանապարհվեիր։

Զորականը մեղմ նայեց նրան, չպատասխանեց։ Միայն անհամբեր շարժումով դարձավ նայեց դեպի գավիթը։

— Աճապարի՛ր, Արծվի՛,— ձայն տվեց ներսից մեկը։

Փոքր անց գավթի խորքում դուրս եկան նժույգների սմբակները։ Մի երիտասարդ զինվոր, որ ըստ երևույթին Արծվին էր, գավթից դուրս քաշեց նժույգները։ Վանականներն արագ ընկրկեցին ցատկող նժույգներից։ Զորականը հանգիստ մոտեցավ նրանցից մեկին, սանձը խլեց և ոտը դրեց ասպանդակին։ Արծվին օգնեց նրան նստելու և ապա ինքը դժվար պահելով իր ամեհի նժույգը՝ հանկարծ նարպկորեն թռավ նրա մեջքին։

Երիտասարդ վանական եղբայրը, որ անձկությամբ հետևում էր հասակավոր զորականին, խիստ մտահոգ խոսեց.

— Եվ որքա՞ն պիտի տևի այս արհավիրքը...

— Կտևի,— մռմռաց հասակավոր զորականը՝ կարծես ինքն իրեն և քմծիծաղով նայեց գետնին։ Հետո նշանակալից ավելացրեց,— դե՛ զորական ես, գիտես...

Հետո ավելի հարմար շտկվելով թամբի վրա՝ նայեց լույս տնող վանականին։ Սա արագ մոտեցավ նրան։

— Դուք երկուսդ թերևս վաղը ճանապարհվեիք Արտաշատ։

— Անխախտ, անշուշտ,— ասաց վանականը խելացի հայացքն ուղղելով զորականի հայացքին։

— Այնտեղ կան քաջ եղծողներ, սակայն... կհանդիպենք՝ կխոսենք.— շշարունակեց միտքը զորականը և ինչ-որ մի բան հիշողի պես դարձավ վանականին, տուր նայեց նրան և կրկին վերադարձավ նույն խոսքին.— պետք է կտրուկ խզել ամեն բան, իմաստասիրության տեղը չէ։

Վանականներն առաջ եկան և շրջապատեցին զորականին։ Սա դարձավ արդեն բոլորին.

— Հուսով եմ լավ իմացաք ինչ որ վճռեցինք։ Կրկնում եմ. չհարուցել հավատքի վիճաբանություն իրար մեջ և պարսից արքայի հետ։ Տեղը չէ իմաստասիրության։ Առավելապես դադարեցնել կալվածական վեճերը, մրցումը տիրագլխության նախարարության հետ։ Թողե՛ք երկպառակությունը։ Սկսեցեք քարոզը միաբանության։ Արհավիրքը վեր կացավ և սաստկացին...

Այս ասելով նա կշտամբանքով, թե տարակուսանքով նայեց վանականներին, որոնց աչքերը լցված էին անհուն տխրությամբ։

— Հրաժեշտ եմ տալիս ձեզ այդ հուսով։

— Հույսներս աստվա՛ծ,— ասացին վանականները։

Նրանցից մեկը՝ մի կորամեջք պղնձադեմ ծերունի՝ դողդողուն շրթունքներով սկսեց աղոթել. «Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս իմ...»։

Մյուսները երեսները խաչակնքեցին։

— Դե՛, ճանապա՛րհ,— խոսեց հասակավոր զորականը և նայեց վանականների կողմը,— բարյա՛վ մնաք։

— Ճանապարհդ ի բարի՛ն,— խմբով բարեմաղթեցին վանականները։

Զորականը բաց թողեց սանձը։ Նժույգը պտտվեց և սանձը ծամելով թռավ տեղից։ Զորականը սանձահարեց նրան և ստիպեց քայլքով գնալ։ Արծվին հետևեց։

Վանականները դեռ ջահի լույսով կանգնել նայում էին հեռացողներին։ Դեռ մի պահ կարմիր լույսը ողողում էր նրանց դեմքերն ու վանքի մռայլ պարիսպը։

Հեծյալները առաջ գնացին դեպի դաշտավայրը։

Քարքարոտ ճանապարհը քմահաճ գծերով իջնում էր դեպի հարթությունը։ Արևելքում երկինքը կանաչել սկսեց։ Լույսը բացվում էր։ Աստղերը գունատվեցին, և առարկաները շրջակայքում կերպարանք առան։ Այլևս հիմա հեծյալները դաշտավայրումն էին։ Առջևից գնացող հասակավոր զորականը չէր արթնանում իրեն զբաղեցնող ծանր մտածմունքից և ձիավարում էր մեքենաբար։ Նրա նժույգը աշխուժորեն ոստոստում էր։ Իսկ նրան հետևողը՝ Արծվին, հազիվ էր կարողանում զսպել իր նժույգը, որ սա առաջ չընկնի իր տիրոջ նժույգից։ Ամեհի նժույգը կտրատում էր իրեն, փոթորկում բաշը, աչքերը խելահեղ նայվածքով շրջում այս ու այն կողմ։ Արծվին, որ քաջ ձիավարող էր՝ ըստ երևույթին ջանում էր իր նժույգին ևս հարկադրել պահպանելու այն համեստ միջոցը, որ կար իր և իր տիրոջ միջև։ Բայց նժույգը չէր անսում։

Զորականը իր խռովահույզ մտքերի պաշարման մեջ անընդհատ խթանեց նժույգը։ Սա ցատկեց և թռավ։ Արծվիի նժույգը հենց դրան էր սպասում. թափ առավ ու կատաղի սլացքով մրրկեց առաջ։ Նրան զսպելն անկարելի եղավ, նա հակառակվեց և առաջ մղվեց մյուս նժույգից։ Վերջինս կարծես արթնացավ, նա ևս կատաղեց, և երկուսը իրար առաջ կտրելով սլացան մարմանդ արոտի վրայով։ Նժույգների այս մրցեցին սլացքը կարծես համապատասխան էր հասակավոր հեծյալի հոգեկան խռովքին։ Նա թեթևանալ էր ուզում ճնշող մտքերից, ժամ առաջ հասնել, լուծել կնճիռը և ազատվել մտատանջումից։ Իսկ Արծվին հոգեկան և մարմնական հաճույք ըզգաց։ Նա մի ճապուկ, բարեձև երիտասարդ էր, թեթև, բայց լիքը մարմնով, որից հսկայական ուժ էր առկայծում։ Սոսկալի հանդգնությունները կռիվներում սպիներ էին գծել նրա դեմքին։ Նրա խորազնող աչքերի մեջ միշտ մի անմար բարի հեգնական ժպիտ կար։

Նժույգների սլացքը երևի երկար կտևեր, եթե հասակավոր զորականը չզսպեր իրենը։ Նժույգը բաշը ցնցելով փորձեց չհնազանդել, բայց զորականի երկաթե բազուկները սանձերն այնպես պինդ քաշեցին, որ սա սանձահարվելով, մի փոքր մեղմեց ընթացքը։ Ավելի դժվար զսպվեց Արծվիի նժույգը։ Նա խենթացել էր այլևս, և ահա սկսեց պտտվել, ծառանալ, հեծյալին շպրտելու շարժումներ անել։ Բայց նա ևս զսպվեց ու սկսեց մանրաքայլ ծեծել գետինը կարկուտի պես առջևից նույն ընթացքով գնացող իր ընկերի նման։

Աջակողմյան դաշտից հեծյալներ երևացին։ Տեսնելով զորականին՝ նրանք կարճ ուղիով բարձրացան բլուրը և արագ եկան հավասարվելու նրան։ Առջևից գալիս էին մի խումբ կանայք, աղջիկներ և պատանիներ, որոնց առաջնորդում էր մի հասակավոր կին՝ շատ նման զորականին. թխադեմ, արծվաքիթ, բարակիրան, բարձրահասակ։ Նա հարուստ գիսակները ժապավենով կապել էր ճակատին ու ծոծրակին, մետաքսե գոտիով զգեստը հավաքել կապել էր մեջքին։ Նրա կողքից ձիավարում էր մի գեղեցիկ աղջիկ, հազիվ քսան տարեկան։

Նրանք մոտենալով սկսեցին վարգել։ Ահագին խումբը զինված էր նիզակներով, սրերով ու նետ-աղեղներով։ Բարակները վազում էին նրանց կողքից՝ լեզուները կախ գցած։ Երևում էր, որ նրանք վարազի որսից էին վերադառնում. խմբի հետևից եկող ուժեղ ձիերին բարձել էին երկու վարազ, որոնք ձիերի թափահարման հետ ցընցում էին իրենց կախ ընկած գլուխները և երախներից դուրս ընկած լեզուների ծայրերը։

Մոտեցողները ցեխաթաթավ էին ու փոշեկոռուս։ Թեև նրանց զգեստներն ու դիրքը մատնում էին ազնվական դասի պատկանելիությունը, բայց այդ ցեխի, փոշու և անկարգ արտաքինի տակից էլ երևում էր, որ իրենց լվացված ու տնական վիճակում էլ նրանք բավական հասարակաբարո և ոչ նրբակյաց կենցաղի և վարքի տեր էին։ Այն խստակյաց, նախնական դարերում, անգամ նախարարական հասարակության պայմաններում կանանց զինվելը արտասովոր բան չէր, այլ շատ բնական։ Ոչ միայն շինական, այլև ազնվական կանայք շատ զինավարժ էին՝ մանկուց մասնակցելով վտանգավոր որսերի և անգամ կռիվների Հայաստանի մի քանի բերդերում տեղավորված պարսից վերակացու զորքերի դեմ, որ հաճախ ասպատակում էին երկիրը։

Մոտենալիս նրանք դանդաղեցրին վարգը և եկան քայլով։ Նրանց նայելով՝ զորականը խիստ եղանակով և մի փոքր քննելով դեմքերը՝ հարցրեց.

— Ինչո՞ւ առավոտ վերադարձաք։

— Շտապեցինք այսօրվա զորախաղին, հայրիկ,— պատասխանեց հասակավորը ոչ անկեղծորեն։

— Հը՞մ,—արեց տխուր և դառն քմծիծաղով զորականը, իրեն մտահոգող լուրերին չվերագրելով որսի գնացածների տարաժամ

վերադարձը։ Նա հիանալով նայեց աղջկան։ Նրա վայրի դեղեցկությունը, հեծյալի կեցվածքը, որ մարտիկի տեսք էր հաղորդում Նրան և ցույց էր տալիս, որ նա այնքան քնքուշ չէ, որ չկարենա մարտ մտնել, մեղմացրեց զորականի մռայլ տրամադրությունը։

— Վարազներին ո՞վ է խոցել,— հարցրեց զորականը։

— Բոլորս միասին խոցեցինք, Սպարապետ հայրիկ,— ասաց աղջիկը պարզ ու ազատ,— առաջ ես խոցեցի, երբ նա եկավ վրաս, բայց բոլորը հասան, վերջացրին, ազատվեցի։

— Հայրիկ, հոգնա՞ծ ես,— հարցրեց հասակավոր կինը՝ մտահոգ նայելով հորը։

— Ո՛չ,— մռայլ պատասխանեց զորականը, կրկին անցնելով իրեն տիրող վատ տրամադրության և ցույց չտվեց ավելի խոսելու ցանկություն։

Սակայն որսորդները տարօրեն վիճակի մեջ էին։ Նախ բոլորը շատ ավելի ցեխոտված էին, քան լինում է նման որսերի ժամանակ։ Աղջկա թևին լերդացած արյուն կար, իսկ այտին արյան մի շերտ։ Պատանիները բավական զզզված էին, ոմանք կոտրած նիզակներ էին կախել թամբից և կրում էին պարսկական նիզակներ և կրկնակի սրեր ունեին։ Զորականի աչքից չվրիպեց այդ. նա դանդաղեցրեց նժույգի ընթացքը և խստորեն հարցրեց իր դստերը.

— Ի՞նչ է պատահել...

Կարծես նոր հանդիպեցին և չէին խոսել դեռ բոլորովին։ Նրանից ծածկել անկարելի էր։

Հասակավոր տիկինը շփոթվեց և վախեցավ.

— Ավազակներ հարձակվեցին գիշերս...

— Ո՞ր աշխարհից...

— Պարսից վերակացու զորքի զինվորներն էին, հայրիկ։ Ինը, տասը հոգի. երևի գնում էին Զարեհավան... ուզում էին առևանգել,— նշանացի ցույց տվեց դեռատի աղջկան,— երկուսը սպանվեցին, մյուսները փախան։ Պատանիները լավ կռվեցին...

Զորականը կրկին քննող հայացքը շրջեց բոլորի վրա, մանավանդ պատանիների, որ կաս-կարմիր կտրած, շփոթված, գլուխները կախել էին։

— Մինչև զգուշացրի՝ սա հարձակվեց զինվորներից մեկի վրա և քիչ մնաց խոցվեր. նիզակը անցավ թևքի մոտով, ճանկռոտեց մի փոքր...

Աղջիկը սաստիկ ամաչելով չգիտեր ուր նայեր, սակայն զորականը անսպասելիորեն ընդհատեց իր հարցուփորձը և գլուխը թափ տալով մռայլ քշեց նժույգը։

Գնացին։

Զորականը կարծես դրանով էլ վերջացրեց իր հետաքննությունը։ Նա չխոսեց այլևս։ Հասակավոր տիկինը մտահոգ լռությամբ գնաց նրա կողքից՝ չսպասելով այլևս նոր զրույցի։ Հասկացավ, որ իր հայրը զբաղված է շատ ծանրակշիռ գործով։ Չփորձեց խոսել։

Մի առժամ ձիավարեցին միասին։ Զորականը կամեցավ ազատվել.

— Դուք առա՛ջ ընկեք։

Աղջիկը հասկացավ հոր միտքը և խթեց իր նժույգը։ Մյուսները հետևեցին նրան և արշավեցին։ Մի փոքր հոգնած վարգով նրանք առաջ ընկան։ Հեռանալիս նոր նկատվեց պատանիներից մեկի ծոծրակին փաթաթած լաթը, որ արյունոտ էր։

— «Աշխատել են կարգին»,— քմծիծաղով մտածեց զորականը։

Նրանք բարձրանում էին մի բլրակով, որի կողերին կանգնած էր ամրոցը։ Փրփրակալած նժույգներն սկսեցին քայլերով բարձրանալ։

Զորականը կիսաձայն ինչ-որ բան շշնջաց ինքն իրեն։ Արծվին նայեց նրան և ապա դեպի ամրոցը։ Այնտեղ արտակարգ շարժում կար։ Դարբասի մոտ նժույգներ էին կանգնել, որ թամբերից չէին ազատված։ Իսկ ամրոցի մի կողմում իրենց նժույգների սանձերը բռնած՝ անկարգ, բայց լարված կանգնել էր հեծյալների ստվար մի բազմություն։

Ամրոցի կողմից մի հեծյալ մրրկելով իր ձին՝ սլացավ դեպի զորականը։ Սա շտկվեց թամբի վրա, անհամբեր նայեց ձիավարողին և ինքն իրեն հարց տվեց.

— Հա՛, դարձյա՞լ նոր բան...

Հեծյալն ուժգին թափով հասավ և կանգնեց զորականի առջև։

— Հազարապետն է և Արծրունյաց, Մոկաց, Ռշտունյաց տերերը։

— Ե՞րբ են եկել,— հարցրեց զորականը մռայլ հանգստությամբ։

— Պահ մի առաջ, տեր իմ։

Զորականը նայեց հեծյալների խուռն բազմությանը։

— Իսկ նրանք ինչո՞ւ են թողել վարժանքը։

— Սեպուհները լուրն իմանալով՝ եկան ամրոց և նրանց թողին։

Զորականը իր թիկնապահի հետ մտավ ամրոց։ Բակում խռնվել էին սեպուհները և իրար գլխի հավաքված ինչ-որ տաք խոսքի մեջ էին։ Երբ եկվորները մտան բակը՝ նրանք անմիջապես թողին իրենց խմբերը և խոր գլուխ տալով զորականին՝ մոտեցան նրան ու շրջապատեցին։ Սա ողջունեց նրանց հազիվ լսելի ձայնով։ Սեպուհները սպասեցին, որ եկվորը բան ասի նրանց նոր լուրի մասին։ Բայց զորականը, որ վանքից սկսած լռությամբ էր կաշկանդված՝ շարունակեց մնալ միևնույն վիճակում։ Երբ իջավ նժույգից՝ թեթև նայեց սեպուհներին և մեղմաձայն կշտամբեց.

— Իսկ վարժանքն ինչո՞ւ եք թողել, գնացեք վարժանքի, ես կկանչեմ ձեզ։

Սեպուհները ցրվեցին, իսկ զորականը մտավ օթևան։ Նրան դիմավորող սենեկապետը խոր գլուխ տվեց օթևանի շեմքին և ասաց.

— Սրահում սպասում են։

Զորականը մտավ սրահը։ Այնտեղ նստած էին չորս հոգի։ Դրանցից մեկը Ամատունյաց Վահան նախարարն էր, Արշակունյաց Հայաստանի վերջին հազարապետը, որին պաշտոնից զրկել էր տվել Դենշապուհ պարսիկը, որ այս պահին եկել էր Հայաստան աշխարհագիր և հարկագիր անելու։ Դա շատ առաջացած հասակի, փխրուն գիրությամբ լեցուն, բարեդեմ ծերունի էր, մեծ շագանակագույն աչքերը խոշոր ակնախոռոչներում՝ ցցուն, սև հոնքերի տակ հանգիստ տեղավորված։ Մյուսը Մոկաց Արտակ նախարարն էր, բարեկազմ երիտասարդ՝ խոհուն, թախծոտ աչքերով, նուրբ սևասաթ հոնքերով։ Թեթև աղվամազ մորուքը նուրբ ժապավենի պես եզրում էր նրա կզակը։

Նրա կողքին ծուլորեն ընկողմանել էր Ռշտունյաց Արտակ նախարարը գունդուկծիկ մի արարած, ուռած դեմքով և ծուլամիտ հայացքով։ Վերջապես չորրորդը՝ բարձրահասակ, լիքը, բայց ոսկրոտ, հիսունի մոտ մի զորական նախարար էր՝ Արծրունյաց տեր Ներշապուհը, ծաղկատար, խիստ կարմիր այտերով և կապույտ աչքերով։ Հյուրերը լուռ նստած էին բարձերի վրա։

Զորականը կանգ առավ շեմքին և ողջունեց։ Հյուրերը կանգնեցին և ապա մեկ-մեկ առաջ եկան զորականի մոտ և ողջագուրվեցին շատ ջերմեռանդ զգացմունքով։ Այս լռությունը և հանդիպման բոլոր կենտրոնացած շարժումները վկայում էին, որ բոլորը տոգորված էին վերահաս մի մեծ արհավիրքի բարձր տրամադրությամբ։

Զորականը հանեց սաղավարտը, տվեց իր հետևից եկող սենեկապետին, հանձնեց նաև սուրը։ Նախարարները մեծ պատկառանքով ճանապարհ բաց արին և առաջնորդեցին նրան դեպի սենյակի դիմացի պատի կրականոցի կողքին դրած մի հատուկ բարձր։ Նա նստեց։

Նախարարները նստեցին նրանից հետո։ Բոլորն սպասեցին, որ նա խոսի.

— Ստացած եք լուրն անշուշտ,— խոսեց նա հանգիստ և ինքնավստահ շեշտով,— արքայի հրովարտակը ուղղված է հոգևոր տիրոջը և մեզ։ Կամ պատասխան տալ մի առ մի, կամ ներկայանալ արքունի Դուռը, իրեն։ Հրովարտակի պատճենն ուղարկել էր հոգևոր տերը։ Ստացա Աշտիշատում։ Դուք ինչպե՞ս իմացաք։

— Սուրհանդակդ հայտնեց,— ասաց Հազարապետը։

Տիրեց լռություն։ Բոլորն իրար էին սպասում, և ամեն մեկն իր մեջ խորհելով դեռ չէր կարողանում որոշել, թե ինչից սկսի։

— Մտահոգիչ է,— գլուխը թափահարեց Վահան Ամատունին հառաչանքի ձայնով և նայեց զորականի աչքերին.— ի՞նչ պիտի լինի մեր պատասխանը կամ ինչ՝ մեր Տիզբոն գնալը։ Մտահոգիչ է։

— Մտահոգիչ է,— հաստատեց զորականը։

Ներշապուհ Արծրունին, որի ոչ հոգեկան կազմը և ոչ մարմնականը հարմարվում էր այս ճնշված ու զուսպ տրամախոսության՝ տարակուսված ժպիտով դիմեց զորականին.

— Տե՛ր Մամիկոնեից, մի՞թե մենք հենց լսելիս կընդունենք զրադաշտական կրոնը՝ գամ վեր կկենանք, կգնանք առ ոտս արյաց արքային հանձնվելու...

Նրա դեղնակարմիր մորուքի մեջ կորած ծաղկատար այտերը ծփվող ջրի պես եռացին, և նա շարունակեց քթի տակ մմռալ։

Մոկաց նախարարը փայլուն սև սաթի հոնքերը կնճռեց քթարմատի մոտ և այնպես խոսեց՝ կարծես բարձր մտածում էր ինքն իրեն։ Նա խոսեց հանդարտ և մի փոքր կանացի, մեղմ.

— Ես, տյարք, մտահոգ եմ և տարակուսանքի մեջ։ Իրոք՝ ի՞նչ

պիտի լինի մեր պատասխանը և որպիսի՞ պատասխանի համաձայն կլինի մեզ մոտ մարզպանը։ Մենք՝ մենք։ Բայց երկրի անմիջական պատասխանատուն արյաց արքայի առաջ մարզպանն է։ Երկպառակություն կընկնի մեջներս։ Սա է դժվարինը։

Մամիկոնյան նախարարը արագ ու կողքանց զննեց խոստղին։ Նորից լռեցին։

Հազարապետը մտահոգ շուրջն էր նայում և զննում կարծես. մերթ կրականոցը, որի մեջ հանգում էին խանձողները, մերթ պատերի մորթիները, մերթ հատակին ճապաղած վագրենուն, բազմաստեղյան աշտանակները, որոնց բոլորակ ափսեներում սևացել էր ողջ գիշերը յուղի մեջ թաթախված պատրույգը։ Պատի մեջ խոր ընկած գրադարակից նրան էին նայում փղոսկրյա կազմով, ոսկեհուռ և ակնազարդ ձեռագիր մատյանները։ Նայում էր նա և չէր տեսնում։ Նա անհանգիստ էր։ Չնայած իր շատ առաջացած ծերության՝ դեռ նա աշխույժ մտքի ու եռանդի տեր էր։

— Ի՞նչ ես խորհում,— սթափվելով դարձավ նա Վարդանին,— լինելիքը կլինի, կկատարվի։ Փախչել չենք կարող։ Պետք է պատասխանենք նամակին կամ գնանք Տիզբոն։

Վարդանը լռեց և մնաց մտախոհ ու ինքնամփոփ հայացքը հատակին։ Նա մտածում էր դեռ։

— Կլինի թե չի լինի, կարող ենք թե չենք կարող — մի բան պարզ է. մի բան անհնարին է,— բորբոքվեց տաքարյուն Արծրունյաց նախարարը։ Ո՞վ կընդունի զրադաշտի կրոնը...

— Է՛, ոչ ո՛ք, տեր Արծրունյաց,— մի փոքր ձայնը բարձրացրեց Մոկաց նախարարը,— բայց դու ինձ ասա, ի՞նչ վճիռ կընդունի մարզպանը, ահա՛ բուն հարցմունքը։

Վարդանը սթափվեց։

— Ահա՛ բուն հարցմունքը,— եռանդուն շարժումով դարձավ նա նախարարներին,— Հազկերտը գտավ պատեհ ժամը։ Հաղթել է Բյուզանդիային, հաղթում է հոներին, դիմացը չկա ուժեղ տերություն. դիմացը մենք ենք, հիմա նա կշռքի կրծքներիս։

— Այո, տեր Արծրունյաց, կլինի թե չի լինի, կարող ենք թե չենք կարող, բայց գնում ենք դեպի մեծ արյունահեղություն։ Առանց արյան չենք պրծնի,— ասաց Մոկաց տերը,— ի՞նչ վճիռ կընդունի մարզպանը, ի՞նչ դիրք կբռնեն նախարարները։ Այստեղ միաբանություն է պետք։ Կլինե՞նք միաբան։

Ռշտունյաց նախարարը, որ աչքերը քնեած, անխոս ականջ էր դնում՝ կարծես դժվարանալով ըմբռնել նորօրինակ իրադրությունը՝ միայն մի խոսք ասաց.

— Ինչո՞ւ ենք անձներս դնում հոգսերի մեջ... Հազկերտի պատասխանը թող տա կաթողիկոսը. նա մեր կալվածներով ուռճացել, ձգտում է իշխանության։ Նախարարներիս համար ի՞նչ է մի կրոնական վեճ։

Վարդանը անբարեհաճ հայացքը գցեց հատակին։ Մյուսները լարված սպասեցին։

— Նրանք նե՞ղն են,— շարունակեց Ռշտունյաց նախարարը,— նրանք կկռվեն իրենց գործի համար, կջանան մեզ ևս կռվեցնել։ Բայց մի՞թե հոգևորականությունը մեր արյունով է կամենում հաղթել և միտել նորանոր կալվածների, ինչպես և տիրագլխության։ Մեր գործը չէ հոգևոր դասի համար արյուն թափելը։ Մեր արյունը մեզ էլ հերիք չի անում արդեն...

— Տեր Ռշտունյաց,— զուսպ, բայց հանդիմանական ձայնով խոսեց Վարդանը,— ժամ չէ վեճի և դժգոհության՝ հոգևոր դասի հետ, Հազկերտին տրվելիք պատասխանը միայն հոգևորների գործը չէ։

Եվ Վարդանը շտապեց փակել անախորժ վեճը։

— Վերջացնենք, տյարք։ Միացնե՛նք հոգևորականությունն ու նախարարությունը և միասին տանք պատասխան Հազկերտին։ Ժամանակը տագնապալից դառավ...

Վարդանը խոսեց հաստատուն և պարզ եղանակով, առանց հարկադրական շեշտի, բայց նրա ձայնի մեջ զգացվում էր իր կամքը թելադրողի և ղեկավարի մետաղային կարծրությունը։

Սակայն Վարդանը Ռշտունյաց նախարարի խոսքերում տեսավ իր գործերի մի թաքուցյալ հակառակորդ, որին պետք էր համոզել հետո։ «Սա մենակ չի լինի. կլինեն և այլ հակառակորդներ»,— մտածեց նա, մռայլվեց, բայց և զսպեց իրեն։ Ապա վճռական շարժումով դարձավ նախարարներին.

— Հարկ է շտապ ճանապարհվել Արտաշատ։

— Հարկ է,— շեշտեց Հազարապետը,— և աստված հասնի մեզ,— մրմնջաց և հառաչելով վեր կացավ գնաց դեպի պատուհանը։

Վեր կացան նաև մյուսները։

***

Նոր էր Վարդանը նախարարների հետ սենյակից դուրս գալիս, որ միջանցքում նրա դեմ եկավ մի զառամյալ կին եռանդուն դեմքով և կորովի շարժումներով։ Դա Վարդանի մայրն էր, Մեծ Տիկինը։ Նա հուզված էր և դողում էր։ Նիհար ձեռքերը տատասկների պես օդում կարկառած՝ նա եկավ դեպի Վարդանը և շարագույժ ձայնով, որ գալիս էր կրծքի խորքից, գոչեց.

— Հայրենին մահու վտա՞նգն է... Ճակատի՞դ էր գրված զավա՞կս...

Վարդանը փութկոտ բռնեց նրա դողդոջուն ձեռքը և ջերմորեն համբուրեց։

— Հանգի՛ստ, մայր իմ,— մրմնջաց նա գորովագին ու տխուր ժպիտով։

Մեծ Տիկինը առաջ ընկավ և Վարդանի ու նախարարների հետ դուրս եկավ քարե պատշգամ։ Բակում հավաքված էին ամրոցի բնակիչները, սեպուհներից ոմանք, որ գործ չունեին դաշտի մարզանքներում, և այլ զինվորներ։

Մեծ Տիկինը երեսը խաչակնքեց։ Նա այլայլվել խստացել էր ինչպես այն աշխարհից վերադարձած մի զայրալից ուրվական։ Նրա աչքերը նայում էին կարծես ոչ մարդկանց, այլ նրանց միջով ինչոր հեռու խորհրդավոր աշխարհ, ուր այդ պահին կատարվում էին ամենաքստմնելի եղեռնագործություններ։ Նա սարսափելի էր և անբնական երկյուղով համակեց հավաքվածներին, երբ իր արծաթե հոնքերի արանքներից աչքերը պտպղացներով ցասումնալի գոչեց.

— Շապուհը դարձվորե՞լ շիրմից՝ գալիս է Հայոց աշխարհի արմա՞տը հանի։ Խափանեցե՞ք սատանային, պաշտպանեցե՞ք Հայրենին։ Ուխտեցե՞ք։

— Ուխտո՛ւմ ենք, տիկին,— ասաց Վահան Ամատունին բոլորի տեղ։

Ամբողջ բակը լռեց։ Թվում էր, թե գերեզմանից վեր է կացել Մամիկոնեից մի որևէ նախնի և եկել է երդում ընդունելու, որ ոչ ոք չի դավաճանի Մամիկոնեից ավանդություններին։

Եվ ոչ ոք չհասկացավ, թե ինչպես այդ հասարակ, աննշան առավոտը դառավ հանդիսավոր մի ժամ, նոր բարձր ներշնչումով տոգորված։ Մարդիկ լավ չէին պատկերացնում, թե ինչ է այն նոր

արտասովոր դեպքը, որ անհանգստացրել է այսօր ամրոցի բնակիչներին։ Դեռ նրանց չէր էլ ասված հանգամանորեն, թե ինչ է իսկապես պատահել։ Բայց Վարդանի գիշերային երթը, նախարարների մտահոգ դեմքերը, անորոշ փսփսուկները բոլորին ազդել էին, և բնազդաբար նրանց մտքերը գնում էին դեպի արյաց արքան, որից միշտ չարիք էր գալիս։ Բայց ի՞նչ էր այդ նոր չարիքը... Ամրոցի բնակիչներին ազդեց Վարդանի մոր այլայլումը։ Նրա մոլեռանդ խոսքերը, Վարդանի մռայլ, անխոս դիրքը։

Ապա Մեծ Տիկինը տագնապալի, դողդոջուն ձայնով դարձավ Վարդանին։

— Զավակդ Հունաստան մնաց, կանչի՛ր թող գա զինվորյալ դրվի, հե՛րիք է ուսումը։

— Զոհրակը ինքը կգա, մա՛յր,— հեզ ու խոնարհ ասաց Վարդանը,— հանգի՛ստ եղիր։

Աղախինը Մեծ Տիկնոջ թևն ընկավ և տարավ օթևան։

Ամրոցը կորցրեց իր անդորրը։ Ամենքը լարվեցին՝ սպասելով մի մեծ աղետի։

Վարդանը նախարարների հետ դուրս եկավ ամրոցից և գնաց մարզանքների հրապարակը։ Այնտեղ ձիարշավ էին կատարում։ Սեպուհները, բոլորն էլ երիտասարդ, մոռացել էին արտակարգ դեպքը և տարվել էին իրենց զինախաղով։ Զինվորները զույգ-զույգ, խմբերով կամ մենակ սլանում էին տեղից տեղ, նետեր արձակում թիրախներին, նիզակներով խոցում օդի մեջ երևակայական թշնամիներին։ Ոմանք էլ իրար դեմ սրամարտ էին մղում՝ վահանների հետևն պաշտպանելով գլուխները։ Հրապարակը թնդում էր երիտասարդ ձայներից և նժույգների ոտնատրոփից։

Հանկարծ մի սուր ծղրտոց ճեղքեց օդը և ծածկեց այդ ընդհանուր աղաղակը։ Զորս կողմ լռեցին։ Լսվեցին ձայներ. «Ի՞նչ է, ի՞նչ է»։ Բոլորը նժույգները քշեցին դեպի մի խումբ մենամարտողները։ Հինգ-հինգ հոգի իրար դեմ ելած՝ սրամարտ էին մղում։ Նրանք կատաղել էին։ Արդեն նրանցից մի քանիսի դեմքից արյուն էր հոսում։ Սկսելով սրամարտը իբրև խաղ՝ նրանք ընկել էին հափշտակման մեջ և հարվածներն ուղղում էին իրական մտքով։ Դա երևում էր նրանց շարժումների ոչ կանոնի համաձայն երևույթից։ Նրանց սրերն իջնում էին վահանների վրա և կայծեր արձակելով զնգզնգում։ Մի երկուսի նժույգները խրխնջում էին կատաղությու-

նից։ Նրանք բոլորն էլ ամեհի մարտիկներ՝ աչքերը արնակ սլած մոնչում էին և թռչում իրար վրա, կայծակի արագությամբ սրերը շողացնելով ու իջեցնելով իրար վրա։

— Դադա՜ր, դադա՜ր...— գոչում էին սեպուհները սրերը ճոճելով նրանց շուրջը, մրրկելով իրենց նժույգները։

Բայց նրանք չէին լսում։

— Նախարարնե՜ր, նախարարնե՜ր, դադա՜ր տվեք,— գոչեցին կրկին։

Ամեն ինչ անօգուտ էր։ Վազեցին շրջապատելու նրանց։

Այդ միջոցին հեռվից բազեի նման սլանալով գալիս էր Արծվին։ Նա նստած էր իր մերկ նժույգին և անզեն էր։ Նա խելահեղ թափով թռավ ահագին մի փոս, որ լուրջ պահին սթափ մարդը չէր էլ երազի փորձել և նույնպես խենթորեն՝ նժույգով մխրճվեց մենամարտողների մեջ։

— Քաշվեցե՜ք, կանիծե՜մ ձեր մեռելը... հա՜...

Նա դևի էր նման։ Նրա զայրացած դեմքին աչքերը փայլեցին դանակի շեղբի նման։

Կռվողները մի քանի անգամ թափահարեցին իրենց սրերը և հետ քաշվեցին։

— Խե՛նթ լակոտներ,— կշտամբեց Արծվին. և այնքան էր կատաղել, որ կարծես ինքն էր պատրաստ նույնպիսի մենամարտի։

Սեպուհները զայրագին գոռացին կռվողների վրա։

Վարդանն ու նախարարները մոտեցան նրանցից մեկին, որ վիրավորվել էր, որին հազիվ էին պահում հինգ զինվորներ։ Նա ճգնում էր դուրս պրծնել նրանց ձեռքից և գնալ վրեժ լուծել իրեն վիրավորողից։

— Թողե՛ք,— գոռում էր նա,— թողե՛ք նրա դիակը փռեմ։

— Մանո՛ւկ, նախարարնե՜ր, Մանո՜ւկ...— ձայները ճնշելով շրջապատեցին վիրավորին զինվորները։

— Կանչեցե՛ք այստեղ այդ «քաջերին»,— հրամայեց Վարդանը։

Զինվորները շրջապատելով կռվողներին, բերին Վարդանի մոտ։

Վիրավորը թևի վերքը մի ձեռքով բռնած, գլուխը կախ և նրա ընկերը՝ մենամարտից և ամոթից կաս-կարմիր՝ կանգնեցին Վարդանի առջև։

Դրանք դեռ կատաղած հևում էին և բերանները ծռած նայում իրար։ Քարաբեկորների էին նման նրանք՝ իրենց լայն կրծքերով ու ջլապինդ բազուկներով։ Մեկը մյուսից գեղեցիկ ու սլացիկ, նրանց խումբը ներկայացնում էր մի սքանչելի փոնջ խենթ ու խիզախ մարտիկների։

Վարդանը նայեց նրանց։

— Վիրավորվա՞ծ ես,— հարցրեց նա հանդարտ։

Ըստ երևույթին Վարդանը հայտնի էր իր անողոք դատաստաններով։ Բոլորը ահաբեկ սպասեցին նրա վճռին։ Բայց նա այսօր հանգիստ նայեց նրանց և խոսեց մեղմ եղանակով։

— Կռիվ եք որոնում ու չե՞ք գտնում։ Եթե ձեռներդ շատ է եռում՝ գործ կլինի և շուտո՞վ։

Մարտիկները գլխիկոր լսեցին։ Վարդանը գաղտուկ ժպիտով դարձավ վիրավորին.

— Վիրավո՞ր ես՝ մեղավոր ես, բարեկա՛մ, ի՞նչ ասեմ. պատիժդ ստացել ես։

Վիրավորը հառաչեց.

— Դու Մանուկը չե՞ս։

— Մանո՛ւկն է, տե՛ր,— խմբովին վրա բերին սեպուհներն ու զինվորները ծիծաղադեմ։

— Դու չէի՞ր, որ աջ թևիս հարվածը ետ տվիր... քուշանի հարվածը։

— Նա ի՛նքն է, տե՛ր,— ծիծաղեցին այլևս բարձրաձայն սեպուհները։

Վարդանը բարի ժպիտով նայեց Մանուկին։ Մանուկը, որ պարսկաքուշանական պատերազմում փրկել էր Վարդանի կյանքը նրան շրջապատած քուշաններից՝ ուղղակի խորտակվեց ամոթից։ Նա կարմրեց, խեղճ հայացքով շուրջը նայեց և լռեց։

— Եթե կարող ես քայլել մենակ՝ գնա թևդ կապել տուր։

Մանուկը հազիվ լսելի ասաց.

— Սրա վերք տվողի վերքը չե՞ն կապի։

Վարդանը ծիծաղեց, ձեռքը դրեց նրա ուսին, մեղմ շոյեց և մղեց, որ գնա։

Մանուկը դանդաղ գնաց, ապա մի փոքր հեռանալով աջագացքեց քայլերը։ Մյուսները հետևեցին նրան։

— Անգի՞ն մարտիկ է,— շշնջաց կարծես ինքն իրեն Վարդանը։

Այստեղ, զինվորների մեջ, այս երիտասարդ անհոգ ու խենթ մարտիկների մեջ նա մի պահ մոռացավ իր սրտին շոքած մեծ հոգսը։ Նա ուրախացավ, որ եկավ այստեղ։ Այո, սրանք, այս երիտասարդները և՛ ուժ են, և՛ հույս, և՛ կյանք, և՛ ուրախություն։ Հին զորավարը, որի կյանքը անց էր կացել նժույգների վրա, բաց երկընքի տակ, մարտիկների ընկերության մեջ՝ հիմա այս առավոտ մի փոքրիկ շփում ունենալով նրանց հետ՝ ինչ-որ թեթև զգաց իր հոգսը։ Նա լցվեց հավատով, որ բուքը կանցնի, կգան լավ օրեր։ Իհարկե, նա իբրև զորական և քաղաքական անձն, պարզ էր պատկերացնում փոթորիկի վերահասը։ Բայց զգացմունքը, հասարակ մարդկային հույսը նրան շոյում, պատրանքի մեջ էր գցում։ Նա կուզենար թերևս, և այդ մի պահ միայն այստեղ, մարտիկների մեջ,— որ բախտը նրանից հեռացներ նրան մատուցված դառնության բաժակը։ Բայց և իսկույն մտածեց, որ այդ բաժակը նա պիտի քամի հուսկ վերջին կաթիլը։ Նա կրկին դառնացավ և դարձավ սեպուհներին։

— Զորագնդերը հերթով կուղարկեք տուն և նորակոչիկներին կժողովեք վարժանքի։ Եվ վաղվանի՛ց։

— Հրամանդ ի կատար,— ասացին սեպուհները խմբով։

— Դե, հիմա անցեք ձեր գործի՛ն։

Սեպուհները հեռացան։

Վարդանը դարձավ նախարարներին.

— Դեպքերը կծավալվեն ուշ, բայց վրա կհասնեն հանկարծակի, հեղեղի նման։ Զորագնդերը պետք է թափ տալ։

Արծրունյաց նախարարը նայեց Վարդանին, զննեց նրան՝ կարծես առաջին անգամն էր տեսնում և կարծես երկար ժամանակ գլխի չէր ընկել և հիմա ընկավ հարցնելու.

— Տեր Մամիկոնեից, դու գուշակում ես պատերա՞զմ։

Վարդանը նրան դարձավ զարմացած.

— Շա՞տ է պատահել մեր և արյաց մեջ որևէ վեճ, որ կռվով չվերջանա։ Ես Սպարապետ եմ։ Օրհասը որ գա՝ ձեր ու իմ պատասխանը ես եմ տալու...

Արծրունյաց նախարարը մտածմունքի մեջ ընկավ։ Հետո կարծես նոր հանգամանքներ նրան անհանգստացրին։ Նա սթափվում էր հետզհետե։

— Առաջին հարվածն էլ ես պիտի կրեմ։ Վասպուրականը արյաց երկրի դուռն է։ Դրա համար եմ հարցնում։

Մոկաց նախարարը ծիծաղեց.

— Հարվածը բոլորս կընդունենք։ Ե՛վ առաջինը, և՛ վերջինը։

Վարդանը գորովանքով նայեց խելացի երիտասարդին և մի թեով գրկեց նրան։ Առանց այն էլ նա շատ էր սիրում այդ ուշիմ, խելացի և համեստ երիտասարդին։ Բայց այսպիսի մի ժամանակ, երբ հայրենիքի վրա էր գալիս մի աննախընթաց, անճանաչելի արհավիրք՝ Վարդանին դուր եկավ այդ պատասխանը։ Դա նոր խոսք էր պատեհին հարմար։ Վարդանի տրամադրությունը բացվեց։

— Հույս ասովա՜ծ, հույս ասովա՜ծ,—բացականչեց նա թեթև շունչ քաշելով։

Նայելով Տարոնի լայնարձակ դաշտին, ասաց.

— Ափսո՜ս, հանգիստներս խանգարվեց։

Տարոնի դաշտը ծխալ սկսեց։ Մեգը հավաքում էր իր քղանցքներն ու քարշ տալով շարժվում դեպի արևմուտք։ Գարունը հանդես էր բաց անում արդեն։ Արևն սկսեց տաքացնել։ Օդն այնպես քնքուշ էր և խաղաղ, որ մղում էր միայն երազանքի և ոչ թե դաժան արհավիրքի։ Երկնային թավիշ կապուտակի մեջ սև նետեր երևացին, որ ճախրում էին և գալիս։ Նրանք մոտեցան և «կուլո՜ւ, կուլո՜ւ» կանչելով անցան նախարարների գլխի վրայով։ Իսկ ամրոցի մի անպետք բուրգի կատարին արագիլը իր տնտեսությունն էր կարգի բերում։ Ոչինչ, ոչինչ չէր հիշեցնում ո՛չ պատերազմ, ո՛չ աղետ։

Նախարարները մարդանքի հրապարակից հեռացել էին արդեն։ Հեռվից դեռ երկար լսվում էին երիտասարդ մարտիկների գոչյուններն ու նժույգների տրոփը։

Վարդանը հրավիրեց նախարարներին ամրոց։

***

Միջօրեի արևը հազիվ էր մեղմացնում լեռնային գարնանամուտի զգալի ցուրտը։ Լեռնանցքով գնում էին մի երեսունի չափ զինված հեծյալներ, երկու գլխավորի առաջնորդությամբ։ Պարսիկներ էին։ Հեռվից իսկ դա երևում էր զինվորների ձվաձև կճուճանման գլխարկներից, երկար տափակ սրերից, որ կախված էին նրանց կարճ բաճկոնները սեղմող գոտիներից։ Նրանցից շատերի արճճա-

գույն և խորշոմած դեմքերին մռայլվում էր վաղաժամ ծերությունը։ Մեծ մասի աչքերի խնձորները դեղնավուն էին. ջերմախտի նոպաներից մնացած։ Առջևի հեծյալներից մեկը երկար քղանցքով, սևամորուք, հիսունից անց մի պաշտոնյա էր, որ ամուր փաթաթվելով ուղտի բրդից կոշտ գործված տոպրականման մեկնոցի մեջ՝ ձեռները խրել էր դրա ուսերի անկյունները, որ թևքերի տեղ էին ծառայում, և կծկվել էր։ Մյուսը լայն կապան զենքերի վրայով մարմնին գցած դեռ երիտասարդ, գեղադեմ զորական էր, լկտի հայացքով, որի մեջ միշտ ինչ-որ չար ժպիտ էր խաղում։ Նա շուտշուտ ափով աչքերը հովանի արած նայում էր հեռուները մի բան որոնողի պես։

— Ասում է այնպես պիտի քամես վանքերը, որ էլ հոտներն էլ չգա,— խոսեց առաջինը,— և կհավատա՞ս, ինչքան հարկ, որ այս Դենշապուհի օրով եմ ընդունել՝ քսան տարի հանած չունեմ։

— Ծով է, երկիր չի,— ասաց զորականը։

— Ծով չի, ի՞նչ ծով, ասա թե քամում ենք, ինչպես հրամայել է Դենշապուհը։ Թե չէ՝ այս քամելուն ծո՞վ կդիմանա։ Առաջ շինականներին էինք քամում մենակ. հիմա որ վանքերին էլ անցանք ու շինականներին էլ ավելի զոռեցինք՝ դու տես քամելը։

Զորականը մանր քրքջաց, հորանջեց և խթեց իր նժույգին։

— Լավ, այս Սյունիքը չէ՞, մարզպանի աշխարհը, ինչպես մարզպանին չի խնայում Դենշապուհը,— հարցրեց զորականը։

— Հենց ամենից շատ կուզես՝ Սյունիքն է հրամայել հարկահանել։ Ասում է՝ վառի՛ր, չորացրո՛ւ։ Հազկերտն է. հրամայել՝ ասում է։ Է, ես էլ վառում եմ. ինձնից ի՞նչ է գնում։ Ես հարկահան եմ։

— Ըհը՞...— աշխուժացավ զորականը և աչքերը պսպղացրեց։— Ահա՛, վանքը երևա՛ց,— ասաց նա,— իսկ շենը տեսնես որտեղ է։

— Շենը կողքին է, ժայռի հետևը։

Դիմացը երկու հեծյալ երևացին։ Նրանք գնում էին նույն ուղղությամբ և քանի որ ավելի դանդաղ էին, սրանք հասան նրանց։

Դրանցից մեկը կարճահասակ, եռանդուն ծերուկ էր, խելացի, խորամանկ, մանր ու շարժուն աչքերով, որ իրենց բներից անհանգիստ դուրս էին նայում այնտեղ թաքնված գազանիկների պես։ Նա պարսկական շքեղ վերնազգեստ ուներ։ Նրան հետևողը հասարակ հայ զինվոր էր։

— Պարսի՞կ ես,— հարցրեց հարկահանը նրանց։

— Մի քիչ,— պատասխանեց ծերուկը լուրջ թե կատակ, ամենայն հանդարտությամբ զննելով հարկահանին։

Հարկահանը կիսաժպիտ սպասեց, որ նա էլի խոսի։

— Պարսկաստան շատ եմ ապրել,— ասաց ծերուկը։

— Ո՞ւր ես գնում։

— Մարզպանի մոտ։

Բավականին տեղ գնացին միասին։

— Դո՞ւք ուր եք գնում,— հարցրեց ծերուկը։

— Վանքերը, շենները, ո՞վ գիտե։

— Հը՜մ,— արեց ծերուկը և աչքի չափով զննեց ամբողջ զինախումբը և հասկանալով լռեց։ Նա լավ գիտեր, դա պարսից Հազարապետից նշանակված հարկահաններից մեկն էր։ Դենշապուհը Հազարապետի կողմից ուղարկվել էր Հայաստան աշխարհագիր անելու և իր խոստման համաձայն՝ հարկերը թեթևացնելու։ Բայց նա հենց հասել էր Հայաստան՝ սկսել էր խստադաժան հարկահանությունը, որի նպատակն էր հայ հոգևորականությունը ընչազուրկ անել, ստիպել հավատուրացության։

Մի փոքր անց նրանք մոտեցան վանքին, որ պարսպի մեջ էր։ Երևաց նաև նրա կողքին շենը, որի խրճիթները խրած էին լեռնալանջի մեջ։

Երկու զինվոր առաջ անցան և նիզակների կոթերով թակեցին պարսպի դարբասը։ Ներսից մարդ չմոտեցավ։ Զինվորներից մեկը իջավ նժույգից և քարը վերցնելով՝ սկսեց ամուր թակել դարբասը։ Կրկին ոչ մի պատասխան։ Բայց, երբ զինվորները խմբով սկսեցին քարերով կոտրել դարբասը, սա բացվեց լայնորեն, և ներսից դուրս եկավ մի բարձրահասակ, հաղթանդամ, գեր ու խստահայաց վանական, սևագանգուր հոնքերը աչքերին կախված, այտերը թավամազի մեջ կորած։ Նա լիքը փորն ու լայն կուրծքը ցցած՝ հանդուգն դիմավորեց հարկահանին։

— Դարբասն ինչո՞ւ եք կոտրում։

— Ինչո՞ւ եք ուշացնում,— կոպտեց հարկահանը։

— Աղոթում էինք։

— Աղոթքի ժամանակ կլինի։ Շո՛ւտ, հարկային մնացորդ հացը, կրելու պարկերը, գրաստը հանեցե՛ք և չափերը բերե՛ք։

Վանականը, որ վանահայրն էր, ինչ-որ մտմտաց իր մեջ, հետո մռայլ ետ քաշվեց, որ ճանապարհ տա ներս մտնող զորականին։ Հետո ինքը գնաց դեպի վանքի խորքը։ Հավաքվեցին վանականները և սկսեցին անհանգիստ փսփսալ իրար մեջ։

— Թաքուստը չմատնե՞ք...— ցած ու նշանակալից ասաց վանահայրը,— պարտակա՛ն կմնաք հավուր դատաստանի...

— Դիմացե՛ք, թե դեպք լինի,— կամաց ասաց մի ծաղկատար դեմքով կարճ ու գեր վանական, որի գոգնոցը ուռուցիկ, ցցուն փորին՝ մատնում էր, որ տնտեսն էր։

Նա կարգադրեց վանականներին, և սրանք սկսեցին պարկերով ցորենը կրել դուրս։

Զինվորներն իջան նժույգներից և սկսեցին ցրվել վանքի փոքրիկ գավթում, զննել պահեստները, վանքի ներսը, ծիծաղել, քրքջալ։ Ցորենի պարկերը կիտվեցին գավթում, բերին կողերը և բանալով մի քանի պարկ՝ սկսեցին չափել։ Բայց, ըստ երևույթին դա ձանձրալի դառավ թե ինչ՝ հարկահանին, նա սկսեց աչքի չափով հաշվել։ Վանահայրը, հակառակվեց.

— Աշնանը տվել ենք լիուլի. մնացո՛ղը վերցրու, դու նորից ես վերցնում տարեկան։

— Պատերազմ է,— բացատրեց հարկահանը,— պետք է օգնեք։

— Ամբողջ վանքը հո չենք տանելու, տե՛ր հարկահան, օրե՛նք բանեցրու, խի՛ղճ ունեցիր։

— Խղճով ու օրենքով է, բերեք։

Տնտեսը քրտնամխած, հևիհև, կարճ ու հաստափոր, տակառի պես գլորվում, օրորվում էր դեսուդեն։ Նրա ծաղկատար դեմքին մի արտահայտություն կար միայն. վտանգված մթերքի սարսափը։ Վանահայրը կարմրեց, քրտնեց և շնչատելով մոտ գնաց զինվորներին, որ սկսել էին կոտրել ինչ-որ փակ, ցածր դուռ։

— Հեռացե՛ք այդտեղից, զինվորներն այդտեղերք գործ չունեն,— մոտ գնաց արգելելու վանահայրը։

Նրան ընկերացավ տնտեսը։ Զինվորները չլսեցին և որտեղից էր՝ ձեռք բերած տապարով սկսեցին կոտրել դուռը։ Դուռը կոտրրվեց, նրանք սողոսկեցին ներս և սկսեցին դուրս քաշել ծանր ու թանձր մորթիներով յուղ ու պանիրը։ Վանահայրը վազեց, կանգնեց դռան առջև և սկսեց դիմադրել։

Շինականները ներս մտան գավիթը։ Նրանք անհանգիստ էին, զգալով, որ եկող պարսիկները մի նոր փորձանք են բերել նրանց, և լարված հետևում էին անցուդարձին։

Մառանի դռանը սեղմված տնտեսը, որին մի քանի զինվորներ խեղդում էին, մի պահ կոկորդն ազատեց ու գոռաց.

— Աստվածասե՛ր քրիստոնյայք, կանչեցեք Բակուր գյուղապետին։

Բայց շինականները կարծես չլսեցի՛ն։ Միայն սկսեցին իրար մեջ խոսել։

— Մտի՛կ, մտի՛կ, ո՞նց են դիմադիր կանգնում, չեն տալիս։

— Ո՞նց չեն տա, կառնեն։

— Հա՞ց է, ա՛յ Թուն, հա՞ց, ո՞նց կտան։

— Բա մենք մարզպանին ո՞նց ենք տալիս, վանքի՞ն ոնց տրվինք։ Էդ տոպրակների միջինը մեր արյան քրտինքն է, մեր հարկն է վանքին։

— Դե՛ մենք վանքի գերին ենք։

— Նա էլ արքայի գերին է։ Դե՛ հիմի տո՛ւր։

— Հրե՛ն, հրե՛ն, մի վանահո՛րը, մի վանահո՛րը, տես ո՛նց է իրեն ուտում։

Իրոք՝ զինվորների և վանահոր մեջ սկսվել էր մի ըմբշամարտ։ Զինվորները դուրս էին քաշում տոպրակները, վանահայրն ու տընտեսը դիմադրում էին։

Տնտեսը մոլեգնեց, ճեղքեց զինվորների շղթան, վազեց դեպի շինականները, գոռալով.

— Ապա մի օգնությո՛ւն, կանչեցե՛ք Բակուր գյուղապետին, հեծյալ ուղարկեցեք մարզպանին։ Ողջ նյութը տարան... Առաքե՛լ շինական։

— Վանքն էլ հե՛տը տանեն Թող,— ասաց մի շինական, մառայ նայելով տնտեսին։

— Հիշաչա՛ր եք, անիծից արմատներ,— մռմռաց տնտեսը և դեմքը դարձրեց դեպի շենը՝ սպասելով գյուղապետին։

— Ես որ հիշաչար չլինեմ՝ Թիկունքս հիշաչար է, որ գյուղապետին ձաղկել տվիր մի չափ պակասորդի համար։ Մրմռացը վրա է դեռ։

— Աստվա՛ծ անիծի ձեզ...

— Մի՛ անիծի, հա՛յր Հակոբոս,— ասացին շինականները,— Առաքելը դաղված է...

Շինականը՝ Առաքելը, սուր ու չար նայեց տնտեսին.

— Ի՞նչ ես ուզում։ Հրես կգան իմ բկին է՛լ կչոքեն մարզպանի հարկի մնացորդի համար։

Եկավ Բակուր գյուղապետը, սրահայաց, տարեց մի մարդ, կոշտ քեղերով ու լայն դեմքով, առողջությունից շիկնած, որին ընկերացել էր մարզպանի մոտ գնացող ծերուկը։

— Բակո՛ւր գյուղապետ, օգնի՛ր,— շնչատեց տնտեսը,— մա՛րդ ուղարկիր մարզպանին...

Բակուր գյուղապետը մտածկոտ դեմք ընդունեց։ Նա ներքուստ համաձայնեց տնտեսի հետ։ Ապօրինի հարկահանությունը կարող էր գործադրվել նաև շինականների մեջ, մարզպանի հարկերի մնացորդը կվտանգվեր, և ինքը գլխով էր պատասխանատու նրա առաջ։ Ստիպված էր միջամտել։ Բայց տատանվեց, սպասեց։

Իսկ դիմացն սկսվել էր մի քստմնելի տեսարան։ Վանահայրը կռվում էր նոր դուրս քաշած տոպրակների համար, ջանալով դադարեցնել կողոպուտը։ Նա վազում էր դեպի զինվորները, որոնք կոտրելով մի նոր մառանի դուռ՝ սկսել էին դուրս բերել յուղի, պանրի և մսեղենի պահածոյի մորթե տիկերը, ապուխտները, մրրգեղենի շարանները։ Տնտեսն այլայլվեց, գունդուկծիկ վազեց դեպի տիկերը և գոռաց վանականների վրա.

— Արգելե՛ք նզովից արմատներին, ե՛տ վերցրեք...

Վանականները ծեր ու երիտասարդ հարձակվեցին օգնելու։ Այնպես էին իրարից շորթում, ետ խլում, կարծես խլում էին գոյությունը, կյանքը։ Կարծես նախամարդիկ՝ մոտակա ձորերի քարանձավներից դուրս վազած, կռվում էին որսին տիրանալու համար։ Կենդանական, գազանային բնազդը կատաղեցրեց երկու կողմին։ Վանահայրը մթերքի պաշտպանության մեջ մոլեգնելով՝ մոռացավ և՛ իր զգեստը, և՛ իր աստիճանը, և՛ կարգը, պատառոտված, գզգզված, ընչաքաղց աչքերը կատաղի պսպղացնելով, քաշքշելով դեսուդեն էր ցատկում։ Զինվորները նրան քշեցին հեռու և մթերքները դուրս բերելով, դրին մեջտեղ։ Այն ժամանակ վանահայրը հանկարծակի ահռելի ուժ գործադրելով՝ հարու տվեց զինվորներին, ճեղքեց նրանց շղթան և հարձակվեց մթերքների վրա՝ ըմբիշի նման զարկով գրկեց մի ծանր ու խոշոր մորթե տիկ և արջի

նման կողեկող ընկնելով տարավ դեպի մառանի դուռը։ Զինվորները հետևից հասան արգելելու, ձեռները գցեցին տկին։ Սկսվեց մի մոլեգին քաշքշոց։ Վանահայրը քրտնամխել, վզի երակները ուռել՝ ուժ էր անում բաց չթողնել տիկը։ Նրա զգեստը ճղվեց, վայր ընկավ։ Տակից դուրս ցցվեց նրա բրդոտ կուրծքը։ Նա գազանաձայն մռնչոցներով հևում էր և կատաղում։

Հարկահանը, որին զայրացրեց այս դիմադրությունը՝ նշան արեց տեսարանը դիտող և սպառնալի ժպտացող հրամանատարին։ Նա սուրը հանեց և հարձակվելով վանահոր վրա՝ սրի կոթով զարկեց ուսին։ Վանահայրը չզգաց ոչինչ, նա կրկին հարվածեց։ Վանահայրն ընկավ և չորեքթաթ մղվեց դեպի դուռը և մի ձեռքով կառչեց նոր դուրս բերվող տկին։ Երրորդ հարվածը գլխին՝ ստիպեց նրան բաց թողնել տիկը և ընկնել։

Վանականները տեղի տվին և վանահորը ներս տարան։ Պարսիկ զինվորները մի կողմ կույտելով հացի և այլ մթերքների պաշարը, խարույկ վառեցին և սկսեցին պղնձե ամանները դուրս բերել, ճաշ եփել։

Հարկահանը մոտ գնաց, աչքի չափով հաշվեց հարկահանված մթերքը և ցած բերեց իր ձիու թամքից կախած ձողիկները, որոնց վրա դանակով խազեր կային նշված։ Ապա կանչեց հրամանատարին և ասաց ցած ձայնով.

— Սկսենք շե՛նը...

— Սպասենք զորամասին,— ասաց հրամանատարը, որ նայելով շինականներին՝ ինչ-որ վտանգ նկատեց։

— Հա՜, գիտե՞ն կատաղել շները,— մմռաց հարկահանը, խեթ նայեց շինականներին, նստեց մի գերեզմանաքարի վրա և սկսեց նոր խազեր նշել ձողիկների վրա։ Բակուր գյուղապետը բարվոք համարեց գնալ նրա մոտ։ Նրան հետևեց մարզպանի մոտ գնացող ծերուկը։

— Օրենքո՛վ վերցրեք,— ասաց Բակուր գյուղապետը,— այսքանը օրենքով չէ։ Սա մարզպանի աշխարհն է։

Հարկահանը տակից վեր նայեց միայն և չպատասխանեց։ Նա խորասուզվել էր իր հաշիվների մեջ։ Գյուղապետը կրկնեց իր խոսքը, բայց հարկահանը վեր կացավ և սկսեց նայել եկած ճանապարհի ուղղությամբ։ Եվ ահա բլրի վրա երևաց սպասված զորամասը, որ սկսեց իր կճուճանման գլխանոցներով վերուվարել, ծակծկել երկինքը։

Բակուր գյուղապետը հեռացավ վիրավորված։ Լուռ հետևեց նրան նաև ծերուկը։

— Սրանք կդատարկեն շենը, մարզպանին բաժին չեն թողնի։ Գնամ շտապեցնեմ մեր հարկահանին։

Զորամասը հասավ և վանքի առաջ կանգնեց։ Ծանրամարմին սեպուհ հրամանատարը իջավ նժույգից և մտավ գավիթը, կանգնեց հարկահանի առջև։

— Հը, ի՞նչ արիք։

— Վերջացրել ենք։ Շուտով ճաշ կտանք զորախմբին։

Եվ մի փոքր անց սկսվեց ճաշը։

Զինվորները խումբ-խումբ նստեցին խարույկների շուրջը և սկսեցին կողոպուտը վայելել։ Ճաշը դեռ նոր վերջացած՝ հարկահանը ասաց հրամանատարին։

— Ապա՞, հիմա էլ շե՛նը։

Գնալով դեպի շենը՝ հարկահանը նոր նկատեց թամքած նրժույգներ, որ ցրիվ կապած էին քարերին ու ցանկապատերին և ինչ-որ շփոթ վիճակ։ Խրճիթներում ելումուտ էին անում, պարկեր դուրս բերում։

Հարկահանը իր հետ եկած հրամանատարի և զինախմբի հետ մտավ շենը և հրամայեց կանչել գյուղապետին։ Սա եկավ անհանդգստացած։

— Այս ովքե՞ր են, ի՞նչ բանի են,— հարցրեց նրան հարկահանը։

— Մարզպանի հարկահաններն են,— պատասխանեց գյուղապետը,— աշնան հարկի մնացորդն են հավաքում։

Պարսիկ հարկահանը շառագունեց զայրույթից.

— Արքայի հարկից առաջ ընկնել և մարզպանի՞ն տալ, ինչպե՞ս կհանդգնեք։ Արգե՛լք եմ դնում բերքի վրա։

Նրա օգնականները ընկան շենը զինվորների հետ։

Զինվորները մտնում էին խրճիթները և շինականների մեջքներին բարձած դուրս էին բերում ցորենի պարկերը, հրամայում ցած դնել հրապարակում, ուր նստել էր հարկահանը։

Գյուղապետը պահանջեց, որ հարկը նախ՝ չափեն և ապա՝ ձեռ չտան մարզպանին պատկանածին։ Հարկահանը լսելու տվեց, և միայն իր ձողիկների վրա խազեր էր նշում։ Երբ գյուղապետը մի անգամ էլ ստիպեց, որ չափեն՝ հարկահանն ասաց.

— Արքայից արքայի օրենքին դե՞մ ես դուրս եկել։ Լեզո՞ւդ պոկել կտամ։

— Ես արքայից արքայի օրենքով եմ խոսում,— խստացավ գյուղապետը,— հարկ միշտ տվել ենք. այսպե՞ս ենք տվել։ Եվ հարկն էլ մենք էինք հավաքում։ Իսկ հիմա որտե՞ղ ենք, մարզպանի աշխարհը չէ՞ սա, ի՞նչ է...

— Արքայից արքայի աշխարհն է սա...

— Ինչո՞ւ ես շենը պլոկում, թե որ արքայինն է,— ավելի բորբոքվեց գյուղապետը։—Հիմա Մարզպանը ինձնից հարկ կպահանջի, ի՞նչ պատասխան տամ նրան։

— Դու պատասխան Դենշապուհի՛ն կտաս։ Պատերա՛զմ է, հասկացե՛ք այս բանը։

Գյուղապետը զգալով, որ հարկահանը ուղղակի կողոպտում է շենը՝ կանչեց մարզպանի հարկահաններին և առաջարկեց առանձնացնել մարզպանի հարկը։

Շինականները այս լսելով իրար անցան։

— Ասեք ողջ ընտանիքներով գնանք ընկնենք ջո՛ւրը։

Հավաքվեցին գյուղապետի մոտ։

— Դո՛ւ խնայիր գոնե. վառելու չե՛ք շենը։

— Չեմ կարող, ինձ կախ կտա մարզպանը,— գոռաց գյուղապետը,— ջոկեցեք մարզպանի հարկը,— դիմեց հայ հարկահաններին։

Սկսվեց մի ապօրինի, անօրինակ հարկահանության մրցում պարսիկ և հայ հարկահանների մեջ։ Տենդային հապճեպով կողմերն սկսեցին կրել ամեն բան, երկյուղ կրելով դիմացինից։

Աղմուկ բարձրացավ ընկավ շենը։ Կանայք, երեխաները դեսուդեն վազվզեցին, սկսեցին իրար օգնության կանչել։

Շինական Առաքելը մեջտեղ եկավ և կանգնեց պարսիկ հարկահանի առջև.

— Քանի՞ հարկ պիտի տանք՝ մարզպանինը, պարսիկինը։

Հարկահանը ծիծաղեց.

— Դե ձեր գործն ի՞նչ է. այն է՝ հարկ տա՞լ ու հարկ տա՞լ։

— Մարզպանը տանում է, դու տանում ես, ի՞նչ պիտի լինի։

— Շինականը մուկ է. ինչքան կուզես՝ հանի՞, հա՛ կհավաքի՞։

Առաքելը լռեց և մոայլվելով գլուխը կախեց։ Զինվորը նրան դրդեց նիզակի կոթով, որ առաջ ընկնի և դուրս բերի բեռները։

Առաքելը ծռվեց, խեթ նայեց նրան և գնաց ներս և շուտով դուրս եկավ՝ մեջքին ծանր պարկը ու սկսեց տնքալով ու հուսահատ դուրս կրել հացը։ Նրա կինը, որ դռան առջև կանգնած էր, սկսեց անիծել.

— Թաղե՞մ սրանց թագավորի գլուխը։ Տարենը քանի՞ հարկ է վերցնում։ Գարնանը հարկ կվերցնե՞ն։ Մարզպանն էլ նրանից բան ասվորեց, պակասն էլ նա է լրացնում։ Ասա՝ ջուրը եկավ տարավ մեզ։

Հարկահանը ծիծաղելով հարցրեց.

— Ի՞նչ է ասում այդ կինը։

— Ի՞նչ պիտի ասի. չի ուզում հարկը տալ,— բացատրեց հրամանատարը։

— Ինչպե՞ս չի ուզում։ Քուշանը նեղում է։ Զորքին հաց է պետք. հասցրո՞ւ, որ բավականանա։

Ու հետո ծիծաղելով ավելացրեց.

— Դեռ հացը ի՞նչ։ Շուտով իրենց կտանենք, որ զորքի բեռները մեջքներով կրեն։ Գրաստը կոտրվել է։

Զինվորները, որ լսում էին այս խոսակցությունը՝ սկսեցին զարմանալ, մոայլված Առաքելին նայելով։ Նա կրում էր հացը անխոս ու բութ համակերպությամբ։ Կինը հարձակվեց վրան։

— Ի՞նչ ես կրում, հա կրում... Հո կոտրելու չես տնով տեղով։

Առաքելը չէր լսում։ Կինը բռնեց թևից.

— Ա՜յ մարդ, քե՛զ հետ եմ, չե՞ս լսում։

— Կորի՛, թե չէ՝ հերսս հիմի քեզ վրա եմ թափում հա՜,— մռնչաց Առաքելը ու ներս գնաց։

Զինվորները զարմացած մանր քրքիջներով գնացին հետևից։ Երբ նա դուրս եկավ, նրանցից մեկը սկսեց Առաքելին թեթև բզել նիզակի կոթով, ինչպես գրաստի։ Առաքելը չանդրադարձավ, այլ միայն ծանրությունից տնքալով՝ ցած դրեց պարկը և քրտնամթած կանգ առավ, որ շունչ քաշի։

Զինվորները նիզակների կոթերով բզեցին Առաքելին։ Նա գընաց, բայց դանդաղ։

— Դե՛,— բզեց նորից զինվորը։

Առաքելը ճակատի քրտինքը սրբեց և կրկին ներս գնաց առանց անդրադարձնելու վիրավորանքը։

Շուրջը հավաքվել էին շինականները, որոնց գործը վերջացել

էր։ Նրանք ձեռքերը ծոցները դրած, գունատ, մռայլ սկսեցին դիտել։

Դուրս եկավ Առաքելը դատարկ պարկը ձեռին։ Նա կանգնեց դռանը, պարկը զարկեց գետնին։

— Ա՜-հա՛, մաքո՛ւր՝ մաքո՛ւր. տակից-վրայից կտրեցիք, թողիք մերկ ու սոված... Դե հիմի էլ ի՞նչ կուզեք... ասե՛ք...

Զինվորներից մեկը ծիծաղելով հարցրեց.

— Է՞լ բան կլինի տալու։ Բե՛ր։

— Ի՞նչ բերեմ, մի՞սս,— խեթեց Առաքելը,— ահա՛,— ցույց տվեց մերկ կուրծքը։

— Պատերազմ է, սիրելիս, ամենքս էլ պիտի մի փոքր սեղմվենք,— ասաց անամոթ կատակով հարկահանը։

— Տուններս քանդվե՜ե՜ց, Առաքե՜ե՜լ...— սկսեց աղիողորմ ողբալ մի պառավ ու նստելով գետնին ծնկները ծեծեց։

Առաքելն առաջ եկավ ու ձայնեց հավաքվածներին.

— Տուն քանդվելը հլա կա՜՜ց, երբ կմտնեն հոգուտ տունը...

— Իսկ այս շո՞ւնն ինչ է հաշում,— օձացավ հարկահանը, աչքերը խոժոռելով Առաքելի վրա։

— «Ի՞նչ է հաշում»...— շանթեց իր հայացքով հարկահանին Առաքելը,— հլա կացե՜ե՜ք գլուխը կբարձրացնի ռամիկը, գլուխը կբարձրացնի Հայոց աշխարհը։ Այնպես կբարձրացնի, որ պարսիկը գույնը գցի։

Մի վայրկյան սպասեց ու հանկարծ աչքերը պսպղացրեց հարկահանի վրա։

— Հաշե՞լ ես ուզում, ա՛ռ,— շնչահատ ու խուլ ծղրտաց և վազելով հարկահանի վրա՝ քացով այնպես հարվածեց, որ նա անմիջապես ետ շրջվեց շնչասպառ։ Հետո ուժով խլեց զինվորի նիզակը, հարվածեց վրա եկող զինվորներից առաջինին։ Շինականներն իրար անցան։ Ոմանք քաշվեցին ետ, ոմանք էլ միացան Առաքելին ու սկսեցին քարերով ու մահակներով կռվել զինվորների հետ։ Կանայք ճչացին, ու վազվզելով այս ու այն կողմ՝ սկսեցին երեխաներին հավաքել, ոմանք՝ օգնել ամուսիններին, ոմանք չիմանալով ինչ անել՝ քարացած մնացին տեղներում։

— Առաքե՛լ, փախի՛ր, տղանե՛ր, փախե՛ք,— ձայն տվին շինականները։

Առաքելը վազեց դեպի մարզպանի հարկահանների նժույգները։ Թռավ մեկի մեջքին ու չափ գցեց դեպի լեռան կածանը։

Զինվորները սակայն ուշքի եկան ու սկսեցին հարվածել շինականներին և փախչողներին հետամտել, բռնեցին մի քանիսին, բայց մի խմբի հաջողվեց փախչել դեպի լեռները։

Մնացածները ենթարկվեցին վայրենի ու դաժան ծեծի։ Նրանց ստիպեցին մթերքը կրել վանքի գավիթը, որտեղից նրանք իրենց գրաստներով և մասամբ էլ մեջքներով պետք է հասցնեին Արաքսի ափը՝ դեպի Պարսկաստան տանելու կողոպուտը։

***

Սյունյաց լեռները կոհակում, վետվետում և հորձանք էին տալիս դեպի երկինք՝ փակելով հորիզոնը տեղ-տեղ շեշտակի բարձր։

Սև գահավանդի վրա գոռոզ արծվի նման թևաբաց նստել էր ամրոցը, անդունդն էր, ուր գետը ոլործուն դանակի պես երկիրը կտրել էր երկու մասի և գնում էր կորչում հեռավոր ծործորների բավիղումյ

Ձորերում ձյուն էր ու սառույց, իսկ արևկող տեղերում ժայռերը կաթում էին, և գետինը սևացել էր։ Գարունը շնչում էր արդեն։ Ուրևային կեսօր էր։

Ամրոցի այն մասում, որ հենվում էր անդնդի վրա, մի հարկաբաժնում, ուր մի սենյակ էր նայում անդնդին՝ լայն պատուհանի առաջ ընտիր կաղնե գահույքին նստել էր մի տարեց մարդ։ Խոշոր գանգուր սևափայլ սաթի մազերը իջնում էին ծոծրակից և ցորնագույն այտերից վայր։ Մազագանգուր սև խաղողի ողկույզի նման կախվել էր փոքրիկ մորուքը։ Նա ծակող ու խելացի աչքեր ուներ, պինդ սեղմած շրթունքներ, որոնցով ավելի թավ էին թվում նրա երկար հոնքերը և ավելի համառ՝ դուրս ընկած ճակատը։ Նա նայում էր հոնքերի տակից վեր և հայացքը գամում էր այնպես անգիմադրելի, որին միշտ մարդ ստիպված տեղի կտար։

Նա հագել էր պարսկական պատմուճան և երկարավուն գլխարկը գլխին, ոլործուն մաշիկները ոտներին՝ պարսիկ պիտի կարծվեր, եթե չլիներին նրա սենյակի դարանում դրած մագաղաթե ձեռագրերը և կազմերին խաչաքանդակ արծաթե, ոսկե ավետարանները։

Նրա ոտների տակ, մանրածաղիկ գորգի վրա, մագաղաթի փաթեթներ էին ընկած, որոնցով զբաղված էր նա, նուրբ ու մաղում ոտներով ընտրելով մինը, կարդալով և վերադառնալով մյուսին։

Նա թեթև ծափ տվեց։ Ներս ընկավ մի ծերուկ նույնպես պարսկական հագուստով և բարև բռնած կանգնեց շեմքին։ Դա սենեկապետն էր։

— Չեկա՞վ Կոդակը,— հարցրեց նրան։

— Եկել է, տեր մարզպան,— խոսեց սենեկապետը,— չէի կամենում խանգարել զբաղմունքդ։

— Նե՛րս բեր։

Ծերուկն անհետացավ իսկույն։ Նստածը մտազբաղ նայեց դռան կողմը, ուր դեռ օրորվում էր սև վարագույրը, և ապա հայացքը սեվեռեց մագաղաթին, ուր ինչ-որ մի կետ հանկարծ խլեց նրա ուշադրությունը։ Դեռ երկար սուզվել էր մտքերի խորքը, երբ ներս մտավ սպասված մարդը, և նա արթնացավ կարծես, հարցական նայեց նրան։

— Հա, դո՞ւ ես,— ասաց դեռ մտազբաղ։

— Բարեողջո՛ւյն, տեր մարզպան,— ասաց եկվորը, որ վանքի և շենի հարկահանության ներկա եղողն էր, խոնարհվեց մինչև կեսը, ապա առաջ եկավ և համբուրեց հյուրընկալի քղանցքը։

— Պատմիր,— ասաց մարզպանը հանդարտ ու մեղմ։

Եկվորը, որ մարզպանի անվանած Կոդակն էր, ետ-ետ գնաց և շոքելով նստեց դռան մոտ։

— Պատվեր որ տվիր՝ Տիզբոնից վերադարձա Արտազի ճանապարհով...

— Արտաշատ գնացի՞ր,— ընդհատեց շտապելով մարզպանը,— ի՞նչ է անում կաթողիկոսը։

— Կաթողիկոսն սկսել է ժողովել հոգևորականությունը։

— Սպարապետն ե՞րբ իմացավ։

— Անմիջապես ուղարկվեց պատճենը նրան։

— Ուրիշ կերպ էլ չէր լինի... երկրի իշխանավորը նա՞ է,— հեգնանքով խոսեց մարզպանը,— նախարարները հավաքվո՞ւմ են Արտաշատ։

— Շարժվել են տեղերից, գալիս են։

— Ի՞նչ մտքի են...

— Ջընդունել, դիմադարձ կանգնել։

Մարզպանը վեր կացավ տեղից և սկսեց հանգիստ ու զուսպ անցուդարձել սենյակում։ Նա գնաց կանգնեց պատուհանի առաջ, հառաչեց և լռեց։ Նրա աչքերն արտահայտում էին խորին թախիծ և թաքցրած դառնություն։ Նա երկար նայում էր պատուհանից՝ կարծես հեռու ժայռերի ծերպերում կամ ծործորներում որոնելիս լիներ իրեն խռովող մտքերի, հարցերի լուծումը։ Մոռացավ Կոդակի ներկայությունը, նա երկար մնաց այդ դիրքում։ Ըստ երևույթին շատ էին հախուռն այն մտքերը, որ խռովում էին նրան և այն էլ վաղուց։ Եվ սովոր լինելով դրանց լուծումը չգտնելուն՝ նա կարծես ժայռին դեմ առնելով հուսահատվեց և հանկարծ ետ դարձավ դեպի Կոդակը.

— Ո՞ւմ վրա է, ինչի՞ վրա է նրանց հույսը...

Կոդակը հեգնական ժպտաց։

— Ո՞չ, ասա, ո՞ւմ վրա է նրանց հույսը,— կրկնեց հարցը Մարզպանը,— հույները պարսված, վրացիներն ու աղվանները մեզ նման, հոները՝ վտանգ և՛ արյաց, և՛ մեզ։ Ո՞ւմ վրա է նրանց հույսը... երանի թե մեկն ինձ հայտներ այս... Տարոնացո՞ւ վրա է... այո՞... Տարոնացի՞ն պետք է զսպի արյաց արքային... Չեմ հասկանում... Ոչինչ չեմ հասկանում։

Կոդակը լուռ լսում էր Մարզպանի այս մենախոսությունը և գործնական մարդու նման լիովին համաձայնվում էր նրա տրամաբանության։

Մարզպանը դեռ երկար անցուդարձ արեց սենյակում և ապա, երբ մի փոքր հանգստացավ, եկավ կանգնեց Կոդակի առաջ.

— Արտաշատում չէի՞ն խոսում, որ ես իբրև երկրի մարզպան պարտավոր եմ այնտեղ լինել։

— Խոստովանք լինի՝ խոսում էին...— ասաց Կոդակը անարտահայտիչ եղանակով,— մանավանդ ասում էին, թե մարզպանը խառն է այս գործին։ Ինչո՞ւ հեռացավ անսպասելի։

— Ե՞րբ պիտի սովորեն հասկանալ, որ արյաց արքան առանց Վասակի գիտե իր գործերը։

Երկար լռեց Վասակը և շրթունքները դառնությամբ կծոտելով նստեց գահույքին։

— Բարի,— անցավ նա ուրիշ մտքերի,— դու ինձ ասա՝ հանգիպեցի՞ր Տիզբոնում Վարազվաղանին։

— Հանդիպեցի։

— Շարունակո՞ւմ է դավել ինձ։

Կոդակը ժպտաց, լռեց և ապա մեղմ եղանակով ասաց.

— Տե՛ր մարդպան, նա քեզանով է կենդանի և միայն այն է բաղձում, որ դու մնաս կենդանի։

Վասակը հետաքրքրվեց.

— Չգիտեմ ինչ ես ասում։

Կոդակը գործին հմուտ մարդու ժպիտով աչքերը դցեց հատակին և ասաց.

— Հազարապետը նրան պահում է, որ նրա դավերի միջոցով քեզ պահի իր ձեռքում։ Նա էլ դավում է։

Կոդակը խելացի արտահայտությամբ նայեց Վասակին։ Վասակը մտածեց նրա խոսքի իմաստի վրա։ Գիտեր, որ Կոդակը անխելք բան չի ասի։ Նրան շատ էլ չզարմացրեց այդքան խորամանկ ըմբռնումը մի մարդու, որից ոչինչ չես թաքցնի։ Նա լավ հասկացավ Կոդակի ասածը։ Պարսից Հազարապետը հյուրընկալել էր իր մոտ Վասակի փեսա Վարազվաղանին, որին Վասակը արտաքսել էր Սյունիքից։ Սա գնացել էր պարսից Հազարապետի մոտ՝ հավատն ուրացել, մտել էր պարսից ծառայության, դառել գործիք նրանց։ Այս բանը պիտի ստիպեր Վասակին ավելի մեծ գործիք դառնալ, եթե գնահատում էր իր դիրքը։ Պարսից Հազարապետը կամենում էր նրան խաղալիք դարձնել իր ձեռքում։ Սա է, որ դառնացրեց Վասակին, երբ լսեց Կոդակի այդ թափանցիկ դիտողությունը։

Ներս մտավ սենեկապետը.

— Տեր իմ, Վարդաձորի գյուղապետը։

— Նե՛րս բեր,— հրամայեց Վասակը անխռով։

Ներս եկավ Բակուր գյուղապետը և մոայլ կանգնեց դռան մոտ։

— Խոսի՛ր,— հրամայեց Վասակը։

— Մարզպա՛ն տեր,— հազիվ զսպելով բամբ ձայնի կոպտությունը, զեկուցեց Բակուր գյուղապետը։— Դենշապուհի հարկահանները կողոպտեցին վանքը, քանդեցին, հանեցին ցորենի բոլոր պաշարները, հավաքեցին անասունները, վանականներին ծեծեցին, վանահորը ծանր վիրավորեցին...

— Հետո՞, դրա՞ համար եա եկել...— հանգիստորեն ասաց Վասակը։

Բակուր գյուղապետը մի փոքր զարմացած կանգ առավ, հետո շարունակեց.

— Կողոպուտն անցավ շինականներին։ Մտան խրճիթներն ու դատարկեցին ամեն ինչ։ Շինականները դիմադրեցին, սպանեցին հարկահանին ու երկու զինվորի...

— Սպանիչները բռնվա՞ծ են,— հարցրեց Վասակը։

— Ոչ, տեր իմ, փախան լեռները։ Բայց, տեր իմ, հարկահանը մարզպանական հարկն էլ յուրացրեց, չափն անցկացավ ու...

Վասակը ձեռքով նշան արեց լռել։ Գյուղապետը սաստվեց մընաց Վասակի շարագույժ հայացքից։ Զարմացավ, շփոթվեց։ Մի՞թե սխալ զեկուցեց կամ ավել-պակաս խոսեց։ Նա վախով ավելացրեց.

— Ես միջամտեցի։ Ասացի՝ սա մարզպանի երկիրն է, ինչպե՞ս եք համարձակվում։ Հարկը արքայական է, օրինավոր, հարկը չափ ունի, օրենք, չափն անց կացաք...

Վասակը ոտքը խփեց հատակին.

— Բա՛վ է,— գոչեց նա,— հենց այս ժամիս գնա գյուղդ ու եթե անմիջապես չբերես սպանիչներին՝ նրանց կախաղաններից ինքդ կկախվես ձորափին, շան նման։ Իմացա՞ր։ Դե՛, կորի՛ր։

Բակուր գյուղապետը ետ-ետ գնաց ու ծածկվեց վարագույրի հետև, ավելի զարմացած, քան զայրացած այս անսպասելի ու նվաստիչ վերաբերմունքից։

— Դենշապուհի խաղե՞րն են,— ասաց Կոդակը,— ուզում է, որ արքայից ապստամբես, դրա համար էլ ամենից շատ քո երկիրն է ճնշում։ Ես այնտեղ էի, բոլորը տեսա։ Համբերելու բան չէր։

Վասակը անախորժելով լսեց զուտ ճշմարտությունը, այդքան սուր նկատված խորամանկ ու խելացի մարդու խոսքերը։ Բայց Կոդակը շարունակեց կարծես ինքն իրեն.

— Եթե արյաց Հազարապետի իրեն խաղերը չեն իհարկե...

Վասակը ստիպվեց խոսել.

— Ինչո՞ւ Հազարապետինը...

— Նրա համար, տեր իմ, որ մի կողմից փորձի քո հնազանդությունը, ստիպի չբողոքել, հավատարիմ մնալ իրեն, մյուս կողմից էլ թուլացնի երկիրդ։

Վասակը զայրացավ, այնքան որ ճիշտ էր գտնում այդ միտքը։ Մյուս կողմից նրան ամենևին դուր չէր գալիս, որ այդ բաները մտածում և իր մոտ բարձր խոսում էր մի՝ ամենքին ծախվող մարդ։

— Հազարապետը այդպիսի գործեր չի ձեռնարկի,— ասաց նա։

— Ես էլ հենց այդպես եմ մտածում,— իսկույն շտկեց Կոդակը։

— Իսկ արյաց Հազարապետն ի՞նչ է մտադիր,— հարցրեց նա Կոդակին՝ ամփոփվելով կրկին իր մտքերի մեջ։

— Ի՞նչ բանի մտադիր, տեր մարզպան։

— Զորք չի՞ ուղարկում Հայաստան։

— Նշաններ չկային։

— Բարի՛, գնա՛,— ասաց մի փոքր անց Վասակը Կոդակին,— գիշերը կգաս մոտս։

Կոդակը վեր կացավ։

— Ների՛ր համարձակությանս,— ասաց նա և զննեց Վասակին,— պիտի գնա՞ս Արտաշատ։

— Այո, շուտով,— պատասխանեց Վասակը և գլուխը թափ տվեց,— այո, շուտով, շուտով. եթե ոչ՝ այնտեղ մեր սևագլուխները հանդեսը կբանան։

— Հրամա՛ն տուր։

Վասակը ձեռով արեց։ Կոդակը հեռացավ։

Վասակը ծափ տվեց։ Ներս եկավ սենեկապետը։

— Մուշտա՛կ։

— Հրամա՛նդ։

Սենեկապետը արագ դուրս գնաց և վերադարձավ սամույր մուշտակը ձեռին։ Վասակը մի փոքր դժվարությամբ, դեմքը կընճռոտելով, հագավ մուշտակը և դուրս եկավ սենյակից։ Միջանցքում նրան միացավ թիկնապահը։ Նա դուրս գնաց հարկաբաժնից, ամրոցի դարբասով անցավ գնաց անդնդի եզրը։ Երկար ժամանակ կանգնել նայում էր ներքև, ուր ժայռերի բեկորները դարերի ընթացքում գլորվել իրար հետևից, իրար վրա՝ ստեղծել էին ժայռաբեկորների մի բավիղ։ Ներքևի արևկող հովտում ծխում էին արոտները։ Մոտակա ժայռի աշտարակից մի թռչուն «ճը-ճը-չի՛, ճը-ճը-չի՛» էր անում։ Նա ավետում էր գարնան գալուստը։ Բայց Վասակը մտատանջվում էր այլ հոգսերով։ Վարազվաղանը... որին նա արտաքսել էր Սյունիքից, իր քրոջ հետ դաժան վարվելու և նրան տանջամահ անելու պատճառով։ Նրան զբաղեցրեց Կոդակի խոսքը, թե Հազարապետը Վասակի թշնամուն պահում է իր ձեռքում, որպես-

զի ձեռքում պահի Վասակին։ Եվ Վասակը մտածել սկսեց, որ Վարազվաղանը փառասեր է, պատիվների ու դիրքի ձգտող. նա ուրացել է և դառել է պարսից արքունիքի գործիքը։ Այս նշանակում է Հազարապետը մրցման մեջ է դնում Վասակին և Վարազվաղանին։ Եթե Վասակը չգնա զիջումների, գործակցության ուղիով՝ Վարազվաղանը կգնա։ Եվ եթե Վարազվաղանը մրցանակը տանի՝ նա կնստի մարզպան իր տեղը։ «Եվ կքանդի՞ երկիրը... սատանայի ծընունդը»,— մռմռաց Վասակը։ Այս մտատանջումների մեջ էր, որ հետևից պատանեկան կրծքից դուրս թռած ուրախագին բացականչություններ լսեց։ Նա ետ նայեց։ Դեպի ինքն էին գալիս երկու պատանի։ Նրանք ձեռքներին աղեղներ ունեին և մեջքներին նետերով լի կապարճներ։ Երևում է, որ նրանք գնում էին վարժվելու։ Նրանք մոտեցան։

— Հայրի՛կ,— ասաց նրանցից կրտսերը,— Բաբիկն ասում է, գնում ենք արյաց երկիրը. ճշմարի՞տ է։

— Ճշմարիտ է, չենք գնում,— ասաց Վասակը և ժպտաց պատանու աչքերի մեջ։

— Դե, թող կատակը, հայրիկ,— առաջ եկավ պատանին և գրկեց հոր իրանը։

Դա ոսկեգանգուր, կլորգլուխ և խոշոր կապույտ աչքերով պատանի էր, որի սպիտակ, կանացի մորթին նրան տալիս էր օրիորդի տպավորություն։ Մյուսը՝ Բաբիկը, որի մասին խոսեց պատանին՝ սևաչյա, բարձրահասակ պատանի էր, որ հոնքերի տակից էր նայում կամակոր հայացքով, մի փոքր անբարյացակամ։

— Հը, գնո՞ւմ ենք արյաց երկիրը,— հարցրեց նրան Վասակը, աչքերը կատակ խոժոռելով։

Պատանին համառ ու լուռ նայեց հորը։ Հետո թեթև հեգնանքով պատասխանեց.

— Գնացողն էլ դու, չգնացողն էլ, ու ի՞նձ ես հարցնում։

Վասակը լռեց և հայացքով սկսեց շոյել իր զավակներին։ Նա կարծես մի պահ մոռացավ իր մտատանջումները և ընկավ նոր ու հաճելի մի աշխարհ։ Եվ մի այնպիսի մարդու պես, որ բոլորովին մենակ է աշխարհում և միայն մի բան ունի թանկագին ու հարազատ, որով նա բուժում է իր մենությունը, ջերմանում, որին կառչում է հիվանդագին սիրով՝ այնպես էլ Վասակը սիրով հանդիպեց իր զավակներին այդ պահին։

— Իսկ գնալ չե՞ք ուզում,— հարցրեց նա մեղմ ձայնով, որ ամբ վեպի շոյանք էր, քան հարցմունք։

— Ի՞նչ գործ ունենք արյաց երկրում,— հարցրեց Բաբիկը տհաճ եղանակով։

— Զորական կրթություն, Բաբիկ. չէ՞ որ խաստացար մտնել զորական կրթության։

— Այստեղ էլ կարող ենք զորական կրթություն ստանալ,— ասաց Բաբիկը։

— Այստեղ չեք կարող,— մեղմ, բայց վճռական ձայնով ասաց Վասակը։

— Ե՛ս որ՝ չեմ գնա,— համառեց Բաբիկը,— այո, այո, ես չեմ գնա, թող Ներսիկը գնա, որ այդքան շատ ուզում է։

Վասակը ներքին անհանգստությամբ նայեց Բաբիկին և ծանր հայացքը բևեռելով նրա աչքերին՝ սկսեց մտածել։ Ծանր մտքեր էին դրանք, որ նա վանեց իրենից՝ ասելով.

— Դեռ այդ վաղ է, տեսնենք, դեռ չգնացինք, մի՛ վախենաք։

— Ես չեմ վախենում,— ասաց Բաբիկը,— ես չեմ գնալու։

— Որ ժամանակը գա՝ կգնաս։

— Ոչ մի ժամանակ չեմ գնա։

Վասակը հայացքը խոժոռեց Բաբիկի վրա։ Նրան վիրավորեց ա՛չ այն, որ իր զավակը հանդուգն խոսքեր էր ասում իրեն։ Նրան խռովեց խոհերի այլ հախուռն հորձանք, որ լցվեց նրա հոգու մեջ։ Իրավ է՝ այդ խոհերը այնքան էլ պարզորոշ չէին դեռ, բայց նրանց մեջ մի ինչ-որ անախորժ, չարագույժ բան կար։

— Ներսի՛կ,— ժպտաց Վասակը տխուր մտքերի քեռից ազատվելու համար,— այսօր տեսա՞լ ես մայրիկին։

— Տեսել եմ։

— Ի՞նչ է անում։

— Եկ ի՛նքդ իմացիր,— ընդհատեց նրանց Բաբիկը,— այնքան օրերով գիշեր-ցերեկ զբաղած ես մարդիկ ընդունելով ու խոսելով, որ չես էլ մտնում մայրիկի սենյակը։

— Ասա՞, ասա՞, սիրելի Բաբիկ,— հեգնորեն կշտամբեց իրեն Վասակը,— ասա՞, իրավունք ունես։

— Ինչո՞ւ ես հայրիկին կշտամբում,— պաշտպանեց հորը Ներսիկը,— նա մարզպան է, հազար ու մի գործեր ունի։

— Տեսա՞ր,— ասաց Վասակը։

— Ի՞նչ նշանակություն ունի,— համառեց Բաբիկը,— թող ժամանակ գտնի, գա մայրիկին տեսնելու։

— Չի գտնում ժամանակ,— ասաց Ներսիկը։

— Որ ուզենա՝ կգտնի,— պնդեց Բաբիկը։

Վասակը հեզ ու հնազանդ լսում էր իր զավակի այս հանդուգն խոսքերը և տխուր նայում էր նրան, երևի իր սրտում, իր խղճի առաջ ճշմարիտ համարելով նրան։ Զավակները նրա ամենաթանկ երակն էին, նրանց առաջ կարծես անզոր էր դառնում նա։ Թերևս հանգստանում էր նա Բաբիկի անկեղծ ու կոպիտ կշտամբանքներից։

Ներսիկը գրկեց հորը։

— Հայրիկ, իսկ մայրիկը նույնպե՞ս կգա մեզ հետ արյաց երկիրը։

Հարցմունքը հարվածեց Վասակին.

— Մայրի՞կն ինչու գա...

— Ապա նա կթողնի՞, որ մենք առանց իրեն գնանք օտարություն։

— Նա լսել անգամ չի ուզում մեր գնալու մասին,— վրա բերեց Բաբիկը։

Վասակը մռայլվեց։ Նա լուրջ ու մտահոգ նայեց Ներսիկին ու երկար շարունակեց այդպես նայել ու մտածել։ Ապա ինքն իրեն հավաքած և սթափ եղանակով ասաց.

— Իսկ զորականը տանո՞ւմ է ամեն տեղ իր մորը։ Դու ասա, Ներսիկ։ Սա խելք չունի։

— Մի՞թե մենք զորական ենք դառնալու։

— Այո, զորական։ Դա է ձեր ուղին։ Դուք պիտի լրիվ զորական կրթություն ստանաք։

Ներսիկը գլուխը կախեց.

— Ես մենաստան եմ ուզում, հայրիկ։

— Մենաստա՞ն,— զարմացավ և անախորժեց Վասակը,— ո՞վ է մտցրել մեջդ այդ հիմար միտքը։

— Մայրիկը,— շարախինդ եղանակով ասաց Բաբիկը,— նա է մեզ շարունակ կարդում գիրք և խոսում փիլիսոփաների մասին։

— Շատ վատ է անում,— զայրացավ Վասակը և գրկից հեռու վանեց Ներսիկին,— ես կասեմ նրան, որ այլևս ձեզ մենաստան չուղարկի։

— Կուղարկի՞,— համառեց Բաբիկը։

Վասակը խեթ նայեց Բաբիկին և լռեց։ Ապա նա սկսեց անհանգիստ անցուդարձ անել տափարակ ժայռի վրա, մոտեցավ և նստեց անդնդի եզրին։

Այդ միջոցին ձորի կողմից բարձրանում էին մի խումբ եկեղեցականներ։ Նրանք մագլցում էին, երբեմն շորեքթաթ անում, երբեմն վազում։ Երևում էր, որ շատ շտապում էին։ Վասակի թիկնապահը, որ բավական հեռու կանգնած էր նրանից, տեսնելով եկողներին՝ գնաց դեպի ձորամուտը։ Բարձրացողները տեսել էին Վասակին և ըստ երևույթին շտապում էին նրան հենց այդտեղ հասնելու և տեսնվելու հետը։ Վերջապես նրանք մոտեցան և ձորամտի տակին կանգ առան։ Նրանցից զատվեց մի ծերունի վանական և մի փոքր առաջ գալով ներքևից ձայնեց.

— Հրամա՛ն տուր, տեր մարզպան։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Վասակը դժկամ։

— Հրամա՛ն տուր, մի՛ խոսք, ի սե՛ր ամենակալին,— ձայնեց ծերունի վանականը։

Վասակը ձեռքով արեց թիկնապահին։ Սա ետ քաշվեց ձորամուտից, և խումբը արագ բարձրացավ ձորագլուխը։

— Մոտ եկեք,— հրամայեց Վասակը դժկամ։

Ծերունին առաջ նետվեց, խումբը հետևեց նրան։ Ծերունին, որի բաց, մազոտ կուրծքը, գզգզված մազերը և պատառոտված հագուստը ցույց էին տալիս, որ կողոպտված մի այլ աղքատիկ վանքից էր, եկավ ընկավ Վասակի ոտքերը, ապա բարձրացավ ու մնալով չոքած՝ սկսեց կուրծքը ծեծել.

— Կողոպտեցի՞ի՞ն, մերկացրին, կլպեցին Դենշապուհի հարկահանները, վանքի ունևորն ու չունևորը չեն նայում։ Մենք աղքատ վանք ենք։ Տաժանելի հարկ դրեց վանքի վրա, ամեն ինչ տարավ։ Վանքը որ վառես՝ ծուխ չի դուրս գա։ Փրկի՞ր մեզ, տեր մարզպան։

— Փրկի՞ր մեզ,— ձայնակցեցին մյուս վանականները հևալով և շառագունած վերելքի վազքից։ Ծերունի վանականի գյուղացիական ոճը, խմբի պատառոտուն քուրձերը, որ ցույց էին տալիս, որ կողոպտվել էին մինչև տակը և ծեծվել՝ Վասակի մեջ շարժեց ոչ թե գութ, այլ զայրույթ։ Դա զայրույթ էր և՛ Դենշապուհի, և՛ Հազկերտի դեմ։

Վասակը այս և նման դեպքերի մասին հաճախ էր լսում։ Գիտեր այդ բոնությունները։ Բայց նա լռում էր և քաշվելով իր ամրոցը՝ մտածում էր այդ ամենի մասին։ Մտածում էր գիշեր-ցերեկ, բայց չէր գտնում ոչ մի ելք։ Նա միայն մի բան էր հասկանում, որ այս կնճիռները լուծելու համար մեծ ձեռնարկումներ են պետք։ Նա զգում էր, որ երկրի դեմ գալիս է մի այնպիսի վիթխարի հեղեղ, որի ամբարտակի ճեղքերը ձեռներով չի կարելի փակել։ Կամ պետք էր թույլ տալ, որ հեղեղը խորտակեր կարկատած ամբարտակը և ողողեր ամեն բան, կամ պետք էր կառուցել մի այնպիսի նոր ամբարտակ, որ պահեր հեղեղի հորձանքը։

Վասակը քստմնելով նայեց գետնին սողացող այս վանականներին և զայրացած գոչեց.

— Գնացեք վա՛նք, տվե՛ք հարկը, հետո կտեսնենք։

— Ունե՞նք, տե՛ր մարզպան, չունե՞նք, մե՛կ մաշկ ունենք, մե՛կ հոգի,— գյուղացու պես ձայնը ծոր գցեց ծերունի վանականը։

— Գնացե՛ք, գնացե՛ք,— հրամայեց Վասակը դաժանորեն։

Թիկնապահն առաջ եկավ։

Ծերունին վեր կացավ և ցնցոտիների միջից վեր կարկառեց իր սևացած, նիհար ձեռները, ծերունու շրթունքները դողացին, նա բառերը ծամելով հեռացավ։ Խումբը հետևեց նրան։ Նրանք իջան ձորը։

— Ո՛չ մի վանականի և շինականի մի թույլ տաք մոտենան ամրոցին,— հրամայեց Վասակը պահակապետին, որ հեռուն կանգնած խեթ նայում էր հեռացող վանականներին։

Դեռ երկար նայում էր նրանց Վասակը։ Նրա մեջ մոլեգնեց զայրույթը։ Բայց և դա վանականների համար չէր։ Նա զգում էր, որ ոչինչ էլ չէր անի վանականներին օգնելու համար։ Բայց վանականներին հասցրած հարվածն ու վիրավորանքը ընդունում էր վիրավորանք իր իշխանության, իր անձի հասցեին։

— Դենշապուհն արքա՞ է դառել մեր երկրում,— դառնությամբ խոսեց Բաբիկը։

Վասակը խոցվեց և շեշտակի նայելով Բաբիկին, գոռաց նրա վրա.

— Դե՛, իսկույնևեթ գնա օթևա՛ն։

Նրա հայացքը վայրի էր, չարագույժ։ Բաբիկը գիտեր հոր նաև կարծր կողմերը, ուստի և գլխիկոր հեռացավ։ Նրան հետևեց նույն-

պես մեղավորի տեսքով — թեև մեղք չուներ — նաև Ներսիկը։

— Դենշապո՞ւհը... շո՞ւնը...— մռմռաց Վասակը յուրովի և վերցնելով մի քար՝ նետեց անդունդը։

Հետո դարձավ թիկնապահին։

— Կանչի՛ր ախոռապետին։

Մի փոքր անց գնդլիկ մի մարդ գլորվելու շարժումներով վազեց եկավ։

— Ժժույգները պատրաստիր, վաղն առավոտ մեկնում եմ Արտաշատ ամբողջ համհարզով։

— Հրամանդ ի կատա՛ր,— ասաց կանացի ձայնով ախոռապետը և բարև բռնած հեռացավ։

Վասակը վեր կացավ, որ գնա ամրոց։ Սակայն այդ պահին նրա ուշադրությունը գրավեց դիմացի անդնդի կողմը ինչ-որ տարօրինակ շարժում։ Մի խումբ հեծյալներ ձիերը քշելով գալիս էին դեպի ամրոց։ Նրանք արշավում էին բարակ արահետով և սաստիկ հապճեպի մեջ էին։ Հասնելով մի որոշ տեղ, նրանք կանգ առան և սկսեցին դիտել ժայռի լանջը։

— Ի՞նչ կա այնտեղ,— հարցրեց Վասակը հավաքված սպասավորներին։

— Փախստականներ են,— ասացին սրանք,— ժայռի լանջը բարձրացան։

Վասակը ավելի սրեց հայացքը և նոր տեսավ մի խումբ մարդկանց, որ անհավատալի ճարպկությամբ մագլցում էին ժայռի կրծքին, միտելով վեր, անտառը։

— Շինականներ են, տեր իմ,— ասաց սպասավորը։

Անդնդի հատակում խռնված հեծյալները արահետ որոնելով սկսեցին բարձրանալ ժայռի լանջով։ Շինականները արագ հասան քարափին, այնտեղից էլ՝ անտառը և կորան ծառերի մեջ։

— Էլ որտեղի՞ց կհասնեն, կորա՞ն,— ասաց թիկնապահը։

Վասակը մռայլվեց։ Հարկահանին և զինվորներին սպանող շինականներն էին դրանք Առաքելի գլխավորությամբ։

***

Ներքին հարկաբաժիններից մեկի օթևանում, որ բացվում էր արևելահայաց անդունդի վրա՝ նստած էր մի սևազգեստ կին։ Նա իր խրոխտ ու լուրջ սև աչքերը հառել էր գրակալի մատյանին և նայում էր առանց կարդալու, սուզված խոր մտքերի մեջ։ Նա գլխին ու ճակատին սև մետաքսե շոր էր քաշել, որ գլխանոցի պես պինդ շրջանակել էր նրա գունատ, մարմարե ճակատն ու դեմքը։ Հոնքերը սևաթավիշ ու միացած՝ ազդում էին կամային, մարտնչող մի ոգու թաքուցյալ ուժով։ Հպարտ քիթը մի տեսակ վեհության շուք էր բերում նրա բարձր բռնած դեմքին։

Սակայն զննող հայացքը կարող էր նկատել նրա խոհուն աչքերում թաքնված այն խոր թախիծներից մեկը, որ մշտական լինելով՝ մաշում է ծածուկ և չթուլացող ուժով։

Ներս մտավ մի բարձրահասակ ու շորուցամաք կին և եռանդուն, խուզարկող հայացքով սուր-նայեց տիկնոջը։

— Հա, դո՞ւ ես, Զվիկ,— հարցրեց տիկինը։

— Վարազդո՛ւխտը,— բազմանշանակ աչքով արեց Զվիկը և մի կողմ քաշվելով՝ նայեց դռան կողմը, որտեղից պիտի մտներ եկողը։

— Հրայամի՛ր, իշխանուհին այստեղ է։

Ներս մտավ մի նրբամարմին, սև ու գողտրիկ, բավական երիտասարդ կին, որի փղոսկրյա նուրբ-դեղնավուն դեմքին գծված էին անփայլ սևամուր հոնքեր, որ աղեղում էին նրա խորաթափանց աչքերը։ Նա գեղեցիկ էր խելքահան անելու չափ։ Կակաչի միջուկի սեվության երկար թարթիչները բացուխուփ լինելիս՝ թափահարում էին օդը ծիծեռնակի թևերի պես։ Նա ճկուն էր, վայրի կատու, խիզախ, գիշատիչ։

Տեսնելով նրան՝ տիկինը թեթև կծկեց դեմքի մկանները, բայց իսկույն ճմլեց այդ կծկումը և տխուր ժպտաց։ Վարազդուխտը մոտեցավ և գրկեց տիկնոջը։

Հետո նայելով մատյանին՝ շշնջաց.

— Էլի՞ մատյան. ես կարդում, Փառանձեմ տիկին։

Տիկինը ներքին անհանգստությամբ նայեց Վարազդուխտին և լռեց։ Սակայն սա զգալով տիկնոջ խռովքը, որ ըստ երևույթին նրան այլ առիթներով ծանոթ էր՝ ուզեց խոսելով խլացնել.

— Իսկ ո՞ւր են Բաբիկն ու Ներսիկը։

— Չգիտեմ, որսի են գնացել, թե նետաձգության,— ասաց Փառանձեմ տիկինը և շարունակեց անհանգիստ նայել Վարազդուխտին։

Նրանք երկար անշարժացան՝ լուռ, իրենց մտքերով պաշարված, հայացք հայացքի։

— Մարզպանը հո չի՞ մեկնում այսօր,— հարցրեց Վարազդուխտն անհանգիստ։

— Չգիտեմ,— պատասխանեց Փառանձեմ տիկինը հուզված։

Այդ միջոցին ներս մտավ Վասակը։ Նա մոայլ նայեց ներս՝ Փառանձեմին ջոկ, Վարազդուխտին ջոկ և առաջ եկավ կանգնեց օթևանի մեջտեղ։

Զվիկը մնաց իր տեղում և լարված սպասեց։

— Ինչո՞ւ ես տղաներին խելքից հանում,— դարձավ Վասակը Փառանձեմին,— ինչո՞ւ ես մենաստանների ճանապարհը սովորեցնում։ Ես նրանց Պարսկաստան եմ տանելու զինվորական կրթության։ Նրանք կրոնավոր չեն դառնա։ Եվ ի՞նչ ես քնքշացրել նրանց։ Մա՞յրը որն է օտարության մեջ, մորն ո՞վ է իմացել հետները տանեն Պարսկաստան, որ առանց մոր չգնան։ Պատրաստել տուր երկուսի զգեստները, շուտով ճանապարհ կընկնեն Պարսկաստան։

Հետո, առանց սպասելու Փառանձեմի պատասխանին՝ դարձավ Վարազդուխտին։

— Գնա՛նք...

Այս ասելով արագ շրջվեց դեպի դուռը և գնաց։ Վարազդուխտը հետևեց նրան։ Փառանձեմը հպարտ բարկությամբ նայեց նրանց հետևից։

Զվիկը, որի ազատ վարվեցողությունն ու ներկա լինելու իրավունքը ցույց էին տալիս, որ նա Փառանձեմի մոտ ավելի մտերիմ, հարգված ընկեր է, քան սպասուհի՝ երբ ներսն էին Վասակը և Վարազդուխտը՝ աչքի տակով թաքուն անբարյացակամ նայում էր նրանց և ծածկելու համար իր ներքին խռովքը՝ դուրս էր նայում պատուհանից դեպի անդունդը։

— Մարզպանը տե՞ղ է գնում, տիկին,— հարցրեց Զվիկը խորազնին աչքերը Փառանձեմի աչքերին հառած։

— Աստված գիտե,— պատասխանեց Փառանձեմը վիրավորված,— նրա ի՞նչն ենք մենք իմանում։

Զվիկը չխոսեց Վարազդուխտի մասին՝ չվիրավորելու համար Փառանձեմի ինքնասիրությունը։ Բայց երբ նայել սկսեց նրան, և երկուսի հայացքներն իրար մեջ երկար կանգ առան՝ նրանք ավելի հասկանալի խոսեցին իրար հետ այդ մասին։

— Բայց կգնա մի տեղ, չի մնա երկար,— ասաց Զվիկը՝ շարունակելով նույն միտքը և կամենալով հեռվից հանգստացնել Փառանձեմին։

— Գնա՝ չգնա...— ասաց տխրաձայն Փառանձեմը։

— Չէ, ինչո՞ւ ես այդպես ասում, տիկի՛ն, այ հիմի կգնա Պարսկաստան։

— Ի՞նչ անեմ. երեխաներիս էլ կտանի հետը։

— Է՛, լա՜վ է, թող թեկո՛ւզ երեխաներին էլ տանի, մենակ թե գնա այստեղից,— մի տեսակ ինքն էլ գաղազած ասաց Զվիկը։

Փառանձեմը տխուր ու խոհուն լռեց։ Հետո հեզ հեգնանքով խոսեց՝ ասես ինքն իրեն։

— Պարսկաստան կգնա, հետը կտանի սրան... Չի՞ արել, որ չանի էլ։ Պարսկաստանում չէի՞ն հինգ տարի առաջ։

Զվիկը գլխով համաձայնության նշան արեց և ձեռները խաչաձևելով կրծքին, նայեց դուրս, անդունդը։

— Սև ու մութ լիներ այն օրը, որ սա նրան չհանդիպեր,— ասաց Զվիկը՝ արդեն տեսնելով, որ խոսքը ինքն իրեն բացվեց։

Նրանք չէին խոսում երկար ժամանակ։ Զվիկը կծկվեց մնաց պատուհանի գոգում, երբեմն գաղտնի դիտելով Փառանձեմի դեմքի այլայլումները։ Որ Փառանձեմը խոր ապրում էր մի փոքր առաջվա դեպքը, դա անկարելի էր չնկատել։ Վասակն ուներ այդ ձևերը տան մեջ։ Իսկ Վարազդուխտի այցելություններն իրենց ամրոց և առանձնացումները Վասակի հետ հին բաներ էին։ Թվում է, թե Փառանձեմը կամ պիտի բողոքած և հեռացած լիներ, կամ հաշտված։ Բայց ահա տարիներ տևում էր այս անհանդուրժելի վիճակը՝ չթուլացող հանդգնությամբ և համառությամբ։ Ի՞նչ կար Վասակի ու Վարազդուխտի մեջ. ոչ ոք չգիտեր։ Մռայլ վարագույրը ծածկում էր մի անվերծանելի գաղտնիք. Վարազդուխտը՝ Վարազվաղանի, Վասակի փեսայի քրոջ աղջիկն էր։ Նա այցելում էր Վասակին այս բարեկամական հանգամանքով։ Բայց թե ինչպե՛ս կարելի էր բացեիբաց ժամերով առանձնանալ Վասակի օթևանում՝ դա արդեն անսանձ Վասակի բռնակալական հանդգնությունն էր։

Ներս մտավ Ներսիկը։ Նա վրդովված էր և տխուր։

— Մո՛տ արի,— գորովանքով կանչեց իր մոտ Փառանձեմը։

Ներսիկը չմոտեցավ, այլ գնաց պատուհանի մոտ, կանգնեց Զվիկի կողքին և բռնեց նրա ձեռը։

— Ո՞վ է նեղացրել,— հարցրեց ցածրաձայն Զվիկը։

— Պարսկաստան է տանում մեզ,— գոչեց Ներսիկը լացակումած — ի՞նչ գործ ունեմ Պարսկաստանում։

— Պարսկաստա՞ն է տանում...— հառաչեց Փառանձեմը,— ձեզ է՞լ ասաց։

— Ես գնացողը չեմ, ես չեմ գնա,— լաց եղավ Ներսիկը։

— Տես, է՞...— ասաց Զվիկը և կշտամբելով նայեց Փառանձեմին։

— Հիմա էլ երեխաներին չի թողնում ինձ մոտ,— անհանգստացած, տարակուսած ձայնով ասաց Փառանձեմը և դարձավ Ներսիկին,— եկ մո՛տս, չգնացիր դեռ, մի՛ վախենա։

— Չեմ վախենում, բայց որ ասում է՝ սիրտս դողում է. ես առանց քեզ ոչ մի տեղ չեմ գնա։

— Չես գնա, լաց մի լինի։ Ես կթողնե՞մ, որ քեզ տանեն։

— Ասաց՝ հաստատ անպատճառ պիտի գնաք։

Դռան հետև խլրտոց լսվեց, զսպված աղմուկ և Բաբիկի բարկացած ձայնը.

— Ձքվի՛ր աչքիցս, ճիճո՛ւ, գլո՛ւխդ կջարդեմ։

Զվիկը վազեց այն կողմը.

— Բաբիկ, ի՞նչ է եղել, նե՛րս արի, Բաբի՛կ,— ասաց նա և համոզիչ մեղմությամբ թևից բռնած ներս բերեց Բաբիկին։

Նրա հետևից ներս մտավ պարսկական զգեստով մի երիտասարդ՝ հաստաշուրթ, կապույտի խփող կաս-կարմիր դեմքի ուռած այտերով։ Նա արագ հայացքներ նետելով մեկ Փառանձեմի, մեկ Բաբիկի կողմը՝ սպասում էր, որ Բաբիկը հնազանդվի և զսպվի։

— Քեզ ասացի՝ կորի՛ր, չե՛մ գալիս։

Երիտասարդը դարձավ Փառանձեմին.

— Տիկին, տեր մարզպանն է հրամայել, պարսկերենը երկու ամսում վերջացնել. չի գալիս դասի։

Նա խոսեց պարսկերեն։

— Իսկ ինչո՞ւ երկու ամսում,— հարցրեց Փառանձեմը հայերեն։

— Պետք է Պարսկաստան գնան,— ասաց երիտասարդը պարսկերեն։

— Երկու ամսում պարսկերենը վերջացնել... Իսկ հայո՞ց լեզուն երբ սովորենք,— ասաց Բաբիկը։

Դասատուն քիթ ու պռունկը ծռմռեց արհամարհանքով։

— Դուք պարսիկներին պիտի ծառայեք. ի՞նչ հայոց լեզու...

Բաբիկը մի քացի տվեց նրան։

Դասատուն խիստ վիրավորված և չարությունից պայթելով դարձավ Փառանձեմին.

— Ինչո՞ւ է խփում ինձ։ Ի՞նչ ասացի։ Շուտով բոլորը կպարսկանան՝ կվերջանա կգնա,— արդեն խոցելու մարմաջով հակաճառեց դասատուն։

— Դու դո՛ւրս կորի այստեղից և այսուհետև չհամարձակվես սրանց դաս տալ,— գոչեց Փառանձեմը դողահար։

Երիտասարդը դուրս գնաց մրթմրթալով։

— Ետ արի՛,— գոչեց Փառանձեմը։

Դասատուն ետ եկավ։

— Դու քո մրթմրթոցը կտրի՛ր, երբ իմ օթևանումն ես։ Իմացա՞ր։

Դասատուն չպատասխանեց։

— Դու քո մրթմրթոցը կտրի՛ր, երբ իմ օթևանումն ես,— կրկնեց Փառանձեմը,— ասա՛, իմացա՞ր...

— Իմացա՛,— ասաց դասատուն պարսկերեն։

— Հայերեն ասա, անասուն,— գոչեց Փառանձեմը։

Դասատուն չարությամբ նայեց նրան և պարսկերեն ասաց.

— Ես հայ չեմ, ես պարսիկ եմ։

Զվիկը հարձակվեց, որ դուրս շպրտի դասատուին, բայց Փառանձեմը կանգնեցրեց նրան և դարձավ դասատուին.

— Դու պարսիկ էլ չես կարող դառնալ։ Ստրուկները ոչինչ չեն դառնում, բացի ստոր սողունից։ Դե կորի՛ր...

Դասատուն հեռացավ՝ շրթունքները կրծելով։

Փառանձեմը վրդովված ու անհանգիստ սկսեց ման գալ օթևանում։

Բաբիկն ու Ներսիկը գնացին։

Փառանձեմն զգում էր, որ իր զավակների ներկայությամբ չէր կարելի այսքան առաջ գնալ և մատնել իր և իր ամուսնու հարա-

բերությունները. բայց Վարազդուխտի և Վասակի վարմունքները նրան շեղեցին իր սովորական զուսպ դիրքից։ Նա պոռթկաց, որ հանգստանա։

— Խլում է զավակնե՞րս, խլում է և նրանց լեզո՞ւն...—լացակումեց մինչև հոգու խորքը վիրավորված կինը,— իրե՛ն մնա, ինչ որ ավելի խլել է ինձանից։ Զավակնե՛րս թողնի ինձ։

Անսպասելի ներս ընկավ Վասակը։ Նա այլայլվել էր, գունատվել։ Այսպիսի րոպեներին նա սարսափելի էր։ Նա հևում էր զայրույթից։ Նրան հետևեց պարսկերենի դասատուն, որ Փառանձեմի երկյուղից կանգնեց վարագույրի մեջ։ Վասակը նայեց Զվիկին և հրամայեց.

— Կանչի՛ր այստեղ Բաբիկին ու Ներսիկին։

Զվիկը գնաց։ Ու մինչ Զվիկը կվերադառնար՝ Վասակն սկսեց լուռ անցուդարձ անել։ Նա մի անգամ էլ չնայեց Փառանձեմին։ Չնայեց նրան նաև Փառանձեմը։

Եկան Բաբիկն ու Ներսիկը։

Վասակը շանթահար խեթեց նրանց.

— Իսկույնևեթ գնացեք պարսկերենի դասին։ Եվ սրանից հետո չհամարձակվե՛ք հայերեն խոսել։ Կխոսեք պարսկերե՛ն։ Իմացա՞ք։

Տղաները լռեցին։

— Ձեզ հետ չե՞մ,— սպառնաց Վասակը։

— Ես հայերենը չեմ թողնի,— ասաց Բաբիկը տակից վեր նայելով համառ ու չար։

Նա այդ րոպեին նման էր հորը։

— Եկ այստե՛ղ,— հրամայեց ցածր ձայնով Վասակը։

Բաբիկը մոտեցավ.

— Խփի՛ր... ես պարսիկներին չեմ ծառայի...

Վասակը ապտակեց նրան։

— Սպանի՛ր թեկուզ... չեմ ծառայի...

Վասակը մի ապտակ ևս հասցրեց.

— Դու դիմադա՞րձ ես կանգնում ինձ...

— Զո՞ւր է, պարսիկներին չեմ ծառայի...

Վասակի դեմքն այլանդակվեց, աչքերի բիբերը ցայտեցին դուրս. նա վայր դցեց Բաբիկին և սկսեց մոլեգին ծեծել։ Չէր միջամտում ոչ ոք։ Փառանձեմը հպարտ ու լուռ ատելությամբ նայում

էր Վասակին։ Զվիկը սեղմվել էր պատին։ Ներսիկը վախեցած, աչքերն արցունք՝ նայում էր ու անլսելի հեծկլտում։ Անհուն բավականությամբ դիտում էր միայն պարսկերենի դասատուն։ Վասակին զայրացրեց Փառանձեմի հպարտ լռությունը։ Բաբիկն արյունլվա եղավ, բայց Փառանձեմը չմիջամտեցյ Վասակն այդ համարեց լուռ դիմադրություն և ավելի կատաղեց։ Նա ավելի կատաղեց նրանից, որ Բաբիկը ոչ մի խոսք չասեց և չխնդրեց ներել։

Թափելով իր ողջ կիրքը՝ Վասակը դադարեց վերջապես։ Հետո հնաց, ձեռները շփեց, նայեց Բաբիկին, որ կապտել էր զայրույթից ու ցավից։

Վասակը հարձակվեց Փառանձեմի վրա.

— Դու տունս եկեղեցի ես դարձրել, դու իմ զավակներին իմ դեմ ես հանում։ Կախաղանների վրա ճոճել կտամ քեզ ու քո զավակներին։

Փառանձեմը հրացայտ հայացքով համարձակ նայեց Վասակին և աչքերը սևեռեց ազնիվ բարկությամբ։ Դա ազդեց ավելի, քան խոսքը։ Վասակը դարձավ պարսկերենի դասատուին։

— Տա՛ր սրանց և սկսի՛ր դասը։ Եթե սրանք հայերեն խոսեցին՝ կգնա՛ գլուխդ։

— Ինչպես հրամայեցի՛ր,— արագախոս վրա բերեց դասատուն և հայացքով կանչեց Բաբիկին ու Ներսիկին։

Սրանք հեռացան։

Վասակը դարձավ Փառանձեմին.

— Մյուս անգամ թե կրկնվել է այս դիմադարձությունը՝ իսկապես կսպանեմ նրանց։ Իմ տանը այլևս հայերեն չպիտի խոսվի։

Ու արագ հեռացավ։

Զվիկը դուրս գնաց նրա հետևից՝ գուշակելով մի չար բան։ Նրա բնազդը չխաբեց։ Բաբիկի սենյակից աղմուկ լսվեց։ Նա ներս մտավ։ Բաբիկը տակն էր գցել դասատուին և ծեծում էր։ Արյունը հորդում էր դասատուի քթից ու բերանից։ Նա խռպոտ ձայներ էր արձակում, աշխատում ազատվել, օգնություն էր կանչում, բայց Բաբիկը մոլեգնաբար ծեծում էր ու ծեծում։

— Բաբի՛կ, Բաբի՛կ,— վրա հասավ Զվիկը,— թո՛ղ, թո՛ղ...

Բաբիկը ավելի կատաղեց։ Նա հարվածում էր առանց նայելու, թե ուր էր հասնում հարվածը։ Զվիկը շատ մեծ դժվարությամբ, ուղղակի աղաչելով, լաց լինելով մի կերպ ազատեց դասատուին։

Սա վեր թռավ, հագուստը թափ տվեց, քիթ ու պռունկը մաքրեց և փնչացրեց։

— Դե ես հիմա կգանգատվեմ իշխանին՝ դու հարսանիքդ տես։

Բաբիկը սրվեց դեպի նա։

— Ինձ մտի՛կ. վերջը՝ վերջը նա ինձ չի՛ սպանի, բայց ես քեզ կսպանե՛մ։

Զվիկը մոտ գնաց դասատուին։

— Հանգիստ թող նրան...

— Ախր տես ի՛նչ արեց,— լացակումեց դասատուն։

— Զորը կնետեմ դիակդ, մորս արևը վկա,— սպառնաց Բաբիկը։

— Գնա գործիդ... ձեռ քաշի,— հորդորեց Զվիկը։

Դասատուն քրթմնջաց, սրբվեց ու նստեց։

— Առա՞ր դասդ,— ասաց Բաբիկը,— դե՛ հիմա հանգստացիր։ Կգնա՞ս մեկ էլ գանգատվելու։

Զվիկը բռնեց Բաբիկի թևը և խրատեց։

— Դե բավական է, Բաբիկ, տիկինն անհանգիստ է։

— Սա իմ մորը գցի իմ հոր աչքո՞ւմ, անպատվի նրան իմ հոր ձեռքո՞վ...— վրդովված խոսեց Բաբիկը։

Զվիկը դուրս եկավ Բաբիկի մոտից և գնաց Փառանձեմի մոտ։

— Ի՞նչ կար,— հարցրեց Փառանձեմը։

Զվիկը պատմեց։ Փառանձեմը անհանգստացավ։

— Մեր տունը դժոխք է դառել։ Հայ չենք, պարսիկ չենք, բայց իրար դեմ կռվի ենք դուրս եկել։

Զվիկը նկատեց.

— Բայց հոր կտորն է, հա՞...

— Կատաղի է։ Ի՞նչ պիտի լինի դրա վիճակը Պարսկաստանում։

Վասակը, որ դասատուի գանգատից զայրացած վազել էր Փառանձեմի մոտ՝ վերադարձավ իր օթևանը։ Նա դեռ հեռում էր բարկությունից։ Նրան այդ վիճակում տեսնելով՝ Վարազդուխտը չխոսեց։ Նրանք երկար լռեցին։ Վարազդուխտին ծանոթ էին Վասակի վայրենի բռնկումները, այնպես որ՝ իբրև սովորական բան, նա սպասեց, որ ամնցնի ցասումը։ Հետո իբրև շարունակություն իրենց խոսակցության՝ նա ասաց.

— Դենշապուհը մի դեպքում կհաղթի մեզ։

Վասակը, որ դեռ զայրույթի ազդեցության տակ էր՝ խոժոռ նայեց նրան։

— Մի՛ դեպքում ասում եմ, եթե Վարազվաղանը քեզ հաղթի այնտեղ։ Ի՞նչ լուր նրանից։

— Դավում է։

— Ավելի շատ է տալիս...

— Այո...

— Այդ դեպքում դա վերջ չունի։ Միհրներսեհը կսկսի, հեռի քեզանից, շան ոսկորի խաղը։

— Սկսել է...

Վարազդուխտը մտածեց և հանգեց հետևյալ եզրակացության։

— Ասել է՝ հարկավոր է, որ ես կրկին գնամ Պարսկաստան։ Պետք է Վարազվաղանին գցել։

— Գնա՛։

— Այս անգամ էլ գուցե պատահի գլուխս մահու վտանգի տամ, բայց կգնամ։

— Գնա՛։

— Այո. հակառակի բան չի՞, այն անգամ ուղիղ մահից պըրծա, բայց ասածս արի, ամրացրի մարզպանությունդ։ Դե՛, որ ես անձս վտանգեցի, դա ձեռք բերի՝ հիմա էլ կվտանգեմ, որ ավելի բարձրանաս։

Եվ Վարազդուխտը հիացմունքով սկսեց դիտել Վասակին ոտից գլուխ։ Կարծես առաջին անգամն էր տեսնում նրան։ Նա կարծես նրա հագուստն ու հասակն էր քննում։ Հետո նա ասաց.

— Նայում եմ հասակիդ, զգեստիդ և քեզ տեսնում եմ ուրիշ զգեստով ու դիրքով։

— Ի՞նչ դիրքով,— դեռ բարկացած և խոժոռ հարցրեց Վասակը և կանգ առավ նրա առաջ։

— Ավելի բարձր իշխանության գլուխ կանգնած, ավելի շքե՞ղ, զարդարվա՞ծ։ Կլինի՞, տեր իմ մարզպան, գլխի՞ս տեր...

Եվ գրկեց նրա ձեռքը, ամուր սեղմեց իր դեմքին։

Վասակը չարգելեց այդ շարժումը, բայց և ջերմություն ցույց չտվեց, հեռացավ և շարունակեց անցուդարձը։ Վարազդուխտը այդ զգաց, բայց վերագրեց նրա զայրույթին։ Միաժամանակ և խոցվեց նրա կանացի ինքնասիրությունը։

— Վարազվաղանն է արգելում քեզ բարձրանալ,— շարունակեց Վարազդուխտը՝ նոր մտքի գալով,— ինչպես որ դու էլ խանգարում ես նրան։ Մեջտեղն օգտվում է Միհրներսեհը, չի տալիս ոչ մեկիդ բարձր իշխանություն։ Եվ պարսիկները չեն տա այդ՝ քանի հնարքը նրանց ձեռին է։ Հնարքը պետք է կամ Վարազվաղանը ձեռք բերի, կամ դու։ Դու պետք է այնպես բերես բանի ոլորքը, որ Միհրներսեհը պարզ տեսնի, որ միայն քեզանից է կախված գործը։ Մրցումից պետք է դուրս գաս։

Վասակին շատ դուր եկան խելացի և խորամանկ կնոջ դատողությունները։ Նա կանգնեց, ժպտաց և շոյեց նրա այտը։

Վարազդուխտը խանդաղատանքով նայեց նրան և աչքերը գինովցան բուռն սիրո հորդումից։ Նա այնպես էր զգում Վասակի մոտ, ինչպես լինում է հին սիրո տեր հոգիներին՝ որ գերված են վերջնապես, որ էլ փրկություն չունեն, քանի որ այդ սերը դառնում է բնավորություն, կյանքի միակ հնարը, անփոխարինելին։ Այդպիսի հոգիներն են ճաշակում այն երջանկությունը կամ դառնությունը, որ տալ գիտե միմիայն վաղեմությունը՝ ինչպես՝ գինու, ընկերի, կյանքի։ Այդ գերվածությունը տանջում է մարդու, երբ նա սկսում է կորցնել սիրո առարկան կամ կասկածում է թե կկորցնի...

Վարազդուխտը այս արտակարգ ու սայթաքուն ուղին ընկավ Վասակի և իր քեռու մեջ ընկած կապերի հանգամանքով։ Վարազվաղանը, որ տանջամահ էր արել Վասակի քրոջը, իր առաջվա կնոջը, լքել երկրորդ կնոջը և Վասակից արտաքսվելով գնացել էր Պարսկաստան հավատուրաց եղել, իր դեմ էր լարել քրոջ աղջկան, որ այնուհետև սկսել էր եռանդով պայքարել նրա դեմ հօգուտ Վասակի։ Նա գնացել էր Պարսկաստան, ապրել նրա մոտ և նրա պարսիկ կնոջ միջոցով մտել արքունական կանանց շրջանը և նրանց ամուսինների ձեռքով հարթել ճանապարհը Վասակի մարզպանության։ Վարազվաղանը գլխի էր ընկել, որ իրեն դավողներ կան, սկսել էր հետախուզել։ Կասկածն ընկել էր իր քրոջ աղջկա վրա։ Կամեցել էր սպանել և հազիվ ետ էր կացել դրանից՝ անսալով իր կնոջ բացատրություններին։ Անշուշտ Միհրներսեհը չէր առաջնորդվի որևէ այլ կարծիքով, քան այն հաշվով, որ Վասակը իբրև նախարար, այն էլ կարևոր նախարարական տոհմի, ինչպես Սյունիքն է, գերադասելի է, քան մի փախստական Վարազվաղան, բայց վերջինս այդ հասկանալով շատ պարսիկ մեծամեծների կաշառում էր, որ վար-

կաբեկեն Վասակին և դուրս բերեն անազդեցիկ՝ հայ նախարարների մեջ։ Նա Վասակի դեմ լարեց Դենշապուհին։ Նա այդ գործով գնաց արքունի Դուռը, որ հաջողեցնի Վասակին տապալել և Վարազվաղանին մարզպան նշանակել։ Ահա այդտեղ մեծ դեր կատարեց Վարազդուխտը պարսիկ մեծամեծի շատ ազդեցիկ մի տիկնոջ միջոցով՝ խանգարելով հրաժարեցումը, ամենքին համոզելով, որ Վասակը մեծ կշիռ ունի հայ նախարարների մեջ։

Այլ կերպ եղավ, որ Վասակը կապվեց Վարազդուխտի հետ։ Նա եկավ մի օր գանգատվեց Վարազվաղանի գաղտնային արարքներից։ Վասակի քրոջ տանջամահից հետո, երբ հիմա էլ երկրորդ կընոջն էր տանջում. Վարազդուխտի գանգատները առիթ եղան, որ սա շուտ-շուտ այցելեր Վասակին։

Գլխահանող գեղեցկությունը, ճարպիկ, համարձակ ձևերը, թարմ հասակը գերեցին այն ժամանակ Վասակին, և նա սիրեց երիտասարդ Վարազդուխտին։ Երբեմն կանչում էր իր մոտ և հարցուփորձ անում Վարազվաղանի մասին։ Հետզհետե այս հարցուփորձերին հետևեցին և այլ նյութերի մասին զրույցներ։ Վասակն սկսեց խոր հայացքներ նետել Վարազդուխտի աչքերին։ Սա զգաց այդ և սկզբում խուսափում էր։ Հետո, ավելի ուշ զգաց, որ ինքն սկսում է սովորել հասակավոր Վասակին։ Նա ոչ մի փառասիրական տենչ, ոչ մի սպասում չուներ, քան Վասակի բարձրացումը։ Վասակը արտաքսեց Վարազվաղանին, և երբ սա գնաց Պարսկաստան, սկսեց դավեր նյութել իր դեմ՝ ահա այդ ժամանակ հանդես եկան Վարազդուխտի անզուսպ ու համարձակ վճիռները՝ գնալ Պարսկաստան վնասել իր քեռուն, օգնել Վասակին։ Եվ հենց այդ գործում Վարազդուխտը ձեռք բերեց փորձ ու հմտություն, այդտեղ զարգացավ նրա համարձակությունն ու հանդուգն գործերի հակումը։

Նա չէր միտում ավելին ձեռք բերել Վասակից, քան այն զգացմունքը, որ տածում էր վերջինս գեպի ինքը։ Փառանձեմին նա խրդճում էր, բայց գիտեր նրա և Վասակի պատմությունը։ Վասակը տան բռնակալն էր։ Այստեղ նա արդեն չէր պահպանում ոչ մի պատշաճավորություն։ Նա խստորեն սահմանել էր ամրոցի ներքին կյանքի կանոնները և պահանջում էր, որ դրանց ենթարկվեն ամենքը։ Եվ քանի որ ամենքը ենթարկվում էին՝ արտաքուստ ամեն ինչ խաղաղ էր ամրոցում։ Վասակը բացի բռնակալ լինելը՝ նաև հան-

դուգն էր և անամոթ։ Նա բոլորովին չէր քաշվում ընդունել իր մոտ եքիտասարդ կնոջը, առանձնանալ նրա հետ իր օթևանում։ Վարազդուխտը գիտեր նաև Վասակի և Փառանձեմի ամուսնության պատմությունը։ Փառանձեմը պատրաստվելիս է եղել միանձնուհու կյանքին նվիրվել, բայց բռնակալ հոր հարկադրանքով ստիպվել է ամուսնանալ իրեն անհամակրելի Վասակի հետ։ Սակայն բռնի ամուսնության մեջ նա այնուամենայնիվ կսպասեր, որ այդ ամուսնությունը իրեն կտար գոնե հասարակ անդորր և սովորական «երջանկություն»։ Բայց դա չեղավ։ Վասակը նրա հետ վաղուց սառն էր, ամրոցում ապրում էր նրանից կտրված։ Փառանձեմը գիտեր, որ Վասակն ապրում է ուրիշ կյանքով, տերունական բարդ կյանքով։ Դա հասկանալի էր, բայց երբ Վասակի կյանքի մեջ սկսեց նաև այլ, գաղտնի պատմություն, որ չէր կարողանում նա թափանցել՝ նա սկսեց հետամտել։ Փառանձեմի սպասուհին՝ հավատարիմ ու փորձված Զվիկը միշտ տեղյակ էր պահում նրան այդ մասին։

Փառանձեմին մի փոքր շփոթեցնում էին Վարազդուխտի ջանքերը Վասակի գործերի մեջ։ Իհարկե, Վասակը Փառանձեմին հաղորդակից չէր անում իր պետական գործերին, բայց Փառանձեմը գիտեր, որ Վարազդուխտը նրա գործերի համար գնաց Պարսկաստան, որ նա դավում է Վարազվաղանին, որ նա շարունակում է Վասակի հետ գաղտնի խորհուրդներ անել պետական գործերի մասին։ Բայց մյուս կողմից նա իբրև կին՝ բնազդով զգում էր նրանց հոգեկան կապը։ Վիշտը, վիրավորանքը, Վասակի սանձարձակ վարքագիծը հին էր և շարունակվում էր անփոփոխ ու պիտի շարունակվեր։ Դա գիտեր Փառանձեմը, գիտեր Վարազդուխտը։

Վասակը ջերմություն զգաց Վարազդուխտի հայացքից։ Նրա տրամադրությունը բացվեց։

— Գիտե՞ս ինչ, Դո՛ւխտ,— ասաց նա նստելով իր գահույքին,— եթե մեր գործը այս անգամ էլ հաջողվի, մյուս բոլոր անգամները կհաջողվի։

— Ինչպե՞ս կհաջողվի,— մոտ գնաց Վարազդուխտը և նստեց նրա կողքին։

— Մեծամեծների գործի դժվարությունները այդպես են։ Կեսը իրենք են մղում առաջ՝ մյուս կեսը ուրիշներն են գլորում։

Վարազդուխտը ծիծաղեց.

— Հիմա հասնո՞ւմ ենք մյուս կեսին։

— Ոչ դեռ։ Ճանապարհ շատ կա։

— Իսկ որտե՞ղ է այդ կեսը,— հարցրեց չարաճճի ձայնով Վարազդուխտը։

— Այդ. չգիտեմ,— լրջացավ Վասակը,— դա գիտե ճակատագիրը։

Լռեց և սկսեց խոժոռ նայել պատուհանից դուրս։

Վարազդուխտը վեր թռավ տեղից և գնաց դեպի պատուհանը։ Նա աշխուժացավ, ցնցվեց և հուզված ձայնով ասաց.

— Մինչև վերջը պիտի գա՛մ. պիտի տեսնե՛մ այդ վերջը... բայց միայն մի պայմանով, որ ես աշխատեմ քեզ հասցնել մինչև այնտեղ։

Վասակը ժպտաց, մատով կամացուկ խփեց նրա քթի ծայրին և հարցրեց.

— Ի՞նչ կանես, որ այնտեղ լինես։

— Ի՞նչ կանեմ... քեզ հետ կլինեմ։

— Իսկ եթե շա՞տ հեռու գնամ...

— Այնտեղ է՛լ կգա՛մ։ Կգա՛մ, կգա՛մ, չե՛մ մնա այստեղ։ Ես այստեղ ոչ ո՞ք չունեմ, ոչի՞նչ չունեմ։ Միայն մի դժբախտ մայր։

Վասակը հառաչեց և մտախոհ նայեց հեռուն.

— Է՜հ... դժվար է սրանից հետո, վախենում եմ մնաս կիսաճանապարհին։

Վարազդուխտը ընդոստ գրկեց նրան և փարվելով վզին՝ ասաց.

— Չե՛մ մնա, չե՛մ մնա, կգամ. այստեղ սարսափելի է։ Ես կտրված եմ բարեկամներից, ազգականներից, ընկերուհիներից... Ինձ ատում են ամենքը, ամենից առաջ տիկինդ, և ամբողջ ամրոցը։ Ոչ, ոչ, ես չեմ մնա այստեղ։ Դրա մասին մի՛ խոսի...

Նրանք լռեցին։

— Դու գիտե՞ս, որ վաղը գնում եմ Արտաշատ։

Վարազդուխտը ցնցվեց.

— Գնո՞ւմ ես...

— Այո, այնտեղ հիմա ահագին գործեր են սկսվում։ Լավ հետ չի գալիս այնտեղից։

— Ի՞նչ կարող է այնտեղ հիմա պատահած լինել։

— Նոր խստություն, որից մեծ գործեր պիտի բացվեն։ Բավական չէ՝ Դենշապուհը գրգռում է մեր հոգևորներին, Որմիզդ մոգ-

պետը եկել նստել՝ որսի է սպասում, Հազկերտն ու Միհրներսեհը ինչ-որ մի դավ են նյութել։ Կրոնափոխության պահանջ են դնում։ Հրովարտակ է եկել Միհրներսեհից։

— Գնո՞ւմ ես...— լավ լսելով Վասակին՝ կրկնեց Վարազդուխտը։

— Դու գնա՝ տուն և սպասիր, մինչև քեզ մի հավատարիմ մարդու հետ ուղարկեմ Պարսկաստան։ Դենշապուհը փորում է տակս։ Գնա փորձիր բախտդ այս անգամ էլ։

Վարազդուխտն ուրախացավ։ Ուրեմն ինքն հարկավոր է Վասակին մի շատ կարևոր գործի համար։

Նա գրկեց Վասակին և համբուրեց։ Որքան որ իր գործերով տարված, նյարդայնացած էր Վասակը, որքան էլ մտահոգ վաղվա համար, սիրտը լցված ժանգով, ատելությամբ դեպի շատ շատերը և մասնավորապես դեպի հայ նախարարներն ու պարսիկ պաշտոնյաները՝ այնուամենայնիվ Վասակը այդ համբույրից մեղմեց, մեղկացավ և ինքը ևս գրկեց ջերմ գեղեցկուհուն, որը նվիրել էր նրան իր սիրտը, իր խելքն ու խորամանկությունը, անգամ իր կյանքը։

***

Վասակի ամրոցից երևացող փախստականները վերջապես կորցրին իրենց հետքը և մտան անտառապատ լեռների բավիղը։ Նրանք ութ մարդ էին, որոնցից մեկը միայն բավական հասակավոր էր, թեև ամրակազմ, մնացածները երիտասարդ էին՝ կորովի, եռանդուն։ Խմբից ոչ մեկը չէր նեղվում լեռներում մագլցելուց և փախստականի վիճակից։ Երիտասարդները ուրախացան, որ հետքը կորցրին։

— Էլ աշխարհք էլ որ ման գան՝ մեզ չեն գտնի,— ծիծաղեց նրանցից մեկը ու կանգնեց, ճակատի քրտինքը ձեռքի ափով սրբեց, թափ տվեց խոտերի մեջ։

— Սատանան էլ չի գտնի,— ավելացրեց մի փոքր հետո, իրենց հաջող սպրդումից ոգևորված,— լավ ազատվեցինք։

— Շե՞նը մնաց կրակի մեջ. մեր ազատվելն ի՞նչ,— մղկտաց փախստականներից մեկը դառնագին։

Ու մտահոգ նայեց ներքև, ձորը։

***

Բակուր գյուղապետը տասը հեծյալ հետևը գցած ընկել էր Սյունիքի շեներն ու լեռները՝ Առաքելին ու նրա խումբը բռնելու։ Կորցնելով սրանց հետքը՝ նա սկսեց հարցուփորձով, շեները հանկարծակի ընկնելով գիշեր ժամանակ՝ հետախուզել փախստականներին։ Բայց որքան շատ էր որոնում նրանց, խոսում Առաքելի մասին, այնքան էլ շատ էր տարածում կատարված դեպքի լուրը և այնքան ավելի ալեկոծում շեները։ Դեպքը՝ հարկահանությունը, միայն Առաքելենց շենինը չէր։ Դա մի ուղտ էր, որ պիտի շոքեր բոլոր շեների դռանը։ Եվ ողջ Սյունյաց աշխարհը իրար անցավ։ Սկսեցին դաժանանալ հարստահարությունը, ծեծը, սպանությունները։

Գիշերային խավարը սեպ-սևացել էր նախնադարյան անտառի մեջ, ուր Բակուր գյուղապետը իր հեծյալների հետ բարձրանում էր լեռնային կածանով։ Միայն նժույգներն էին կարողանում ճամփա որսալ ականակիր խավարում, զգալով անդնդային դատարկությունը ժայռեղեն ոտնատեղերի արանքում։ Հեծյալներն իրար չէին տեսնում. նրանք լսում էին միմյանց ձայներն ու նժույգների սրմբակների դոփոցը։ Տեղ-տեղ զրնգում էր անդնդի դատարկությունը, տեղ-տեղ բթանում էր անդրադարձումը։

Վերջապես հասան բարձր մի լեռնահովտի, և անտառը կտրվեց։ Բակուրը տեղեկացել էր, իր ազգական մի շինականից, որ Առաքելը այս կողմերն է երևացել, և նա հույս ուներ այս հովտի գոմերում պատահել նրան։ Լեռնցի մարդու հոտառությունը այստեղ էր բերում Բակուրին։

Նժույգներն զգալով հարթ արահետ և ապահովություն, սկսեցին թեթևակի վարգել։

— Կրա՛կ,— հանկարծ ասաց Բակուրի բարեկամը, մոտենալով նրան։

— Հա՞...

Բակուրը կանգնեց։ Իրոք փոքրիկ կայծի պես մի լույս շողաց ու կորավ։ Առաջ գնացին, բայց այլևս ոչ մի լույս չերևաց և ոչ մի անգամ։ Բայց լույսի ուղղությունը պահելով՝ Բակուրը զգույշ քշեց նժույգը։

— Գոմ է, մեջն էլ իրենք են,— հաստատուն եղանակով ասաց Բակուրի բարեկամը։ Հետո դարձավ Բակուրին.

— Դուք կանգ առեք՝ ես գնամ տեսնեմ։

— Գնա։

Բակուրի բարեկամը զգույշ մեկնեց դեպի մութ մի կետ, անորոշ սևինք։ Նժույգի տրոփը հեռացավ։ Բակուրը նայեց աջ ու ձախ և որոշեց պահանջի դեպքում ծռվել աջ, անտառը։ Նժույգները փընչում էին, երբեմն երկար շունչ քաշում, փոխում հենած ոտքը և երբեմն ականջները ցցում, անշուշտ ձայներ էին լսում։ Օդը նրանց համար լի էր ձայներով... Երկար սպասեցին, մինչև որ մութի միջից ներս լողաց Բակուրի բարեկամը և ասաց.

— Գոմումն են, ուրիշ մարդիկ էլ կան։

Բակուրը մտածեց, որ կամ պետք էր գնալ այնտեղ, կամ վերադառնալ ավելի մեծ թվով զինված մարդով գալու համար։ Հեռանալուց օգուտ չկար, վճռեց գնալ։

Մոտենալով գոմին, զգացին ծխահոտ։ Ուրեմն ներսը վառել էին, հանգստանում են։ Վճռեց հանկարծ ներս խուժել։ Երկու մարդ թողեց նժույգների մոտ ու ինքը ութ հոգով արագ մոտեցավ դռանը, բաց արեց ու ներս ընկավ։ Ներսիններ վեր թռան, ձեռները տարան զենքերին։ Բայց տեղի ունեցավ անսպասելին — այն, որ ոչ մի կողմը չփորձեց հարձակվել։ Կարկամեցին մնացին։ Ներսը Առաքելն էր իրենց շինականներով և ապա մի ստվար խումբ այլ և այլ շեներից։ Բակուրը հասկացավ որ բոլորն էլ փախստականներ են։ Նա մի հայացքով ընդգրկեց նրանց և սուրը դրեց պատյանը։ Քմծիծաղ տվեց և ասաց.

— Է՜, հիմի ե՞ս ձեր օջախն ընկա, թե՞ դուք՝ իմ։

— Որը որ սիրտդ կուզի, Բակուր գյուղապետ,— պատասխանեց հառաչելով մի շինական զարմանալի գզգզված՝ թե զգեստը, թե մազերը, թե բեղ-մորուքը։ Նա մնացել էր նստած տեղում և դեմքի ու աչքերի խորաթախիծ հանգստությամբ նայեց Բակուրին, սրա հեծյալներին և ապա ձեռով հրավիրեց առաջ գալ նստել։ Եվ այս ասաց այնպես հասարակ ու մտերմորեն, կարծես բարեկամ մարդիկ հյուր էին եկել իրենց։

Բակուրը մոտ նստեց կրակին. իր մարդիկ նստեցին դռան կողմը և սառը հայացքներն ուղղեցին հավաքվածներին։ Նրանք հանգիստ էին, որովհետև նրանց սպառնացող ոչինչ չկար այլևս ավելի, քան այն դառնադաժան դրությունը, որի մեջ էին նրանք։ Սա էր պատճառը այն անվրդով խոսակցության ու խաղաղ վարմունքի։

որով իրար հանդիպեցին շինականներն ու մի գյուղապետ։ Բակուրը լավ ըմբռնեց նրանց հուսահատության ուժը, որին ոչ մի ուժով չես դիմադրի. ուստի և լեռնականի, կռիվների գինը իմացողի իմաստությամբ համակերպվեց եղած դրությանը։

Դառնացած շինականը մշուշոտ հայացքը գամելով Բակուրի աչքերի մեջ՝ գլուխը թափ տվեց.

— Քեզ էլ գցել են սարուձոր... Կասես մենք հերիք չէինք։ Ողջ շեները պիտի դատարկի հարկահանը։

Բակուրը սուր նայեց նրան.

— Հա՞, ձերը շա՞տ տարան։

— Աստա ի՞նչ թողին... Չեմ իմանում ինչի՛ էսպես վերջերս անկշտում գայլերի պես ընկան շեները։

Բակուրը մտածմունքի մեջ ընկավ։

Լռության մեջ նրան էին զննում հավաքված շինականները, որոնք իրենց հոգսով տարված՝ չէին էլ մտահոգվում, որ իրենց մոտ է եկել իշխանության ներկայացուցիչը տասը վինված մարդկանցով, որոնց պարտականությունն էր կալանքի տակ առնել իրենց և քարշ տալ կառավարության դուռը։ Նրանց հայացքում կատարյալ արհամարհանք կար դեպի այդ հանգամանքը։ Բակուրը գլուխն օրորեց ու քմծիծաղ տվեց.

— Հը՞մ... Գյուղապետի գործը հերիք չէր՝ դատավորի գործն էլ շինքիս կապեցին։ Հարկ վերցնելն ի՞նչ իմ գործն էր. մտա մեջ, թե մարզպանի բաժին հարկն էլ չտանեն։ Օրենք չի մնացել. հասնող հասնողի է, տանող տանողի։

Նրան ոչ ոք չպատասխանեց։

— Օրենք-արդարությո՞ւն չի մնացել,— շեշտեց Բակուրը խորհելով, աչքերը կրակին,— օրենք-արդարությո՞ւն։

— Իսկ եղած օրենք-արդարությո՞ւնն ինչ էր,— խեթեց զզվանքով ու արհամարհանքով զզզված շինականը,— էլի գերի չէի՞ք պարսիկին ու իշխանին։ Հիմի զոռել է պարսիկը, ի՞նչ է միտքը, չեմ հասկանում։ Երևի փչացնելը։

— Թե էսպես կգնան գործերը՝ ասա փչացանք գնացինք,— ասաց վրա բերեց մի ուրիշ փախստական, որի ճակատը մի կեղտոտ լաթով փաթաթված էր։

— Էսպես՝ շինականը կքանդվի,— կցեց նրա կողքին պառկած և աջ ձեռքի ափին այտը դրած մեկը այնպիսի համոզմամբ, որ առարկելը զուր կլիներ։

Նկատելի էր, որ Առաքելը չէր ուզում խոսել. դեռ Բակուրի կողքին էլ անզգույշ նստել կրակին էր նայում ու մտածում, կարծես իրեն չէ, որ եկել են բռնելու։ Եվ առհասարակ ոչ ոք փախստականներից մազաչափ իսկ չէր հոգում այդ մասին։ Կարծես նստած էին մեռելատանը, ուր աղետը վրա է հասել պրծել ու էլ վախենալու, հոգալու բան չի մնացել։

— Շե՞նը ինչ եղավ, շե՞նը,— հանկարծ լռության մեջ լսվեց շինականներից մեկի՝ Սիմոնի հարցը Բակուրին։

— Ի՞նչ պիտի լինի,— աշխուժացավ Բակուրը,— Առաքելի տունը վառեցին, կնկան սպանեցին։ Իրենց սատկածները դրին սայլերին, շենի, վանքի ողջ պաշարը շենի եզներով, շինականի շալակներով՝ տարան Արաքսն անցկացրին։ Մարզպանից էլ զորք եկավ, որ պարսիկներին պահպանի։

Առաքելը դաժանացել էր իր լռության մեջ։ Չշարժվեց, չնայեց վեր՝ լսելով անգամ կնոջ սպանվելու, տան վառվելու, շենի կողոպտվելու մասին, որով իր և այս ողջ փախստականների հալածական վիճակը անողոք մերկությամբ կանգնեց նրա առաջ։

— Զորք բերեց պարսիկներին պաշտպանե՞ն,— լսվեց փախստականների միջից մի վրդովված ձայն,— իր երկիրն են քանդում՝ չի՞ դիմադրում։

— Պարսիկը հավատարմություն է փորձում, սա էլ հավատարմություն է ցույց տալիս։ Մեր գլխի վրա՞ են փորձում հավատարմությունը։

— Մարդը իշխանություն է պահում,— ասաց Սիմոնը։— էդ էլ քեզ մեր մարզպանը։

— Մեզ գցում է գայլի ռեխը, թե ինչ է հավատարմություն է ցույց տալիս։

Բակուրը խոժոռվեց։ Սա արդեն շատ էր հանդուգն. պետք էր դիրք պահել և սանձերը քաշել։

— Մարզպանի իշխանությո՛ւն ճանաչեք, մարզպանի պատի՛վ պահեք, մարզպանը ձերն է։

Բոլորը ակամա լռեցին մի պահ։ Բայց հասակավոր շինականը հանգիստ ասաց.

— Մարզպա՛նը չի մերը, մեր ցա՛վն է մերը. նրանից ենք խոսում։ Թե չէ՝ մարզպանը մարզպան է։

Լռեցին լարված ու մռայլ։

— Է՛,— սթափվեց Բակուրը,— ժամ է։— Կանգնեց։ Զինվորները ևս վեր կացան։ Բակուրը տատամսեց մի փոքր և դարձավ Առաքելին։— Առաքե՛լ...

— Ի՞նձ ես սպասում։ Ես չեմ գալիս,— շշնջաց Առաքելը հասարակ ու թթու, հանգիստ նայելով կրակին։

— Մարզպանի հրամանն է։

— Գնա՛, ես չեմ գալիս,— կրկնեց նույն եղանակով Առաքելը և շարունակեց հանգիստ նայել կրակին։

— Բա ո՞նց անեմ ես,— ներքուստ շարացած, բայց շվարած դարձավ Բակուրը հավաքվածներին։

— Դե նա կախաղանի սովոր չի, Բակուր գյուղապետ,— նկատեց մի շիկագլուխ երիտասարդ,— շունչը կապվում է։

Բոլորը ծիծաղեցին։

— Ո՞նց թե,— դարձավ նրանց Բակուրը,— ե՞ս պիտի կախվեմ նրա տեղը։

— Ընկերություն արեք, հարմարվե՛ք, վնաս չունի, շենի պահապան ես,— նորից խոսեց շիկագլուխը։

— Գնա՛, գնա՛, շեն կախի,— ճրթաց ցավագին ձայնով գըզգըզված շինականը,— էնքան մարդու ձեռ ու ոտ կապեցին, որ թոկ չի մնացել կախելու։

Բակուրը լուրջ մտահոգվեց, մի փոքր էլ սպասեց, թե մի բան դուրս գա։ Բայց տեսնելով Առաքելի անշարժ ու անտարբեր պառկվածքը կրակի մոտ՝ հույսը կտրեց, հասկացավ որ պահանջելու փորձը ահեղ այրունահեղություն էր... Ու թափ տվեց գլուխը։

— Գնա՛նք,— ասաց յուրայիններին ու դուրս ելավ մրթմրթալով,— դե ձեր մեղքը ձեր վիզը։

Զինվորները խեթ նայեցին գոմում կողքներին ընկած, նստած, կանգնած քաջառողջ երիտասարդներին, կաղնու նման պինդ հասակավորներին ու շների պես մռմռոցով հետևեցին Բակուրին։

— Ատամը չբռնե՞ց...— թափ տվեց գլուխը հասակավոր շինականը։

— Գնաց զինվոր հավաքելու, շունը...

— Կհավաքի,— խոժոռվեց գզգզված շինականը,— շուն շա՛տ։

— Տեղներս ասել է՝ ցրտեց,— նկատեց հասակավոր շինականը,— գնանք ուրիշ տեղ տաքացնենք։— Հը՞, Առաքե՛լ։

— Հա՛,— մտքերից արթնացավ Առաքելը։

— Ի՞նչ ենք անում, ախր, ո՞ւր ենք գնում, իսկի մտածո՞ւմ եք սրա վրա։

Առաքելը մռայլ հայացքը պտտեցրեց գետնին ու հանգիստ ձայնով խոսեց.

— Ես մի բան գիտեմ, որ մարդպանը մեզ բաց չի թողնելու, քանի որ նրան էլ պարսիկները չեն բաց թողնելու։ Պարսիկ հարկահանների արյուն ենք թափել։

— Բա սարեսար, ձորեձոր ընկնելով գլո՞ւխ պիտի պահենք,— առարկեց Սիմոնը։

Առաքելը կիսահեգնոտ նայեց նրան ու գլուխն օրորեց։

— Դու մեր գլխի հոգն ես քաշում։ Դու շենե՞րն ասա։

— Շենների բանը պրծած է։

— Դե որ շենների բանը պրծած է՝ մերը հաշիվ չի։

Ասաց ու մի փոքր մտածեց, ապա.

— Շենը Պարսկաստան չեն քշի։ Հլա էդտեղ չեն հասել։ Մեր ընտանիքին կսղմեն, եթե սրանք չեն առել գլուխները մի բարեկամի, հարազատի տուն կորել։ Բայց շների պես կընկնեն մեր հետևը։— Նայեց երիտասարդներին։

Հետո վճռական դարձավ նրանց.

— Ո՞վ է ուզում դառնալ տուն։

— Ո՞նց կդառնանք,— հարցրեց մեկը,— մեզ կվառեն։

— Դե որ կվառեն՝ իմացեք։ Էս մեր մարդպանի երկրում ճըշմարտություն չկա։ Գնանք տեսնենք՝ որտեղ կա։ Էս ցավը տնովի չի, աշխարհովի է։

— Ոչ մի տեղ էլ չկա,— ասաց Սիմոնը տխուր։

Առաքելը հանգիստ ու հասարակ եղանակով դարձավ երիտասարդներին։

— Գալի՞ս եք։

— Բա էլ ճարնե՞րս ինչ,— խոսեցին երիտասարդները տխուր, բայց վճռական։

Մի քիչ մնացին լուռ և ապա կամաց-կամաց վեր կացան։

Առաքելը դուրս գնալով՝ առաջ ընկավ։ Սիմոնը տխուր նայեց նրան ու հետևեց, ձեռքով հրավիրելով երիտասարդներին։ Սրանք գնացին և ճանապարհին մեկ մտածում էին, որ կարևոր է նախ՝ հետապնդումից ազատվել, քանի որ տունուտեղը հանձնվեց մարդ-

պանի ու պարսիկ իշխանավորների քինախնդրության, միաժամանակ էլ դիտեցին, որ էլ չեն կարողանա վերադառնալ տուն։

Ու գնացին Առաքելի հետևից։ Նրա մեջ հույս կար։ Թե ի՞նչ էր հույսը— ոչ նրանք գիտեին, ոչ Սիմոնը, ոչ էլ թերևս ինքը՝ Առաքելը, որ քայլում էր հաստատ ու մտախոհ։ Շինականի առողջ կազմվածքը, մկանային ուժը, որ թվում էր անհատնում՝ նրան ոգի էր ներշնչում։ Նրան ուժ էր տալիս արդյոք կենսափո՞րձը։ Ի՞նչ ուժ պիտի լիներ այդ դառնադաժան կյանքի փորձը։ Նա չէր ապրել, այլ կռվել. կռվել մի կտոր հացի համար, մի կտոր հողի վրա։ Ի՞նչ հույս ու ուժ կարող էր լինել այդ դժնդակ կռվի միջից դուրս բերած կյանքի ու փորձի մեջ, ի՞նչ մի լավ բան էր տեսել։ Դա չէր հիշում Առաքելը։ Բայց այնուամենայնիվ հույսը կար, չէր լքում։ Եվ հույսը կար, և կյանքի սերը կար, և կռվելու ձգտումը կար։ Նա չէր կորցնում արիությունը, որ միշտ նրան օգնության էր հասել դառնադաժան աշխատանքների ժամանակ, սովի մեջ, արհավիրքների օրերին։

Գնում էր Առաքելը, չէր մտածում այս բաների մասին, բայց զգում էր անգիտակ։

***

Ուշ երեկոյան Բաբիկն ու Ներսիկը գնացին Փառանձեմի մոտ։

Բաբիկը լուռ ու մռայլ գնաց փաթաթվեց մոր վզին և մի տեսակ զուսպ զգացմունքով սեղմեց մնաց այդ դիրքում, ամեն բան դրանով արտահայտելով։

Ներսիկը կանգնեց հեռու և հանկարծ փղձկաց նայելով Բաբիկին և հիշելով նրա կերած ծեծը, որ կարծես նոր ազդեց, նոր խրդ-ճահարեց նրան։ Փառանձեմը, որ անկարող եղավ պահել արցունքը՝ ամուր սեղմեց կրծքին Բաբիկին։ Շատ վիրավորանք, նվաստացման դառնություն, ոտնահարված ինքնասիրություն ու վիշտ կար նրա մեջ, որ այս առիթով պոռթկաց, և նա կարիք էր զգում ազատվելու հոգեկան ծանր բեռից։ Նրա մայրական սիրտը մղկտաց՝ նայելով Բաբիկի կապտած երեսին, որ ենթարկվել էր բռնակալ հոր անգութ հարվածներին։

Ձվիկը մոտեցավ, գրկեց Ներսիկին, տարավ պատուհանը և ցածրաձայն հորդորեց նրան։

— Մի՛ լա, մատա՛ղս, դու որ պարսիկ չդառնաս՝ ո՞վ կարող է քեզ պարսիկ դարձնել։

Բաբիկը ընդոստ շարժումով պոկվեց մոր գրկից և բռունցքը սեղմած կանգնեց օթևանի մեջտեղը և ցավից ու զայրույթից խեղդված ձայնով հեծծեց.

— Ինձ նրա ծեծը չի, որ վիրավորում է, ինձ վիրավորում է այդ ստրկահոգի, պարսիկի գարշապարը լիզող սողուն հայը, որ պարսիկ դառնալու արժանի էլ չէ։ Եվ նրա՞ն է գլխիս ուսուցիչ դարձնում իմ հայրը։ Ապա ինչպե՞ս չսատկեցնեի այդ գարշելիին։ Իմ ազգի ինքնասիրությունը վիրավորի՞...

Փառանձեմը սրբեց աչքերը.

— Է՜, լա՜վ է, զավա՛կս, որ դու ինձանից էլ լավ հասկացել ես այդ բաները։

Ներսիկը փաթաթվեց մորը։

— Մայրի՜կ, կարդա՜ այն պատմությունը, որ խոստացել ես։

— Կկարդա՜մ, մատա՜ղ, հանգստացի՛ր միայն և շատ էլ մի հակաճառեք նախարարին. նա որ զայրացավ՝ կսպանի ձեզ։

— Սպանի՛ թող,— գոչեց Բաբիկը,— նա որ ինձ այն ստրուկ շան առաջ ծեծեց՝ սպանել չէր ի՞նչ էր։

— Ոչ, ոչ. չես սպանվի,— հորդորեց Փառանձեմը,— կսպանվես այն ժամանակ, երբ մարդկային արժանապատվությունը կմեռցնես հոգուդ մեջ։ Եկ նստի՛ր։ Դու էլ, Ներսիկ։ Ես ձեզ կկարդամ մի պատմություն։

— Հա՛, հա՛,— ուրախացավ Ներսիկը և եկավ նստեց մոր կողքը գորգին։— Կարդա՛։

— Կարդա՜մ, մատա՛ղ... Բաբիկ, ապա մի ցած բեր դարակից այն նոր մատյանը։

Բաբիկը բերեց մի թարմ մատյան, նայելով սկիզբը, վերջը.

— Սա կիսատ է, մայրիկ,— ասաց նա,— կե՞սն ուր է։

— Կեսը չի գրած դեռ։ Սա գրում է Մովսես Խորենացին,— դեռ չի վերջացրել։

***

Վարդանին չհաջողվեց հետևյալ օրն ևեթ ճանապարհ ընկնել դեպի Արտաշատ։ Պատճառն իր մոր հիվանդությունն էր։ Հոգեկան ցնցումն այնպես էր ազդել զառամյալ կնոջը, որ նա պառկեց և

սկսեց զառանցել։ Վարդան Ս՛ամիկոնյանը շատ էր սիրում մորը և պատկառում նրանից։ Նա չէր կամենա առանց իր մոր տեսության ճանապարհ ընկնել։ Բազում անգամ հեռավոր արշավանքների գնալիս, Ճորա Պահակ և Նիշապուր՝ քուշանների դեմ, նա վերջին անգամ համբուրում էր մոր ձեռքը, առնում նրա օրհնությունը և ապա միայն մեկնում։

Վարդանը ելումուտ էր անում մոր օթևանը և մտահոգ հետևում տաներեցի և ծերունի բժշկի բուժումներին։

Մոկաց նախարարն առաձնացավ մի փոքրիկ սենյակում, որ բուրգի մեջ էր և վերցնելով հետը մի ձեռագիր մատյան՝ ընկղմեց ընթերցանության մեջ։ Երբեմն նա հայացքն ուղղում էր դեպի հեռավոր արոտները, որ ձյունից ազատված՝ զարթնել սպասում էին ծաղկման։ Բուրգի տակ մի փոքրիկ քարաժայռ բլուր կար, որ տաքանում էր արևի ճառագայթներից։ Բաց պատուհանից ներս էր բուրում ջերմացած հողի ու քարի անուշ հոտը։ Արտակը մի պահ տարվեց մատյանի ընթերցանությամբ։ Դա մի փիլիսոփայական գիրք էր օդի, ջրի, կրակի և հողի մասին։ Թե որքան ժամանակ անցավ՝ նա չզգաց, բայց նկատեց, որ ահագին էջեր կարդացել է առանց ուշադրության և հասկանալու։ Նա նոր զգաց, որ բավական ժամանակ նրա ականջին հնչում են կանացի ձայներ։ Թե՞ այդպես թվացել էր նրան... Երևի... Արտակը ականջ դրեց, բայց այլևս ձայները չլսվեցին։ Նա կրկին անցավ ընթերցանության։ Սակայն պատուհանից ներս բուրող գարունը մեղկացնում էր նրա սիրտը։ Մտքերն սկսեցին ցրվել, աչքերն ուղղվեցին դեպի հովիտներն ու լեռները, և մի անորոշ զգացում, թերևս անձկություն, քաղցր ճմլոց թրթռաց նրա կրծքի տակ, շատ խոր։ Այդ միջոցին նա գլուխը բարձրացրեց և նայեց պարսպի տակի քարաբլուրին։ Այնտեղ էին եկել երկու կին։ Նրանցից մեկը նստած էր, իսկ մյուսը կանգնած և երկուսը նայում էին դեպի հովիտները, այնպես որ չէր կարելի տեսնել նրանց դեմքը։ Նրանք շքեղ հագնված էին և երևում էր՝ ամրոցի իշխանական ընտանիքից էին։ Արտակը մոտ գնաց պատուհանին՝ սպասելով նրանց շարժումներին, որ նկատի դեմքերը։ Բայց նրանք երկար ժամանակ չէին դառնում Արտակի կողմը։ Եվ հենց այդ է՝ Արտակը ետ էր դառնում դեպի իր գահույքը՝ կանգնածը ետ շրջվեց դեպի պատուհանը։ Հանկարծակի փայլատակող մի վսեմ գեղեցկություն մի ակնթարթում կաշկանդեց Արտակին։ Դա մի դեռատի

օրիորդ էր, որի սևագալար մազերի շրջանակում, ինչպես. օձերի փունջի մեջ լուսնկայի շարմաղ դեմքից հպարտ ու մի փոքր հրամայող հայացքով ցայտեցին մրահոն աչքերը։ Նա հայացքը գամեց Արտակի աչքերին և մնաց։ Նրանք իրար նայեցին այնպես՝ կարծես մենամարտի ելան իրար հետ։ Օրիորդի հետի կինը դարձավ նրան և նկատելով նրա նայելը դեպի պատուհանը՝ շրջվեց այն կողմը։ Դա մի հասակավոր կին էր՝ նիհար ու շատ տանջված դեմքով և նման էր Վարդան Մամիկոնյանին։

— Ողջո՜ւյն, Արտա՛կ իշխան,— ասաց նա մտերիմ ժպտալով և վեր կացավ տեղից,— հազիվ երևացիր։

— Բարեողջո՛ւյն իշխանուհուն,— պատասխանեց Արտակը՝ ճանաչելով կնոջը։

Դա Վարդանի դուստր Շուշանիկ տիկինն էր, վրաց Վազգեն իշխանի կինը, որ հյուր էր եկել հորենական տուն։

— Ճանապարհորդ ես, Արտա՛կ իշխան,— խոսեց Շուշանիկ տիկինը ցավակցական ձայնով՝ ակնարկելով դեպքը։

— Այո, Շուշանիկ տիկին, եկանք խրախճանքի՝ գնում ենք արհավիրքի։

Արտակը նկատեց, որ օրիորդը խոր հայացքով շարունակում է նայել իրեն։

— Ճակատագիր է,— հառաչեց Շուշանիկ տիկինը,— արհավիրքով աշխարհ եկանք, արհավիրքով էլ պիտի գնանք։

— Կդիմագրավենք, Շուշանի՛կ տիկին,— աշխուժացավ Արտակը,— առաջինը չէ, վերջինը չէ։

Արտակը նայեց օրիորդին, և այնպիսի մի ուժ գինու պես լցվեց նրա երակներում, որ կարծես հաճույք զգաց, որ և՛ արհավիրք կա, և՛ ինքը պիտի դիմագրավի նրան։ Նրա սիրտը լցվեց այն ուրախությունը, երբ մարդ զգում է, թե աշխարհում կա գեղեցիկ, քաղցր կյանք, երիտասարդություն, փառք, խիզախություն, հերոսություն։ Նա նկատեց, որ օրիորդի ըստ երևույթին անբարյացակամ հայացքի մեջ մի ջերմ շող անցավ, երբ նա ասաց «կդիմագրավենք»։

Շուշանիկ տիկինը նկատեց Արտակի խանդավառությունը և հաճույք զգաց դրանից։ Ուստի և զրույցը երկարելու համար պատմեց իր ճամփորդությունը Վրաստանից Տարոն, թե ինչպես ուշ աշնանը եկավ, և ձմռան սառնամանիքներն ու բուքերը պաշարեցին

իրեն, ու մնաց։ Ասաց, որ անհանգիստ է տան կողմից Վրաստանում և ցանկանում է օր առաջ ճանապարհվել տուն։

— Ափսո՜ս, որ մենք արագ արշավով պիտի գնանք, տիկի՛ն,— ասաց Արտակը,— կարող էիր մեզ հետ գալ մինչև Արտաշատ։

— Ոչ, չեմ կարող,— հառաչեց Շուշանիկ տիկինը,— բայց ես քեզ նամակ կտամ, որ Արտաշատից հասցնես ամուսնուս։

— Ամենա՜յն սիրով, Շուշանի՛կ տիկին։ Միայն շտապով գրիր։ Մենք կարող ենք վաղը կամ մյուս օրը ճանապարհ ընկնել։

— Կպատրաստեմ նամակը, խնդրում եմ շնորհ բերել օթևանս այս երեկո. խոսելիք ունեմ։

— Հրամանդ ի կատար, Շուշանի՛կ տիկին։

Շուշանիկ տիկինը շարժեց գլուխը ի նշան շնորհակալության և հրաժեշտի, հետո դարձավ օրիորդին.

— Գնա՛նք, Անահի՛տ, տատիկի մոտ, տեսնենք ցավն անցա՞վ։

Օրիորդը, որ մինչև այդ հրաշալի պատկերի պես անշարժ կանգնած էր Արտակի առջև, շարժվեց և ուրիշ կերպարանք առավ։ Նա վետվետաց քարից քար իջնելով և երբ մի փոքր հեռացան՝ լսվեց նրա զնգուն ծիծաղը։ Նրանք անհետացան պարսպի տակ։

Ո՞վ էր այդ աղջիկը... Նայած նրա ապարոշին՝ Արտակի հայրենակիցն էր կամ հարևան երկրից։ Եվ կերպարանքն էլ նման էր լեռնուհու։

Արտակը բուռն տենչ զգաց իմանալու, թե ով է նա։ Բայց ո՞ւմ հարցներ, որ կասկած չհարուցաներ իր հրապուրման։ Նա այդ չէր անի այդտեղ, Մամիկոնյան ամրոցում, սրբությամբ կպահեր պարկեշտ հյուրի պատշաճավորությունը։ Բայց և չէր կարողանա համբերել և հանգստանալ։ Պետք է իմանար։ Թողնել ինքնաբերական մի առիթի... Բայց կարող էր առիթը չգալ, կարող էր ինքը մեկնել շտապ կարգով։ Հույսը դրեց Շուշանիկ տիկնոջ վրա։ Նա թեթև հառաչեց, ուռած կուրծքը հանգստացրեց ծանր ու քաղցր բեռից և փորձեց կրկին կարդալ մատյանը։ Բայց շուտով նկատեց, որ կարդում է և մտածում է օրիորդի մասին։

Երեկոյան Արտակի մոտ սպասավոր եկավ և Շուշանիկ տիկնոջ կողմից խնդրեց այցելել իրեն։

Արտակը մտավ տիկնոջ օթևանը և նրան գտավ մենակ։ Օրիորդը, որ նրա կարծիքով պետք է լիներ տիկնոջ մոտ՝ չկար։ Սա կոտ-

բեց Արտակի տրամադրությունը։ Եվ ինչո՞ւ նա չէր մտածել այդ մասին, որ օրիորդը կարող էր տիկնոջ մոտը չլինել, դա էլ անհասկանալի եղավ նրա համար։

Շուշանիկ տիկինը սևազգեստ էր, և տխրաթախիծ մի ժպիտ խաղաց նրա դեմքին, երբ Արտակը ներս մտավ։ Նա ձեռքին մագաղաթե մատյան ուներ, որի մեջ սեղմել էր մագաղաթե մի թերթ։

— Նամակը պատրաստում եմ, իշխան, հրամայիր նստել մի պահ, տեսնենք ուրիշ ինչ բանի ես։ Ասում ես՝ որսը դարձավ արհավիրք։

— Ինչպես հայտնի է քեզ, Շուշանիկ տիկին։

Շուշանիկ տիկինը գոհունակ և մտերմորեն ժպտաց Արտակին։ Հետո մեղմ, շարաճճի եղանակով հարցրեց.

— Ապա չես հարցնում, թե ո՛վ էր այսօրվա օրիորդը...

— Ի՞նչ հարցնեմ, Շուշանի՛կ տիկին,— չքմեղացավ, բայց ուրախացավ Արտակը։

— Չե՞ս ուզում իմանալ։

— Ճշմարիտը՝ կուզեմ իմանալ...

— Եվ լավ ես անում, Արտա՛կ սիրելի, քանի որ...

Շուշանիկ տիկինը ծիծաղեց.

— Քանի որ ի՞նչ, Շուշանի՛կ տիկին։

— Օրիորդն ինքն էլ ուզում է իմանալ, թե՝ դու ո՛ր նախարարն ես։

— Հետո՞, իմացա՞վ։

— Իմացավ, իհարկե։ Եվ զարմացավ։

— Ինչո՞ւ։

— Զարմացավ, որ հարևաններ եք, այդքան մոտ և իրար չեք տեսել։

— Ո՞վ է նա, Շուշանիկ տիկին,— չկարողացավ զսպել Արտակը։

— Հա՞, չես համբերում, Արտա՛կ։

— Կհամբերեմ, Շուշանի՛կ տիկին,— ստեց Արտակը։

— Բոլորովին էլ մի՛ համբերիր, սիրելի՛ս, ինչո՞ւ ես ծածկում։ Օրիորդը դուր եկավ քեզ։ Եվ...

Արտակն ուզում էր հերքել, կատակելով ստել, խաղ անել՝ բայց սպասեց սրտատրոփ, թե ինչպես կվերջացնի խոսքը տիկինը։

— Եվ օրիորդին էլ դո՛ւ...

Արտակն զգաց, որ կրծքի տակ մի բան անուշ փլվեց։ Նա հևաց զգացմունքի բեռից և խոպոտած ձայնով մեղմ հարցրեց.

— Բայց նա ո՞վ է։

— Ռշտունյաց նախարարի քենին է։ Ես նրան շատ եմ սիրում և երբ գալիս եմ այստեղ՝ կանչում բերում եմ մոտս։ Եվ եթե սիրտդ վկայում է, որ մի օր պիտի կապվես մեկի հետ, այդ մեկը սա է։

Արտակը կրկին ուզում էր առարկել, կեղծել, բայց Շուշանիկ տիկնոջ խոսքերի բարի ու կտրուկ բնույթը նրան հաղթեց և ստիպեց անկեղծ ու պարզ լինել։

— Մի նեղիր ինքդ քեզ և մի՛ կեղծիր սրտիդ առաջ, Արտա՛կ. եթե սիրես՝ չես սխալվի։

— Բայց չէ՞ որ ես չխոսեցի սիրո մասին։ Ես անգամ ամաչում եմ քեզանից, Շուշանի՛կ տիկին։

— Ամենևին մի՛ ամաչիր, սիրելի՛ս. դու ճիշտ է՝ չխոսեցիր սիրո մասին, բայց սիրտդ սեր է ողջ, ու ինքդ չգիտես դուցե։

Նրանք լռեցին։

— Հետո՝ ես քեզ չեմ առաջարկում ոչինչ, Արտա՛կ,— խոսեց Շուշանիկ-տիկինը մի փոքր սառը եղանակով,— միայն ես կասեմ, որ երանի այն ամուսիններին, որոնք սիրո ուղիով են իրար գտնում։ Ի՞նչ է ուրիշների վիճակը, որոնց ամուսնացրել են նախարարական ու այլ նպատակներով։

Հանկարծ սենյակի վարագույրը ետ գնաց, և արագ ներս ընկավ օրիորդը։ Հենց այն է՝ կամենում էր ետ փախչել՝ Շուշանիկ տիկինն անմիջապես որսաց.

— Եկ, Անահի՛տ, ե՛կ։ Իշխանն օտարական չէ. նա իմ հյուրն է. մի՛ քաշվիր։

Անահիտը կարմրեց վարդի պես և կաշկանդված մնաց վարագույրի մեջ՝ գլուխը կախելով կրծքի վրա։

— Նե՛րս արի, Անահի՛տ, քեզ ասում եմ, որ իշխանը իմ հյուրն է, և այս բավական է։

Անահիտը սակայն չէր շարժվում։ Այն ժամանակ Շուշանիկ տիկինը վեր կացավ և բռնելով նրա ձեռքը բերեց իր գահավորակի մոտ։ Անահիտը նստեց գահավորակի ոտներին դրած բարձի վրա։

Շուշանիկ տիկինն սկսեց խոսել Վրաստանի կյանքի մասին, և Արտակն ունկնդրում էր նրան։ Հետզհետե վարժվեց իր վիճակին նաև Անահիտը։ Նա ևս սկսեց ունկնդրել և երբեմն էլ ժպտալով

մասնակցել զրույցին։ Հետո սկսեց Արտակը պատմել իր ճանապարհորդությունը Հունաստան և Եգիպտոս։

Արդեն օթևանին տիրել էր մթնշաղը։ Հեռուն, լեռների հետև մարել էր արևը, և ժանգառքը ներկել էր ձորերի խորքը պղնձի գույնով։ Մի ասող պլպլաց երկնային անդունդի մեջ։ Ու մինչ Արտակը տարված իր նյութով խոսում էր մեղմաձայն, շքեղ ոճով, Անահիտը հենվել էր տիկնոջ ծնկներին, պարզամտորեն ու մտերիմ նայում էր Արտակին։ Նրանք չնկատեցին անգամ, թե ինչպես մտերմացան և այն էլ այսպես արագ։ Արտակի զրույցը երբեմն ընդհատվում էր նախ՝ Շուշանիկ տիկնոջ և ապա Անահիտի կարճ հարցմունքներով, որոնց պատասխանում էր Արտակը։ Նա ներկայացրեց Հունաստանի և Եգիպտոսի կյանքը իր փարթամ ու բազմազան գույներով։ Խոսեց հունական թատրոնների, կաճառների, մատենադարանների և տաճարների մասին, նկարագրեց Եգիպտոսի բուրգերը, սֆինքսը, սամումը և անապատի տապը։

Մութը սև սաթի պես փայլեց դուրսը օդի մեջ։ Հազիվհազ երևվում էին տիկինն ու օրիորդը իբրև մթին ուրվականներ։

Սպասավորը ճրագ բերեց ներս։ Լույսը թրթռաց, և Արտակը դիտեց, թե ինչպես Անահիտի դեմքը օրորվեց լույսի և ստվերի խաղերի մեջ։ Դա մի վեհանիստ արձան էր, որ ներդաշնակության ալիքներ էր բաց թողնում օդի մեջ։ Այդ պահին իրոք որ հրաշալի էր այդ օրիորդը։ Արտակը ոգևորված էր. նա լողում էր իր մտավորական կյանքում ձեռք բերած բարձր խոսքի երաժշտության մեջ։ Նա երջանիկ էր զգում իրեն։

Հանկարծ մի սպասուհի ներս վազեց և հուզված հաղորդեց, որ Մեծ Տիկինը կրկին զառանցում է։

Շուշանիկ տիկինը դուրս գնաց։ Արտակը մնաց Անահիտի հետ մենակ։ Նա դադարեց պատմելուց և լուռ նստեց Անահիտի դիմաց։ Մի տարօրինակ զգացում հմայեց ու կաշկանդեց երկուսին իրենց դիրքում։ Նրանք լուռ նայում էին հատակին՝ առանց համարձակվելու հայացքները բարձրացնել իրար վրա։ Սակայն աչքերի եզրով նրանք իրար տեսնում էին մի փոքր։ Արտակն զգում էր օրիորդի հուզմունքը, ինչպես և սա նրանը։ Այդ լռությունը, որի քաղցրությունն աննկարագրելի է՝ որքան էլ նա նման է մատղաշ գարնան ժամանելուն, երբ ծառերի ճյուղերին հազիվ ուռչում է բողբոջը. մի քաղցրություն, երբ վտանգված հիվանդն սկսում է հանկարծ զգալ,

որ իր կյանքը փրկված է, և այլ շատ այսպիսի հազվագյուտ ուրախություններ։ Միայն երկուսի շնչառությունն էր ալիքվում երջանիկ երգի նման։ Երանություն է բուրում այդ մատաղ զույգից։ Այդքան երկար լռությունը շատ ավելի պերճախոս բացատրեց նրանց այն անբացատրելին, որ մի վայրկյան առաջ քեզ անծանոթ էակը, որի գոյությունն անգամ չես կասկածել՝ հանկարծ դառնում է այնքան թանկ ու մտերիմ, որ չես հասկանում, թե ինչպե՞ս կարելի է ապրել առանց նրան։

Արտակն զգաց, որ նրանք իրար հայտնեցին անկարելին, անհարմարը, անսպասելին, դժվարինը։ Հետո ինքն էլ չհասկացավ, թե ինչպես հնարավոր եղավ և չթվաց անժամանակ ու անպատշաճ, այլ, ընդհակառակն, բնական ու հասկանալի, և կարծես ո՛չ իր ձայնով և ո՛չ ինքն էր՝ ասաց.

— Անահի՛տ, ես կգամ ծնողիդ մոտ... և... ի՞նչ կասես... գա՞մ..

Անահիտը չշարժվեց և ձայն չհանեց։

Արտակը սաստիկ ամաչեց։ Այն, ինչ որ հասկանալի էր ու վրճռական էր երևում նրան լռության մեջ՝ դժվար ու անտեղի թվաց, երբ ձայնով ասվեց։ Նա լռեց և նայեց Անահիտին՝ չիմանալով, թե ինչ անի դրանից հետո։ Սակայն Անահիտը բարձրացրեց սևագիշեր աչքերը և խոր նայեց Արտակին։ Զարմանալի էր. ո՛չ մի շփոթություն, ո՛չ մի անհամարձակություն։

— Անահի՛տ, գա՛մ ծնողիդ մոտ...

— Ե՛կ,— շշնջաց խլաձայն Անահիտը և հայացքն իջեցրեց հատակին։

Նրանք երկար լռեցին։

Արտակը նորից սիրտ արեց և այս անգամ ավելի մտերիմ եղանակով և բնական ձայնով ասաց.

— Կգամ պատերազմից առաջ։ Հետո՝ ո՞վ գիտե...

Անահիտը ցնցվեց և նայեց Արտակին։ Նրա հայացքի մեջ նկատվեց մի խռովք ու վիշտ։ Մի փոքր անց Անահիտը վեր նայեց և տխրությամբ հարցրեց.

— Պատերազմը պե՞տք է լինի...

— Պետք է լինի։

— Ինչո՞ւ համար է լինելու։

— Իբրև թե հավատի համար, բայց արքան ուզում է վերջ տալ մեր ինքնուրույնության, ոչնչացնել մեր ազգը։

Անահիտը կրկին լռեց և ապա միայն հարցրեց.

— Դու պե՞տք է գնաս պատերազմ։

— Ապա ի՞նչ, Անահի՛տ։ Ես զինվոր եմ...

Անահիտը տխրեց և սկսեց երբեմն մտերմորեն վեր նայել Արտակին, մերթ մատներով խաղալ բարձի ծոցերի հետ։ Նա ուզում էր շատ բան ասել Արտակին, բայց է՛լ չէր համարձակվում։ Այդ հասկացավ Արտակը։ Եվ նա ասաց.

— Բայց ես պատերազմից առաջ կգամ ձեր տուն։

Անահիտը վեր նայեց և ժպտաց։ Բայց և իսկույն երկու խոշոր կաթիլներ գլորվեցին նրա աչքերից։

Այդ միջոցին ներս մտավ Շուշանիկ տիկինը, աննկատելի կերպով դիտեց երկուսին և չտեսնելու տվեց Անահիտի հուզմունքը։

— Անահիտը հուզվեց, որ պատերազմ է լինելու,— ասաց Արտակը։

— Պատերազմը պետք է լինի, որ խաղաղությունը լինի,— ասաց Շուշանիկ տիկինը,— չե՛նք թողնի, որ մեր ազգի ազատության ձեռք կարկառեն։

Ու դարձավ Անահիտին.

— Պինդ կաց, պատերազմը կգնա՝ աշխարհը կմնա։

Հետո նա հայտնեց, որ Մեծ Տիկինը չի լավանում, որ Վարդանը սաստիկ անհանգիստ է և չգիտե ինչ անի։ Մի կողմից մայրն է, մյուս կողմից պետք է շտապի Արտաշատ։

— Բայց հազիվ թե հինգ-վեց օրից ճանապարհվի,— ասաց Շուշանիկ տիկինը։

Արտակն ուրախացավ։ Այդ նկատեց Շուշանիկ տիկինը, բայց թաքցրեց իր դիտողությունը։ Նա սրտանց ուրախ էր Արտակի համար։

Արդեն բավական ուշ էր, պետք էր գնալ իշխանների մոտ, ուստի Արտակը վեր կացավ։

— Է՞, գնո՞ւմ ես։ Վա՛ղն արի, ես քեզ մի մատյան ցույց կտամ,— ասաց Շուշանիկ տիկինը։

— Ամենա՜յն սիրով,— ասաց Արտակը և մի անգամ էլ նայելով Անահիտին՝ ողջունեց և դուրս ելավ։ Սպասավորը լուսավորեց սանդուղները, և նա բարձրացավ վեր՝ դահլիճը։ Նախարարները

զրուցում էին։ Բայց Վարդան Մամիկոնյանը սաստիկ անհանգիստ էր։

— Ես չգիտեմ ի՞նչ անեմ, ուշանում ենք,— ասաց նա։

Արտակը զարթնեց իր երազանքներից։ Զգոնացավ և հիշեց այն մեծ դեպքը, որ ցնցել էր իրենց և շուտով պիտի ցնցեր համայն Հայոց աշխարհը։ Նա ինքն էլ մտածեց, որ ուշանում են։

Վարդան Մամիկոնյանը վստահ ու մտերիմ հայացքը գցելով Արտակի վրա, ասաց.

— Պատասխան տալու ենք համայն աշխարհով։ Իբրև մեկ մարդ։ Պատասխանը վերջնական պիտի լինի, պատասխանատվությունը նույնպես։ Ո՞վ է մեզ հետ... Ինչե՞ր պիտի կատարվեն... Ահա դաժան միտքը։

Վահան Ամատունին և Ներշապուհը խոժոռ նայեցին նրան։

Վարդանը Արտակին մեկնեց մի նագաղաթ. Արտակը վերցրեց և կարդաց.

«Տեր Մամիկոնեից.

Եվ թող հայտնի լինի քեզ, որ արյաց արքայի հրամանը սաստկապես շփոթել է այստեղ ամենքին։ Երկպառակության վտանգ կա։ Հասիր շուտով։ Հարկ կա զսպելու խմորումը և ազգը ոտքի կանգնեցնելու։ Հապաղելը մահվան է հանգույն։

Արշավիր տեր Արշակունյաց։

Արավան Վանանդյա,

Ատոմ Գնունյաց»...

Եվ այլ ստորագրություններ։

— Հա՜ա՜... Շապուհի օրերը չեն սրանք։ Սա արհավիրք է։ Այստեղ միաբան, միասիրտ ազգ է պետք։ Օրհասականի առաջ ենք...— ասաց Վարդանը։

— Կարծում ես, պատերազմ ,— մռայլ հարցրեց Ներշապուհը։

— Ապա ի՞նչ ես սպասում, տեր Արծրունյաց, խաղաղությո՞ւն։ Շապուհի հին միտումը, Վռամի խորամանկ դավերը՝ ոչնչացնել Հայոց աշխարհը՝ չօգնեցին, այժմ Հազկերտը վճռում է այդ ոչնչացումը։ Առանց պատերազմի չենք անցկացնի սա։ Հավատքը պատրվակ է։ Գնա՛նք Արտաշատ, համաժողով անենք և վճռենք դիմադրությունը։

Նախարարները լռեցին։

— Այո, շտապենք,— կարծես ինքն իրեն խորհելով կրկնեց

Վարդանը,— սա պատերազմ չի լինի, այլ աշխարհավեր փոթորիկ։

Ջահի լույսը ներկել էր նրա խոհուն դիմագծերը։ Նրա ցոլումն թափանցող հայացքը սուզվել էր պատուհանի շրջանակում խորացող թավիշ խավարի մեջ։ Կարծես նա ջանում էր կարդալ այդ անդընդում ապագայի գիրը և տեսնել գալիքը։

***

Ներսի օթևաններից արագ բակի պատշգամ դուրս եկավ մի չորուցամաք հասակավոր կին՝ հոգսերով տարվածի թախծալի և զուսպ արտահայտությամբ։ Նրան հետևում էին սպասուհիներ՝ ճանապարհի այլևայլ պարագաներով։

Հասակավոր կինը, որ Վարդան Մամիկոնյանի տիկինն էր, սկսեց անձամբ հսկել իր ամուսնու ճանապարհի պատրաստություններին։ Նա հազիվ լսելի, համեստ շեշտով կարգադրում էր սպասուհիներին և մի անգամ էլ վեր չնայեց իր չորս կողմը։ Ըստ երևույթին նա ամրոցի ու Վարդան Մամիկոնյանի տան հոգսերի ոգին էր՝ լռելյայն կատարող իր պաշտոնը, այն է՝ միշտ ճանապարհ դնել իր ամուսնուն դեպի պատերազմներ ու արշավանքներ։

Մամիկոնյան տիկինը նման էր հարգելի հարսի։ Նա ոչ մի կերպ չէր զգացնում, որ ինքն է իր ամուսնուց հետո ամրոցի գլխավոր անձը։ Սպասավորներն ու աղախինները, որ օգնում էին նրան՝ մտերմական էին իրենց շարժուձևերով ու խոսակցությամբ։ Նրանք բոլորը նույնպես վարժ գիտեին, թե ինչ իրեր պիտի դնեն սպարապետի հետ՝ բազում անգամ կրկնած լինելով միևնույն պատրաստությունները։

Արտակն արդեն հագնված էր։ Նրա նուրբ ու մի փոքր գունատ և ներշնչված դեմքին սաղավարտը տվել էր զորական արտահայտություն։ Դուրս եկավ Անահիտը և սկսեց գաղտագողի անհանգստությամբ հետևել անցուդարձին։ Շուշանիկ տիկինը բռնեց նրա ձեռքը, մոտ բերեց նրա գլուխն իր շուրթերին և համբուրեց։ Անահիտը տխրած՝ գլուխը կախեց։ Արտակը, որ դեռ կապկպում էր իր սպառազենքը՝ թռուցիկ հայացքներ էր նետում Անահիտի կողմը։ Երբեմն նրանց հայացքները խոր լցվում էին իրար մեջ և թախիծով ու քաղցրությամբ խառն մի զգացումով շարժում նրանց սիրտը։

Դուրս եկավ Վահան Ամատունին՝ վեր ցցելով բրդե փաթաթանով պինդ կապած վիզը։ Նա հևում էր շարժումներից և թեթև տընքում։ Երկար ճանապարհի հոգսը անհանգիստ էր անում ծերունուն։ Մյուս նախարարները ևս հավաքվեցին։

— Տյա՛րք, այցելե՛նք Մեծ Տիկնոջը,— ասաց Վահան Ամատունին։

Նախարարները մտան Մեծ Տիկնոջ օթևանը։ Հիվանդի մահճի գլխին ճրագներ էին դրած, որ խոշոր պլպլումներով անհեթեթ ստվերներ էին օրորում օթևանի մռայլի մեջ։ Պառավը ջերմի մեջ էր և հևում էր։ Նրա շրթունքները դողում էին ինչ-որ անհասկանալի բառեր շշնջալուց։

Վարդանը մոտեցավ, հանեց սաղավարտը և չոքեց մոր մահճի մոտ։ Մոտ գնաց նաև Վահան Ամատունին և խոնարհեց գլուխը նրա դեմքին։

— Մե՛ծ Տիկին,— շշնջաց նա։

Պառավը չլսեց։

— Լսո՞ւմ ես ինձ, Մե՛ծ Տիկին,— կրկին խոսեց նա ավելի բարձրաձայն։

Պառավը բացեց աչքերը և խիստ նայեց նրան.

— Հազարապե՞տ... խոսեց հիվանդը սպառնալի ու խռպոտ ձայնով։

— Եկել ենք մնաք բարևի, մեկնում ենք,— ասաց Վահան Ամատունին։

Հիվանդը տատասկի նման չոր ձեռքը կարկառեց դեպի Հազարապետը և խստատես խոսեց.

— Եթե պատերազմ եք գնում՝ ճանապարհներդ ի բարին։

— Գուցե և պատերազմ, Մե՛ծ Տիկին։

— Հա՛, այդպե՛ս... հևաց հիվանդը։

Հետո գլուխը դարձրեց դեպի Վարդանը և խիստ նայեց նրան.

— Նախնյաց սուրը շարատավորե՞ս... չհաղթած չվերադառնա՞ս։ Գնա՛, աստված հետդ... Զոհրակիս բերել տուր Հունաստանից... Զավակդ կողքիդ լինի...

Եվ ձեռքով արեց, որ վերջացնեն։ Վարդանը բռնեց մոր ձեռքը, համբուրեց երկար ու գորովալի։ Պառավը կենդանացավ, ուժ առավ և նստեց մահճի մեջ։ Նրա տոգորված ու մոլեգնած կերպարանքը տհ ու պատկառանք էր ներշնչում։ Կարծես նա Մամիկոնյանների

ոգին էր, որ եկել էր մեծ սխրագործություն ներշնչելու նրանց։

— Գնացե՛ք, ազատեցե՛ք Աշխարհը հայից։

— Բարյա՛վ մնաս, մա՛յր,— ասաց Վարդանը և փաթաթվեց մոր պարանոցին, համբուրեց նրա կուրծքը։

Պառավը չոր թևերով գրկեց և նույնպես համբուրեց նրան։ Նախարարները Ամատունուց հետո, մեկ-մեկ մոտեցան, առան պառավի աջը և մեկ-մեկ ետ քաշվեցին։

Դռան մեջ լցվել էին հարազատները և հոսզված լռել էին։

Դուրս եկան պատշգամ։

— Հայրի՛կ, ես չեմ գնա տուն, ամուսնուս,— ասաց Շուշանիկը տխուր ու վճռական։

Վարդանը հասկացավ իր դստերը, լռեց և բավական ուշացնելով պատասխանը՝ ասաց.

— Մի գնա, դուստրս. նա վատ ճանապարհի է և կարծում եմ կսկսի վնասել գործին։

— Աստված հասնի նրան,— հառաչեց Շուշանիկը և հեկեկաց։

Վարդանը գրկեց նրան, համբուրեց, արագ մոտեցավ տիկնոջը և կարճ ու հասարակ ձևով հրաժեշտ տվեց նրան.

— Սուրհանդակ ուղարկիր թող Զոհրակին բերի։ Է՛, ճանապա՛րհ,— կարգադրեց նա, ձեռքը դրեց Անահիտի գլխին, ժպտաց և իջավ սանդուղներից։ Նախարարները հրաժեշտ տվին։

Արտակը մոտ գնաց, համբուրեց Շուշանիկ տիկնոջ ձեռը, վերցրեց նրա նամակը, նայեց Անահիտին և հայացքով մնաս բարյավ ասաց։

— Շո՛ւտ վերադարձիր, Արտա՛կ,— շշնջաց Շուշանիկ տիկինը և ժպտաց։

— Շուտո՞վ, շա՞տ շուտով,— շշնջաց նույնպես Արտակը և բաժանվեց նրանցից։

— Լո՛ւր ուղարկիր,— շեշտեց Շուշանիկ տիկինը,— կսպասենք...

Արտակը ժպտաց և գլխով նշան արեց։

Մոտ բերին նժույգներին, որ չէին կարողանում մի վայրկյան հանգիստ կանգնել։ Սպասավորներն ու թիկնապահները մի կերպ զսպեցին նրանց, որ նախարարները նստեն։

Արծվին աշխուժացել էր և մոլեգնում էր նժույգների շուրջը՝ իբրև մի դաստիարակ իր սաների շնորհքը տեսնելով։ Նա մի ձեռքով

բռնեց Վարդան Մամիկոնյանի նժույգի սանձը և վայր սեղմեց իր կողմի ասպանդակը։ Վարդան Մամիկոնյանը զսպանակի պես թռավ նստեց։

— Դե՛, բարյավ մնաք,— ասաց նա և նժույգը քշեց դռնից դուրս, նրան հետևեցին նախարարները։ Երկար ժամանակ դուրս չէր գալիս դռնից Արծվիի նժույգը. նա թռչկոտում էր ու ետ-ետ գնում։ Արծվին կատաղեց և մտրակով այնպես ձաղկեց, որ հանկարծ նժույգը կայծակի պես շանթեց դեպի դուրս։

Ամբոցը լռեց։ Բոլորը անձայն ականջ դրին հեռացող նժույգների ոտնատրոփին, որ գլորվող քարերի պես հեռացավ-խլացավ գիշերային խավարի մեջ։

***

Հանդիսավոր բացվեց գարնանային առավոտը Այրարատյան դաշտավայրում։ Լեռները փրփրադեզ ծովերի պես չորս հորիզոններից ափերից ելած՝ միտում էին իրար գալ և ողողել դաշտավայրը։ Շիկնեցին Մասիսների գագաթները, և երկնքի կանաչ-կապույտը ժպտաց նրանց հետևի խորքում։ Արաքսը ինչպես մի դեղին վիշապ ուռել՝ սրընթաց նետվում էր դեպի Շարուր։ Սևամերկ դաշտավայրը կենսաթրթիռ գարունքով զարթնած՝ դիմավորում էր մատաղ կյանքին։ Հեռու, այգիների, գյուղ-օազիսների բարդիների արանքներից դեպի երկինք էին ոլորվում ծխի կապույտ ժապավեններ։ Այստեղ-այնտեղ, հեռու-մոտիկ շինականները հերկում էին հողը։

Արաքսի ու Մեծամոր գետի միջև, այգեստանների ծոցում պարիսպներով շրջափակ ծխում էր Արտաշատ մայրաքաղաքը։ Հեռավոր կանչերն ու խուլ աղմուկը մատնում էին քաղաքի առավոտյան սկսված կյանքը։

Քաղաքադուռը բացվել էր, և ուղևորներն ու քաղաքացիք երթևեկում էին։ Նրա առջև կանգնած էին երկու հասակավոր երկարամորուք պահակներ, որ աչքերը գցել Արաքսի ջրերին՝ քնատ զրուցում էին։ Նրանց դիմաց նեղ ձգվում էր Արտաշատի կամուրջը, որ դիմադրում էր Արաքսի հարվածներին, և երևում էր, որ գարնանային վարարումը սպառնում էր նրա հին սյուներին։

Պահակներից մինը, որի կապույտ աչքերը վառվում էին գիշերվա անքնությունից և հիմա քնով էին լցված՝ ձայնը ծոր գցելով

հորանջեց և վեր նայելով դեպի բուրգի դիտանոցը՝ քնկոտ ձայնով կանչեց.

— Լուսերե՜ս, արևն ելավ, արձակիր՝ գնանք։

Սակայն բուրգի դետը հետաքրքրված նայում էր հեռուն, Մասիսի կողմը, դեպի արևմուտք։ Այնտեղ մի բան էր սևին տալիս։ Լուսերեսի հետատեսությանը արդեն մատչելի էին եղել նիզակների արագ ծակծկելը օդի մեջ և սաղավարտների վետվետումները։ Նա իողհարեց, որից անմիջապես հետո քաղաքադռնից դուրս թռան երեք հեծյալներ և կամրջի վրայով սլացան դեպի մոտեցող երևույթը։ Նրանք հետախույզներ էին, որոնք ուղիղ և կիսաշրջանաձև արշավեցին հեռվում։ Բուրգում զինվորներ երևացին՝ նետերը պատրաստ։ Պահակները լարված առաջ գնացին դեպի կամուրջը տանող ճանապարհը։ Սակայն հեծյալները, որոնք սլացել էին դեպի մոտեցող երևույթը՝ միացան նրան և եկան մոտեցան հանգիստ ու աշխույժ։

Նախարարներն էին՝ իրենց համհարզներով՝ Վարդանը, Ամատունին և Արտակները՝ Ռշտունի ու Մոկաց։

Լուսերեսը փողհարեց, որ բերդապետին տեղեկացնեն նախարարների գալուստը։ Միաժամանակ հրամայեց, որ դուռը կրկին բաց անեն։ Իսկույն ծանր նիգերը աղմկալից հարվածներով քաշեցին, և դուռը ճռնչալով ետ գնաց։

Քաղաքից մարդիկ վազեցին դեպի դուռը։ Նախ հայտնվեց բերդապետը՝ կարճ ու գնդիկ մի զինվորական, ընկույզի աչքերով և եռանդուն շարժումներով, ետ մղեց հավաքվածներին, որ հետզհետե ամբոխվում էին։ Նա ուժեղացրեց քաղաքադռան ներսի պահակների կազմը, պատվիրեց դռան անցքը ազատ պահել և ինքը դուրս եկավ ընդառաջ եկվորներին։

Եկվորները՝ նախարարները իրենց համհարզներով կամուրջը ծեծելով եկան դեպի քաղաքադուռը։ Նրանց մեջ իսկույն առանձնակի գծագրվեց Վարդանի ներշնչված դեմքը, որի կարճ մորուքին ու երկար մազերին նստել էր ճանապարհի դեղնավուն փոշին։ Մյուսները՝ Վահան Ամատունին և Մոկաց, Ռշտունյաց ու Արծրունյաց նախարարները հոգնադեմ էին և կարմրած։ Նժույգները փրփրակալած ու քրտնամխած՝ երևում էր արագ երթով էին կտրել երկար ճանապարհը։

Պահակները բարև բռնեցին ու խոնարհվելով կանգնեցին քա-

ղաքաղաքն երկու կողմը։ Եկվորները մտան քաղաք, և իսկույն նրանց նժույգների ոտնատարափը նեղ փողոցի սալահատակի վրա՝ արձագանքեց քաղաքում։

Անմիջապես տներից ու ծակուռներից դուրս վազեցին բնակիչները՝ նրանց նայելու, բայց նրանք արագ անցան գնացին, կանգ առան մի բարձրաշեն ու սրբատաշ քարերով կառուցված տան առաջ։ Անմիջապես տանը կից շենքերից դուրս վազեցին սպասավորները և հարձակվելով եկվորների նժույգների վրա՝ սանձերը բռնեցին։ Նախարարները իջան նժույգներից և թամբերի վրա թմրած ոտքերը ծուռ ու շիտակ շարժելով, քարե սանդուղներով բարձրացան երկրորդ հարկաբաժինը։

Քարե պատշգամբի վրա նրանց դիմավորեց նախարարների մի ստվար խումբ։ Երևում է, որ նրանք վաղօրոք հավաքվել էին։ Նրանք խնդությամբ և հարգանքով դիմավորեցին եկողներին։ Ոմանք իջան սանդուղներից և բաղջագուրվեցին եկողների հետ։

Վարդանը արագ մեկ-մեկ աչքի անցկացրեց նրանց։ Դրանք երկրի կարևոր ներկայացուցիչներն էին. Գագիշո Խորխոռունին՝ պնդակազմ, մի փոքր սապատավոր և ինքնամփոփ ու անթափանց, թերևս անբարյացակամ հայացքով։ Նրա մոտ էր կանգնել մռայլ դեմքին ինչ-որ սառած հեգնանքով Վահեվունյաց Գյուտը։ Վարդանի աչքերի մեջ էր նայում ինչ-որ մի բան որսալու նման Անձևացյաց նախարար Շմավոնը, ըստ երևույթին դեպքերից խիստ անհանգստացած։ Քնեած կանգնել էր Պալունյաց նախարար Վարազշապուհը։ Նրանք անշարժ մնացին և լռեցին։ Միայն նրանցից մեկը՝ Գնունյաց նախարար Ատոմը, որ սլացիկ հասակով մի երիտասարդ էր, մրահոն և հրաշալի զորական կազմվածքով, եկավ և սլինդ համբուրվեց Մոկաց նախարարի՝ Արտակի հետ։ Երևում է նրանք ջերմ ընկերներ էին։ Նախարարներից ոմանք ընկնելով Վահան Ամատունու թևերը՝ պատկառոտ զգուշությամբ փարձրացրին պատշգամ։ Վարդան Մամիկոնյանը մի թևով գրկեց Գնունյաց նախարարի իրանը և գորովալի նայեց նրա հրաշալի մարտիկի հասակին։ Երիտասարդը արտակարգ բարեկազմ էր և գեղեցիկ։

— Որսի՞ էիր գնացած եղել,— հարցրեց նրան Վարդանը քնքշությամբ։

— Ոչ, տեր. զորագունդս տարել էի կիրճերը մարզանքի,— ամաչելով պատասխանեց Ատոմը։

Արտակը՝ Մոկաց նախարարը, բռնեց նրա ձեռը և այդպես միասին բարձրացան վեր։ Նախարարները ճանապարհ տվին Վահան Ամատունուն և Վարդանին, որոնք առաջինը մտան դահլիճը։ Դա արքունական մեծ տունն էր ժողովների, միաժամանակ հյուրընկալության համար։

Իսկույն ներս ընկավ ճերմակահեր, կաս-կարմիր դեմքով մի ծերուկ և ջերմեռանդ շշուկով պատվիրեց իր հետևից եկող սպասավորներին, որ լվացվելու ջուր ածեն եկողների ձեռներին։ Նախարարները լվացվեցին, սրբվեցին։

Սակայն նախարարների մեջ մի զուսպ լարված տրամադրություն կար։ Ոչ ոք դեռ չէր համարձակվում խոսք բանալ դեպքի մասին։ Բոլորն սպասում էին Վարդանին և Վահան Ամատունուն։

Ամատունին հարցրեց խռպոտ և անորոշ շեշտով.

— Ժամանե՞լ է մարզպանը։

— Ժամանել է, Հազարապետ,— պատասխանեցին նախարարները խմբովին և աշխուժացած։

Ամատունին լռեց և մի պահ իր մտքերը ամփոփելով՝ հարցրեց.

— Ի՞նչ է ասում հրովարտակի մասին։

— Ոչինչ,— ասաց Վահևունյաց Գյուտը՝ նշանակալից նայելով մյուս նախարարներին։

Կրկին տիրեց լռություն։

Վահևունյաց Գյուտը դեմքին ինչ-որ հանելուկային արտահայտություն տվեց։ Կարծես նա գիտեր, որ Վահան Ամատունին ոչինչ լավ բան չէր սպասում մարզպանից։ Բայց բարվոք համարեց չարտահայտել որևէ բան։

Վարդանը խորազնին և մռայլ նայում էր նախարարներին՝ կարծես նրանց հայացքի մեջ որոնելով մայրաքաղաքի տրամադրություններն ու վերաբերմունքը դեպքի մասին։

— Իսկ հոգևոր տերը ժամանե՞լ է,— հարցրեց նա հանգիստ։

— Էջմիածին է, հոգևոր ժողովում,— ասաց բեղդապետը, որ բարև բռնած կանգնել էր դռան մոտ։ Նա այդ ասաց չոր արտահայտությամբ, որ պատշաճում էր դեպքի անախորժության։

Վարդանը լռեց և մռայլ սպասեց պապանձված նախարարներին, որ չէին խոսում և ապա ծանր մտահոգության շեշտով ասաց.

— Տյարք, ժամ առաջ գումարվենք մարզպանի և կաթողիկոսի հետ, թող տերունական ժողովը արձակի իր վճիռը, թե ինչ պատասխան տանք արքային։

Ոչ ոք չխոսեց։ Տերունական ժողովը գումարելու պահանջը ըզգում էին ամենքը, բայց արքային պատասխանելու ծանրակշիռ հարկադրանքը ճնշել էր ամենքին։

— Ժողովը գումարելը դյուրին է,— ասաց Վահևունյաց Գյուտը,— պատասխան տալն է ծանրը։

— Տաժանագին ծանր...— վրա բերեց Վարդանը զգալով հեգնանքը,— սակայն... պատասխան չտալը մեր կամքից չէ կախված...

— Եվ ի՞նչ պատասխան...— քթի տակ խոսեց Վահևունյաց Գյուտը։

— Չգիտենք, թե ինչ կվճռի նախարարությունը և հոգևոր դասը՝ բայց պատասխանը մեկ է լինելու։ Այո կամ ոչ...

Սուրհանդակ ուղարկեցին մարզպանին՝ հայտնելու, որ նախարարները պատրաստ են տերունական ժողովի գումարման։

Երեկոյան սուրհանդակ եկավ մարզպանից և նախարարներին հայտնեց, որ քանի դեռ մի քանի նախարարներ տեղ չեն հասել՝ ժողովը կգումարվի մոտ մի շաբաթ հետո։

***

Գիշերը շշնջում էր Արտաշատում։

Անլուսին երկինքը ջերմում էր հրատապ աստղերով և գարնանային գաղջ օդը սողոսկում էր Վասակ Սյունիի օթևանը՝ լցնելով զարթնող բնության բուրմունքը։ Նա, բնությունը, նաև գիշերը, գարնանային ստեղծարար ճիգերի մեջ էր։

Մարզպանական տեղավայրը ոչ վաղուց տապալված հայ թագավորության գահանիստ պալատն էր։

Աղոտ լուսավորված դահլիճը խոնավություն էր բուրում։ Պատերի որմանկարները, պաստառները, ծաղկուն գորգերը, պատերի տակ իրարից պատշաճորեն հեռու շարած ասեղնագործ նստարանները որոշ թարմություն և աշխույժ էին տալիս դահլիճի մի փոքր մթին տեսքին։ Դարաններում դարսված էին ականակուռ կաշեկազմ

մագաղաթ մատենագրեր։ Դահլիճի հատակին, մեջտեղը, ծաղկում էր մի մեծ մոզաիկ շրջանակ, որի շուրջ բոլորը առանձին կղզյակներով մոզաիկված էին վագրեր, արծիվներ, առյուծներ ու որսի կենդանիներ։ Դռան թավշյա մեծ վարագույրը, պատերին ամրացրած եղնիկի եղջյուրները, անկյունների յոթնաստեղյան աշտանակները, ուրիշ արծաթեղեն, ոսկեղեն, մետաքսեղեն զարդերի, պատուհանների զարդաքանդակների հետ տխուր մտքեր էին զարթեցնում իբրև արդեն խամրող մի հուշարձան Արշակունյաց ցեղի վերջին շառավիղի՝ Արտաշեսի։

Դահլիճի գլխին, գահույքի վրա նստած էր Վասակ Սյունին։ Նա լրիվ զգեստավորված էր։ Գլխին դրել էր ոսկե խույր, որի տակից փայլում էր մետաքսե պատվավորը։

Գլխազարդը լրացնում էին ոսկյա գինդերը ականջներին և ոսկյա գումարտակը վզին։ Ակնակուռ կամարը, սամուրե թեթև մուշտակը, կարմիր կոշիկները և վարազագիր մատանին մատին՝ նրան տալիս էին արքայական կերպարանք։

Կանթեղը մռայլ լույս էր սփռել օթևանի պատերին, որոնց մեկի վրա անկյունավոր ու անհեթեթ՝ գծագրվել էր նրա ստվերը։ Նստել էր մարզպանը և մտքերի մեջ խորասուզ չէր նկատում ո՛չ գիշերվա ժամը, ո՛չ բնությունը։ Նա ինքնամոռացության մեջ էր։

Նրան արթնացրեց սենեկապետը, որ զգույշ ներս գալով՝ զեկուցեց.

— Դենշապուհը հրովարտաբեր պարսկի և այլ մեծամեծների հետ ժամանում են. սուրհանդակ եկավ։

Վասակը լարվեց իսկույն։ Նա արագ, բայց արժանապատվորեն ձեռքով նշան արեց, որ ներս հրավիրեն այցելուներին։ Ու մինչ նա ականջ էր դնում դարբասի ճռինչին և ներս եկողների ոտնաձայներին՝ նրա դեմքը մի քանի անգամ կերպարանափոխվեց դաժան ու խորամանկ կիսաժպիտով։ Ապա ընդունեց անթափանց հանգիստ արտահայտություն։

Սենեկապետը ներս վազեց և մի կողմ կանգնելով, բաց արեց դռան վարագույրը։ Հյուրերը ներս մտան։ Նախ՝ Դենշապուհը, հրովարտաբեր պարսիկը և այլ մեծամեծներ։ Վասակը վեր կացավ, արժանավայել ծանրությամբ խոնարհվեց, մնաց այդ դիրքում, ապա գլուխը շտկեց և ձեռքով մատնացույց արեց զանազան բարձեր, հրավիրելով նստել։ Հյուրերը ծանր լռությամբ և դանդաղորեն տե-

ղավորվեցին բարձերի վրա։ Լռությունը գրկեց բոլորին։ Հետո Վասակը, որ նստել էր՝ կրկին վեր կացավ և լուռ ողջունեց հյուրերին։ Սրանք պատասխանեցին նույն ծեսով։ Նստեցին։

— Հուսամ որ՝ բարի է,— խոսեց Վասակը՝ ձայնի մեջ դնելով մի շեշտ, որով ակնարկեց տարաժամ պահը Դենշապուհի այցելության։

— Բարին արեգակինն է,— պատասխանեց Դենշապուհը,— այժմ ժամը գիշերային է։

Վասակը զգաց, որ Դենշապուհը պահանջներով է եկել։ Բայց նա դեմքի մի մկան անգամ չկծկելով՝ սպասեց, թե ինչ է ասելու Դենշապուհը։ Տիրեց կրկին ծանր լռություն։

Դենշապուհը հիսունից անց, ածուխի մանր աչունքով և գանգուր, սև սաթի պես փայլող մորուքով մարդ էր։ Բնորոշ էր նրա սեխանման գլուխը, որ լայնանալով մեջտեղում՝ կարծես պայթեցնել էր ուզում նրա աչքերն ու քունքերը։ Դրանից նրա աչքերը զարմացածի արտահայտություն ունեին։

Հրովարտաբեր պաշտոնյան, որի անունը Խոսրով էր՝ զուսպ ենգավոր աչքերով նայում էր Վասակին, Դենշապուհին և չորս կողմ՝ առանց շարժելու դեմքն ու մարմինը։ Նրա դեղնած մորթը, որ ճահճային տենդի հետևանք էր՝ նրան մեռելի տեսք էր տալիս։ Եթե չլինեին նրա դեմքի շարժվող աչքերը՝ կարելի էր կարծել, թե մումիա է նստած բարձին։

— Ինչո՞վ կարող եմ պատված լինել մեծամեծներիդ արյաց։

Դենշապուհը թեթև հազաց և հայացքը գամելով կրկին սենյակի հատակին՝ ասաց.

— Հրովարտակի պատասխանն ուշանում է. արքայից արքան կարող է սաստկագինս զայրանալ։

— Զայրույթը պետք է կանխենք,— ասաց Վասակը լուրջ ու երկյուղած։

— Բայց ինչո՞ւ են ուշացնում պատասխանը։

— Պատասխանը ես եմ ուշացնում,— ասաց Վասակը ծանրակշիռ շեշտով։

Դենշապուհը խեթ նայեց Վասակին։

— Որքա՞ն է պատշաճ արքային սպասել տալ,— հանդիմանոքեն հարց տվեց նա,— իսկ ես կարծում էի ձեր հոգևորականներն ու նախարարներն են ուշացնում։

— Հը՞, ինչպե՞ս կարելի է,— թունավորեց չոր ու խանձված ձայնով Խոսրովը, որ իր հերթին առիթի էր սպասում ծակելու։

Վասակը սակայն չնկատելու տվեց Դենշապուհի և Խոսրովի վրդովմունքը։ Նա միայն շարժվեց իր գահույքի մեջ, ավելի հարմար տեղավորվեց և անփույթ ու հաստատուն ձայնով շեշտեց.

— Այո, ես եմ ուշացնում և դեռ ավելի պետք է ուշացնեմ, որ թույլ չտամ ոչ մի գրգռմունք և խռովություն։

— Գրգռմո՞ւնք, խռովությո՞ւն,— կրկնեց Դենշապուհը,— ինչպե՞ս կհամարձակվեն։

— Ինչպե՞ս, պարզապե՞ս...— դառն հեգնանքով ասաց Վասակը։— Առաջի՞ն անգամն է... Շապուհի օրերը, Արշակ արքայի օրերը, Վասակ Մամիկոնյանի օրերը... հիշեցեք մի անգամ...

— Այս անգամ արքան արդեն դաժանորեն կճնշի ամեն փորձ խռովության,— ասաց Դենշապուհը։

Վասակը սուտ հորանջեց և ապա կեղծ-անփույթ ու դիտավորանտարբեր վրա բերեց.

— Արքան եթե բռնության դիմել կամենար՝ զորք կուղարկեր։ Բայց նա հրովարտակ է ուղարկել՝ համոզելու, խրատելու. արքան ատյան է բաց արել՝ քննելու զրադաշտական և քրիստոնեական կրոնները։

Դենշապուհը վիրավորվեց արքայի դիտավորությունների Վասակի այս կեղծ մեկնաբանությունից։

— Ուրեմն մինչև ե՞րբ պիտի սպասենք պատասխանին։

— Մինչև որ նախարարներին մեկ-մեկ համոզենք, մինչև որ մեր հոգևորականները հանդարտվեն, մտածեն, ընտելանան,— կեղծեց կրկին Վասակը։

Վասակը հենց սկզբից զգում էր, որ Դենշապուհին խոցում են իր բոլոր խոսքերը։ Նա տեսնում էր, թե ինչպես անդուր է Դենշապուհին իր բռնած տիրակալ դիրքը՝ խոսքը բանալ, խոսքը փակել, իր կարծիքը թելադրել և իրեն ներկայացնել բոլոր պետական գործերի գլուխ ու շարժիչ անձն։ Վասակը խոսում և զրույցը տանում էր այնպես, որ միշտ ուրիշի հետ անգամ խոսելիս՝ խոսքն ուղղած լինի Դենշապուհին։ Նա դիտմամբ ջանում էր ուղղակի ցույց անել իր անսահման բարձր աստիճանը մեծամեծներից։ Նա ատում էր Դենշապուհին իբրև մի մարդու, որ եկել էր Հազկերտի կամքն առաջ տանելու այնտեղ, ուր ինքը Վասակը պետք է աներ՝ իբրև մարդ-

պան։ Նա ուզում էր անպետք դարձնել Դենշապուհի դերը, խլել նրա գործը և չզիջել իր առաջնությունը երկրի մեջ և արքայի առաջ։ Վանքի և շենի կողոպուտի մասին ոչ մի ակնարկ չարեց, որ նույնպես խոցեց Դենշապուհին։

Պակաս չէր ատում Վասակին և Դենշապուհը՝ հենց միևնույն մրցման պատճառով։ Նա ևս ջանում էր նվաստացնել Վասակի իշխանությունը։ Բայց Վասակը, իբրև ավելի ճարտար և կամային մարզպան պաշտոնյա, նրան միշտ չեզոքացնում էր։

Վասակը սակայն մի փոքր հետո ժպտաց, կամենալով ցույց տալ, որ այս խնդիրը ևս սպառվեց։ Միայն հարմար կերպով փակելու համար զրույցը՝ ուրախ եղանակով ավելացրեց.

— Կամա՜ց-կամա՜ց կանենք. մի փոքր դժվար է...— ավարտեց խոսքը՝ խայթիչ հայացքը գամելով Դենշապուհի աչքերի մեջ։

Եվ ծափ տվեց։ Սենեկապետը ներս եկավ անմիջապես։ Վասակը դեմքի շարժումով հասկացրեց, որ հյուրերին աղանդեր հրամցնի։ Սենեկապետն անհետացավ վարագույրի հետև։ Ու մինչ սպասավորները սկուտեղների վրա ներս էին բերում պաճածո մրգերի տեսակները, ինչպես և ամիճ որսի երեներից, հետը ընտիր ու հնամյա գինիներ՝ Վասակը սկսեց ուրախ զրույցի կերպարանք տալ տեսակցությանը։

— Արդյոք ձմեռս որսի ելա՞վ արքայից արքան,— հարցրեց նա Խոսրովին։

Խոսրովը պատմեց մի որսի մասին Տիգրիսի ափին, ուր շամբերի մեջ վարազը գրեթե հասել էր արքային և այն է պետք է կընճիթով հարվածեր՝ թիկնապահն իրեն գցել էր վարազի և արքայի միջև և ինքն էր ընդունել հարվածը, մինչև մյուսները սպանել էին գազանին։

— Մեծ բարեբախտություն,— ասաց Վասակը,— իսկ թիկնապա՞հը։

— Մեռավ. ողջ փորոտիքը դուրս էր թափվել։

Դենշապուհը սակայն հեքիաթներով կերակրվողներից չէր։ Նա ևս ընդունելով ուրախ կերպարանք՝ սկսեց հետախուզական որս Արտաշատի դրության մասին։

— Ինչպե՞ս է նախարարների առողջությունը, հաշտ համերա՞շխ են,— հարցրեց նա կեղծ-անփույթ ու հանգիստ։

— Արքայից արքայի ողջությունն են բարեմաղթում,— վերադարձրեց նենգ հարցմունքին հարմար ձևով Վասակը։ Եվ ավելացրեց,— նախարարների հաշտն ու համերաշխը կարևոր է արքայից արքայի ծառայության մեջ. մնացածը իրենց անձնական գործն է։

Հանկարծ սենեկապետը հազիվ թաքցնելով հուզմունքը՝ ներս եկավ և զեկուցեց։

— Սուրհանդակ։ Վեհմիհր հազարապետը և Որմիզդ մոգպետը ժամանել են Արտաշատ և գալիս են։

— Ընդառաջե՛լ։

Սենեկապետը գնաց։ Դենշապուհը լարվեց և սթափվեց գինովությունից։ Նրան դուր չեկավ այս հատուկ պատիվներով ընդունելությունը մի մարդու, որի հազարապետ կարգվելը եղել էր իր ջանքերով, բայց որը ոտնձգություններ էր անում Դենշապուհից բարձրանալ։ Սակայն միաժամ նա աչքերը գցեց հատակին՝ սպասելով մի սուր տեսարանի։

Բակում լսվեց հազի որոտ, և ջահերի լույսերը դողալով ցայտեցին օթևանը։

Ներս մտավ Վեհմիհր հազարապետը՝ Վահան Ամատունու հաջորդը Դենշապուհի խարդավանքների հետևանքով։ Դա հսկամարմին և գեր մի մարդ էր, խոշոր կապույտ աչքերով, որոնց բիբերը լողում էին ճարպի մեջ՝ ինչպես պատրույգները մոմակալի փոսում։ Նրա ասվե նուրբ պատմուճանը բուռն շնչառությունից բարձրանում իջնում էր լայն կրծքի վրա։ Նա առանց խոնարհության առաջ եկավ և կանգնեց սենյակի մեջտեղ։ Նրա հետ մտնողը՝ Որմիզդ մոգպետը, որ կարգված էր Հայաստանի հոգևոր բարձր ատյանների տեղ դատավոր Հայաստանի, մի մոլեռանդ և դեղնադեմ դառն ծերուկ, նույնպես անվայել ներս մտավ։ Դենշապուհը խոր նայեց Վեհմիհրին։ Ըստ երևույթին ինչ-որ գրոհ էր պատրաստվել Վասակի դեմ, և Վեհմիհրը նշանի էր սպասում։ Սպասում էր նաև մոգպետը։

Վասակը չհրավիրեց Վեհմիհրին և Որմիզդին նստելու։ Նրանք մնացին ոտի վրա։

Դենշապուհը աննկատելի նշան արեց Վեհմիհրին։ Սա սկսեց.

— Ես գիտեի, որ բանը կհասնի այստեղ... Հիմա թող հայտնի լինի քեզ, որ սուրհանդակ եկավ արքայից։

— Գալուստը բարի,— ասաց Վասակը արտաքուստ անվրդով,— և ի՞նչ լուր է բերել։

— Բերել է արքայի զայրույթը։ Իսկ դու հեքիաթներ ես պատմում։ Հանուն արքայի պահանջում եմ, այսօր իսկ պատասխանը գրել, որ ուղարկենք։

— Գիտե՞ս... մեկ էլ տեսար պատասխանը գրել տվի ա՛յս իսկ պահիս,— սպառնալի ասաց Վասակը շեշտ ու խոր նայելով փնչացնող Վեհմիհրին,— զգո՞ւյշ... Բայց բովանդակությանը ձեռնաթափ եմ։

— Ինչո՞ւ,— խեթ նայեց Վեհմիհրը։

— Ինչո՞ւ,— հեգնելով կրկնեց Վասակը,— որովհետև եթե իմ պատասխանն ես ուզում՝ ես կրակապաշտ եմ իմ արքայի հենց ասենք լոկ հրամանով։ Բայց ես չեմ կարող իմ ազգը մի ժամի մեջ կրակապաշտ դարձնել։

— Ճնշի՛ր, պատժի՛ր, ստիպի՛ր։

— Գետը ճնշում է, պատժում, ստիպում, բայց ժայռը կանգնա՞ծ է իր տեղը և նրան չի լսում։— Դու եկ նստի՛ր պատշաճությամբ՝ միասին խորհենք, թե ինչպես համոզենք մերոնց ընդունել կրակապաշտությունը։

— Մենք մտադիր չենք կրկին ենթարկվել արքայի բարկության։ Այսո՛ր իսկ գրել տուր պատասխանը։

Մոգպետը, որ սրտի դառն մաղձից թոնթորում էր և կզակը շարժում՝ կուլ տալով դառնադի թուքը՝ չոր ձայնով խոսեց.

— Հոգևոր ատյանները շարունակում են ծածուկ գործել. իսկ ինչո՞ւ համար է արքայից արքան ինձ ուղարկել այստեղ. ե՞րբ է չքանալու այս ձեր հոգևորների անիծյալ սերունդը. չէ՞ որ արքայից արքան ատելով ատում է դրանց և սպասում է մոգերն ուղարկելու ժամին։

— Մեր հոգևորականները մի սրով չեն վերջանա, տեր մոգպետ։ Նրանց մորթելն իսկ մի քանի ամսվա գործ է։ Կուզե՞ս սկսեմ, և այդպես էլ տեղեկացրու արքայիդ,— և հեգնորեն շեշտեց՝ «արքայիդ»։

Վեհմիհրը շփոթվեց, Դենշապուհը հայացքը գցեց հատակին, զգալով, որ Վեհմիհրը ունայն հարված տվեց։

Վասակը ծափ տվեց. ներս եկավ սենեկապետը։

— Սուրհանդակ ուղարկիր նախարարներին և հրավիրիր այստեղ. թող հայտնի իմ կողմից, որ շատ է շտապ։

Տիրեց լարված լռություն, որի ընթացքում բոլորն զգացին ինչ-որ մի անհարմարություն, դեպքերի ինչ-որ կրքոտ և բռնադատ առաջշարժում, որի հետևանքները բարի չեն։ Դենշապուհն զգաց, որ այսպիսի ստիպմամբ հրովարտակի պատասխանը կգրվի ով գիտե ինչ բովանդակությամբ, որի պատասխանատուն դառնում է ինքը։ Եթե արքան ատյան կաղմի վերջը՝ պիտի բացվի այս հանգամանքը։ Նույնը, թեև պակաս չափով, զգաց նաև Վեհմիհր հազարապետը, բայց որպես գործիք Դենշապուհի՝ հույս ուներ դուրս մնալու պատասխանատվությունից։

Իսկ Վասակը, որ վերջին օրերը ելքի մասին էր խորհում և չէր գտնում, կարծես թե սրանով գտավ, այն է, որ իրեն «ճնշեցին», «շտապեցրին» արքայի պաշտոնյաները, և ինքն «ստիպվեց»։ Արդեն բարի բան չէր սպասում այդ պատասխանից։ Բայց նա վճռեց գործի այս կերպարանքն ընդունելուց օգտվել և մի ճարպիկ շարժումով ելք գտնել, դուրս գալ ջրի երեսը, տապալելով Դենշապուհին։

Լռությունը երկար տևեց, որովհետև ներկաներից ամեն մեկը իր մտահոգության առարկան գտավ և նրանով էր զբաղված։ Վեհմիհրին ի միջի այլոց խոցեց այն բանը, որ Վասակը սենեկապետին պատվիրեց ասելով՝ կանչել «Հազարապետին»։ Չէ՞ որ Վահան Ամատունին պարսից Դռան առջև պաշտոնանկ էր և իրավունք չուներ Հազարապետ լինելու, անգամ կոչվելու։ «Ոչ, այս երկրում ոչինչ չի փոխվել, ամեն բան անունով է»,— մտածեց Վեհմիհրը։ Նույնն զգում էր նաև մոգպետը, որը գանգատվեց, որ հոգևոր ատյանները ծածուկ գործում են։ Հայերի դիմադրության մասին մտածում էր նաև Դենշապուհը, որ Հազկերտի հրամանով եկել էր Հայաստան աշխարհագիր անելու, որպես թե հարկերը թեթևացնելու և պարսից զորքը կրճատելու, բայց որի իսկական գործը պիտի լիներ հայերի միաբանությունը և կապերը քանդել։ Նա անտանելի հարկեր էր դրել վանքերի և եկեղեցիների վրա, ճնշում էր ժողովրդին ծանր հարկերով, որպեսզի մոգության կրոնը դառնա միակ ելքը ազատվելու անտանելի վիճակից։ Սակայն ի՞նչ... Դենշապուհը ամենուրեք հանդիպել էր համառ դիմադրության։ Եվ ահա այժմ այս մարզպանը, որ պիտի օգնի պարսից տերության միջոցառումներին՝ սա ևս դիմադրում է։ «Ոչ, վատ է, վատ. ոչինչ չի արված դեռ,— դառնությամբ ասաց մտքում Դենշապուհը,— իմ ձեռքով պաշտոնազուրկ

արած հազարապետը կրկին հազարապետ է, իմ բերած մոգպետը ոչ մի ազդեցություն չունի»։ Դենշապուհը մտածում էր իր պաշտոնի մասին, որ վտանգված էր տեսնում։

Պատուհաններից ներս լույսերի խուրձեր ընկան և սկսեցին թրթռալ։ Լսվեց դարբասի ճռինչը։ Արագ ներս մտան Վարդանը, Վահան Ամատունին և ապա մյուս նախարարները։ Երբ նախարարները եկան առաջ և կանգնեցին դահլիճի մեջտեղը՝ Վասակը վեր կացավ և ողջունեց նրանց։ Նախարարները խոնարհաբար պատասխանեցին նրան, որից հետո նա նստեց իր հատուկ բարձին և հրավիրեց նախարարներին նստել բարձերի վրա։

Մարզպանը սեամորթ, նիհար ձեռը հանեց գոտուց, շողացրեց ոսկյա մատանին և խորազնին նայեց նախարարներին.

— Ես պատշաճ համարեցի հրավիրել ձեզ պալատ արքայի պաշտոնյաների ներկայությամբ,— ասաց մարզպանը հանդարտ ձայնով,— որի համար հատուկ ներողություն եմ խնդրում նախարարներից։ Եվ ապա հարկ եմ համարում խնդրել նախարարներին պատրաստվելու, որ մոտակա օրերս գումարվի նախարարական ժողով՝ կազմելու հարկուպատշաճ պատասխանը արքայական հրովարտակին։

Ծանր լռություն տիրեց։ Բոլորը սպասում էին Վասակին, որ խոսի։

— Արքայից արքայի պաշտոնյաները պահանջ են դնում այս առավոտ գրել հավատքի հրովարտակի պատասխանը։ Արքայից արքան խստագույն շտապեցնում է՝ որպես հայտնեցին այս պատվարժան անձինք։

Վարդանը նայեց բոլոր ներկաներին և ասաց.

— Եթե որևէ ոք կամենում է իմանալ, թե ես ինքս, անձամբ ինչ պատասխան ունեմ տալու հավատքի հրովարտակին, ես կարող եմ բացեիբաց հայտնել, հույս ունեմ, որ մեծամեծներիդ իմը չէ, որ շահագրգռում է։ Դուք կամենում եք մեր ազգի պատասխանը։ Դա կիմանաք, երբ կլսեք ազգի բերանից նրա կամքը։

Վասակը ասաց.

— Սակայն համաձայնվիր, Սպարապետ, որ մենք արքայից արքային պետք է հարկուպատշաճ և խաղաղամիտ պատասխան տանք։

Մյուս նախարարները քար լռություն էին պահում։ Թվում էր, որ կամ նրանք զգուշանում էին խոսել, կամ լռելյայն պայմանավորվեցին խոսքը տալ երկու նախարարներին։

Վահան Ամատունին հարմար տեսավ միջամտելու։

— Հարկուպատշաճ պատասխանը կտրվի անշուշտ։ Առաջինը մեզ դիմել է ոչ արքան, այլ արյաց Հազարապետը։ Ինչ էլ որ լինի՝ մենք արքային չենք վիրավորի։ Իսկ Հազարապետին կտանք այնքան, ինչ որ նա իրոք էլ պահանջում է մեզանից — կարծիք հայտնել երկու կրոնների մասին և ընտրել, որը կամենում ենք։

— Իսկ դուք ո՞ր կրոնն եք ընտրում,— հարցրեց Որմիզդ մոգպետը։

— Տեր մոգպետ, մենք ընտրել ենք արդեն, և շատ վաղուց։ Շապուհը վկա էր...

— Իսկ այժմ դուք ո՞րն եք ընտրում։

— Արյաց համար զրադաշտը, մեզ համար քրիստոնեությունը։ Կարո՞ղ է լինել այլ բան...

Դենշապուհը վեր թռավ.

— Դա ապստամբությո՛ւն է... դուք արյո՛ւն եք փնտրում։

Վարդանը հանգիստ արհամարհանքով կողքանց նայեց Դենշապուհին և ասաց.

— Մենք արյունահեղություն չենք փնտրում, այլ փախչում ենք նրանից։ Բայց եթե արյունահեղությունը շատ կվազի մեր հետևից՝ մենք ետ կշրջվենք...

Հետո դարձավ Վասակին.

— Ներողամիտ եղիր, տեր մարզպան, ես չեմ կամենում այստեղ զրախոսությամբ զբաղվել։ Մեր գործը արյաց Հազարապետի հետ է, մենք կգործենք նրա հետ։

— Դու ճիշտ նկատեցիր,— ասաց Վասակը,— մենք գործ ունենք արյաց Հազարապետի հետ։

— Ոչ մի բարի բան չսպասենք ուրեմն,— բարկացած գոչեց Դենշապուհը,— այստեղ ես տեսնում եմ...

Վասակը ձեռքով արեց, որ Դենշապուհը չշարունակի.

— Դո՛ւ կամեցար այդպես. ինձ մնում է ջանալ, որ այդպես չլինի։

Դենշապուհը ձեռքով նշան արեց մյուսներին, որ վեր կենան։

— Գնանք։

— Ինչ որ կարող եմ՝ ես կանեմ արքայի համար։ Իսկ անկարելին անկարելի է,— ձայնը բարձրացրեց Վասակը։

Դենշապուհը սառը ողջունեց և ուղղվեց դեպի դուրս։ Նրան հետևեցին մյուսները։

Սենեկապետը պատշաճավոր խոնարհությամբ ճանապարհ դրեց նրանց մինչև դարբասը, որից հետո երկու ջահակիրներ առաջ ընկան, որ ընկերակցեն նրանց Արտաշատի փողոցներով մինչև նրանց օթևանը։

Մի քանի խլրտոց, վեհմիտրի որոտալից հազը, և ամեն ինչ մարզպանի տան շուրջը ընկղմվեց խավարի մեջ։

Ծանր և հուզումնալից լռություն տիրեց նախարարներին։ Վարդանի կտրուկ պատասխանները ոչ Վասակի իրեն և ոչ էլ նախարարներից ոմանց սրտովն էր։ Վասակը միայն մի խաղ արեց՝ Դենշապուհին մի փոքր զսպելու։ Սակայն նա չէր կամենա, որ Վարդանը խռովության գլուխ կանգներ։ Եվ սպասեց, որ նրան սանձահարելը սկսեն նախարարները և ոչ թե ինքը։

Դա շուշացավ։ Ոշտունյաց նախարարը խզեց անհարմար լռությունը համարձակ և անսպասելի պարզությամբ։

— Տյա՛րք, պարզ է ամենքիս համար, որ արքայից արքային պատասխան պիտի տրվի։ Սակայն հրովարտակն ուղղված է հոգևորականության։ Մի՞թե նախարարությունը պիտի տա պատասխանը հոգևորականության փոխարեն։

— Հրովարտակն ուղարկված է հոգևորականության և նախարարության։ Հոգևորականությունը և նախարարությունը պիտի տան պատասխանը,— ասաց Վարդանը։

— Տեր Մամիկոնեից, նախարարությունը կարող է չխառնվել այս վեճին։

— Եվ ինչո՞ւ...— վրդովված մռմռաց Վահան Ամատունին։

— Խնդիրը կրոնական է, Հազարապետ, նախարարությունը գործ չունի այստեղ։

— Խնդիրը կրոնական չէ միայն, այլ նախարարական իշխանության, գոյության, ազատության, և առանց նախարարության կարծիքի էլ ոչ մի պատասխան չի կարող առաքվել արքային,— ավելի հաստատուն եղանակով ասաց Վարդանը։

Վասակը ձեռքով արեց, որ լսեն իրեն։

— Ես խորհում եմ այլապես։ Ուղիղ է Սպարապետը։ Նախարարության կարծիքը ևս պիտի լինի, բայց խնդիր է՝ թե ո՛վ խոսի արքայի հետ։ Հրովարտակն ուղղված է «հայոց մեծաց», այսինքն՝ մեզ, նախարարներիս։ Բայց հայոց մեծաց ուղղվել է մի թուղթ, որի իմաստը կրոնական է։ Սպասենք ու խորհենք, տյարք, թե արդյոք արքայի հետ նախարարությունը խոսի, թե՞ հոգևորականությունը։

Վարդանը վրդովվեց.

— Այդ ձեր գիտենալիքն է, տեր մարզպան և տյարք իշխանք։ Բայց նախարարության վճռական խոսքը պիտի լինի թղթի մեջ, քանի որ հոգևորականության պատասխանի համար նախարարությունը ևս պատասխանատու է հնարավոր արյունահեղության...

Վասակն զգաց, որ Վարդանը տիրել է սկսում նախարարների մտքին։ Ուստի և շտապեց փակել խոսակցությունը։

— Կխորհենք այդ ամենը, կխոսենք տերունական ժողովում։ Մինչև այդ տեղերը չենք հասցնի...

— Ո՞վ գիտե, թերևս հասցնենք, տեր մարզպան,— ասաց Վարդանը և վեր կացավ հրաժեշտի։

Մյուսները հետևեցին նրան, բացի Գադիշոյից, Գյուտից և Ռշտունյաց Արտակից։

Վարդանը և մյուսները խոնարհ հրաժեշտ տվին և դուրս եկան պալատից։

Նախարարները սպասեցին, որ Վասակը խոսի։

Ստեղծվեց մի դրություն, որ առաջին իսկ խոսողը դառնալու էր պատասխանատու ձեռներեցը կամ պատճառը ինչ-որ դավադրության։ Երկար տևեց լռությունը, այնքան երկար, որ արդեն հասկանալի դարձավ նախարարների միտքը։ Եվ այդ զգալով էլ Գադիշոն նայեց Վասակին և հառաչեց.

— Այսպես ահա, տեր մարզպան, վատ տեղ մթնեց մեր գործը։

— Վաղը մեզանից որոշ պատասխան են պահանջելու,— ասաց Վասակը,— դրությունը տագնապալի է։ Վեճ ու խռովքն այստեղ մեր մեջ դյուրին բան է։ Գժտվենք՝ կհաշտվենք։ Բայց արյաց արքայի հետ վեճի բռնվելը տաժանք է և մահու վտանգ։ Արքան երկդիմի պատասխանը մեզ չի ների։ Պետք է որոշ ու վերջնական պատասխան։

— Կտանք որոշ ու վերջնական պատասխան,— ասաց Գադիշոն։

— Բայց ի՞նչ պատասխան...— հետաքրքրվեց Վասակը։

Մյուսները ևս լարվեցին։

— Նախարարները տատանման մեջ են,— ասաց Գադիշոն,— բայց մարդ են... եթե կա թուլություն տեղի տալու մեջ՝ կա և թուլություն հարելու։ Նրանք կհետևեն Սպարապետին։

— Համոզվա՞ծ ես,— հուզված հարցրեց Վասակը։

— Դե, ապրել ենք, տեսել ենք։

Վասակը սկսեց մտածել, թե ինչպես հիմքը դնի երկպառակության և ինքը մեջտեղը չերևա։ Սկսվում էր մի շատ կարևոր գործ։ Համախոհների դաս։ Երեք նախարարներ փաստորեն անցան Վասակի կողմը։ Պետք էր ամրապնդվել։ Ուստի և Վասակը խոսեց այն բոլոր դաժան հետևանքների մասին, որոնց կհասնի Հայաստանը, եթե դիմադարձ կանգնի արյաց արքային։

— Հեռի ինձանից, տյարը, որ ես ձեռս դնեմ ձեր խղճի վրա... Բայց իմացեք, կանգնած ենք կործանման առաջ։ Քար քարի վրա չի մնա երկրում։ Կավերվեն քաղաքներն ու ավանները, կոչնչանա մեր բոլորիս իշխանությունը. լա՛վ կշռեցեք։

— Ի՞նչ է քո խորհուրդը,— հարցրեց Գյուտը։

— Համոզեցե՛ք Սպարապետին,— ասաց Վասակը,— դիմեցե՛ք նախարարներին, թող համոզեն նրան։ Եթե նա տեսնի, որ ամենքդ խաղաղության եք կողմնակից՝ ստիպված կհամոզվի։

— Լավ միտք տվիր,— ասաց Գյուտը։

— Դուք այդտեղից էլ սկսեցեք։ Դիմեցեք նախարարներին, թող միանան ձեզ հետ և խնդրեն Սպարապետին զիջելու։ Եվ շուտ, քանի չի լուսացել։

— Այն ժամանակ մենք գնանք,— ասաց Գյուտը։

Գադիշոն անկատելի քմծիծաղով վեր կացավ։ Վեր կացան և մյուսները։

— Խնդրելով, հորդորելով, համոզելով,— ասաց Վասակը։— Գաղտնիք չէ, որ բոլորս էլ քրիստոնյա ենք և կմնանք երևի քրիստոնյա։ Այստեղ արքայից արքային մի բանով մեզ հաճոյակատար ցույց տալն է։ Հետո ժամանակ կանցնի, ամեն բան կրկին իր տեղը կառնի։ Հարկավոր չէ գրգռումներ առաջ բերել։ Ձեր խորհուրդն՝ ա՞ց։

— Լավ է, տեր մարզպան, բայց վախենում եմ, որ մոլեգնեն և վիժեցնեն ամեն բան։

— Ոչ, ոչ, տեր Խորխոռունյաց, մի՛ հուսահատվիր։ Գնա՛ չանք գիր։

— Կանեմ ինչ կարող եմ, տեր մարզպան։ Բայց հիմարություններ կան, որ պիտի կատարվեն, որ վերջանան։ Խելքը շատ անգամ հիմարությունից հետո է։

— Զգձգենք, թող շատ խորհեն, ողջամիտ լինեն։ Զգձգենք... պիտք է այնպիսի պատասխան տանք, որ արքայի բորբոքած կրակը մի փոքր հանդարտեցվի, որ... ժամանակ անցնի։ Ժամանակը որ անցնի, շատ բան կանցնի։

— Մենք կմնանք մեր տանը՝ ինչ-որ ենք,— բավականին պարզ խոսեց Գադիշոն,— ո՞վ է մեր տունը մտնում։ Կամ մտնեն՝ ո՞վ է մեր սիրտը մտնում։ Գլուխներս պահենք, իշխանությունը, սա է գլխավորը։

Վասակին շատ դուր եկավ Գադիշոն։ Նրա մեջ Վասակը տեսավ իր գլխավոր գործակցին։

Նախարարները հրաժեշտ տվին Վասակին շատ ուշ, կես-գիշերից անց։

— Զգձգենք՝ թող խորհեն,— մռմռաց Վասակը մտազբաղ։ Հետո ավելացրեց չարաժպիտ։

— Ոչ։ Զգձգենք՝ թող քայքայվեն։

Վասակը վեր կացավ գահույքից, թափ տվեց իրեն և սկսեց անցուդարձ անել։ Հետո գնաց կանգ առավ նեղ պատուհանի առաջ ու սկսեց դիտել պարտեզն ու երկինքը։ Բնությունն անկարեկից ու օտար՝ իր գործի հետ էր։ Ո՛չ բյուրավոր աստղերի կկոցումների մեջ, ո՛չ զարթոնքի ցողով կենդանացած նորաբողբոջ ծառերի ոռոտերում, ո՛չ մռայլ, բայց հուսալից գարնանային հողի բուրմունքներում նա չէր գտնում մի խորհրդատու միտք, մի օգնական խոսք, թե ի՞նչ անի և ինչպես առնի առաջը իր կարծիքով «մեծ աղետի», որին նա ուրիշ կողմից էր նայելով տեսնում և ուրիշ միջոցներով էր կամենում դիմագրավել։ Նա մի բան սկսում էր արդեն պարզ նկատել, որ իր մարզպանական պաշտոնը այլևս «ձրի» և «խաղաղ» վարել չի կարող։ Նա զգաց, որ նրա մասին բամբասում և շարախոսում են Դենշապուհը, Խոսրովը, Որմիզդն ու Վեհմիհրը։ Նրանք մեկին տասն ավելացնելով այնքան կբանսարկեն Հազկերտի մոտ իրեն, որ կտապալեն։ Հայ նախարարները թերևս ավելի թշնամանան, երբ տեսնեն, որ նա դեմ է անհնազանդության։ Նա առաջուց

էլ զգում էր, որ նախարարների մեծամասնությունը ներհակ է իրեն։ Ոմանք նախանձից նրա բարձր պաշտոնի համար, ոմանք մեծ պարսկասիրություն տեսնելով նրա մեջ, ոմանք էլ անորոշ, անձնական թելադրությամբ։

* * *

Նոր էր լուսացել, որ Մոկաց Արտակ նախարարին կարծես մի կը դրդեց խոր քնի մեջ։ Նախարարը զարթնեց։

Աչքերը բաց անելով՝ պահ մի չկարողացավ հիշել, թե որտեղ է։ Սենյակի մթին առաստաղն ու ստվերալի անկյունները նրան նայեցին անծանոթ, բայց հյուրընկալ հայացքներով։ Ապա ուշաբերվեց, որ Արտաշատումն է և անկողնում շրջվելով՝ խոր շունչ քաշեց։ Առաջին ախորժ զգացումը հողի բուրմունքն էր, գարնան մտերիմ, հարազատ շունչը, որը չթողեց, որ նա զգար օտարության մեջ։ Այդ բուրմունքը քաղցր ճմլեց նրա սիրտը, և նա աչքերը կրկին փակելով, երազել սկսեց։ Եվ իսկույն նրա երևակայության մեջ երևաց մի սիրելի կերպար, որին թողել էր նա հեռո՜ւ, հեռո՜ւ լեռների ու ձորերի հետև։ Եվ ահա փակ աչքերի թավիշ խավարի մեջ այն էակն սկսեց մերթ դուրս լողալ՝ նկատվել, ժպտալ, կարողացավ քաշել իրեն, մերթ աղոտանալ՝ սուզվել անէության անդունդը։ Զգացմունքը հորդեց երիտասարդ իշխանի սրտում։ Նա հառաչեց, ուզում էր թռչել անկողնից, դուրս գալ այգի, նայել ծառերին, դաշտերին, լեռներին, ապրել։ Քաղցրացավ առավոտը, հողը, Արտաշատը, հայրենիքը, կյանքը։ Բերկրանքից նախարարի աչքերը տամկեցին, և նա դեմքը սեղմեց մետաքսե բարձին՝ ամոթխածելով ինքն իրենից։ Եվ ի՜նչ շուտ, ի՜նչ հանկարծ այդ անծանոթ էակը դառավ այդքան մտերիմ և հոգածության առարկա, այնքան հարազատ, որ Արտակը դժվարանում էր ապրել նրանից հեռու։ Որքա՜ն փոքր ժամանակ նա վայելեց նրա ներկայությունը, ի՜նչ սակավ եղավ նրանց դրությը։ Հենց նոր գտան իրար, երջանկությունը կոկոն տվեց, որ ահա բաժանվեցին մի ահավոր գործի համար։ Պատերա՜զմ է վառվելու... Բռնակալը ճիրանները մեկնել է դեպի այս երկիրը, դեպի այս գարունը, հողի բուրմունքը, դեպի Անահիտը — ի՜նչ Անահիտը — դեպի այս ժողովուրդը, որ ահա զարթնել՝ իր լծկան անասուններն է խաղաղ քշում անդաստան հերկելու, բերքը ապահովելու, կյանք ստեղծելու։ Ամե՜ն, ամեն ինչ կանգնում է այդ վտանգի առաջ։

Արտակն անհանգիստ մտքերից հանկարծ նստեց անկողնի մեջ։ Եվ բավական էր նրա մի թույլ խլրտոցը, որ դռան հետև լսվեր սպասավորի հազը։ Նա իմաց էր տալիս, որ պատրաստ է ծառայության։ Արտակը ծափ տվեց։ Սպասավորը մտավ ներս և բերեց ջրի կոնքը, օճառ, սրբիչներ։ Արտակը լվացվեց, հագավ ճանապարհի փոշուց մաքրած զգեստները։ Եվ վեր կացավ, որ իսկույն գնա այրի՝ սպասավորը ներս շտապելով զեկուցեց.

— Ատոմ Գնունյաց նախարարը ուղղվում է այս կողմ...

Արտակը նայեց պատուհանից, բայց Ատոմը արդեն դռան հետևն էր։

Արտակ նախարարը մտերմական ձայնով հրավիրեց.

— Մտի՛ր օթևան, իշխա՛ն։

Եվ այն է, ուզում էր ընդառաջ ելնել՝ վարագույրը ճեղքվեց, և նրա մեջ գծագրվեց երիտասարդ նախարարը վայելչագեղ հասակով։ Նա համեստ ու բնական հպարտ կեցվածքով պահ մի կանգնեց մնաց մուտքի մեջ և ջերմագին ժպտաց։

— Ողջո՛ւյն, լո՛ւյս բարի,— ասաց նա մեղմաձայն։

— Ողջո՛ւյն արևիդ, գալդ բարի՛, իշխա՛ն, առաջացի՛ր և հրամայի՛ր։

— Վաղ ես վեր կացել,— ասաց Ատոմը հեզ նկատողությամբ։

— Դո՛ւ ևս,— պատասխանեց նույն եղանակով Արտակը։

Ատոմը չորս կողմը նայեց և ասաց.

— Կցանկանա՞ս իջնենք այգի։

— Սիրահոժար, իշխա՛ն,— ասաց Արտակը։

Նրանք իջան այգի։

Այգում ծառերը բողբոջել էին. նրանց կարծես կավեղեն ոստերը լցվել էին գարնան աննկատելի հյութերով։ Գետնի երեսը ծածկվել էր նորածիլ մատղաշ արոտով։

— Ինչո՞ւ ես տխուր,— հարցրեց Ատոմը Արտակին։

— Տխո՞ւր, ոչ, իշխանիկ,— պատասխանեց Արտակը,— սիրտս է մտածում,— ժպտաց նա հանելուկային հայացք նետելով դեպի հեռուն։

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ դուրս կգա այս աղմուկից,— հարցրեց Ատոմը։

— Պատերազմ,— արդեն սթափված խոսեց Արտակը։

— Ես էլ եմ այդպես կարծում։ Բայց քեռին դեմ է առել ինչ-որ։

«Քեռին»՝ Վարդան Մամիկոնյանն էր։

— Ճշմարիտ ես խոսում,— ասաց Արտակը,— բայց միևնույն է՝ կգնանք դեմ կառնենք պատերազմի առաջ, չենք խուսափի։

— Չենք խուսափի։

Նրանք լռեցին մի պահ։ Ատոմը սկսեց մի ձեռքով սրի գլուխը պատյանից քաշել — քշել դուրսուներս և մտածկոտ նայել գետնին։

— Քեռին մեծ պատերազմից է երկյուղ կրում,— խոսեց Արտակը՝ խելացի աչքերը լցնելով ծանրակշիռ մտքերով,— մեծ պատերազմ, որ պահանջում է բոլոր նախարարների միաբանությունը։ Իսկ միաբանություն չի լինելու։

— Չի լինելու,— կրկնեց Ատոմը,— և շարժե ուրեմն ծանրանալ դրա վրա։ Պատերազմը գալիս է՝ հարկավոր է ընդունել։

— Ես էլ եմ այդպես կարծում,— աշխուժացավ Արտակը։

— Գիտե՞ս ինչ, ե՛կ մենք մեր պատրաստությունը տեսնենք։ Ե՛կ մեր զորագնդերը հատուկ շարժման մեջ դնենք այժմյանից։

— Ես համաձայն եմ։

— Մենք կքաշենք մեր կողմը մեզ համակիր նախարարներին և երբ օրը կգա՝ պատրաստ դուրս կգանք արյաց դեմ։

Արտակն ուրախացավ, և կրկին միտքը գնաց հեռուները։ Մի առանձին սուր կարոտ զգաց դեպի Անահիտը, որին նա գտել էր մեծ գործի սկզբին։ «Որքա՜ն, որքա՜ն ուրախ կլինի նա՝ ինձ տեսնելով զորագնդի գլուխ անցած պատերազմ գնալիս»,— մտածեց նա և մի տեսակ հաճույք զգաց պատերազմից։

Ատոմը նստեց քարե նստարանին և սկսեց սրի պատյանով հողի վրա գծեր քաշել։

— Տե՛ս,— ասաց նա,— ես կարծում եմ հարձակումը կլինի Մասյաց ստորոտով դեպի Արաքսի կամուրջը։

— Ինչո՞ւ ես այդպես կարծում,— սրվեց հանկարծ Արտակը։ Նրան իսկույն կլանեց ռազմական արվեստի հաճույքը։

— Ուրիշ ճանապարհ չունի նա. (նա՝ պարսիկները. այդպես էին սիրում խոսել ռազմիկները, որ բազմաթիվ մարտերում եղած էին)։ Նա պիտի մտնի երկրի սիրտը և որքան կարող է՝ պիտի շտապի։ Ուրեմն և պիտի ընտրի ամենակարճ գիծը։

— Կարող է և Զարեհավանով գալ՝ Սպարապետի հարվածը կոտրելու համար իր ձախ թևում։

— Ձախ թևո՞ւմ... ինչո՞ւ...

— Զախ թևում, եթե Սպարապետը հարվածը հասցնի նրա Արտազն անցնելու պահին, և թիկունքում՝ եթե նա արդեն մտած լինի Այրարատյան դաշտ։

Ատոմի գեղեցիկ դեմքին մտածկոտ կնճիռներ երևացին։ Նա լռեց մի պահ և ապա կարծես ինքն իրեն՝ ասաց.

— Հավան եմ. հնարավոր է։ Միայն խնդիր է, թե որտե՞ղ կլինի այդ ժամին Սպարապետը։

Այս նոր միտքը հրահրեց Արտակին։

— Սպարապետը պետք է լինի Բագրևանդի հովտում։

— Ինչո՞ւ ոչ Այրարատում,— առարկեց Ատոմը։

— Բագրևանդը այն վայրն է, որ կիսում է երկիրը։ Չպետք է թույլ տալ, որ նա մտնի այնտեղ և ոտը դնի մեր մեջքին։ Դա մեր աքիլլեսյան կրունկն է, սիրելի Ատոմ։

— Այդ դեպքում նրան պետք չէ ժամանակ տալ, որ մտնի երկիր, պետք է հարվածել Դռան մոտ,— վեր կացավ տեղից Ատոմը։— Այո, ճշմարիտ ես, Արտակ, շատ ճշմարիտ ես... Խելացի միտք էր։

Ատոմն անհանգստացավ։ Արտակի միտքը նրան համոզեց, և հենց դա էլ պատճառ դարձավ նրա հանկարծակի անհանգստության։

— Արտակ, պետք է օ՛ր առաջ զորքը շարժել սահմանը, օ՛ր առաջ կասեցնել թշնամու հարվածը... Իսկ մենք այստեղ խոսո՞ւմ ենք։ Ախ, շատ է դանդաղ Սպարապետը։

Ատոմը լռեց։ Նա արագ անցուդարձ սկսեց նստարանի շուրջը, հետո կանգնեց, երկու ափերը կանթեց իր բարակիրան գոտկատեղին, նայեց հեռուն։

— Ո՛չ, ո՛չ, Արտակ, սպասելու օրեր չեն, ե՛կ մենք մեր զորագնդերը շարժման մեջ դնենք, քաշենք նախարարներին մեր կողմը։ Այն ժամանակ «քեռին» կշարժվի։ Տե՛ս, Արտակ, հետո ուշ կլինի, չարաչա՞ր ուշ։

— Կովելը պիտի կովենք,— ասաց Ատոմը,— դու ասա ի՞նչ կոիվ կփաթաթեն մեր վզին, «առյուծի՞», թե՞ «մոծակի»։

Արտակը խորամանկորեն վեր նայեց իր դեմ կանգնած Ատոմին՝

— Ի՞նչ է, Տիգրան Մե՞ծ ենք մենք, և ոչ թե մի բուռ նախարարնե՞ր։ Թե՞ մեր դաշտերն են Միջագետքի, և ոչ լեռնաբավիղները,— ասաց Արտակը։

— Բանը միայն տեղանքը չի.— դաշտայի՞ն, թե լեռնային,— խորհելով բացատրեց Ատոմը,— քուշանները դաշտավայրերում են կռվում, բայց «մոծակի» կռիվն է նրանցը։ Եվ նրանք սակավաթիվ էլ չեն, քան պարսիկները։

— Ապա ի՞նչն է «առյուծի» կռվի գլխավոր իմաստը,— հարցրեց Արտակը ավելի լարվելով։

— Ծանրազեն դաշտային զորքը, ասպազենքը, ֆալանգը, և թհարկե հետո արդեն թիվը, տեղանքը և հազար ու մի բաներ,— ընշանապ վերջացրեց Ատոմը։

— Հը՞մ։

— Իսկ այդպիսի զորք չունենք,— հառաչելով ասաց Ատոմը,— գա մեծ տիրության բան է...

— Ճիշտ է,— տխրեց Արտակը։

Ատոմն սկսեց արագ քայլել։ Հետո կանգ առավ.

Եվ սակայն պարսիկները մեզ կկանգնեցնեն ծանրազեն, դաշտային կռվի առա՞ջ...

Ծառուղիով դեպի նախարարներն էր գալիս արքունական տան գլխավոր սենեկապետը։ Նա իր հասակին անհարմար արագ շարժումներով շտապում էր։ Մոտեցավ և հևալով ասաց.

— Մարզպանը կարգադրել է ժողովվել արքունական տուն։ Նախարարները հավաքված են։

— Տաճա՞ր պիտի գնանք,— հարցրեց Արտակը։

— Տեղյակ չեմ, տեր իմ, չասաց,— պատասխանեց սենեկապետը։

***

Կեռ-գիշերն անց էր, որ Արշարունյաց Արշավիր նախարարը, Մաղխազ Վրիվ նախարարը, Շմավոն Անձևացյաց նախարարը, Առավան Վանանդյա նախարարը, Վարազշապուհ Պալունյաց նախարարը. լույս նկատելով Ներշապուհ Արծրունու կիսախավար սենյակում՝ գնացին նրա մոտ։

— Բարի՞ է,— չարաճճի ժպիտով հարցրեց Ներշապուհը, վայր գնելով մագաղաթե մատյանը, որ կարդում էր։

— Բարին մեզանից է, չարը՝ չգիտեմ,— ասաց Արշարունյաց նախարարը ծիծաղելով։

Ներշապուհն աչքերը տրորեց և մատյանը մի կողմ թողեց։ Ըստ երևույթին նա շատ էր ձանձրանում և կարդում էր ոչ ընթերցելու համար, այլ կարճելու գիշերը։

Նա հասկացավ, որ նախարարները գործով են եկել։ Սպասեց, որ խոսեն։

Սկսեց Արշարունյաց նախարարը։

— Տե՛ր Արծրունյաց, մենք խոսեցինք իրար մեջ և տարակուսանքի ենք մատնված։ Ո՞վ պիտի առաջնորդի մեզ այս աղետավոր գործի մեջ։ Մեր մեծագույն տանուտերերը՝ Սյունյաց նախարարն է և դու։ Առաջնորդեցեք՝ կամ նա՛, կամ դո՛ւ։

Ներշապուհը չէր սպասում այսպիսի վճռական խոսք. նա աչքերը խոժոռեց և մտածել սկսեց։

— Նախարարները տարակուսանքի մեջ են, թե ո՞վ պիտի վերցնի այս բեռը, մե՞նք, թե հոգևոր դասը,— շարունակեց Արշավիրը։

— Մենք և հոգևոր դասը,— պատասխանեց Ներշապուհը ընթափված,— ուրացության պահանջը դրված է համայն ազգի առջև։

— Դե առավել և՛ս մեզ առաջնորդ է պետք։

— Մենք զուր ենք սպասում։ Մարզպանը ոչինչ չի անի, Հազկերտը չի վիջի, հոգևոր դասը անձնատուր չի լինի։

— Գուցե ուրիշ ելք գտնվի,— ասաց Վանանդյա Առավանը ոչ խելացի ժպիտը դեմքին և նայեց Մաղխազ Վրիվին և Պալունյաց Վարազշապուհին։

— Ուրիշ ելքը գուցե որոնի և մարզպանը, բայց ես ոչ մի ուրիշ ելք չգիտեմ,— խոսեց Ներշապուհը։

— Լավ,— ասաց Արշավիր Արշարունի նախարարը,— հիմա մեզ պետք է, որ նախարարական տներից մեկը ղեկավարի մեզ։

— Ես չեմ կարող։ Իմ բնավորությունը հարմար չէ։ Տվե՛ք ղեկը Սպարապետին։ Նա ռազմագետ է և գիտակ մարդ։

Նախարարները լռեցին։ Ներշապուհը ձեռը դրեց սրտին։

— Մե՛կ մարդ ունենք, որ այս գործը գլուխ պիտի հանի. դա Սպարապետն է։ Տյա՛ր, ես մեծ խելքի տեր չեմ. բայց իմ փոքրիկ խելքով այդ եմ վճռում. տվե՛ք ղեկը Սպարապետին։

— Իսկ մարզպա՞նը...— բանսարկու կերպով հարցրեց Վարազշապուհը։

— Ի՞նչ մարզպանը,— խեթեց Ներշապուհը։

— Չի՞ կարող մարզպանը ղեկավարել։

— Հարցրեք իրե՛ն. ես չգիտեմ,— խուսափեց Ներշապուհը։

— Չե՞ս վստահում նրան,— համառեց Վարազշապուհը։

— Ես չգիտեմ,— բարկացավ Ներշապուհը,— իսկ ում չեմ ճանաչում՝ չեմ կամենում ո՛չ վստահել և ո՛չ էլ կասկածել։

— Իսկ Սպարապետին ճանաչո՞ւմ ես,— ավելի համառեց Վարազշապուհը։

Նախարարները վիրավորվեցին։

— Տե՛ր Պալունյաց...— հանդիմանական շեշտով դարձավ նրան Արշավիր Արշարունին։

— Ես հարց եմ տալիս՝ պատասխանեցե՛ք իմ հարցին,— բորբոքվեց Վարազշապուհը,— ինչո՞վ է արժանի մեր վստահության Սպարապետը,— ե՞րբ այսպիսի աղետ պատահեց, ե՞րբ դիմադիր կանգնեց նա։

— Դու խելացի խոսք ես ասում, տեր Պալունյաց,— ասաց Ներշապուհը մի հանդարտ համբեր եղանակով, որ նրա տաքարյուն բնավորությունից չէր,— մարդը փորձվում է գործի մեջ։ Այսպիսի գործում չեն փորձվել ո՛չ Սպարապետը և ո՛չ էլ մարզպանը։ Բայց մարդկային է... հոգին մարդուն վկայում է մի բան։ Հարց ես տալիս քեզ՝ ինչո՞ւ, որտեղի՞ց այդ հավատը... եկ իմացիր։ Ես ընտրում եմ Սպարապետին, և խիղճս հանգիստ է։ Ընտրեցեք դո՛ւք ում կկամենաք։

— Ո՞չ, Սպարապե՞տն է, պա՞րզ է,— ասաց մտորմունքով Արշավիր Արշարունին,— մանավանդ որ՝ դու չես կամենում հանձնառնել։

— Ես մի հասարակ մարտիկ եմ, տյա՛ր,— իմս մարտն է. ես գլուխ չունեմ բանակցությունների։

Տիրեց լռություն, որի մեջ զգացվում էր մի ինչ-որ թեթևություն։ Միայն Վարազշապուհն էր, որ մռայլվեց ավելի։ Նա աչքի տակով նայեց իշխաններին և զգաց, որ ավելի խոսելը վտանգավոր էր։ Նա չէր համակրում Վարդանին։ Նրա թեկնածուն Վասակն էլ չէր սակայն։

— Չեք սխալվի,— վճռական շեշտեց Ներշապուհը՝ շարունակելով իր մտքերը բարձրաձայն։

— Թեթևացա, տեր իմ,— հառաչեց Արշավիր Արշարունին,— խոստովանանք լինի՝ տարակուսանքներից վհատություն էր գալիս

վրաս։ Ոչ մի արհավիրք սարսափելի չէ, երբ կռվում ես։ Իսկ եթե տեր էլ ունես գլխիդ... Օրհնվի ծնունդդ, տեր իմ, ուրախացրիր ինձ։

Արշավիր Արշարունին կենդանացավ, շարժվեց։ Նա զգալով նեցուկ՝ սկսեց վստահ նայել այն արհավիրքի վրա, որ չունենալով իր նախընթացը՝ շփոթեցրել էր իշխաններին։

— Գնա՛նք, տյարք,— դարձավ նա մյուսներին։

Ներշապուհը, որ շարունակ անցուդարձ էր անում սենյակի մեջ՝ կանգ առավ և շեշտելով իր յուրաքանչյուր խոսքը՝ ասաց.

— Այդպես, տյարք. ես իմ մեղավոր հոգով ահա ձեր առջև դնում եմ այս վճիռը. սխալ եմ՝ թող աստված տեսնի իմ դատը — ուղիղ եմ՝ նա լինի ողորմած, ղեկը տվեք Սպարապետին։ Եվ աստված մեզ օգնական։

— Աստված մեզ օգնական,— կրկնեցին նախարարները ներշընչված։

Եվ դուրս ելան սենյակից։

***

Քաղաքի պարսպի տակ ներսի կողմից մի այգի էր ձգված։ Բարձր հողե պատը բավական ծածկում էր նրա բարդիների բները և ցածրահասակ ծառերը։ Նեղլիկ մի փայտե դուռ, մշտափակ ու խուլ՝ պահում էր հետաքրքրվող աչքերից այդ այգու նեթքին կյանքը։ Կապույտ ծուխը, որ բարձրանում էր այգու խորքից՝ նշան էր, որ այնտեղ տուն կա, բնակիչներ են ապրում։

Այգու դռան հետև մանր քրքիջ լսվեց, որին միացավ մի ուրիշ ձայն։ Երկուսն էլ աղջիկների կրծքից էր։ Դռան ճեղքից դուրս նայեց մի ածուխի սև աչք։ Մնաց մի պահ և ապա կրկին քրքիջ լսվեց։

— Ո՞ւր է, ո՞ւր է,— հարցրեց մյուս ձայնը։

— Տես, Լուսերեսենց տան մոտ։

— Վա՜յ, Դժխո՛, Արծվի՞ն է։

— Հայրիկը գինով է,— ծիծաղեց առաջինը։

Նեղլիկ փողոցով, ուր հավերն էին և ճնճղուկները հանդես բաց տրել, օրորվելով և Արծվիի թևն ընկած դեպի այգին էր գնում մի սեամորուս, արծվադեմ գեղեցիկ մարդ։ Նա բավականին հաստակա-

վոր էր և զգեստին ու ձեռներին նայելով ցած արհեստների մարդ էր։ Նա մի փոքր գլորվում էր, բայց Արծվին ուժեղ բազկով չափավորում էր նրա շարժումները և առաջ մղում։ Նա կանգնեց, շրջվեց գնպի Արծվին։

— Չէ, դու իմացիր, Արծվի, մե՞ծ օր է այսօր,— ցուցամատը ցցեց օդի մեջ։

— Մեծ օր է,— համաձայնեց Արծվին՝ շտկելով նրան դեպի այգին և մղելով առաջ։

— Չէ՞, մե՞ծ օր է,— համառեց գինովը և կրկին կանգնեց՝ Արծվիին շրջելով իր գեղեցիկ դեմքը։

— Գնանք, հայրիկ,— ժպտալով կրկին շտկեց նրան Արծվին։

Բայց գինովը մեխվել էր և չէր ուզում տեղից շարժվել։

— Արշակ թագավորի օրերն են,— գոչեց գինովը,— մե՞ծ օր է այս օրը։ Չի՞ մեռել ժողովուրդը... ժողովուրդը կա՞... մե՞ծ օր է։

Արծվին այս անգամ ավելի ուժեղ մղեց գինովին։ Սա, որ համառում էր՝ հիմա սկսեց արագ-արագ շտապել այգու կողմը՝ ինքը քարշ տալով Արծվիին։ Երբ մոտեցան այգու դռան՝ դուռը հանկարծ բացվեց, և նրանց առջև նկարվեցին երկու չքնաղ դեմքեր։ Դրանք գեռատի աղջիկներ էին, ըստ երևույթին քույրեր, որոնցից մեկը սուր դաշույն հոնքերի տակին ժպտացող աչքերով նայեց նախ՝ Արծվիին և ապա՝ գինովին, և ընդառաջ գնալով՝ թևը գցեց սրա թևին։

— Հայրիկ, տխուր ես,— ասաց նա, ծռվելով և նայելով գինովի աչքերի մեջ։

— Մե՞ծ օր է այսօր,— գոչեց գինովը և օրորվելով՝ իրեն գցեց դռան մեջ, դիպավ երկու պատերին, մի ահագին կոշտ հող պոկեց և ընկավ ներս, այգին։

Այգու խորքից, ուր մի քանի աչքանոց տնակ կար՝ դուրս եկավ կարճահասակ, լիք և ոսկեգույն մազերով մի կին։ Նա նայեց մոտեցողներին և իսկույն ծիծաղեց։ Ապա զվարճանալով առաջ եկավ դեպի գինովը։

— Հա՞, գործդ լավ շինվել է,— մոտենալով ընդհուպ գինովին և աչքերի մեջ նայելով՝ ծիծաղեց կինը։

— Աշխս լավ է, զո՞րի բան է,— ձեռը թափ տալով կնոջ վրա գոչեց գինովն ու կանգնեց։— Արծվիին հյուր եմ բերել. մեծ կարաք բա՛ց։

— Տասը կարաս կբանամ,— ասաց կինը,— մենակ դու ուրախություն ցույց տուր։

Գինովին քաշեցին դեպի տնակը։

— Նժույգները բերել է արքունական ախոռ, չի թողնում ծառաներս մոտ գնան։ Ինքն է սրբում, նայում, վա՜յ, վա՜յ, վա՜յ,— մատը թափ տվեց Արծվիի վրա գինովը։— Մա՜րդ, երեսուն տարվա ախոռապետ եմ՝ նժո՞ւյգ չեմ տեսել։ Սպարապետի նժույգներն ո՞վ է խնամել. որտե՞ղ էիր։

Արծվին ծիծաղկոտ դիտում էր հասակավոր ախոռապետին և չէր խոսում։ Նրան զվարճացնում էր գինովը։

— Վարա՛ժ եղբայր, նստի՛ր, հանգստացի՛ր,— ասաց նա ախոռապետին։

— Նստե՞մ։ Ես նստում եմ մենակ ու մենակ նժույգի վրա։ Ուրիշ տեղ չեմ նստում։

— Կերակուրն է՞լ նժույգի վրա ես ուտում, այ մարդ,— զվարճանալով հարցրեց ախոռապետի կինը։

— Նժույգի վրա պիտի գնամ թաղվելու։

Աղջիկները ծիծաղեցին և ուրախ նայեցին Արծվիին, որի գալը նրանց աշխուժացրել էր։

— Հիմի հացը որտե՞ղ գցենք, նե՞բսը, թե նժույգի վրա,— կատակով հարցրեց ախոռապետի կինը։

— Բերեք ախոռից բոլոր նժույգները՝ նրանց վրա գցեք,— ասաց Վարաժը և գնաց նստեց դռան կողքին ամրացրած սանդին։

Վարաժի կինը և նրա երկու աղջիկներն ըստ երևույթին սովոր էին նման բաների։ Թթենու տակ իսկույն օթոցներ գցեցին և սրբոցը փռեցին վրաները, բերին բարձեր։ Վարաժն ու Արծվին նստեցին։

— Մագթա՛ղ,— գոչեց Վարաժը ձեռքը խփելով բարձին։

— Ասա, մարդս,— աչքով արեց Արծվիին Վարաժի կինը։

— Գինի՞ն է լավ, թե՞ նժույգը։

— Երկուսն էլ։

— Հա՜, իմացա՜ իմ կնիկն ես։ Դե՛, գինին հանի՛ր։ Նժույգներն էլ պատրաստ են ախոռում։

Վարաժը դարձավ Արծվիին և բռունցքով հարվածեց նրա կրծքին։

— Նժույգը չի՞ վստահում ինձ. ինքն է մտիկ տալիս։ Էհե՞, ես նժույգի վրա եմ ծնվել. դու ո՞ւմ չես տալիս նժույգը։

Հետո դարձավ իր աղջիկներից կրտսերին.

— Դժխո՞, գուսաններին կանչիր։ Հեթանոս-քրիստոնիոսներին է՛լ։

Դժխոն զվարթացավ.

— Կանչե՛մ, հիմա՛, հիմա՛։

Եվ արագացրեց սեղանի սարքումը։ Պիրկ օձագալար մարմինը շլացուցիչ ձևեր էր ընդունում նրա ամեն մի շարժումից։ Կրակի պես բոցկլտում էր նա, ծիծաղում, ժպտում, վազում, գնում գալիս։ Նրա սևագիշեր աչքերի մեջ պսպղում էր այն շողը, որ հատուկ է միայն երիտասարդ հոգիներին։ Նրա ամեն մի վայրկյանը նոր ու անկրկնելի պատկեր էր կայտառ կյանքի, ուրախության և գեղեցկության։ Խիտ ու գալարուն խոպոպները ցնցվում էին նրա գլխին, սլացիկ ուսերին և ճկուն մեջքին։

— Լո՛ւյս, հի՛ն գավերը բեր,— կարգադրեց Վարաժը մյուս աղջկան, որը մորն էր քաշել իր ոսկեգույն մազերով ու լիքը, մի փոքր կարճահասակ մարմնով։ Նա ավելի արագաշարժ, քան կարելի էր կարծել նրա գեր մարմնից՝ ծիծաղելով ու հաճախ դիպչելով քրոջը՝ օգնում էր սեղանը գցելուն։

Մի փոքր հեռու, ծառերի արանքում Մագթաղը խարույկ վառեց։ Չոր արքաղները կչկրտացին, և զվարթ կրակն սկսեց պարել պայծառ օդի մեջ։

Որտեղից որ էր՝ հայտնվեց մի սաստիկ գեր մարդ, որի աչքերը դուրս էին ընկած, կարծես խեղդվելիս լիներ։ Նա մշմշալով եկավ ընկերացավ Մագթաղին և կռանալով կրակի վրա՝ սկսեց փչել, արծարծել։ Հետո թևքերը քշտեց և պահծու միսն սկսեց անցկացնել փայտե շամփուրները։

— Վայ գետի՞նը չմտնես, Մարտիրո՞ս, գետի՞նը,— կանչեց նրա կողմը Վարաժը,— ինչո՞ւ ուշացար։

— Ծուխը նոր տեսա,— սաստիկ բամբ ձայնով պատասխանեց Մարտիրոսը և խիստ կենտրոնացած և անհասկանալի մրթմրթոցով, որ նման էր խանգարված փուքսի պոռթկումների՝ սկսեց շարած խորովածները գարձմրցել ձեռքի վրա՝ սպասելով կրակի իջնելուն։

— Մի ժամ էլ որ անցներ՝ միսը կթուլկանար,— հագիվ հասկանալի մրթմրթաց նա Մագթաղին, գիտակի եղանակով։— Աստված չանի՝ գուսաններն ուշանան։

— Ինչո՞ւ, ի՞նչ կա որ,— հարցրեց Մագթաղը։

— Առաջի խավը որ թշշաց՝ պետք է ձեռաց հինգ տարվա գինի կցել սրան։ Մեկ համրանք ուշացար՝ էլ չկա՞ համը, կորա՞վ... Բե՛ր Արաքսի վարազը։

Եվ սկսեց ինչ-որ մասնագիտական խոհեր մրթմրթալ ինքն իրեն։

Մագթաղը զամբյուղից հանեց որսած վարազի միսը և տվեց Մարտիրոսին։ Սա վերցրեց, հոտոտեց միսը և դեն դրեց թթված.

— Մեծամոր է, Արաքս չէ։ Արա՛քսը բեր։ Դե՛սը զամբյուղը։

Մագթաղը մոտեցրեց երկրորդ զամբյուղը։ Մարտիրոսը տնտղեց միսը և մրթմրթաց.

— Արաքս է, մենակ՝ խորվիրապ։ Երկաթ շամփուր է պետք սրան։

Մեծ ինքնաբավականությամբ տոռոզ մատներով մսերը շարեց երկաթ շամփուրին ու հենեց ծառի բնին։

— Մի ծուխ դիպչի թող։

Մագթաղն օգնում էր Մարտիրոսին, որպես վարպետի, որ հրաշագործում է։ Նա իրենց հարևանն էր, որ միշտ այսպիսի դեպքերում ինքնակոչ գալիս էր և սկսում բոնակալի պես կարգադրել ճաշը կամ ընթրիքը։

— Որտե՞ղ էիր այսօր,— հարցրեց նրան Մագթաղը, քթի տակ ժպտալով։

— Տանը քնած էի,— խուլոտ պատասխանեց Մարտիրոսը։

— Ինչո՛ւ, գիշերը չե՞ս քնել։

— Գիշերն էլ եմ քնել։

— Դեպքերն իմացա՞ր։

— Չէ, ի՞նչ դեպքեր։

Մագթաղը պատմեց։ Մարտիրոսը լսում էր նրան, բայց ուշքը շամփուրների վրա էր և մեծ լարվածությամբ սպասում էր կրակի շեղջելուն, որի ինչ-որ աստիճանի մոտենալը նրան մեծ անհանգստություն էր պատճառում։

— Ապա՞,— վերջացրեց Մագթաղը,— մեզ հավատից հանում են։

— Հավատից որ հանում են, լավ չէ,— մրթմրթաց Մարտիրոսը անտարբեր։— Արաքսը բեր։

— Քրիստոսի հավատը ո՞նց թողնեն։

— Ի՞նչ է, չե՞ն կարողանում,— ցրված խոսեց Մարտիրոսը և թևքերով սրբեց կրակի ջերմությունից և լույսից շողշողացող դեմքի ու հաստ վզի ճարպը։

— Վա՛յ, մեղա, ինչպե՞ս կլինի,— վախեցավ Մագթաղը,— տերտերն ասում էր...— և գնաց դեպի մսերի զամբյուղը։

Այդ պահին Մարտիրոսը ճարպակալած աչքերը շռեց կրակի շեղջի վրա և սարսափահար անհանգստացավ.

— Շո՛ւտ արա...

Մագթաղը «Մեծամորը» դրեց Մարտիրոսի առջև.

— Տերտերն ասում էր...

— Բե՛ր,— բղավեց Մարտիրոսը։

— Ի՞նչը բերեմ, ա՛յ մարդ։

— «Արաքսը» բեր, ասինք, անգլուխ կնիկ, քո տերտերն էլ...— զայրացավ Մարտիրոսը՝ փորի ճնշումից շունչը կտրած և զայրույթից արյունը գլուխը տված։

Մագթաղը տվեց «Արաքսը»։ Մարտիրոսը մեծ լարվածությամբ շամփուրները բռնեց կրակի շեղջի վրա ու սկսեց մշմշալ։ Քրտինքը նրա կաս-կարմիր դեմքից և շլնքի կնճիռներով մանյակված վզից սկսեց հոսել կրակի վրա։ Բայց Մարտիրոսը մոլեգնած խորովում էր։

Իսկ այդ ժամանակ Վարաժն ու Արծվին սեղան նստած սպասում էին։ Պատերից ձայներ լսվեցին։ Երիտասարդներ, որ գիտենալով Վարաժի սովորությունները, եկել հավաքվել՝ սպասում էին որոշ պահի, երբ Վարաժը բոլորին կհրավիրեր ներս։ Դա էլ իր հատուկ պահն ուներ։

— Գուսաններն ի՞նչ եղան,— հարցրեց Վարաժը Դժխոյին։

— Եկել են, մառանն են,— ասաց Դժխոն շարաճճի նայելով հորը։

— Թրջվո՞ւմ են։

Դժոխն քրքջաց։

— Թող թրջվեն,— ծիծաղեց Վարաժը.— գինի՛ն պիտի երգի, ո՛չ իրենք։

Նստեցին սեղան։ Մառանից դուրս եկան գուսանները իրենց երաժշտական գործիքներով։ Նրանք երեք հոգի էին, որոնցից մեկը՝ վարպետը, կարճահասակ, պինդ, ինչպես կաղնու կոճղ։ Կաս-կարմիր դեմքին հրացայտ ու խոշոր սև աչքունքի հենց տակից, այտերը ծածկելով ներքև էր վիժում և գոգնոցի պես ծածկում փորը սև սաթի պես փայլող երկար մորուքը։ Նրա կարճ, ուժեղ վիզը ծալքեր էր տալիս ծոծրակի վրա։ Նա հագել էր բրդե պարզ պարեգոտ, մեջքը պնդացրել պարանով. իսկ թավամազ կուրծքը բաց էր ու դուրս ցցված՝ խրոխտ աքաղաղի կրծքի նման։

Երկրորդը նրա պես հագնված, չոր ու ցամաք երիտասարդ էր, բարձրահասակ ու գեղեցիկ։ Իսկ երրորդը նեգր հիշեցնող սև երիտասարդ էր։

— Ա՜յ բարով եկաք, ուրախ ժամու եկաք,— գոչեց Վարաժը զվարթաձայն,— լավ հասցրիր, Գոռ Սիմավոն։

— Ամեն ժամն էլ ուրախ է,— ասաց վարպետը՝ Գոռնակ Սիմավոնը, նստելով սեղան և նշան արեց ընկերներին։

Նրանք ևս նստեցին՝ բերանները թևքերով սրբելով։ Գինին մի փոքր պղտորել էր նրանց աչքերը։

Այգու պատերի մի ինչ-որ արանքից նոր մարդիկ թափանցեցին ներս։ Ըստ երևույթին դրանք՝ Վարաժի հարևանները, նրա խնջույքների սպասված հյուրերն էին լինում միշտ։ Նրանք ներս եկան և հարգևոր հերթով շարվեցին սեղանի շուրջը։

— Արև կենդանությո՜ւն,— նոր բարևեցին նրանք։

— Արև պահպանությո՜ւն,— ասաց Վարաժը։

Պատերի վրա տղաները աղմկում էին արդեն։

Վարաժը դարձավ նրանց.

— Խենթուկնե՞ր, նե՛րս անցեք։

Տղաները ձեռաց թռան պատից ներս և եկան շրջապատեցին սեղանը։ Մագթաղը ծիծաղելով և նրանցից ոմանց գլխներին բամփելով նոր սփռոց ավելացրեց։

Սկսվեց կերուխումը։ Վարաժը հրամայեց բոլորին լցնել գավաթները։

— Վերցրե՛ք։ Երկյուղածությա՛մբ։ Սպարապետի արևաշատությա՛ն։

— Արևը երկա՜ր,— բարձրաձայն բարեմաղթեցին մեծահասակները, և բարձր գոչեցին երիտասարդներն ու խմեցին։

— Մարտիրո՛ս, հասցրո՛ւ, ժամը թռա՜վ, մա՛րդ աստծո,— կանչեց Վարաժը։ Բայց Մարտիրոսը դեռ չէր ավարտել իր ծեսերի շարանը։

Նա զայրացավ և խռպոտ մրթմրթաց։

Մագթաղը, Դժխոն և Լույսը վազեցին նրա մոտ։ Շտապեցրին.

— Բե՛ր, Մարտիրո՛ս։

Մարտիրոսը խեթ նայեց աղջիկներին, զայրացավ ու անհանգիստ շարժումներով սկսեց ինչ-որ լփռտել։ Նա սաստիկ վիրավորվեց, որ իր անքակտելի կարգերի վրա ձեռ բարձրացրին։ Շրջեց խորոված ները, շար նայեց աղջիկներին, որ փոթկացրին, և ապա միայն մեծ տրտունջով շամփուրները վերցրեց ու տռուզ մատներով օդի մեջ շոշափեց, տվեց որ տանեն։

— Փորձանքը, որ գա՝ հանկարծ կգա,— մրթմրթաց Մարտիրոսը բարկացած և շամփուրներին նոր մսեր շարեց։

Գուսանները հանեցին նվագարանները մետաքսե տոպրակներից։

Վարպետ Գոռնակ Սիմավոնը մատներով փորձեց իր բամբիռը, ուղղեց լարերը և ապա նշան անելով իր ընկերներին՝ սկսեց։ Նրանք իրենց գործիքներով սկսեցին ուղեկցել նրան։ Խուլ և բամբ հնչյուններ էին արձակում գործիքները, ինչ-որ մռլտոցներ, ռազմական շեշտեր, որ ավելի կռիվ էին հրավիրում, քան մեղկացնում։ Դրանք հզոր «թիվ» նվագներն էին առնական, հրամայական և ուրախ։

Վարաժի տրամադրությունը ավելի բարձրացավ։

— Այ հասցրե՛ք, տվե՛ք գլխին,— գոչեց նա,— ի մա՜րտ...

Վարաժը ոգևորվեց, վեր կացավ։

— Ապա՛, պար։

Գուսանները նվագեցին մի ռազմական պար։ Տղաները կրակված վեր թռան և ուս-ուսի տված սկսեցին մեկը այն ռազմական պարերից, որ վերջանում է սրամարտով։ Նրանք խումբ-խումբ գընում գալիս էին իրար դեմ և բռունցքները զարկելով իրար՝ մի ակնթարթում ետ էին շրջվում և զարկում մյուս խմբին։ Պարին խառնվեցին Վարաժի աղջիկները, որ խրձերով սրեր բաժանեցին տղաներին։ Հարևան տներից հավաքվեցին ուրիշ աղջիկներ և խառնվելով պարին՝ սկսեցին մի այնպիսի փոթորիկ, որից գետինը տնքալ սկսեց։

— Զարկե՛ք,— գոռում էր Վարաժը և ինքը օրինակ տալիս։ Աղջիկները օձերի պես գալարվում էին տղաների շղթաների միջով և կախարդում պարը։

Մութն ընկել էր արդեն։ Ընթրիքը շարունակվեց մարխերի լուսավորությամբ, որ այստեղ այնտեղ տնկեցին Դժխոն ու Լույսը։ Տեսարանը դյութիչ էր։

Դժխոն ու Լույսը խառնված մյուս աղջիկների փնջերին՝ մրրկում էին տղաների շարքերի արանքում, խլելով նրանց հրացայտ հայացքները։ Բայց այդ խելահեղ մրրկի մեջ աղջիկները կարողանում էին որսալ մի գաղտնիք։ Դա Դժխոյի արագաթռիչք հայացքներն էին, որ նա նետում էր Արծվիի վրա, մինչ սա ուրախ ժպիտը շրթունքներին դիտում էր աղջիկների ու տղաների մրցումը՝ իրար ետ տալու և ավելի աշխուժացնելու պարը։ Դժխոն, որին ըստ երևույթին նոր չէր գրավել Արծվին՝ ուղղակի նետահարում էր միամիտ թիկնապահին։ Լույսը, որ գիտեր այդ գաղտնիքը, թռավ Արծվիի մոտ և ականջին հարցրեց.

— Բերե՞լ ես խավարածիլը։

Արծվին գլխով դրական նշան արեց։

Լույսն անմիջապես մտնելով պար՝ մոտեցավ Դժխոյին։ Որսալով հարմար վայրկյան՝ նրա ականջին կանչեց.

— Բերել է...

Դժխոն իսկույն դուրս եկավ պարից և արագ հեռացավ դեպի հնձանը։ Նա ինչ-որ խորհրդավոր երկյուղ զգաց քրոջ այդ հաղորդումից, ալեկոծ կուրծքը բռնեց և կռացավ քարի վրա։ Հանկարծ արցունքները, քաղցր արցունքները հորդեցին նրա շողշողուն աչքերից։

Լույսը, որ նկատել էր նրա հեռանալը, մի փոքր հետո մի վառված մարխ վերցրեց, գնաց նրա մոտ և տեսնելով նրա արտասվելը՝ մեղմ բռնեց ուսը և կռանալով՝ նրա ականջին ասաց.

— Մի քիչ էլ համբերի, հենց որ գինովնա՝ կգողանամ նրա սերը։ Ծոցումն է խավարածիլը։

Դժխոն ավելի լցվեց և սկսեց հեկեկալ։ Քույրը նստեց կողքին, բռնեց նրա խոպոպավոր գլուխը և սեղմեց իր բաբախող, լիքը կրծքին։

— Նա սեր չունի, սիրա տեր չէ,— հեկեկաց Դժխոն։

— Կունենա, կունենա,— հանգստացրեց Լույսը,— Մարիամ պառավուկն ասաց՝ կրակին մի աքաղաղ զոհեցեք՝ սիրո տեր կլինի։

Դժխոն տխուր, բայց հուսալի նայեց քրոջը։

— Քեզ բան եմ ասում։ Այ, խավարածիլն էլ կգողանամ ծոցից, կդնես բարձի տակ՝ սերը կվառի սրտի մեջ։

Մինչ այստեղ, հնձանում, երկու քույրերը խոսում էին Արծվիի սերը գողանալու մասին՝ սեղանի շուրջը պարը հանդարտվել էր, և սնդանակիցները շարվել լսում էին Վարաժին։

Գարնանային ցուրտ գիշերն արդեն զգալ էր տալիս իր շորշոփը՝ թեև գինով բազմականները բավական տաք էին։

— Մառանը սարքեցեք,— կարգադրեց Վարաժը,— սրտալի բաները մառանում են։

Դժոխն ու Լույսը, որ արդեն դուրս էին եկել և հիմա կրկին ուրախ լսում էին գուսաններին՝ վերցրին մարխը և վազեցին մառանը։ Ահագին կարասները կողք-կողքի՝ կարծես ծանր տնքում էին գինով լի։ Տղաները գնացին այնտեղ։ Արծվին բռնեց Վարաժի թևից և բարձրացրեց, որ տանի ներս։ Վարաժը հակառակեց և քաշեց Արծվիին դեպի ծառերի տակը։ Նա օրորվելով և ցուցամատը մխրճելով գեղեցիկ այրվող մի մարխի կրակի մեջ, շրթունքները կպցնելով՝ սկսեց երեսը խաչակնքել։

— Սա ի՞նչ է անում,— մոտ վազելով սկսեց ծիծաղել Մագթաղը։

— Աստված է, էլի աստված է, լավ աստված է,— լփռտեց Վարաժն ու շոքեց կրակի առաջ։

— Կրա՞կ ես պաշտում, մա՛րդ աստծո,— հարցրեց Մագթաղը մի փոքր շփոթվելով, բայց և ծիծաղելով։

— Հա, տե՛ս, ի՞նչ սիրուն է, մի աղջիկ արժի...

— Սրա գլխում խելք կա՞,— դիմեց Մագթաղը Արծվիին և Մարտիրոսին, հարձակվելով կրակի վրա՝ ոտքով հանգցնելու։

— Է՛, է՛, է՛, է՛, է՛,— բռնեց Մագթաղին Մարտիրոսը,— կրակը մի սպանի։

Ու դուրս ընկած աչքերով խնթեց Մագթաղին։

Մագթաղը բարկացած հարձակվեց Վարաժի վրա.

— Տերտերը որ տեսներ...

— Առավոտը քո տերտերի մորուքը քաղեմ, իրիկվան՝ քուրմի,— մռմռաց Վարաժը գլորվելով կրակի վրա։

— Վառվեցիր, ի՞նչ է անում,— բռնելով Վարաժի թևքերից՝ բարձրացրեց Մագթաղը,— գնա՛նք, գնա՛նք, փորձա՛նք մարդ,— ոռ քարշ տվեց, տարավ մառանը։

— Հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛,— լխլխկալով լիքը տկի պես բամբաձայն ծիծաղեց Մարտիրոսը։

Դժխոյին զվարճացրեց այս տեսարանը։ Նա լցրեց Մարտիրոսի գավը գինով.

— Եղբայր Մարտիրոս, հեթանոսի՞ հավատն է լավ, թե՞ քրիստոսի,— հարցրեց նա, չարաճճի աչքերը հառելով Մարտիրոսին։

— Հեթանոսի-քրիստոսի՝ գլուխս չի մտնում,— ասաց Մարտիրոսը և նոր խարույկ սարքեց։

Բոցը բարձրացավ, մի լեզու երկարեց դեպի Մարտիրոսի մորուքը։

— Դենը,— ճարպոտ, լայնշի թաթով հանգիստ քշեց նրան Մարտիրոսը։

Կրակը թեժանում էր։ Դա ուրախացրեց Մարտիրոսին։ Նա ըսկըսեց գլուխը տմբտմբացնել և բամբ ձայնով նղղալ։

«Վարդենի՜՜՜, զարդենի՜՜՜»...— Դժխո, մի ջուր բեր,— միջանկյալ ասաց և շարունակեց.

«Վարդենի՜՜՜, վարդենի՜՜՜»։

Դժխոն բերեց ջուրը, Մարտիրոսը դանդաղ վերցրեց գավաթը և շորս կողմ նայեց զվարթագին.

— Ախր ասո՞ւմ ես։ Այգի պիտի գաս առավոտվա առաջին շընչին, արևը չծագած, որ սիրտդ բացվի։ Մեկ էլ տեսար այն կողմից մի տեղ ծիտը ծտին ձայնեց, մի իմանաս ի՞նչ լուր տվեց, այս կողմից սոսին է հազար լեզու շարժում՝ իմանաս ի՞նչ է խոսում,— գավաթը մոտեցրեց շրթունքներին և այն է խմում էր՝ աչքերը մանրաժպիտ փայլեցրեց, մնաց։

— Ի՞նչ է, եղբայր Մարտիրոս,— հարցրեց Դժխոն։

— Ա՛յ, աղբյուր-եղբայրը... ի՞նչ մանրիկ է խոսում։ Ականջդի՛ր։ Ամենա՜կյանքի բանը։

Արծվիին զվարճացնում էին Մարտիրոսի այս տարօրինակ փիլիսոփայությունները։ Նա մշտաժպիտ աչքերով հետևում էր մասնագետ գիրուկին, որ թրջված մինչև ոսկորները, քրտինքի ճենճային կայլակները գլորելով կրծքին, ծոծրակին՝ շողշողում էր կրակի դեմ և առաջ տանում իր ծիսական խոհարարությունը։

Մարտիրոսի ճարպալի մարմինը չէր կարողանում լռելյայն վայելել մարմնական առողջությունն ու սրտի զեղումները։

— Ախր խորովածը իր ժամն ունի, դամն ունի, համն ունի... Փասյանը առավոտվա կրակի մարմանդն է սիրում։ Այ տես, աստղը ծիկ է անում սարի կատարից — բարի ժամն է։ Մսապատառներն էլ, որ շամփուրին են շարած, մեկ էլ տեսար՝ մեկը մեկի կողին՝ տի՛կ,— ու Մարտիրոսը ուսերը վեր ու վեր է անում պարի չափով,— բրդեց, սա էլ նրան՝ տի՛կ ու մեկը մյուսին։ Ժամն է։ Ականջդ մենակ միշտ խորովածին պիտի անես, պատառը բարակ խոսում է։ Ա՛յ, ակա՛նջ դիր մեկը մյուսին ասում է. «Սա է, սա է, սա է»։ Ասել է՝ սա է դամը, չկորցնես։ Այսպես դամով խորովվում է։ Ու՝ աստված հեռու պահի, թե պիտի այրվի՝ ՀԸ՛Ը՛Ը՛ԸՀ՝ ասում է։ Այսինքն թե՝ քաշի՛։ Ձեռաց պիտի քաշես ու ձեռաց հրամցնես։

Արծվին գինով աչքերը խփեց, մի անուշ նիրհ եկավ վրան կրակի ջերմությունի՞ց, թե՞ գինուց։ Նրան թվաց, թե ինքն ընկել է ծովը և լողալով գնում է։ Հանգիստ է ծովը, ալիքները շշնջում են. «Կամա՞ց։ Զգո՞ւյշ»։ «Չէ, քնած է»։ «Քնած չէ»։ «Դուռա»։ «Դե փախիր»։ Արծվին զգաց, որ կուրծքը հով մտավ։ Նա զարթնեց։ Զգեստի կապերը արձակել էին։ Նա կապեց և նայեց Մարտիրոսին։ Սա քնել էր պպզած ու խոմփացնում էր։

Արծվին չորս կողմ նայեց, նրան թվաց, որ Լույսը փախավ իր մոտից։ Այդին դատարկ էր։ Մառանի նեղլիկ պատուհանից աղոտ լույս էր ցայտել դուրս։ Ներսը մեղմ աղմուկ էր և քաղցր նվագ։ Հենց այն է, կամենում էր վեր կենալ և գնալ մառան՝ երա՞զ էր, թե՞ արթմնի՝ նկատեց դիմացը ծառի բնին հենված Դժխոյին, որ հետաքրքիր նայում էր իրեն։ Արծվին ձայն չհանեց. Դժխոն ևս չշարժվեց։ Նրա հայացքի մեջ երջանիկ մի շող կար, խառն անհանգիստ երկյուղի հետ։ Նա ձեռքը սեղմել էր կրծքին, և երևում էր, որ ափի մեջ սեղմում էր մի առարկա, սեղմում անհագ, ծարավի։ Եվ որքան սեղմում էր այդ առարկան, այնքան ավելի լցվում էր այն զգացումով, որ վերացնում, տանում է մարդուն քաղցր երգի պես. և այդպես կրծքին այդ առարկան սեղմած՝ նա ճիգ էր անում հաղթել Արծվիին, տիրել նրան, գողանալ նրա զգացմունքը։

Սակայն Արծվին իր մշտաժպիտ ու միամիտ աչքերն ուղղել էր Դժխոյին։ Արծվիի երջանիկ անգիտությունը և երիտասարդությունը տանջում և ավելի սիրելի էին դարձնում նրան։ Ձեռը տարավ ծո-

ցը և շոշափեց։ Խավարածիլը չկար... Մի՞թե թափել է մի տեղ։ Նայեց չորս կողմ։

Դժխոն չարաճճի ժպիտով դիտում էր նրա շփոթությունը։

— Ի՞նչ ես փնտրում,— հարցրեց մեղմ։

— Բան էի դրել ծոցս. Լույսն էր ուզել, որ բերեի տանից...— խոսեց ինքն իրեն Արծվին։

— Հիմի խավարածիլը ո՞ւմ մոտ որ է՝ սիրտդ նրան էլ տվիր,— ասաց Դժխոն և ծիծաղելով փախավ։

Արծվին չհասկանալով նայեց նրա հետևից և ապա վեր կացավ գնաց մառանը։

Խրախճանողները հիմնավորապես խմում էին և գինով հայացքները գուսաններին՝ լսում էին նրանց նվագն ու երգը.

«Շողայր սենյակն Վահագնի,
Ի գարն ոսկեշող Աստղկա»։

Լուսանում էր։ Գուսանները սկսեցին մի մեղմ եղանակ, որ լուսաբացի հետ էր կապված։ Վարաժը անհոգնելի և անդադար, սկսել էր իր նժույգների մասին խոսել։ Դա նշան էր, որ շուտով նա կանցնի մի այլ խենթության, որին սովոր էին երիտասարդները։ Դա ձիարշավն էր բաց դաշտում։ Առանց հարցնելու նա իր ախոռի բոլոր նժույգները հանում էր դաշտ և երիտասարդներին. նստեցնելով արշավել տալիս։

— Վարաժ քեռի, լուսանում է...— ասաց Տիգրանը, որին աչքով էին արել մյուսները։

— Ինչ, նժո՞ւյգ, նժույգ չկա, խենթուկ սատանաներ. դուք ի՞նչ նժույգ քշող եք։

— Հա՛, հա՛, Վարա՛ժ եղբայր, ժամանակն է,— աղաչեց Տիգրանը։

— Լուսացավ, Վարաժ քեռի,— վեր թռան ու շրջապատեցին Վարաժին երիտասարդները։

— Դե, քաշե՛ք նժույգները, մե՛ջն անիծած,— գոչեց Վարաժն ու ինքն էլ վեր թռավ ու դիմեց հարևաններին և երգիչներին,— վե՛ր կացեք։

Հին ձիավարի, նժույգների գործում խենթացած ախոռապետի կիրքը հանկարծ բռնկվեց։ Նա դողաց այդ կրքից և թևքերը քշտեց։

Սեղանակիցները, որ Վարաժի խելքի մարդիկ էին, վեր կացան և գոտիները պնդացրած դուրս եկան փողոց։

Արծվին ազատվելով Վարաժից՝ ծլկեց ուրիշ կողմ։

Երիտասարդները իսկույն կորան՝ պատերից թռչելով դուրս։ Հասնելով արքունական ախոռը՝ խուժեցին պահակի նկուղը։

— Նժույգները բա՛ց թողեք, Վարա՛ժը հրամայեց,— ասացին նրանք պահակին։

Պահակը, որ սովոր էր այդ խենթության, քնից նոր վեր կացած մարդու հորանջով ժպտաց, գնաց դեպի ախոռի դուռը և ծեծեց։ Դուռը բացվեց, և այնտեղից դուրս եկավ մի մռայլ ծերուկ։

— Հա, ի՞նչ է,— խեթեց երիտասարդներին ժանգոտ ձայնով։

— Վարաժ եղբայրը նժույգներն ուզում է, Մարկոս պապի,— ասաց Տիգրանը՝ չարաճճի նայելով ծերուկին։

— Նժույգ տամ, տանեք թաղեք մորուտներո՞ւմ,— մերժեց Մարկոսը։

— Վարաժ եղբա՛յրը կարգադրեց,— պնդեցին երիտասարդները։

— Նժույգ չկա,— համառեց Մարկոսը։

Երիտասարդները կանգնեցին տարակուսած։ Ի՞նչ անեն, ե՞տ գնան, թե մնան՝ պնդեն։

— Սպասեք ինքը գա,— ասաց Տիգրանը ծիծաղաշարժ լրջությամբ և նստեց քարին։

Մյուսները ևս նստեցին։

— Զուր եք սպասում,— ասաց Մարկոսը,— նժույգ չկա։

—Տիգրանը, կեղծ համակերպությամբ աչքով արեց ընկերներին, որ լռեն։

— Ախր ո՞վ է իմացել նժույգները տան խենթուկներին՝ թե ինչ է քշե՛ք,— փնթփնթաց Մարկոսը,— եղունգներովս եմ մեկ-մեկ նժույգները մաքրել, փայլեցրել, որ գցեք ցեխե՞ը։

Երիտասարդները լուռ իրար նայեցին՝ հազիվ զսպելով ծիծաղելը։

— Ապա «Փոթորիկին» մտիկ տվեք, ի՞նչ հրեղենն է. մարդ կթողնի մեջքի՞ն։ Նետի պես ծնկան արանքից դուրս կթռչի՝ կմնաք ցեխում տփկած։

— Շատ է կատաղի՞,— հարցրեց Տիգրանը, կեղծ երկյուղածությամբ ու նայելով Մարկոսին։

— Կայծա՛կ,— հրամայական շեշտեց Մարկոսը։

— Տեսել եմ կայծակ, վախենալու բան է։

— Հենց ի՛սկը կայծակ։

— Ես չե՞մ կարող նստել,— հարցրեց կեղծ համեստ Տիգրանը։

Մարկոսը սուր նայեց երիտասարդին։

— Վերջին անգամը Մեծ մորուտի վրայով դո՞ւ էիր թռցնողը։

— Սա՛ էր, սա՛ էր,— միաբերան վրա բերին տղաները։— Տիգրանն է, լավ ձիավար է։

— Հա՞... քեզ կտամ. դու սատանի ճուտ ես,— ասաց Մարկոսը,— իսկ ձեզ, ճանճ էլ չեմ տա, որ նստեք։

Տղաները ձայն չհանեցին, և լռությունը տիրեց նորից։ Իսկ Մարկոսը, որ ըստ երևույթին լռություն չէր սիրում՝ փնթփնթաց.

— Նժույգը մեծսրտանի է, նա էլ իր պատիվն ունի. նստել չիմացող մարդը անպատիվ է անում անասունին։ Մի լավ մեծամեծ պարսիկ ձիավար կար։ Մոտս եկավ նժույգ խնդրեց։ Ասացի «Վարա՛ժ, տա՞մ», Վարաժն աչքով արեց, տվի «Փոթորիկը»։ Նստեց, ու մենակ նստելը տեսանք. մին թռցրե՞ց, տարավ տվե՞ց քարեքար, մեծ կտորը ականջը թողեց։ Սատկեց։ Է՛, ես նրան սրանից հետո նժո՞ւյգ կտամ։

Տղաները պետք է փոթկային, բայց Տիգրանը խիստ նայեց նրանց և զսպեց։

— Է, ի՞նչ եք նստել,— հանկարծ զայրացավ Մարկոսը,— հիմի Վարաժը շուն կտրեց։ Ինչո՞ւ չեք քաշում նժույգները։

— Հրամա՞ն է,— ասաց Տիգրանը վեր թռչելով։

— Հա՛, հա՛, ի՞նչ եք տփկել, դե՛։

Տղաները ուրախ ցատկեցին և վազեցին ախոռը։ Ամեն մեկն ուներ իր նշան դրած նժույգը։ Ախոռում սկսվեց մի աշխույժ իրարանցում։ Նժույգները, որ հազիվ էին զսպվում, զգալով արշավը, կատաղեցին։

— Լակոտնե՛ր,— գոռալ սկսեց Մարկոսը նոր զայրույթով,— քարեքա՞ր կտաք, կփչացնե՞ք։ Ձեր եկած ճամփա՞ն անիծեմ, սատանա՞ կտրեցիք՝ եկաք։— Հետո հանկարծ հարձակվեց տղաներից մեկի վրա.— տե՛ս, տե՛ս ինչ է անում սատկածը։ Սա՞նձն է գցում։ Թո՛ղ, սա առավոտ վաղ չի սիրում սանձ։

Տղաները սակայն էլ ուշադրություն չէին դարձնում ինքնասածի ծերուկի վրա, գիտենալով նրա բարի սիրտը։

— Խե՜ղճ իմ անասուններ, խե՜ղճ իմ անասուններ,— արտասվելով ու ափսոսանքով նայեց նժույգներին Մարկոսը և վազելով տղաներից մեկի վրա՝ ճիպոտով հարվածեց մեջքին,— ծունկդ վե՛ր պահիր, ամաչում է անասունը։

Տղան հնազանդվեց։

Վերջապես բոլորը նստեցին։

— Դե գնացե՛ք, ձեզ տեսնեմ, ինձ խայտառակ չանեք, չընկնե՛ք։ Թե որ նժույգի վրա մի՞ հատ քերծված տեսա՝ կսպանեմ, արևս վկա։— Հետո հանկարծ ոգևորվեց, ծիծաղեց,— դե, ապա՞ քաջորդինե՛րս։ Կայծնե՞րդ կհանեմ, հա՞... Թռե՛ք։

Տղաները նեղլիկ փողոցներով սլացան դեպի քաղաքադուռը։

Պահակը փակում էր ախոռի դուռը։ Մարկոսը կանգնած դեռ նայում էր հեռացող տղաների հետևից։ Հետո փնթփնթաց, թուքը կուլ տվեց ու հանկարծ արագ թափով գնաց ախոռի մի այլ բաժին, մտավ ներս և դուրս բերելով մի ամեհի նժույգ՝ թռավ վրան ու քշելով տղաների հետևից՝ ինքն իր վրա գոռաց.

— Ճիճրակեցու կռիվը մոռացա՞ր, գլո՞ւխդ թաղեմ, կայծակի՞ն էիր տալիս։ Դե հիմի դիմացեք, որ գալիս եմ,— գոռաց տղաներին և նժույգը քշեց նրանց հետևից, խրվեց նրանց մեջ։

Քաղաքադռանը Լուսերեսը չէր ուզում դուռը բանալ։

— Ի՞նչ է, ինչո՞ւ դեմ առաք, քշե՛ք,— բարկացավ Մարկոսը,— ի՞նչ կա, Լուսերես։

— Կանուխ է, դուռը բանալու ժամը չէ։

— Կանո՞ւխս գիտեր։ Բա՛ց արա։ Վարա՛ժն է կարգադրել։

— Վարաժը չէ՝ իր պապն էլ որ գա՝ չեմ բանա։

— Իմ առաջ բաց կանես։

— Քո էլ ապուպապի համար չեմ բանա։

Մարկոսը զայրացավ.

— Բա՛ց արա, թե չէ՝ նժույգովս դուռը կկոտրեմ։

Ու նժույգը քշեց դռան վրա։ Նժույգը ծառացավ, սկսեց սմբակներով հարվածել դռանը։ Լուսերեսը, որ կանգնել էր դռան մոտ, քիչ մնաց ընկներ տակը։ Նա զայրացավ և սուրը քաշելով հարձակվեց Մարկոսի վրա։

— Նժույգի՞ն...— կատաղեց Մարկոսը,— նժույգին սուր ցույց տա՞ս։ Ոտնատա՛կ տվեք սրան,— գոչեց նա տղաներին և ինքը քշեց նժույգը Լուսերեսի վրա։

Պահակները նիզակներով դուրս լցվեցին։

Այդ ժամանակ փողոցի անկյունից երևացին Արտակն ու Ատոմը։ Նրանք դուրս էին եկել վաղ զբոսանքի և ինչ-որ այլ մտադրությամբ.

— Նախարարնե՞րը, նախարարնե՞րը,— զգուշացրին տղաները։

— Թող լինեն նախարարները,— մռնչաց Լուսերեսը,— սա իմ վրա նժո՞ւյգ քշի...

Արտակն արագացրեց քայլերը։

— Թողե՛ք, ե՛տ քաշվեցեք,— հրամայեց նա։

Կռվողները չլսեցին, այլ արյունն աչքները լցված իրար վրա էին հարձակվում հարմարը բերելու և հարվածելու։

Այդ ժամանակ Ատոմ Գնունին սլացիկ ու թափով խրվեց կռվողների մեջ և բռունցքով այնպես հարվածեց Լուսերեսին, որ սա փռվեց գետնին։

— Քաշվեցե՛ք,— հրամայեց նա հանդարտ ու հասարակ։

Կռվողները անսացին և ետ քաշվեցին։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Արտակը։

Մարկոսն առաջ եկավ.

— Նժույգները հանում էինք դաշտ՝ արգելեցին։

— Ինչո՞ւ էիք հանում։

— Առավոտվա հովին ազատություն ցույց տալու, Վարաժի հրամանով,— բացատրեց Մարկոսը վարպետի եզանակով։

— Շատ էլ լա՛վ եք անում,— ասաց Արտակը և հրամայեց, որ դուռը բաց անեն։

Լուսերեսը արյունած կզակը բռնելով՝ գլխով արեց պահակներին։

Դուռը բացվելն ու նժույգների դուրս թռչելը այնպես հաջորդեցին արագ, որ մի ակնթարթում հեծյալները կորան։ Արտակն ու Ատոմը դուրս ելան դռնից և գնացին դեպի Արաքսի կամուրջը։ Արաքսը կատաղել էր և դեղին աչքերն սպառնալիքով լի՝ նայում էր իր շուրջն ու սլանում։ Այրարատյան դաշտավայրը շնչում էր նոր գարուն տեսած մատաղ բուսականության բուրմունքով։ Արտակը շնչեց գարնան հովը, որ շշնջում էր, շոյում նրա դեմքը, և նայեց հեռու հորիզոնին։ Նորին երկնքի նրբին կապուտակության մեջ լողում էր մի լուսեղեն փոքրիկ ամպիկ։ Լողում էր ու գնում սուզվում

հեռո՞ւ, ծխանման լեռներից էլ այն կողմը։ Ո՞ւր էր գնում ամպիկը այդպես հեռու, հեռու։ Նա է՛լ է հեռո՞ւ, հեռո՞ւ, ծխի պես հորիզոնի անդունդներում սուզված լեռներում։

Ի՞նչ է անում նա, ի՞նչ է անցնում նրա մտքով այս պահիս, նա է՞լ է տրոփում, թրթռում, քաղցր այրվում թեժ կարոտից ու գորովանքից։ Արտակն աչքերը փակեց և հենվելով կամուրջի պատին՝ լսելիքը տվեց Արաքսի մոմոռցներին։ Գետն օրորում էր նրա սիրտը։ Եվ մի վայրկյան հանկարծ նրա փակ տեսողության առաջ լողաց քարաբլրին կանգնած մի սլացիկ, նվիրական, սիրելի կերպարանք։ Խոր ու գորովի աչքերը հառեց իրեն սիրո անհուն թախիծով և սուզվեց թավիշ մթության քնքուշ վարագույրի մեջ։ Արտակը հառաչեց և աչքերը բացեց։

Ատոմը նայում էր քաղաքի պարիսպներին և ցույց տալով պարսից զորանոցն ասաց.

— Ահա, տե՛ս, որքան մոտիկ է կամուրջին։

— Շա՛տ է մոտիկ,— ասաց Արտակը՝ սթափված երազից։

— Չէ՞... այս ծայրից կբռնեն կամուրջի գլուխը, կփակեն մեր դիմադրության ուղին, և թշնամու եկած զորքն անարգել կանցնի կամուրջը։

Ատոմը մտածեց։

— Կայրենք զորանոցը,— ասաց վճռական։— Դա է ելքը։ Քանի որ՝ եթե առաջարկենք զորքը տեղափոխել՝ պիտի կասկածեն։ Իսկ այրելը «պատահմունք է»։

— Այդպես էլ կանենք։ Քաղաքում էլ նրանց չենք տա տեղթող դաշտում բանակեն։

— Ավելի լավ է տանենք արևելյան կողմի գոմերը։ Լավ խեղդանոց է։ Դեպքի ժամին կպաշարենք ու կվերջացնենք ամբողջ զորագունդը։

— Այդ ավելի լավ,— եզրակացրեց Ատոմը,— այդպես կանենք։ Այն ժամանակ իրավունք է ասելու, որ մեր կամուրջը մերը են է։

— Անիծվի ազգի բախտը,— հառաչեց Արտակը,— մեր երկիրը մերը չէ։ Ամեն տեղ կայազորնե՞ր, բերդապահնե՞ր, պաշտոնյանե՞ր, բռնակալնե՞ր։

Արտակը դառնությամբ նայեց Ատոմի աչքերին և տխուր շեշտով գլուխը թափ տվեց։

— Դիտե՞ս ինչ, իշխա՛ն,— ասաց նա խոր մտածելով և աչքերը հառելով Արաքսին,— մենք՝ մենք չենք, դա է մեզ խեղճացրել։

Ատոմը հարցական նայեց Արտակին։

— Այո, մենք՝ մենք չենք։ Մենք մեզ չենք ճանաչում։ Չենք սիրում, չենք հարգում։ Չունենք ազգի հպարտություն։ Մենք արհամարհում ենք մեզ, օտարն էլ մեզ է հետևում — նա էլ է արհամարհում։ Մենք քծնում ենք օտարին, որ մեզ սիրի, բայց ավելի է ատում նա, որովհետև քծնողներին ատում են։ Վախենում ենք արժանապատվություն ցույց տալ, վիրավորել օտարին։ Այդպիսի ստրկահոգի նախարարները մեծ չարիք են...

Արտակը շառագունեց հուզմունքից և դառնության զգացումից։ Ատոմը տարակուսած նայեց նրան։ Ինչե՞ր է ասում։ Մի՞թե իրենք այդպես են։ Ատոմն այդ չէր զգում։ Ծնվելով լեռների գրկում, սընվելով ռազմական գաստիարակի հոգեկան կյանքով, հեռու մայրաքաղաքի, մարզպանական ու այլ պաշտոնական մթնոլորտից՝ նա չէր մտածել այն մասին, թե ինքը ազա՞տ է, թե ստրուկ։ Ատոմը չէր մտածել այդ մասին։ Նա իրեն ազատ էր զգում այնքան անգիտակից, որքան և չէր գիտակցում իր Երիտասարդական ավյունն ու ուժը։ Նա առողջ էր հոգով։

Իսկ Արտակը շարունակելով իր խոսքը՝ քանի գնում դառնանում էր.

— Վահան Մամիկոնյանը դառավ դավաճան, ազգադավ գործերի գերի, ծախված հոգի... ի՞նչ ստացավ՝ ծախելով իր ազգը։ Ի՞նչ կարող է փոխարինել այն գինը, որ ունի ազգը։ Հայեր եմ տեսել պարսկական ծառայության մեջ, որ կաշվից դուրս են գալիս պաշտպանելու պարսից տերությունը։ Իր երեխաներին արգելում է հայերեն խոսելը. պարսկերեն է խոսում, մոգ է պահում տանը, կրակ է պաշտում և իր հայ լինելը ամաչելով է խոստովանում։ Ատում է իր ազգը, իր լեզուն, պարսիկ է ուզում դառնալ, բայց չի կարողանում. իր արատները իր վրան են։ Շան քծնանքը, ստրկահոգությունը, անինքնասիրությունը... Ի՜հ... ամենակոշտ անասունը աշխարհիս երեսին։ Ահա նա։ Թյո՛ւ...

Արտակը դեմքը դարձրեց դեպի դաշտը, որտեղից լսվում էին կատաղի կանչեր։

— Սա ի՞նչ բան է,— հետաքրքրվեց նա։

— Ձիարշավ է,— ասաց Ատոմը։— Տղաներ են։

— Ապա գնանք այն կողմը,— ասաց Արտակը՝ մոռանալով իր դառնությունը։

— Լավ են տաքացել,— ծիծաղեց Ատոմը։

Կատարյալ ձիարշավ էր դաշտում։ Տղաները խումբ-խումբ քշում էին նժույգները։ Դաշտը լայն էր ու թփուտ։

Բավականին աշխույժ բազմություն էր հավաքվել ձիարշավի տեղը, քաղաքից ու շրջակա այգիներից տեսարանը դիտելու։ Ըստ երևույթին գերի էին ու տարված նման բաներով։ Եվ հենց նոր մոտեցան երկու նախարարները, երբ քրտնամխած, փուքսը փնչացնելով տեղ հասավ Մարտիրոսը և ձեռները փորին դրած՝ աչքերը հառեց տեսարանին։

Վարաժն ընդառաջ գնաց նախարարներին։

— Հը՞, Վարաժ, գինի՞ ես խմել,— հարցրեց Արտակը կեղծ խստությամբ։

— Չեմ խմել, տեր իմ,— պատասխանեց Վարաժը հազիվ պահելով իրեն, որ չօրորվի։

— Հա՞, գինի՞ն է քեզ խմել։ Այս ի՞նչ արշավ է։

— Նժույգներին դուրս եմ բերել խաղալու, տեր իմ։

Արտակը ծիծաղեց.

— Դու էլ հետները խաղում ես։

— Դե իմ էլ ընկերները նժույգներն են։

Տղաները հավաքվել էին և սպասում էին մեծ հանդիմանության, բայց Արտակը դիմեց նրանց։

— Ապա՞, սկսե՛ք տեսնեմ։

Տղաները պատրաստվեցին նոր արշավի։

Արտակն ու Ատոմը գնացին կանգնեցին արգելքների՝ մեծ թփուտների ու ճահիճների մեջտեղ։ Տղաները, որ հավաքվել էին դաշտի մի ծայրում՝ սպասեցին նշանի։ Վարաժը նշանը տվեց։ Տղաները թռան. նժույգները անսանձ էին. միայն վզներին մի-մի պարան կար։ Մեջքները անթամբ թեթև եկան նժույգներն ու ամեհի ցատկերով թռան արգելքները։ Ապա ընկան ճահիճների բավիղը, որոնց արանքներում չոր տեղեր ու շավիղներ կային։ Այդտեղից սկսեցին գալարվել, պտույտներ տալ, խափ տալով իրենց և ազատվելով ճահիճների սոսկալի փոսերից։ Ապա շրջան գծեցին, կրկին ետ դարձան և նույն արգելքներով վերադարձան մեկնակետը։

— Թունդ նժույգներ են,— ասաց Ատոմը։

— Տղաներն էլ թունդ են,— հարեց Արտակը և ուշի-ուշով տնտղեց տղաներին, որոնց մի մասը պատանիներ էին, մյուս մասը՝ արդեն հասուն երիտասարդներ։ Նրանք քրտնել էին, կրակվել, մարտական կեցվածք էին ընդունել և չնայած նրանց պատառոտուն զգեստներին, նրանք գեղեցիկ էին և հմայիչ։

«Ա՜յ ընտիր հեծելազոր»,— մտածեց Արտակը շոյող հայացքը պտտեցնելով տղաների վրա։

— Ապա մի սրամարտ կարո՞ղ եք,— աշխուժացավ Ատոմը և գնաց դեպի տղաները։

— Տիգրա՛ն,— կանչեց Վարաժը և մեկնեց նրան սուրը և վահանը,— ա՛ռ ու ընկիր սրանց մեջ,— վերցրեք սրերը, Գուրգեն, Կորյուն, Արա,— կանչեց մյուսներին։— Մեջ առեք Կորյունին։

Վարաժը նրանց սրեր բաժանեց, որ ձիարշավի համար բերել էր ըստ սովորական կարիքի, և աչքով արեց Գոռնակ Սիմավոնին։

Սրանք գնացին և կանգնելով հրապարակի մեջ՝ հանեցին բամբիռները։

Տղաները կատաղի նժույգների վրա՝ նրանց հետ եռում էին և անհամբեր սպասում նշանի։ Բազմությունը սեղմվեց դեպի երգիչները։

Վարաժը կրկին նշան տվեց Գոռնակ Սիմավոնին, սա էլ իր կողմից աչքով արեց Վարաժին և ուժեղ թափով գունդուկծիկ, ինչպես ըմբշամարտի մտնող ըմբիշ, թռավ մի քանի քայլ առաջ, բամբիռը նետեց մի թևին և աջ բռունցքով բամփեց լարերին։ Ապա մի ավելի ուժեղ հարված տվեց լարերին, ոտը զարկեց, կրկին շուռ եկավ գնաց լայնաքայլ, եկավ ու բռունցքի զարկերի հետ սկսեց.

Դահ, դահ, դահ, դահ...

Ընկերները ձայն պահեցին.

Զրանգ, զրանգ, զրանգ, զրանգ...

Ու Գոռնակ Սիմավոնը գոգնոց մորուքը կրծքին թափ տալով, հնչեղ ձայնով գոչեց երգը.

«Ի Վահագնէն գոչեմ
Զվիշապաքաղին հռչակեր։
Վիշապաքաղն թագէր,
Թուչէր զերթ բոց ի բոցոյն,

Ի հրոյն զերթ հուրամանուկն,
Արեգակունք աչքունքն,
Սատակացնէր վիշապացն ածդահակ
Ամեհի վիշապաքաղն»։

Դա՛հ, դա՛հ, դա՛հ, դա՛հ, մրթմրթում, թնդում էին լարերը և երգիչները Գոռնակի հետևից ոտնադոփոցով գնում գալիս էին ասպարեզի վրա։

Բազմությունը սեղմվեց։ Ճնշեց իրար, բորբոքվեց, և մարդիկ խանդավառ աչքերը հառեցին երգիչներին։

— Զարկե՞ք,— գոչեց Վարաժը ոգևորված։

Բազմությունը ոգևորվեց։

Վարպետը հանկարծ կարմրեց, վզի մկաններն ուռեցին և աչքերը բոցավառվելով՝ շեշտ ու հրամայական նայեց Վարաժին։ Հետո բամբ ձայնով որոտաց.

«Զքաջէն Տիգրանէն ասեմ,
Քաջորդի քաջէն քաջարանց,
Պողպատն ատամամբք ծամէր,
Ապառաժն բռամբք քամէր,
Ա՜յ բռամբք քամէր,
Տովեր ծովացնէր բոլոր,
Սատէր ու յոշէր թշնամեաց»։

— Ի մա՜ռտ,— գոչեց Վարաժը հիացած։ Բազմությունը կրկնեց,— ի մա՜ռտ։

Վարպետը ոգևորվեց, վեր թռավ և սկսեց ետ ու առաջ գնալ-գալ։ Մազոտ կրծքին սեղմելով իր ահագին գործիքը՝ նա բռնցքեց լարերին թափով և հրացայտ աչքերը սպառնագին դարձնելով դեպի տղաները՝ սկսեց «թիվ» երգել քաջորդի Տիգրանի սխրագործությունները։

Տղաների աչքերը վառվեցին։ Նրանք ատամները սեղմած, տարված լսում էին գուսանին և այնպես էին նայում, կարծես իրենց աչքի առաջն է Տիգրանը կռվում։

Երգը բորբոքվեց, կրակեց բազմության։ Վարաժը կորցնում էր իրեն, ձեռներով, ոտներով մասնակցում երգին։ Եվ հանկարծ նշան արեց Գոռնակ Սիմավոնին։ Սա բամբիռը դրեց գետին, ծոցից դուրս քաշեց մի շեփոր, թափ տվեց գլուխը ընկերների կողմը, մեծ ու փոքր թմբուկ զարկողներին։

Թմբկահարը գրկեց թմբուկը փորի վրա, մյուսները՝ փոքրները և Գոռնակ Սիմավոնը շեփորը բերանին, կարմիր թշերը ուռեցրեց և սուր կերկերաձայն մի հնչյունով սկսեց վայրագ սրամարտի եղանակը։

Կարծես օդը ճեղքեց մի գիշատիչ թռչուն իր խլացուցիչ կռինչով։

Վարաժը նշան արեց երիտասարդներին։ Կորյունը թոցրեց իր նժույգը, մյուսները ընկան նրա հետևից։ Սկսվեց մի վտանգավոր, դժվար մրցում։ Տղաները ճիգ էին անում շրջապատել և «սրախողխող» անել նրան, իսկ նա ճարպկությամբ խուսափում էր նրանցից։ Եվ այդ ամենը կատարվում էր ճահիճների արանքում։

Կորյունը չէր բավարարվում խուսափելով միայն։ Նա երբեմն անսպասելի շարժումով ոլորք էր տալիս և հարձակվում մեկի կամ մյուսի վրա, «հարվածում» այնպես, որ եթե իսկական լիներ՝ հեծյալը պետք է գլորվեր գետին։ Հարվածելով նա կրկին փախցնում էր նժույգը և պտույտ գալիս թփերի ու ճահիճների շուրջը։

Բազմությունը իրար անցավ, եռաց ու առաջ էր գնում։

— Թռե՞ք,— գոչում էր կատաղի Վարաժը,— թռե՞ք, դժոխքի բաժի՛ն Հաղկերտը։

— Հո՛, հո՛, հո՛, հո՛,— գինու տկի պես լխկլխկտում էր ծիծաղից Մարտիրոսը։

Հանկարծ տղաները այնպես բերին խաղը, որ շրջապատեցին Կորյունին. սա պտտվեց իր շուրջը, նրանց շուրջը և նժույգը քշեց դեպի մի այլ ճահիճ։ Նա այնպիսի թափով էր սլանում, որ բոլորը հավատացին, թե նա ուզում է ընկնել ճահիճը։ Նրան հետամտեցին, բայց զուսպ, որ ժամանակին ետ պահեն նժույգները ճահճից։ Կորյունին էլ հենց այդ էր պետք։ Նա քշեց նժույգը, բայց այնպիսի մի հանկարծական թափով ետ շրջեց, այնքան անսպասելի, որ մինչև հետապնդողներն ուշքի եկան և իրենց լարեցին նոր շարժման համար՝ Կորյունը սրարշավ թռավ նրանց միջից, թռավ արգելքներն ու գնաց։

— Վիշապաքա՞ղ, առյուծաձև՞,— գոչեցին ամեն կողմից,— Վահագնի շնորհը վրադ...— լսվում էր ամեն կողմից հեթանոսական կյանքից մնացած բոլոր բառերով։

Վարաժը դադարի նշան տվեց, Գոռնակ Սիմավոնը վայրագ ծղրտոցով կտրեց շեփորը։ Տղաները մոտ քշեցին նժույգները։

— Ապրե՛ս,— ձայն տվեց Արտակը ոգևորված։

— Քաջավարժ է,— գոչեց Ատոմը։

Արտակի ոգևորությունը բռնկեց։

— Չփորձե՞նք ես ու դու,— հանկարծ դիմեց նա Ատոմին։

— Ինչո՞ւ չէ, փորձենք,— պատասխանեց Ատոմը։

— Նժույգները բերեք,— հրամայեց Վարաժը։

Նժույգները բերին, և Արտակն ու Ատոմը սկսեցին ընտրել։ Վարաժը միջամտեց.

— Ես ընտրե՞մ, տյարք։

— Ո՞րը կընտրես. ամենախենթերն ընտրիր։

— Բոլորն էլ խենթ են։ Խելոք մի՛ կարծի։ Հեծյալներն են ընտիր...։

Ու ընտրեց երկուսը. մեկը Կորյունինն էր, մյուսը՝ Տիգրանինը։

Ատոմն ու Արտակը թռան նժույգների վրա։ Սրանք զգալով նոր հեծյալներ իրենց մեջքի վրա՝ սկսեցին թափ տալ նրանց, որ գլորեն։ Ծառս էին ելնում, ետ-ետ վազում, անսպասելի կողմեր ցատկում, բայց հեծյալներն էլ անսովոր չէին կատաղի նժույգներին։ Խաղացրին, վարժեցրին և մի կերպ հասկացան նժույգների բնույթը։

— Դե, ապա՛,— նշան արեց Արտակը։

— Թռի՛ր,— գոչեց Ատոմը։

Երկու իշխանները նետերի պես սլացան։ Նրանք թռան բոլոր նշանակված արգելքները և շրջան գործելով՝ ետ դարձան։ Ճանապարհին Ատոմը սլացքի ժամանակ գետնից մի սուր վերցրեց և նրանով թռցրեց մի թփի գլուխ, որ այն թփուտի մեջտեղն էր, որի վրայից նա պիտի կատարեր վտանգավոր թռիչք, խուսափելով դիմացի ճահճից։

Բայց նա այնպես արագ, հասարակ ու հեշտ կատարեց այդ շարժումները, որ կարծես իրոք հեշտ էր և հասարակ։ Արտակը իբրև պակաս վարժ հեծյալ՝ չկատարեց և ոչ մի ճարպկություն։

Վարաժը, որի գինովությունն անցնում էր՝ խենթացել էր իր նժույգների շնորհքը տեսնելով։ Նրան հեծյալները չէին զարմացնում և գրավում. նրա ուշքն ու միտքը իր նժույգներն էին։

— Լա՛վ նժույգներ ես պահում, Վարա՛ժ,— քաջալերեց Արտակը՝ մոտենալով ծեր ախոռապետին։

— Նժույգը կյանք է, տե՛ր իմ,— ասաց Վարաժը։ Եվ ապա նայեց Մարկոսին։ Սա ևս բազմանշանակ նայեց Վարաժին։

— Իրավո՞ւնք է,— դիմեց Վարաժը Արտակին։

— Հը՞, նախանձդ շարժվե՞ց։ Ապա՞,— ասաց Արտակը։

Վարաժն ու Մարկոսը հանկարծ այլայլվեցին և խլելով Վահագնի ու մյուսի ձեռից նժույգները, պարանները հանեցին դեն շրջրտեցին և թռան վրաները։ Անմիջապես երիտասարդացան կարծես։ Մեջքները շտկվեց, կեցվածքները լարվեց, միախառնվեցին նժույգներին, դառան մի մարմին։

— Դե, ապա՞,— հրամայեց Վարաժը և թռավ։

Մարկոսը միջոց չտվեց. սլացավ հետևից ու մի ակնթարթում միացավ Վարաժին։ Սա կատաղի նայեց Մարկոսին, զայրացավ, որ նա հասավ իրեն և շարունակ աչքերը գամած նրա աչքերին՝ սպառնագին գոչում էր.

— Դե՛...

Մարկոսը չէր զիջում։ Վարաժը կատաղեց, բռունցքով սպառնաց Մարկոսին, դեմքն այլանդակված՝ ուղղակի պահանջում էր զիջել։ Բայց Մարկոսը զիջել ոչ համաձայն էր, ոչ էլ հասկանում էր, թե ինչո՞ւ պիտի զիջի։ Նրանք թռան բոլոր արգելքները և շատ ավելի արագ, քան երիտասարդները, վերադարձան։ Վարաժը զայրույթից մոռացել էր իշխանների ներկայությունն ու ամեն ինչ։ Արագ իջավ ու վազեց Մարկոսի վրա, բռունցքը բարձրացրեց վրան։

— Դու գիտես, որ շունչդ չի սիրում նժույգը, ինչո՞ւ ես քիթը մտնում։

— Շնչի՞ս ինչ է եղել, որ չսիրի,— հակառակեց Մարկոսը։

— Չէ, ասա, ինչո՞ւ մտար նժույգի քիթը,— համառեց Վարաժը և հարվածեց Մարկոսին։ Սա պակաս չմնաց, սա էլ պատասխանեց ավելի ուժեղ հարվածով։ Երիտասարդները միջամտեցին և հազիվ բաժանեցին երկուսին։

Արտակն ու Ատոմը ծիծաղից թուլացել էին՝ դիտելով երկու ձիու խենթերին։

— Չէ, իշխան, «Փոթորիկին» ոչ մի նժույգ չի զարկի. եկավ շունչը տվեց անասունի քթին՝ խափանեց. չի սիրում անասունը դրան։

— Խելքն էլ չի գնում ինձ համար,— զայրացավ Մարկոսը։

Վարաժը վրա գնաց, որ խփի Մարկոսին։

— Վերջ տուր, Վարաժ,— ասաց Արտակը։

Վարաժը ետ քաշվեց փնթփնթալով։

— Նախարարներին պատիվ չի պահում։ Նախարարի մոտ պիտի խոստովանի, որ ես նրան տարա։

Հետո զայրույթից շնչասպառ դարձավ Մարկոսին։

— Լավ, գնանք ախոռ, ադիքնե՛րդ կթափեմ...

— Հո, հո, հո,— լսվում էր Մարկոսի բամբ ծիծաղը։

Նժույգները քրտնել էին։ Վարաժը սթափվեց հանկարծ։

— Դե, շուտ, քշեք ախոռ՝ չմրսեն։

Երիտասարդները թռան նժույգների վրա և մանր վազքով գնացին քաղաք։

— Վարաժ, լավ պահիր նժույգներին,— ասաց Արտակը,— պատերազմը քթներիս տակին է։

— Նրա համար եմ մսերս ուտում, է՞,— ասաց Վարաժը։

— Տղաներին էլ վարժեցրու, լավ մարտիկներ են,— ասաց Ատոմը, ձեռը դնելով Վարաժի ուսին։

— Կլակ են,— պարծեցավ Վարաժը, և բարկությունն իջավ։

— Այդպես. ապրես, լավ ես հասկացել գործդ,— քաջալերեց Արտակը։ Քաղաքադռնից հեծյալ բաներեր եկավ Ատոմին ու Արտակին՝ հետևից երկու նժույգի սանձերը ձգելով։ Նա արագ վայր թռավ և հայտնեց, որ Սպարապետը շտապ հրավիրում է նրանց։

Նախարարներն իսկույն հեռացան քաղաք։

Վարաժը նայեց Մարկոսին։ Սա ինչ-որ կծկվել էր և կողը բռնել։

— Հա, ի՞նչ է,— կոպիտ հարցմունքով մոտեցավ նրան Վարաժը։

— Ցավ առավ կողս,— տնքաց Մարկոսը։

— Է՞, է՞...—սաստիկ անհանգստացավ Վարաժը,— ուսս բռնիր, մատաղ։

Մարկոսն ընկավ նրա ուսին։ Վարաժը գրկեց նրա մեջքը և այդպես ուզում էր կամաց-կամաց տանել քաղաք, բայց Մարկոսը կախվեց, իջավ գետնին։ Վարաժը ստիպվեց մնալու նրա հետ։ Մարկոսը սկսեց տնքալ։ Վարաժը փոխանակ սիրտ տալու նրան՝ ինքը ավելի ահաբեկվեց։

— Ի՞նչ փորձանք էր. երիկամդ պատռված չլինի՞...

— Մեծ մորուտի մոտ բռնեց,— տնքաց Մարկոսը,— թե չէ՝ «Կայծակս» զարկելու էր «Փոթորկիդ»։

Վարաժը խենթացավ զայրույթից։

— Ի՞նչ... «Կայծակդ» զարկելու էր «Փոթորկիս»... գլուխդ կջարդեմ՝ թե մեկ էլ ասել ես։

— Մեկ էլ կասեմ, տասն էլ...

— Հիմի սատանան ասում է աղիքները թափիր,— գլուխն օրորեց Վարաժը։

Մարկոսը տնքաց և կրկին կողը բռնեց։

— Դեհ, համբերիր, հիմի կտանեմ բուժակին։ Դեհ, մի քաղի մարդու հոգին, դիմացիր, էլի՞...

Գորովանքով բռնեց Մարկոսի մեջքը քնքուշ ու զգույշ։

Բազմությունը ծիծաղում, զվարճանում էր երկու խենթերի այս յուրահատուկ կռվշտուքի և մտերմության վրա։ Հետո ցրվեցին մարգագետնում և խումբ-խումբ նստոտած սկսեցին խաղաղ զրույց անել։

Մի փոքր անց քաղաքադռնից դուրս եկավ Արծվին մերկ նժույգի վրա, մյուսի պարանն էլ ձեռին բռնած։

Նրա նժույգները ևս տեղավորված էին տերունական ախոռում, ուր և քաշեցին նախարարների նժույգները։ Արծվին ինքն էր խնամում Սպարապետի և իր նժույգները։

Զուր ախոռապանները բողոքեցին, որ դա իրենց գործն է, թող գնա հանգստանա։ Արծվին չլսեց, դուրս քաշեց երկու նժույգները և տարավ Արաքսի ափը, քշտեց ոտներն ու թևքերը և նժույգների հետ մտավ ջուրը։ Գետափին երկու պարսիկ զինվոր էին պառկել արևկող արած և բերանաբաց նայում էին կիսաքուն։ Նրանց ուշադրությունը գրավեց Արծվին։ Նրանցից մեկը վեր նստեց ու սկսեց տնտղել նժույգները։ Նրան դուր չեկավ Արծվին՝ նժույգների իր խնամքով և մեկ էլ՝ որ նրանց լողացնում էր ազատ համարձակ շարժումներով։ Մանավանդ որ մի անգամ էլ հայացքը գցեց դեպի զինվորները և այնպես նայեց, կարծես չի տեսնում նրանց։

— Է՛յ,— ձայն տվեց պարսիկ զինվորը,— ո՞վ ես, որ այստեղ ես լողացնում նժույգները։

Արծվին հայացքը սահեցրեց զինվորի աչքերի վայով և շարունակեց լվալ նժույգների ազդրերը։

— Քեզ հետ չե՞ն,— ձայն տվեց կրկին զինվորը։

Մյուս պառկածը ևս վեր նստեց.

— Հա՛, ի՞նչ է, ո՞վ է։

— Քնձոոտի մեկը,— բարկությամբ ասաց առաջին զինվորը,— նժույգ է լողացնում արգելված տեղը։ Է՛յ, խո՞ւլ ես. այստեղ իրավունք չունես նժույգով ման գալ, ուր մնաց լողացնե՞լ։

Արծվին չնայեց էլ նրա կողմը։

Այն ժամանակ պարսիկ զինվորը վերցրեց մի քար և շպրտեց Արծվիի վրա։ Քարը դիպավ Վարդանի նժույգին։ Սա ցատկեց ջրի մեջ և քիչ մնաց պարանը պոկեր Արծվիի ձեռքից, փախչեր։

Արծվին երկու նժույգների սանձից քաշեց, մոտ եկավ պարսիկ զինվորին և այնպես քացի տվեց նրա կրծքին, որ սա անշունչ փռվեց գետնին։ Մյուս զինվորը վեր թռավ և գետնից մի քար պոկելով՝ նետեց Արծվիի վրա։ Քարը դիպավ Արծվիի կրծքին։ Արծվին ցատկեց իր նժույգի մեջքին և մյուս նժույգի պարանը ձեռին հարձակվեց զինվորի վրա՝ սկսեց սմբակների կոխան անել նրան։ Սրան օգնության հասան պարսիկ զինվորներ։

Քաղաքագոնից և մարգագետնից թափվեց մի բազմություն, որ վազելով դեպքի վայրը՝ շրջապատեց կռվողներին։ Վազեցին եկան նաև երիտասարդները։ Պարսիկ զինվորները քարեր էին տեղում Արծվիի կողմը, սա ճարպկորեն խուսափում էր և չմնալով միևնույն տեղում, թռիչքներով պտտվում զինվորների շուրջը և հանկարծ շարժումը փոխելով՝ շեշտակի գրոհում էր նրանց վրա, մեջտեղից ճեղքում։

Նժույգները կատաղեցին ավելի, քան Արծվին։ Նրանք ամեհի սմբակներով ծառանում էին և հանկարծ այնպիսի ուժով նետվում զինվորների վրա, որ սրանք փախչում էին։

Ձայներ լսվեցին. «Արծվի՛, Արծվի՛, բավակա՛ն է, հեռացի՛ր»։

Բայց Արծվին արնակալած ու չարաժպիտ աչքերը փայլատակելով՝ շարունակում էր կռվել զինվորների բազմության հետ։ Նա քշեց զինվորների բազմությունը։ Պարսպի վրա հայտնվեց պարսկական սիպահը։

— Ի՞նչ է պատահել,— գոռաց նա զարմացած ձայրանալով։

Նրան հաղորդեցին եղելությունը։

— Նետահար արեք,— հրամայեց նա։

Զինվորները վազեցին աղեղներ բերելու։

Բայց այդ ժամանակ սիպահի վրա վազեց հայ բերդապետը։ Նա աչքերը կատաղի ցոլքերով ոլորեց սիպահի վրա։

— Չհանդգնես, հիմա՛ր,— սաստեց նրան բերդապետը։

Սիպահը ձեռքով արեց, և աղեղնավորները վայր իջեցրին նետերը։

Մոտ եկավ, սկսեց զոռզոռալ Արծվիի վրա։

Բերդապետը նշան արեց նրան, որ դադարեցնի։ Արծվին հազիվ ուշքի եկավ և նժույգները ետ քշելով գնաց։ Ապա անցավ առաջին զինվորի դիակի մոտից, մռմռաց մի հայհոյանք և նժույգները քշեց գետը։ Սկսեց տնտղել՝ արդյոք վերքեր չկա՞ն։ Տեսնելով, որ վերքեր չեն բացվել՝ սկսեց շփել քարերի հետքերը և լոգացնել նժույգները, իբր թե ոչինչ չի պատահել։

— Ո՞վ է այդ լակոտը. բռնեցե՛ք դրան,— բարկացած հարցրեց բերդապահին սիպահը։

— Լեզուդ քե՞զ քաշիր, ձեռներդ չեն հասնի նրան։

Ներքևի բազմությունը մոտ հավաքվեց։ Բերդապահը դիմեց նրանց.

— Ի՞նչ է պատահել։

Պատմեցին։

— Դրանք մեզ մի օր ջուր թափելն էլ կարգիլեն,— ձայն տվեց Վարաժը։

Բազմությունը ծիծաղեց։

— Եկել են գլխներիս նստել՝ մեր ջուրը մե՞զ խնայում են,— բարկացավ Մարկոսը։

Բերդապետը մռմռաց քթի տակին և ապա սիպահին դիմեց ավելի հանգիստ.

— Ի՞նչ եք ուզում բնակչությունից։ Ինչո՞ւ հանգիստ չեք մնում։

— Մենք արյաց արքայի զորքն ենք,— պատասխանեց սիպահը,— մեր զորանոցի սահմանը ուրիշ զինվոր չպիտի մտնի։

Բերդապետի արյունը գլխին խփեց։ Նրա լիքը կարճ կազմվածքը կարծես լցվեց բարկության ալիքով։ Նա, որ ինչպես երևում էր, արդեն շատ պատճառներով լցված էր պարսից կայազորի ներկայությունից՝ բռունցքը սեղմած թռավ դեպի սիպահը.

— Ահա ձեր սահմանը, մտեք սրա մեջ,— գոչեց նա՝ խեղդվելով իր կարճ վզի ուռած երակներից,— ձեզ տեղ ենք տվել խելոք նստելու։ Դուք մեր գլխին եք ուզում նստել։ Եթե մի անգամ էլ հանդգնեք՝ ոչ թե Սպարապետի ձիուն, այլ մի հասարակ բնակչի ավանակին դիպչել՝ ձեզ կշպրտեմ պարսպից։

Այդ պահին քաղաքի կողմից պարիսպ էր բարձրանում պարսիկ զորամասի հրամանատարը։ Նա գալիս էր դանդաղ և հոնքերը խոժոռած։ Նրան ճանապարհ տվին զինվորները, որոնց միջով նա անցավ, առանց նայելու նրանց։ Եկավ նստեց հեռու, գորգի վրա և մատով կանչեց բերդապետին և սիպահին։

Սիպահը վազեց նրա մոտ և խոնարհ ողջունելով կանգնեց։ Բերդապետը կանգնած մնաց իր տեղում։

Հրամանատարը դաժան նայեց և կրկին մատով կանչեց։

— Ո՞վ է այդ լակոտը, որ սպանել է զինվորիս...

— Այդ քաջը հրեն լողացնում է նժույգները։ Դա Սպարապետի թիկնապահն է։

Հրամանատարը վեր թռավ նստած տեղից և դարձավ դեպի իր սիպահը.

— Գնա՛, բռնել տուր դրան։

Բերդապետը արագ շուռ եկավ և ձեռքով արեց հեռու աշտարակների վրա լցված հայ զինվորներին։ Այնտեղից փող փչեցին։ Անմիջապես պարիսպների վրայից, տակից և մոտակա այգիներից ու բակերից դեպի բերդապետը վազեցին հարյուրավոր զինվորներ՝ զինված նիզակներով ու նետերով։ Պարսիկ հրամանատարը ըստ երևույթին չէր սպասում այդպիսի մի հանդգնություն և հույս ուներ վախեցնելով գործ տեսնել։ Նա ինքը վախեցավ և առաջ գալով դեպի բերդապետը՝ սկսեց ավելի բարկացած ձայնով սպառնալ.

— Քեզ գլխատել կտամ։ Դու ապստամբո՞ւմ ես արյաց արքայի դեմ։

— Արյաց արքայի հետ գործ չունեմ, ես քեզ եմ խելքի բերում, արյաց արքան դո՞ւ ես։

Ներքևի բազմությունը հռհռաց։

Հրամանատարի կաս-կարմիր դեմքը ցույց էր տալիս նրա զայրույթը։ Բայց երկյուղը զսպեց նրան։ Եվ մի կերպ արժանապատվությունը պահելու համար սպառնաց.

— Ես այդ չեմ ուտեցնի քեզ... Սպասի՛ր...

Ու արագ շրջվելով գնաց իջավ պարսպից։

Բազմությունը քրքջաց և գնաց դեպի գետափը, ուր Արծվին հանգիստ ու մռայլ շարունակում էր լողացնել նժույգները։

— Արծվի, սատկել է զինվորը,— ձայնեց Կորյունը բազմության միջից։

Արծվին չնայեց նրա կողմը և շարունակեց իր գործը։ Պարսպից պարսիկ զինվորներն իջան և եկան քարշ տվին առաջին զինվորի դիակը և երկու ծանր վիրավորի։ Նրանք անիծում էին անլսելի ձայնով և թունոտ ատելությամբ նայում բազմությանը, որ աշխույժ ու բարձրաձայն դատողություններ էր տալիս դեպքի մասին։ Զինվորները հեռացան։ Բազմությունը հավաքվեց մի հասակավոր քաղաքացու շուրջը։ Սա, որ կաշե գոգնոցը կրծքին և մրոտ ձեռքերով ու դեմքով մատնում էր իր դարբին լինելը՝ ասաց.

— Սա է եղել մեր օրը այս Հազկերտից մինչև Շապուհն ու դենը։

— Հրամա՛ն տան մի սրանց փրթենք, վրեժներս հանենք,— ասաց Կորյունը։

— Է՜, է՜, է՜, բանը որ վրեժի հասնի՝ քի՞չ վրեժ կա,— հառաչեց նիզակի պես կարծր ու ջղուտ մի ծերուկ,— ի՛նչ կյանք եմ տեսել՝ կռիվ է, վրեժ է պարսից ազգից։ Մենք խաղաղության ենք վազում, պարսիկը՝ կռվի։ Տասը տարի չկա՝ ինձ արձակել են, եկել այգի եմ գցել՝ էլի այդ կռվի խոսքն է, այդ արունքը։

— Ինչ երգ ու զրույց գիտենք՝ հենց բոնիր պարսիկ է, արունք է, կռիվ է,— ասաց Գոռնակ Սիմավոնը շփելով իր բամբիռը։

— Բամբիռներս պարսիկ են դառել,— ծիծաղեց նրա ընկերը, ծաղրաղեմ նայելով խոսակիցներին։

— Կռիվ շա՞տ ես տեսել, Աբրահամ պապիկ,— շրջապատեցին նրան պատանիները։

— Ո՞նց չեմ տեսել, հին զինվոր եմ։ Շապուհը չէ՞ր, Առաջին Հազկերտի որդին, եկավ չորս տարի թագավոր նստեց մեր գլխին։ Հոր հիվանդությունն իմացավ, գնում էր Պարսկաստան, գնալիս հրաման թողեց տեղապահին, որ մեր նախարարներին բռնոտի, Պարսկաստան տանի։ Ներսես Ճիճրակեցու զորքն էի, հրաման տրվեց՝ մի մարդու պես վեր կացանք ու ով ինչ ուներ՝ վերցրեց հետը։ Գիշերը ցերեկ անելով, նժույգները կոտորելով հետևներից վրա հասանք Հերի մոտերքը։ Մեզ որ տեսան պարսիկները՝ հենց այն է երեսները շուռ տվին, որ վրա գան՝ կարկտի պես մե՛նք վրա տրվինք։ Մի ջարդ էր՝ որ սրտներիդ ուզած։ Հոտները կտրեցինք մեր աշխարհից։

— Բայց դժվար տարիներ էին, ինչ էլ լինի,— հառաչեց Աբրահամ պապիկը,— շա՞տ են մեզ տանջել, շա՞տ են մեր թագավոր-

ներին փտեցրել Անհուշ բերդում։ Ոտները դրել մեր կրծքին, հա խեղդում են մեզ, դրանց արմա՜տը չորանա։

Կամուրջի այն կողմից մի խումբ շինականներ էին գալիս։ Նրանք դանդաղ մոտեցան խոսակից բազմության՝ մտածելով կանգ առնել, թե մտնել քաղաք։

Մեկը նրանցից առաջ եկավ և կանգ առնելով մոայլ բարևեց ու անհաշտ նայեց խոսակիցներին։ Դա ծեր շինական էր, սևադեմ, սևասաթ, գանգրահեր մազմորուքի մեջ կորած, նրան միացան մյուսները կիսաբոլոր կանգ առան։

— Բարև կենդանություն,— ողջունեցին նրանք և իրար հետևից նստեցին։

Շինականներից մեկը նստեց, զննեց ներկաներին և լայն ու խոր շնչեց։ Ապա դարձավ և խեթ նայելով ընդհանուրին՝ կոշտ ձայնով կոկորդը մաքրեց.

— Հը՜ը՜մ...

— Որտեղի՞ց, եղբայրներ,— հարցրեց Աբրահամ պապիկը։

— Մասյաց-Ոտնից, Ակոռիից, Մասյաց Վիհից, ամեն տեղից կա,— պատասխանեցին շինականները,— ա՛յ, նրանք էլ Սյունյաց աշխարհից են,— ցույց տվեց։ Դրանք՝ Առաքելն ու մնացած սյունեցի փախստականներն էին։

— Իշխանները էն օրը շատ խոռ ու խռով, հապշտապ եկան գեսը,— ասաց նրանցից մեկը, որ ինչպես երևում է, քաղաքամերձ գյուղերից էր,— թունդ է վերջերս քաշում հարկերը պարսիկը։ Ի՞նչ կա, Հովակիմ դարբին։

— Հարկերը դու սրանից դենը տես, Գոռ շինական, թե ոնց պիտի քաշեն,— ասաց Հովակիմ դարբինը նույնպես ճանաչելով նրան։

— Է՜է՜լ քաշե՜ն, է՜է՜լ քաշե՜ե՜ն տնաքանդները,— ճռռալով նվաց ու ձայնը ծոր գցեց հեռու նստած մի ակոռեցի շինական շինքը երկարելով՝ կարծես մի ծանր ու մեծ բեռի տակին ճկուած լիներ,— պարսիկը՝ հարկ, իշխանը՝ հարկ, ողջը շինականից են քաշում։ Յոթը կաշի՜ի՜ մաշկեցին... ճապաղեցի՜ի՜նք՝ ցամաքեցցի՜ի՜նք։

— Ա՜յդ ասա, Եզրա՛ս, հենց ա՛յդ,— հաստատեցին մյուս ակոռեցի շինականները։

— Հը՜ը՜մ,— կոկորդը դառնորեն մաքրեց շինականը, ինքն

իր մեջ խոովված ու անհանգիստ, որից երևում էր, որ նա ներքուստ կենդանի մասնակցում էր զրույցին և կլանում ամեն խոսք։

— Ճշմարիտ չե՞մ ասում, օտարական շինական,— դիմեց Եզրաս շինականը շինականների մեջ մոայլ ու հանգիստ նստած Առաքելին։

Առաքելը միայն լուռ նայեց՝ դեմքը դարձնելով նրան։ Առաքելի հետ շենից փախած ըմբոստներին ճանապարհին միացել էին իշխանական ու պարսիկ հարկահաններից հետապնդված, գազազած այլ շիններ, որ խմբվել և գալիս լցվում էին Արտաշատ, ընտրելով երկրի այն կենտրոնը, ուր կարող էր վճռվել իրենց բախտը։

Արաքսի կամուրջի այն ափին երևաց մի խառնիճաղանջ սև բազմություն, որ ահագին փոշի բարձրացրած գալիս էր անհանգիստ ու շտապ։ Նա անցավ կամուրջը և մոտեցավ խոսակիցներին։ Դրանք վանականներ էին՝ երկարահեր, առատամորուք, մոլեռանդ դեմքերով, քրտնամխած։ Դրանք՝ շքեղ հագնվածներից մինչև գրզգրզվածները, գավազանները պինդ զարկելով գետնին այնպես էին շտապում, որ կարծես մի բան հալածում էր նրանց կամ իրենք էին ընկել մեկի հետևից։ Նրանց առաջնորդում էր Սյունյաց վանքի վանահայրը՝ Գրիգորիոսը, որ իր կարմիր դեմքն ու հսկա մարմինը առաջ գցած, քրտնքի մեջ թրջված, քունքերի ու վզի փոշին ցեխ կտրած, հետևից բերում էր մի ահագին բազմություն վանականների, որ գալիս էին հոգնած ու մոայլ։ Նրա կողքից՝ փուքսի պես փրշելով և բադի պես լնգնգալով գալիս էր Սյունյաց վանքի տնտեսը։

Նրանք եկան ու կանգ առան զրուցողների մոտ՝ չվճռելով մրտնել քաղաք, դեռ անտեղյակ՝ թե ինչ է կատարվում այնտեղ։ Քրտնքի ու կեղտի հոտը բռնեց շորս կողմ։ Վանական ճաշարաններում բրտած, բուսական կյանքում բթացած արբշիռ դեմքերին խրտնած անասունների շփոթություն էր նկատվում։ Նրանք ստվարաթիվ էին։ Դա վանքերում Ներսես կաթողիկոսի օրով լցված ձրիակերների անթիվ բազմության հետևանքն էր։ Այժմ նրանց հանգիստն ու սնունդը մեծապես վտանգված էր, ու նրանք ոչխարների հոտի նման տեղներից դուրս թափվել ցրվել ու ճանապարհներին պատահելով իրար՝ միացել գալիս էին մայրաքաղաք Սյունյաց վանահոր հետևից։ Սա շատ կարճ ժամանակում ապաքինվել էր վերքերից ու ահա գալիս էր բողոքելու պարսիկների ապօրինի ու վայրենի հարկա-

հանութեան դեմ։ Նրանց մեջ էին նաև Վասակին գանգատ գնացած աղքատ վանականները։ Կային և Այրարատյան դաշտից։ Նրանցից մեկը, մի հասակավոր վանական՝ օձագալար մազերը կրծքին ու ուսերին՝ առաջ եկավ։

— Ողջույն եղբարց,— խլաձայն, տխուր ձայնեց նա։

Խոսակիցները վեր կացան և ողջունեցին նրանց լռելյայն։

— Որտեղի՞ց, հայրսուրբներ,— հարցրեց Հովակիմ դարբին։

— Սուրբ Հակոբա անապատից, եղբայր իմ,— հնաց ծեր վանականը,— ամեն անապատից կա մեջներս հարկահաններից փախստական։ Ահավասիկ Սյունյաց անապատից է,— ցույց տվեց Գրիգորիոս վանահորը,— առաջնորդում է մեզ։ Եկել ենք գանգատավոր նախարարներին, հոգևոր տիրոջ։ Սաստիկ հարկապահանջմամբ վանքերն է մտնում Դենշապուհ պարսիկը։ Անհնարին դառն ու դաժան է լուծը։ Քան զգայլ ագա՞հ են, քան զգազան անգո՞ւթ։

— Երի՞ցս անիծյալներ,— որոտաց հնալով և ճակատի քրտինքը սրբելով Սյունյաց անապատի Գրիգորիոս վանահայրը և շուրջը նայեց կատաղի հայացքով,— ձեռ են կարկառել հոգևոր իշխանության, հավատո վեմն են կործանում, գրավում կայք, պաշտոն, վանք, հավատացյալ ժողովուրդ, թողնելու են մեզ տնանկ ու մուրացիկ։

— Նյո՞ւթն է քաշում, նյո՞ւթը,— ձայնեց ծեր վանականը,— քաշում է, չի հարցնում պարսիկը՝ վանականինը, նախարարինը։

— Հազկերտը նախարարից է քաշում, երկուսն էլ շինականից։ Ձերը հեշտ է, ձերը ի՞նչ — աղոթքն է ու հացը,— ծիծաղեց Առաքելը։

— Աստված երկար կյանք տա ձեզ,— բարեմաղթեց ծեր վանականը չվիրավորվելով,— ճշմարիտ է, իհարկե։

Շուրջը ծիծաղեցին։

Գրիգորիոս վանահայրը ծուռ նայեց Առաքելին և հանկարծ ճանաչելով նրան՝ ձայնեց.

— Թշնամի, բարեկամ չես ճանաչում, Առաքել շինական, բարին չես խոսում։

— Թշնամին տեսա, բարեկամը չտեսա, հայր Գրիգորիոս։

— Հիմա կզորանա Թշնամին՝ կտեսնե՞ս...— շար սպառնաց Գրիգորիոս վանահայրը։

Ելավ իր նժույգներով այդ տեղով անցնելու Արծվին։

— Արծվի՛, այդ ի՞նչ էր պատահել,— հարցրեց Աբրահամ պապիկը։

Արծվին ամաչկոտ ժպտաց և կանգ առավ։

— Արծվի, ճի՞շտ է լուրը, արքան վատ հրամա՞ն է ուղարկել,— հարցրեց Հովակիմ դարբինը։

— Վատ,— պար գալով նժույգի հետ՝ պատասխանեց Արծվին ժպտալով,— նիզակներդ սրեք, պատերազմ է։

Ու արագ սլացավ դեպի քաղաքադուռը, մտավ քաղաք։

— Մեր նիզակները սուր են,— ձայն տվին նրա հետևից երիտասարդները։

— Տուններս լավ կշինվի։ Էլի՞ պատերազմ,— խոսեց մի մոայլ ու նիհար շինական։

— Է՛հ, տնաշեն,— ծոր տվեց Աբրահամ պապիկը,— ուր թագավոր — իշխան՝ այնտեղ պատերազմ — արյուն։ Բա ո՞նց։

Ու քահ-քահ ծիծաղեց։ Սրան խեթ կողքանց նայեց ակոռցի շինականը։

— Մի խոսի էդպես, Աբրահամ. պարսիկ է՝ կգա, լուծ կբերի, խստահարկ, ստրկություն, կոտորած։

— Մե՞ր իշխանն ինչով է պակաս,— նրա կողմը արհամարհոտ մրթմրթաց Առաքելը։

— Մա՛րդ աստծո, պարսիկը գայլ է. կընկնի ոչխարի մեջ, լափելուն կլափի, չլափելուն էլ կխեղդոտի, կգցի դեն։ Մեր իշխանը հո աշխարհքն էլ է՝ կպաշտպանի։

— Կպաշտպանի՝ իր աշխարհքը կպաշտպանի,— կոպտեց Առաքելը հեգնոտ։— Աշխարհք իշխանական է։

Աբրահամ պապիկը արագ շրջվեց, խեթ նայեց Առաքելին և խստորեն կշտամբեց.

— Աշխարհք որ իշխանական է՝ դո՞ւ որտեղ ես։ Մեջը մաս չունե՞ս։

— Ինչի՞ չունեմ,— հեգնոտ ասաց Առաքելը և արհամարհանքով ավելացրեց,— իմ աշխարհքին որ հասնի՝ ես կտամ իմ պատասխանը։

— Ի՞ի՞նչ ասեմ ձե՞ե՞զ,— գրգռվեց Եզրասը և ցնցվեց՝ պատռված զգեստի տակից մերկ ուսերը դեսուդեն շրջելով ու ցցե-

լով,— էսքան ժամանակ է խոսում են, չե՞ք հասկանում, որ Հազկերտը հրաման է ուղարկել, թե երկիրը իր ժողովրդով տվեք։

Առաքելը արհամարհոտ աչքերը պտտեցրեց Եզրասի կողմը։

— Ո՞նց թե. երկիրը իր ժողովրդով ծտի բո՞ւն է, բռովդ վերցնես տաս։ Երկիրը ո՞նց կտան,— անկեղծ զարմանքով ասաց Առաքելը։

— Ա՜յ կգա՜կառնի՝ կտեսնես, թե ոնց կտան, օ՞ֆ...

— Ոտներս կառնի...— դարձյալ անկեղծ անհասկացողությամբ ասաց Առաքելը։— Նրան երկիր ո՞վ կտա։

— Նախարարը, ո՛վ։

— Նախարարը՞...— շտկվեց նստած տեղում Առաքելը այնպիսի ընդհատ շարժումով, որ սաստեց բոլորին։— Հարկի տակ ճկուեցինք, քարից հաց հանեցինք՝ տվինք, հիմի էլ երկիրը տանք։ Դրա համա՞ր են հավաքվել նախարար ու հոգևոր։ Բանը չհասնի դրան։

— Հասել է, օտարակա՞ն, հասել է։ է՞... օ՞ֆ,— տնքաց Եզրասը։— Նեղում է անօրենը, նեղն ենք, ճշմարիտ է, խիստ է դրել հավատի պահանջը պարսիկը։

— Աղբեր է խառնում, «հավա՞տը»,— զայրացած գոչեց Առաքելը,— մի հավատի էի՞նք, միշտ էլի երկրի պահանջը չէ՞ր։ Ասա իմ հող աշխարհքն է ուզում պոկի, գլխիս նստի, գերի, ստրուկ շինի։

— Հա՛, հա, թե չէ մի հավա՞տ։ Ես էլ որ հավատ եմ ասում, ի՞նչ հավատ։ Ասա հող աշխարհքը։ Ախր մենք հող աշխարհքն ենք...

— Սպարապետը եկել է, ո՞նց կարող են երկիրը տան,— նրկատեց մի զինվոր։

— Ջեն տա, չէ՞,— խառնաձայն հաստատեցին չորս կողմից,— տա՝ էլի մարդպանը կտա։ Սպարապետը երկիր չի տա։

***

Երբ բազմությունը անհանգիստ մտավ քաղաք՝ արդեն այնտեղ ամեն ինչ իրարանցման մեջ էր։ Բուռն կոչնահարությունը գնալով սաստկանում էր ավելի։ Բնակչությունը դուրս էր թափվել տներից ու անկյուններից։ Ամենքը իրար էին հարցնում, թե ի՞նչ է պատահել։ Ոչ ոք չէր կարողանում ստույգ բան ասել։

Արդեն վերջին օրերի լուրերը, նախարարների ժողովելը մայրաքաղաքում, պարսիկ մեծամեծների այցելությունները մարզպանին, գիշերային խորհրդակցությունները ժողովրդին անհանգստացրել էին մայրաքաղաքում, այստեղից էլ շրջակա շեներում։

Քաղաքի բազմությունը արագորեն սկսեց ուռչել վարարող հեղեղի արագությամբ և հորձանք տվեց դեպի արքունական տունը։ Բազմությունը հասկացավ, որ տաճարում և արքունական տանը կատարվում են ողջ երկրին վերաբերող ինչ-որ դաժան գործեր։ Հազարավոր աչքեր դարձան դեպի արքայական տունը՝ սպասելով, որ այնտեղից մի բան երևա, մի բան հայտնվի։

Հանկարծ արքունական տան դարբասից դուրս ցայտեցին ջահերի ոլործուն բոցերը և մռայլ արյունագույն լույսով պարզեցին հազարավոր գլուխներ ու դեմքեր, որ եռում, վխտում էին համատարած բոլոր փողոցներում։

— Ճանապա՜րհ, ճանապա՜րհ,— գոչեց սուրհանդակը՝ ջլուտ ու արագաշարժ մի երիտասարդ՝ գավազանն օդում շարժելով և օրընթաց կտրելով բազմությունը,— ճանապա՜րհ, նախարարները գալիս են։

Ժողովուրդը ճեղքվեց անկանոն երկշարք և ծանր ճռճվելով ետ ու առաջ՝ հազարավոր աչքերը դարձրեց դեպի արքունական տունը, որտեղից պիտի երևային նախարարները։

— Շապուհի օրերն են, անիծվե՜ն պարսիկները...— լսվեց եռացող բազմության մեջ, երբ նախարարներն երևացին։

Նրանք գալիս էին հետևակ և բոլորը ոչ հանդիսավոր, այլ մտահոգ մռայլ արտահայտություն ունեին։

Առջևից գնում էին Վահան Ամատունին, Ներշապուհ Արծրունին, Վարդան Մամիկոնյանը, Գադիշո Խորխորունին և ապա մյուս իշխանները։ Նրանց հետևից գալիս էին նրանց համհարզները և թիկնապահները։

— Նախնյաց օրենքո՜վ, չտա՜ք,— գոչեց բազմության միջից Աբրահամ պապիկը, երբ նախարարները հավասարվեցին նրան։

— Հիշեցնք Շապուհին,— ձայն տվեց մեկ ուրիշը։

Բազմությունը օրորվեց, տարուբերվեց ու շարժում արեց դեպի նախարարները՝ հետևելու նրանց, բայց զորականները վճռական թափով կրունկները դեմ արին նրանց և արգելեցին։

Բազմությունը, որ մի քանի քայլ էր արել՝ կանգ առավ։ Նախարարները գնացին դեպի տաճարը, որ մի քանի փողոց հեռու էր բազմությունից։ Ծանր լռությունը թանձրանում էր տաճարի կամարների տակ, երբ նախարարները մտան տաճարը։ Ճնշված օդը շարագուշակ մահվան սառնություն բուրեց նրանց դեմքերին։

Կանթեղների աղոտ լույսերը չթափանցելով անկյունների ու խորշերի մռայլը՝ շարագուշակ երանգով ողողում էին վանականների բորբոքված կերպարանքները։ Նրանք խմբվել էին կաթողիկոսի շուրջը, որ նստած էր կաղնե քանդակավոր գահի վրա իբրև մի մռայլ արձան։ Դա մի ոչ շատ հասակավոր, հաղթանդամ անձ էր՝ սև ու խոշոր աչքերի հուժկու հայացքով։ Նա թեև դեղնել էր գիշերային հսկումներից, բայց այդ հայացքում կար և կենսական փիլիսոփայի, և փորձված մարդու խելքն ու հանդարտությունը, և մոլեգին պայքարներում կռվողի խոյանք։

Երբ նախարարները ներս մտան՝ նա գլուխը բարձրացրեց իր ուժեղ ձեռքի մեջ կիսափաթաթ մագաղաթյա թերթերից, որ նա կարդում էր մտահոգ, բայց հանգիստ։ Նրա կողքին, փոքր հեռու սալահատակին՝ փռած օթոցի վրա նստած էր մի բավական ծեր հոգևորական, որ կարճահասակ, պնդակազմ էր կոճղի նման։ Նա ծնկներին դրել էր մի կաղնու տախտակ, որի վրա գամել էր մի լայն մագաղաթի թերթ։ Նա եղեգնյա գրիչը ձեռին խորհում էր, երբեմն խորհրդակցելով իր կողքին նստած երկու այլ հոգևորականների հետ։ Դա Եղնիկ եպիսկոպոսն էր Կողբացի մականունով, որը վարժ էր հունարենի, ասորերենի և պարսկերենի և քաջ գիտեր պարսից զրադաշտական կրոնը, որի դեմ և գրել էր։ Նրա հետ էին երկու անձնավորություններ, որոնցից մեկը Աշտիշատի վանքի այն կրոնավորն էր, որին Վարդան Մամիկոնյանը պատվիրեց անմիջապես մեկնել Արտաշատ, մասնակցել Հաղկերտին ուղղվելիք պատասխան նամակի խմբագրմանը։ Նրա անունը Ղևոնդ Երեց էր, խելացի, կամային մի հոգևորական և մոլեգնած հայրենասեր։ Նրանցից մի փոքր հեռու նստած՝ նրանց երկուսին էլ նայում և լսում էր Աշտիշատի մյուս կիսաշխարհիկ զորական հոգևորականը, որ խոսեց Վարդանի հետ նրա հրաժեշտի ժամանակ։ Դա Եղիշեն էր, վանական եղբայր՝ երազային աչքերով և խանդավառ դեմքով մի հոգևորական, որ ավելի դիտում էր, ապրումներով այրվում, քան խոսում։ Նրա հոգում խոր տպավորվել էին վերջին օրերի դեպքերը, և նա լարված

ու խոովահույզ հետևում էր այդ դեպքերի ընթացքին։ Բայց նա ևս իբրև շատ կարդացած և բանաստեղծ՝ հրավիրված էր Եղնիկ Կողբացու և Ղևոնդ Երեցի հետ շարադրելու արյաց արքայի հրովարտակի պատասխանը։

Մյուսները եպիսկոպոսներ էին, բարձրաստիճան հոգևորականներ, որ եկել էին Այրարատի, Տուրուբերանի, Վասպուրականի, Մոկաց, Սյունյաց, Տայոց և Բարձր Հայոց գավառներից՝ վճռելու ճակատագրական խնդիրը, որը նրանց քաշել, տարել էր կյանքի ծովի խաղաղ ափերից և քշել դեպի արեւլոկծվող հորձանքները, թերևս նավաբեկություն։

Տաճարի խոնավ ու գաղջ օդը ծանրացել էր այնտեղ լցված հոգևորականներով։

Նախարարների մուտքը շարժում առաջ բերեց տաճարում։ Բոլորը ոտքի ելան և ողջունեցին նախարարներին։ Վահան Ամատունին առաջ ընկավ և Վարդանի հետ մոտեցավ կաթողիկոսին, առավաշը և լուռ կանգնեց նրանցից փոքր հեռու։

Տիրեց այն լռությունը, երբ մարդիկ ամենից շատ բան ունեն ասելու, բայց չեն խզում լռությունը, որովհետև զգում են, որ դրան սիտի հետևի բուռն և թերևս շատ անախորժ և տխուր խոսակցության պոռթկումն։

Աթոռիկներ բերին նախարարների համար, և նրանք նստեցին կաթողիկոսի մոտ։

Նրանք՝ հոգևորականությունն ու նախարարությունը, պատճառ ունեին մեծ տագնապի։ Որովհետև հոգևորականության համար եկեղեցական իշխանությունը վտանգված էր թե՛ ձևականորեն և թե՛ էապես։ Հազկերտը ոչնչացնում էր նախ կրոնը, վանքերը, կալվածները, ոչնչացնում էր ժողովրդի գոյության նյութական հիմքերը, որ ընդունել տար կրակապաշտությունը, ձուլեր և ոչնչացներ ամեն դիմադրական գաղափար և ապա ոչնչացներ Հայաստանը իբրև հոգևորականություն, նախարարություն և ժողովուրդ։

Տագնապում էր նաև նախարարությունը։ Նա նույնպես զգում էր, որ հավատքը պատրվակ է, և Հազկերտը միտում է նախարարությունը ոչնչացնել։

Կաթողիկոսը կանգնեց, խաչակնքեց նախարարներին և ապա ներշնչված նայելով Վարդանին, ասաց.

— Հասա՜վ փորձությունը նենգավորի, տեր Մամիկոնեից...

— Փորձությունը եկավ փորձելու ամենքիս, տեր հոգևոր,— պատասխանեց Վարդանը,— եթե թուլահոգի գտնվենք՝ արժանի ենք պատուհասին։

Կրկին լռությունն սկսեց ճնշել, մինչև որ կաթողիկոսը խիստ անհանգիստ նայեց ժողովվածներին։

— Ո՞ւր է մարզպանը, պե՞տք է, որ մենք հրավիրենք նրան,— հարցրեց նա հանդիմանորեն։

— Մարզպանին ո՛չ է անկ մասնակցել այսպիսի ժողովի,— ասաց Գագիշոն անբարյացակամ հայացքը գցելով գետնին։

— Ինչո՞ւ,— հարցրեց մի փոքր զարմանքով Վահան Ամատունին։

— Մարզպանը երկրի իշխանությունն է։

— Իսկ նախարարներս ի՞նչ ենք։

— Մենք իշխանություն ենք մեր աշխարհների, իսկ մարզպանը՝ արյաց արքայի երկրի,— դարձյալ հատակին նայելով, նույն անբարյացակամ, տրամաբանող և ներհակ եղանակով պատասխանեց Գագիշոն։

Դարձյալ լռեցին։

Վահան Ամատունին դարձավ դեպի նախարարները.

— Բարի, տյարք, ինչ էլ որ լինի՝ մարզպանը պիտի գլխավորի մեր պատասխան նամակը։ Արքան նրան է ճանաչում ամենից առաջ։ Որքան էլ որ լռի, վերջը խոսելն է։

Նախարարներից ոչ ոք չպատասխանեց։ Նրանցից ոմանք հոնքերը կիտելով և համառ անթափանցությամբ լսեցին տերության նախկին Հազարապետին, որի ներհակությունը մարզպանի հետ հայտնի էր նրանց։

— Նա մարզպան է, նրա գործն այլ է,— ասաց կարծես այս խոսակցությունից անախորժացած Վահևունյաց Գյուտը։

— Ի՞նչ այլ գործ,— սառը եղանակով դարձավ նրան Վահան Ամատունին,— գործը պարզ է, այո կամ ոչ։

— Ինքդ ասացիր, տեր Ամատունյաց, արքան նրան է ճանաչում ամենից առաջ։ Ասել է՝ նրա գործը դժվար է։

— Նրա գործը մեր գործն է, տեր Վահևունյաց,— վիրավորվեց Վահան Ամատունին։

— Ես ոչինչ չգիտեմ,— անախորժ ծամածռությամբ փակեց այս տրամախոսությունը Գյուտը և նեղացած սպասեց Գագիշոնա-

խարարին, որի գողունի հայացքը ասում էր նրան, որ հետը համաձայն է։

Կաթողիկոսն սկսեց գանգատվել Դենշապուհ պարսիկից, որ ծանրագին տուրքերով խեղդում է վանքերն ու եկեղեցիները, որ ոտնատակ է տալիս եկեղեցին։

Վահան Ամատունին, որին ամենից շատ էին վերաբերում Դենշապուհի բանսարկութիւններն ու հարվածները, դառն ատելությունից՝ միայն լռեց ու ունկնդրեց կաթողիկոսի գանգատներին։

Վարդանը նախազգում էր ինչ-որ անախորժ ընթացք այս բոլորի մեջ։ Տեսնում էր, թե ինչպես է ճնշել նախարարներին արքայի հրովարտակի կտրուկ ձևը, ինչպես դժվարանում են նրանք վճռական խոսք ասել։ Եվ իրոք՝ ահա մոտ երկու ժամ անցավ այն վայրկյանից, որ ինքը եկավ և հանդիպեց նրանց՝ դեռ ոչ ոք նրանցից ինքնաբերաբար ոչինչ չէր խոսել հրովարտակի մասին։ Կարծես իրենց չէր վերաբերում այդ, այլ ուրիշներին, որոնց վճռին էլ սպասում են։

Վարդանը գիտակցում էր, որ այս գործի մեջ պետք է փորձվեր մի ամբողջ ժողովուրդ իր շինականներով, ազատներով, սեպուհներով, նախարարներով և մարզպանով, ինչպես նաև հոգևոր դասով։ Ի՞նչ կասեր հայ ժողովուրդը, երբ օրհասը եկել, կանգնել էր նրա գլխին... Վարդանը զգում էր, որ պետք է գործի անցնել։

Եկավ սուրհանդակը և հայտնեց, որ Վասակ Սյունին հրաժարվում է ժողովին մասնակցելուց։

— Տեր մարզպանը խնդրեց պատասխանը գրելուց հետո նախարարները ներկայացնեն իրեն,— ասաց սուրհանդակը։

— Այն ժամանակ մնացինք մենք ու մեր խիղճը,— ասաց Վարդանը սրտմտությամբ,— սկսեցե՛ք, սրբազան հայրեր։

Կաթողիկոսը վեր կացավ և դառնալով Եզնիկ Կողբացուն՝ ասաց հանդիսավոր ձայնով.

— Վերցրու արքայի հրովարտակը։

Բոլորը ոտքի ելան։

Եզնիկը վերցրեց ձեռքե-ձեռք անցնելուց ոլործուն դարձած հրովարտակը և սպասեց կաթողիկոսին։

— Դարձե՛ք արևմուտ,— հրամայեց կաթողիկոսը։

Բոլորը երեսները դարձրին դեպի արևմուտք։ Կաթողիկոսը դարձավ ժողովականներին.

— Սրբազա՛ն հայրեր, նախարարնե՛ր Հայոց աշխարհի։ Վերջին ժամն է խորհելու և պատասխանը գրելու։ Մի անգամ ևս կարդանք հրովարտակը։ Կարդա՛, սրբազան հայր։

Եզնիկ Կողբացին հնչեղ ձայնով կարդաց.

«Միհրներսեհ վզուրկ[1] հրամանատար Երան և Աներան[2], հայոց մեծաց ողջույն շատ»։

«Գիտցեք, ամեն մարդ, որ բնակվում է երկնքի տակ և չունի օրենքը դենիմազդեզի[3], նա խուլ է և կույր և Հարամանի[4] դևերից խաբված»։

Հրովարտակում գովաբանվում էր զրադաշտական կրոնը, որից հետո գալիս էր բուն մասը, քրիստոնեության ծաղրը. մոլորություն էր համարվում այն, որ քրիստոնյաները հավատում են, որ աստված է ստեղծել բարին ու չարը, ինչպես և մահը։

«Եթե Հոռոմոց աշխարհը (Հունաստանը) իր շատ հիմարության պատճառով մոլորվել է և զրկվել մեր կատարյալ հավատից՝ անձամբ կզգա իր վնասը՝ իսկ դո՞ւք ինչու եք նրա մոլորության հետևից գնում։ Ինչ հավատ որ ունի ձեր տերը՝ դուք էլ նույնը ընդունեցեք»։

Եզնիկը հասավ հրովարտակի վերջավորության.

«Արդ երկու բան կա ձեր առաջ. կամ բառ առ բառ պատասխան տվեք նամակիս, կամ եկեք Դուռը և կանգնեցեք մեծ ատյանի առաջ»։

— Դարձե՛ք աղոթարան,— ասաց կաթողիկոսը։

Բոլորը երեսները դարձրին արևելք։

Ոչ ոք չխոսեց։

Այն ժամանակ կաթողիկոսը դարձավ նախարարներին.

— Ի՞նչ եք խորհում, տյարք։

Լռությունը եղավ պատասխան։ Կաթողիկոսը կրկին դիմեց նախարարներին։

— Մի՞թե աշխարհում չունենք բարեկամ։ Ո՞վ կփրկի մեզ։

— Ոչ, ոք,— լսվեց մի սառնաշունչ պատասխան։

---

[1] Մեծ։

[2] Իրանի և ոչ Իրանի (երկրներ և ժողովուրդներ)։

[3] Զրադաշտականի մազդեզանց կրոնի հավատը։

[4] Արհմն, չար ոգի։

Դա Ապահունյաց Մանեճն էր՝ լռակյաց և մաղձոտ մի նախարար։

Կաթողիկոսը խռովվեց, բայց զսպեց իրեն։

— Կոչ կոչենք հանուր մարդկության, հասնեն օգնության։

— Ո՞ւմ կոչենք կոչ, տեր հոգևոր, հարցրեց Վարդանը մրոայլ։

— Բյուզանդիային, ասորիներին, վրացիներին, աղվաններին...

Վարդանը չպատասխանեց իսկույն։

— Կդիմե՛նք օգնության, դա պետք է, ընդդեմ չեմ։ Կկոչենք արյաց բոլոր թշնամիներին։ Եվ կկոչենք։ Բայց միաբանենք նախ մե՛նք, կոչ կոչենք նախ մե՛զ... Պատրա՞ստ եք միաբանել, դիմագրավել բռնավորին։

— Մենք հոգևորներս պատրաստ ենք դիմագրավելու։ Պատրա՞ստ եք նույնին նաև դուք։

— Պատրաստ ենք,— ասաց Վարդանը։

Կաթողիկոսը դարձավ մյուս նախարարներին.

— Պատրաստ ենք,— լսվեց նաև մյուսների մեծամասնության ձայնը։

— Ես դիտողություն ունեմ,— ասաց Գադիշոն՝ իր սովորության համաձայն աչքերը գցելով հատակին և մռայլ դեմքին տալով անթափանց արտահայտություն,— նամակն ուղղված է «հայոց մեծաց». ինչպե՞ս է նա ընկել հոգևորների ձեռքը և ինչո՞ւ են հոգևորները մասնակցում պատասխանին։

Վրդովմունքի մի ալիք անցավ բոլոր ժողովականների միջով։ Գադիշոյի տված հարցը թվաց սրամիտ և ուժեղ։

— Ինչո՞ւ ես պահանջում, տեր Խորխոռունյաց,— հարցրեց Վահան Ամատունին։

— Որովհետև հրովարտակում ասվում է. «մի հավատաք ձեր առաջնորդներին, որովհետև շատ են խաբեբա. ինչ որ խոսքով ուսուցանում են՝ գործով չեն կարող հանձն առնել»։ Պարզ է, որ դիմումը նախարարներիս է արվում, ընդդեմ հոգևորների։

Կաթողիկոսը հանկարծ ցնցվեց և դարձավ Գադիշոյին.

— Տեր Խորխոռունյաց, հայոց մեծերը բոլոր նրանք են, որոնք այսպիսի մեծ աղետների ժամանակ արյուն են թափել հավատի համար և հիմա էլ պիտի թափեն։

Վահևունյաց իշխանը սուր հաճույք զգաց կաթողիկոսին խոցելու և անկարող զսպել իր կիրքը՝ ասաց հեգնանքով.

— Քանի որ հոգևոր տերը ընդունում է, որ հրովարտակը հոգևոր դասին է հղված և ինչպես որ հնուց հոգևոր դասը միտում է գերազանցել նախարարական իշխանության՝ թող գնա կանգնի Հազկերտի առաջ։

— Իշխա՛նք, տանուտյա՛ր հայոց,— գոչեց դողալով կաթողիկոսը,— մենք չե՛նք տա իշխանությունը հոգևոր։ Մեր արյամբ կպաշտպանենք լուսավորչի ուխտն ու ավանդը։ Չենք տա վանքերն ու կալվածքները։

— Կամքը ձեր, հոգևոր տեր,— ասաց Գյուտը,— գնացեք կրովեցե՛ք։

— Մի խոսի այդպես խտրական ոգով, տեր Վահևունյաց,— խստորեն հանդիմանեց կաթողիկոսը,— կուվին կստիպվի մասնակից լինել նաև նախարարությունը։

— Ի՞նչ ստիպմունք,— չարացավ Գյուտը,— դուք իշխանությո՞ւն եք գործադրում, ուրեմն դուք իշխանությո՞ւն եք։

Բազմությունը խռովվեց։ Անհանգստացած ձայն տվին ամեն կողմից.

— Ինչի՞ երկարացրին. ո՞ւմ հետ են կռվում, պարսի՞կ կա մեջները, ինչի՞ չեն վճռում։

— Իրար հետ միաբան չեն։

— Ինչի՞ն միաբան չեն, դեմ են երկիրը պահելո՞ւն։

Տաճարում վեճը բորբոքվում էր ավելի ու ավելի։

Վարդանը բարձրացրեց ձեռը։

— Թողեք վեճը, հոգևոր տեր և դուք տյարք,— ասաց նա հանդարտ, բայց ներշնչուն շեշտով,— այն ժամանակ, երբ ազգովին կանգնած ենք կենաց-մահու առաջ՝ այլևս չկա ո՛չ «հայոց մեծ», ո՛չ «հայոց փոքր» և՛ նախարարություն, և՛ հոգևորականություն։ Ազգովին պիտի պատասխանենք։ Ավարտենք գործը, կանգնենք մեր հայրենի երկրի պաշտպան՝ և ապա թող ձեր վիճելիքը վիճվի։ Կամովին պարսկանալը չի փրկի մեզ, տյարք... գուցե ծածուկ հուսացողներ կան... Հազկերտը գիտե, որ որքան էլ պարսկանանք, դարձյալ մեր ավանդություններով կմնանք հայ և դարձյալ վտանգավոր կլինենք իրեն և Բյուզանդիայի միջև։ Ահա թե ինչո՛ւ նա պիտի

արտաքսի ու ոչնչացնի մեզ։ Կտա՞նք մեր իշխանությունը, երկիրը, հայրենիքը։

— Չենք տա, Ապարապետ,— պատասխանեցին նախարարները և հոգևորականները։

— Դե ուրեմն, ի մի՛տ առեք, տյարք, որ ազգովին պետք է դուրս գանք պատերազմ, ուրեմն և պետք է միանանք՝ նախարարությունը, հոգևորականությունը, ժողովուրդը։ Պետք է ազգովին զինվորագրվենք։

— Ճշմարի՛տ ասված,— գոչեցին մի քանի նախարարներ ներշնչված Վարդանի այս խոսքերից և ամենից ավելի ցասումնած ժողովրդի արտակարգ հուզումից, որի ձայնը հասնում էր ներս։

— Թող ոչ ոք մեզ այստեղ չբռնադատի,— վճռականորեն հայտարարեց Գյուտը,— մենք չենք գնա եկեղեցու հետ վտանգելու մեր իշխանությունը։

— Տեր Վահևունյաց,— դիմեց Գյուտին Վարդանը,— մի՞թե դուք համաձայն ես ընդունել ուրացությունը։

— Տեր Մամիկոնեից, ես չեմ պնդում, որ ընդունենք ուրացությունը, սակայն եթե մի պահ կարծենք ընդունենք՝ մի՞թե չենք մնա նույն նախարարը, տերը չե՞նք լինի մեր տիրագլուխ ազատության։ Ի՞նչ երկյուղ։

Բոլորը արագ շարժվեցին նրա կողմը։ Վարդանը անհաշտ խոշոր աչքերը լայն բացեց նրա վրա։

— Նախարա՞ր, տիրագլո՞ւխ, ազատությո՞ւն։ Վերջ նախարարական տիրապետության։ Ահա թե ինչ է կամենում նա։ Ոչնչացրեց թագավորությունը, ոչնչացնում է և նախարարությունը։ Հավատուրացությամբ կամենում է մեր տակից հանել մեր հիմքը— ռամիկը։ Կամենում է իրավազրկել, ընչազրկել, դարձնել անաշխարհ, ցրել, մտցնել մեզ պատերազմներում օտարության մեջ, այլևս ի՞նչ նախարար և տիրագլուխ ազատություն։ Ցնորք և բանդագուշանք։

Բոլորը ճնշվեցին՝ զգալով, որ Վարդանը թերևս ճշմարիտ էր։ Վարդանը շարունակեց.

— Ոչ մի զիջում։ Բոլորս կկործանվենք՝ եթե չմիանանք։ Անուցեք այս և խելամուտ եղեք։ Եվ զգուշացնում եմ քեզ, տեր Վահևունյաց, ոչ ոքիս չի տված իրավասություն խոսել բոլոր նախարարների բերանից։

— Ճշմարի՛տ, անտարակո՛ւյս,— ասացին Հազարապետը, Արտակ Մոկացը, Ատոմը և Արշավիրը։

Սակայն Վարդանի դեմ կանգնել էր նախարարների մի կողմի ներհակությունը, և որ ամենից զարմանալին էր՝ նաև կարծես Ներշապուհ Արծրունին, երկրի կարևոր և առաջնակարգ նախարարը, և ուրիշները, որոնց քար լռությունը կաշկանդում էր ամեն բան։ Ահեղ արհավիրքին, երբ արյան պես անհրաժեշտ էր միաձույլ միաբանություն՝ ծայր էր առնում գժտությունը, երկպառակությունը, դուռ բացում դավաճանության, խռովությունների և կռիվների, դեպի կործանում տանելու երկիրը։

Այնժամ առաջ եկավ Վարդանը և վճռական ձայնով դիմեց Գյուտին.

— Բավ է, ասացեք ի՞նչ է ձեր վերջնական պատասխանը, տեր Վահևունյաց։

Գյուտը գունատվեց։ Նրա աչքերը պսպղացին.

— Քանի որ հոգևոր դասը հնուց իսկ միտում է գերազանցել նախարարական իշխանության, թող այս ճգնաժամին ևս ինքը կանգնի Հազկերտի առաջ։ Ամենևին արյուն չունենք թափելու հոգևորականության համար և կռիվ չունենք արքայի դեմ։

— Եվ մենք անձամբ կտանք մեր պատասխանը Տիզբոն, իրեն արքային,— ասաց Գադիշոն։

— Իսկ երկրին, տյա՛ռք նախարարք, չե՞ք կանգնի պաշտպան,— հարց տվեց Ղևոնդ Երեցը առաջ գալով։

Գյուտը զայրացավ.

— Ի՞նչ, դատ ու դատաստա՞ն ես կանգնում մեր խղճի դեմ, քահանա՛դ ողորմելի։

— Մահու սարսուռն է կարկամեցրել ձեզ, անզգայության մրջուրը պատել ձեր հոգուն,— գոչեց Ղևոնդ Երեցը,— շրջում եք իբրև լուսնոտներ և չեք տեսնում, խոսում եք և չեք խորհում։ Ի՞նչ է պահանջում մեզնից դժոխքի հոգին, չարության վահանը, սատանայի գործիքը...

— Զգո՛ւյշ, տեր հայր,— ասաց Գյուտը սպառնալի ձայնով։

— ...Սանդարամե՛տը դժոխոց,— բարձրագոչ ընդհատեց գյուտին Ղևոնդ Երեցը,— մի՞թե երկյուղ կունենամ նրանից, մի՞թե կլռեմ, կհնազանդվե՞մ, երբ նա պահանջում է հանգցնել լույսը և գրկել խավարը։

— ...Եվ ի՞նչ, երևի դու կհանդգնես արյաց արքայի՞ն կանգնել դիմադարձ...

— Տե՛ր Վահևունյաց, եթե բռնակալների մի ողջ զորագունդ անգամ գա իմ դեմ՝ դարձյալ կկանգնեմ դիմադարձ։

— Դու հանդգնո՞ւմ ես, ապստա՛մբդ զքեզ,— խստորեն հարցրեց Գյուտը։

— Ես ապստամբ եմ և չեմ կույր ու անիմա,— ներհակ ձայնով պատասխանեց Ղևոնդ Երեցը։

Զարագույժ լռությունը ձաղկեց ամեն ձայն։ Ամենքն սպասում էին, որ հիմա-հիմա կզրնգան սրի հարվածները։ Բայց ներսն սկսվել էր մի անօրինակ հոգեմարտ մի բռնակալ նախարարի, որ չար համառությամբ ձգտում էր ճնշել մի խիզախ քահանայի, որ ինքն էր առաջ ընկնում անլուր համարձակությամբ մինչև սարսափ ազդելը։ Բազմությունը ուժեղ մղվեց դեպի տաճարը՝ սաստիկ զարմացած՝ նախարարի և քահանայի այս անպատշաճ, խիստ ընդհարումից։ Ջտեսնված, չլսված դեպք, որ միայն կարելի էր հասկանալ Ղևոնդ Երեցի զինվորյալ գրվելու վճռով այդ պահին։

— Դո՛ւրս,— հրամայեց Գյուտը բարձրագոչ։

— Ի՞նչ են անում, ի՞նչ են անում...— մոմոաց բազմությունը դրսում։

— Դո՛ւրս,— կրկնեց կատաղած Գյուտը։

— Տե՛ր Վահևունյաց,— լսվեց Վարդանի խրոխտ ձայնը։

— Տե՛ր Վահևունյաց,— հետևեցին այլ ձայներ։

Բազմությունը լարվեց.

— Տեսե՛ք, տեսե՛ք, ինչ են անում...

— Քահանայի՞ն, քահանայի՞ն...

Բոլորը սասանած, ապշահար նայեցին տաճարի դռանը, որտեղից դուրս լողաց Ղևոնդ Երեցի զայրալից կերպարանքը։ Նրան դուրս էին բերում Գյուտի թիկնապահները։ Նրա բռունցքը օդի մեջ դուրս էր գալիս դողահար ու այլակերպ։

— Հրավե՛ր կարդա արքունի զորքին,— լսվեց տաճարից կաթողիկոսի զայրալի հրամանը։

Է՛, է՛, է՛... ժողովո՛ւրդ, արքունի զորք են կանչում, բանն ո՞ւր հասավ...

Լսվեց, թե ինչպես նախարարները խառնաձայն իրար անցան։

— Հարկ չէ՛, հոգևոր տե՛ր, խստագի՛ն է, անցի՛ր...

Բազմությունը բազմագլուխ, թանձր, անխոս, անցուդարձին կարծես անմասնակից՝ շարունակական, ծանր աննկատելի մղումով շարժվում էր, ճնշում դեպի այն կողմը, ուր տեղի էր ունենում այս վիճաբանությունը, դեպի տաճարը և ոչքան իր զանազան հատվածները նույնպես աննկատելի ետ էին մղում այդ զանգվածին, պաշտպանվում նրա ճնշումից՝ այնուամենայնիվ զանգվածը չէր դադարեցնում իր ընդհանուր, շարունակական, խեղդող և իրեն ենթարկող անգիմադրելի ճնշումը։

Կոչը ցնցեց բոլորին՝ նախարարներին, հոգևորականներին, բազմությանը։ Դա ծայրահեղ արտակարգ վտանգի նշան էր։ Առանձին, նվիրապետական, չգրված օրենքով զորքը, աստիճանական կարգում բարձր էր հիշվում նախարարներից և ենթարկվում էր կաթողիկոսին ծայրահեղ դեպքերում։

Ղևոնդ Երեցը, որին դուրս էին վռնդել տաճարից, ճեղքեց բազմությունը և առաջ գալով ձայնեց բարձր.

— Ժողովո՞ւրդ հայոց, կոչ կոչեցեք զորքին արքունի, թող կանգնի պաշտպան աշխարհին. իշխանները մերժում են պաշտպանել...

Իսկույն ամեն կողմից բազմությունը ճեղքելով մեջտեղ խուժեցին զինվորների հոծ խմբեր, պատրաստ կատարելու այս կոչի թելադրանքը։ Միաժամ բազմությունը ալիք տվեց և կծիկ-կծիկ քանդվելով ճանապարհ բացեց մի սևավոր հոսանքի, որ լցվեց ու հորձեց դեպի եկեղեցին։ Դա եկեղեցականների մռայլ ու մոլեկան զանգվածն էր Սյունյաց վանահայր Գրիգորիսի և ծեր վանականի գլխավորությամբ։ Նրանք խաչեր ունեին ձեռքներին, որ բարձր բրոնած սպառնագին գրոհեցին դեպի տաճարը։

Միաբանությունը ձախողվեց, երկպառակությունն ընկավ։ Գյուտը հայտարարեց.

— Գործեցե՛ք արքունի զորքի հետ ընդդեմ արքային, մենք մասնակից չենք խռովության։

— Դուք դավաճանություն եք սերմանում արհավիրքի ժամին,— գնաց դեպի նրանց Վարդանը,— դուք պատասխանատո՛ւ եք երկրի առաջ. ուշաբերվեցե՛ք...

— Մենք գիմադրության պատասխան չենք տա,— գոչեց Գյուտը և իր համախոհներով ուղղվեց դեպի տաճարի ելքը և կանգնեց դռան մեջ։

Բազմությունը թեռվահուզ առաջ եկավ։

— Ի՞նչ եղավ, ի՞նչ արին, վճի՞ռ տվին...։

— Ի՞նչ, չեն կարողանում պատասխան գտնեն, սուր բարձրացնեն դեմ բռնավորի՞ն,— ձայն տվեց Առաքելը բարկացած։

— Արտավազդը դո՞ւրս եկավ վիհից, վե՞ռ բռ Հայոց աշխարհքին,— կոնչաց Եզրասը ժանգոտ ու չարագույժ։

Հազարավոր դեմքեր շրջվեցին նրա կողմը։

Սպառնալից մի լռություն կրկին սաստեց բազմությանը։ Սև նախազգացումը պաշարեց նրան. նա այնպես զգաց, որ ահա կործանվում է մի ինչ-որ շատ ավելի մեծ բան, վերջնական հիմնական բան, աշխարհի հաստատությունը, և իր ոտի տակից խորտակված անդունդն է գահավեժ գնում այն աշխարհը, որի վրա նա, բազմությունը, գոյացել է և անխախտ հաստատ ապրել կյանքի ստեղծումից մինչև օրս, և ահա այդ աշխարհի վերջն է, աշխարհների ոչնչացման սարսափը...։

— Հայոց աշխարհքի վե՞ռջն է, փրկեցե՞ք,— լսվեց ամենի կողմից։

— Ի՞նչ Հայոց աշխարհքին վերջ, ինչե՞ր եք դուրս տալիս,— բարկացավ Առաքելը։

— Տվի՞ն Հայոց աշխարհքը Հազկերտին, տվին հող հայրենին,— ձայնեցին նրան։

— Ո՞նց թե տվին, ո՞նց թե տվին,— մոնչաց ու բազմությանը հարու տալով ճեղքեց, առաջ եկավ Առաքելը, շար նայեց շորս կողմ,— ո՞վ տվեց, էս սևավորնե՞րը, նախարարնե՞րը...։

Եվ շարժում արեց.

— Գնանք տեսնենք ո՞վ, ո՞ւմ աշխարհքն են առնում-ծախում։

— Ե՛ռ կաց, խելքդ տե՞ղն է, սրի կբաշեն,— ընդդիմացավ մեկը կռոքի կանգնածներից։

— Սրի՞,— գոչեցավ Առաքելը,— որ մեր հող հայրենի՞ն ենք պաշտպանում։ Որ հող հայրենին տվին՝ էլ ա՞հն ինչ, մա՞հն ինչ։— Եվ հանկարծ այլայլվեց, ցատկեց մի քարի վրա և դարձավ բազմության,— լսի՛ր, ժողովո՛ւրդ, մեր գործի համար ուրիշները չեն վեր կենա։ Հող հայրենի՞ եք։

— Հող հայրենի՛ ենք,— լսվեցին հազ ու սալաթ ձայներ։

— Թե հող հայրենի եք՝ սա հող հայրենիի կոխին է։ Դե, ե՛ս գոլեսում եմ պինվորաց, ասենա գնում գործի՛ն, ուրիշ էլ ո՞վ է, եկե՛ք

զինվորյալ հող հայրենիի սիրուն,— գոչեց ու արագ գնաց դեպի տաճարը։

— Զինվորյալ, հող հայրենիի սիրուն, ելե՛ք,—արձագանքեցին ստվարաձայն ամեն կողմից։

— Հայոց աշխարհքի վե՛րջն է, փրկեցե՛ք Հայոց աշխարհը,— գոչեց Զարեհը։ Բազմությունը օրորվեց, տարուբերվեց, ճնշեց և տեղահանվելով գնաց թանձր ու ծանր։ Խառնված գնացին Վարաժը, Եզրասը, Մարկոսը, Գոռնակ Սիմավոնը, Մարտիրոսը, Հովակիմ դարբինը, Աբրահամ պապիկը, փախստական շինականները, քաղաքի արհեստավորները, զինվորները։

— Առաջացե՛ք, առաջացե՛ք,— գոչեցին ամեն կողմից, ուժգրնորեն մղվելով առաջ։

— Մի՛, մի՛, թողե՛ք, մի՛ քշեք...— ճգնեցին ոմանք կանգ առնել, պահել հետևից ճնշող զանգվածին։

Բազմությունը չլսեց նրանց, մղվեց ավելի մեծ թափով և հոսեց գնաց դեպի տաճարը, ճնշելով համառ, սպառնալի, անդիմադրելի ուժով։

Մի կատաղի սեպուհ նետվեց դեպի Առաքելը, բայց սա այնպես հրեց նրան, և հետևող բազմությունն էլ այնպես ողողեց նրան, որ նա կորավ հորձանքի մեջ, քշվեց գնաց հետը։

Բազմության սպառնալի որոտը անհանգստացրեց տաճարում գտնվողներին։ Այնտեղ նոր հասկացան, որ տաճարի վրա է գալիս մի աղետաբեր զանգված։

— Ի՞նչ է... խուժո՞ւմ են,— անհանգստացավ Գյուտը Գադիշոյին դիմելով։

Գադիշոն մռայլ խեթեց իրեն մռայլ նայող Վարդանին և դառնաժպիտ շրջվեց դռան կողմը։ Գյուտը իրեն չզսպեց, գնաց դեպի դուռը։ Բայց նրա առջև բացվեց մի շատ ավելի ահավոր և սպառնալի պատկեր, քան տեսել էր նա երբևէ իր կյանքում։

Մռայլ վճռականությամբ, համառությամբ, ուժով և անհանգիստ թափով առաջ էր մղվում Սահակ շինականը, ճանապարհ բացելով իր հետևից մղվողների համար. Առաքելի, Աբրահամ պապիկի, Հովակիմ դարբինի, Եզրասի, Վարաժի, Մարկոսի, հեթանոս-քրիստոնյաների... և շարքերը քանդելով առաջանում էր բազմությունը։ Եվ այս խուժողների առաջինները, հետզհետե մոտեցան տաճարի դռան, ուր զինվորներն ու թիկնապահները նիզակները

ցցեցին դեպի նրանց։ Նրանք ներս նայեցին ու մի պահ քարացան իշխանների և հոգևորականների սաստող հայացքների դեմ։

— Քշեցե՛ք ամբոխը,— զայրագին հրամայեց ինքն իրենից զուրս եկած Գյուտը թիկնապահներին և դռան պահակ զինվորներին։

Զինվորներն ու թիկնապահները նախարարներից երկյուղ կրելով, բուռն թափով հարձակվեցին առաջացող բազմության վրա.

— Ե՛տ տվեք, ե՛տ,— զայրալի գոռացին նրանք և ճիգ արին արգելել նրանց մոտենալ դռան։

Զինվորները կանգ առան մի պահ։ Եվ այս վճռական պահին բազմությունը ևս մի վայրկյան սասանեց, կարծես ուշաբերվելով։

— Կա՛նգ առեք, ե՛տ, ե՛տ,— լսվեցին ճնշված մարդկանց ճիչեր, և մարդիկ շարժում արին ետ տալ հորձանքը։ Ոչինչ չօգնեց։ Հորձանքը ճնշեց և արգելող զինվորների դեմ բարձրացավ Առաքելը, որ անասելի ուժով թափահարեց բազմությունը և սլացիկ վազքով հարձակվեց տաճարի դռան վրա։ Իսկույն բազմությունը խլեց շարժումը և հետևից խիստ ու թանձր գրոհեց։

Տաճարում գտնվածները իրենց տեսան՝ ողջ տաճարով՝ դրսից և ներսից շրջապատված, շղթայաղերծ մի զանգվածով, որի անդուլ, անբառ, հզոր մոլտոցը կաթվածում էր ամեն միտք ու կամք և հետզհետե ուժեղանալով դառնում աղոթքի, բողոքի, ցասման որոշ-անորոշ, գիտակից-բնազդական հսկայական մի մռնչյուն վերահաս արհավիրքի դեմ։

— Ինչպե՞ս հանդգնեցիք խուժել տաճար,— զայրույթով հարց տվեց բազմությանը Գյուտը, խլացնելու համար նաև իր ակամա երկյուղը։

«Զինվորյալ, հող-աշխարհքի սիրո՞ւն»,— այս խոսքն էր միայն, որով բազմությունը լուծեց անլուծելին՝ թագավորների, մարզպանների, իշխանների դեմ խոսելու իրավունքի առեղծվածը, հնարավորությունը։ Նա զգաց, որ այդ խոսքերով միայն կարող է մի այդպիսի հանդգնության գնալ՝ պահանջել այս աշխարհի մեծերին՝ պաշտպանել երկիրը թշնամուց, նրա հարկահաններից, նրա ստրկությունից։ Դա նրա ցասման, դիմադրության պահանջի խոսքն էր։

«Զինվորյալ, հող-աշխարհքի սիրո՞ւն»,— գոչելով մի գերագույն վայրկյանում նա հանկարծ ստեղծեց, գտավ իրեն։ Զանգվածային

թափով հարվածեց, խառնեց իր հետ Ղևոնդ Երեցին, զինվորներին, վանականներին և խուժեց ներս։

Վարդանը, որ ոչ առանց անհանգստության դիտեց ծառացած բազմության խուժումը, և որին դիպավ այս իշխանազանցությունը, միաժամ հին զորականի ներհայեցողությամբ հասու եղավ այս խուժման իմաստին։ Եվ գնահատեց այն։ Նա առաջ գնաց մի քանի քայլ և դիմեց բազմության մեջ ողողված սեպուհներին և նախարարների թիկնապահներին.

— Հանգի՛ստ թողեք ժողովրդին։

Եվ խստորեն նայեց Գյուտին։ Սեպուհները ու թիկնապահները ետ քաշվեցին։

Հետո նա դիմեց բազմության, որ առաջ եկավ։

— Ինչո՞ւ եք խռովվել, եղբայրնե՛ր։

Առաքելն առաջ եկավ և խոժոռ աչքերը գետնին՝ ասաց.

— Եկել ենք իմանալու, Սպարապետ, ի՞նչ պատասխան եք տալու Հազկերտին։ Ահա ասում ենք. ինչ պատասխան կտաք՝ ձեր գործն է, մենք զինվորյալ ենք, կկռվենք ու երկիրը չենք տա, ճշմարի՛տ ասված։

— Մե՛նք ևս զինվորյալ ենք, չենք տա, շինական եղբայր, ասվա՛ծ ճշմարիտ,— հանկարծ այլայլվելով ասաց Վարդանը և եքեսը խաչակնքեց։

Բազմությունը հետևեց նրան։

«Զինվորյա՛լ»— Գադիշոն և Գյուտը մեծ տագնապով լսեցին այս խոսքը։

Ու մինչ Գյուտը կանգ առավ այլայլված՝ Առաքելը ավելի առաջ եկավ։

— Ողջ ժողովրդով մեզ համարեք զինվորյա՛լ. երկիրը չենք տալիս ու էսպես էլ կպատասխանենք արքային,— հատու սրի պես կտրեց Առաքելը։

— Զինվորյալ ենք,— խառնաձայն որոտաց հափշտակված բազմությունը։ Մթնոլորտը կրակվեց։ Մարդիկ այլակերպվեցին։ Կարծես աշխարհի հաստատությունը խորտակվեց վերից վար։ Ռամիկը բարձրացավ, ջնջեց իշխանի ու ռամիկի դարավոր կարգը, հավասարվեց կարծես դառնալով մի անդիմադրելի ուժ, և դա նախարարների համար ամենից անախորժն ու սոսկալին էր, հակառակն ու անընդունելին, որ անսպասելիորեն, հանկարծ պատահեց ինչ-

պես երկրաշարժ, ջրհեղեղ, հրաբուխ։ Նախարարներից Վասակի կողմնակիցները կատաղեցին և միմիայն մահու վտանգից, մեծագույն դժվարությամբ հանդուրժեցին այդ նվաստացումը։ Ոչ պակաս խորթ ու անախորժ եղավ այս վիճակը նաև Վարդանի կողմնակիցներին, բայց նրանք զգացին, որ ուրիշ ելք չկար, որ սկսվեց աննախընթաց, չտեսնված մի դրություն, որ անխուսափելի էր և գոնե միայն իրենց երկրի և իշխանության փրկության համար ըստիպվեցին տանել ու լռել։

Ահավոր լռությունը տիրեց չորս կողմ։

— Հանո՜ւն սուրբ երկրի,— կրկին գոչեց Զարեհը։

— Հանո՜ւն սուրբ երկրի,— որոտաց սարսափով և ցասումով բազմությունը՝ կարծես իր առջև տեսնում էր այդ երկրի կործանումը և ճգնում էր ժամ առաջ կանխել վտանգը։

Տաճարում եղողների դեմ կանգնեց բյուր դեմքերի մի զանգված,— Զարեհը՝ աչքերում պղտորված մոլեռանդության մշուշ, այտերը ջղաձալար ցնցումներով այլակերպ, Սահակը կատաղի, լուռ հանդգնությամբ ամենից առաջ կանգնած և ամենից սպառնալի։ Նրա հայացքը Գյուտին ճնշեց։ Սարսափ ազդեց մինչև այդ հնազանդ բազմությունը, որ ինքն իրենով քաջալերված, ինքն իրենով մղված, ինքն իրենից դուրս եկած, կյանքի, ապրելու բնազդով բռնված, պատրաստ էր ոչնչացնել իշխանություն, հավատ, եկեղեցի, օրենք։

— Դո՛ւրս, դո՛ւրս, ո՞ւր եք քշում, ապիրատնե՛ր,— զայրացավ Գյուտը նրանց վրա։

Առաքելը, որին ուղղված էին հազարավոր աչքեր, առաջ եկավ։

— Եկել ենք կանգնենք երկրին պաշտպան։

— Համարձակվում ես խոսել իշխանի հե՞տ, ռամի՛կդ զքեզ,— այլայլված խայթեց Առաքելին Գյուտը և հրամայեց զինվորներին,— տարե՛ք սրան։

— Իշխա՞ն,— առաջ եկավ Առաքելը,— այ, վերևն աստված, ներքև ժողովուրդը, զինվորյալ եմ, անձս դրել եմ հող աշխարհքի սիրուն, ինձ էլ չկա ահ ու մահ...

«Զինվորյա՜լ»... Դա ինքնակամ ուխտ էր՝ կանգնել ի մահ թշնամու դեմ, նրան անպատճառ հաղթելու վճռով, հաշվի չառնելով ո՛չ նրա ուժը, ո՛չ դիմադրությունը, ո՛չ այդ կռվում իր անձի վրտանգը, ո՛չ մահը, և կոխելով անցնելով մահը՝ նա այլևս անսանձ

էր, հանդուգն, ահավոր, նա արդեն իրենից դեն էր շպրտում երկյուղ, անհամարձակություն, չէր ենթարկվում ո՛չ իշխանի, ո՛չ արքայի, կանգնում էր ի մահ նրանց դիմաց, խոսում էր բացեիբաց ճշմարտությունը, խարազանում ամեն անիրավություն, բռնություն։ Նրան հակաճառելը, բռնադատելը, անգամ ոչնչացնելը օգուտ չուներ. նա կռվում էր մինչև հաղթանակ։ Իսկ զինվորագրվում էր նա՛ միայն, ով հաստատ վճռում էր պաշտպանել արդարությունն ու ճշմարտությունը՝ ընդդեմ անիրավության և բռնության։ Զարաշահել իր զինվորագրման իրավունքը ոչ ոք չէր համարձակվի, քանի որ զինվորագրվում էր անշուշտ միմիայն իր մեջ մի վեհ և սուրբ վճիռ կայացնողը, մեծ գործին նվիրվածը։

Վարդանը բարձրացավ բեմի աստիճանի վրա և ձեռը մեկնեց դեպի բազմությունը։ Բազմությունը շունչն իրեն պահեց։

— Տյա՛րք և հա՛րք, ժողովո՛ւրդ հայոց։ Կանգնած ենք արյաց ահեղ զորության առաջ։ Բռնավորը բնաջնջման սուրն է մեկնում մեր աշխարհին։ Հավատքի պատրվակով միտում է մեր ինքնագլխության, մեր աշխարհին, մեր ազատության։ Պատրա՞ստ եք կռվելու, պաշտպանելու հայրենիքը։

— Պատրա՛ստ ենք...

Միաբերան ձայնեց բազմությունը։

— Պատրաստ ենք և մենք,— գոչեց Արտակը։

— Եվ մե՛նք,— կրկնեց Ատոմը։

Նրանց միացան Արշավիրը, անգամ Ներշապուհ Արծրունին, որ հանկարծ ներշնչվեց բոպեի լրջությամբ։

Մյուսները՝ թե կողմնակից և թե հակառակ՝ հավանության նշաններ արին։

— Շատ խորհեցինք, շատ վիճեցինք։ Ջանք արինք գտնել արքայի համար խաղաղության խոսք։ Սակայն խաղաղության խոսքը բռնավորի համար հնազանդությունն է, դավաճանությունն է։ Ձենք հնազանդի բռնավորին։ Մերժում ենք։ Հա՞րկ կլինի կռվել՝ կկռվենք։ Եվ աստված մեզ օգնակա՛ն։

— Օգնական աստվա՛ծ,— թնդաց բազմությունը։

Վարդանը շարունակեց.

— Մեր նախնիները մեզ կտակեցին հայրենիք և ազգ։ Արյամբ պաշտպանեցին նրանք մեր ազատությունը, հայրենիքը և մեզ հրաման թողին անբասիր պահել այդ սրբությունները։ Պաշտպա-

նե՛նք մեզ կտակած գանձերը։ Մեռնենք՝ չտանք թշնամուն ոչինչ։

— Կմեռնե՛նք, չե՛նք տա,— թնդաց բազմության թանձր, զանգվածային ձայնը։ Քրտնքի հոտը, բազմության ծանր շնչառությունը, նրա հազարավոր աչքերի ուժը ճնշում էր ամեն հակառակություն, ամեն ներհակ միտք։ Ցնդեցին խոսքն ու հակաճառությունը, մեքենայությունն ու բանսարկու ձևերը։ Երկիրը շարժվեց անդիմադրելի ու անդառնալի։

Վարդանը զգաց, որ ժամը հնչեց։ Այլևս հապաղելը վտանգավոր էր։

— Եղբայրնե՛ր,— բարձրացրեց նա ձայնը,— հրովարտակը պատասխան է պահանջում. տանք մեզ արժանի պատասխանը։

— Ճշմարիտ է. տանք պատասխանը...— գոչեցին Արտակը, Ատոմը, Արշավիր Արշարունին, Վահան Ամատունին։

Իշխաններից մյուսները ևս հավանության նշաններ տվին։ Միայն Գադիշոն բազմանշանակ նայեց Գյուտին, Արտակ Ռշտունուն։

— Տե՛ր հոգևոր,— դիմեց Վարդանը կաթողիկոսին,— այլևս ժամ է։

— Ժամ է։ Թող սրբությունն ու խիղճը իմաստություն տան մեզ,— գոչեց կաթողիկոսը,— գրե՛նք...։

Ամբողջ տաճարի բազմությունը՝ հոգևորները, ժողովուրդը և զորքը ալեկոծվեցին, հազարավոր գլուխներ բարձրացան։

Երբ վերջապես ալեկոծումն ու մոլտոցը դադարեց՝ կաթողիկոսը դարձավ դեպի Եզնիկ Կողբացին, Ղևոնդ Երեցը ու Եղիշեն։

— Տեր Եզնիկ և տեր Ղևոնդ և եղբայր Եղիշե։ Գրեցեք։ Մերժեցեք մազդեզանց կրոնը։ Աստված և ժողովուրդն հայոց զորավիգ ձեզ։

— Ամե՛ն, ամե՛ն, ամե՛ն,— լսվեց բազմության քաջալերիչ խոսքի զանգվածային ձայնը։

Ապա հանկարծ լռությունը սրի պես կտրեց մոլտոցն ու շարժումների խուլ հոսանքը։

Տիրեց այն հանդստությունը, որ հատուկ է մարդկանց, երբ նրանք անցնում են մահվան գիծը՝ հեղեղի կատաղած հորձանքի միջով, գազանի երախի առջևից, թշնամու սրերի արանքով։ Ամենալարված վայրկյանը, որ միաժամ և ամենահանգիստն է։ Մի պահ ևս, և արդեն անց ես կացել, այլևս ո՛ւշ է վերադարձը, այլևս

«Կատարվա՛ծ է»։ Հայրն, պայքարի, քաջության մի նոր ալիք եկավ անցավ ժողովականների և ժողովրդի մեջ։ Լսվեցին թեթևացող սրտերի հառաչանքներ։ Սկսեցին շշնջալ, խոսել իրար հետ, ժպտալ...։ Բոլորն զգացին, որ ուխտի հանդես կատարվեց, և իրենք ուխտեցին, միաբանեցին։ Այս ուխտի և միաբանության զգացումն այնքան ուժեղ տիրեց բոլորին, այնքան վառ շողաց ամենքի հայացքների մեջ, որ ներհակ և դիմադիր խոսքի, արտահայտության ոչ մի հնար չմնաց։ Գլուխը կախեց Գադիշոն, և սա իր հերթին ազդեց նրա արբանյակներին։ Նրանք ևս գլխահակ լռեցին՝ սպասելով, թե ինչպես կծավալվի այս աղետը, որի հետևանքները, թերևս տարբեր, պիտի վերաբերի նաև իրենց։ Ու մինչ այս լարված սպասողության մեջ ամեն մեկն ապրում էր իր ոգևորության կամ թուլահոգության հուզումը՝ երեք գրիչներ, երեք տարբեր մտքի ու խառնվածքի մարդիկ, ծալապատիկ նստած քարե հատակին, տախտակները ծնկներին, մագաղաթի վրա սևագրում էին պատասխանի բնագիրը։

Վերջապես, Եղնիկը, որ ամենից սթափն էր և մտքի հոսանքների մեջ իշխում էր իր հուզումներին՝ նշան արեց Ղևոնդ Երեցին և Սղիշեին, որ ժամն է միացնելու նյութը և խմբագրելու։ Նա առավ նրանցից նրանց շարահյուսությունը, կարդաց և ցուցումներ անելով խմբագրեց, կարդաց նրանց մի անգամ ևս ապա վեր կացավ և հայտնեց, որ պատասխանը պատրաստ է։

Բոլորը շարժվեցին և ապա լարված սպասեցին։

— Կարդա՛,— հրամայեց կաթողիկոսը Ղևոնդ Երեցին։

Ղևոնդ Երեցը վերցնելով պատասխանը՝ խրոխտ ձայնով ոգեց.

«Հավատի կաթողիկոսը մեծամեծներից մինչև փոքրերը միաբանյալներովս հանդերձ, մեծ Հազարապետիդ արյաց և անարյաց։ Միհրներսեհիդ, շատ խոստաստեր մտքով ողջույն է հղում ամենամեծ Սպարապետիդ արյաց»։

Սա պատշաճ էր, որ սեփական արժանապատվության համար իսկ պահպանել էր Եղնիկ Կողբացին։

Ապա պատասխանն արծարծում էր քրիստոնեական կրոնի լուսավորությունը, որ կատարել էր Եղնիկը ոչ միայն կատարյալ համոզմունքներով, այլև բարձր փիլիսոփայական տրամաբանությամբ։ Նա բացատրում էր աշխարհը իրև նյութերի մի բազմություն, որոնց ղեկավարում էր մեծ և ամենազոր մի ուժ։

Ինքնդրելով նրան՝ ժողովականները կարծես առաջին անգամ զգացին բարձր մտքի հմայքը։ Այստեղ Եզնիկը վիճում էր Միհրներսեհի հետ, որին արյաց երկրում փոչում էին Հերպետան Հերպետ, այսինքն՝ օրինագրքերի մեջ հմուտ, վարպետ։ Դիտմամբ ատոտոխանի մեջ Եզնիկը նրան ասում էր. «Եթե մի փոքր մի կողմ նետեիր քո իշխանության փքել մեծացնելը և ընկերաբար պայքար մտնեիր, գիտեմ, որ ուրիշ անգամ ամեն բանով դու շատ խմաստուն ես»։

Արտակը, որ Ատոմի հետ կանգնել էր բավական հեռու՝ լսելիքը սրեց և սկսեց մտածել ընթերցվածի մասին։ Ղևոնդ Երեցը կարդաց։ «Աշխարհս նյութեղեն է, և նյութերը տարբեր-տարբեր և իրարու հետ հակադրակ. մեկ է այս հակադրակորդների ստեղծողը, որ սրանց իրար է բերում, սիրելությամբ հաշտեցնում։ Մեղմացնում է կրակի ջերմությունը օդի հովությամբ, օդի դժնդակ խստությունը՝ կրակի արծարծմամբ, նույնպես և մանրամաղ փոշիացած հողը՝ ջրի ապահատակ պնդացած հողի կպչելով»։

— «Ահա թե ինչպես պետք է պատերազմն սկսել,— մտածեց Արտակը,— նախ պետք է հաղթահարել արյաց ոգուն, կեցցե՛ս հայր Եզնիկ, լավ տեղից է բռնել»։

— Եթե դու տգիտության մեջ վրիպել ես,— կարդաց Ղևոնդ Երեցը,— ես, որ հաստատ գիտեմ այդ, չեմ կարող քո մոլորության հետևից գալ։

Ղևոնդ Երեցի ձայնը որոտում էր տանտերի փառաբանների տակ. նա բորբոքում էր արտերը։ Դեռ քանի պատատոխանը վիճում էր կրոնափիլիսոփայական խնդիրներով՝ նա ազդում էր մտքերին. բայց ահա անցավ պայքարի էջերը։ Բազմությունը հոգնանք տվեց և խտացավ նրա շուրջը։ Հանկարծ նա ոգեց.

— Այս հավատից չեն կարող խլեցնել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, սուր։ Այլևս դու այս ամեն բանի մասին մեզ մի հարցնիր, որովհետև ոչ թե մարդու հետ է մեր հավատի ուխտը, որ խաբվենք իբրև երեխաներ, այլ անխոցելի է աստծո հետ, որ չի կարելի քանդել և հեռու նետել ո՛չ այժմ և ո՛չ ապա, և ո՛չ հավիտյանս, և ո՛չ հավիտենից հավիտյանս։

Ղևոնդ Երեցը ավարտեց ընթերցումը, ամենայնին շարժումներով արագ մոտեցավ կաթողիկոսին և դողդոջուն ձեռքով նրան մեկնեց մագաղաթը։

— Հոժա՞ր եք,— դիմեց կաթողիկոսը նախարարներին, հոգևորականներին և ժողովրդին։

— Հոժար ենք,— պատասխանեցին նախարարները և հոգևորականները։

Առաքելը ձեռքը դրեց սրտին իբրև նշան խոնարհության և ասաց.

— Սպարապետ, մենք ռամիկ ժողովուրդ ենք, գրի ու նամակի հետ գործ չունենք։ Կկովենք՝ երկիրը չենք տա։ Եթե ձեր ասածի մեջտեղն էլ այս է՝ հոժար ենք։

— Հոժար ենք,— թնդաց բազմության ձայնը։

Թեթևացավ թանձրացած մթնոլորտը։ Ինչ որ չէր ասվել մի օր առաջ՝ այսօր ահա ասվեց։ Ուրեմն կարելի էր ասել։ Եվ ինչ լավ եղավ, որ ասվեց։

Արտակը հպարտությունից խստահայաց նայեց Եզնիկին և Եղիշեին։

«Ի՞նչ իրավունք ունի ծեր տգետի մեկը գիտունի համբավ ձեռք բերել այս փիլիսոփաների առաջ։ Սրանք աշխարհն են քննել, խորամուխ եղել նրա գաղտնիքներին։ Սրանք խոհեր ունեն, բարձր մեջտեղ, ընտիր ճաշակ և բարեկարգություն։ Սրանք պետք է ձեռքե՞ր մրոտեն կրակի շեղջի մեջ՝ անմար պահելու համար այդ պարզունակ տարերքը, որ ինքն է ենթակա ամենաբիրտ հարվածի՝ ջրի, քամու, հողի կողմից»։

Արտակն այս խոհերի մեջ էր, որ հանկարծ Վարդան Մամիկոնյանը բարձրացնելով օդի մեջ սուրը, նայեց մյուս իշխաններին։

— Ուխտենք հավատարիմ մնալ հայրենիքին,— գոչեց նա ոգևորված։

Վարդանի շարժումը զոհական երդման նշան էր։ Նախարարները ենթարկվեցին անմիջապես։ Ծանր էր Գադիշոյի, Գյուտի և մանավանդ Արտակ Ռշտունու վիճակը, որը գաղտնի էր միացել Վասակի կուսակիցներին և թերևս դեռ տատանման մեջ էր... Գադիշոն և Գյուտը շատ կուզեին հեռու մնալ զորական երդումից, սակայն, երբ նայեցին իրենց շուրջը և տեսան հափշտակված ու սպառնալի դեմքեր, նայեցին ժողովրդին, որ հիմա այլևս լցվել էր տաճար՝ հնազանդվեցին և ակամա սրերը հանեցին և բարձրացրին օդի մեջ։

— Զինվորագրվո՛ւմ ենք ուխտին հայրենյաց պաշտպանութ-
թյա՛ն,— բարձրաձայն ասաց Վարդանը։

— Զինվորագրվում ենք ուխտին հայրենյաց պաշտպանութ-
թյան,— ձայնեցին նախարարները։

— Գրվում ենք զինվորյալ հող հայրենիին,— գոչեց Առաքելը՝
արդեն իբրև ուխտ։

— Գրվում ենք,— որոտաց բազմությունը՝ նույն կերպ։

— Ուխտում ենք միացնել զորք, զենք, աշխարհ, ամրոց ի մի
տերունական զորքի և զորության,— ձայնեց Վարդանը։

— Միացնում ենք,— ի պատասխան ձայնեցին նախարար-
ները։

— Իրավունք է սպարապետին ժողովել նախարարական զո-
րագնդերը ի մի տերունական զորքի,— ձևակերպեց Վահան Ամա-
տունի հազարապետն Հայոց։

— Իրավունք է աստծուց ներշնչված, հրամայված,— նվիրա-
գործեց կաթողիկոսը, խաչակնքեց և օրհնեց ուխտը։

Ահեղ արհավիրքը, երկրի կործանման ստույգ վտանգը՝ ար-
տաքին թշնամին, ինչպես երկրաշարժի դեմ, ժանտախտի, հեղեղի
դեմ, միացրեց երկրի երեք դասերը, որ իրարից խորթ էին, իրար
հակառակորդ և դարերով իրար հետ անհաշտ ապրել, ատել իրար,
կռվել էին անվերջ։ Կյանքը, ամենուրեք կյանքը, ամենից վեր կյան-
քը հրամայեց մի առժամ հետաձգել դասային անհաշտելիությունը
փրկել ամեն մեկին իր դասը, իր կյանքը, իր գույքը, իր աշխարհը,
որ հետո շարունակեն իրենց պայքարն իրար դեմ։

Հոգևոր երգը թնդաց ուժգին, բորբոքվեց, դառավ մոլեգին,
ռազմական։ Եվ այս բորբոքված, հրատապ մթնոլորտում ընդունվեց
և սրբագործվեց պատասխան թուղթը։

Արտակն զգաց, որ իրեն ինչ-որ հզոր թևեր բարձրացրած տա-
րան։ Նա իր սուրը միացրեց Ատոմի սրին, նայեց նրա կենտրոնա-
ցած գեղեցիկ դեմքին, զգաց նրա հայացքը իր վրա, թեև նա չէր
նայում նրա կողմը, և ուժի մի հորձանք եկավ լցվեց նրա ողջ էու-
թյան մեջ։

Նա նայում էր Վարդանին, որը կերպարանափոխվել էր։ Կար-
ծես կախարդական մի հարվածով երիտասարդացավ նա, ուժ
առավ։ Աչքերը լցվել էին ուրախ և հաղթական մի լույսով։ Արտա-
կը նկատեց, որ հետզհետե բոլորի հայացքը կենտրոնանում է Վար-

գան Մամիկոնյանի վրա։ Եվ զգաց, որ այս տաճարի թանձրացած մթնոլորտում, այս կրոնական վիճաբանական խճճանքներում, այս խուռն բազմության թոհուբոհի մեջ ծնվում էր այն մեծ զորավարը, որը պիտի տաներ իր հետևից ամբողջ ժողովուրդը։ Ո՞ւր կտաներ, ո՞ւր կհասցներ նա՝ դա սուզված էր ապագայի թանձր մշուշի հետև, բայց այս պահին, երբ այսքան տարակուսանքների ու կասկածանքների մեջ ամենքին մի առժամ տիրել էր ինչ-որ մի կաշկանդ, քարացում, այդ ամենը վերացավ։ Ստեղծվեց զորավարը։ Իհարկե, նա կար, բայց նա արյաց արքայի գործին էր ծառայում։ Հիմա կծառայի իր հայրենիքի գործին։

Երգը լռեց։ Տաճարի կամարները դադարեցին հնչյուններ արձագանքելուց և սկսեցին մոմռալ ներքին ալեկոծվող բազմության ցնչառությունից։

Կաթողիկոսը դարձավ դեպի ժողովականները.

— Հոժա՞ր, համաձա՞յն եք, որ սույն պատասխանն ուղարկվի արյաց Հազարապետին։

— Հոժա՞ր ենք,— լսվեց համարյա միահամուռ նախարարների կողմից։

— Եվ դուք, հայրեր եկեղեցվո,— դարձավ հոգևոր ժողովի անդամներին կաթողիկոսը։

— Հոժա՞ր ենք,— պատասխանեցին երկրի բոլոր կողմերից եկած եպիսկոպոսները։

— Եվ դո՛ւ, ժողովո՛ւրդ հայոց, հոժա՞ր ես։

— Մենք գլխի՞ց հոժար-հոժար ենք,— ձայնեց Առաքելը։

— Հոժա՞ր ենք, հոժա՞ր...— որոտաց ու արձագանքեց տաճարի ներսից ու դրսից հազարավոր կրծքերից ժայթքող, սրտապընդիչ ժողովրդական ձայնը։

— Ձայն բազմաց, ձայն աստծո,— ասաց կաթողիկոսը ու խաչակնքեց բոլորին։

— Օ՛ն, ուրեմն, այս պատասխանը կուղարկվի արյաց Հազարապետին։

Արտակը նայեց բազմության, որ լարված հետևում էր։ Նա տեսավ, թե ինչպես մարդիկ վճռական և խիստ կերպարանք առան։ Զարմանալի բան է ցիտակցությունը և վճիռը,— պարզում է կյանքը և ուրախացնում։ Թող որ՝ այս վճիռներին կհետևի արյունահեղություն և արհավիրք։ Բայց պարզ էր, թե ինչ պետք էր անել։

Պետք էր դիմադրել։ Ամեն մարդ հիմա գիտեր, թե ինչ պետք է անել։

Ժողովականները զվարթ և աշխույժ զրուցում էին։

— Փառք աստծո, ճանապարհ բացվեց,— ասաց Արտակ Մոկացը,— հիմա գիտենք ուր ենք գնում։

Վարդանը մոտեցավ կաթողիկոսին և սկսեց նրա հետ խորհրդակցել պատասխանի ուղարկման համար։ Ապա դարձավ իշխաններին.

— Տյարք, թուղթը կկարդացվի մարզպանի առաջ և ապա կհանձնվի խոսրով հրովարտակաբերին։

— Հոժար ենք,— ասացին նախարարները։

— Դե՛, տյա՛րք, մեր խիղճը հանգիստ է աստծո և աշխարհի առաջ։ Հանգիստ է և մեր մեջ... ողջունում եմ ձեր քաջարի վճիռը, որ տվիք։ Հիմա գնանք։ Մեզ սպասում է գործը... Արձակի՛ր մեզ, հոգևոր տեր։

Կաթողիկոսը աղոթք կարդաց և ապա արձակեց ժողովը։ Նախարարները ուղղվեցին դեպի տաճարի ելքը, ժողովուրդը սեղմվեց։ Ճանապարհ տվեց նրանց։ Զվարթ դեմքերը, վճռական հայացքները ցույց էին տալիս, որ իրոք կատարվել էր հաղթությունը...

Այդ օրն իսկապես հայ ժողովուրդը հաղթեց և տիրեց մի շատ թանկագին գանձի՝ գիտակցեց ինքն իրեն։

Արտակը սեղմեց իր կողքից գնացող Ատոմի ձեռքը, որին ի պատասխան սա ևս նույնը կատարեց։

— Կռվո՞ւմ ենք, իշխան,— հարցրեց նա թեքվելով նրա ականջին։

— Կռվո՛ւմ, ապրելու համար...— չարաճճի ժպիտով նայեց նրան Ատոմը։

Նրանք անցան ժողովրդի միջով ու հոգևորականության հետ շարժվեցին դեպի արքունական տունը։ Ժողովուրդը ողողել էր նրանց ամեն կողմից և մոնչալով հոսեց տաճարից դուրս։ Մարդիկ աշխուժացել էին, կերպարանափոխվել։

— Կո՞վ մտան մեծերը։

— Գնա՞ց պատասխանը բռնավորին...

— Իշխանությո՞ւն էն Հակոբո՞ս, իշխանությո՞ւն, ո՞նց կտանա։ Բա սրանք որտե՞ղ պիտի հաց ուտեն,— ցույց տվին վանականներին, որ իրենց վանքերից լցվել էին մայրաքաղաք սևազգեստ ապ-

ռավների պես, անհաշիվ բազմությամբ չարագույժ մտքերով համակելով քաղաքը։

Նայելով նրանց՝ մեկը բազմությունից ծոր տվեց.

— Հող եմ ասում, հո՞ղ, որ հաց բերի սրանց կշտացնելու։

— Դրանց հողը կկշտացնի, կտրվի՞ դրանց հոտը։

— Սո՞ւս, հեթանո՛ս, մե՛ղք է...

— Հա՛յ հաաա՛յ... մե՞ղքս գիտեր։ Ապա՞, Գոռնակ Սիմավոն, զլի՛ր մի...

Իսկույն շրջապատեցին Գոռնակ Սիմավոնին։ Սա ծոցից հանեց շեփորը, աչքով արեց մյուսներին, որ ձայն պահեն, ու ինքն իրեն սկսեց ականջ խլացնող ձայնով փչել ռազմական պարերգը։ Պարն սկսվեց, և տաճարի շուրջը մի շուրջպար բռնած սրընթաց պտտվել սկսեցին հարյուրավոր մարդիկ։ Ցոլացին ջահեր, բերին խուրձ-խուրձ փայտեր շարեցին. կույտ-կույտ սկսեցին պարել ու մեկ-մեկ վառել փայտը՝ կպցնելով ջահերը։ Ժողովուրդը երգում էր Արշակունիների ժամանակից դեռ կենդանի հեթանոսական ռազմական երգը, որ անկախ Հայաստանի ժողովուրդը հյուսել էր հին, ռազմապես հզոր օրերին։

Ի վե՞ր, ի վե՞ր ի Մասիս,
Մասիսն ի վե՞ր,
Ազատ քաջերն ի վե՞ր,
Մասիսն ի վե՞ր,
Ուժեն հայրենյաց ի վե՞ր,
Մասիսն ի վե՞ր,
Գոչ ազատ գոչեք ի վե՞ր,
Մասիսն ի վե՞ր։

Ու այսպես անվերջ, անվերջ ազատության գովքն անելով ըսկըսեց մրրկել պարողների շղթան։

Արքունական տանից եկան դիտելու Ատոմը, Արտակ Մոկացը, Ղևոնդ Երեցը, Եղիշեն ու Եզնիկը։ Հեթանոսական այս պարի մեջ նրանք տեսնում էին ժողովրդական ոգին, որի ազատ պոռթկումը այս ժամին միանգամայն կարևոր էր։ Ոգևորվեց Ղևոնդ Երեցը, հիշեց իր պատանեկության օրերում այս պարին մասնակցելը, մի պար, որ այժմ դիպչում էր թեև նրա և իր կարգակիցների քրիստոնեական զգացմունքին, բայց ներշնչում էր ինչ-որ անբացատրելի ուժ։

— Ապա՞, զինվորյալ մանկունք, մեջտե՛ղ,— հրամայեց Արտակ Մոկացը զինվորներին։

Ատոմը ձեռքով արեց երիտասարդներին։ Զինվորյալ մանկունքն ու երիտասարդները արագ շղթա կապեցին շղթայի շուրջը, և պարը բորբոքվեց։ Պարզած սրերն սկսեցին զրնգալ իրար բախվելով։ Թմբուկներ հայտնվեցին մեջտեղ մարդահասակ, որոնց ռազմական որոտն սկսեց խլացնել տաճարի շուրջը, փողոցներն ու քաղաքը։ Սպառնալի հայացքներով լայն պտույտ սկսեցին Վարաժն ու իր «հեթանոսները»՝ կոտրատելով իրենց հուժկու ոտները, ուսները, մեջքները։

Բազմությունը, որի մեջ լցվել էին քաղաքի բնակչության բոլոր խավերը՝ արհեստավորները, վաճառականները, դրսից-շեներից թափված շինականները, վանականները և իշխանները, հետզհետե մոռացան, որ շրջապատել են եկեղեցին։ Որտեղից որ էր՝ եղներ բերին, զենեցին և գինու տիկերը սկսվեցին դատարկվել՝ երգի ու խրախճանքի հետ։ Իսկ հսկա շուրջպարը մրրկում ու թնդում էր, որի ընթացքում բազմությունը որոտում էր.

— Զարկե՞ք, տվե՛ք, խորե՛ք թագավորի գլուխը։

Ու մինչև լույս դոփեցին գետինը, ու թնդաց ազատության ռազմական երգը։

***

Վասակը այնպես իմացավ կատարված դեպքերը՝ մերժողական պատասխանը, նախարարների ուխտը, ժողովրդի ըմբոստ արարքները, ինչպես երազումն է լինում.. արտառոց անհավատալի։ Թափ տվեց իրեն, շփեց ճակատը, մոտեցավ պատուհանին, նայեց դուրս, ապա միայն զգաց այդ ամենի իրական լինելու դաժանությունը։ Ծանր մուրճի պես հարվածեց այդ ամենը նրա գլխին։ Նա զգաց, որ պետության անիվը դուրս թռավ սռնուց և կատաղի թափով գնում է դեպի անդունդը։ Շատ գիրթ շրջվեց պետության կառքը ոլորանում։ Ինչպե՞ս թույլ տվեց նա։ Նա հույս ուներ խորամանկորեն կաշկանդել, կապկպել տարամերժ ուժերը։ Նա կարծում էր, թե իշխանների մեջ այնքան հաստատ է հպատակության ըզգացմունքը, այնքան են նրանք դիմազուրկ և հպատակ, այնքան են դողում նրանք իրենց իշխանական դիրքի համար, որ չեն էլ մտա-

ծի որևէ ըմբոստ խոսք ասել արյաց արքային։ Չէ՞ որ Հազարապետը արքայի բերանն է։ Հազարապետին մերժել, նշանակում է արքային հանդգնել։

— Չէ՞, ինչպե՞ս, ինչպե՞ս թույլ տվի այս բանը,— խոսեց բարձրաձայն Վասակը։

Հիմա ի՞նչ պետք է անել... Ե՞տ շարժել դառած անիվը, չկատարվա՞ծ անել կատարվածը։ Եվ ի՞նչ կլինի այս բոլորի հետևանքը։ Օ՜, շատ մեծ, շատ սոսկալի աղետ ու արհավիրք։ Նախ ինքը իբրև մարզպան մեջտեղից կվերանա։ Իշխանները իշխանազուրկ կլինեն, նրանց ընտանիքները Պարսկաստան կքշվեն։ Պարսից զորքերը ոտնատակ կտան երկիրը։ Եվ ինչ որ չարեց համոզիչ խոսքը՝ հիմա կանի հուրը, սուրը, ավերն ու կոտորածը։ Պետք է վերջ տալ այդ խելացնորությանն։

Նա զգաց, որ ինքը փոխվեց դեպի կատարվող դեպքերը։ Նա պարզ տեսավ իր իսկական դիրքը դեպի նախարարները և մանավանդ դեպի Վարդանը։ Եվ այսքան տարիների խուլ հակառակությունը նրա և իր մեջ, որ ուներ իր հայտնի և անհայտ պատճառները՝ այժմ վերցրեց իր վրայի քողը և պարզեց իսկական հակառակության և թշնամության պարզ ու դաժան պատկերը։

Ոչ, նա, Վասակ Սյունին այլևս չունի ոչ մի հաշտեցման եզր Վարդան Մամիկոնյանի հետ։ Նրանք թշնամիներ են։

Նա սպասում էր, որ իրեն բերեն ներկայացնեն պատասխան թուղթը, որի մասին կցկտուր տեղեկությունն էր միայն իմացել իր ենեկապետից։

Սուրհանդակ եկավ ժողովից Վասակին.

— Տե՛ր մարզպան, Սպարապետն ու Արծրունյաց տերը խընդրեցին, որ շնորհ բերես ժողով. պետք է կարդան պատասխան թուղթը։

— Բոլո՞ր են հավաքված։

— Ինչպես հրամայեցիր, ազգականական տան դահլիճում, տեր մարզպան։

— Գնա սպասիր դուրսը։

Սուրհանդակը գնաց։

Վասակը վճռեց գնալ, թեև դա նվաստություն էր և անպատշաճ իր պաշտոնի համար։ Բայց նա, որ խուսափում էր ըմբոստ ժողովականներին իր պալատում դումարելուց՝ զիջեց։ Նա հրամայեց

հանդերձապետին, որ հագցնի իրեն։ Հանդերձապետը բերեց Վասակի մարզպանական զգեստն ու զարդերը։ Վասակն արագ հագնվեց և հրամայեց, որ համհարզը կանգնի դարբասի մոտ, փողոցում։ Ապա վերցրեց մականը և արագ դուրս եկավ։ Նրան նժույգ մատուցեցին։ Նա նստեց զարդարուն նժույգին։ Ապա նշան արեց, որ շարժվեն։ Շքախումբը, որ զարդարված ու զինված քաջամարտիկ երիտասարդներ էին, խառն ալեխառն ու հասակավոր հին զորականների հետ, որ բազմամյա ուղեկցողներն էին եղել Վասակի երթերին՝ շրջապատեց նրան։ Սուրհանդակն առաջ ընկավ, և շատ համբորեն ու արժանապատիվ շարժումներով սկսվեց Վասակի երթը Արտաշատի փողոցներով։

Արքունական տան մոտ նրան ընդառաջ եկավ սպասավորների մի մեծ խումբ։ Նրանք խոնարհ ողջունեցին Վասակին, որի արքայական հագուստներն ու զուսպ կեցվածքը պատկառանք էին ներշնչում։ Թիկնապահներ առաջ վազեցին և խլեցին նրա ասպանդակները, որպեսզի նա վայր իջներ նժույգից։

Ապա նրան տարան դահլիճ։ Այնտեղ էին ժողովված բոլոր նախարարներն ու հոգևորականները՝ կաթողիկոսի գլխավորությամբ։

Երբ Վասակը ներս մտավ՝ բոլորը ոտքի կանգնեցին, նա ողջունեց նախարարներին, որոնք և ողջունեցին նրան։ Ապա հրավիրեցին նստել դահլիճում մարզպանին հատկացրած գահույքին։ Նա նստեց։ Մյուսները նույնպես։

Ապա նախարարները կրկին վեր կացան և ողջունեցին իրենց կողմից։ Մարզպանն ընդունեց ողջույնը գլխի ծանր շարժումով։

— Պատասխան թուղթը պատրաստ է, տեր մարզպան,— ասաց կաթողիկոսը,— եթե կհրամայես՝ ընթերցենք։

Վասակը ձեռով հավանություն տվեց։ Կաթողիկոսը ինքն այս անգամ ձեռքն առավ պատասխանի մագաղաթը, բացեց և սկսեց կարդալ։ Վասակը կարծես չէր լսում. նա մեկ-մեկ զննում էր նախարարներին, հոգևորներին, իր կուսակիցներին, նայում էր Վարդանին, ջանում էր, որ չտեսնեն, թե ինչպես է զննում Վահան Ամատունուն։

Պատասխանի սկիզբը վատ չթվաց նրան։ Կրոնափիլիսոփայական զրոսանքները նա համարեց նվազ վտանգավոր։ Բայց երբ շուտով վիճաբանական կետերի հետ լսվեցին արյաց Հաղբատապետի հացեին վիրավորական խոսքեր՝ Վասակն սկսեց անհանգստա-

նալ։ Նա հայացքն սկսեց շրջել նախարարներից մեկից մյուսի վրա։ Նրանք փոխվել էին։ Նրանց դեմքերին ինչ-որ մի գիտակցական բան կար։

«Այս մարդիկ վճռել են»,— մտածեց նա. դա պարզ երևում էր նրանց կեցվածքից և մանավանդ անվրդով հայացքից։

Երբ կաթողիկոսը ավարտեց ընթերցումը՝ սպասեց Վասակին, թե ինչ կասի նա։ Բոլոր նախարարները նույնպես սպասեցին։

Վասակը մտածեց և կարծես ինքն իրեն ասաց.

«Այս հավատից չի կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր»... հրմ, ուրեմն ձեզանից ըմբոստություն, ինձանից՝ պատասխանատվություն...

— Պատասխան թուղթը պատրաստ է։ Պատասխան թղթի պատասխանը պատրաստ է, պատասխանների պատասխանները պատրաստ են...— հեգնոտ շարունակեց նա կիսաձայն խորհելով։

Բոլորը զարմացած սպասեցին, որ Վասակը կբացատրի, թե արդյոք կատա՞կ է անում, թե լուրջ է։

Ոչ, նա կատակ չէր անում։

— Պատասխան թուղթը պատրաստ է. այո, տյարք։ «Պատասխանը գրվելու պահին խոսվե՞լ է, խորհվե՞լ է, կշռադատվե՞լ։ Գրվե՞լ է վերջապես»,— «Այո»— «իսկ ո՞ւր էր մարզպանը...»։— «Մայրաքաղաքում»։ Մի զարմանաք, տյարք, եթե առաջինը ես կանչվեմ Դուռը։

— Մենք չենք զարմանա,— ասաց Վարդանը սառն ու մի փոքր արհամարհական։

Վասակն անսպասելի հարված ստացածի պես խոժոռվեց։

— Այո, տեր մարզպան, երկրի բոլոր գործերի գլուխ կանգնած է մարզպանը և նա էլ պատասխանատու է։ Մարզպանությունն այդպիսի պաշտոն է։

— Մարզպանությունն արյաց տերության պաշտոն է, որ ծառայում է նախ իր մեծ տերության։ Պարսի՛կ կարող էր նստած լինել այս իմ գահույքին և ունկնդրել ձեր պատասխան նամակը։ Պատահաբար ես եմ նստած...

Վարդանը հանգիստ հարցրեց.

— Հոժա՞ր ես պատասխանին։

— Ես քրիստոնյա եմ և հայ,— ասաց Վասակ Սյունին բարկացած,— գործի ոգուն, իհարկե, հոժար եմ։ Բայց միաժամ ես

մարզպան եմ, արյաց արքայի պաշտոնյա։ Ուրեմն չեմ մասնակցում պատասխանին, ինչպես որ և չեկա տաճար՝ պատասխանը կազմելու պահին։ Ահա դո՛ւք, ահա արքա՛ն։ Ես ձեր պատասխանը կուղարկեմ արքային և կասեմ. ահա մեր նախարարնե՛րը, ահա քո կա՛մքը։

Վարդանը ձայնը բարձրացրեց.

— Ինչո՞ւ ես միշտ արքայի անունը հիշեցնում ու մեր գործն արքայի հետ կապում։ Թող արքան զբաղվի իր աշխարհի գործերով։ Մենք գործ ունենք մեր խղճի, մեր աշխարհի, մեր ազատության հետ։ Եթե ուզում ես վախեցնել մեզ՝ վախեցրու ահա ինչի՛ց։

— Մենք մահը կոխել, անցել ենք, տեր մարզպան,— ասաց Վահան Ամատունին,— իսկ մահից այն կողմ ոչ մի սարսափ չկա։ Մենք զինվորյալ ենք։

— Եվ աստված է մեզ զորավիգ,— ասաց կաթողիկոսը, վեր կացավ և սկսեց աղոթել։

Բոլորը վեր կացան, կանգնեց նաև Վասակը։

Երբ կաթողիկոսը ավարտեց աղոթքը՝ Վասակն ասաց.

— Ես ոչինչ չեմ խոսում հակառակ։ Ես պահանջում եմ մեր ցանուցիր իշխանական ուժերի միացում։ Հայոց Աշխարհի ամբողջացում։ Անսացե՛ք այս... Սպասեցեք առ ժամ։

Վարդանը չոր պատասխանեց.

— Անսպառ ժամանակ չունենք։ Այս իսկ ժամիս ոչնչանում ենք, արհավիրքը չի սպասում։ Ես զինվոր եմ — ես պիտի կասեցնեմ ոչնչացումը։

— Թող աստված հատուցանի ամեն մարդու իր խղճի և մրտքի համաձայն,— ասաց կաթողիկոսը։— Ահա, տեր մարզպան, քեզ ենք ներկայացնում պատասխան թուղթը, հանձնիր հրովարտակաբեր պաշտոնյային։

Կաթողիկոսը պարզեց մագաղաթը, Ղևոնդ Երեցը մոտ վազեց, խլեց այն և տարավ մատուցեց Վասակին։ Սա վերցրեց մագաղաթը, ոլորեց, մնաց մի փոքր մտածմունքի մեջ և վեր կացավ։

— Աստված բարի միտք տա ինձ, ձեզ և ամենքին,— ասաց նա, ապա նայեց Գագիշոյին, զգաց նրա հայացքի միտքը և շարժվեց դեպի դուռը։

— Մնաք խաղաղությամբ,— ասաց նա ողջունելով մնացողներին։

— Երթաս խաղաղությամբ,— պատասխանեցին տրանքը։

Վասակը դուրս եկավ։

Ճնշող լռությունը ցույց տվեց, որ Վասակի ըստ երևույթին համակերպված հեռանալը հանգստություն չբերեց նախարարներին։ Ընդհակառակն՝ խռովեց։ Եվ խռովեց ոչ նրա հակառությունները միայն։ Զգացվեց, որ կար մի այլ խռովիչ բան, որ ամենքի մեջ զաղտնի նյութում էր մաշող անհուն տարակուսանք։ Լռությունը խզեց վրդովված և անհանգստացած կաթողիկոսը։

— Միաբանություն չկա նախարարների մեջ։ Մարզպանը համաձայն չէ մեզ։ Ահա տագնապալին։

— Չկա միաբանություն,— հաստատեց Մանեճը սառը և չար։

— Բայց միաբանություն է պետք։ Սրբազան ուխտը կնքեցինք, ցինվոր գրվեցինք, միաբանեցինք...։

Վարդանը ասաց.

— Ես հիմա երկյուղ եմ կրում, որ նախարարների և հոգևորականության այդ միաբանությունը ևս չի փրկի։

Նախարարները անհանգիստ և զարմացած շարժում արին։

— Ապա էլ ի՞նչ պատերազմ ենք դուրս եկել,— խոսեց՝ արդեն երկրորդ անգամ դրդռելու չափ՝ Մանեճը։

— Պատերազմ մենք չէ, որ դուրս ենք եկել, այլ Հազկերտը,— խելք պատասխանեց Վարդանը։

— Բայց և պիտի պատերազմենք։ Ի՞նչ ենք մենք արյաց ահեղ ուժի առաջ,— բողոքեց Մանեճը,— և պատրաստ էլ չենք պատերազմի՝ եթե կամենանք էլ...։

— Համայն ազգի վրա արհավիրք է գալիս. այստեղ ի՞նչ պատրաստ-անպատրաստ,— կշտամբելու պես ասաց Վարդանը,— պիտի խառնակվի աշխարհը՝ նախարարից մինչև ռամիկը։

— Ահա բուն արհավիրքը այդ ռամկի, որին բաց թողնք գառաստիղից,— չհամբերեց Գյուտը, որ ըստ երևույթին սրտում սնում էր տաճարի դիպքի ծանր վիրավորանքը։

— Դա ճշմարիտ է,— սառն ու արհամարհելի խոսեց Գաղիշոն,— և ոչ այնքան Հազկերտն է աղետը, որքան մեր տանու թշնամին՝ ռամիկը։ Բայց հիմա ուշ է,— ավելացրեց նա դառնաժպիտ ու հառաչեց թաքցրած չարությամբ,— վե՞ր կացավ չարաշուք հեղեղը... Հիմա ասա կքշի՞, կտանի՞ ամեն ինչ...

— Սա կքշի՞, կտանի՞ ամեն ինչ,— հաստատեց հեգնոտն

Վարդանը՝ շեշտելով ամեն մի բառը, խոցելու համար Գարեգինին։

Գարեգյալ ճնշող լռություն։

Վարդանը դարձավ նախարարներին նույն եղանակով.

— Ցյա՛ղք Հայոց աշխարհի։ Ի՞նչ կա այստեղ զարմանալի։ Եթե դուք հապաղում եք ձեր վճիռների մեջ պաշտպան կանգնել ձեր իսկ բուն տիրապետության՝ ռամիկը վեր կացավ իրենը պաշտպանելու։

Նախարարները զարմանքով և խայթված իրար նայեցին։

— Տեր Մամիկոնեից, ո՞վ է ռամիկը, որ վեր է կենում ինքնագլուխ,— ասաց Արտակ Ռշտունին։

— Տեր Ռշտունյաց, ռամիկը՝ զորքն է... Ձեր սնուցիչ կեցուցիչը... Աշխա՛րհը...

— Զո՞րքն է ռամիկը... այն ժամանակ զորքը ի՛մն է։ Կքշեմ՝ կգնա, չեմ քշի՝ ինչպե՞ս կհամարձակվի։

— Տե՛ր Ռշտունյաց, դուք չեք ճանաչում ռամիկին, նա էլ իր կամքն ունի...— հեգնոտ կրկնեցրեց Վարդանը։ Հետո սպառնալու պես շարունակեց։— Վե՞ր կկենա ռամիկը... Մեծ ռամիկը գեռ չի վեր կացել։ Չի՛ դիմանա խստադաժան հարկահանության և քնաջրնջման սպառնալիքին, չի՛ անսա ոչ մի սաստման։

— Վե՞ր կկենա իր իշխանավորների դեմ, հակառակ իր իշխանավորի կամքի՞ն,— գոչեց Գյուտը արդեն զայրացած։— Սանձահարեցե՛ք սրի հարկադրանքով։

— Նաև ի՞նձ անհաճո է ռամկի անիշխանությունը,— ասաց Վարդանը,— բայց ռամիկը մեր ձեռքին չի արդեն իսկ գործի սկզբի՞ց, ռամկին կռվի մեջ քաշեց ինքը՝ Թշնամին,— և հանկարծ բորբոքվեց Վարդանը ևս,— բայց դու ո՞ւմ կսանձահարես, ինչո՞ւ կսանձահարես։ Ո՞վ սիտի կռվի, ե՞ս, դո՞ւ մենակ։ Ռամիկը այստեղ կռիվ ունի և կկռվի իր կռիվը։

— Հը՞,— շարունակեց դառն շեշտով Վարդանը,— վե՞ր կկենա ռամիկը պատերազմ, վե՞ր կկենա հախուռն, անկազմ խրթև տարերք բնության, կկործանի և կկործանվի թերևս։ Պե՛տք է գրլխավորել նրան, ողջ Հայոց աշխարհի աշխարհապորին։ Եթե փրկի՝ թերևս նա՝ կփրկի մեզ։ Գոչնչանա՞, կոչնչանանք և մե՛նք։ Ոչնչացրե՞ց պարտիկը մեր թագավորությունը, ոչնչացնում է նաև նախարարությունն ու հոգևորականությունը։ Եվ դրա համար թաթը մեկնել է մեր արմատին՝ ռամկին։ Մեր վերջին ապաստանին։ Եվ հիմա,

երբ ռամիկը վեր է կացել պատերազմի՝ մենք պետք է տանենք նրան պատերազմ։ Եթե ոչ, նախագուշացնո՞ւմ եմ ձեզ, տյա՛րք, նա՛ կտանի մեզ, եթե արդեն չի տանում։

— Ճշմարի՛տ է,— ասացին միաբերան Արտակը, Ատոմը, Արշավիրը և մի քանի այլ նախարարներ, բացի Ներշապուհ Արծրունուց, որ մռայլ նայում էր հատակին։

— Ռամիկը աշխարհն է, և աշխարհով ենք կենդանի,— խոսեց կաթողիկոսը թեթևացած,— օ՛ն, ապավինենք ռամկին, և թող ամենափրկիչն փրկի Աշխարհն Հայոց։

— Ամե՛ն,— ասացին հոգևորականները և երեսները խաչակնքեցին։

Կաթողիկոսը վեր կացավ։ Նա գոհունակ և հանգիստ խաչակնքեց բոլորին և հրաժեշտ տվեց։ Նրան հետևեցին Ղևոնդ Երեցը, Եղիշեն, Եզնիկը և մյուս հոգևորականները։

Նախարարները՝ մռայլված և սաստված չխոսեցին։ Վարդանը զգաց, որ այնուամենայնիվ տարակուսանքը կրկին տագնապով է լցնում նրանց սիրտը։ Այն ժամանակ նա վեր կացավ տեղից ու վճռական, անկեղծ եղանակով ասաց.

— Դուք տարակուսանքի մեջ եք դեռ, տյարք, և տարակուսանքը ձեզ չի թողնի, մինչև դուք չտեսնեք հաստատ հույս և առհավատչյա։ Եվ դա ահավասիկ։ Կկոչենք օգնության՝ Վրաստան, Աղվանք, Բյուզանդիա, Հունաց բաժնի հայ իշխաններին։

— Հույժ անհրաժեշտ է։ Դա է միակ հույսը,— համարյա գոչեց Ներշապուհը լսելիի չափ շնչելով օդը։

— Անշո՛ւշտ, ճշմարի՛տ,— կենդանացան նախարարները։

— Մենք կդիմենք,— խոսեց Վարդանը,— դա անհրաժեշտ է։ Մենք կարող ենք հարել այս ու այն կողմին, այս ու այն կողմի դեմ...

Սակայն Վարդանին զայրացրեց, երբ այս բոլորից հետո նայելով Գյուտին, Գադիշոյին և մի քանի այլ նախարարներին, որոնց մեջ նաև Ներշապուհին, նկատեց նրանց դժկամ հայացքը։ Նա վեր թռավ ու խայթեց ուղղակի.

— Սակայն մի՞թե, տյա՛րք, իրավունք ունենք մոռանալ կայսեր խոսքը պարսից արքային՝ «Քանի հայերը կապրեն իրենց երկրում՝ մենք հանգիստ չենք ունենա։ Ես իմ հայերին կուղարկեմ Թրակիա, իսկ դուք քոնը հրամայիր քշել Արևելք»։ Կօգնե՞ն սրանից հե-

տո մեզ։ Կօգնեն թերևս իրենց միջև եղած թշնամության համար։ Բայց որ նրանք օգնեն մեզ ոտի՞ կանգնել։ Մի՛ հուսաք։ Ցնո՞րք ոչ բանդագուշանք։ Մենք կդիմենք մեզ հետ միասին Հազկերտի բնության դեմ կանգնած վրացիներին և աղվաններին։ Նրանք կգան։

— Նրանք կգան,— ձայնեցին նախարարները։

— Կուղարկենք նաև Հունաց բաժնի հայ նախարարներին։

— Վաղն ևեթ կուղարկենք դեսպան Վիրք և Աղվանք։

— Անշուշտ, անխախտ, պետք է,— խոսեցին նախարարները։

— Եվ հրամայեցեք, տյարք, իսկույն կազմել տերունական գրքը,— ասաց Վարդանը։

— Անհրաժեշտ է,— հաստատեցին նախարարները։

Որոշվեց, որ օգնության կոչը կուղարկեն Վրաստան, Աղվանք և Հունաց բաժնի հայ իշխաններին, որ նրանք լռելյայն պատրաստվեն և հասնեն օգնության այն ժամանակ, երբ կերևա, որ գործը շեղվում է դեպի պատերազմ։ Բյուզանդիայի համար որոշեցին հատուկ դեսպանություն ուղարկել, որ երկար մնա այնտեղ, առանձին ջանքով համոզի Պարսկաստանի հետ հաշտված այդ տերության՝ հայերին օգնելու անհրաժեշտությունը։

— Դեսպանները կառաքենք յուրաքանչյուրին իր ժամանակին և պատշաճին,— առաջարկեց Վարդանը։

Նախարարները համաձայնվեցին և հանգստացան ըստ երևույթին։

— Մի՛ անտեսեք սակայն ռամկին և նրա ուժը,— ավելացրեց Վարդանը,— գիտե՛մ, վերջը պիտի մնանք նրա ապավենին։ Մի՛ նեղեք նրան։ Արդա՛ր եղեք հետը և բարեհաճ։ Թեթևացրե՛ք հարկերը, զինեցե՛ք։

— Ճշմարի՛տ է,— լսվեց կրկին մի քանի ձայն նախարարների կողմից։

— Բարեհաճ եղեք նաև դեպի հոգևորները։

Մթնոլորտը թեթևացավ ըստ երևույթին։ Գյուտն ու Արտակ Ռշտունին տեղի տվին։ Գադիշոն լուռ հայացքով հասկացրեց նրանց այս։ Նախարարներից Արշավիրը, Արտակ Մոկացը, Ատոմը սկսեցին խոսակցել ուրախ։ Նույն եղանակին անցան նաև Գյուտը, Գադիշոն և Արտակ Ռշտունին։ Կարծես կայացավ հաշտություն և համաձայնություն։ Վարդանն սկսեց գրուցել։ Արտակ Ռշտունին կատակ տրամադրությամբ դարձավ Վարդանին.

— Մամիկոնյան տե՛ր, տոհմդ եկեղեցական է, սիրտդ ցավում է հոգևոր դասի համար։

— Մի՛ ասիր Մամիկոնյան,— առարկեց Վարդանը կես կատակ ժպտալով,— ասա զորավա՛ր, ճշմարիտը սա՛ է։ Ինձ ուժեր են պետք։ Ես պարտավոր եմ հաղթել։ Եթե թե ոչ՝ առաջինը դո՛ւ կնշանակես ինձ, տեր Ռշտունյաց։— Ով կօգնի ինձ, նա իմ բարեկամն է։ Թեկուզ դժոխոց դևերը,— ավելացրեց նա։

Հետո աննկատելի լրջացավ։

— Պատերազմը միացյալ ուժեր է պահանջում։ Պատերազմը անգամ հակառակորդներին միացնում է ընդհանուր թշնամու դեմ։ Պատերազմում խտիր չկա օգտակար ուժից։ Հոգևորականությունն ասված է նախարարության կողմից, ասենք ճշմարիտը։ Պատերազմը խորշանք չէ և ոչ հաճելիություն։ Պատերազմը դաժան գործ ու հաշիվ է։ Բայց հոգևորականությունն այսօր ուժ է. պետք է միանալ նրա հետ։ Սակայն և մեր ամենամեծ հույսը ժողովուրդն է։ Նա ինքնակամ վեր է կացել բռնավորի դեմ։ Դա բռնադատված չէ, դա ազատ տարերք է, անսանձելի ուժ։ Պետք է միացնել։ Եթե չնչին մի մեղ անգամ մեզ գա օգնության՝ ես կմիացնեմ մեր ուժերին։ Պետք է հաղթել։ Բացի հաղթելը ո՛չ մի այլ հնար չունե՞նք։ Մեր միակ հունարը հաղթե՛լն է։

Նախարարները դեռ երկար լսում էին զորավարի զրույցը և հետզհետե լցվում էին այն նոր ու դաժան մտքերով, որ պահանջում էր պատերազմը։

***

Վասակը հեռացավ խոռվահույզ վիճակում։ Նա զգաց, որ իր դեմ բարձրացավ մի հզոր արգելք, և որ սկսվում է մեծ պայքար։

Նա հպարտություն էր արել, չէր խոսել իր զինվորների և ոչ էլ ժողովրդի ըմբոստության մասին։ Բայց սանդուղներից իջնելիս մտածում էր այդ մասին։

«Ո՞չ, ամեն ինչ ծուլեց, տակնուվրա եղավ»,— ասաց նա յուրովի և ամբողջ ճանապարհին մտածում էր, թե ինչպես դիմադրավ այս նոր աղետներին։

Նա իրեն կանգնած էր տեսնում մի մեծ և դժվար պայքարի առջև։ Պայքար ներսը՝ նախարարների դեմ, պայքար դուրսը՝ պարսիկ պաշտոնյաների բանսարկություններին, թշնամանքի դեմ։

Բայց մի այլ պատչքարի մասին մի ուրիշ մեծ գործի համար՝ նա չէր համարձակվում ինքն իր մեջ անգամ բարձր մտածել։ Միայն ուղեղի մի կողմով, գանգի մի անկյունում նա զգուշորեն որոճում էր։ Հիմա, այս խառնաշփոթ իրականության մեջ ավելի ու ավելի կարիք էր զգում այդ միտքը, և նա ճանապարհին խոսք տվեց իրեն, որ չի անհանգստացնի իրեն պատասխան թղթի մասին մտածելով, այլ կպատկի անկողնում և հանգիստ կորոճա այդ մեծ գործի մասին։

— «Ժամանա՜կ է, ժամանա՜կ է,— մտածեց նա,— եթե ոչ ամեն ինչ կորած է»։

Երբ մոտենում էր իր բնակարանին՝ դարբասի մոտ պարսիկ զինվորներ տեսավ։ Շքախմբից իրեն նայեցին։ Վասակը գլխով նշան արեց, և շքախմբից մեկը էֆն խթեց, մոտեցավ դարբասին և իսկույն վերադարձավ։

— Դենշապուհն է, Խոսրովը, Որմիզդ մոգպետը, Վեհմիհրը և մյուս մեծամեծները։

Վասակը մռայլվեց, դեմքի մկանները ցնցվեցին։ Սկսվում էր դաժան փորձության մի ժամ, որ պետք էր անցնել։

Երբ ներս մտավ իր սենյակը՝ պարսիկ հյուրերը ակնածանքով վեր կացան, ողջունեցին համբորեն ու արժանապատվությամբ։

— Ես ինքս պիտի հրավեր ուղարկեի,— ասաց Վասակը, ծանրամեծ տեղավորվելով գահույքին,— իմաստուն ժամին ժամանեցիք։ Սակայն օր է...

Նա հառաչեց և նայեց Դենշապուհին։ Սա շատ մեղմ ու կիսաժպիտ հայացքով հանդիպեց նրա հայացքին։ Երևում էր, որ նա շատ ուրախ է։ Տաճարի դեպքերը, մերժողական պատասխանը, ժողովրդական ըմբոստությունները Դենշապուհի սրտովն էին։ Այլևս առաջ Վասակին ամբաստանելու շատ գյուրավատ նյութեր ամբարվեցին։ Հասավ մարդպանի անկման ժամանակը։

— Պատրաստե՞լ եք պատասխանը,— հարցրեց բանաստեղծ ձայնով Խոսրովը։

— Պատրաստել են նախարարները. գնացի, որ կարդամ և բերեմ,— պատասխանեց Վասակը,— ահռելասիկ,— և հանեց ծոցից մագաղաթի փաթեթը։

Խոսրովը վեր կացավ և գնաց ընդունեց նրա ձեռից։ Դենշապու-

հը չարախինդ նայեց Խոսրովի ձեռին և թաքցրած հետաքրքրությամբ սպասեց, որ նա կարդա։

— Կարդա՞մ,— դիմեց նա Դենշապուհին։

— Կուզես՝ կարդա,— ասաց Դենշապուհը։

Խոսրովը կարդաց։ Դեռ նոր էր հասել սկզբի բացատրություններին, որ ձեռքերն սկսեցին դողալ։ Մոգպետը բերանի դառնությունը կուլ տալով՝ մոմոաց։ Խոսրովը հանկարծ վեր թռավ, բարձրացրեց մագաղաթը և գոչեց.

— Անե՛ծք Հարամանին...

Եվ թափահարելով օդում մագաղաթը՝ նետեց հատակին։

Վասակը դաժան աչքերը գամեց նրա աչքերին ու զուսպ հրամայեց.

— Վերցրո՛ւ ձեռքովդ, ինչպես որ նետեցիր... շո՛ւտ... իսկո՛ւյն... հիմարի՛ գլուխ...

Խոսրովը վախեցավ և իսկույն վերցրեց։

— Արքային գրվածը արքայինն է, և ոչ թե չնչին անձինդ։ Սրբի՛ր ձեռքովդ մագաղաթը։

Խոսրովը խեղճացավ և լայն թևքերի ծայրով սրբեց մագաղաթը, որը, իհարկե, չէր փոշոտել մաքուր գորգին ընկնելով։

Դենշապուհը մոայլվեց, զգալով, որ Վասակը կրկին տիրական գիրք ընդունեց։

— Կարդա՛,— հրամանի ձայնով դիմեց Վասակը Խոսրովին։

Խոսրովը շարունակեց։ Հիմա էլ Որմիզդ մոգպետն սկսեց քրթմնջալ և հաղալ։ Նրա անկենդան, մշուշոտ աչքերի մեջ փայլեց մի ուժեղ ցոլք՝ զայրույթի կրակը։ Նա մի երկու անգամ շարժում արեց որ խոսի, բայց Վասակը այնպես խեթ նայեց նրան, որ նա անշարժացավ։ Դենշապուհն էր սակայն հանգիստ։ Նա Վասակի այս խստությունները համարում էր տանուլ տված մարդու սրտնեղություն։ Նա կասկած անգամ չուներ, որ Վասակն իսկույն կընկնի։ Եվ նախաճաշակելով այդ հաճույքը՝ նա աչքի տակով դիտում էր թակարդն ընկած գայլի գալարումները։

Երբ Խոսրովն ավարտեց ընթերցումը և զայրույթից դողալով նայեց Դենշապուհին՝ սա ժպտալով հարցրեց.

— Ինչո՞ւ չկա քո ստորագրությունը։

— Ինչո՞ւ էր կարևոր,— հարցին հարցով պատասխանեց Վասակը,— եթե չի նշանակված հականե անվանե բոլոր նախարար-

ների անունը՝ ուրեմն պետք է հասկանալ, որ բոլորը չեն մասնակցել...

— Ո՞վ չի մասնակցել։

— Ատյանի ժամանակ կիմացվի,— անորոշ պատասխանեց Վասակը՝ չկամենալով Դենշապուհին հաղորդակից անել իր ներքին գործերին։ Դենշապուհը կարող էր բանսարկել, գավել։

Երբ Դենշապուհը այնուամենայնիվ սպասողական հայացքով նայեց Վասակին՝ սա շեշտելով և բազմանշանակ աբասանեց.

— Ես չեմ մասնակցել...

— Ինչո՞ւ,— հարցրեց հեգնական ժպիտով Դենշապուհը։

— Ես արքայի պաշտոնյա եմ. ահա ինչո՛ւ,— խոցելու մարմաջով հարվածեց Վասակ Սյունին։

Դենշապուհը քթի տակ թունալի ժպտաց.

— Իսկ դու հայ չե՞ս։

— Հայ եմ արյամբ և հոգով...

Դենշապուհը մտածեց նոր հարցի մասին։

— Իսկ ի՞նչ ես մտադիր հիմա։

— Կատարել արքայիս հրամանը։

Դենշապուհը լռեց։ Բայց Վասակի հարձակողական հայացքը դեռ գամված մնացել էր Դենշապուհի աչքերի մեջ։

— Այդ ուրախալի է,— հանկարծ եղանակը փոխեց Դենշապուհը,— որ դու չես մասնակցել... Գոնե առնես... Դե հայ ես, գժվար է... չես կամեցել վիրավորել արքայից արքային...

Վասակն սպասեց, որ Դենշապուհը դուրս տա իր սրտում կուտակված թույնը։

— Եվ ափսո՞ս, չես կարողացել գսպել ձեր իշխաններին։ Հանգուգն են, ապերասան, արյան ծարավի...

Վասակը զուսպ լարվածությամբ և արտաքուստ հանգիստ խոսեց.

— Հանդուգն են և ապերասան, ճշմարիտ է։

— Այդ արդեն չես կարող ծածկել։ Տես ո՞ւր են հասել շարամիտ մարդիկ, որ արքայից արքային դիմադարձ են կանգնում այնպես, կարծես իրենց զիմացինը մի հասարակ հարկահավաք պաշտոնյա է...

— Նրանք այդպես չէին,— ասաց Վասակը,— նրանք հեզ էին և հնազանդ։ Ես հավատացած եմ, որ նրանք անշուշտ ավելի դյուրին

կընդունեին մազդեզանց կրոնը, եթե չլինեին վերջին տարվա ճընշումները շեներում և վանքերում։ Քո պաշտոնյաները հարկահավաք չեն, այլ արքայի թշնամիներ։ Սեծում են, խլում, գոփում և չեն էլ հասցնում հարկը ըստ պատկանելույն։

— Քեզ ո՞վ պատմեց այդ բաները,— հարցրեց Դենշապուհը խոցված։

— Մեծ Հազարապետը Միհրներսեհ, Վզուրկ հրամանատարը Երան և Աներան...— խոշոր վանկերով արտասանեց Վասակը։

Նա մի հաջող հարված տվեց Դենշապուհին։ Ուրեմն իր հարկահանության դաժան ձևերից գանգատվել է ինքը՝ Միհրներսեհը։ Ճիշտ է, նա հենց դրա համար էր ուղարկել Դենշապուհին Հայաստան, որ ճնշումներով թուլացնի հայերին, սակայն նա հրահանգել էր այդ ամենը կատարել վարպետորեն, հաստատ, բայց զգույշ։ Իսկ Դենշապուհը չափն անց էր կացրել։

Դենշապուհը տեղի չտվեց։ Նա իրեն ուժեղ էր զգում։

— Արձակի՛ր մեզ, տեր մարզպան,— ասաց նա վեր կենալով։

— Բարի ճանապա՛րհ,— ասաց Վասակը։

Վեհմիհրը, որ մինչև հիմա լուռ հետևում էր՝ գլուխը շարժեց և ասաց.

— Եվ այս ամեն արհավիրքը պիտի գա իմ հազարապետության օրով։ Ափսո՜ս, ափսո՜ս...

Խոսրովը ծալեց մագաղաթը, դրեց ծոցը։

Պարսիկները հեռացան։

— Սկսվե՜ց,— ասաց ինքն իրեն Վասակը։

***

Վասակը կանչել տվեց իր մոտ Կոդակին և պատվիրեց ուղեկցել Խոսրովին՝ որպես Միհրներսեհին ուղարկելիք պատասխան թղթի հանդիպական սուրհանդակ և պատիվ։

Կոդակը ներս մտավ գլուխը կապած և սպասածից ավելի գունատ։ Վասակը նայեց նրան և մռայլվեց.

— Ինչպե՞ս ես,— հարցրեց հեգնանքով։

— Տեսնում ես, տեր իմ,— պատասխանեց Կոդակը ձայնը փորն ընկած,— նյութս կտրվել է։ Ինձ ծեծեցին Վարդանի մարդիկ։

— Ոչինչ։ Կարո՞ղ ես ճանապարհ գնալ։

— Ո՞ւր, տեր իմ,— անհանգստացավ Կոդակը։

— Պարսկաստան։ Խոսրովին պիտի ուղեկցես ի պատիվ Միհրներսեհին պատասխան թղթի ուղարկմանը։

— Տիզբո՞ն պիտի գնամ։

— Եթե շտապ հասնե՛ք Տիզբոն, իսկ եթե ուշացաք՝ Նյուշապուհ։

— Տեր իմ, հիվանդ եմ։

— Հիվանդ ես՝ կմեռնես. բայց եթե չմեռար՝ վերադարձիդ շատ կարևոր տեղեկություններ կբերես։ Բացի այդ, ճանապարհին պիտի լցնես Խոսրովի ականջը։

— Քո՞ մասին։

— Իմ պատասխան թղթի անմասնակցության մասին։ Հարկ է թղթի ու բոլոր ըմբոստության հանցանքը գցել Մամիկոնյան և մյուս նախարարների ու Դենշապուհի վրա և կատաղած հովազի կնճիթն ուղղել նրանց դեմ։ Գործը մեծ, վարձը մեծ։

Կոդակը տարակուսում էր. բայց բանսարկության մարմաջն ու կիրքը, ինչպես հարբեցողի համար գինին, շարժեց նրա մեջ ճանապարհ ընկնելու բուռն ցանկություն։ Սակայն նա ծանրացրեց ու դժվարացրեց գործը՝ վարձահատուցման չափն ավելացնելու համար։

— Տեր իմ, անձս չեմ խնայում. բայց հոժար է հոգիս, մարմինս՝ տկար։

— Չես սատկի,— խստացավ Վասակը,— կապաքինվես։ Եթե հաջող վերադարձար՝ իշխանական կոչում կստանաս։

— Ես փառքի չեմ վազում, տեր իմ. ես քո փառքը համարում եմ իմ փառքը։ Միայն թե անձս կարողանար,— խեղճացավ և համեստացավ Կոդակը։— Անձս նյութ չունի։

Բայց նկատելով կնճիռները Վասակի դեմքին և գուշակելով մրրիկ՝ համակերպեց և շտապեց կանխել պոռթկումը։

— Կգնամ, տեր իմ,— ասաց նա,— մեռնելս հոգ չէ. միայն շտկեմ գործդ։ Շատ խոտոր տարան գործը պարսիկները։

— Հայե՞ր, ուզում ես ասել։

— Ոչ, տեր իմ... պարսիկները։ Ինչ չարիք որ կա՝ պարսիկներից պիտի գա քեզ, բերա՛նս չորանա։

Հավատարիմ ծերուկի անձնվիրությունը, որ զուտ եսական, շահադիտական միտումներ ուներ՝ հարկավոր հատկություն էր Վասակի համար, բայց նա ատում էր ծերուկին հենց դրա համար։ Ծերուկը նվիրված և հաճախ անձը վտանգելով ծառայում էր Վասակին, բայց նա այդ անում էր մինչև այն սահմանը, ուր ինքը չէր կորչելու, և գործը գլուխ կգար՝ բերելով նրան լավ եկամուտ և խոստումներ։ Վասակը շատ լավ գիտեր, որ շահամոլ և խարդախ ծերուկը մի մազ անգամ չի տա իր մորթուց՝ եթե գիտենար հաստատ, որ Վասակը անկման մեջ է և անվրեպ մահվան դատապարտված։

Դա դառնացնում էր Վասակին, որն իրեն մենակ էր զգում աշխարհում։

— Պարսիկնե՞րը, ասում ես,— դառնությամբ և մտորմունքով ծոր տվեց Վասակը։

Կոդակը կեղծ ու շիտակ հառաչեց։

— Պարսիկները շտապեցրին պատասխան թուղթը. գիտեին, որ շտապ գրելով նախարարներն ըմբոստություն կանեն և մեղքը կընկնի վրադ։ Ժամանակ որ անցներ՝ հնազանդ թուղթ կգրեին։

Դա մասամբ ճիշտ էր։ Վասակը տեսավ, որ ծերուկը լավ է նկատել դեպքերի զարգացման ընթացքը։ Նա նախանձ զգաց Կոդակի այդքան թափանցող մտքից, բայց և ուրախացավ, հուսադրվեց, որ ծերուկը թերևս կարողանա ճանապարհին և մանավանդ արյաց արքունական Դռանը հարթել իր գործերը։

— Վաղն ևեթ ճանապարհ կընկնես։ Հետդ էլ լինելու է նաև Վահևունյաց Գյուտը։

— Վահևունյաց Գյո՞ւտը։

— Շուքի համար։

— Հասկացա...

— Ամեն բան սեղանի պես չես բանա առաջը։

— Հասկանում եմ, տեր իմ։ Առաջինը չէ, վերջինը չէ։

— Դե գնա՛, պատրաստվի՛ր։

Կոդակը վեր կացավ և ավելի ծանրակշռության համար, քան ցավից՝ տնքալով դուրս գնաց։

— «Աղվե՞ս»...— մռմռաց նրա հետևից Վասակը և դուրս եկավ այգի։ Սենեկապետը, որ կամենում էր ուղեկցել նրան, հայացքը լարեց նրա շրթունքներին՝ սպասելով որևէ հրամանի։

Հրամանը չուշացավ։

— Սուրհանդակ կառնես հետդ և կգնաս Խոսրովին զգուշացնելով, որ իր հետ ուղեկից եմ դնում Վահևունյաց իշխանին և խորհրդատու-օգնական՝ Կոդակին։

— Ուրիշ հրամա՞ն։

— Ընծաների վրա կավելացնես ակնակուռ սուրը, ոսկի կոնքը և ընտիր աղանդեր։ Ծառաներին մետաքսե պատմուճաններ, ոսկի դրամ և պաշար։

— Հրամանդ ի կատար, ասաց սենեկապետը և գնաց։

Վասակը իջավ այգի։ Օրը տաք էր։ Արևը հաճելի։

— «Պարսիկնե՞ր»... և ո՞չ հայերը,— մտածեց Վասակը դառնությամբ.— հայերը և՛ս։ Այո, նա մենակ է աշխարհում։ Նրան չի սիրում ոչ ոք։ Նախարարները սառն են, մի մասը թշնամի, Հազկերտի հաղարապետ Միհրներսեհը վաճառող, գնող, Հազկերտը կատաղի, քմահաճ, ժողովուրդը հակառակ։ Ի՞նչը կարող է փոխել այս վիճակը։ Նա սկսեց ավելի ու ավելի պահանջ զգալ այն նվիրական, գաղտնի մտքին, որ նրան զբաղեցնում էր վաղուց։

— Հիմնովի՞ն, հիմնովի՞ն պետք է փոխել այս ամենը։ «Այն» պետք է իրականացնել։— Ինքը գիտեր, թե ինչ էր «այն», և փայփայում էր, գուրգուրում էր այն։

Նա գնաց դեպի այգու բացատը, խաղողի թփերի կողմը։ Անցյալ տերևաթափի կարմրադեղին տերևները կարկատանների պես շարված էին թմբերի վրա։ Հողե պատերի տակով չոր առվի հատակին ձգվում էր նախշուն, մանր խճաքարերի մանյակը՝ հիշեցնելով ուշ գարնան և ամռան հոսող ջրերի կոհակումները։ Հերվա դեղնած խոտի վրա այստեղ-այնտեղ ընկած էին չորացած ու փտած խնձորներ ու ընկույզ։ Դիմացը խրոխտում էր Մեծ Մասիսը՝ կարծես մի-տելով վրա գալ և տակովն անել ողջ դաշտավայրը։ Նրա ամեհի վիհը կապույտ ստվերների երիզներով պահում էր իր մեջ Արտավազդի լեգենդը։ Հեռուն, դաշտի խորության մեջ, երկինք էր ձգտում կապույտ ծխի մի սյուն։

Ամեն, ամեն ինչ խաղաղ էր։ Եվ Վասակը գնալով դեպի այգու խորքը՝ ինքը ևս ներշնչվեց այդ խաղաղության ներդաշնակությամբ ու երազել սկսեց։

Կգան օրեր, և ինքը կբերի օրերը։ Հայաստանը իր ձեռքը կընկնի։ Նա ոտի տակ կտրորի այս դենշապուհներին, կոչնչացնի վա-

բազվաղաններին, այս նախարարներին, այս հոգևորներին, կուժեղացնի երկիրը և ինքը կմնա Հազկերտի առաջ անմրցակից մարզպան, իսկ ապա և թագավոր։ Կձուլվե՞ն հայերը պարսից հետ՝ հապիվ թե, բայց այդ չէ կարևորը... Ուժեղ երկիր կլինի, գլուխը կբարձրացնի, և ո՛չ պարսիկ, ո՛չ հույն, այլևս չեն համարձակվի տեր ու տիրակալություն անել այս երկրում։ Իսկ հիմա ինչի՞ է նման... Այս ժողովուրդը չի հնազանդվում, այս նախարարները չեն լսում իրեն, Վարազվաղանն ու նմանները չեն դադարում դավելուց։ Ամենքն իր մահն են նյութում։ Ամենքը՝ հայերը, պարսիկները, Վարազվաղանը, Միհրներսեհը։ Ատում են իրեն իր կինը, զավակները։ Ոչնչացնել այդ մտքի իրագործման ճանապարհին ամեն, ամեն արգելք և գնալ դեպի այդ մեծ նպատակը։ Եվ այդ ամենը հնարավոր է։ Խելք է պետք, համբերություն, ջանք, համառություն, անգթություն...

Հեռվից գալիս էր Գադիշոն, որին ուղեկցում էր սենեկապետը։

— Ուրախ ժամու ժամանեցիր, իշխան,— դիմավորեց նրան Վասակը։

— Տխուր սրտով,— հարեց Գադիշոն և լուրջ ու խելացի նայեց Վասակին։

— Սիրտն ընդունակ է ամեն զգացման՝ տխրության և բերկրանքի։ Թողնենք տխրությունը և տանք մեզ բերկրանքին։

Ու դարձավ նշանակալից նայեց սենեկապետին։

Սենեկապետը հեռացավ։

Գադիշոն պատմեց նախարարների մտադրությունը՝ դիմել Բյուզանդիա, Վրաստան, Աղվանք օգնության դաշինքի նաև հունաց բաժնի հայ իշխաններին։ Վասակը մտածեց մի փոքր։

— Կքայքայենք այդ օգնությունը,— ասաց Վասակը։

— Քայքայելն ավելի դյուրին է, ճշմարիտ ես ասում,— մի փոքր մտածելով ինքը ևս՝ ասաց Գադիշոն։

Մի փոքր անց սպասավորները ոսկեկար սփռոցներ գցած խոնջույով բերին նախաճաշ, աղանդեր և գինի։ Դրին երկու աթոռիկ, և նախարարները նստեցին։ Վասակը անձամբ լցրեց գավաթները, խմեցին։ Սենեկապետն ու սպասավորները քաշվեցին պատշաճ հեռավորություն։

— Մեր թագավորությունն էի հիշում։ Մեր կորցրած հարստությունը,— ասաց Վասակը,— թանկագին բան կորցրինք։

— Բանն էլ թանկագին է դառնում, երբ կորչում է,— կիսաձայն ասաց Գադիշոն։

— Ինչպես առողջությունը, երիտասարդությունը, սիրուհին։ Վերցրու, այս գավաթը քո արևշատության։

Խմեցին։ Ապա լռելյայն նայեցին իրար, և ինչպես խելացի մարդիկ են անում՝ իսկույն հայացքները փախցրին և սկսեցին երկար լռել։ Նրանք իրար հասկանում էին, և լռությունը չէր խանգարում, որ իրար հետ խոսեն մտքներում։

— Ասում ես թագավորությո՞ւնը...— քմծիծաղով կրկնեց մի փոքր հետո Գադիշոն և երազանքով նայեց հեռուն,— կորա՞վ, կուզես լաց, կուզես ծիծաղիր։

Վասակը լսեց նրան և ասաց մեղմաձայն։

— Կրկին կգա, և սա ճշմարիտ է, ինչպես այս հողը, երկինքը, դաշտը, Մասիսը։

— Ի՞նչ կերպ։

— Տեսնենք, մտածում եմ... և եթե կամենանք՝ նա կգա։

— Ես չեմ ճանաչում մի մարդ, որ միուրիշ բան ստեղծի այս երկրում...

Վասակը խոր զննեց Գադիշոյին և լռեց։ Նրան խոցեց այն միտքը, որ Գադիշոյի պես բանիմաց մարդը կորցրել է հավատը ուրիշ ելքի։

«Սրանք բոլորը համեստ մարդիկ են»,— մտածեց Վասակը։ Հետո տխրությամբ լցրեց գինու գավաթները։

— Դե խմենք, երբ այդպես է։

Խմեցին։ Գադիշոն մտածում էր և դառն ժպտալով գլուխն օրորում։

— Դրա մա՞րդը չկա,— ասաց նա,— մա՞րդը...

— Չկա մա՞րդը...— հարցրեց Վասակը և լռեց մռայլված,— «կա՛ այդ մարդը»,— պատասխանեց ինքն իրեն և շրթունքները սեղմած, խստահայաց աչքերը գամեց խոսակցի աչքերին։

Գադիշոն վեր կացավ գնաց դաշտի կողմը։ Վասակի պալատը մի փոքր բարձրության վրա էր, ուստի և քաղաքի պարիսպները թույլ էին տալիս, որ երևա Այրարատյան դաշտավայրը։

***

Մայրաքաղաքի և Այրարատյան դաշտավայրի բնակավայրերի հուզումներն ու ըմբոստ դեպքերը անարձագանք չմնացին Հայաստանի մնացած ավաններնում և շեներում։ Լուրերը՝ մեկը մյուսից գրգռիչ, զարմանալի՝ սկսեցին շրջել երկրի ամենահեռավոր անկյունները և լեռնաստանները։

Ժողովուրդը ցնցվեց, արթնացավ։ Հայրենի երկրի պաշտպանության նշանաբանը ստիպեց մարդկանց մտածել խղճի ազատության, ազգային ինքնագիտակցության մասին։ Ժողովուրդը հասկացավ, որ ինքը մի ընդհանուր գործի մեջ կարևոր զանգվածն է։ Եվ այս գիտակցության շարժման ալիքը բարձրացած ողողեց ողջ երկիրը, գնաց շոշափեց երկրի ամենահեռավոր, խուլ անկյունները։

Երկիրն սկսեց սպասել, թե ինչպես կզարգանան դեպքերը։

Հայ նախարարները սկսեցին ցույց տալ արտասովոր աշխույժ։

— Այլևս ընկանք ջուրը, և նա մեզ կտանի՝ կամենանք չկամենանք,— ասաց Արշարունյաց Արշավիր նախարարը մի անգամ, երբ նախարարներից ոմանք պատասխան թուղթը ուղարկելուց հետո հարց տվին իրենք իրենց, թե ի՞նչ կլինի սրանից հետո։ Գաղիշոն իր կողմնակիցներով սկսեց հետախուզել նախարարներին՝ դիմադրության ձևեր մշակելու համար։ Նախ՝ դադարեցին վիճել նրանց հետ, որ արդեն վտանգավոր էր բորբոքված մթնոլորտում և ապա սկսեցին այժմ արդեն շատ զգուշությամբ այցելել Վասակին, որն ամփոփվեց և ավելի ու ավելի անթափանց դառավ։ Նրանք հասկացան, որ սկսված շարժումը պիտի ծավալվի, պայթի, որպեսզի երևան նրա քայքայման ստվերագծերը։

Վարդանը թեև ավելի մտահոգ, բայց այժմ արդեն վճռական դիրք բռնեց։ Նրա համար հիմա այլևս բոլորովին պարզվեց, որ պատասխան թղթին կհետևեն շատ լուրջ դեպքեր, որ բարձրացող փոթորիկը չի ընդհատվի հանկարծ, այլ, որ նա կկատաղի և որոտալով կանցնի Հայաստանի վրայով։ Արյաց հզոր պետության դեմ դուրս եկավ փոքրիկ մի երկիր և նա պետք է օրհասական կռիվ մղի, և որ դա հղի է սարսափելի անակնկալներով ու հետևանքներով։ Իսկ այդ արդեն պահանջում էր գործ, պայքար, եռանդ։ Սկսեց զորք պատրաստել։

Երբ կծավալվեն դեպքերը՝ հայտնի չէր, բայց որ ծավալվեն, պետք էր իսկույն դիմադրել վճռական թափով։

Ներշապուհը դառավ ավելի գործունյա և անհանգիստ։ Նա հաճախ էր կանչում իր մոտ Արտակ և Ատոմ նախարարներին և զորքի մասին հրահանգներ տալիս։

Երևում էր, որ նախարարներն իրար մեջ նեցուկ էին որոնում։

Լուսադեմ էր. բայց դեռ չէին սկսել գորշանալ առարկաները, հազիվ միայն դժգունում էր արևելքը անտառապատ բլուրների հետևում։

Արքունական պալատի դահլիճում հանդարտ անցուդարձ էր անում Վարդանը և երբեմն աչքը գցում դռան վարագույրի կողմը, որտեղից մարդու էր սպասում։

Մի անգամ ևս մոտեցավ մարմարիոնե սեղանին, որի վրա թողել էր երկու ոլորած փաթեթներ ընտիր մագաղաթի, բացեց, կարդաց և կրկին թողեց սեղանի վրա։

Ներս եկավ սենեկապետը՝ իր հետ բերելով մի առույգ ծերունու, որը խոնարհ գլուխ տվեց Վարդանին։ Վարդանը նրան հրավիրեց առաջ գալու և նստելու սեղանից մի քանի քայլ հեռու դրած մարմարիոնե աթոռիկին։ Ծերունին, որ սեպուհ էր, հաստատ քայլերով, արժանապատվորեն առաջ եկավ, բայց չնստեց։ Նա ալեխառն էր և սևահոն, բարձրահասակ։ Խելացի աչքեր ուներ նա և շատ համակրելի եռանդուն դեմք։

Վարդանը հայտնեց նրան, որ ուղարկվելու է Վրաստան՝ իբրև դեսպան, և սկսեց հրահանգել, թե ինչպես պիտի կատարի իր առաքելությունը։ Մի քանի տեղեկություններ տվեց Վրաստանի մասին և շարունակեց.

— Տես ի՛նչպես են ընդունել Հազկերտի հրովարտակը և ինչ են մտադիր անել։ Կամ արե՞լ են արդեն։ Լա՛վ տեղեկացիր Աշուշա բդեշխի և թագավորի հարաբերությունների մասին։ Թագավորը համակիր է մեզ և ինձ բարեկամ. բայց տես ո՛րքան է բդեշխը հակամետ Հազկերտին դիմադրած կանգնելու։ Տես որքան են իշխանները համերաշխ՝ ա՛յս խնդրում։ Թե՛ թագավորին և թե՛ բդեշխին, եթե հարցնեն, վճռական հայտնիր, որ հայերը վճռել են դիմադրել։ Մարզպանի մասին ասա, որ նա ենթարկվեց նախարարության, հոգևորականության և ժողովրդին՝ պաշտպանել հայրենիքը։

— Պատվերդ ի կատար, Սպարապետ,— խուլ ու հանգիստ ձայնով ասաց թանձրամորուք սեպուհը և հայացքն ուղղեց Վարդանի ձեռքում երկու ոլործուն մագաղաթին։

Վարդանը շարունակեց.

— Առաջ մտիր Մծխեթ, թագավորի մոտ։ Մի՛ քաշվիր նախապատվություն տալ նրան՝ որքան էլ իշխանները ինքնագլուխ են այնտեղ և բդեշխը կամենում է իրեն ենթարկել ողջ երկիրը։ Բայց իմացիր, թագավորը առանձնապես ատում է Հազկերտին. նա՛ պիտի գլուխ կանգնի ապստամբության։ Նա իսկական զորավար է, խիզախ և խելոք մարդ։

— Պատվերդ ի կատար։

Վարդանը մտածում էր։

— Ես հավատացած եմ, որ Վրաստանը կկանգնի մեր կողքին։ Մեր գործը նաև նրանց գործն է,— կարծես ինքն իրեն խոսեց Վարդանը։— Ինչ մեզ է վիճակված այն էլ նրանց։ Հա՛,— հիշեց և մոայլվեց Վարդանը,— տե՛ս, փեսաս՝ Վազգեն իշխանը չի՞ խառնակում այնտեղ, չի՞ դավում թագավորին։

— Դժվար կլինի գործս Յուրտավում,— ասաց դեսպանը։

— Դժվա՞ր. շա՞տ... Հայրը՝ բդեշխ, ինքը նրա զավակը։ Այո, դժվար է։ Բայց խելացի մարդ է Աշուշան։ Կհասկանա գործը։ Նրան և թագավորին ցույց տված հարգանքներիդ մեջ՝ մի՛ շոշափիր բդեշխի ինքնասիրությունը։ Իհարկե, սրանք դատարկ բաներ են։ Դու միայն շանա լա՛վ համոզել բդեշխին։

— Հրամայեցի՛ր, լավ համոզել,— ասաց սեպուհը։

— Բայց տեսա՞ր ինչ գնով միաբանության եկանք մենք այստեղ... և արդյո՞ք վերջնական,— հառաչեց Վարդանը։

— Դժվարություններ շատ կան նաև Վրաստանում,— շարունակեց Վարդանը,— նրանց մեջքին է՝ Ալանաց Դուռը, հոների խուժման անցքը... Տես ի՛նչ են խոսում այս մասին։ Սա շատ է կարևոր։ Վրացիք այնքան չեն սարսափում Ճորա Պահակից խուժող հոներից, որքան Ալանաց Դռան սպառնալիքից։ Սա լա՛վ իմացիր։

— Հրամայեցի՛ր, Սպարապետ,— խորասույզ մտքերով պատասխանեց սեպուհ դեսպանը։

Դեսպան սեպուհը խելացի աչքերը հառած Վարդանին՝ յուրացնում էր նրա ասածների բուն իմաստը։ Վարդանը չէր կամենում ամբողջովին բաց անել սեպուհի, ինչպես և ողջ նախարարների

առաջ իր ներքին տարակուսանքներն ու իսկական կարծիքը գործերի ընթացքի մասին։ Նա սկսել էր կասկածել, որ Վասակը կհեռանա ուխտից և կբռնի ուրույն ուղի, թերևս և հակառակ։ Բայց նա չէր կամենում այս ամենը պարզելով խուճապ ստեղծել հենց նախարարներից նրանց մեջ, որոնք դեռ անպատրաստ էին լրիվ ճակատով պայքար մղելու հակառակորդների դեմ։ Նա սպասում էր, որ դեպքերը մի փոքր հասունանան և նախարարներն էլ ընտելանան պայքարի անհրաժեշտության։ Վարդանը դեռ շատ էլ մեծ նշանակություն չէր տալիս նախարարների «վերջնական վճիռներին»։

Այդպես նայում էր նա նաև Վրաստանի գործերի վրա։ Վրացիների օգնությունը նա գնահատում էր մի քանի հիմնական նպատակների համար։ Նախ՝ Վրաստանը ճանապարհն էր դեպի Ալանաց Դուռը, որի հետևից հարավի վրա էին ճնշում հոների բարբարոսական հրոսակները, որոնց մասին Վարդանը մտածում էր... Ապա նաև Վրաստանը մի երկիր էր, որ կարող էր հյուսիսից հենակետ դառնալ պարսիկների հարձակվող այն զորքերի համար, որոնք կբերվեին Աղվանքի վրայով Հայաստանի վրա։ Վրացիները կարող էին օգնել փակելու այդ մուտքը։ Վրացիները կարող էին ոչնչացնելով Տփղիսում կայանող պարսիկ զորքը, գալ մրանալ հայերի հետ ընդհանուր ճակատում պարսից դեմ։ Եվ ապա վերջապես Վրաստանի մասնակցությունը դիմադրության՝ բարոյական և ռազմական մեծ նշանակություն ուներ հայերի համար։

Այնպես որ՝ շատ մեծ զգուշություն էր պետք այս գեսպանությունների մեջ։ Մանավանդ որ՝ Վարդանն զգում էր, որ Վասակը ձեռքերը ծալած չի նստել, որ նա էլ է գործում։

Վարդանը դեռ չէր մտածում, թե Վասակը կարող է բռնել կամ բռնել է հայրենադավության ուղին։ Նա Վասակի մեջ տեսնում էր իր մարզպանական պաշտոնի հարկադրանքներին մի փոքր խիստ չերմեռանդություն ցույց տալու ցանկություն և պարսիկներից հասնող վտանգի մեծությունը չըմբռնող մարդու թուլություններ։

— Այդպե՛ս, սեպո՛ւհ, ջանա՛ համոզել բդեշխին, որ բացի դիմադրությունը ոչ մի այլ ուղի չկա։

Գեսպան սեպուհը երկյուղած լսում էր Վարդանին և նա առաջին անգամն էր տեսնում, թե որքան դժվարությունների մեջ է զորական մարդը։

«Դժվա՞ր պատերազմ է»,— մտածեց նա և սկսեց մտահոգվել, թե ինչպես պիտի կատարի իր առաքելությունը։

— Քո ամենամեծ հմտությունը այն կլինի, եթե կարողանաս բդեշխի հետ զրույցի բռնվել։ Ընթերցման պահին փեսաս, Վազգենը, կարող է ներկա լինել։ Զգո՞ւյշ նրանից։ Ամեն կերպ հասկացրու, որ մեր ժողովուրդը կգնա պատերազմ, բայց չի հնազանդի պարսից արքային։ Տե՛ս, բդեշխը կապեր ունի՞ մարզպանի հետ։ Իմ մասին հայտնիր, որ հաշտ եմ մարզպանի հետ։ Կրկնում եմ. ասա, որ հայ նախարարները ուխտ են կազմել՝ դիմադրել արքային։ Ասա, որ ողջ ժողովուրդը զինվորագրված է։ Թող լավ իմանան մեր վճիռը։

Վարդանը վեր կացավ, մոտեցավ դեսպանին, ձեռքը դրեց նրա ուսին.

— Քեզ կհետևեն մարդիկ թերևս մերոնցից. ինչպես և պարսիկներ։ Գործիր ազա՛տ և վճռակա՛ն։ Բացեիբաց հայտնիր, որ հայերը չեն զիջում իրենց ազատությունն ու երկիրը, և հավատքը պատրվակ է, Հազկերտն ուզում է խլել մեր իշխանությունը։

Վարդանը արձակեց սեպուհ դեսպանին հետևյալ խոսքերով.

— Ամենքի հետ հանդարտ խոսիր, համոզի՛ր, մի՛ վիճիր։ Վրացիները եղբայր ժողովուրդ են, և մեր վտանգը իրենց վտանգն է. այս հասկանում են նրանք։ Հասկացրո՛ւ այս ամեն տեղ, որ մենք այսպես ենք մտածում, և այն էլ ասա, որ մենք սպասում ենք նրանց մեր կողքին՝ բռնավորի դեմ։ Դե, աստուծո՛վ, բարի ճանապարհ։ Ահա այս թագավորի նամակը, այս էլ բդեշխինը։

Վարդանը տվեց երկու նամակները։

Սեպուհը վերցրեց մագաղաթի փաթեթները, համբուրեց, դրեց աչքերին, ապա խոր խոնարհություն տալով Վարդանին կամենում էր հեռանալ. բայց կանգ առավ։

— Հա՛, ի՞նչ կա,— հարցրեց Վարդանը,— մնա՞ց անհասկանալի բան։

— Ցմնաց, Սպարապետ,— տատամսեց սեպուհը և կոտրած ժպիտով նայեց Վարդանին,— դժվարին գործի դրիր, Սպարապետ, արդյոք պիտի կարողանա՞մ գլուխ բերել։ Դեսպանության շատ ես ուղարկել ինձ, բայց այս անգամ գործը նման չէ նախկիններին։

— Այո, այս անգամ դժվար է բանը, բայց ես կասկած չունեմ,

որ մեզ կօգնեն և՛ վրացիները, և՛ աղվանները,— ասաց Վարդանը,— գնա՛, աստվա՛ծ քեզ հետ։

Դեսպանը կրկին խոնարհություն արեց և դուրս գնաց։

Ներս մտավ Ատոմը Արտակ Մոկացի հետ։ Նրանք գիշերվանից հետևում էին Վարդանին և չհամարձակվելով խանգարել նրան՝ արթուն հսկել էին ողջ գիշեր։ Նրանք քնատ էին, բայց հետաքրքրված։ Գորովալից աչքերով նայեցին նրանք Վարդանին և լուռ կանգնեցին սենյակի դռանը։

— Նե՛րս եկեք, իշխանիկնե՛ր,— ասաց մեղմ ու թախծալի ձայնով Վարդանը, հասկանալով, որ երիտասարդ նախարարները սրտներին մոտ են արել Վարդանի գիշերային արթնությունն ու անհանգստությունը։ Նա շատ էր սիրում այս մտերիմ զույգին, ուստի և սիրով ժպտաց նրանց.

— Ինչո՞ւ չեք քնել։ Ի՞նչ է, սիրահարված սոխակնե՞ր եք, գիշերի հետ բարեկա՞մ եք դառել։

— Սպարապե՛տ,— ասաց Ատոմը,— մեզ մտահոգում է մի բան. ո՞ւմ հետ կլինեն վրացիները, աղվանները, հունաց բաժնի հայ իշխանները։ Մի՞թե ո՛չ մեզ հետ...

Վարդանը հասկացավ. երիտասարդ իշխանները տենչում են մտերիմ զրույց ունենալ իր հետ։ Նա չմերժեց, անգամ կարիք զգաց խոսելու այդ մասին։ Նա վեր կացավ, մոտեցավ պատուհանին և սկսեց խոսել Վրաստանի և Աղվանքի մասին։ Եվ որքան շատ էր խոսում, այնքան դրսևորվում էին տարիներում կուտակված մրտքեր...

— Մենք, վրացիները, աղվանները մի բախտի ժողովուրդ ենք,— շեշտեց Վարդանը,— ուրեմն մի ժողովուրդ ենք...

Վարդանն այս ասաց ներքին ջերմությամբ, կարծես ինքը լիներ դեսպանը և խոսում էր վրաց ժողովրդի հետ հայ ժողովրդի կողմից։

— Նրանք ուրիշ ուղի չունեն, քան մերն է,— չէր հանգստանում Վարդանը,— նրանք կգան մեզ հետ։ Կգան, որովհետև այդ է մեր ժողովուրդների ինքնուրույն գոյության ուղին։ Այո՛, նրանք կգան, անպատճառ կգան, ես գիտեմ, վրացիք և աղվանները ազատասեր ժողովուրդներ են։

Վարդանը մոտեցավ պատուհանին։ Արդեն սկսում էր լուսանալ։ Գիշերը գունատվեց, և արևելքում, մոտակա բլուրների հետևից

սկսեց նայել լուսացող երկինքը։ Այգու սաղարթները անշարժացած, սպասողական վիճակի մեջ, շունչները պահել, ականջ էին դնում։

— Նրանք կմիանան մեզ,— շարունակեց Վարդանը դուրս նայելով,— ես վստահ եմ Թագավորի կողմից, շատ իշխանների կողմից, որոնց ճանաչում եմ։ Ժողովուրդը նույնը կանի, ինչ որ մերն արեց։ Ես երկյուղ եմ կրում միայն նրանց այն իշխաններից, որ կկարծեն, թե Հազկերտը կհագենա մեր արյունով և կկորցնի ախորժակը Վրաստան գնալու։ Ես երկյուղ եմ կրում նրանց այդ խոհեմներից։ Ինչպես որ խոհեմությունը մեզ է սպառնում այստեղ, նույնը կանի նաև նրանց այնտեղ։

Վարդանը ետ եկավ և նստեց գահույքին։

Այսպես՝ Վարդանը մի քանի օր հրահանգում էր հնարավոր դաշնակիցների դեսպաններին, որոնք պետք է ուղևորվեին իսկույն և նախապատրաստեին օգնության գործը։

Նրանք ճանապարհ ընկան իրար հետևից։

Քնած չէին և դիմադրության հակառակորդները։ Գադիշոն հաճախ էր լինում Վասակի մոտ, տանելով իր հետ Արտակ Ռշտունուն։ Բայց պատահում էր, որ սրանից գաղտնի, մենակ փակված Վասակի մոտ՝ երկար ու բազմանշանակ փսփսուկով խորհրդակցում էին։

Մի գիշեր Վասակը երկար հրահանգում էր հավանական դաշնակիցներին ուղղվելիք մարդկանց, որ պետք է մեկնեին Վրաստան, Աղվանք և հունաց բաժնի հայ իշխանների մոտ՝ խափանելու համար Վարդանի ձեռնարկությունը։ Հատկապես հրահանգում էր գործել խիստ գաղտնի և շատ զգույշ։ Հունաց բաժնում Վասակը մեծ հույսեր ուներ համանուն Վասակ Մամիկոնյանից։ Նամակն ուղղվեց նրան։ Մնացած իշխանները՝ Արշարունու անձնական բարեկամները՝ Մաղխազ Վրիվը, Անձևացյաց Շմավոնը և Առավան Վանանդյան հարել էին Վարդանին. միայն վերջիններս միշտ հարց էին տալիս տարակուսանքի ժպիտով.

— Բայց ինչպե՞ս պիտի լինի դիմադրությունը... ի՞նչ պիտի լինի...

— Սպարապետը կգտնի ճանապարհը,— հույս էր տալիս Արշավիր Արշարունին, որ մեծ հավատ ուներ Վարդանի վրա։

***

Գործերը վերջացան Արտաշատում։ Ժամանակ էր ցրվել և գնալ տուն՝ զորագնդերը կարգի բերելու։

Երեկոյան Վարդանը ժողովեց նախարարներին արքունական տան պատշգամում և հրահանգեց ցրվել իրենց աշխարհները ուժերը հավաքելու տերունական զորքի համար։

— Որտե՞ղ հավաքենք գնդերը, եթե պետք լինի,— հարցրեց Արշարունին։

— Կգա օրը՝ կերևա,— ասաց մտածելով Վարդանը,— բայց գնդերը կազմեցե՛ք։ Հարվածը որտե՞ղ կընդունենք, որտե՞ղ կհարվածենք մենք՝ ցույց կտա հետագան։

— Տեր Մամիկոնեից,— խոսեց Արտակը,— ո՞ւմ հետ է մարզպանը։

— Այո՛, այո՛,— վրա բերին մյուս նախարարները,— ո՞ւմ հետ է։

Վարդանը ճակատը կնճռոտեց։ Ապա ցածրաձայն ասաց.

— Իր խղճի և աստծո հետ... անշուշտ...

— Ոչ, դրանով բան չի դուրս գա,— չդոհացավ Արտակը,— կամ մեզ հետ է, կամ մեր դեմ։ Պարզենք դիրքերը։

Վարդանը չէր կամենում խոսել այդ մասին բոլոր նախարարների ներկայության՝ ուստի և կրկին ցածրաձայն ասաց.

— Նա մարզպան է, պարսից պաշտոնյա։ Չի կամենում իրեն վարկաբեկել Հազկերտի առաջ։ Նա պատռում է ինքն իրեն՝ թե կարող է խաղաղությամբ վերջացնել գործը Հազկերտի հետ։ Հույս ունեմ, որ արհավիրքի օրերին կսթափվի։

Վարդանը բարվոք համարեց սքողել այդ խնդիրը։ Եվ վերջապես ինքն էլ դեռ լավ չէր ըմբռնում Վասակի դիրքը դավաճանությո՞ւն, թե զգուշավորություն... Նա հույս ուներ, որ եթե ինքը հաջողեցնի դիմադրական ուժերի կազմակերպումը, Վասակը կանցնի իրենց կողմը։ Մյուս նախարարների՝ Գյուտի, Ռտշունյաց Արտակի, Գաղիշոյի դիմադրությունը նա առայժմ համարում էր լոկ նախարարական ներհակություն։

— ... Բայց արդյո՞ք կսթափվի,— կարծես ինքն իրեն խոսեց Վանանդյա նախարարը։

— Մարզպանը հայ քրիստոնյա է,— բարձրացրեց ձայնը Վարդանը խստությամբ,— նույնքան պարտական է երկրին, որքան և մենք։

— Կգա՞ նա մեզ հետ,— համառեց Վանանդյա նախարարը։

— Երբ գործը կսկսվի՝ կերևա, թե ով է գալու, ով չէ,— խուսափեց Վարդանը,— և այն ժամանակ կտանք մեր վճիռն ամենքի համար...

Վանանդյա իշխանը այլևս չպնդեց։

— Տյարք, չխախտենք արտաքին միաբանությունը ժողովրդի առաջ։ Հետևենք ուշի-ուշով դավաճանության։ Թերևս դա զգուշավորություն է։

— Ձեմ ծածկում,— շարունակեց Վարդանը մի փոքր դժվարանալով,— մարզպանը և մի քանիսը տարտամ վերաբերվեցին գործին։ Դա մեզ վշտացնում է, բայց ոչ մի ուժի առաջ կանգ չենք առնի։ Դե, բարի գիշեր։

Նախարարները գիշեր բարի ասելով ցրվեցին։

Արտակը ճանապարհին մոտեցավ Արտակ Ռշտունուն, որ բութ հայացքով հետևում էր նախարարներին.

— Վաղը կճանապարհվե՞ս, տեր Ռշտունյաց։

Արտակ Ռշտունին ծույլ պատասխանեց.

— Տեսնենք, գործեր ունեմ այստեղ։

— Ես կսպասեմ. գնանք միասին։

— Լավ, սպասիր, գնանք միասին,— ասաց Արտակ Ռշտունին, ոչ այնքան բարյացակամ։

Արտակը չնկատեց այդ վերաբերմունքը։ Նա ճանաչում էր Արտակ Ռշտունուն իբրև քնկոտ և անգործունյա մարդ։ Այդ բանին էլ վերագրեց նա նրա խոսելու եղանակը։

Արտակը մտադրվեց Ռշտունյաց նախարարի հետ գնալ Ռշտունիք և այնտեղ տեսնել Անահիտին։ Ռշտունյաց աշխարհը իր բոլոր կողմերով նվիրական էր դառել նրա համար։ Անգամ Ռշտունյաց նախարարը, իր անհամակրելի տեսքով և անտարբեր վերաբերմունքով մի բան ուներ Անահիտից. նրա փեսան էր, այնտեղից էր։ Գորովանքով էր նայում նրան Արտակը և լցվում ուրախությամբ, որ նա այստեղ է։ Եվ եթե նա այստեղ է, գոյություն ունի, ապրում է իր առջև, ուրեմն և գոյություն ունի իր անձկալին, երազ չէ սրբատամաշ։ Ա՜, եթե իմանա Ռշտունյաց նախարարը, թե որքա՜ն հարազատ է նա Արտակին։ Գնա՜լ, գնա՜լ Ռշտունյաց աշխարհը, ժամանա՜կ է, վաղո՜ւց ժամանակ է...

Նախարարները ցրվեցին իրենց օթևանները, և Արտակը Ատո-

մին տարավ իր մոտ։ Վերջին գիշերը նա կամենում էր անցկացնել իր սիրելի զինակցի հետ։

— Է՛, օրերը լցվեցին, սիրելի՛ իշխան,— ասաց Արտակը։

— Կգնանք, մի փոքր դադար կառնենք,— հետո «կսկսվի»՝ կհանդիպենք,— ասաց Ատոմը։

Արտակի աչքերը պաղում էին երկնքի՝ խորության մեջ։ Մի պայծառ աստղիկ դեղին թիթեռի պես պլպլում էր անհուն անդունդում։ Շները հաչում էին խաղաղ ու ծույլ։ Հեռվից ձգում էր երբեմն պահակների կոչը իրար, և գիշերը խորանում էր։ Խուլ թշշում էր Արաքսը։

Ատոմի հեզ, գեղեցիկ դեմքին մի ինչ-որ կարծրություն եկավ։ Նրա երևութական փափկության տակից դուրս լողացին ջլապինդ զորականի երկաթ մկաններ և հանդուգն գործերի սլացող խենթ հայացք։

«Սա ամե՛ն բան կկտրի կանցնի»,— մտածեց Արտակը և հիանալով՝ դիտել սկսեց Ատոմի բնական հպարտ կեցվածքը և անսպառ հրապույրը, որ ձգտում էր դեպի իրեն։ Նա սիրելի էր ամեն վայրկյան, ամեն շարժման, ամեն նայվածքի պահին։ Մեծագույն հաճույք էր նրան դիտելը։

— Եթե դեպքերն սկսվեն այս ամառ,— ասաց Ատոմը,— մինչև ձմեռ թերևս կտևի։

— Երկա՞ր կտևի,— առարկեց Արտակը,— պիտի մաշենք իրար, պարսիկը մեզ, մենք՝ պարսիկին։

— Նայած թե մեր գրոհը ինչ թափ կունենա և որտեղ կպատահի,— ասաց Ատոմը։

— Միևնույն է։ Մեր հույսը մաշումն է։ Եթե լավ չձգենք մաշումը՝ կորած ենք։

— Դա ճշմարիտ է,— հառաչելով վեր կացավ Ատոմը և սկսեց անցուդարձը։

— Բայց քեռին աշխուժացա՞վ,— ասաց Արտակը։

— Քեռին մեծ գործեր պիտի տեսնի,— շեշտեց Ատոմը.— քեռին մեծ գործի մարդ է։ Նա կփրկի Հայոց աշխարհը։

— Չէ՞, գտա՞վ ճանապարհը։

— Գտավ։ Աշխա՛րհը։ Աշխարհի հետ որ լինես՝ չես կորչի։

— Ասաց՝ «ռամիկը պիտի փրկի մեզ», ասաց՝ «չնեղեք, արդար ու բարեհամ եղեք հետը»։

— Դե, բարեհաճը ո՞րն է, սանձներս չենք տալու ձեռը։ Բայց որ կովողը նա է՝ ճշմարիտ է Սպարապետը։— Չէ, պետք է, պետք է բարեհաճ լինենք։ Ռամկին դուր է գալիս։

Եվ Ատոմը կարծր նայեց Արտակին ու լռեց։ Ուշ գիշերին, երբ աքաղաղները կանչել սկսեցին՝ նախարարները անկողին մտան։

***

Նախարարները Վարդանի գլխավորությամբ գնացին Վասակին պաշտոնական տեսակցության և հրաժեշտի։

Վասակը նրանց ընդունեց բավական սիրալիր։

— Քո թույլտվությամբ վերադառնում ենք տուն,— ասաց Վարդանը՝ իբրև թե առհասարակ ոչինչ չէր պատահել։

— Այո, ժամ է,— խոսեց Վասակը հանդարտ եղանակով,— հույս ունենանք, որ ամեն ինչ խաղաղ կվերջանա...

— Արդյո՞ք խաղաղ,— անզգույշ հարց տվեց Վանանդյա նախարարը և ժպտաց։

— Պետք է հուսանք,— ասաց Վասակը,— այլապես կորած ենք...

Բոլորը լուռ մնացին՝ սպասելով, թե ինչ կպատասխանի Վարդանը։ Բայց Վարդանը չխոսեց։

— Թերևս կովենք, տեր մարզպան,— փորձեց Արտակ Մոկաց նախարարը։

— Կովողներն ովքե՞ր են... ես ու դուք և դուք ու ես, չափեցեք ուժերը և պատասխանը պարզ կերևա։

Բայց Վասակը ևս չէր կամենում շատ բացվել։ Ուստի և ավելացրեց.

— Թողնենք դեպքերին՝ ընթանան, ծավալվեն... Աստված բարի միտք, ճանապարհ ցույց կտա...

— Ճշմարիտ է,— համաձայնեց Վարդանը։

— Հուսա՜մ..,— վրա բերեց Վասակը,— օ՛ն, բարի ճանապարհ ձեզ,— բարեմաղթեց Վասակը և արձակեց նախարարներին։

Հետևյալ առավոտ Վարդանը վերջին անգամ ժողովեց նախարարներին։ Բոլորը եկան։ Հետաքրքիր էին նաև Գաղիշոն և Ռշտունյաց նախարարը, թե ինչ հրահանգներ պիտի տա նա։

— Տյարք, մենք բաժանվում ենք։ Այսպես չենք հանդիպել և չենք բաժանվել։ Երբեք մեր աշխարհը մեզ վրա այսքան ծանր պար-

տականություն չի դրել, որ պատասխան ենք տալու մեր խղճին և մեր աշխարհին։ Գնանք և զորագնդերս կազմենք։ Սուրհանդակներով կապ պահեցեք իրար հետ և առավելապես ինձ հետ։ Քանի՞ գունդ, զենքի ո՞ր տեսակը, որքա՞ն ռազմունակ։ Ես չեմ նստի Տարոնում, կշրջեմ ողջ երկրում։ Ամեն տեղ հետևեցեք ինձ։ Վրացիներից և աղվաններից սուրհանդակ եղած դեպքում ուղարկեցեք ինձ մոտ։

Երբ նախարարներն անցնում էին Վասակի այգու մոտից, նկատեցին Վասակին այգու բլրին։ Սա գլուխը կախել էր գետնին և ինչ-որ գծեր էր քաշում հողի վրա։

Նախարարներն արագ ձիավարեցին քաղաքադռնից դուրս։

Վարդանը նժույգը մոտեցրեց Ներշապուհի նժույգին և մի փոքր թեքվելով նրա ականջի կողմը՝ շշնջաց.

— Ցսիրեցի այդ մարդու պաշտոնապաշտ զգուշավորությունները։

— Հանկարծ չծովի՞...

— Չեմ հավատում... տեսնենք...

Վարդանի արևառ դեմքին թախիծ անցավ։ Նա հայացքը դարձրեց դեպի Մասիսը և սկսեց լուռ վետվետալ անհանգիստ նժույգի վրա։

Հետո կրկին հավասարվելով Ներշապուհին՝ ասաց.

— Աշխա՛րհը կգա մեզ հետ. աշխարհն իմաստուն է։

Հեռվից կապույտ ծուխերի սյուները խաղաղ միտում էին երկինք։ «Աշխարհն» այնտեղ էր։ Նա անդորր էր ինչպես դաշտը, ինչպես հողը։

***

Ժողովուրդը դուրս ժայթքեց քաղաքադռնից։ Նրանք վազում էին նախարարների կողքից ու հետևից, խաչակնքելով երեսները։ Ամենից առաջ վազելով գնում էին Զարեհ եղբայրը, Աբրահամ պապիկը և Հովակիմ դարբինը։ Նրանք հևում էին վազքից և, բորբոքված երեսներից քրտինքը կաթեցնելով, ճիգ էին անում հավասար քայլել Վարդանի նժույգի հետ։

— Արծվի՞, Արծվի՞,— գոռում էին երիտասարդները,— մեկ էլ որ գաս՝ զինվո՛ր ենք։

Արծվին չէր խախտում պատշաճավորությունը։ Նա միայն ժպտում էր։

Վարդանը նժույգի սանձը քաշած էր գնում։ Նրան հուզում էր ժողովրդի խանդավառությունը։ Նա աչքերը հառեց Աբրահամ պապիկի և Զարեհ եղբայրի վրա։ Կանգնեցրեց նժույգը և նրաց մոտ կանչեց։

— Ինչո՞ւ եք հոգնեցնում ձեզ, հայրիկներ, ե՛տ դարձեք։

— Տե՛ր Մամիկոնեից, տա՛ր մեզ ազատության կռվի, թեկուզ մահվան գնով,— ամրակազմ ու շոր ձեռները դեպի նա կարկառած ձայն տվեց Զարեհ եղբայրը։

— Կտանեմ դեպի կյանք, հայրի՛կ,— պատասխանեց Վարդանը։

Հովակիմ դարբինը բուռն շարժումով մղվեց դեպի Վարդանը և բռնեց նրա նժույգի ասպանդակը,— շա՛տ ես տարել մեզ մարտ, Սպարապե՛տ, մի՛ խնայիր զինվորիդ այս ազատության մարտը։

— Հին զինվո՞րդ եմ,— դողդողալով առաջ եկավ Աբրահամ պապիկը։

— Զինվո՞ր ես,— հարցրեց Վարդանը սիրալիր նայելով նրան։

Աբրահամ պապիկը դողալով խլեց Վարդանի ձեռը, որ համբուրի՝ բայց Վարդանն ինքը կռացավ և բռնելով ծերունու ձեռը՝ տարավ շրթունքներին։

Աբրահամ պապիկը լաց եղավ.

— Ցմեռա՜, որ գամ ազատության մարտդ, զինվոր եմ,— ասաց նա հեկեկալով,—Հայոց աշխա՜րհը քեզ զորավիդ, պաշտպա՜ն հայրենիքի։

Սրտառուչ տեսարանը կաշկանդել էր բոլորին։

— Արծվի՜,— խոսեց Տիգրանը այս լռության մեջ,— կգաս կտեսնես նժույգս ի՞նչ է դառել։

Վարդանը նայեց Տիգրանին։ Սա երեսը թաքցրեց։

— Առա՛ջ եկ, պատանյակ, կանչեց նրան Վարդանը։

Տիգրանին առաջ մղեցին։ Նա կաս-կարմիր կտրեց և աչքերը կախ առաջ եկավ։

— Զինվորյալ մանո՞ւկ ես,— հարցրեց Վարդանը։

— Կտրիճ տղա է, տեր իմ,— ասաց Արծվին,— հեծյալ է պատրաստվում։

Վարդանը խանդաղատանքով շոյեց նրա գլուխը.

— Կմտնես գունդս, երբ վերադառնամ։

— Տե՛ր Սպարապետ, հապա մե՞նք...— առաջ վազեցին երիտասարդները։

Վարդանը տեսավ իրեն շրջապատված սլացիկ ու քաջամարտիկ երիտասարդներով։ Նրանք հարցական, աշխույժ նայեցին նրան, սպիտակ ատամնաշարերը փայլեցնելով թուխ, արևառ դեմքերին։

— Բոլորդ կգաք իմ գունդը, եթե քաջամարտիկ դառնաք։

— Վա՜րժ ենք, վա՜րժ ենք,— գոչեցին երիտասարդները։

— Այդ լավ է,— ասաց Վարդանը,— ավելի վարժվեցեք, դրժվար է զինվորի գործը։

Վարդանը խթեց նժույգը։

— Դե մնաք խաղաղությամբ։

— Ճանապարհդ ի բարի՛ն,— ձայն տվեց ժողովուրդը, որ ստվարացել էր և սևացել դաշտում։

Վարդանը գնաց։ Նախարարներն ասպանդակեցին նրան հասնելու ճիգով։

— Աստված փորձանքից հեռո՜ւ պահի քեզ, հայո՜ց Սպարապետ,— սրտալից գոչեց նրա հետևից Աբրահամ պապիկը։

— Հո՜ այս հայոց,— ձայնակցեց Զարեհ եղբայրը։

Իսկ Հովակիմ եղբայրը հաստ շրթունքները բաց՝ հևալով ու կոտրած ժպիտը մրոտ երեսին նայեց Վարդանի հետևից քարացած։

***

Երկար արշավում էին նախարարները Արաքսի ճախուտների և ավազուտների միջով։ Դաշտերում, սև արտերի վրա բիզ-բիզ ցցված էին ցորենի մանր ծիլերը։ Հացը ծնվում էր, գալիս էր խաղաղությամբ և չէր նայում ոչ ոքի, ոչնչի։ Երկիրը կատարում էր իր գործը, թողնելով, որ մարդիկ որոշեն իրենց բախտն ու վիճակը։ Արտակը, որ եկել էր Ատոմին ճանապարհ դնելու՝ վերջապես կանգ առավ, հրաժեշտի ողջույն տվեց Վարդանին և մյուսներին ու դարձավ Ատոմին, որ ետ մնաց։

— Դե՛, ճանապարհդ ի բարի՛ն, իշխա՛ն,— ասաց և գրկեց Ատոմին, որի նժույգը պարել սկսեց՝ չթողնելով Ատոմին գրկել Արտակին։

— Մնաս բարով,— մի կերպ համբույրը մոտեցնելով Արտակի շրթունքներին՝ ասաց Ատոմը։— Բարով տեսնվենք։

— Իհարկե, կհանդիպենք և թեժ գործ կունենանք,— ասաց Արտակը, որի ձայնը դողում էր սրտի հուզմունքից։

— Տա՛ աստված։

— Դե, գնա, չուշանա՞ս, իշխան, կսպասե՞մ,— գոչեց նա Ատոմի հետևից, որի նժույգը չսպասելով տիրոջը՝ շտապում էր հասնելու հեռացածներին։

— Չեմ ուշանա,— մեղմաժպիտ ասաց Ատոմը ետ նայելով և նժույգի սանձը զուր քաշելով։

Արտակը տեսավ, թե ինչպես Ատոմը սրընթաց արշավեց քար ու խիճերը ցայտեցնելով և հազիվ զսպելով նժույգը՝ գնաց նախարարների հետևից, որոնք օրորվում էին հստակ օդի մեջ վեր վար ճոճելով սրածայր սաղավարտները։

Արտակը դեռ կանգնած նայում էր իր սիրելի երիտասարդ ընկերին, սկսելով կարոտել արդեն։ Ատոմը հեռվից մի անգամ էլ ետ նայեց Արտակին, ձեռով մնաս բարև ասաց և շրջվեց։

Արտակը գլուխը կախեց և մտախոհ վերադարձավ Արտաշատ։

Ժողովուրդը հոսում էր քաղաքի դռնից ներս։ Լսվում էին ջերմ խոսքեր Վարդանի մասին։ Զարմացավ Արտակը, այդ որտե՞ղ, ինչպե՞ս ընտրեց ժողովուրդն իր ղեկավարին։ Ո՞րն է այն գաղտնիքը այդ նեբքին, աներևույթ թելերի, որ հազար ու մի գծերով ձգվում են իրար կապում։

Բայց ժողովուրդը շատ պարզ և հասարակ էր ընտրում. նա տեսնում էր, զգում և որոշում։

Արտակը վերադարձավ արքունական տուն և տխուր կանգնեց պատշգամում։ Մի փոքր առաջվա կյանքով լի տունը լռեց ինքնամփոփ կեցվածքով։ Ոչ ոք չկար։ Գադիշոն հեռացել էր՝ ինչպես ծերուկ տնտեսն ասաց՝ Արտակ Ռշտունու հետ։

***

Իրիկնապահ էր, ստվերներն երկարում էին և թանձրանում։ Արտաշատի փողոցներում երեխաների կանչերը խառնված շների հաչոցի և դարբնոցների չխկոցներին՝ խաղաղ տրամադրություն էր բերում մարդու։

Վասակը, որ վերջին օրերը անց էր կացնում իր այգում՝ նկատեց, որ ապարանքի կողմից գալիս էր Գադիշոն։ Նա քայլում էր արագ և վրդովված տեսք ուներ, որ չէր բռնում ինքնազուսպ այդ նախարարին։

Նա մոտեցավ և արագ ողջագուրանքից հետո նստեց մոայլ։

Վասակը գլուխն օրորեց դառն ժպտալով.

— Ուշանո՞ւմ ենք, իշխա՞ն, ամեն բանում ուշանո՞ւմ ենք։

Գադիշոն հեգնորեն ժպտաց.

— Իհարկե, ուշանում ենք։

Վասակը մտածեց մի պահ և ապա վճռական շեշտով ասաց.

— Սրանից հետո չենք ուշանա։ Խափանել է պետք։

— Խափանել է պետք,— համաձայնեց Գադիշոն։

Վասակը մոայլ ու վրդովված սկսեց անցուդարձ անել քարե նստարանի առաջ։

— Բացարձակ խափանել չի հաջողվի,— բարձրաձայն խորհեց Գադիշոն,— ժողովուրդը շատ է բոցավառվել։ Սա այն հրդեհներից է, որ կհանգչի բոլոր վառելանյութը լափելուց հետո։ Մոխրի վրա պիտի նստեք, տեր մարզպան։

Վասակը զայրացավ հանգիստ փիլիսոփայող Գադիշոյի վրա։

— Ես չեմ սպասի, որ հրդեհը լափի։ Կհանգցնեմ հենց ըսկզբում։

— Եթե կարողանաս՝ խելացին այդ է,— մտածելով ասաց Գադիշոն,— բայց փորձանքն այնպիսի բան է, որ միշտ կատարվում է։ Չեղած փորձանք չկա...

Վասակը աչքերը խոժոռած լսեց Գադիշոյին և ապա ձայնը մեղմելով հարցրեց.

— Կամենո՞ւմ ես գործ կատարենք, իշխան։

— Կամենում եմ,— ասաց Գադիշոն հետաքրքիր տնտղելով Վասակին։

— Կգա՞ս մինչև վերջը։

— Սկզբից որ գամ՝ մինչև վերջը կգամ,— պատասխանեց Գադիշոն։

Վասակը լռեց, փորձիչ հայացքը գամեց Գադիշոյի վրա և հետո ասաց.

— Պետք է հենարան գտնենք արյաց արքունիքում։ Մեր գործը պիտի առաջ տանենք պարսիկներին ծառայեցնելով մեզ։

Գադիշոն սպասում էր Վասակին, որ վերջացնի։ Սակայն սպասեց նաև Վասակը Գադիշոյին։ Իսկ սա լռում էր։

— Պարսիկներին՝ պարսիկների դեմ,— դրոշմի պես տպեց Վասակը։

— Եվ հայերին՝ հայերի դեմ,— լրացրեց Գադիշոն՝ չէր իմացվում լո՞ւրջ, թե հեգնորեն։

— Թերևս այդ էլ պատահի։ Ամենքին, ով կկանգնի մեր դեմ։

— Ի՞նչ ես կամենում, ի՞նչ է միտքդ, տեր մարզպան, ասա պարզ ու շիտակ,— լուրջ դիմեց Գադիշոն։

— Միտքս ի՞նչ է...— երազանքով ձգեց Վասակը, և այն է, կամենում էր թուլանալ և բաց անել Գադիշոյին իր նվիրական գաղտնիքը, բայց հանկարծ զգաց, որ դա կարող էր ճակատագրական սխալմունք դառնալ։ Ուստի և ասաց ցածրաձայն.— խափանել ապստամբությունը։

— Ինչպե՞ս։

— Պարսից զորքով։

— Երկիրը կընկնի պարսից ձեռը։

Վասակը հանգիստ ասաց.

— Արդեն ընկել է... Ուրիշ հնար չկա։ Աշխատենք մենք մընանք իշխանության գլուխ. բարեկամանանք Հազկերտի հետ։

— Ուրանա՞նք,— հետաքրքրվեց Գադիշոն։

— Ես այդ չեմ պահանջում անպատճառ։

— Բայց եթե ստիպեն։

— Տերության գործում ի՞նչ նշանակություն ունի ուրանալ չուրանալը։ Ես այդ չեմ պահանջում։ Թեև՝ այսպիսի գործերում միջոցների խտիր չկա։ Այդ էլ ասեմ...

Վասակը զգաց, որ սայթաքեց...

— Տերությո՞ւն ենք ստեղծում...— հարցրեց Գադիշոն։— Հայո՞ց տերություն։

— Ո՞վ է իմանում... եթե կարողացանք՝ ինչո՞ւ չէ... ինչ որ մնաց ձեռներս՝ այն էլ մեզ...— այլևս չխուսափեց Վասակը։

Գադիշոն հասկացավ ավելի բան, քան կուզենար վերջինս։ Սակայն ուշ էր թաքցնել մնացածը։ Վասակը լռեց և այդ մասին ոչ մի խոսք այլևս չծպտաց։

Վտանգավոր էր...

***

Վասակը զորական զգեստը հագին նստել էր ախոռի դռներին մոտիկ և դիտում էր ախոռապետին, որը նժույգներն էր քաշում ախոռից ընտրելու։ Նա լավ էր ճանաչում իր նժույգներին, բայց ուզում էր իմանալ նժույգների այդ օրվա տրամադրությունը։ Դուրս քաշելով մի թուխ նժույգ, բերեց վազեցրեց Վասակի առջևով և ինչն էլ վազեց հետը։

— Բարքը լավ է այսօր,— ասաց Վասակը,— մյուսը բեր։

Ախոռապետը նժույգի պարանը տվեց իր երիտասարդ օգնականին և դուրս բերեց պղնձագույն մի ուրիշ նժույգ, որ հենց դուրս եկավ ախոռից սլացիկ ծառացավ և ցատկեց տեղում։

— Իսկը ժամն է հեծնելու, տեր իմ,— ասաց ախոռապետը՝ նժույգների վրա հիացած և գորովալի հայացքը սահեցնելով։— Կհրամայե՞ս թամբեմ։

— Գործի՛ անցիր,— ասաց Վասակը և վեր կացավ գնաց դեպի այգու խորքը։ Եկավ Գադիշոն զորական զգեստով։ Նա ուրախ տրամադրության մեջ էր։

— Ձե՞նք ուշանում,— հարցրեց նա։

— Ուշանում ենք,— ասաց Վասակը,— սպասում եմ, որ խոսրով պարսիկը ճանապարհ ընկնի։

— Գյուտը և՞ս գնում է հետը։

— Անպատճառ։ Պետք է հարթել մեր ճանապարհը դեպի Դուռը։ շուտով գործներս կընկնի Պարսկաստան։ Ահա՛ և Գյուտը։

Սենեկապետի ուղեկցությամբ գալիս էր Գյուտը ճանապարհորդական զգեստով։

— Արդե՞ն,— հարցրեց Վասակը։

— Եկա հրաժեշտ ողջույնի,— ասաց Գյուտը,— պարսիկն ինձ է սպասում։

— Ո՞վ կա մոտը։

— Դենշապուհը, Վեհմիհրը և Որմիզդը։ Շատ փսփսացին ներսը։ Գլուխը լցնում են երևի։

— Եթե կարողանաս նրանց կորուստի մատնե՞լ... Մեր գործի կեսը կատարած կլինես։ Ճանապարհին սկսիր կամաց-կամաց ինձ բանսարկել. պատասխան թղթի հանցանքն ինձ վրա գցիր և մտերմացիր հետը։ Աղաչիր թող ընդունել տա քեզ արքային։ Նա-

խապես տես Հազարապետին և հույս տուր, որ ես ու իմ կուսակիցները կչանանք դլուխ բերել ուրացումը։ Արքան որ քեզ կունկնդրի՝ ամբաստանիր առաջ Խոսրովին և ապա Դենշապուհին, Վեհմիհրին ու Որմիզդին։ Ասա մարզպանը արքային հավատարիմ մարդիկ է խնդրում։ Եթե այս հաջողացնե՞ս, իշխան։

— Ջանք չեմ խնայի, տեր մարզպան։

— Է՛, բարի ճանապա՛րհ մաղթենք քեզ,— ասաց Վասակը։

— Ես շտապեմ, այո, ինձ են սպասում,— ասաց Գյուտը։

Նրանք ողջագուրվեցին, և Գյուտը հեռացավ։

***

Մինչ ուշ երեկո Արտակն սպասում էր Ռշտունյաց նախարարին, անհամբեր ու քաղցր։ Նա տենչում էր Ռշտունյաց նախարարի հետ խոսել նրա աշխարհի մասին, նրա ամրոցի, ընտանեկան կյանքի, ամեն բանի մասին, որ շրջապատում են Թանկագին էակին։ Եվ ինչ էլ որ խոսի, պատմի Ռշտունյաց նախարարը՝ մեծ խանդավառությամբ կունկնդրի ինքը։ Արտակը հարազատի, մտերիմ անձի պես էր զգում Ռշտունյաց նախարարին։

Նախարարը ուշանում էր սակայն։ Մութն ընկավ, և տան շուրջը խորացավ լռությունը։ Միայնության անձկություն եկավ Արտակի հոգուն։ Նա տխրեց։ Դուրս եկավ օթևանից և Թիկնապահի հետ գնաց Արտաշատի փողոցներով։ Քաղաքը քնում էր։ Մի դռնից երեխայի լաց լսվեց։ Մի ուրիշ դռան, վառված մարխը ձեռին լուսավորում էր բակն ու ինքն իրեն մի դեռահաս աղջիկ։ Նա ճկվում էր ուռենու պես մարխը վեր ու վար անելով և լույս տալով ախոռում զբաղված մի հասակավոր մարդու, որը դուրս նայեց և հանկարծ, երբ լույսի ցոլքն ընկավ Արտակի վրա, ցնցվեց և աչքով արավ աղջկան։ Աղջիկը չհասկացավ և ետ շրջվեց, նայեց Արտակին։ Նա այնքա՞ն նման էր Անահիտին... Արտակն ուզում էր կանգ առնել, բայց ամոթխածությունը կաշկանդեց նրան։ Աղջիկը լույս արեց նրան, համարձակ նայելով նրան։ Արտակն անցավ։ Նա սիրեց այդ աղջկան, միայն նրա համար, որ նա նման էր Անահիտին։ Փողոցի խավարը գրկեց նրան։ Շուտով նա հասավ տաճարին և նրա պարսպի դռանը կանգ առավ։

— Բախի՛ր,— հրամայեց Թիկնապահին։

Թիկնապահի բախոցին հետևեց ներսից մոտեցող քայլերի ձայն։

— Ո՞վ է,— հարցրեց ներսից մոտեցողը։

— Բա՛ց արա, իշխանն է։

Դուռը բացվեց, և Արտակը մտավ տաճարի գավիթը։

— Ո՞ւր է Եղիշե վարդապետի խուցը,— հարցրեց Արտակը։

Դուռ բաց անողը առաջնորդեց նրան գավթի մի անկյունի խուցը, որի նեղ պատուհանից մռայլ մի լույս էր երիզում գավթի քարերի վրա։

Թիկնապահը բախեց դուռը։ Դուրս եկավ Եղիշե վարդապետը ճրագը ձեռին։ Նա լույսը բռնեց Արտակի դեմքին և մեղմիկ ժպտալով ասաց.

— Բարի՞ է, իշխան, նե՛ր հրամայիր։

— Բարի է, հայր սուրբ,— ասաց Արտակը,— հյուր եկա, կհյուրընկալե՞ս։

— Ի՞նչ ես հրամայում, իշխան, ասոված ուղարկեց քեզ։

Նրանք մտան ներս։ Թիկնապահը նստեց քարի վրա։

Մռայլ խուցի խոնավությունը տխրաշուք տեսք էր տալիս պատերին և կամարակապ առաստաղին։ Հատակին փռած մորթու առջև դրած էր մի կաղնու գրակալ, որի կաշվե հենարանին հանգչում էին ճրագի լույսից դեղնած մատյանի էջերը։ Գետնին փռած էր մի խշտյակ, մորթե վերմակով։

Եղիշե Վարդապետը հրամցրեց նախարարին իր մորթին և ինքը շոքած նստեց խշտյակին։ Նրա երազկոտ աչքերի մեջ կորով էր նկատվում, որ վերջին օրերի դեպքերի ներշնչումն էր։

— Ի՞նչ է խորհում ձեռնարկել ուխտը,— հարցրեց Արտակը, ակնարկելով հոգևորականների միաբան համաձայնությունը՝ դիմադիր կանգնելու Հաղկերտին։

— Ուխտը ավարտեց Այրարատյան աշխարհի կոչը ըմբոստության,— աչքերն հատակին ասաց Եղիշեն,— մի երկու օրից կսփռվենք լեռնային աշխարհները։

— Եվ նախարարնե՞ր կլինեն ձեզ հետ։

— Ով կամենա։ Այս պատերազմի մեջ ոչ ոք չի նկատում, թե ով է իր հետ։ Ամեն անձ կգնա թեկուզ մենակ։ Վերացավ երկյուղը, տեր իմ. ոգին հառնել է և հաղթում է ահա։

— Հուսանք, թե կհաղթենք նաև պատերազմի դաշտում,— ասաց Արտակը ուրախ շեշտով։

— Հաղթանակի ոգին կլինի զորավիգ։ Չկա այլևս պարտություն, երբ մարդ գրված է մահվան։ Այնպիսին ուժ է անսպառ և կործանիչ ամեն հակառակի։ Մահվամբ կհաղթի նա մահվան և կապրի անմահ ոգի։ Կյանքը մահով է անցնում դեպի իր գոյը հետագա։

Արտակը ներշնչվեց Եղիշեի խոսքերով։ Նա զգաց, թե ինչ ահեղ ուժ է մարդ, երբ մահի երկյուղ չունի։ Ահա մի մարդ, որին չես կարող այլևս հաղթել։ Միակ զենքը այսպիսիի դեմ մահն էր, այն էլ ահա ուժ չունի սրա դեմ։

— Սակայն և կույր է այն մահը, որ չունի ոգու ներշնչում։ Պետք է գիտակից ընդունել մահը։ Եվ ճշմարիտ է ասել ոմն մեր հներից, թե՝ «մահը ոչ գիտակցած՝ մահ է, մահը գիտակցած՝ անմահություն»։

Խցի դուռը բացվեց մեղմակի, և գիշերվա մռայլից ներս լողաց Եզնիկ Կողբացու խրոխտ դեմքը առյուծի բաշով շրջանակված։ Նրան հետևեց Ղևոնդ Երեցը վառվուն աչքերով և ժպտալի։ Հետևից երևացին այլ գլուխներ։

— Ողջույն,— ասացին մտնողները։

— Հրամայեցե՛ք,— ասացին Եղիշեն և Արտակը՝ վեր կենալով։

— Արտակը խոնարհվեց և առաջարկեց իր մորթին։

— Մի՛ նեղվիր, իշխան,— ասաց Եզնիկ Կողբացին,— մենք սովոր ենք գետնախշտի կյանքին։

Ասաց ու գնաց նստեց Եղիշեի խշտյակին։ Մյուսները տեղավորվեցին նրանց կողքին և անգամ սառը քարին։

— Բարի՞ է, իշխա՛ն,— հարցրեց Եզնիկ Կողբացին։

— Տարաժամին եկա այցելելու,— ասաց Արտակը,— փարատելու միայնությունս։ Նախարարները մեկնեցին։ Շուտով կմեկնեմ նաև ես։

— Աստված ընդ քեզ,— բարեմաղթեցին բոլորը։

— Եվ ընդ ձեզ,— պատասխանեց Արտակը։

Հետո հարցրեց.

— Ո՞ւր են հոգևոր տերը և մյուս եպիսկոպոսները։

— Հանգստանում են, իշխան,— ասաց Եզնիկ Կողբացին։

Արտակը մի փոքր սպասեց և ապա նայեց Եզնիկ Կողբացուն, ժպտաց մեղմ.

— Ես իմացել եմ, երբ Աղեքսանդրիա էի, որ դու իմաստասիրության գրքի ես նվիրել քեզ։

— Սակավ ինչ և չնչին։ Գրում եմ եղծը պարսից քեշին[1]։ Վաղուց հետե մովպետան մովպետը[2] զրախոսում էր մեր կրոնի և գիտության մասին։ Չէի կամենա համեստությունս խոովել և գիտունների շարքը մտնել անկոչ։ Օրենք չէ գիտուններին գոռոզանալ, ուր մնաց թե նվաստիս։ Սակայն երբ մովպետան մովպետ՝ մեծամիտ այնքան, որքան տգետ՝ մարտնչում է ընդդեմ բարձրագույն գիտության՝ մեզ պարտ է արժանին հատուցել արժանիին։

— Հավան եմ և մանավանդ թե սիրելի է իմ մտքին քո գործը,— ասաց Արտակը,— զորական գործի չի թույլ տալիս զբաղվել իմաստասիրությամբ. սակայն եթե լինի՝ հաճույքով կընթերցեմ։ Ունե՞ս որևէ գործ այստեղ։

— Հառաջաբանությունը պատրաստ է,— ասաց Եզնիկ Կողբացին։

— Պարտավոր կանեիր ինձ, եթե ցույց տայիր։

Եզնիկ Կողբացին նշան արավ մի երիտասարդ աբեղայի, որ դուրսը մթան մեջ կանգնած ամբողջովին լսելիք էր դառել։ Աբեղան գնաց։

— Աղեքսանդրիայում ես այլ բնաբան հղացա ի պաշտպանություն Արիստոտելի ընդդեմ Պղատոնի։ Սակայն արյաց հարձակումն ստիպեց ինձ քեշին ընդդեմ ճառել։ Ափսոս միայն, որ փոխանակ մեծ գիտունի՝ ստորնագույն և պարզունակ իմաստակին պիտի ընդդիմախոսեմ։

Եկավ աբեղան, բերեց մի բավական ստվար մատյան և տվեց Եզնիկ Կողբացուն։ Սա առավ մատյանը, խնամքով, առանձին սիրով սրբեց իր մազմզոտ ձեռքերով և ապա մեկնեց դեպի Արտակը։ Հետաքրքիր Արտակը, որ մատենասեր էր և սակավ անգամ չէր հպել մատներով մատյաններ, ինքը ևս նույնպիսի շարժումով ընդունեց մատյանը։ Նա կարդաց բարձրաձայն. «Երբ աներևույթից և նրա

---

[1] Եղծ՝ հերքում, քեշ՝ կրոն։

[2] Մոգպետների մոգպետը, պարսիկ կրոնապետը։

մշտնջենավոր զորությունից է կամենում խոսել որևէ ոք՝ պարտավոր է միտքը հստակել և աչքերի ճպիռը մաքրել, որպեսզի...»։

Շարունակությունն Արտակը կարդաց մտքում։ Լռության մեջ բոլորի աչքերը հառել էին երիտասարդ իմաստասեր նախարարին, որ այս փոթորկալի օրերում անգամ հետամուտ էր գիտության։ Արտակը խորասուզվեց ընթերցանության մեջ. նրա ճակատի մկանները երբեմն թեթև կծկվում էին, աչքերը կկոցում որևէ նորաստեղծ իմաստի հանդեպ։

— Եթե արհավիրքն այս տարի անցնի՝ թերևս կավարտե՞ս,— հարցրեց Եղիշեն Եզնիկին։

— Հույս ունեմ,— ասաց Եզնիկը մտորմունքի մեջ և աչքերը գետնին։

Արտակը մատյանը դրեց իր ծնկներին և վեր նայեց։ Նա զգուշացավ գովել Եզնիկին նրա բարձր մտքի և դասական ոճի համար՝ համարելով իրեն ոչ պատշաճ քաջալերել գիտունին։ Բայց նրա աչքերի փայլը և խորասույզ լռությունը ավելի պերճախոս ցույց տվին նրա հիացումը։ Սա զգաց Եզնիկը, զգացին և մյուսները և նրանք էլ իրենց կողմից հարգանքով և գորովով նայեցին Արտակին։

— Հայր սուրբ,— խոսեց Արտակը,— պատասխան թղթի մեջ դու ճառեցիր թե՝ «Նրա անունը արարիչ է երկնի և երկրի, իսկ առաջ, քան երկիրը և երկինը, որպես ինքնագո ինքնանուն է»։ Կարո՞ղ է այլ արարիչ չլինել՝ այսինքն տիեզերքը անստեղծ։

Եզնիկը պատասխանեց.

— Եթե ինքնագո է, ապա և անստեղծ է, անսկիզբ, անժամանակ և անիմանալի։

Իմաստասիրական այս զրույցը խորացավ այնքան, որ մյուսները ևս մեջ ընկան և սկսեցին տրամախոսել։ Լուռ էր միայն Ղևոնդ երեցը։ Երբ այս վեճը հանգում էր իր վախճանին, նա խոսեց.

— Զայրալին մովպետական մովպետի տգիտությունը չէ։ Ահա Միհրներսեհը, որ կոչվում է հերպետան հերպետ[1]։ Թող լիներ ամենիմաստ և գերիվեր, քան մեզ իմաստուն։ Այդ ո՞ր իրավունքով է բռնանում մեր հոգուն բռնավորը։ Ստրուկ է այն բռնավորը, որ կամենում է ստրուկ տեսնել մեզ։ Սա է զայրալին։ Եվ ինչպե՞ս թույլ տանք, որ ստրուկը տեր դառնա ազատ հոգուն։ Ո՞ւմ բողոքենք մեր

[1] Իմաստունների իմաստուն։

հոգու ստրկության համար՝ եթե մենք մեզ թույլ ենք տվել ստրկանալ։

Արտակին շատ դուր եկավ Ղևոնդ Երեցի այս ջերմ ատելությունը դեպի բռնությունը. բայց նա կամենում էր շոշափել նրա հասկացողությունը քրիստոնեական մի հակասության, որ կար ըստ երևույթին նրա խոսքի մեջ։

— Իսկ ինչպե՞ս կհաշտեցնես այդ միտքդ, հայր սուրբ, փրկչի այն խոսքին, թե՝ «մի՛ կալ հակառակ չարին»։

Ղևոնդ Երեցը բորբոքվեց.

— Այլևս ի՞նչ քրիստոնյա կմնա, եթե ես կդառնամ կրակապաշտ և հնար չեմ ունենա ոչ կանգնելու հակառակ չարին և ոչ էլ լինել հնազանդ նրան։ Չարին հակառակ չլինելու համար դեռ քրիստոնյա պետք է՞ մնալ։ Հետո՝ պետք է ազատ կամենալ։ Կամքը սուրբ է։ Չե՛մ կամենում և վե՛րջ։ Ե՛ս եմ ազատ ընտրել իմ հավատը և չե՛մ կամենում ուրանալ։ Իմ հոգին ե՛ս եմ կամենում փրկել կամ կորցնել։ Չե՛մ կամենում ոչ ոքի բարիքը իմ կամքի հակառակ։ Ես ազատամա՛րտ եմ մարտնչում։ Եվ իմ կամքի առաջ պետք է ոչնչանա ամեն ինչ. և՛ զորք, և՛ կուռք, և՛ արքա, և՛ իմաստուն։

— Բարի, հայր սուրբ, պատասխան թղթի մեջ դու ճառեցիր թե՝ «այս հավատից մեզ չեն կարող խախտել ո՛չ մարդիկ և ո՛չ հրեշտակներ»։ Դու մարտնչում ես նաև հրեշտակների՞ դեմ։

— Թո՛ղ և հրեշտակների դեմ, եթե նրանք փորձեն ճնշել իմ հոգին։ Ո՛չ մի երկրային, ո՛չ մի երկնային զորություն չունի իշխանություն իմ հոգու վրա։ Հոգին ազատ է։ Հրով ու սրով պիտի ջնջել բռնակալությունն աշխարհիս երեսին...

Ունկնդիրները ոգևորվեցին, ազդվեց նաև Արտակը։

— Պիտի գան մտնեն մեր ընտանիքները, ոչնչացնեն մեր լեզուն, ապականեն մեր բարքերը, խառնակեցություն մտցնեն մեր ընտանիքում։ Ի՞նչ, պարսկերե՞ն պիտի խոսեմ, Գողթան երգե՞րը չերգեմ, հոյակապ մատենագրությա՞նը խորթանամ, նախնյաց ճարտարապետությո՞ւնը լքեմ... Ո՞չ, առավել քաղցր է մահը։

— Ճշմարիտ է, հայր սուրբ,— ասաց Արտակը,— հաղթե՛նք, ընկճե՛նք մեր ոգու թշնամուն։ Ազատությունը վեր է կյանքից։

— Չեմ կամենում, կամենում եմ, ես եմ կամենում, ես չեմ կամենում. այս եմ կամենում, այն չեմ կամենում։ Ես ի՛նքս եմ և

Այլ ո՛չ ոք, չե՛մ կամենում լինել այլ ոք։ Սուրբ է իմ կամքս և առավել սուրբ ազատությունս։ Ես եմ իմ տերն ու ծառան։ Այսպես պետք է լինի մարդ։

— Օրհնյալ լինես, հայր սուրբ,— ասաց Եզնիկը,— դու հույս ես, դու ազատություն ես։

— Կամեցե՛ք և կունենա՛ք. կամեցեք և մարտնչեցեք, զոհեցեք կյանքը՝ վերցրեք ավելի թանկը — ազատությունը։ Ստրկահոգուն ատելի է ազատությունը, ազատության արժանի չէ ամեն մարդ։ Գարշելի է հոգեկան ստրուկը։ Ստորնագույն է, քան անասունը, քանի որ անասունն անգամ ձգտում է ազատության։

Մարտիկ իմաստասերը լռեց։ Բոլորը բոցավառ աչքերը խոնարհել էին գետին։ Արտակին խոր ազդեց Ղևոնդ Երեցի կորովի և ազատասեր ոգին։

«Սա լեռներ կշրջի և ծովեր կճեղքի»,— մտածեց նա։— Հաղթենք, հաղթենք բռնակալին, ապրենք ազատ մեր սիրելի հայրենիքում,— գոչեց նա ոգևորված և ափը ուժգին զարկեց իր սրի երասանին։

Մինչև ուշ գիշեր տևեց այս վառ զրույցը նախարարի և իմաստասերների մեջ։ Արտակը համարեց, որ ժամ է մեկնելու։ Նա վեր կացավ և խոնարհ ողջունեց։

— Մնացե՛ք խաղաղությամբ,— ասաց նա,— մինչև արժանի լինեք ազատության։

— Երթաս խաղաղությամբ, իշխան,— բարեմաղթեցին իմաստասերները միաբերան և վեր կացան։

Արտակը մեկնեց։

Աքաղաղներն սկսեցին ձայն տալ իրար։ Արտաշատը խոր քնած էր։ Միայն մարզպանի ապարանքից լույս էր ցայտել ծառերի բնին։ Այնտեղ արթուն էին և ով գիտե ինչեր էին խորհում։ Արտակը հասավ արքունական տուն և գնաց իր օթևանը։

Երկար չէր կարողանում քնել։ Աչքերը բաց նայում էր առաստաղին և ունկնդրում գիշերվա հոսելուն։ Նա դեռ Ղևոնդ Երեցի խոսքերի տպավորության մեջ էր։ Ճշմարիտ էր Երեցը։ Մի ազգի ուժը նրա գիտակցության մեջ է, գիտակից ազգը չի կորչի։ Գիտակցությունը մեծ ուժ է։ Ի՞նչ է հունական ազգը, շա՞տ երկիր է գրավում. բայց նա տվեց Արիստոտել, Պղատոն, Սոֆոկլես ու Պյութագորաս, տվեց Ակրոպոլիս, գիտություն, իմաստասիրություն, գրակա-

նութիւն, զորք և ուժեղ տերութիւն։ Մենք ևս իմաստասեր ենք, արվեստի տեր, հոյակապ լեզու ունենք, որով կարելի է ճառել Արիստոտել ու Պղատոն։ Մենք իմաստասերներ ունենք, որ քննում են աշխարհը։ Մենք Մեծն Տիգրան ունենք, Մուշեղ Մամիկոնյան, մենք դարերով դիմադիր ենք կանգնել Ասորեստանին, Հռոմին, Հունաստանին։ Մենք ոգի ունենք և միտք, մենք ազգ ենք։ Կկորչե՞նք մենք։ Ո՛չ։ Մենք կհաղթենք և արյաց պետության։ Դրան առհավատչյա Վարդան Մամիկոնյանը, Ատոմ Գնունին, Արտաշատի զինվորները, Այրարատի ժողովուրդը, երիտասարդ հեծյալները, Արծվին, որ սրմբակներով տրորում է պարսիկ զինվորին։ Ո՛չ, չե՛նք մեռած, կա՛նք և պիտի մնա՛նք հավիտյանս հավիտենից։

Արտակը հաճույք էր զգում, որ չի քնում և մտածում էր ոգու մասին։ Այդ ոգին աներևույթ էր մարդկանց մեջ և հանկարծ հարյավ և բոցավառվեց։ Արժե մեռնել այդ ոգու համար։

Միայն լուսադեմին սողոսկող քունը գրկեց նրան, և նա սուզվեց մի այլ աշխարհ։

***

Վասակը չէր քնած։ Նախարարների բացակայությունը նրան թև տվեց։ Նա ասպատակ այրուձի ուղարկեց Այրարատյան դաշտավայրը՝ զսպելու ժողովրդական շարժումը։ Նա զարմանալի համառությամբ լրտեսների միջոցով որսում էր ըմբոստներին։

Գադիշոյի հետ առանձին և երբեմն էլ Ռշտունյաց Արտակի հետ հաճախ էր խորհրդացկում խռովությունը զսպելու մասին։ Որոշվեց, որ Գադիշոն կայցելի երկրի մյուս նախարարներին՝ Ապահունյաց Մանեճին, որը ճիշտ է մասնակցեց պատասխան թղթին, բայց շատ վերապահ դիրք էր բռնել, ապա և Գաբեղենից Արտեն նախարարին, Բագրատունյաց Տիրոցին, Ուրծա Ներսեսին և այլ նախարարների՝ իրենց կողմը գցելու և լարելու Մամիկոնյանի կուսակիցների դեմ։

Պարսիկ մեծամեծների համար այլ դիրք մշակվեց։ Քանի որ Վասակը հետամուտ էր Գյուտի միջոցով նրանց տապալելու՝ սկսեց շատ մտերմական և սիրալիր-վերաբերմունք ցույց տալ նրանց։ Դենշապուհին, Վեհմիհրին և Որմիզդին հաճախ էր հրավիրում զբոսյցի և ընթրիքների, լցնում ականջները իր հավատարմության ա-

ռակներով, հիմարացնելու համար շողոքորթում էր նրանց և գովաբանում։

Ետ չմնացին և պարսիկ մեծամեծները՝ բարեկամական ցույցեր անելով։ Վասակի համար սարքում էին ճոխ ընթրիքներ և վրատահեցնում, որ Խոսրովին հրահանգել են լավ խոսել մարզպանի մասին պարսից արքունիքում։

Լռեց մայրաքաղաքը այնքան աղմուկներից հետո։ Ռշտունյաց նախարարը հրահանգներ ընդունելով Վասակից քայքայել Վարդանի գործը՝ ճանապարհ ընկավ Ռշտունիք։ Արտակը, որ անձկությամբ սպասում էր այդ օրվան, սրտի թրթիռով ընկերացավ նրան։

Դենշապուհը սկսեց հետախուզել Վասակին և Գադիշոյին։ Խոքամանկությունն ու խարդավանքը ծածուկ թունավորում էին մթնոլորտը։

***

Ռշտունյաց աշխարհը անտառների մռայլով, խոր ծործորների ամպկությամբ և բարձրագագաթ լեռների լուսապայծառ ժպիտներով ձգվում էր Բզնունյաց ծովի հարավային ափերին և անդորր էր ինչպես նախաստեղծման օրերին, երբ մարդկային էակը չէր շրջում թանգարելով նրա կուսական անդորրը։

Ռշտունյաց նախարարի ամրոցը հազիվ էր երևցնում իր գրանիտե բուրգերը հսկայական և սաղարթախիտ սոճիների թանձրության միջից։

Դարբասի մոտ գլուխը կրծքին կախած քնել էր պահակը, և չնայած որ բացվում էր լույսը, դեռ ամրոցից չէր լսվում ոչ մի շշուկ։ Աքաղաղները միայն ողջունում էին նոր օրը, և լուսաստղը թափում էր՝ անտառներին ու անդունդներին ուղղելով իր հալվող ճառագայթները։

Ամրոցի մեկուսի օթևաններից մեկում գունատվում էր ճրագի լույսը։ Անկողնու մեջ նստած էր դալուկ Անահիտը և աչքերը լայն բացած նայում մի կետի։ Նա անշարժ էր իբրև մարմարե արձան։ Նրանից հետո, անկյունում մի արմունկը մյուս ձեռքի բռան մեջ դրած և ափին կզակը դրած նստել էր նրա դեռահաս քույրը՝ Աստղիկը, և վշտով նայում էր նրան։ Երկյուղը դողում էր նրա սրտում։ Անկողնուն ծառայող Անահիտը հալվում էր մեղրամոմի պես, և

երևում էր, որ նա հիվանդ էր հոգեկան մի սրտամաշ հիվանդությամբ։ Նա թեկն ընկած, անհույս ու անուժ նայում էր մի կետի, և զգացվում էր, որ մտքերը շատ են հեռու այս օթևանից, այս ամրոցից, անգամ Ռշտունյաց մառախլապատ աշխարհից։

Պատի տակ նստած Աստղիկը, որ հուսահատի աչքերով էր հետևում հիվանդին, երևի սպառել էր իր հուսադրական խոսքերն ու հորդորները, որ հիվանդը չմտածի։ Սակայն կամենալով փարատել դիմացինի անձկությունը, ինքն էլ էր հիվանդացել։ Այն զգացմունքը, որ հիվանդին տոգորել էր մի հայտնի պատճառով, հիվանդապահին էլ էր դիպել անհայտ պատճառներով։

— Է, Անահիտ, վե՞րջը...— սկսեց հիվանդապահը՝ նեղսրտելով և խղճահար նայելով հիվանդին։— Մտածելով ի՞նչ դուրս կգա։ Մատաղ կյանքդ խնայիր գոնե։

Անահիտը, որ անճանաչելի էր դառել, աչքերը պաղած միևնույն կետին՝ շարունակեց արձանանալ։ Նա հազիվ լսեց բազում անգամ իրեն ասած հորդորանքի խոսքերը։ Ոչ մի խոսք, ոչ մի բան չէր կարող բուժել նրա վերքը։ Դա այն զգացմունքն էր, որ տածում է մի էակ դեպի մի այլ էակի և միայն մի բուժումն ունի. տեսնել նրան, անէանալ նրա էության մեջ, միանալ նրա էության։

— Անահի՛տ...— խոսեց կրկին Աստղիկը,— լսի՛ր ինձ, է՞...

Անահիտը չփոխեց ոչ իր դիրքը, ոչ էլ լռությունը խզեց։ Նրա աչքերում անհուն թախիծ կար, որ համակում էր հիվանդապահին։ Սրա սիրտը մղկտում էր և այրվում։

— Անահի՛տ,— երեքնեց Աստղիկը։

Անահիտը նայեց նրան և փղձկալով ընկավ բարձին։ Անբացատրելի անուշ լացը հանգստացնում էր Անահիտին։

— Միամիտ էի, ուրախ էի, առողջ էի, որտեղի՞ց եկավ լցվեց սիրտս։

— Հույսդ ծով արա. փակված դռան բացվել կա,— ասաց Աստղիկը։

— Է՞...— հառաչեց Անահիտը և աչքերը փակեց։— Մինչև կգա՝ ես կհալչեմ, ծուխ կդառնամ՝ կցնդեմ։ Կգա շատ կփնտրի՝ չի գտնի։ Շատ կկանչի՝ չեմ դառնա...

Անահիտը պարզապես կաշկանդվել էր մի հիվանդագին դյուրզգացությամբ, չափազանց խորացրել էր իր պարզ ու հասարակ զգացմունքը։ Նա լռեց։ Նա մահատիպ էր, բայց վսեմացած։ Սիրտ

զգացումը անհունացրել, խորացրել էր այդ լեռնային պարզ աղջկան։ Նրա աչքերում ցոլում էր խոր իմաստը սիրո, որ միայն ընդունակ է հասկացնել մարդու, թե որքան խորն է կյանքը։

— Գիտե՞ս ինչ, Անահիտ, ես էլ եմ սիրո տեր,— ասաց Աստղիկը ժպտալով...

Անահիտը տխուր նայեց նրան.

— Ո՞չ,— հառաչեց նա։

— Ես էլ եմ սիրո տեր,— կրկնեց Աստղիկը,— ես քեզանից առա սերը, ես էլ եմ սիրում, բայց չգիտեմ ում։ Ես էլ եմ սկսում թախծել, սպասել նրան, իսկ նա չկա...

— Ոչ, ոչ, չընկնես սիրո ձեռքը։ Չգիտե՞ս ինչ է, կտանի հետը, կտանի, կկորցնի աշխարհ-աշխարհ, ետ չես գա։

Ներս մտավ մի բարձրահասակ երիտասարդ կին, որի հագուստից երևում էր, որ իշխանական տան բարեկամուհիներից է։ Նա կապույտ աչքեր ուներ և ծիրանի մազեր։ Նա հանդարտ, ոտների ծայրին մոտեցավ և ձեռը դնելով Անահիտի ճակատին՝ շոյեց հուշիկ։

— Անահի՛տ, աղջիկս, հերիք է,— ասաց նա թախծալի և սրտամաշ ձայնով։

Անահիտը լուռ, աչքերը բացած նայեց մորը և հայացքը երկար ժամանակ խորասուզված մտորեց, մտորեց և մտքով կրկին հեռացավ, կորավ։

— Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,— շվար, հուսահատ շշնջաց մայրը։

— Եկա՞վ կախարդուհին, մայրի՛կ,— հարցրեց Աստղիկը։

— Ախ, ի՞նչ գա, ի՞նչ պիտի անի. սրա ցավը չիմացանք...

— Կիմանանք, մայրիկ, մի օր կիմանանք։

— Ախ անիծվեր՝ չհանդիպեր այս ցավը մատաղ զավակիս։ Չլիներ, չհանդիպեր հատորիս...

Անահիտը կշտամբանքով նայեց մորը.

— Մայրիկ, մի՛...

Մայրը ժպտաց և թախծալի աչքերով նայեց աղջկան։

Սևադեմ մի պառավ կնոջ հետ ներս մտավ մի հասակավոր, խստադեմ տղամարդ, թավ հոնքերի տակից նայեց Անահիտին և մոտենալով կանգնեց նրա գլխավերևը։ Դա Անահիտի հայրն էր։

— Ինչպե՞ս է,— հարցրեց նա բարկացկոտ ձայնով։

Մայրը երկյուղալի աչքերով նայեց նրան և լռեց։

— Ինչպե՞ս ես,— դիմեց հայրը Անահիտին։

— Ինչպե՞ս պիտի լինի, մարդ աստուծո։ Տկար է,— ասաց մայրը։

Անահիտի հայրը մտածեց և ապա դիմեց կնոջը,— իսկ ե՞րբ պիտի լավանա։

Կինը, որ ըստ երևույթին սովոր էր իր ամուսնու նման տարօրինակ խոսելուն՝ լուրջ պատասխանեց.

— Չգիտեմ, տեսնենք։

Հայրը դարձավ Անահիտին.

— Դո՛ւ ասա, ե՞րբ ես լավանալու։

— Չգիտեմ, հայրիկ,— պատասխանեց Անահիտը տկար ու տխուր։

— Ինչո՞ւ չգիտես. հիվանդը դու չե՞ս։

— Ես եմ, բայց հիվանդությունս իմ կամքով չէր։

— Ապա ո՞ւմ կամքով էր։

— Աստուծո։

— Ես աստուծո հետ գործ չունեմ,— զայրացած խոսեց հայրը,— լավացիր. տե՛ս, որ վաղը լավացած լինես։

Հետո դարձավ սևադեմ պառավին.

— Բժժանքներդ սկսիր։

Պառավը մասնագետի լրջությամբ շատ նշանակալից արտահայտություն տվեց իրեն, ծոցից հանեց շորի կտորտանքի մեջ փաթաթած չոր խոտեր և ծաղիկներ և սկսեց երգել ու խոտեր ցանել Անահիտի անկողնին։

— Վարդ ցանեմ, վարդ ծաղկես, շուշան, հասմիկ, նարգիզ դառնաս, ցավդ խոտ՝ չորանա, թափի, սիրտդ մայիս՝ բացվի։

Հետո հանեց ինչ-որ խմորեղներ և բթամատով մի պտղունց կտրեց.

— Սև ագռավի ճրագու, վագրի ոսկորի փոշի, քսիր բերնիդ ցավդ կփարատվի։

Խմորը մեկնեց Անահիտին, բայց նա մերժեց ընդունել։

— Վերցրո՛ւ, վերցրո՛ւ,— հրամայեց հայրը։

Անահիտը գիտեր հոր անկոտրում բնավորությունը, ուստի ընդունեց և կուլ տվեց խմորը։

— Սանդարամետի հրամանով, դևերի կախարդանքով ցավդ հովին, հովերը ծովին. ծովը կուլ տա, անդունդը խմի, անհետ անհետի ցավդ։

Հայրն անհամբեր ու անհանգիստ նայում էր Անահիտի լվանալուն։

— Է, հիմա թեթևացա՞ր,— հարցրեց.

— Թեթևացա, հայրիկ,— ասաց Անահիտը, որ ազատվի հոր ճնշումից։

— Դե, տես, վաղը ճանապարհ ենք ընկնում տուն։

Սարսափով նայեց Անահիտը հորը և գունատվեց։ Բայց քանի որ անկարող էր առարկել խստահամբույր հորը՝ լռեց։

Հայրը դուրս ելավ։ Մայրը գրկեց Անահիտին և գուրգուրեց.

— Չեմ տանի քեզ, մի վախենա։ Ես կպառկեմ սուտ հիվանդ, կմնանք։

Ներս մտավ մի տիկին ավելի տարեց, քան Անահիտն ու Աստղիկը։ Նրա շարժուձևը մատնում էր, որ նա կաթևոր դիրք ունի ամրոցում։

— Անահի՞տ, ինչպե՞ս ես,— հարցրեց հրամայական քնքշությամբ տիկինը։

— Լավ եմ, քույրիկ,— պատասխանեց Անահիտը։

— Լավացի՛ր, լավացի՛ր, իշխանս դա քեզ առողջ տեսնի. նրա ձեռից չենք ազատվի, որ հիվանդ տեսնի քեզ։

Անահիտը անհուն ժպտալով ու երազկոտ թախծով նայեց տիկնոջը։

— Ախ, քույրիկ, ես չեմ լավանա...— հառաչելով ասաց Անահիտը։

— Մի՛ ասիր, ի սեր աստծո, դու էլ, սուտ հիվանդ,— հրամայական շեշտով ասաց տիկինը, որ Ռշտունյաց նախարարի կին լինելով՝ սովոր էր հրամայական ձևով խոսել թե կշտամբելիս և թե գուրգուրելիս։

Նա նման էր Անահիտին, բայց գեր էր և հոլանի։ Նրա սև անփայլ մազերը կարծես խանձում էին նրա ճակատն ու վիզը, ածուխի գույնի վերածելով ամեն ինչ, որին հպվում էին։ Նրա հրամայական դեմքը գեղեցկության տիրակալությամբ էր լցնում օթևանը։ Եվ ինքնագոհ, ինչպես ամեն հաղթող, նա նայում էր քրոջը և հույս ներշնչում նրան։

— Ապաքինվիր, Անահիտ, քեզ տանեմ Աշտիշատ,— ասաց իշխանուհին և դուրս եկավ օթևանից։

Մայրը վեր կացավ, շոյեց Անահիտի մազերն ու ճակատը և գնաց իշխանուհու հետևից։ Հեռացավ նաև պառավը։

— Մի փոքր մոտեցիր պատուհանին, Անահի՛տ,— ասաց Աստղիկը։

Անահիտը նվաղ նայեց Աստղիկին և աղաչական հայացքով մերժեց։

— Ո՛չ, ո՛չ, վեր կաց, սիրտդ կբացվի,— ասաց Աստղիկը և մոտեցավ գրկեց Անահիտի իրանը։ Անահիտը վեր կացավ և կիսամերկ գնաց դեպի պատուհանը, նստեց աթոռակին։ Նրա աչքին բացվեց անդնդախոր ձորը, որ գնում էր դեպի Բզնունյաց ծովը։ Ներքևից ճերմակ վիշապի պես վեր էր սողում մեգը, որի գլուխը ոսկեզօծվել էր արևի առաջին ճառագայթներով։ Մի թախծալի ճանապարհ շիկահող ժապավենով գնում էր դեպի ծովը և կորչում լեռնաստանում ինչպես մշուշի մի թել։ Հորիզոնի խորքում թափանցիկ ամպ ասես, թե փոշու շարասյուն՝ սուզվում էր լեռների պարը։ Այնտե՞ղ, այնտեղ է «նա», հեռանում է, կորչում Անահիտից։ Մոռացել, խորթացել է նա և գնում է հեռու, հեռու...

— Հեռո՞ւ, հեռո՞ւ,— արտասանեց Անահիտը, և արցունքի կաթիլները, որ ցայտեցին նրա խորունկ աչքերից, իրենց բյուրեղի մեջ ցոլացրին Ռշտունյաց աշխարհը կախարդական ձևերով։

Աստղիկը եկավ գրկեց նրա իրանը և գլուխը դնելով նրա ուսին, ինքն էլ սկսեց հայացքով հեռանալ դեպի ամպաձև լեռները, որոնք երազի պես կանչում էին, ձգում հեռո՞ւ, հեռո՞ւ։

***

Գարսկաստանի լեռնադաշտերում դեռ բավական ցուրտ էր։ Խոսրովը Կոդակի և Գյուտի հետ ձիավարում էին ավազուտ դաշտում։ Ջանձրությունն ու հոգնությունը լռակյաց էին դարձրել նրանց։ Եվ այդ լռության մեջ ամեն մեկը որոճում էր այն դավի մասին, որ ինքը նյութում է մյուսի դեմ։ Դա կարճում էր ճանապարհի երկարությունը։ Քաղցը էր հուսալը, որ տապալված հակառակորդի դիակի վրայով կարելի էր մի օր հասնել ավելի երջանիկ օրերի։

Ճանապարհի տաղտուկն ու նեղություններն ավելի զգալի էին դառել, երբ մի քանի օր առաջ հայտնվեց, որ Տիզբոն գնալն ավելորդ էր։ Հազկերտը գնացել էր Ապար աշխարհը, քուշանների սահ-

մանները։ Ուրեմն նաև Հաղարապետն այնտեղ կլիներ, պետք էր գնալ Ապար աշխարհը։

Խոսրովը խոտորել էր ուղղությունը դեպի Ապար։

Ցուրտ անձրևը նետահարում էր վերևից, գորշ երկինքը ոչ մի նշան չէր ցույց տալիս պարզվելու։ Բավականին թրջված Կոդակը՝ գունատվել դողում էր։ Սմքել էին նաև Խոսրովն ու Գյուտը։ Նժույգները հոգնած ծեծում էին թրջված ավազը և միալար քստքստոցներով վեր ու վար էին անում առաջ։ Օրը երեկոյանում էր և ցրտում ավելի, անձրևն սկսեց ձյունախառն դառնալ։ Դիմացը ժայռի բեկորի պես սևին էր տալիս մի շենք։ Դա կարավանատունն էր։ Տրխրած ճանապարհորդներին նա մի փոքր ուրախություն էր խոստանում։ Բեկորը մոտեցավ և մեծացավ։ Կամարակապ դուռը գծագրվեց անպատուհան պատի մեջ։ Բայց էակ, շունչ կենդանի չէր երևվում նրա շուրջը կամ առջևը։

Բարակ մի ծուխ կտուրից վեր էր ցայտում և իսկույն գզգզվում քամուց։ Կրակի և ջերմության այդ նշանը աշխույժի բերեց Խոսրովին, որ այդ օրը չէր խոսել։

— Իջևանենք այստե՛ղ,— ասաց նա, և դարձավ դեպի թիկնապահները,— գնացեք տեղ պատրաստեցեք։

Թիկնապահներից երկուսը թռան առաջ։ Նրանք մտան կամարակապ դռնից ներս և շուտով դուրս եկան մի խումբ մարդկանց հետ։ Երբ Խոսրովը հասավ կարավանատուն՝ այդ մարդիկ առաջ եկան և խոնարհ ողջունեցին եկվորներին։

— Ուրախ ժամու ժամանեցիր,— ասաց հաստաբեղ, կարճահասակ, կարավանատան լիքը տերը, խեղդվելով իր գեր վզի մեջ։

— Օթևա՛ն, և շո՛ւտ,— հրամայեց Խոսրովը։

— Հրամա՛նդ,— խոնարհվեց կրկին կարավանատան տերը,— հրամայեք իջնե՛լ նժույգից։

Եկվորներն իջան, մտան կարավանատուն։ Վաղուց օթևանը պատրաստ էր։ Խոսրովը կերակուր պահանջեց։ Սեղան գցեցին, և եկվորներն սկսեցին ագահությամբ ուտել։ Կարավանատան տերը շոքած հսկում էր սեղանին և կարճ հրամաններ էր տալիս սպասավորներին հետևյալ խորտիկները բերելու։ Սեղանն աշխույժ ու մեղմ ժպտում էր լույսից սրբազան կրակի, որ դրված էր անկյունում, պատվանդանին։ Թեթև ծուխ կար օթևանում, թեև կրակի գլխին հաստուկ ծխնելույզ էր բացված պատի մեջ։

— Ո՞վ կա կարավանատանը,— հարցրեց Խոսրովը։

— Հազարապետի պաշտոնյան,— պատասխանեց կարավանատան տերը,— Հայաստան է գնում։

— Անո՞ւնը։

— Վշնասպ։

— Երբ քեզ կանչի սպասավորության, հայտնիր, որ այստեղ ժամանեց Միհրներսեհի հրովարտակատարը և գալիս է Հայաստանից։

— Հրամա՛նդ։

Ընթրիքը ջերմացրեց և աշխուժացրեց ճանապարհորդներին։ Սկսվեց աշխույժ զրույց։ Կարավանատան տերը գնաց կատարելու Խոսրովի պատվերը։ Մի փոքր անց նա վերադարձավ և հայտնեց, որ Վշնասպը խնդրում է շնորհ բերել իր մոտ։ Խոսրովը մի փոքր ուշացնելով գնաց նրա մոտ։

Կոդակը կենդանացավ.

— Ինչպե՞ս իմանանք, թե ինչու է գնում Հայաստան։

— Կամ ասա ի՛նչ են խոսում հիմա իրար հետ, անշուշտ վարկաբեկեց մարզպանին անիծյալ պարսիկը։

— Երբ վերադառնա անիծյալը, դու նրան խոսքի բռնիր, ես կանցնեմ պաշտոնյայի մոտ և կգողանամ գաղտնիքը։

— Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ է գնում Հայաստան,— հարցրեց Գյուտը։

— Տեղեկանալու, թե ինչ է անում մարզպանը։

— Եվ ո՞չ Դենշապուհը։

— Ոչ, մարզպանը։ Դենշապուհից բան դուրս չեկավ. նա գրրգռեց միայն։ Իսկ մարզպանը ուրացողների սկիզբը դրեց։

Երկար սպասեցին, մինչև Խոսրովը վերադարձավ։ Նրա բարկացած կերպարանքը կռահել տվեց, որ անախորժ բաներ է լսել Վշնասպից։

— Արքան զայրացած է, որ Միհրներսեհի հրովարտակի պատասխանն ուշացել է։ Մեղավորներ է փնտրում։

Խոսրովի այս բացատրությունը կասկածելի թվաց Կոդակին։ Նա կռահեց, որ ինչ-որ բան կա դրա հակառակ։ Ուստի, երբ Խոսրովը նստեց, նա պատրվակելով, որ գլուխը ցավում է, դուրս գնաց սենյակից և անցավ կարավանատան տիրոջ մոտ։

— Սիրելիս, եթե կարողանաս տեսակցություն հաջողել Վշնասպի հետ, քեզ կթողնեմ իմ պահեստի նժույգը։

Կարավանատան տերը չհավատաց լսածին, բայց վեր կացավ։

— Ասա մարզպանի մարդն է, հատուկ տեսնել է ուզում։

Կարավանատան տերը գնաց։ Մի փոքր անց վերադարձավ և հրավիրեց Կոդակին Վշնասպի մոտ։

Կոդակը խոնարհ ձևերով մտավ ներս՝ Վշնասպի սենյակը և դռան մոտ չոքեց։

Վշնասպը ձեռքով արեց, որ վեր կենա։ Կոդակը մնաց չոքած և նստեց ոտների վրա։

— Տեր իմ, շատ երջանիկ եմ, որ հանդիպեցի,— ասաց Կոդակը,— դու անշուշտ իմացար գժբախտությունը. մեր հոգևորների և իշխանների ապերասան պատասխանը։

— Իմացա,— ասաց Վշնասպը՝ կլորերես, խոշորակն մի երիտասարդ, անբարյացակամ և խիստ,— և հիմա ո՞ւր եք գնում. արքայի կատաղությա՞ն...

— Մենք կրոնափոխների կողմից ենք գնում,— ասաց Կոդակը։

— Ովքե՞ր են կրոնափոխները,— հարցրեց Վշնասպը արհամարհանքով։

— Մարզպանը, Գադիշո Խորխոռունին, Ռշտունյաց նախարարը, Վահեվունյաց Գյուտը, որ այստեղ է, և խոնարհ ծառադ։

— Ի՞նչ եք մտադիր անել։

— Մեղմել արքայի ցասումը։

— Արքայի ցասումը այնպես չի պոռթկել, որ իջնի։

— Ապա ի՞նչ անենք։

— Դատարկ պատգամավորություններով բան չի դուրս գա։ Թողեք այդ. ձեր պատասխան թուղթը մեծ արհավիրք պիտի բերի ձեր գլխին։

— Պատասխան թուղթը այդպես չէր գրվի, եթե Դենշապուհը և Խոսրովը չշտապեցնեին մարզպանին և չգրգռեին հոգևորներին։

— Թողեք այդ մեղադրանքները։ Դուք Արտաշատում վնասակար բանսարկությունների եք զբաղվել։ Գործ չեք շինել։ Ո՞ւր եք տանում այդ թուղթը, հասկանո՞ւմ եք։ Արյաց արքայից արքայի՛ն։ Դա գիտե՞ս ինչ հանդգնություն է։

Կոդակը ճնշվեց և լռեց։ Թրջված ճնճղուկի նման կուչ եկավ։ Նրա խորամանկ աչքերը որոնում էին մի ելք, մի հնար փրկության։

— Տեր, մի խորհուրդ տվեք,— ասաց նա մեղմ ձայնով։

— Ի՞նչ խորհուրդ,— բարկացած ձայնով ասաց Վշնասպը,— գնացեք և կրեցեք պատիժը։ Բանը բանից անց է կացել։ Եթե տրքան ձեր մորթիները խոտով լցնի՝ ուրախ ապրեցեք Անհուշ բերդում։

Կոդակը լռեց։

— Զարմանալի հանդգնություն,— ասաց Վշնասպը,— ծաղրական պատասխան գրել արքային և անձամբ տանել։ Դուք ի՞նչ ազգ եք... ըմբոստներ, խռովարարներ, անհնազանդներ ու ապստամբներ... Հունաստանն է դողում արքայից, քուշաններն են փոշիանում նրա հարվածներից, ուրիշ ո՞վ կա նրա դեմ։ Համայն աշխարհը ծունկի է եկած արքայի առաջ՝ իսկ դուք, տեսե՞ք դեռ, ծառանում եք արյաց ահռելի տերության դեմ։ Դուք խելագարներ եք և ոչ թե բանական մարդիկ։ Հետո դուք ի՞նչ եք կարծում ձեզ։ Հսկանե՞ր, անպարտելի զորությո՞ւն, տերություն, ազատ ժողովո՞ւրդ... Պատասխանների՞ն նայիր... Գնա՛, չերևաս աչքիս, այլևս ոչինչ չկա ձեզ ասելու։ Դե՛։

Կոդակը սրի հարված զգաց իր գլխին։ Նա կոտրվեց և վշտացավ։ Վեր կացավ և միայն կարողացավ թոթովել.

— Մնաս խաղաղությամբ։

Վշնասպը չպատասխանեց։

Կոդակը հեռանալիս մեջքն ուզում էր փախցնել Վշնասպի հրացայտ հայացքից, որ սրի նման կծում էր նրան, մինչև դուրս եկավ։

Կարավանատան ներսի ընդարձակ բակում կանգնեց նա, որ մի փոքր ուշքի գա։ Նայեց բակի շուրջը բոլորած օթևաններին, ուղտերին, որ չոքած որոճում էին և արհամարհանքով նայում իրեն։— «Պարսկաստա՞նն է սա»,— մտածեց նա,— օտար են, թշնամի...

Դառնացավ ծերուկը։ Բազում խճճված ցանցերից ու խարդախ թակարդներից ճարպկորեն դուրս պրծած աղվեսը գլուխը կախեց։

Դուրս եկավ կարավանատան դռնից դաշտ և նայեց անապատ հարթության և մոայլ հեռաստաններին։ Մենակություն և անօգնականություն զգաց Հայաստանից հեռու, անհյուրընկալ և թշնամի Պարսկաստանի խորքում։ Անձրևը կտրվել էր. միայն խոշոր կաթիլներ քամուց փախած գալիս շեշտում էին նրա դեմքին ու ձեռներին։ Նա շրջեց կարավանատան շուրջը և սկսեց վերհիշել անցյա-

լը, իր կյանքի բազմաթիվ դեպքերը։ Կոդակը՝ հասարակ ախոռապետի որդի, իր խելքով և խորամանկությամբ աչքի ընկնելով Վասակի հոր մոտ, առաջ էր գնացել քաղաքական գործի մեջ։ Վասակին նա շատ էր օգնել ի հատուցումն և ի հարգանս նրա հոր բարերարության։ Նա սիրում էր Վասակին նրա խելքի համար և միշտ գանում էր նրա մոտ գործ և պաշտպանություն։ Շատ շրջելով Պարսկաստանում, ելումուտ անելով արքունիքի մեծամեծների մոտ, նա սովորել էր ստորության արհեստը, քծնանքի բոլոր նրբությունները, նպատակին հասնելու միջոցների անխտրականությունը, դավելու հնարքները—այդ ամենը լոկ իբրև արհեստ։ Անշուշտ կեղտոտ արհեստը ապականել էր նրա բնավորությունը, խլացրել ազնիվ մարդու հատկությունները։ Գործ չունենալով ազնիվ նպատակների հետ, նա յուրացրել էր իր արհեստի բարոյական կեղտը և չէր մտածում վերադառնալ իր երիտասարդական հասակի որոշ ազնիվ հատկություններին։ Նա ընկել էր, և անկման վիճակը դառել էր գոյության բնական ձև։ Հետագայում անկումը դառավ հաճույք, մոլուցք։ Նա Վասակին ծառայելով և օգնելով՝ երբեմն էլ խարդախում էր նրան ևս։ Շփվելով պարսիկ մեծամեծների հետ, շարունակ դիտելով նրանց շահամոլությունը, ագահությունը, եսականությունը՝ նա աննկատելի կերպով դառավ շահամոլ, ագահ և եսակամ։ Մեռավ, թե քնեց նրա մեջ ինքնասիրությունը՝ ամենաթանկ տաղանդը մարդու մեջ, և նա սովորեց տանել նաև նվաստացումներն ու ստորացումները, որ անխուսափելի էին նրա բավականություն գործերի մեջ։

— Ի՞նչ կարելի է անել,— հարց տվեց նա ինքն իրեն տագնապալի հոգսով ծանրաբեռն։

Դվ հիմա ո՞ւր էին գնում։ Գազանի երա՞խը։ Ո՞ւր էր իրենց խելքը։ Հիմա ի՞նչ անի նա, ինչպե՞ս պարզերես անի մարզպանին։ Սխալմունք էր իր գալը Պարսկաստան։ Մեծության խոստումով շլացած՝ խաբվեց եկավ, դե հիմա գնա՝ նստիր Անհուշ բերդում, ուր եթե մի անգամ ընկար՝ եթե անզգույշ բարեխոսի մեկը խելացարվի դիմել արքային քեզ ազատելու աղերսանքով, գլուխը կգնա միմիայն անդունդ հիշելու հանցանքի համար... Իշխանության եկավ և անհուշ կորստյան դուռն եկավ։ Քայլերն ուղղեց դեպի օթևանը, ուր խոսքը նստած լռում էր։ Գյուտը նայեց Կոդակին և նրա այլայլված դեմքից հասկացավ, որ այցելությունը բարի բան չի բերել

նրան։ Կոդակը փորացավի գանգատով պառկեց անկողնում և աչքերը փակ սկսեց մտածել։ Գյուտը փորձեց Խոսրովից կորզել որևէ տեղեկություն։

— Ի՞նչ դիրքի տեր է արքունիքում այս Վշնասպը,— հարցրեց նա։

— Մեծ,— միավանկ պատասխանեց Խոսրովը, խոցելու համար Գյուտին։

— Ես էլ եմ կարծում, այլապես նրան չէին ուղարկի Հայաստան։

Խոսրովը չխոսեց։ Նա արդեն սկսեց արհամարհանք ցույց տալ Գյուտին։

— Ջիմացա՞ր ինչ գործով է գնում Հայաստան,— հարցրեց Գյուտը։

— Քեզ ի՞նչ է վերաբերում,— բարկացած պատասխանեց Խոսրովը,— ի՞նչ ես քրքրում տերունական գաղտնիքները։

— Ես հարցրի՝ կարծելով, որ կարելի է,— ասաց Գյուտը,— ներողամի՛տ եղիր։

Գյուտը լռեց։ Նա ևս պառկեց անկողնում։

Խոսրովը դուրս գնաց շունչ առնելու՝ խեղդված լինելով օթևանի ծանր օդից։ Բացի այդ՝ նա այլևս խորշել սկսեց իր ուղեկիցներից։ Վշնասպը նրան շատ բան էր ասել արքունիքի անցուդարձի, արքայի ցասումի և Միհրներսեհի դժգոհության մասին։ Հայերի պատասխանի ուշացումն անգամ կատաղեցրել էր նրանց։ Միհրներսեհը մեծահույս էր եղել, որ իր հրովարտակը կհասկացվի արքայից տրված և իսկույն կհնազանդեցնի հայերին։ Սակայն բանից դուրս է գալիս, որ նրանք հանդգնում են կրոնափոխությունն ուշացնել և պատասխանել հապաղումով։ Չտեսնված հանդգնությունը զարմացրել էր պալատականներին։ Նրանք հետաքրքրվել էին այդ փաստով և սպասում էին մեծ տեսարանի, պատիժների նոր ձևերի Հազկերտի կողմից։ Խոսրովը ծիծաղելի գտավ Արտաշատի խարդավանքները, մանվածապատ բանակցությունները, հայերի տրամադրության շոշափումները և Դենշապուհի ավելորդ զգուշավորությունները հայերի հանդեպ։ Եվ այստեղ նա հանկարծ սարսափով մտածեց, որ ինքը ևս թույլ է գտնվել և արարողություններով է զբաղված այն ժամանակ, երբ կարող էր և պետք էր հրամայել, բռնադատել։ Հիմա այստեղ, Պարսկաստանի զանգվածների մեջ նա

զգաց իրենց ուժը, այստեղ մտածեց, թե ի՞նչ նշանակություն ունի մի բուռն Հայաստանը իրենց զորության առաջ։ Արժե՞ր խոսել հայերի հետ։

Վայրկենապես դիրքը փոխեց։ Թիկնապահին հրամայեց կանչել կարավանատան տիրոջը։ Երբ սա եկավ, հրամայեց իրեն առանձին օթևան տալ.

— Գարշելիների հե՞տ պիտի քնեմ...— ասաց նա կարավանատան տիրոջը։

Խոսրովին հատկացվեց ավելի ընդարձակ օթևան, իսկույն նրա իրերը դուրս բերին Գյուտի և Կոդակի մոտից։ Սրանք հասկացան նոր իրադրությունը ու վիրավորվեցին։ Կոդակը դուրս եկավ, դիտեց այս տեղափոխությունը և մինչ Խոսրովը կանգնած սպասում էր օթևանի դռան՝ սպասավորները բարձ բերին, որ նա նստի։ Կոդակը մոտեցավ նրան։

— Մեզանից նեղացե՞լ ես, տեր իմ, —ասաց նա չկարողանալով զսպել վիրավորանքը։

Խոսրովը չպատասխանեց։

Կոդակը այրվեց սպասավորների հայացքից։ Նա զգաց, որ իզուր իրեն դրեց այս ստորացնող վիճակի մեջ։ Բայց ուշ էր այլևս։ Պետք էր միայն հնարավոր արժանապատվությամբ նահանջել։ Ուստի և կրկնեց հարցը ավելի բարձրաձայն։

Խոսրովը չարահայաց շրջվեց դեպի նա, վեր ցատկեց բարձից և հարձակվելով Կոդակի վրա՝ աքացի տվեց նրա ծնկներին։ Կոդակը, որ չէր սպասում հարվածին, օրորվեց և հազիվ պահեց իրեն։

— Ինչո՞ւ ես զարկում,— շփոթվելուց հարց տվեց նա և վրա գնաց դեպի Խոսրովը։ Սա այդ համարեց հարձակումն իր վրա, երկրորդ անգամ աքացեց։ Կոդակն ընկավ հատակին։ Խոսրովն սկսեց ոտքով հարվածել նրա գլխին, բերանին, մինչև արյունահոսությունը։ Կոդակը արյունկզակ դեմքով սրբեց հատակը և փնչացնելով թքեց փոշին։

— Թքո՞ւմ ես, ո՞ւմ վրա ես թքում, շան որդի շուն,— գոչեց Խոսրովը և կատաղած մոլեգնեց ծեծի կրքից։

Կարավանատան մութ օթևաններից դուրս թափվեցին վաճառականներ, պաշտոնյաներ, զորականներ և ամբոխվելով կարավանատան բակում՝ ներքևից սկսեցին դիտել տեսարանը։ Սկզբում նրանք զարմացած և թերևս երկյուղած էին նայում։ Բայց գլխի

ընկնելով, որ ծեծվողը հայ պաշտոնյա է՝ սկսեցին Խոսրովի ծեծի չափի համաձայն կիսաձայն հեալ և քաջալերիչ մռնչյուններ արձակել։

Իր օթևանից դուրս եկավ Վշնասպը և ձեռները մեջքին սկսեց դիտել։ Դուրս եկավ նաև Գյուտը և սաստիկ զարմացած նայեց տեղի ունեցող տեսարանին։ Արժանապատվության զգացումը զարթնեց նրա մեջ։ Նա մեջ ընկավ և գնաց բռնեց Խոսրովի թևից, քաշեց մի կողմ։ Խոսրովը կատաղի նայեց նրան։ Բայց Գյուտը այնպիսի հայացք նետեց նրա աչքերի մեջ, որ սա դադարեց։ Գյուտը դարձավ դեպի Վշնասպը, բայց սա հորանջեց ու ներս գնաց։

— Վե՛ր կաց,— հրամայեց Գյուտը Կոդակին,— ինչպե՞ս ես թույլ տալիս բերանդ պղծելու այս երկրի փոշով։

Խոսրովը աչքերը ոլորեց Գյուտի վրա.

— Ո՞ր երկիրն է պիղծ,— սպառնալի առաջ եկավ նա դեպի Գյուտը։

Գյուտը գնաց դեպի Խոսրովը և շշնջաց.

— Ես վճռել եմ մահ ընդունել. եթե շարժվես՝ գլուխդ կգնա։ Լավ գիտես, որ երկրից եմ։

— Զայնդ կտրի՛ր,— գոչեց Խոսրովը։

— Դո՛ւ կտրիր,— գոչեց Գյուտը ձեռը տանելով սրի կոթին։

— Սպանությո՛ւն,— գոռաց Խոսրովը զարհուրելով։

Վշնասպը դուրս եկավ իր օթևանից.

— Ի՞նչ է, չե՞ք վերջացրել,— սպառնաց նա։

Գյուտը գոչեց.

— Դուք արքայից արքայի պատգամավորին անարգե՞ք, մարզպանի պաշտոնյային ծեծե՞ք։ Իմ դիակը կփռեք այստեղ, իսկ արքան, եթե պահանջի այն տեղեկությունները, որ տանում եմ իրե՞ն։ Ի՞նչի՞ գլուխ ունեք դուք։

— Դու ո՞վ ես,— մոտեցավ Վշնասպը։

— Իշխան հայոց և պաշտոնյա արքայից արքայի։ Սա՞ է ձեր օրինապահությունը։ Սա՞ է ձեր հյուրընկալությունը։ Թքել եմ ձեր օթևանի վրա, ես դաշտումն էլ կպառկեմ։ Կերևա՞ս արքունիքում,— մատը թափ տվեց նա Խոսրովի վրա։

Վշնասպը հասկացավ, որ իրենք չափն անցրին։ Նա ձեռով արեց Խոսրովին, որ զսպվի։

— Հայաստանը դուք չեք հավանում, բայց արքան հաշվի է առնում։ Կպատմեմ բոլորը արքային, և դուք կտեսնեք ձեր մոր հարսանիքը։

Տիրեց անհարմար լռություն։ Ներքև ամբոխն սկսեց փսփսալ։ Իսկ Կոդակը նստել հատակին, զգեստն էր սրբում։

— Թքի՛ր այս հողի վրա,— գոչեց Գյուտը կատաղի,— վե՛ր կաց։

Կոդակը թքեց և վեր կենալով ափով սրբեց դեմքը, որը ներկվեց արյունախառն փոշով։ Նրա այլանդակված դեմքը ծիծաղ հարուցեց ամբոխի մեջ, որը հոհոաց։ Կոդակը մատը թափ տվեց նրանց վրա և գնաց օթևան։ Գյուտը գնաց նրա հետևից։

— Դո՞ւ ինչով ես զբաղված,— մոտեցավ Խոսրովին Վշնասպը և մի ապտակ հասցրեց նրան,— օրե՞նք կա թե չկա։ Շներին խոսեցնե՞լ պիտի տաս Հազարապետի մոտ։ Չքվի՛ր։

Խոսրովը կծկվեց ու գնաց օթևան։ Վշնասպը ձեռը թափ տրվեց ամբոխի վրա։ Ամբոխը ցրվեց։

Մտնելով օթևան՝ Գյուտը հարցրեց Կոդակին, և սա պատմեց իրողությունը։

— Զո՛ւր կպար շանը,— հանդիմանեց Գյուտը,— և քեզ ո՞վ է իրավունք տվել քիթդ խոթելու ամեն տեղ։

— Ես մարզպանի պաշտոնյա եմ,— ասաց Կոդակը։

— Դու շան աղբ ես,— ապտակելով նրան՝ մռնչաց Գյուտը։

Կոդակը կծկվեց, բայց սուր նայեց նրան.

— Աղբ եմ, տե՛ր իմ, մի հատ է՛լ,— հեծկլտալով ասաց նա։

— Ահա մի հատ է՛լ,— հարվածելով նրան ասաց Գյուտը։

— Իսկ եթե սպանես՝ ավելի լավ կանես,— ասաց Կոդակը։

Գյուտը մի աքացի տվեց նրան։

Կոդակը կատաղեց և բռունցքը սեղմած ճոճեց օդում.

— Վա՜յ իմ օրին...

— Լռի՛ր։

— Չե՛մ լռի։ Չե՛մ ուտի այս ծեծն ու անարգանքը։ Հը՞ ասում են՝ պարսիկը պարսիկ է։ Պարսիկը չէ՞ պարսիկը, հա՛յն է պարսիկը, հա՜յը... Ի՞նչ ես նայում։ Վե՛րջ տուր գնամ։

Գյուտը ծիծաղեց և մոտենալով Կոդակին՝ ձեռը դրեց նրա ուսին.

— Դե մի պարսկացնի ինձ։ Ես հայ եմ։

— Դու հայի՞ հայ չես, պարսկի՞ հայ ես,— լաց լինելով մղկըտաց Կոդակը.— ծերությա՞նս խնայեիր...

— Լա՛վ, հանգստացի՛ր,— հորդորեց նրան Գյուտը,— ձեռս բարկացավ։

Կոդակը հեաց, հառաչեց և գնաց պառկեց իր անկողնում, գլուխը թաղելով վերմակի տակ։

— Ես դրանց ապուրը կեփեմ,— սպառնաց նա գլուխը ցցելով վերմակի տակից։

— Սնապարծություններդ թող և քնիր։ Դե՛...— հրամայեց Գյուտը և մտավ անկողին։

Լռեցին։ Շուտով Գյուտն սկսեց մշմշալ։ Քնեց նա։ Իսկ Կոդակը նստեց և սկսեց վերքերը սրբել, մերսելով ծեծված կողերը, միաժամ վերհիշելով պատահածը։ Անհամբեր, անհանդուրժող, որքան և դիմացկուն և հնազանդ՝ նա բորբոքվել էր և չէր կարողանում հանգստանալ։ Վրեժն ու քենը այրում էին նրա սիրտը։ Լեոնրցու ներհակությունը զարթնել էր և չէր թույլ տալիս անգործ սպասել առավոտին, որ մի բան ձեռնարկեր Խոսրովի դեմ։ Դեռ շատ ճանապարհ կար մինչև արքունիք, ուր հույս ուներ կործանել իր հակառակորդին այն բոլոր միջոցներով, որ կուտակել էր իր բազմամյա կյանքում։

— Ուրանա՞լ,— մտածեց նա,— կսատկեմ՝ չեմ ուրանա,— հազա՛ր կրակի կերկրպագեմ, որ ողջ մնամ և կրոնս չուրանամ։ Ես սրանց կրակի բերանը...

Նայեց կրակին, որ համառ փոփոում էր, և հանկարծ ինչ-որ սուր մտքից դրդված վեր թռավ, մոտեցավ կրակին, բարձը դրեց, բարձրացավ և միզեց կրակի վրա։ Կրակը թշշաց և նվազեց։ Մընացածը ոտի տակ գցեց, հանգցրեց և գնաց պառկեց անկողնում։ Հանգիստ եկավ վրան և շուտով քնեց։

Առավոտյան Գյուտը զարթնելով նայեց Կոդակի կողմը։ Նա քնած էր։ Օրվա լույսի տակ ավելի խոշոր երևացին նրա դեմքի վերքերը։ Գյուտը խղճաց ծերուկին և միաժամանակ վիրավորանք զգաց։ Հանդուգն ծերուկի հարցը նրան այնքան չէր զբաղեցնում, որքան այն անարգանքը, որ կրել էր այդ մարդը իբրև հայ և այն էլ իր ներկայության։

Ներս մտավ կարավանատան տերը և հարցրեց, թե ինչ է կամենում նախարարը նախաճաշի։

Հազիվ էր Գյուտը պատասխանել, որ կարավանատան տերը տարտափով նայեց սրբազան կրակի պատվանդանին։

— Ո՞վ է սպանել կրակը...— հարցրեց նա այլայլված։

— Մի՞թե սպանված է,— հարցրեց Գյուտը անտարբեր։

Կարավանատան տերը մոտեցավ պատվանդանին և շփոթված նայեց։

Կոդակը զարթնեց։

— Ո՞վ է սպանել կրակը,— հարցրեց նրան կարավանատան տերը։

Կոդակը նայեց պատվանդանին և ասաց.

— Դու ասա ինչո՞ւ է կրակը ինքը թողել, որ իրեն սպանեն։

Կարավանատան տերը վախեցավ աղմուկից և տնտղելով կրակի քուրան՝ ասաց.

— Փայտ դնող չի եղել, ինքն իրեն սպանել է։

Եվ դուրս գնաց կրակ բերելու։

— Ո՞վ է «սպանել» կրակը,— հարցրեց Գյուտը Կոդակին։

— Ես,— ասաց Կոդակը։

— Ինչո՞ւ։

— Հայ եմ և քրիստոնյա։ Իմ օթևանում ի՞նչ գործ ունի կրակը։

— Ինչպե՞ս հանգցրիր։

— Մեզով, տեր իմ, հայությունս բռնեց։

Գյուտը կամենում էր զայրանալ, բայց հանկարծ փոթկաց։

— Ի՞նչ աստված է, որ մեզով սպանվում է,— իմաստասիրեց Կոդակը։

Գյուտը լրջացավ։

— Իսկ եթե իմանային ու գային գլխներիս կանգնե՞ն։

— Դե այն է՝ կորած էինք։

Գյուտը նայեց ինքնասածի ծերուկին և լռեց։

— Եթե չանեի՝ մինչև արքունիք հասնելը երիկամներս կըպայթեին,— ասաց Կոդակը։— Անձս վիրավորված է սաստիկ, տեր իմ։

— Հիմա հանգստացա՞ր,— ժպտաց Գյուտը։

— Այո, դեռ վրեժ ունեմ։

— Վրեժդ պահիր և այլևս այդպիսի հիմարություններ մի անի,— լրջացավ Գյուտը,— դու քաղաքացի՞ ես, թե կրակի վրա միզող։

— Մեզը չի խանգարի քաղաքագիտության, տեր իմ, կա տեղ՝ խոսքով պիտի գործես, կա տեղ, որ պիտի միզե՛ս։

Գյուտն անօգուտ համարեց համառ ծերուկի հետ վիճելը։ Ներս մտավ կարավանատան տերը և իր հետ բերած կրակով կրակին վառեց ատրուշանը։

— Ինչպե՞ս է սպանվել էլի չեմ հասկանում,— գլուխը տարավ-բերեց կարավանատան տերը, նայելով կրակին։

— Կրակն սպանվում է քամուց, հողից, ջրից,—իմաստասիրեց Կոդակը լուրջ դեմքով։

Գյուտը խիստ նայեց Կոդակին.

— Դու պիտի լռե՞ս, թե ոչ...

— Ես լռել եմ, ո՞վ է խոսում,— ասաց Կոդակը։— Բայց ես մահից չեմ վախենում, ես զինվորյալ եմ։

Գյուտը լռեց։ Կարավանատան տերը հարցրեց, թե այլևս ի՞նչ է հրամայում նախարարը։

— Նախաճաշը բեր և իմացիր, թե զարթնե՞լ է Խոսրովը։

Կարավանատան տերը գնաց։

Կոդակը հագնվեց, գնաց երեսը լվաց և ներս եկավ նստեց իր անկողնի վրա։

— Նրանք ծեծեցին ինձ՝ բայց ես էլ Արշակ թագավորի պես չարի։

Գյուտը զվարճանքով նայեց անխոնջ ծերուկին և թույլ տվեց, որ շատախոսի։

— Դե ասա ինչպե՛ս։ Արշակ թագավորին Անհուշ բերդում Շապուհը ման էր ածում հատակի կեսը Հայաստանի հող ցանած, կեսը Պարսկաստանի։ Արշակ թագավորը հայի հողով անցնելիս խրոխտանում էր, հայհոյում Շապուհին, իսկ Պարսկաստանի հողի վրա խեղճանում։ Ես Պարսկաստանի հողի վրա կռիվ արի։

— Շուտով կդառնաս հայոց թագավոր,— կատակեց Գյուտը։

— Ծաղրում ես, տեր իմ, բայց ես Հայաստանի պատիվը բարձրը պահեցի։

Ներս մտավ կարավանատան տերը խոնչայով բերելով նախաճաշ։ Կոդակն իսկույն մոռացավ իր վիրավորանքը և արագ նստեց խոնչայի մոտ։

— Խոսրովը վեր է կացել և սպասում է քեզ, իշխան,— ասաց կարավանատան տերը։

— Ասա իրեն թող գա ինձ մոտ,— հրամայեց Գյուտը։

— Հրամանդ։

Կարավանատան տերը գնաց և իսկույն վերադարձավ։

— Չի գալիս, տեր իմ,— ասաց նա վախեցած։

— Գնա հրամայիր իմ անունից թող գա,— աչքերը փայլատակեցրեց Գյուտը։ Կարավանատան տերը վախեցած տարտամ քայլեց դուրս։

Ներս ընկավ Խոսրովը և գնաց Գյուտի վրա.

— Դո՞ւ ես հրամայել, որ ես գամ մոտդ, ես քեզ...

Գյուտի ապտակը շառաչեց Խոսրովի երեսին։ Սա բերանը բացեց, որ գոռա՝ Գյուտը մի հատ էլ հասցրեց։ Ապա երրորդը, չորրորդը։ Խոսրովը շփոթվեց, վախեցավ, ուզում էր դուրս գալ օգնություն կանչելու՝ Գյուտը բռնեց օձիքից։

— Եթե ձայն հանես՝ շան պես կսատկեցնեմ։ Իմացա՞ր։ Դու իմ ներկայության իմ մարդո՞ւն ծեծես։

— Հայի ուժը կերա՞ր,— վրա վազեց Կոդակը, որ հարվածի Խոսրովին։

Բայց Գյուտը մի հարված էլ նրան հասցրեց և հրամայեց Խոսրովին.

— Գնա նժույգները պատրաստել տուր, մինչև ես վերջացնեմ նախաճաշը։

Խոսրովը դուրս վազեց սարսափած։ Նա այնքան շփոթվեց և սարսափեց, որ այլևս կաշկանդված սկսեց կարգադրություններ անել պատրաստվելու։ Նա մեկ մտածեց փախչել, առաջ ընկնել Գյուտից, բայց վախեցավ, որ սա կհասնի հետևից։ Եվ ինչպես պատահում է նման դեպքերում, նա ավելի սարսափեց, քան կարելի էր, և ենթարկվեց Գյուտի հրամանին։

Առավոտյան ամպերը ճեղքվեցին, և արևը նայեց դաշտերին։ Գյուտը կարգադրեց, որ նժույգները բերեն։ Կոդակը իր նժույգը չտվեց կարավանատան տիրոջը՝ Վշնասպից կրած անարգանքի պատճառով։

Երբ դուրս եկան պատշգամ և պատրաստվում էին իջնել ներքև, իր օթևանի դռանը հայտնվեց Վշնասպը։ Նա հետաքրքիր նայեց Գյուտին։ Սա խոնարհ ողջունեց նրան։ Վշնասպն ընդունեց ողջույնը և բազմանշանակ ասաց.

— Անհանգիստ էիր, իշխան...

— Այո, մի փոքր թակեցի այս անասունին։ Պատշաճ պահում էր իրեն ճանապարհին, բայց չգիտեմ ինչ պատահեց այս կարավանատանը՝ հանդգնեց ձեռ տալ մարզպանի պաշտոնյային։ Մնա՛ս խաղաղությամբ։

Եվ դարձավ Խոսրովին հրամայական շեշտով.

— Առա՛ջ ընկիր։

Խոսրովը գնաց։ Վշնասպը, որ տատանվում էր, թե ինչ վերաբերմունք ցույց տա Գյուտի խոսքերին, միայն լփռտեց.

— Գնաս խաղաղությամբ...

Գյուտը հեռացավ կարավանատնից։ Կոդակը գոհ էր և լուռ։ Նա Գյուտից շնորհակալ էր, որ ցույց տվեց իր բնավորությունը։ Նա շատ լավ էր ճանաչում Պարսկաստանը, գիտեր պաշտոնյաների վախկոտությունը ուժի դիմաց։ Մի փոքր անց դարձավ Խոսրովին.

— Երկու օրից կհասնե՞նք, ի՞նչ է կարծիքդ։

— Օր ու կեսում էլ կհասնենք,— խոսեց Խոսրովը արտաքին խեղճությամբ։

Բայց երևում էր, որ վրեժ էր նյութում։

«Մռութդ շների՞ն կտամ, սպասի՞ր»,— ասաց մտքում Կոդակը և սկսեց տգեղ ձայնով երգել ինչ-որ եկեղեցական եղանակ, կոտրտելով նժույգի վերուվարող շարժումներից։ Եվ Խոսրովին պայթեցնելու համար սկսեց ուժեղացնել ձայնը։

Հեռուն, ճանապարհի ձախակողմում ինչ-որ սևինք էր շարժվում դեպի ճանապարհը։ Նա ձգվում էր շղթայի նման։ Կարավան էր հիշեցնում, բայց ստվար էր։

Գյուտը նայեց այն կողմ։

— Զորք է, տեր իմ,— ասաց թիկնապահը։

Երբ առաջ գնացին, զորքը եկավ խառնվեց նրանց ճանապարհին։ Սիպահները հոգնած նայեցին Գյուտին և պատիվ տվին։ Գյուտը կանգնեց և սպասեց, որ զորքն անցնի։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց նա մի սիպահի։

— Ապար, տեր իմ,— պատասխանեց սիպահը,— քուշանների պատերազմին։

Ծանրաշարժ էր զորքը։ Կնճռոտ մաշկը բոլորովին երիտասարդ զինվորների ճակատին ու դեմքերին՝ ցույց էր տալիս ընտանեկան բարքերի անկում և տաժանակիր արշավանքների դրոշմ։ Նրանք

արևահողմահար էին, սև ու կեղտոտ, քրտնախաշ, փոշեթաթախ։ Թախծալի ու տխուր հայացքներով նրանք հարևանցի նայում էին ճանապարհորդներին և ծանր ճոճելով իրենց կուզը՝ շարժվում առաջ։

— Քնած են,— նկատեց Կոդակը,— մերոնց աշխույժը չունեն։

— Բայց վատ չեն կովում,— ասաց Գյուտը։

Կոդակը առանձին հետաքրքրությամբ նայում էր հեծյալներին ու նրանց նժույգներին։ Իբրև ախոռապետի զավակ՝ նա մասնագիտական աչքով զննում էր նրանց։

— Ոտների կոճերը հաստ են, բայց դիմացկուն չեն։ Ո՞ւր են մեր նժույգները։ Հեծյալներն էլ մերոնց չեն հասնի։

Գյուտը նայում էր խորաթափանց ու տխուր։

— Դու այդ մի ասիր, ասա մեծաթիվ են, դրանով են հաղթել աշխարհին։

Զորքն անցավ։

Կոդակն սկսեց իր դատողությունները։ Գյուտը չէր խանգարում, որովհետև նրանք հայերեն էին խոսում և ճանապարհն էլ կարճվում էր զրույցով։

— Զորքերը նշան են պատերազմի։ Հազկերտը հիմա ամեն բան շտապով կանի և խիստ,— ասաց Կոդակը։

Գյուտը գիտեր փորձված ծերուկի թափանցողությունը նման նյութերի մեջ, ուստի և մտածեց այդ դատողության մասին։

— Չի լսի բացատրություններ, դաժան հրամաններ կարձակի,— շարունակեց Կոդակը,— նրա հետ գործ չի տեսնվի։ Հույսը Միհրներսեհն է։

— Ինչո՞վ է պակաս Միհրներսեհը,— հարցրեց Գյուտը։

— Հրովարտակը նա է գրել տվել։ Խոսում է, համոզում է, վերջն էլ պահանջում է կամ կետ առ կետ պատասխանել, կամ Դուռը գալ։ Ատյան կլինի, ժամանակ կշահենք։

Խելքի մոտ բան էր սա։ Գյուտը ընդունեց այդ միտքը։

— Գլխավորը՝ նախ տեսնվելն է Միհրներսեհի հետ, նրա մորուքի տակից անցնելը,— շարունակեց Կոդակը։— Բայց եթե բանը հասավ արքային՝ կորած ենք։ Պատերազմը քուշանների դեմ կատաղեցրած կլինի նրան։

Նրանք գնում էին զորքի հետևից։ Գյուտը հրամայեց առաջ անցնել։ Արշավեցին բավական տեղ, մինչև առաջ ընկան և սկսեցին արագացնել նժույգների ընթացքը։

***

Մոկաց Արտակն ու Ռշտունյաց նախարարը ճանապարհ ընկան բավական ուշ։

Ճանապարհն անցնում էր լեռնանցքներով ու լեռնադաշտերով։ Ահա մի լեռ, սա էլ վերջանա՝ մյուսը, ապա հետևյալը, և մի օր կվերջանա այս երկար ճանապարհը Արտակի համար։ Նա չէր խոսում. երազում էր։ Չէր խոսում նաև Ռշտունյաց նախարարը՝ խուսափելով Արտակից։ Այնպես որ՝ երկուսն էլ գոհ էին։

Արտակի զգոնությունը նիրհում էր։ Դա նրա վերաբերմունքն էր դեպի Անահիտին շրջապատող բոլոր մարդիկ, բոլոր պարագաները։ Նա ներում էր Ռշտունյաց նախարարի կոպիտ ձևերը՝ խոսելու ձայնին զանազան արհամարհական ու ներհակ անփույթ բնույթ տալը։ Նա նրան համարում էր ազգական, մտերիմ։ Նա չէր կարողանում այս պահին զատել իրարու հակամերժ տարրեր՝ Անահիտը, Ռշտունյաց նախարարը, իր սերը, պատերազմը և իրենց դիմադրական գործը— պատասխան թուղթը։ Նրան դեռ պաշարել էր սիրո զգացմունքը և թմրեցրել էր, շփոթել։

Ռշտունյաց նախարարը, որ շատ բան ուներ կուտակած իր մեջ Արտաշատից հետո և գնում էր տուն բոլորովին այլ ծրագիրներով, քան Արտակը, անախորժության զգացումով էր նայում իր անկոչ ուղեկցին և վճռել էր օր առաջ ազատվել նրանից։ Մանավանդ որ՝ ըստ Վասակի և մյուսների որոշման՝ նա պիտի տան կենցաղի մեջ սկսեր ընտելացումներ կրակապաշտական կենցաղի։ Նա պետք է երկպառակություն մտցներ ուր կարող էր, իսկ չկարողացած տեղը ճնշել, ոչնչացնել։

Արտակն առանձին ծարավով ընկղմվեց իրեն հուզող մտքերի ծովը։ Պատերազմը թվում էր ինչ-որ առասպել, մղձավանջ, իսկ Ռշտունյաց աշխարհը՝ իրական։ Եվ արդեն բուրում էր նրա շունչը։ Տամուկ, կարծես աղի, բայց մեղմ էր այդ շունչը։ Նա կանչում էր, ընդառաջ էր հոսում, գրկում էր։

Ահա որոշվեց նրա ինչ լինելը, ճեղքվեց նա, դուրս լողաց գետնի տակից ինչպես բաց կապույտ երկնքի կտոր։

Բզնունյաց ծո՞վը։

Արտակը հառաչեց, և նրա աչքերը թաց եղան։ Նոր զգաց, որ այնքան կարոտել էր ծովին։ Մանկության իր ընկերը, իր հրազ-

ների աշխարհը, դայակների հեքիաթների վայրը, նավարկությունները, մանկության օրերի ջրերը։ Այնուհետև գնում էին նրանք երկար ժամեր, մի օր, երկու, և կապույտը վերևը, կապույտը ներքևը — հարբեցրեց կապույտը Արտակին։ Անցան Արծրունյաց աշխարհը, և վերջապես ահա Ռշտունիք...

Մութն էր, երբ մոտեցան Ռշտունյաց իշխանի ամրոցին։ Սև ժայռի նման, մռայլ ու անհյուրընկալ նայեց ամրոցը եկվորներին։ Ոչ մի լույս չէր ոսկեզօծում ամրոցի խավարով սևացած աչքերը։

Գամփռը բամբ ձայնով մի հաչոց հանեց։ Ինչ-որ խլրտաց ամրոցի դարբասի մոտ։ Գամփռը հաչոցով հարձակվեց եկվորների վրա, ստվերներ հարձակվեցին։

— Ո՞վ է, ո՞վ է...

— Իշխանը,— ձայնեց թիկնապահներից մեկը և առաջ քշեց նժույգը։ Պահնորդները զսպեցին գամփռին ու ետ քաշեցին։ Մեկն առաջ վազեց և դարբասը բաց անել տվեց։ Սրտի ճմլոցով Արտակը նայեց ամրոցի բակը, օթևանները։ Մութը ողողել էր ամեն կողմ. կյանքի ոչ մի նշույլ։ Մի՞թե նա այստեղ չէ... Այո, նա կարող է և այստեղ չլինել, այլ իր հայրական տանը... Ինչպե՞ս Արտակը չէր մտածել այս մասին...

Իջան նժույգներից. պատշգամում երևացին կանացի կերպարանքներ։ Նրանք առաջ եկան։

— Իշխա՛նը,— լսվեց մեկի շշունջը։

— Մոկաց իշխանն է հետը,— հարեց մյուս ձայնը։

Ջահեր բերին։ Բակը լուսավորվեց, և մռայլ ստվերները, որ ծածկում էին Արտակից նրա գաղտնիքը, փախան։ Նայեց Արտակը խմբվածներին։ Նրանք շատվոր էին։ Բայց չկար Անահիտը։ Պարզ էր— նա ամրոցում չէր։

— Հրամայիր օթևա՛ն,— հրավիրեց Ռշտունյաց նախարարը Արտակին։

Արտակը շարժվեց կոտրված սրտով։ Եվ քանի որ չկար մեկը, որին դիմեր այրող հարցմունքի պատասխանն ստանալու, նա ականջները սրեց, որսալու գոնե մի ակնարկ, մի բառ Անահիտի մասին։ Բայց որքան նա ականջ դրեց, ոչ մի հնչյուն ոչ մի շշուկ նրա մասին։ Եվ սրտի մեծ անձկությամբ նկատելով, որ չի կարող ոչ ոքի հարցնել, նա ընկավ մեծ տագնապի մեջ։ Չիմացավ ինչպես բարձրացան սանդուղը, ինչպես մտան օթևան։ Սակավախոս և անքա-

բեհամբույր Ռշտունյաց նախարարը անգամ պատշաճավորություն ցույց տվեց, հրավիրեց, կարգադրեց խնամք և սպասարկություն իր հյուրի համար, անգամ կատակներ արեց— Արտակը չլսեց և չզգաց։ Մեքենաբար լվացվեց, գնաց օթևան, ուր ընթրիք էր բերված։

— Է՛, հոգնեցի՛նք,— ասաց Ռշտունյաց նախարարը,— ժամ է, որ հանգստանանք։

Ռշտունյաց նախարարի խոսակցությունները չզբաղեցրին Արտակին։ Տարակուսանքները ալեկոծեցին նրա սիրտը։ Այն քար լռությունը, որ թաղել էր իր մեջ Անահիտի գոյության մասին ամեն շշուկ՝ մահի մոռացության պես էր ազդում Արտակին։ Նա կրկին լարեց լսելիքը, որ լսի մի բան Անահիտի մասին, նայել սկսեց սրա-նրա դեմքին, ոչ մի նշան նրա կենդանության, գոյության։ Ոմանց փսփսոցներից, բազմանշանակ իրար նայելուց նա սկսեց կասկածել, որ մինչև անգամ շատ մեծ աղետ է պատահել Անահիտի հետ։ Նա այնքան կորցրել էր իրեն, որ չկարողացավ հաշիվ տալ, որ ոչ ոք նրանից բան չէր կարող թաքցնել հենց այն պարզ պատճառով, որ ոչ ոք չգիտեր նրա նվիրական գաղտնիքը։ Բայց ինչո՞ւ են ամենքը լռում... Ահա խոսեցին վերջապես։

— Տիկինն ապաքինվե՞լ է,— հարցրեց Ռշտունյաց նախարարը։

— Ապաքինվել է, տեր իմ,— պատասխանեց սենեկապետը։

— Խելացի բան է արել։ Մա՞յրս։

— Մեծ տիկինն էլ, փառք աստծո, առողջ է։

— Տանը մարդ չկա՞ հիվանդ։

— ...Ոչ ոք, տեր իմ...— ծամծմեց սենեկապետը անհասկանալի եղանակով։

— «Ուրեմն նա այստեղ չէ...»— հրաշեկ երկաթի պես կտրեց անցավ Արտակի ուղեղով այս միտքը։

Նա այլևս չիմացավ թե ընթրո՞ւմ է, խոսո՞ւմ է, գոյությո՞ւն ունի։

— Ի՞նչ եղավ քեզ, իշխան, ինչո՞ւ տխրեցիր,— հարցրեց Ռշտունյաց նախարարը, մինչև անգամ նա ևս կարեկցական հայացք նետելով Արտակին։

— Հոգնություն եկավ վրաս,— ասաց Արտակը։

— Մահիճ ընդունիր, հանգստացիր։

Այո, նա կուզեր առանձնանալ, որ գոնե աչքից հեռու հնար ունենար ազատ հուզվել, պատեպատ շրջել օթևանում, որևէ էակ որսալ, բան հարցնել։ Նա խնդրեց, որ իրեն օթևան տան։

Սենեկապետը առաջնորդեց նրան բարձրահարկ մի օթևան, ամրոցի ծայրամասերի բուրգի մեջ։ Այդտեղից մի նեղ պատուհանի միջով կարելի էր նայել անդնդախոր վիհը, ուր խավարը չէր կարողանում արգելել խելագար լեռնային գետի որոտն ու հարվածների թափը օդը լցնելուց։ Օթևանում թեթև կրակ էր վառած օջախի մեջ։ Լեռնային հովը փսփսում էր պատուհանից և ներս փչում անտառի և գետի զովությունը։ Անտառը շատ մեղմ փսփսում էր իր հեքիաթը։ Եվ թվում էր, թե նրա հաստաբեստ սյուների տակ շրջում է անտառների մայրը, նրա շուրջը թրթռում է նրա հավերժահարսերի պարը։

Արտակը պատուհանից նայում էր այս գեղեցկության, որ նրա սիրտն ավելի էր խոցում։ Վերք էր տալիս նրան այս վեհ գիշերը. անտանելի ճմլում էր նրա սիրտը՝ հազար ու մի մտքերից խռովահույզ։

Սկսեց գիշերը խորանալ։ Ձայները հմլվեցին։ Բակը մթնեց կրկին։ Միայն պարսպի բուրգերից երբեմն լսվում էր պահակի քնկոտ կանչը, պարսպի տակ որոտում էր գամփռը և ապա լռում։

Նայեց աստղերին՝ դեռ ո՞ւր էր լույսը։ Թանձր գիշերաժամ էր, վեհանիստ, հպարտ։ Պառկեց, գլուխը թաղեց մորթու տակ. ինչ-որ գազանի հնացած հոտը դիպավ նրա հոտոտելիքին։ Նա աչքերը փակեց և ճիգ արեց տեսնել Անահիտի կերպարանքը։ Բայց այդ չէր հաջողվում նաև այդտեղ... Նրա ներքին տեսողության առաջ գալիս կերպարանք էր առնում ճանապարհը իր դեղնափոշի ժապավենով, լեռների քարաբեկորներ, սուր-սուր խոտեր նրանց արանքներում, ժայռերի մամուռ, ջրվեժներ և ծովածավալ Բրդնունյաց հավերժահարսը... Գալիս էր երևակայության առջևն կերպարանվում, նայում, ապա ծռմռվում, հալչում ինչ-որ անծանոթ մի աղջկա դեմք՝ բոլորովին ոչ նման Անահիտին։ Ամե՜նքը, ամե՜նքը երևում էին նրա աչքին, միայն նա չկար։ Կարծես չէր պատահել, գոյություն չէր ունեցել։ Սրտամաշ գիշերը կանգ առավ, քարացավ, ինչպես Արտակի սրտի հոգսը։ Քնած էին, կարծես այլևս չզարթնելու վճռով և՛ ամրոցը, և՛ մարդիկ, և՛ ծառերը, և՛ վիհը։

Տաճարի վեհ կամարները իբրև լայն թևքեր օրհնելու շարժումով բազմության վրա տարածված՝ լռություն էին ներշնչում։ Ահավոր բազմությունը ծովի պես օրորվում էր, փլչում այստեղ-այնտեղ։ Եվ ահա կարծես բազմության զանգվածից քաշված վեր կարկառվեց Վարդան Մամիկոնյանը և ձեռը բարձրացնելով բազմության վրա՝ գոչեց.

«Գուժական լո՞ւր, ժողովո՞ւրդ հայոց... Արյաց բանակը մտավ Այրարատյան դաշտավայրը... Օ՜ն, բարձրացե՛ք դիմագրավելու թշնամուն»...

Ժողովուրդը որոտաց և շարժվեց...

Զարթնեց Արտակը. ոչ ոք չկար, այդ պատուհանի մեջ թրթռացել էր մթին չղջիկը։ Նա մի պտույտ գործեց առաստաղի տամուկ ու սրբատաշ քարեկամարի տակ և կրկին դուրս լողաց դեպի վիհը։ Քնած էր Ռշտունյաց աշխարհը։

Արտակի վրա ջերմ եկավ։ Նա սրտի անձկություն զգաց, և շունչը դժվարացավ։ Վեր կացավ անկողնից գնաց դեպի դուռը, բացեց կամացուկ և մթան մեջ որոնեց միջանցքն ու անցքերը։ Դրան հետև, քարե նստարանի վրա քնած էր սպասավորը, մթին կույտի պես հենված քարե սառն պատին։

Միջանցքում մի պատուհան կար։ Արտակը մոտեցավ և գլուխը հանելով նայեց բակը և շուրջը շարված օթևաններին։ Ոչ մի նշան կենդանության։ Պատուհանի պատվանդանը լայն էր, չէր կարելի գլուխն ազատ հանել, դուրս նայել ամեն կողմ, եթե ոչ մի ինչ-որ լույսի աղոտ շերտ չդունավորեր դիմացի օթևանի ճակատը։ Ուրեմն լույսը իր միջանցքի կողքին էր։ Մի սավեր համբուրեց դիմացի պատը և հալվեց։ Այդ օթևանում, որ ըստ երևույթին միևնույն հարկաբաժնումն էր ինչ որ Արտակինը և ընդհուպ սեղմված էր իր օթևանին, քնած չէին և այնտեղ մեկից ավելի մարդիկ կային։ Ովքե՞ր էին... Հնար չկար իմանալու...

Արտակը չհամարձակվեց իջնել ներքև քարե սանդուղներից։ Կարող էր անհարկի շփոթության և զարմանքի տեղիք տալ։ Նա վերադարձավ և պառկեց, աչքերը առաստաղին։ Հանկարծ նա դող զգաց. պատուհանում խլրտաց հովը և բերեց իր հետ անդնդախոր վիհում ոգորող գետի մռնչյունը։ Մութը մթնեց ավելի։ Արտակը հառաչեց. «ո՞ր ժամն է, տեր աստված, ո՞ր ժամն է...»։ Եվ տխուր հայացքն ուղղած առաստաղին, աչքերը մերթ բաց էր անում, մերթ

փակում։ Հուսահատ, հոգնած նա երկար փակեց աչքերը՝ այլևս չքանալու, քնելու պինդ մտադրությամբ։ Բայց դա ավելի գրգռեց նրա արթնությունը։ Նա նայեց առաստաղին։ Նկատեց, որ սրբատաշ քարերի կարը նշմարվել սկսեց։ Առաջ նա կորած էր մթան մեջ։ Հետո կարը ձգվեց, պարզեց կամարի ստալակտիտ ձևը, կարերը շատացան, գորշացան։ Սա ի՞նչ է։ «Լուսանո՞ւմ է»,— հանկարծ շշնջաց Արտակը և զգաց, որ սիրտը մարեց, ճմլեց ու ապա սկսեց զարկել։ Վեր թռավ, նայեց պատուհանից։ Վիհը կերպարանք էր ստանում, գծագրվում էին ծերպերն ու փապարները։ Վաղորդյան աղջամուղջը հեքիաթական շղարշով սքողում էր վիհի ահավորությունը։ Ժայռերը քարափների կրծքից կախված ու օդի մեջ կարկառված մնացել էին իրենց դարավոր անշարժությամբ։ Ավելի լուսավորվեց վիհը, և արդեն եռաց գետի գզգզված բաշը խորխորատից խորխորատ թռչելիս։ Մշուշի պես վեր էր միտում ջրերի արծաթ փոշին, շոյելով անդնդում սուզվող սոճիների և եղևնիների կատարները։ Երևում էր, թե գետը ամբողջ գիշերը ինչ անօրինակ պայքարով ճիգեր էր թափել նվաճելու իր ճանապարհը դեպի նոր նպատակակետ— Բզնունյաց ծովը։

Լուսացավ։ Դադարեց Արտակի գիշերամարտը, հոգեկան անհուն խռովքը։ Բարի օրը նայեց նրան հուսով ու խոստումներով։ Արտակը հաշտվել էր արդեն, որ Անահիտը ամրոցում չէ։ Բայց կարելի էր ճանապարհվել գնալ նրա տունը։ Նա սկսել էր համբերության վարժվել. նա համակերպել էր իբրև մի սրբանվեր զոհ, որ պիտի հանդուրժեր իր սրբազան դերը։ Գուցե մի օր տևեր, գուցե երկու օր. նա որոշեց իսկույն գնալ Անահիտին որոնելու։ Բայց ինչպե՞ս բացատրեր, ի՞նչ պատրվակ ու առիթ հնարեր...

Սակայն և չնայած այս տարակուսանքներին՝ Արտակի վրա աշխույժ եկավ, մարտից առաջ հաճախ զգացած այն աշխույժը, երբ հայտնում են, որ ահա այս պահիս կսկսվի մարտը։ Օրը արթնացրեց թմրած, քնած կյանքը, հնարների դուռ բացեց Արտակի համար։

Գոնե կարելի էր վերջապես իմանալ, թե ո՞ւր է սուզվել այն էակը, որ այսքան տանջում է իրեն։

Եկավ սենեկապետը և Արտակին հրավիրեց սրահը՝ առավոտյան ճաշի։ Արտակը ձեռով արեց սենեկապետին, որ չգնա։ Սենեկապետը կանգնեց հարցական հայացքով։

— Ամրոցում ովքե՞ր կան։

— Շատ մարդիկ, տեր իմ, ո՞ւմ ես հարցնում,— պատասխանեց հարցով սենեկապետը։

— Հյուրեր կա՞ն։

— Ոչ, տեր իմ։

— Նախարարի ազգականներ կամ բարեկամներ կա՞ն։

— Կան, տեր իմ։

— Ովքե՞ր են։

— Իշխանի անները և զոքանչը...

— Միա՞յն...— սրտատրոփ հարցրեց Արտակը։

— Հետներն է աղջիկներից մեկը։

— Ո՞րը...

— Աստղիկը, երևի ճանաչում է տերս։

— Ոչ, չեմ ճանաչում,— խռովքի մեջ խլաձայն պատասխանեց Արտակը,— բայց մի՞թե միայն մի աղջիկ ունի նախարարի անները...

— Ոչ... մեկն էլ ունի...

— Ո՞ւր է նա։

— ...Նա, չգիտեմ, տեր իմ... երևի իրենց տանը... չգիտեմ...

— Ինչո՞ւ չգիտես։

— Ի՞նչ ասեմ, տեր իմ, հենց այնպես համարիր, որ տգետ եմ... չգիտեմ ինչպես ասեմ...

— Զարմանալի է,— հազիվ զսպելով բարկությունն ու վիշտը՝ ասաց Արտակը և լռեց։

— Խնդրեմ շնորհ բերես, տեր իմ, նախարարն սպասում է,— արագ անցավ իր գործին սենեկապետը։

Արտակը կուզենար զայրույթի գոչով մերժել հրավերը, դուրս պրծնել այս գաղտնապահ, անհամբույր ամրոցից, ընկնել սարերն ու ձորերը, մոնչալ սրտի ցավից։

Բայց պատշաճավորությունը պահանջում էր ընդունել հրավերը և գնալ։

Նա դուրս եկավ օթևանից և սենեկապետի առաջնորդությամբ գնաց սրահը, ուր սեղան նստած սպասում էր Ռշտունյաց նախարարը։

Արևը ցոլաց և իր բոցերի մեջ դողահար ոսկե նետերը արձակեց ամեն կողմ։ Պատուհաններից շեշտակի թափանցելով ներս,

նրանք ցցվեցին ճաշասեղանի վրա։ Շողշողացին գինիները գավաթներում և ոսկի-արծաթ ամանները։ Բազմազան խորտիկների բուրմունքը քաղցրացնում էր քիմքը և կոչում վայելելու։

— Հոգնությունդ չանցա՞վ, դե՛,— ասաց Ռշտունյաց նախարարը՝ սուր տնտղելով Արտակին։

— Չանցավ։

— Կանցնի՞։ Հրամայի՛ր, անո՛ւշ արա,— հրամցրեց Ռշտունյաց նախարարը և ինքը մոլեգին վրա ընկավ խորտիկներին, սկսեց ախորժակով ուտել։

Արտակը հազիվ ճաշակեց մի բան։ Նրա կոկորդը սեղմվում էր, և հացը կուլ չէր գնում։ Նա վերին աստիճանի անհանգիստ էր։ Նրան ճնշում էր սրահը, ճաշը, անգամ առավոտը, իր լույսով և ուրախությամբ։ Ի՞նչ ուրախություն, երբ չկա, անհայտ է, թե ուր է նա...

Նախաճաշին ուրիշ ոչ ոք չէր մասնակցում։ Դա ավելի էր խորացնում Արտակի տանջանքը։ Նա վախենում էր հարցեր տալ Ռշտունյաց նախարարին։ Իսկ նա չէր խոսում ամրոցի և ընտանեկան գործերի մասին։

Արտակն ինչ-որ մի անհասկանալի բան էր զգում սենեկապետի առավոտյան պատասխանների մեջ՝ ամրոցի բնակիչների վերաբերյալ։ Ինչ-որ գաղտնիք էր վարագուրված նրա շուրջը, նրա որսնող աչքերի առաջ։

— Իջնենք ձորահովիտ,— առաջարկեց Ռշտունյաց նախարարը,— մերսենք մի փոքր մսներս ճանապարհի հոգնությունից։

Արտակը չմերժեց։ Թեև դուրս գալով ամրոցից չէին պատահելու ոչ ոքի, բայց մինչև անցնեին միջանցքները, անցնեին պարտեզամներն ու միջանցքը՝ մի մարդ, մի նշան կերևար։

Սենեկապետը զեկուցեց, որ նժույգները պատրաստ են։ Նախարարը վեր կացավ, ճմլկոտաց և շարժվեց դեպի դուռը։ Արտակը հետևեց նրան, լարեց ուժերը և ուշադրությունը՝ որսալու համար իրեն այրող գաղտնիքը։ Հենց իր օթևանին կից օթևանի դուռը բացվեց և ո՞վ երջանիկ վայրկյան։ Անահի՞տը... Արտակը շրջվեց կիսամթան մեջ իրեն նայող կերպարանքին։ Նա ակամա մի քայլ արեց դեպի նա, և հանկարծ խաբուսիկ նմանությունը Անահիտին՝ խորտակեց նրան։ Դա Աստղիկն էր, որի կերպարանքը նման գտավ Անահիտին... Արտակը չճանաչեց նրան։ Անցավ մոտից քայլերը

քարշ տալով, որ գուցե մի որևէ խոսք հնչեր այն կողմը։ Ոչ մի հրաշ չկան...

Ռշտունյաց նախարարը ետ դարձավ, խոժոռ նայեց կերպարանքին։ Սա անհետացավ։ Կիսամութը թանձրացավ։ Իշան բակը։ Ոչ ոք այլևս չերևաց։ Պատշգամում գնում գալիս էին աղախիններ ու սպասավորներ միայն։

Նստելով նժույգ՝ դուրս ելան ամրոցից, իշան քարքարոտ շավիղով դեպի ձորահովիտը և գնացին լեռնիվեր։

— Հիվանդ մա՞րդ կա ամրոցում,— հարցրեց հանկարծ Արտակը Ռշտունյաց նախարարին։

— Ոչ ոք հիվանդ չէ,— քթի տակ խոսեց Ռշտունյաց նախարարը։

— Ես կարծում էի հիվանդ կա։

— Ոչ ոք,— կրկնեց Ռշտունյաց նախարարը։ Հետո բարկությամբ, որի պատճառը չհասկացավ Արտակը՝ դիմեց նրան և ձայնը դժգոհ բարձրացրեց.— ինչո՞ւ պիտի հիվանդանան... Սնո՞ւնդն է պակաս, օթևա՞ն չունեն, մեջքնե՞րն է ցավում գործից։ Ռշտունյաց օդը հիվանդություն չի վերցնում։

Արտակը մասամբ համաձայն էր դրան։

— Բայց մարդ է ու հիվանդացավ հանկարծ, ի՞նչ կանես,— ասաց նա։

— Ինչ կանե՞մ,— բարկացավ Ռշտունյաց նախարարը,— դուրս կվռնդեմ ամրոցից։ Ամրոցը անկելանոց չէ։

Կամաց-կամաց երևան էին գալիս Ռշտունյաց նախարարի տարօրինակությունները։ Իհարկե, լավ կլիներ ոչ ոք չհիվանդանար՝ դա հասկանալի և քաջալերիչ ցանկություն է, բայց որ նախարարն արգելում էր հիվանդանալը— սա զարմանալի էր։ Ինքնասած իշխանի այս ներհակ ու ոչ մի կերպ չգործադրելի պահանջը այն հետևանքն ունեցավ, որ նրա մոտ խոսք չէր կարող լինել հիվանդների մասին։

Արտակն ու Ռշտունյաց նախարարը գնում էին ձորահովտի շավիղով։ Նժույգները աշխուժացան և քրտնել սկսեցին։ Զբոսանքը մերսեց նախօրյակին հոգնած իշխանների մկանները. նրանք ևս մի փոքր աշխուժացան։

Արտակի տրամադրությունը բնության գրկում բարձրացավ։ Եվ տեսնելով նույն բանը նաև Ռշտունյաց նախարարի մեջ՝ նա շփո-

թեց, համարելով մտերմության արտահայտություն։ Նա թուլություն ունեցավ տարվելու այդ զգացումին։ Իր սիրող սրտի թրթիռները, որ գեղեցկացրել էին նրան, բարձրացրել, վեհացրել, նրա աչքում վեհացրել էին ամեն բան՝ բնություն և մարդ։ Նա դարձավ դեպի Ռշտունյաց նախարարը և մանր ժպտալով հարցրեց.

— Իշխանուհու հարազատները հաճա՞խ են հյուր լինում քո ամրոցում։

— Հաճախ,— թանձր ձայնով պատասխանեց Ռշտունյաց նախարարը և կողքանց նայեց Արտակին։

— Ամբո՞ղջ ընտանիքով։

— Ամբողջ,— չոր ու հատու պատասխանեց Ռշտունյաց նախարարը՝ սպասելով, թե ուր է հանգում այս հարցուփորձը։

— Դնացին տուն։

Արտակը դիրքը փոխեց.

— Հեռո՞ւ է նրանց ամրոցը։

— Նրանք ամրոց չունեն։ Իմ աները հասարակ սեպուհ է։

Ռշտունյաց նախարարի հաճությամբ պատասխանելը քաջալերեց Արտակին։ Սա կրկին անցավ իր հարցուփորձին.

— Այն օրիորդը, որ Ողական ամրոցն էր եկել, նա՞ ևս իր ծնողների հետ է լինում...

— Միշտ։

— Եվ հիմա նա այստե՞ղ է...

Արտակն զգաց, որ սրտի տակ մի բան փլվեց։

— Նա այստեղ է,— հետաքրքիր պատասխանեց Ռշտունյաց նախարարը և սկսեց գաղտագողի հայացքներով զննել Արտակին։

Ուզում էր հարցնել Արտակին, թե ինչու է հետաքրքրվում՝ բայց զսպեց և յուրահատուկ խորամանկությամբ, որից զուրկ չէր նա, որքան էլ իրեն ձևացնում էր սուտ-միամիտ՝ սպասեց, որ Արտակը դուրս հանի իր գաղտնիքի ծայրը։

— Բայց նա չերևաց. երևի ամրոցում չէ, գնացել է մոտ վայրերը։

— Այդ չգիտեմ,— ասաց Ռշտունյաց նախարարը և նժույգը քշեց։

Արտակը հետևեց նրան։ Եվ որովհետև նա լռեց՝ Ռշտունյաց նախարարը սպասեց մի փոքր և ապա հարցրեց.

— Գո՞րծ ունես նրանց հետ։

— Ոչ, հետաքրքիր է իմանալ։ Որովհետև, երբ եկանք ամրոց՝ չերևաց նա։ Ինչպիսի՞ մարդ է աներդ։

— Կատու տեսե՞լ ես. քացախն ու պղպեղը խառնիր, եփիր և ճանկերով միասին կուլ տուր, ահա աներս։

Արտակը ծիծաղեց։

— Այդքան խի՞ստ։

— Օղի՞նչ։ Տիկինս հազար ու մի հնարով եմ պոկել ձեռից։ Եվ երբ համաձայնեց տալու կնության ու գնում էինք եկեղեցի՝ հանկարծ մերժեց։

— Պատճա՞ռը։

— Աշխարհ կիմանար երևի պատճառը, իսկ նա չէ։ Երևի վերջին պահին մի «չէ» մտավ պինչը։ Ներհակ է՝ ինչպես ուղտ։

— Ասել է նրա ձեռից աղջիկ քաշելը մի պատերազմական սխրագործություն է։

— Տանջանք, չարչարանք։ Գիտե՞ս ինչու է եկել մոտս։

— Ինչո՞ւ։

— Հսկելու իր աղջկա վրա, իշխանուհուս վրա... Զլինի՞ թե խոսի հետս, ժպտա, գրավվի ինձնով։

— Ապա ումո՞վ գրավվի։

— Աստված գիտե։ Հակառակելու բան որ չի գտնում ինքն իրեն է հակառակում։ Ասավ «հա» կամ «չէ», և պրծավ։

— Չէ, դժվար է դրանից աղջիկ ուզելը։

— Զու խուզելուց ավելի օգուտ կա՝ քան դրանից մի մազ պոկելուց։ Կրկիտ ընկույզ ասա ու պրծիր։

Ռշտունյաց նախարարը, որ առհասարակ ծույլ և խոսելու հետ գլուխ չունեցող մարդ էր՝ գիտեր մեկ-մեկ բացվել և հումորից զուրկ չէր։ Նա սկսեց իր աներոջ կյանքից պատմել և բոլորովին բացվեց։

Արտակը ավելի մտերմացավ նրան։ Եվ զգալով, որ դամն հասավ, հանկարծ կանգնեցրեց նժույգը և ասաց.

— Գիտե՞ս, որ մեր նախարարներից մեկը աչք է դրել Անահիտին...

— Ո՞ր նախարարը։

— Կարծեմ Ատոմ Գնունին։

— Հը՞մ...— քմծիծաղ տվեց Ռշտունյաց նախարարը և մրտքում ավելացրեց. «հիմարի տեղ դնողը շատ անգամ ինքն է հիմար»։ Նա հասկացավ Արտակին և չհասկանալու տվեց։

— Ասել է Ատոմը հարսնախոսությա՞ն կգա շուտով։

— Երևի։ Բայց ինչպե՞ս պիտի անի աներոջդ հետ։

— Աներոջս էլ հետը պիտի տանի իբրև օժիտ. ասեղ շատ կունենա։

— Ոչինչ, թող տանի։ Երբ կինը սիրուն է լինում՝ աներն էլ կսիրունանա։

— Վատ մարդը զատկին էլ վատ է լինում,— ասաց Ռշտունյաց նախարարը ծիծաղելով։ Եվ դրանով էլ փակեց խոսքը։

Բայց սկսեց զբաղվել այդ հարցով։ Ուրեմն Արտակը Անահիտի համար է եկել իր մոտ։ Եվ այդ հակառակորդը հույս ունի աղջի՞կ դուքս տանել այս ամրոցից... «Ծոծրակդ կտեսնես՝ այդ չես տեսնի»,— ասաց նա մտքում և կրկին թանձրացավ, լռեց։

Զբոսանքը երկար չտևեց։ Արտակը ուրախ իր ձեռք բերած տեղեկություններով, երբ վերադարձան ամրոց, սկսեց որոնել Անահիտին։ Նրա համար մի գաղտնիք մնաց, թե ինչո՞ւ ապա չէր երևում Անահիտը։

Ճաշից հետո ժամանակն անցավ կրկին Ռշտունյաց նախարարի հետ, որը սակավ էր խոսում։ Երբեմն չոր հայացքով տնտղում էր Արտակին և մտածում։ Ճաշին մասնակցում էին նաև երկու հոգի լռակյաց և ինքնամփոփ մարդիկ, որոնք նույն կերպ էին վարվում Արտակի հետ՝ պահելով իրենց նախարարի դիրքը։ Նրանք ևս չէին խոսում և կասկածոտ հայացքներ էին սահեցնում նրա վրա՝ ցուցաբերելով լեռնական ժողովրդին հատուկ համերշխության բնազդը։ Երբ Արտակը խոսեց հայրենիքի կռվի մասին, որին հիմա պետք է պատրաստ լինեն բոլորը՝ նրանք պատասխանեցին պատշաճավոր անորոշ խոսքով։

Բայց ովքե՞ր էին նրանք, որ արժանացել էին նախարարի սեղանին մասնակից լինելուն։ Երևում էր, որ Ռշտունյաց նախարարն էր կանչել նրանց։ Նրանց թավ հոնքերի տակից դավադրորեն նայող սևեռուն աչքերը ցույց էին տալիս, որ նրանք եկել են շտապ և կարևոր գործի համար և համբերությամբ սպասում էին, որ ճաշը վերջանար։ Ռշտունյաց նախարարը բազմանշանակ նայեց սենեկապետին, որը կարճ կապեց սեղանի արարողությունները և սեղանդեր մատուցեց։

— Ամենք, իշխան, այս էլ քո արևշատության,— մեղմ վերջա-

վորություն տալու համար վերցրեց գինու գավը Ռշտունյաց նախարարը և խմեց։

Մյուսները ևս ըստ պատշաճին՝ խմեցին։ Ճաշն ավարտվեց։ Արտակը ցանկություն հայտնեց գնալ իր օթևանը և արձակուրդ խնդրեց Ռշտունյաց նախարարից։ Սա ուրախությամբ արձակեց նրան։

Սենեկապետը առաջնորդեց Արտակին և երբ շրջվում էր, որ դուրս գնա, Արտակը կանգնեցրեց նրան.

— Ասա ինձ, ամրոցո՞ւմն է Անահիտ օրիորդը։

Սենեկապետը շանթահարի պես նայեց Արտակին և լռեց։

— Չգիտե՞ս,— հարցրեց Արտակը։

— Չգիտեմ,— տեր իմ,— պատասխանեց սենեկապետը, ուրախ, որ Արտակը օգնեց նրան։

— Մի՞թե նա չի եկել այստեղ։

— Ոչ։

— Իսկ իշխանը գիտե՞ այստեղ է, թե այստեղ չէ օրիորդը։

Սենեկապետը օգտվեց նաև դրանից։

— Չգիտե, տեր իմ,— պատասխանեց նա։

— Լավ, գնա...

Արտակին կարծես բութ գործիքով հարվածեցին։ Նա շշմեց։ Ինչպե՞ս, դուրս է գալիս, որ Ռշտունյաց նախարարը խոսել է առանց գիտենալու, հենց այնպես։ Եվ եթե սենեկապետը չգիտե Անահիտի ամրոցում լինել-չլինելը՝ ապա էլ ո՞վ կիմանա։ Եվ այլևս ումնի՞ց իմանա։

Երեկոն իջավ ամրոցի վրա։ Արևը արյունաներկ արեց նրա ցիկլոպյան քարերը։ Հեռվում բառաչեց նախիրը։ Վիհում, որ մրթնել էր, կայծեց խարույկը փոքրիկ՝ ինչպես լուսատուտ։ Հեռուն, շատ հեռուն կանաչավուն, խորհրդավոր կորչում էր ծովի մի կտոր,— Բզնունյաց ծովը։

Սպասավորը ճրագ վառեց։ Օթևանը կարմրեց։ Անձուկ եկավ Արտակի սրտին։ Դարձյալ մի գիշեր... ե՞րբ պիտի գա, ե՞րբ պիտի անցնի... Հուսահատությունը կաշկանդեց նրան։

Ձայները հանգան ամրոցում և նրա շուրջը։ Գիշերը անզգա և անգիտակ եկավ պաշարեց ամենքին ու ամեն ինչ։

Արտակը մաքով գնաց Ողական ամրոցը։ Պատկերացրեց Շուշանիկ տիկնոջ օթևանը, իր առջև բարձին նստած Անահիտը։ Նա

կար, շունչ էր քաշում, նա լսում էր իրեն, նա խոսեց իր հետ, համաձայնեց հարսնանալ... Ո՞ւր կորավ նա, մարգարտի հատի՞կ էր՝ ընկավ ծովը, ծո՞ւխ էր՝ ցնդեց։ Ահա, երկրորդ գիշերն է՝ չի կարողանում ոչ թե տեսնել նրան, այլև իմանալ կենդանի՞ է նա, ո՞ւր է նա։

Արտակը վեր թռավ, շարժեց գլուխը, կամենում էր արտասվել, բայց ամաչեց ինքն իրենից։

— Ո՞չ, չի՞ գալու, չի՞ գալու, չի՞ գալու, չկա՞ նա,— շշնջաց Արտակը և գլուխը բռնեց, սկսեց մատներով գլուխը ծեծել։ Տարօրինակ ձայն հանեցին հարվածները։ Կոշտ առարկայի ձայն։ Ականջ դրեց։ Դա ինքը չէ, ուրիշ ձայն է։ Ականջ դրեց ուշադիր։ Ոչ, թվացել է իրեն։

Գնաց դեպի պատուհանը։

Դարձյալ ձայն։ Լսելիքը սրեց։ Պարզ լսվեց դռան բախում։ Գնաց դեպի դուռը, բացեց։ Ճրագի լույսը ընկավ միջանցքը, դռան շեմքին մոտ քնել էր սպասավորը։ Նայեց ուշադիր և հանկարծ նկատեց սյան տակին մի ստվեր։ Սա արագ սահեց, մոտեցավ։

— Դո՞ւ էիր...— հարցրեց Արտակը։

— Ես իշխան...

— Ասա...

— Ե՛կ...

Արտակը դուռը մեղմ փակեց և գնաց ստվերի հետևից։ Նա դգաց, որ այլայլվեց, թուքը չորացավ, կոկորդը սեղմվեց։ Ստվերը մթան մեջ շոշափեց, գտավ նրա ձեռքը և կանգնեցրեց։ Փափուկ էր այդ ձեռքը և ջերմ։ Մտերմություն էր անցնում նրանից դեպի ինքը։

— Իշխան... շատ զգույշ... աղաչում եմ...— շշնջաց ստվերը։

— Նա այստե՞ղ է...— դողաց Արտակը։

— Այստեղ է, տեր իմ... բայց զգույշ...

— Ի՞նչ, նա...

— Ե՛կ...

Դուռը բաց անելով արագ, ստվերը Արտակին քաշեց ներս, արագ փակեց հետևից։ Արտակի աչքերը մշուշվեցին։ Նա նայեց և իր դիմաց տեսավ Անահիտին։ Սա նստել էր անկողնի մեջ, զգեստը հագին։ Նա նայեց Արտակին աչքերը վախեցած, լայն բացած։ Կարծես աղաչում էր։ Նրանք իրար նայեցին երկար, խորը, վերացած։

Արտակը մոտեցավ Անահիտին և բռնելով նրա թևքի ծայրը՝ շշնջաց.

— Անահիտ, ի՞նչ է պատահել քեզ...

Անահիտը նայեց Արտակին, լռեց։ Հանկարծ շրթունքները կծկեց, ընկավ բարձին և սկսեց հեկեկալ։

Աստղիկը դուրս գնաց և դուռը պինդ փակեց հետևից։

— Անահի՛տ, խոսի՛ր, մի խո՛սք ասա,— խոնարհվելով նրա գլխին թոթովեց Արտակը։

Բայց Անահիտը հեկեկում էր անձրևող գարնան պես՝ քաղցր, կարոտալի... Այդ արցունքները թեթևացնում էին Անահիտի սիրտը։ Արտակը թույլ տվեց, որ նա հանգստանա։

— Անահի՛տ... դե հիմա խոսի՛ր, հանգստացար,— ասաց Արտակը։

Անահիտը որոնեց, գտավ Արտակի ձեռքը, բռնեց և տարավ դեպի կուրծքը։

Արտակը դողաց և շոքեց հատակին։ Նրա ձեռքը տրոփեց մի թավիշե ջերմության մեջ։ Չգիտեր դա իր սրտի զարկերն էին, թե Անահիտինը։ Անահիտը սեղմում էր, անդադար տրորում իր մոմե մատների մեջ Արտակի ձեռքը, կարծես խոսում էր, պատմում, զանգատվում։

Հետո վեր կացավ, նստեց, նայեց Արտակին և տխուր ժըպտաց։ Արտակը նստեց նրա անկողնին։

— Անահիտ, հիվա՞նդ ես...

Անահիտը գլուխը բացասաբար շարժեց և հառաչեց.

— Ապա ինչո՞ւ ես մաշվել։

Անահիտը աչքերը հառեց Արտակին և սկսեց նայել նրան մի տեսակ օտարոտի, մտախոհ, կարծես նոր էր տեսնում նրան։ Նայեց երկար, վերացավ, խորացավ և հանկարծ ընկավ Արտակի գիրկը։ Ինքնամոռացությունը խլեց նրանց ուշքը։ Կարոտները, խանդաղատանքները, սերերը հառաչանքով միացան իրար և մարեցին։ Վիհը վշշում էր ներքևում։ Թախծալի ծկլթում էր գիշերահավը, և ոչ մի մարդկային շշուկ չէր դողում սիրո սրբազան լռության մեջ։

Արտակը ետ նստեց և թոթվեց Անահիտի ձեռքը.

— Դու հիվա՞նդ ես եղել...

Անահիտը գլխով «այո» ասաց և հոգնած՝ աչքերը խոնարհեց։

— Լավ, ինչո՞ւ էիր հիվանդանում։ Կգայի, հո չէի կորչի։ Տեսա՞ր եկա։

— Ի՞նչ իմանամ... դժվար էր...— մրմնջաց Անահիտը և խլեց նրա ձեռքը։

Արտակը թեր տարավ նրա վզով և փարվեց մեղմակի։

Նրանք լռեցին։ Արտակը նոր սկսեց զննել Անահիտին։ Նոր նկատեց, որ նա հալվել էր, մաշվել իր բացակայության ժամանակ։ Միրո տանջանքը վեհացրել էր նրան և ավելի գեղեցկացրել։ Վսեմ դեմքը ներշնչվել էր զգացմունքով և իմաստնացել։ Խելացի էին դառել նրա կերպարանքը, շարժումները, հայացքը։ Նրանք, որ իրար հետ չէին խոսել համարյա, որ չէին պատահել բացի մի անգամից, իրար թվում էին հին մտերիմներ։ Նրանք կարող էին հազար ու մի դեպքեր պատմել իրենց կյանքից, այնպես, որպես թե իրար հետ ապրել էին տարիներ։

— Անահիտ, ես ուզում եմ խոսել հորդ հետ...

Դուռը բացվեց, և վախեցած ներս վազեց Աստղիկը.

— Հայրի՛կը... իշխա՛ն...

Անահիտը ցնցվեց։ Արտակը վեր թռավ և սահեց դուրս։ Նոր էր հասել իր դռան, որ սպասավորի լուսավորած սանդուղով բարձրացավ Անահիտի հայրը։ Արտակը նայեց նրա խստահայաց դեմքին։ Իսկ որ փուչ։ Մտավ օթևանը և դուռը փակեց։

Երազը ցնդեց. բայց Արտակի ձեռքերի, շրթունքների, այտերի վրա այրվում էր սիրած էակի մարմնի մեղաքը։ Նա մոտեցավ պատուհանին և նայեց դուրս։ Վիհը, անտառը, քարափը, որ անցյալ գիշեր թշնամական էին թվում նրան, հարազատացել էին հիմա։ Ամեն ինչ մտերիմ էր հիմա։ Անգամ օթևանը, նրա սառ կամարը։ Հայրենիքի պես ջերմացավ շուրջը ամեն բան։ Սակայն նախկին գիշերի խռովքն ու անքնությունը, օրվա ալեկոծությունները հոգնեցրել էին նրան։ Նա պառկեց, աչքերը փակեց և շուտով հալվեց անէության մեջ։

Հենց միևնույն գիշերը, երբ Արտակի և Անահիտի տեսակցությունը ամրոցի կյանքում մացնում էր մի երազական ջերմություն՝ մի այլ օթևանում, Ճրագի օրորուն լույսի տակ նստել էր Ռշտունյաց նախարարը և խոսում էր իր երկու հյուրերի հետ։ Նա խոսում էր կգույշ, երբեմն փսփսալով և նայելով դեպի դուռը, թեև այնտեղ ոչ ոք չկար, և սենեկապետին խստորեն հրամայել էր հեռացնել պահակին և ինքն էլ հեռանալ դռնից։ Ըստ երևույթին շատ կարևոր և խիստ գաղտնի գործի մասին դավադրություն էր, և երկու խոր-

Հրդավոր անձնավորությունները այդ գաղտնի գործին հարկավոր և ազդեցիկ մարդիկ էին։

— Իսկ ա՞յս նախարարը ում կողմն է,— հարցրեց նրանցից մեկը Ռշտունյաց նախարարին։

— Վարդանի կողմն է,— պատասխանեց Ռշտունյաց նախարարը,— և վտանգավորն այն է, որ հարևանս է։ Ուրեմն տեսնք, թե որքան զգույշ պիտի գործեք։

Հարց տվողը սուր ընչացքները ոլորեց և արծվային աչքերը հառեց պատուհանից դուրս ականակիր խավարին։

— Մենք ուրիշ բաներ էլ կանենք,— ասաց նա,— երբեմն էլ մարդիկ բաց կթողնենք դեպի Մոկաց աշխարհը հակառակ լուրերով։

— Այո, այո,— ձգեց Ռշտունյաց նախարարը,— կգնան կասեն, որ այստեղ մենք քրիստոնեության ուխտ ենք արել և զորագնդեր ենք կազմում պարսից դեմ։

Դավադրության մյուս մասնակիցը՝ կապտաչյա, շեկ գանգրահեր գլուխը առաջ պարզած լսում էր՝ ջանալով բաց չթողնել ոչ մի բառ։ Նա լարել էր իրեն և խիստ աշխույժի մեջ էր։ Դավադրության կլորը, որ նրա մեջ ըստ երևույթին եռում էր մշտական ուժով՝ այժմ շահագրգռել էր նրան։ Միաժամանակ իշխանին ծառայելը, ստրկանալը և հաճոյանալը ֆիզիկական պահանջ էր ինչպես նրա, նույնպես և իր ընկերոջ համար։ Նրանց ողնաշարով հաճելի սարսուռ անցավ, երբ նախարարն ասաց.

— Դե՛, ձեզանից հավատարիմ չունեմ ես իմ աշխարհում։ Գործը գլուխ բերեք, և ձեր վարձը ոչ թե միայն ես, այլև արքայից արքան կիմանա։ Այսօր սեպուհներ եք, վաղը իշխաններ կդառնաք։

Սեպուհները մինչև հատակ խոնարհեցին գլուխները.

— Աստված քո սրտով տա, իշխան։

— Երկնուց գետին շնորհակալ ենք։

Ռշտունյաց նախարարը մտածեց.

— Ուրիշ ո՞ւմ կարող եք գործի մեջ գցել։

— Տեր իմ, —ասաց շիկահերը, տրորվելով և դրստվելով նըստած տեղը,— սա հավատի գործ է. մենք այնքան չենք անի, որքան հոգևոր մեկը։ Չի՞ լինի՝ նրանց խառնենք գործին։

— Զանգակ երե՛ցը, ճշմարի՛տ,— վրա բերեց արծվաքիթը,— սկիհ է ծախել մի վաճառականի։

— Մեզ էլ չծախի՞...— կատակեց իշխանը։

— Մեզ էլ կծախի,— ասաց շիկահերը,—և մեզ հենց այդպիսի մեկը հարկավոր կգա։

— Ճշմարիտ ես,— լուրջ խոսեց իշխանը,— մեզ պետք են ամեն ինչ ծախող մարդիկ։

— Այդ կողմից միամիտ կաց, տեր իմ,— ասաց շիկահերը։

— Բայց հավատարիմ էլ է,— նկատեց արծվաքիթը,— ամեն ինչ ծախող մարդուն վստահել կարելի է։ Կտրուկ խելք է, ինչքան չլինի։

Ռշտունյաց նախարարը գոհունակությամբ լսում էր իր դավակիցներին։

— Դե, վերջացնենք,— ասաց Ռշտունյաց նախարարը,— մոգեր կբերենք մեկ-մեկ և իբրև պատահաբար ճամփորդներ, որոնք եկել մնացել են սրա-նրա տանը։ Նրանք իրենց համար, ատրուշաններ կվառեն։ Ո՞ւմ ինչ գործն է։ Կաղոթեն իրենց համար, իսկ նայողները կընտելանան։ Այսպես կամաց-կամաց մոգերը կմտնեն տները և կգայթակղեն ում կարող են։

— Ճշմարի՛տ ասված,— ասացին սեպուհները։

— Իսկ դուք զորագնդի մեջ կխմորեք կրոնի գործը։ Հիմա գընացե՛ք խաղաղությամբ։

Սեպուհները հրաժեշտ տվին և դուրս ելան։

Ռշտունյաց տերը ձգվեց, հորանջեց և ապա շտկվելով տեղում՝ ծափ տվեց։ Ներս մտավ սենեկապետը։ Նայեց և չիմանալով ինչ ասի՝ հարցրեց.

— Ի՞նչ կա ամրոցում։

— Կենդանություն, տեր իմ, ամենքը խաղաղ քնած են։

— Նախարա՞ը։

— Նույնպես քնած է։

— Լավ։ Պահակ դիր Անահիտի դռան։

— Ինչպես հրամայեցիր, տեր իմ։

— Աստղիկին, Վարդուհի մայրիկին, իշխանուհուն հետևիր ում հետ են խոսում։ Զգույշ, նախարարի հետ չպատահեն։

— Հրամանք ես։

— Տե՛ս. մահու կենաց խստությամբ ասացի այս բանը։ Եթե մարդ իմանա՝ գնա՞ց գլուխդ։

Սենեկապետը սարսափեց.

— Տեր իմ, ե՞րբ եմ դավաճանել քեզ և խոսքդ գետին գցել, բերանս չորանա։

— Տե՛ս, սա ուրիշ բան է։ Մոկաց նախարարը չպետք է պատահի ոչ թե Անահիտին— կսպանե՞մ քեզ— այլև նրա հարազատներին։

Սենեկապետն առաջ եկավ։

— Տեր իմ, իրավունք տուր։ Քեզ հո չեմ հանդգնի խաբել, թե ոչ ոք ոչ ոքի չի հանդիպել։ Բայց կհանդիպեն նրանք իրար։ Հեռացնենք մի երկու օրով Անահիտին ամրոցից՝ մինչև նախարարը մեկնի։

— Հեռացրո՛ւ։

— Այս առավոտ վաղ՝ քանի դեռ նախարարը քնած է՝ կուղարկեմ նրանց ագարակ. կասեմ պառավուկը պիտի խոտերով դարմանի նրան այնտեղ։

— Ասա՝ իշխանը հրամայեց։

Սենեկապետը գնաց։

***

Վրաց Միհրդատ թագավորը Վարդանի դեսպան սեպուհին ընդունեց պալատի դահլիճում, մի խորհրդականի և մի թարգմանի ներկայությամբ։ Նա յոթանասունի մոտ, բայց շատ առույգ ծերունի էր վարդագույն դեմքով, արծաթ մազերով։ Նա սրահայաց խելացի և մի փոքր թախծոտ աչքերը մտախոհ հառեց սեպուհին։ Ըստ երևույթին նա հասկացավ, թե ինչ կլիներ այն նամակի բովանդակությունը, որ ձեռքին բռնած ներս էր մտել սեպուհ դեսպանը։

— Սպարապետի՞ց է,— հարցրեց թագավորը։

— Հրամայեցիր, արքա,— պատասխանեց սեպուհ դեսպանը և մոտ գնալով թագավորին՝ հանձնեց նամակը։ Թագավորը բացեց մագաղաթը և տեսնելով, որ հայերեն է գրված, տվեց թարգմանին և նշան արեց, որ կարդա։ Թարգմանը կարդաց, կրկին կարդաց և անգիր անելով բարձրաձայն ասաց նամակի բովանդակությունը.

«Թագավորին Վրաց, Սպարապետից Հայոց Վարդան Մամիկոնյանից ողջույն շատ։

Տե՛ր արքա. որքան գիտեմ Վրաստանին ևս հասել է պարսից արքայի՝ Հազկերտի հրովարտակը՝ ուրանալ քրիստոնեական կրոնը և ընդունել զրադաշտը։ Քաջ գիտենալով քո երկարամյա փորձա-

ությունը և հույսով լինելով իմաստությանդ վրա՝ վստահ եմ, որ նույնպես և դո՛ւ քաջ գիտես, թե ո՛ւր է տանում մեր երկրներին այս հրամանը։ Հայերս մերժեցինք և վանեցինք մեզանից հրամանը։ Արդ, եթե դու ևս, արքա, քո ժողովրդով հանդերձ կմերժեք և կվանեք շարանենդ հրամանը, ապա և ամենափույթ պատասխանով տեղյակ կացուցիր մեզ ձեր վճիռն ու անելիքը։ Ահավոր է ժամը և հապաղումը կործանարար։

Սպարապետ Հայոց՝ Վարդան»

Թագավորը երկար լռություն պահպանեց և շարունակեց սուր հայացքով դիտել սեպուհ դեսպանին։

— Ի՞նչ է անում մարզպանը,— հարցրեց նա սեպուհին։

— Ջանում է խաղաղությամբ վերացնել,— պատասխանեց սեպուհը։

— Խաղաղությա՛մբ...— գլուխը շարժեց թագավորը,— պարսից արքաները ե՞րբ են խաղաղություն կամեցել։— Խաղաղություն չկա գայլի հետ։ Դու ասա մարզպան է, մարզպանություն է անում։

— Ինչպե՞ս է Վարդանը, քաջառո՞ղջ է,— ժպտաց թագավորը մի փոքր հետո,— չա՞տ է պայրացել...

Խորհրդականը բազմանշանակ նայեց թագավորին։

— Հանգիստ չգիտե այդ մարդը,— ասաց թագավորը,— և հիմա նրա համար մեծ գործ բացվեց։ Է՛է՛հ, պարսից օձը նոր չէ կծկվել պառկել կրծքներիս վրա։ Ահա՛, կայենական զորքը լցրել է Տփղիս՝ Մծխեթի և Յուրտավի մեջտեղը։ Շարժվելու հնար չի տալիս։ Ի՞նչ խաղաղություն, մա՛րդ,— գոչեց հանկարծ բարկացած,— սա խաղաղությո՞ւն է... Մա՛րդ. մի երկիր, որ իր զորքերը թաքցնի իր մեջ խուժած թշնամու զորքից՝ ի՞նչ խաղաղություն։ Միևնույն բանը ձերը չէ՞։ Կայենական զորքերով չե՞ն լցված ձեր բերդերը։

— Հայերս վճռել ենք դիմադրել,— ասաց սեպուհ դեսպանը,— միարանել ենք մի ուխտի մեջ և պատրաստվում ենք պատերազմի, եթե բանը հասնի դրան։

— Դժվար գործ է, պատերա՛զմ...— գլուխը շարժեց խորհրդականը,— ասուած հեռու պահի...

— Ուրիշ ելք չունեն,— ասաց թագավորը,— տա ասուած՝ շարը խափանվի, բայց ո՛ւր... բանը կհասնի պատերազմի։

Թագավորը խոհուն աչքերը գցեց հատակին և երկար լռեց։

— Կգրենք պատասխանը,— գործնական եղանակով հանկարծ դուրձավ Թագավորը սեպուհ դեսպանին,— մենք կարդացինք հրովարտակը, և իշխանները խորհում են պատասխանի մասին։ Տա ստված բարի միտք ամենքին՝ գանք համաձայնության։ Հայերը մեր եղբայրներն են. նրանց կռիվը մեր կռիվն է։ Հուսացե՛ք, աստծով մի բան կանենք։

— Ես Մծխեթում կսպասեմ պատասխանին,— ասաց սեպուհ դեսպանը։

— Սպասե՞ս։ Ոչ, մի՛ սպասիր։ Դու, գիտեմ, պիտի գնաս, եթե չես գնացել, Ցուրտավ, Աշուշա բդեշխի մոտ։ Գնա խոսի՛ր նրա հետ։

— Նրան ես նամակ ունեմ Սպարապետից,— ասաց սեպուհ դեսպանը, չկամենալով ոչինչ բան թաքցնել Թագավորից և միաժամանակ հասկացնելով, որ նախապատվությունը տվել է Թագավորին՝ առաջ գալով նրա մոտ։

— Տո՛ւր նամակը, թող կարդա, մտածի։ Բդեշխը խելացի մարդ է,— ասաց Թագավորը,— մինչև գնաս մոտը և գաս մեր պատասխանը պատրաստ կլինի։ Գուցե բդեշխը գա այստեղ։ Այդ էլ հետո կերևա։ Այսպես լավ է, չէ՞,— դարձավ խորհրդականին Թագավորը։

Խորհրդականը թևերը կրծքին խաչաձևած խոնարհություն արեց Թագավորին։

— Այսո՞ր կմեկնես Մծխեթ,— հարցրեց Թագավորը սեպուհ դեսպանին։

— Այո, արքա։

— Շտապիր։ Այս գործերը շուտ վերջացնելու գործեր են։ Շատ որ ձգձգվեն՝ նոր փորձանքներ կհայտնվեն։

Սեպուհ դեսպանը բացատրեց ուրիշ նոր հանգամանքներ, որով ավելի իրազեկ դարձրեց Հայաստանի մասին։

Երբ նա հեռացավ, Թագավորը արագ շրջվեց դեպի խորհրդականը։

— Իշխաններն այնոր վերջնական խոսք չասացին։ Նրանք ըսպասում են Աշուշային։ Իսկ ես երկյուղ եմ կրում, որ Աշուշան էլ սպասի իշխաններին և գործը իրոք որ ձգձգվի։ Պարսիկները վճռել են հարվածել մեր երկրներին և վերջ տալ իշխանություններին։ Աբշակունյաց Թագավորների օրը պիտի գցեն մեզ, և ինձ՝ հայոց վեր-

ջին թագավորի։ Պետք է կռվենք հայերի հետ կողք-կողքի։ Ուրիշ ելք չկա։

Խորհրդականը գլուխը շարժեց հավանության նշանով և թեթև իրոնարհություն տվեց թագավորին։

***

Աշուշա բդեշխը սեպուհ դեսպանին ընդունեց զուսպ և լուրջ։

— Ինչո՞ւ մարզպանը չեկավ եկեղեցի...— հարցրեց նա ծանրահայաց նայելով դեսպանին,— ինչո՞ւ չստորագրեց պատասխան նամակը... ինչո՞ւ էր հակառակում նախարարներին...

— Հայտնի է թե ինչու, տեր բդեշխ,— պատասխանեց սեպուհ դեսպանը,— նա մարզպան է...

— Մարզպա՛ն է,— ընդհատեց ու շեշտեց Աշուշան,— գործը դժվարին է։ Դա պատերազմ է, մտածե՞լ եք այս մասին։ Մտածե՞լ եք, որ այսպիսի պատերազմներ պիտի մղի նա, ով համոզված է հաղթության։ Ամեն բան խաղի է դրվում այստեղ. «կամ մենք, կամ նրանք»։

Սեպուհ դեսպանը իսկույն չխոսեց։ Նա սպասեց մի պահ, որ բդեշխի մտքերը հավաքվեն, և ապա ասաց.

— Մտածված է ամեն բանի մասին, տեր բդեշխ, բայց ուրիշ ոչ մի ելք չկա։

— Ելք կգտնվի։ Ես կողմնակից չեմ ձեր Վասակին. այդպես հեռու կանգնելը խելացի բան չէ։ Նա պիտի մոտենար նախարարներին և համոզեր ժամանակ շահել։ Իսկ գիտե՞ս ինչ բան է ժամանակ շահելը։ Դա հաջողություն է։

— Եթե հաջողվի այդ հաջողությունը,— ասաց սեպուհ դեսպանը տխրությամբ։

— Ամեն բանի հնարը կա, եթե մարդ ուզենա որոնել, գտնել։ Պարսիկներին լավ եմ ճանաչում։ Նրանք անձանձրույթ կպնդեն իրենց միտքը, պահանջը. իսկ երբ տեսնում են, որ հնարագետ ես, զգուշանում են մինչև վերջը հարձակվել վրադ։ Տեսնո՞ւմ ես, ինչպես են դրել հավատքի պահանջը։ Հո հավատքի բան չէ իսկապես, երկրի պահանջ է, կամենում են վերջ տալ մեզ։ Բայց խոսում են ուրիշ լեզվով։ Զգուշանում են։ Ատյաններ են սարքում, դատ, դատաստան, չգիտեմ ինչ հորս ցավերը։ Վախենում են ուղիղ գնա-

լուց։ Այո, այո, ժամանակ շահենք։ Դու մի մնա այստեղ։ Գնա Սպարապետիդ մոտ և իմ կողմից ամենախոնարհ ողջույն տար, ասա կպատասխանեմ անձամբ։

Սեպուհ դեսպանը խոնարհություն արեց։

— Ասա Սպարապետին, որ ես մարզպանի հետ ևս համաձայն չեմ։ Գործը ուրիշ կողմն է շրջվելու, և հույս կա խաղաղությամբ վերջացնելու պարսիկների հետ։

Սեպուհ դեսպանը հեռացավ Աշուշայից դժգոհ։ Բայց միաժամանակ գնահատեց նրա զգուշավորությունը։— «Գիտե իր գործը»,— ասաց մտքում սեպուհ դեսպանը և դուրս գալով ապարանքից՝ ճանապարհ ընկավ թագավորի մոտ։

Կեսօրին մոտ հասել էր մի աղբյուրի։ Իջավ ձիուց և սանձը տալով թիկնապահին գնաց ընկողմեց դալար խոտի վրա, ստվերի տակ։ Աղբյուրի մոտ նստել էր մի վրացի շինական, որ լայնացնում էր աղբյուրի գուռը։ Ուժեղ, կոշտերով ծածկված մատները դանդաղ ու հաստատ քաշում էին խիճ ու ավազը։ Շինականը խոսում էր ինքն իրեն.

— Ջուր են խմում ու չեն հոգում, որ աղբյուրի ակը չչորանա։ Բա մի անգա՞մ են խմելու ջուրը, էլ չե՞ն խմելու։

— Բարի աջողում,— ասաց սեպուհ դեսպանը։

— Բարին արևի՛դ,— պատասխանեց շինականը առանց վեր նայելու,— նստի՛ր, այս է, ջուրը կպարզվի։

Սեպուհ դեսպանը արդեն ընկողմանած էր և ժպտալով նայում էր շինականի ջանադրության։ Վերջացնելով գործը՝ նա վեր նայեց և տնտղելով սեպուհ դեսպանին՝ հասկացավ, որ օտարական է։

— Ո՞ր աշխարհից ես, սիրելիս,— հարցրեց նա մեղմորեն։

— Հայաստանից։

— Երևում է, մորթդ սև է։ Առ գավը, խմի՛ր,— առաջարկեց շինականը փայտե շերեփի նման մի ման։

Սեպուհ դեսպանը ընտրեց ջրի պարզված տեղը և սկսեց խմել։

— Լավ ջուր է,— ասաց նա։

— Դե մի լավ ջուր, մի կտոր էլ լավ հաց՝ հերիք է, որ մարդ ուրախ ապրի։

— Ի՞նչ է, չկա՞,— հարցրեց սեպուհ դեսպանը։

— Ինչո՞ւ չկա։ Ջուր էլ կա, հաց էլ կա, եթե թողնող լինի, որ մնաս քո հաց ու ջրին։

— Ո՞վ է խլում որ...

— Ա՛յլ ոչ նստած է Տփղիսի բերդում։ Պարսից թագավորից հրաման են բերել, որ հավատքներս ուրանանք։

— Է՛, չե՞ք ուզում ուրանալ։

— Լավ, ինչի՞ է ուզում, որ ուրանանք։ Հոգիներիս փրկության համա՞ր, եղբա՛յր, Հազկե՞բտը ուր, ե՞ս ուր։ Հիմի նա Տիզբոնում նստած ի՞մ ցավն է քաշում, որ հոգիս մյուս կյանքում փրկվի՞։ Սաբայի հոգին, որ դժոխքի կրակի կարասում խլթխլթա՝ Հազկերտի ջանը դուրս կգա՞, թե՞ կբարակի նրա ցավից։

— Ապա ի՞նչ է ուզում Հազկերտը,— ժպտաց սեպուհ դեսպանը։

— Ստամանա՛ ո՛չ գիտե իր գլուխը։ Մի չար բան կոռնենա մտքում։ Թագավորը ե՞րբ է բարի բան մտածել շինականի համար։

— Ապա որ կռիվ գա ձեր երկրի վրա, ի՞նչ կանես,— հարցրեց խորամանկ ժպտով սեպուհ դեսպանը։

— Է՛, եղբայր, որ կռիվ գա՝ բա աշխարհքը կվերցնես կտաս, թե առ տա՞ր... Բայց բռնակալը ուժեղ է, անիծվի՞ դրա ծնած օրը։ Ա՛ռ, խմի՛...

Սեպուհ դեսպանը շնորհակալություն հայտնեց, կրկին խմեց և ապա հրաժեշտ տվեց սրտացավ շինականին։

***

Թագավորի մոտ հավաքված Վրաստանի իշխանները վճռում էին Հազկերտի հրովարտակի պատասխանը։ Այնտեղ էին նաև Աշուշա բդեշխը և նրա որդին՝ Վազգենը։

Թագավորը առաջարկելով իշխաններին վճռել պատասխանը՝ թույլ էր տվել, որ նրանք դեռ հայտնեն իրենց բոլոր կարծիքը այս մասին։ Նա կամենում էր սկզբից լավ իմանալ նրանց բուն կամքը, որ հետո կարելի լիներ հենվել դրա վրա։

Խոսում էր Արսեն իշխանը, որի կարծիքը կշիռ ուներ իշխանների մեջ։

— Ես չեմ կարողանում լավ հասկանալ,— ասում էր նա,— թե ի՞նչ բան ունենք մենք հայերի հետ։ Իրենց գործն է, կկռվեն, կհաշտվեն պարսիկների հետ, կուրանան հավատքները, կպաշտ-

պանեն։ Մե՞նք ինչու ենք անցալ գլուխներս դնում ավետարանի տակ։

— Շատ ճշմարիտ է խոսում իշխանը,— ասաց մի իշխան, որ հեռու նստած էր իր բարձին։

—Մենք մեր գործը կբռնենք մեր հանգամանքների համաձայն,— շարունակեց Արսեն իշխանը,— կարելի է կհաշտվենք՝ կխոստանանք, որ ժամանակ տա արքայից արքան, կձգձգենք, և շարը կխափանվի։

— Եվ կխափանվի,— ձայն տվին մի քանի իշխաններ այս ու այն կողմից։

Թագավորը, որ համբերությամբ լսում էր, տեսավ, որ գործը շրջվում է ուրիշ կողմ։

— Իսկ եթե Հազկերտը չզիջի՞... Եթե պնդի իր պահանջները, ի՞նչ կանենք,— հարց տվեց նա բոլորովին հանգիստ։

Արսենը վիրավորվեց։ Նա մեղմ շարությամբ նայեց Թագավորին և ապա խոսեց զսպելով իրեն.

— Եթե պնդեց՝ կգտնենք հնարը։ Առայժմ խնդրենք, որ մեզ ժամանակ տա։

— Հայերին որ խեղդեց՝ էլ մեզ ժամանակ չի տա,— խեթ նայելով Արսենին ասաց Վախթանգ իշխանը։— Հազկերտը այս պահին հայերին է հետապնդում։ Բայց հետո մենք կկանգնենք դեմ դիմաց, երբ... հայերը վերջանան...

Արսեն իշխանը գլուխը բարձրացրեց։

— Այն ժամանակ է՛լ կսպասենք, մինչև կկանգնենք դեմ դիմաց։ Ինչո՞ւ ենք հենց այս գլխից մենք սկսում։ Թող սկսի պարսիկը։ Կսկսի և կտեսնի թե ինչ կանենք։ Ես Վրաստանը պարսիկներին տվողներից չեմ...

— Բայց ե՞րբ ես ավելի ուժեղ. երբ հիմա՞ ես կանգնում նրա դեմ, թե հետո, երբ մենակ ես,— հարցրեց Վախթանգ իշխանը։

— Երբ հայերի հետ գործը կվերջանա, երբ ժամանակ կանցնի՝ բանը բան ցույց կտա։ Հիմա գործի տաք ժամանակն է, տաք գլուխ չարժե մեջ մտնել։

Իշխանները լռել էին և ըստ երևույթին ազդվել Արսեն իշխանի խոսքերից։ Թագավորը բարվոք համարեց դարձյալ սպասել։ Նա ուզում էր, որ բոլոր հակառակորդները սպառեն իրենց պատճառաբանությունները։

Այդ միջոցին խոսք վերցրեց Աշուշա բդեշխը.

— Ես, տյարք, ուրիշ կերպ եմ նայում գործի վրա։ Այսօր այսպես հեշտ ու անփորձ դուրս գալ արհավիրքի տակից չենք կարող։ Այսօր այսպես ենք խոսում, որովհետև մեր կողքին հայերն են, դեռ ուժ ունեն, դեռ կանգնած են պարսիկների դեմ, դեռ մենք էլ պատասխան չենք տվել, դեռ արհավիրքը չի եկել անցել երկրի վրայով։ Լավ է խոսում Արսեն իշխանը, որ ժամանակ շահենք, երբ հերթը կհասնի մեզ։ Մեր հերթը հասել է արդեն, մեզ հրովարտակ են ուղարկել, մենք գործի մեջ ենք արդեն։ Կգնանք հայերի հետ, կըտանք հիմա մեր պատասխանը և նայած դեպքերի ընթացքին կորոշենք հետագա անելիքը։ Ոչ ամենից վերջը մենակ մնալն է մեզ փրկելու և ոչ էլ սկզբից ամենքի հետ գնալն ու անխոհեմ ուժերն սպառելը։ Մեծ գործեր չբռնենք, գործերից էլ չքաշվենք։ Բայց գործ պիտի անենք հիմա։

— Ի՞նչ պատասխան տանք Հազկերտին,— հարցրեց թագավորը։

— Հայերի նման մի պատասխան,— անսպասելիորեն խոսքը շրջեց այս կողմ Աշուշան,— այն, որ չենք թողնում մեր հավատքը։ Հետո հայերի հետ մասին կտեսնենք, թե որ կողմն է շրջվում գործը։ Գուցե հայերի հետ կլինենք, գուցե հայերին կտանենք մեր ճանապարհով։ Բայց քանի մենք ևս ուժ ենք հայերի նման, չթուլացնենք մեզ՝ քաշվելով գործից։

Արսեն իշխանը զայրացավ։ Աշուշան իբրև թե նրա ասածն էր կրկնում, բայց վերջը ծռեց այլ կողմ։

— Ես չեմ հասկանում... գլուխս չի մտնում,— ձայնը բարձրացրեց նա,— թե ինչո՞ւ մենք պետք է արյուն թափենք... Ի՞նչ խնդիր է սա...

Թագավորը ձեռքով հանդարտեցրեց նրան և մեղմ հանդիմանելեն ասաց.

— Ես ևս չեմ հասկանում, թե դու, որ մտածում ես, ճիշտ է, Վրաստանի բարիքի մասին, որտե՞ղ ես տեսնում այդ բարիքը... Ո՞ւմ համար ենք արյուն թափելու. հայերի համա՞ր միայն, թե՞ հայերը մեզ համար միայն։ Իմացիր, իշխան, որ պարսիկները մեզ չեն խնայի...

— Նրանք մեզ հետ լավ են,— ասաց Արսեն իշխանը։

— Ո՞րն է մեզ հետ լավը,— ձայնը իր հերթին բարձրացրեց թագավորը,— Տփղիսի կայենական գո՞րքը, դաժան հարկահանությո՞ւնը, այրուձի հանե՞լը քուշանների դեմ, թե՞ աղջիկներ ու պատանիներ քաշելը իրենց պալատների ու կանանոցի համար։ Մեզ հետ, ո՛չ, լավ չեն, մեզ հետ այնպես են, ինչպես իրենց հպատակների հետ։

Թագավորը հետզհետե բորբոքվեց և վեր կացավ տեղից.

— Մեզ ազատությո՛ւն է պետք, մենք պետք է փրկենք մեր երկիրը, պատիվը, անկախությունը։ Մենք պիտի գնանք հայերի հետ։

Թագավորը երկար խոսեց, խոսեց ջերմությամբ, սրտմտած և համոզված։ Նրա խոսքը թափանցեց ժողովված իշխանների սրտի մեջ։ Անցավ վարանքը, նրանք շարժվեցին։

— Ճշմարիտ է, ճշմարիտ,— խոսեց թագավորը,— կգնանք հայերի հետ. մեր թշնամին պարսիկն է։

— Երբեք չենք հաշտվի պարսիկների հետ՝ քանի ազատ ենք,— կրկնեց իր խոսքը թագավորը,— մեզ հետ հաշտ կլինեն այն ժամանակ, երբ ազատ կլինենք...

Ներունի հին զորականի խոսքը հմայեց իշխաններին։ Նրանք վեր կացան տեղներից։ Ապա բոլորը թագավորի գլխավորությամբ գնացին տաճար՝ ձևակերպելու Վրաստանի պատասխանը Հազկերտի հրովարտակին, որի ձևական առաջադրանքին պետք է ձևակերպված պատասխան կազմեին հոգևոր հայրերը. «Հավատքը չենք ուրանում»։

Այսինքն՝ հայրենիքը...

Ժողովրդի հոծ բազմությունը եռում էր տաճարում։ Ձայրույթը պոռթկաց այն պահին, երբ կաթողիկոսը կարդաց կրկին անգամ Հազկերտի հրովարտակը։ Ժողովուրդը, որ ներկա չէր եղել պալատի ժողովին, շատ վճռական և արագ շրջեց գործը դեպի մերժումն.

— Չենք ուրանում մեր երկիրը, մեր ազատությունը,— գոչեց բազմությունը,— այն էլ հերիք չէ՞, որ նստած են մեր կրծքին... Գրեցեք պատասխանը— չենք տալիս երկիրը...

Կաթողիկոսը կրկին անգամ հարց տվեց թագավորին, իշխաններին և ժողովրդին.

— Հոժա՞ր եք մերժման մինչև վերջ, ո՞ւխտ եք կնքում։

— Հոժա՞ր ենք, հոժա՞ր, ուխտ ենք անում,— գոչեց բազմությունը։

Թագավորը հավանության նշան արեց և պատվիրեց կաթողիկոսին գրել մերժողական պատասխան։

Երբ դուրս էին գալիս տաճարից, Վազգեն իշխանը բարձրաձայն խոսեց, որ թագավորը լսի.

— Տեսնեմ ինչպե՞ս եք պաշտպանում Ալանաց Դուռը, պարսիկների վրա գնալով։

Հարվածը զգալի էր։ Թագավորը անդամ կանգնեց և նա նայեց Վազգենին։

— Ճշմարիտ ես ասում իշխան, բայց հոներն ու ալանները ավելի մեծ բազմությամբ կլցվեն Վրաստան, եթե մենակ մնանք։

Սակայն Վազգենի խոսքը չարագույժ հնչեց իշխաններից շատերի ականջին։

Սպառնալիքը և զգուշացումը իրական էր...։

Երկու օր անց Վրաց թագավորը նամակ տվեց սեպուհ դեսպանին Վարդանին ուղղած։ Նամակում հայտնում էր, որ վրացիները պատրաստ են հայերի հետ դիմադարձ կանգնել Հազկերտին և կօգնեն հայերին ինչով որ կարող են։

Սեպուհ դեսպանը զարմացավ, երբ պալատում տեսավ Աշուշա բդեշխին ուրախ զրուցելիս թագավորի և մյուս իշխանների հետ։

— «Խելացի մարդ է»,— կրկնեց մտքում սեպուհ դեսպանը։

***

Նոր էր լուսացել, որ Գյուտի, Կոդակի և Խոսրովի աչքերի առջև պաշտի հեռաստանում ծխաց Նյուշապուհ քաղաքը։ Հողաշեն մանր ու տափակ տները մեջմեջ ու խիտ աղյուսի դարսվածքներ էին հիշեցնում։ Անապատի խիստ մերկության հաջորդում էին հոգի

պարսպի միջից երկինք ցայտող բարդիների և այլ նորականաչ ծառերի շատրվանները։ Երբ մոտեցան քաղաքադռան, ուղտերի կարմրադեղին կարավանը ընդառաջեց նրանց։ Նրանք ապրանքների հակեր էին օրորում իրենց մեջքերի ալիքներով։ Նրանք գնում էին այն վայրերը, ուր կարելի էր փոխանակել։ Կարավանը զնգաց ու անցավ։ Ճանապարհորդները մտան քաղաք։ Իսկույն կեղտոտ տների բարդ ու ծանր հոտը, խառն ծխի և փոշու հետ շոշափեց նրանց հոտոտելիքը։ Բակերի ցեխերը հունցող մանուկներ, դռան հողե նստարաններին արձանացած՝ աչքերը ցավոտ ծերուկներ, կանայք՝ մրից, կեղտից փայլող ձորձերը հագներին, մերկանդամ փոքրիկ աղջիկներ հրաշալի խոշոր աչքերով և դեռատիներ՝ կնճռոտած ու ապրած դեմքերով։ Անցան շուկան, որ բոլորակ ձգվում էր քաղաքի մեջտեղը, փոշոտ ու ցեխոտ, սատկած կատուների ու կենդանիների կմախքների հոտով։ Օդի մեջ մլլվում էր թանձր ծուխը, որ բարձրանում էր մշտավառ կրակի ատրուշաններից։ Մեհյանների սևացած գոնեներից ևս դուրս էր հոսում այդ դառն ծուխը։ Ներսից լսվում էին մոգերի արարողական, ոգեային մեղեդիները և մոլեռանդ կոչերը խռպոտած կոկորդներից։

— Որտե՞ղ է Միհրներսեհի ապարանքը,— հարցրեց Գյուտը խոսրովին։

Խոսրովը չպատասխանեց՝ ըստ երևույթին արդեն ուշքի եկած ճանապարհի ստորացումներից և իրեն զգալով կրկին բարձր և տիրակալ դիրքում։

Գյուտը դիմեց իրենց հետ հավասար գնացող մի հեծյալ սիպահի։

Սիպահը ցույց տվեց քաղաքի բարձրաբերուր մասը, մի ընդարձակ աղյուսե շենք։

— Ես քո հարսանիքը կանեմ, խոզի ճուտ, նետեց Գյուտը Խոսրովին և նժույգը ասպանդակեց, ընկավ առաջ՝ թողնելով որ իր հետևից նվաստացած քարշ գա Խոսրովը։

— Հարամանի զավակ,— քթի տակ մռմռաց դեղնած այտերը կծկելով Խոսրովը։

Եվ փորձեց հասնել, առաջ անցնել Գյուտից։ Սակայն Գյուտը թույլ չտվեց, և երբ Խոսրովը հավասարվել էր իրեն, մտրակեց նրա նժույգի մռութին։ Նժույգը մի կողմ ցատկեց, Գյուտն ընկավ

առաջ։ Մի քանի ակնթարթում արդեն ապարանքի առջև էին Կոդակի և իր թիկնապահների հետ։

Զինվորները կտրեցին նրանց ճանապարհը։

— Պատգամավոր ենք Հայաստանից,— ասաց Գյուտը։

Զինվորների մեծավորը զննեց Գյուտին և որոշեց նրա իշխանի հանգամանքը։

— Ներողամի՛տ եղիր, տե՛ր իմ,— ասաց նա,— Հազարապետը ներս չի ընդունում։ Հյուրատունը այս կողքի բնակարանն է։

— Իսկ այն պարսիկ սուրհանդակը կարո՞ղ է ընդունվել,— հարցրեց Գյուտը ցույց տալով Խոսրովին։

Մեծավորը ճմլվեց և ասաց կիսաձայն.

— Պարսիկ պաշտոնյաներին կընդունի... Հրամանն այդպես է, տեր իմ...

— Բարի՛,— ասաց Գյուտը,— առաջնորդի՛ր ինձ հյուրատուն։

Գնացին։ Հյուրատան տերը առաջ եկավ և զննելով Գյուտին՝ խոնարհ ողջունեց ու կեղծ ուրախությամբ ներս հրամցրեց.

— Տունը ձե՛րն է, հրամայեցե՛ք։

Գյուտը նայեց Միհրներսեհի ապարանքի կողմը, տեսավ ինչպես զինվորները խոնարհ ողջունեցին Խոսրովին, խլեցին ձիու ասպանդակները, մեղմով վայր բերին նրան և այնպես զգույշ թևերն ընկած տարան ապարանքի դռնից ներս՝ կարծես նրբին ճենապակի լիներ։

Գյուտը դարձավ հյուրատան տիրոջը։

— Խոզերը կարո՞ղ են մտնել ապարանքը։

— Խոզե՞րը,— զարմացավ հյուրատան տերը։— Խոզերը չեն կարող։ Միայն շները կարող են։

— Կնշանակի ներսը շներ կա՞ն,— հեգնեց կրկին Գյուտը։

— Կան։

— Ի՞նչ լեզվով են խոսում։

— Ոչ մի լեզվով։

— Ես էլ եմ կարծում ոչ մի լեզվով։

Գյուտը մտավ ներս։ Զնայած ցեխի աղյուսով կառուցվածքի արտաքին անշքության՝ հյուրատան ներսը շատ էր շքեղ, ուրախատես ու կոկ։ Կամարակապ դռան անցքից հետո բացվում էր մի այլ դուռ և ապա սանդուղի աստիճանները բարձրանում էին դեպի

պարտեզը, որի շուրջը շարված էին փոքր ու մեծ օթևաններ, պատըշգամների հետև։ Փոքրիկ դռների կամարները խճազարդված էին ճենական գույնզգույն թրծվածքներով։

Գյուտին և Կոդակին, ինչպես նաև նրանց թիկնապահներին հատկացրին առանձին օթևաններ։ Սպասավորները խմբվեցին դռանը՝ պատրաստ հրամանի։ Առհասարակ քաղաքավարությունը, ոչ անխառն շողոքորթությամբ և քծնանքով՝ մեղմացնում էր շըրջապատի մթնոլորտը։

Մտնելով օթևան՝ Գյուտը լվացվեց, հրամայեց թիկնապահին հանել նոր զգեստներ նախշուն խուրջիններից, հագնվեց և նստեց բարձին, հենվելով կրնակի բարձերին։

Խորտիկներ և գինի մատուցեցին, որին չմասնակցեց Կոդակը։ Դիրքերը ճշտվեցին այստեղ։ Կոդակը ստորադաս պաշտոնյա՝ իրավունք չուներ իշխանի հետ նստել։ Սա կարևոր էր նաև այլ նըկատառումներով։

Կոդակը չհամաձայնեց նախաճաշ ընդունել։ Նա հայտնեց, որ նախարարից հետո միայն իրավունք ունի նախաճաշել։ Նա գնաց և շոքած նստեց Գյուտի առջև, դռան մոտ։ Հյուրատան տերը և սպասավորները իրենցը վերցրին՝ տեսնելով այս ձևերը, և պատկառանքը խստացրին։ Նրանք անձայն քայլերով ելմտելով, իրենց վրա գրավեցին ուշադրությունը հյուրատան այլ հյուրերի, որ իշխաններ ու մեծամեծներ էին՝ եկած Միջագետքից, Հնդկաստանից, Հունաստանից և Կովկասի լեռնաստաններից։ Կերպարանքների ու տարազների խառնուրդը աշխուժացնում էր հյուրատան բակը։

Գյուտն ավարտեց նախաճաշը, կանչել տվեց հյուրատան տիրոջը. հարցրեց, թե ո՞վ պիտի զեկուցի Միհրներսեհին իր ժամանումը։

— Ես կկանչեմ արարողապետի պաշտոնյային։

Հյուրատան տերը դուրս ելավ։

— Լավ եղավ, որ շունը մեզանից առաջ մտավ ապարանք,— ասաց Կոդակը։

Գյուտը չխոսեց։

— Ինչո՞ւ,— սթափվելով հետո, հարցրեց Գյուտը՝ թերահավատ ձայնով։

— Առաջինը նա կգանգատվի Միհրներսեհին, սա կկատաղի, հետո կկարդա պատասխան թուղթը՝ նորից կկատաղի։

— Եվ այդ խելքով պիտի մտնես ապարանք։

— Երեսուն տարի է, մի բարկանա, մարզպանի պաշտոնյա եմ և այս խելքով ծառայել եմ նրան։

— Իսկ գիտե՞ս, թե ինչ կդառնա դդումը, եթե երեսուն տարի ծառայի մառանին։

Կոդակը սուր նայեց նրան և անվրդով պատասխանեց.

— Դդումը փտում է, տեր իմ։ Իսկ ես դդումի մասին չեմ խոսում, այլ Կոդակի խելքի մասին։ Եթե մենք,— շարունակեց նա հանգիստ ու դանդաղ՝ կարծես ինքն իր հետ էր իմաստասիրում,— եթե մենք վրա հասնենք Միհրներսեհի զայրույթի առաջին թափին, պատվավոր ընդունելությունը մեջտեղ ոտնատակ կգնար։ Իսկ այսպես՝ կհաչի, կհաչի, և մենք վրա կհասնենք անվնաս մրոմրոցի ժամին։

— Չէ, խելքդ նման է... խելքի,— ուրախ հնգնեց Գյուտը։

— Պալատական է,— աշխուժացավ Կոդակը,— իսկ ինչ վերաբերում է դդումին՝ դա բանջարանոցում է բուսնում։

Կոդակը շատ ավելի տակետակն էր և խորամանկ, քան ցույց էր տալիս։ Նա դիտմամբ դիմում էր պարզամտության՝ թաքցնելու իր խորամանկությունը։

Եկավ պաշտոնյան։ Նա շքեղ հագնված էր։ Ծանրակշիռ ողջունեց Գյուտին և գեղեցիկ, երիտասարդ դեմքին պատշաճ լրջություն տալով, կիսաժպիտ ասաց.

— Հազարապետը չի կարող ընդունել այսօր։ Տեղապահը հրամայեց հայտնել ձեզ, որ սպասեք հրավերի։

— Իսկ ինչո՞ւ այդպես,— առանց վրդովմունքը թաքցնելու հարցրեց Գյուտը։

Պաշտոնյան խիստ ու զուսպ պատասխանեց.

— Ավելին ավելորդ է. ձեզ հայտնեցի բոլորը։

Եվ նա շրջվեց ու արագ հեռացավ։

Արյունը տվեց Գյուտի գլուխը։ Նա զայրացավ։ Եվ զայրույթն ավելի եղավ, որովհետև պաշտոնյան խոսեց հյուրատան տիրոջ ներկայության։ Վերջինս հեռացավ, և Գյուտն սկսեց շարաչած անցուդարձ անել։

— Մի՛ վրդովվի,— ասաց Կոդակը,— երիկամդ կդառնանա։ Ես վրեժը կհանեմ։ Ինչքան չլինի՝ հայ եմ և սյունեցի։

Գյուտը ձայն չհանեց։ Նվաստացումն այնքան ազդեց նրան, որ ձեռները դողում էին։ Շուտ-շուտ մոտենում էր դռան՝ կամենալով դուրս գալ, մի բան անել։ Բայց ո՞ւր գնալ... Շուրջը Պարսկաստանն էր՝ հազարավոր փարսախներ հեռու նրա հայրենի երկրից։ Եվ ո՞ւմ պատմի իր նվաստացումը, ումի՞ց լսի հնարը վրեժխնդրության, ո՞վ է իր պատշպանը՝ եթե հանկարծ իրեն բանտարկեն։ Նա այժմ պարզապես զգում էր, որ իր առաքելությունը ջուրն է ընկնում։ Նա հիշեց, որ բանակում հայ իշխաններ և հայ զորք կա։

Բայց ո՞ւր են նրանք, որքա՞ն մոտ և որքան հեռու։ Եվ ի՞նչ կարող են անել նրանք։

Կոդակն էր միայն անվրդով։ Նա գլուխը թափ տվեց և մի եղանակով, որ նոր էր և ազդու՝ ասաց.

— Լսիր ինձ, տեր իմ, թողնենք ճանապարհի կատակները։ Ոչ դու ես անմիտ և ոչ ես՝ անփորձ։ Եկ մտածենք ինչ անենք։ Արքայից հույս չկա, պարզ է։ Նա անխելք է և կատաղի։ Միհրներսեհը խելացի մարդ է. նրա բարկության մեջ խելք կլինի։ Եկ բռնենք նրա պատմուճանը և ճանապարհը բանանք։ Խելացի թշնամին կես բարեկամ է։

Գյուտը այս անգամ ականջ կախեց ծերուկի խոսքերին։ Մանավանդ որ՝ ուրիշ ոչինչ էլ չէր մնում անել։

— Հը՛մ... կես բարեկա՛մ,— ձգեց Գյուտը մտախոհ։

— Ախր խելացի թշնամին, որ թշնամացել է՝ խելացի գործի մեջ է թշնամացել։ Ապա՞ առաջարկիր խելացի հաշտություն՝ տես չի՞ ընդունի։ Հազկերտը խելագար վագր է, որ առաջը երեք ոչխար էլ գցես, միևնույն է, քեզ պիտի հոշոտի։ Միհրներսեհը մեր կրոնափոխն է ուզում, ոչ թե մեր պատիժը։

Գյուտը ժպտաց դառն ու հեգնորեն։

— Լավ, բավական է,— ասաց նա դժկամ։

Կոդակը նայեց նրան։ Հանգիստ էր այդ հայացքը՝ բայց նրա մեջ խաղացին երկու հազիվ նշմարելի կայծեր։ Նա գնաց պարտեզ քթի տակ մռմռալով իր դիտեցած միակ եկեղեցական եղանակը։

Նրա տրամադրությունը վատ չէր։

***

Խոսրովին ընդունեցին պահականոցի առաջ, նժույգները թիկնապահի հետ ուղարկեցին ապարանքից դուրս, նրա հետևի ախոռները, իսկ իրեն տարան մի քանի բակով ներս և մի բակում կանգ առան։ Այդտեղ նա սպասեց շատ երկար, մինչև եկավ պաշտոնյան և հայտնեց, որ Միհրներսեհը հրամայեց ներկայանալ։ Խոսրովը գնաց։ Նա ծանոթ էր ապարանքին։ Հասնելով վերջին մեծ բակին, որ պարտեզ էր միաժամանակ, նրան սպասավորը առաջնորդեց խորքում բարձրացող մի առանձնյակ, որ խոնաստանն էր՝ պալատը և որի պատերը ամբողջովին պատած էր գույնզգույն քարերի հագվածքով։ Խոսրովը սենեկապետի առաջնորդությամբ մտավ ներս և երբ նրա առջև սպասավորը քաշեց մետաքսե վարագույրը՝ հանդիսավոր բացվեց կիսաստվեր մի սրահ։ Ուղիղ դիմացը, պատի քանդակեն վառարանի առաջ բարձին նստել էր մի չորակազմ ծերուկ։ Նա թևերով հենվել էր թավիշ ու մետաքս բարձերին և թըվում էր քնած։ Նրա կավիճե դեմքի անշարժ, փոքրիկ աչքերը հառել էին մի կետի և չէին մատնում ծերուկի ոչ միտքը և ոչ կիրքը, որոնք թաքնված էին շատ խորքում։ Նրա առջև թափթփած էին մագաղաթե ոլործուն փաթեթներ, մելան և եղեգն։

Խոսրովը չոքեց դռան առջև։ Ծերուկը քթով նշան արեց, որ նա մոտ գնա։ Խոսրովի հետևը կանգնած սենեկապետը շշնջաց նրան, որ մոտենա։ Խոսրովը առաջացավ և կրկին չոքեց։

Ծերուկն իր մեռելի կավճային դեմքը չշարժելով նայեց նրան խորն ու մնայուն հայացքով և շրթունքներով նշան արեց Խոսրովին, որ խոսի։

— Ամենաողորմած Հազարապետ տե՛ր իմ. բերել եմ հայոց մեծամեծների պատասխան թուղթը քո հրովարտակին։

Ծերուկը նշան արեց, որ ներկայացնի թուղթը։

Խոսրովը հանեց ծոցից թուղթը և չոքեչոք մատուցեց։ Ընթերցման ընթացքում նա սպասում էր, որ Միհրներսեհը պոռթկա։ Սակայն սա անքթիթ, մումիայի նման անշարժ ընթերցում էր։ Նա կարդաց մինչև վերջ և ապա թուղթը դրեց ծնկան։

— Ուրի՞շ ավելի,— հարցրեց Միհրներսեհը։

— Թուղթը գրեցին հայոց մեծամեծները, հոգևորները մարզպանի գլխավորությամբ։ Գրգռիչ ու դրդիչ եղավ Սպարապետը։

Նախարարները հավանություն տվին նրան, և ժողովուրդը ըմբոստացավ, հանդուգն արարքներով անպատվեց մեզ։ Սպանեցին մեր զինվորներին։ Ուզում են մեր զորքը արտաքսել երկրից։

Միհրներսեհը շարունակեց անվրդով լսել։ Նա սպասեց կրկին, մտածեց և ապա հարցրեց.

— Մարզպանը հայտնի՞ մասնակցեց, թե՞ գաղտնի...

— Հայտնի, տեր իմ, բացեիբաց։

— Թե՞ արտաքուստ ցույց տվեց հնազանդություն և ծածուկ դրդեց, որ գրեն այս թուղթը։

— Արտաքուստ ցույց տվեց անհնազանդություն և դրդեց ամենքի աչքի առաջ։

— Դենշապուհը, Վեհմիհրը, մոգպետը ի՞նչ գործ կատարեցին։

— Շատ ճիգ գործ դրին, արգելք եղան թղթին, բայց հայերը չանսացին։

— Շտապեցրի՞ն, ճնշեցի՞ն մարզպանին։

Հարցապնդումը վտանգավոր դառավ։ Խոսրովը չզգաց այդ և պատասխանեց։

— Այո տեր իմ, շատ բռնադատեցին, բայց ոչինչ օգուտ չեղավ։

Միհրներսեհը հարցական հայացքով հազիվ վեր նայեց սենեկապետին։

— Ժա՞մ է ատյանի, տեր իմ,— հարցրեց սենեկապետը,— մովպետան մովպետն ու մոգերը, ինչպես և մեծամեծները հավաքված են։

— Հրավիրի՛ր։

Սենեկապետը գնաց։

Միհրներսեհը նայեց թղթին, ապա Խոսրովին, զննեց նրան ավելի ուշով, քան առաջին պահին և ապա շատ հանգիստ հարցրրեց։

— Իսկ դո՞ւ ինչ արիր։

— Ես բուռն մասնակցություն ունեցա Դենշապուհի և մյուսների հետ։

Միհրներսեհը դադարեց և սկսեց կրկին անշարժ նայել այն կետին, ուր ըստ երևույթին նայել էր երևի ժամերով։ Նա շատ համբերատար և անհույզ մնաց թե՛ ընթերցման և թե՛ հարցաքննության

ժամանակ։ Թվում է, թե համակերպեց և վճռեց դադարեցնել հետապնդությունը։

Վարագույրը բացվեց, և ներս եկավ մովպետան մովպետը, թանձրամորուս խոշորաղեմ, աչքերը սև ու երկար հոնքերի տակին կորած, երկարաքիթ մի ծերուկ, որի մորթին և կերպարանքը տոգորված էին մրով՝ չնայած մաքուր լվացման։ Նրա անճոռնի ու կոշտ մեծամարմին հասակը անկյունավոր ձևերով ցցված էր երկար պատմուճանի տակից։

Նրան հետևում էր երկարահեր մոգերի մի բազմություն։ Երբ նրանք առաջացան, հետևից երևացին մեծամեծների գլուխները։

Ատենավոր մեծ բազմությունը շարժվեց վարագույրի մոտ և խոնարհ ողջունեց Միհրներսեհին։ Միհրներսեհի նշանի վրա եկողները առաջացան և կիսաբոլոր շարվեցին ընդարձակ սրահի պատերի տակ։ Միհրներսեհը նշանով հրավիրեց մովպետան մովպետին, որ սա նստի։ Մովպետն առաջացավ և նստեց։

Միհրներսեհը բարձրացրեց դեմքը և աչքերը պատուհանին, հայտարարեց։

— Հայոց պատասխանը մեր հրովարտակին։ Ատյանում՝ առաջին անգամ իրավունք է կարդալ միմիայն արքայի առաջ։ Լսե՛նք արքայի հրամանը։ Բայց ձեզ այսքանը միայն ասել համարում եմ անհրաժեշտ։ Պատասխանը գրված է ճարտար լեզվով և մարտնչող ոճով։ Չեմ կարող չնկատել, որ ոմանք ձեզանից թերևս և հիանան դրանով։ Քաջ է իմաստասիրած... Բայց բանի զորությունը ճարտարաբանությունը չէ և ոչ անիմաց հանդգնությունը։ Մենք տերություն ենք ընդարձակում այս իսկ պահիս և առաջիկայում մեծ պատերազմներ ունենք՝ մեզ պետք է թիվ։ Սրա մասին հոգածու խորհեցեք։— Լսե՛նք արքայի հրամանը,— ավարտեց և հանգիստ ձեռով արեց։

Դա նշան էր, որ ատյանն ավարտվեց։

Բոլորը դուրս եկան սրահից։

***

Գյուտին ու Կոդակին չընդունեց Միհրներսեհը։ Մտորացումը խիստ վրդովից Գյուտին։ Նա չկամեցավ գնալ բանակ, ուր Ներսեհ պիտի հանդիպեին հայոց այրուձին և հայ իշխանները։

Կոդակն էր միայն անվրդով։ Նա բավական էր համարում իրերի այդպիսի ընթացքը։ Նա շատ էր ընկել-ելել, գիտեր, որ նման բաներն անխուսափելի են մեծ գործերում։

— Կապատահի՜, տե՜ր իմ,— ասաց նա,— ալիքը կիջնի՜, կբարձրանա՜, կյանքը փոթորի՜կ է։

Գյուտը վարժվել էր արդեն Կոդակի իմաստասիրություններին։ Պարսկաստանի միայնության մեջ դա զբաղեցնում էր։ Երբեմն էլ ուսուցանում... Խրատական շատ բան տեսավ Գյուտը Պարսկաստանում։

— Ի՞նչ մեղքս ծածկեմ, տեր իմ,— շարունակեց Կոդակը,— շողոքորթներին և ստրուկներին չեն սիրում։ Սիրում են համարձակ խոսողներին և ազատներին։ Մենք այն է՛լ ենք անում, այս է՛լ։ Բայց լավ չենք անում ոչ մեկը, ոչ մյուսը։ Լա՛վ ընկնենք, տեր իմ, եթե ընկնելով ենք ուզում բարձրանալ։ Կընկնեմ, ոտները կքիշեմ, կբարձրանամ՝ գլուխները կկտրեմ։

— Որ ընկար՝ ընկար,— խոսեց Գյուտը տխուր շեշտով։

— Ամեն ընկնել ընկնել չէ, տեր իմ, ընկնելն այն է, որ չես ուզում բարձրանալ։ Դու գիտես թե գիշերները քնո՞ւմ եմ, երբ մթամ է գալիս Խոսրովի ծեծը։ Գարշապա՜րս պիտի լիզել տամ։ Ես սյունեցի ախոռապանի զավակ եմ։

— Դրա համար էլ ընդունեցին Միհրներսեհի մոտ...

— Ոչի՜նչ, սիրտդ մաքուր լինի։ Գլխապորը՝ գոռոզությունդ մի կորցնի։ Ազգի հետ գործ ունես։ Գոռոզ եղիր։ Պալատն ի՞նչ է, կամ ի՞նքն ինչ է, կամ Հազկերտն ի՞նչ, կատաղած արջ։

— Հը՞մ, «կատաղա՜ծ արջ»,— մտախոհ կրկնեց Գյուտը,— բայց աշխարհ է սասանեցնում։

Սկսվեցին տաղտուկ օրեր։ Գյուտը քնում էր օրերով՝ սպասելով նախարարների ժամանման։ Անխոնջ Կոդակն էր միայն հոտոտում ամեն կողմ, ծանոթանում պարսից պաշտոնյաների հետ, ամենքի հետ մտերմանում։ Պետք կգա, աշխարհ է։ Շուտով կժամանի մարզպանը, պետք է նրան փրկել։ Եվ նա աշխատում էր բարեկամացած պարսիկ մեծամեծների միջոցով խմանալ, թե ինչ տրամադրություններ կան պալատում։ Իմացավ, թե ո՛ր պալատականը ո՛րի հետ է գժտված կամ բաթեկամ։ Ամենքին պատմում էր Վասակի մասին, հայտնում նրա ուրացությունը, տրամադրու-

թյուն ստեղծում նրա հանդեպ։ Պալատականների ականջը հասավ ուրացյալների ուխտի լուրը։

— Մարդը ուրացել է, ծառայում է մեր գործին, այլևս ի՞նչ հալածանք նրա դեմ,— ասում էին պալատականները և փորձում խոսել այս մասին Միհրներսեհի մոտ։

Վերջինս հաճախ լսելով այդ մասին՝ կամաց-կամաց մտածեց, որ եթե Հազկերտի ճնշումը չօգնի՝ գործը տեսնի Վասակի միջոցով։

— Երկպառակել,— ասաց մի օր խոհուն հայացքը մի կետի հառած Միհրներսեհը իր մտերիմ պալատականին։

— Ես էլ այդ եմ ասում,— ասաց պալատականը ձայնը ցածրացնելով դավադրորեն՝ կարծես մարդ կարող էր լսել և խանգարել։

Հետո ավելացրեց.

— Դու այս ծերուկին մի արհամարհիր։ Նա բաներ շատ գիտե և շատ բաներ է պարզվում նրա պատմածներից։

— Ի՞նչ բաներ։

— Այն որ՝ Դենշապուհը ճնշում է Վեհմիհրին և Որմիզդին։ Փորում է և մարդպանի տակը։ Գործը խանգարում է։ Պետք է ետ կանչել նրան։

Միհրներսեհը պատասխանեց հանգիստ.

— Ոչ, ետ չպետք է կանչել, այլ պետք է թողնել, որ մրցեն իրար հետ մեր գործում։ Պետք է բոլորին էլ լսել և այո՛ ասել։ Թող հսկեն իրար և հետախուզեն։ Տեղեկություններ մեզ են հասնելու նրանց միջոցով։ Վասակը մեր ձեռքն է։

Կոդակը առաջ գնաց։ Ընդունվում էր պալատականների տանը և մտերմանում նրանց հետ։ Անգամ ընդունելություն հաջողացրեց Միհրներսեհի մոտ։ Հազարապետը քննեց նրան, խոսեցրեց։ Նրան դուր եկան Կոդակի խոնարհ վարվեցողությունը և մտքերը։

Մի անգամ Միհրներսեհը կանչեց նրան և հարցրեց Վասակի մասին։

— Ի՞նչ մարդ է,— հարցրեց Կոդակին։

— Փառասեր մարդ է, տեր իմ, մարզպանական իշխանությունը ձեռին պահելու համար ամեն ինչ կծախի։ Վարդանը դրա համար չի սիրում նրան։

— Այդ լավ չէ, որ փառասեր է,— խորամանկության տվեց Միհրներսեհը։

— Կրքոտ է և քինախնդիր,— ավելացրեց Կոդակը նույնպես խորամանկ հաշիվներով։— Արյունահեղություն, կոտորած, ցավ, թույն, ամեն բան կգործադրի իր նպատակին հասնելու։

— Ի՞նչ է իր նպատակը։

— Թագավոր դառնալ հայոց,— խիզախեց Կոդակը և քննող հայացքով հետևեց ազդեցության։

Միհրներսեհը մտածեց այս ասածի վրա։

— Ո՞ւմ միջոցով է ուզում թագավոր դառնալ,— հարցրեց նա։

— Քո միջոցով, տեր իմ, և հիմա ամեն գնով ուզում է ուրացության գործը գլուխ բերել։ Թագավոր չի դառնա, բայց գործը հո կատարած կլինի։ Սաստիկ անհանգիստ է, թե մարզպանի պաշտոնը կանցնի Վարազվաղանին։

— Խոսե՞լ է այս մասին։

— Ինձ հրահանգեց վարկաբեկել Վարազվաղանին, որ ապահով լինի իր պաշտոնի մեջ։ Ծախու հոգի է։

— Ի՞նչ կարող է ծախել։

— Հայաստանը, միայն թե մնա մարզպան։

Միհրներսեհին դուր եկան այս մտքերը։ Վասակի մասին նա ուներ այդ կարծիքը և հիմա ուրախ էր, որ դա հաստատվում է կողմնակի։ Դա նոր միտք էր տալիս նրան. հենվել Վասակի վրա և գլուխ բերել երկպառակությունը հայ նախարարների մեջ։ Նա մեծ հույսեր չուներ նրանց բռնի ուրացման։ Նրանց պատասխան թուղթը պարզ ցույց էր տալիս, որ իրենք գործ ունեն միաբան, մահը աչքերն առած մարդկանց հետ։

«Այդ մարդկանց իսկապես ո՛չ սուրը կհաղթի, ո՛չ հուրը»,— մտածեց Միհրներսեհը։

— Լավ, կմնաս այստեղ, քեզ կկանչեմ, երբ հարկավոր լինեսս Գնա,— ասաց նա Կոդակին։

— Մնա՛ս խաղաղությամբ,— ողջունելով մինչև երկրպագություն՝ ասաց Կոդակը և վեր կացավ, գլխիկոր հեռացավ։

Դուրս գալով Միհրներսեհի ապարանքից՝ Կոդակը մտածեց, որ ինքը կարող մարդ է դառնում։ Նա զգաց, որ Վասակի մասին

հայտնած իր կարծիքները դուր եկան Միհրներսեհին։ Որ Միհրներսեհը հիմա կհենվի Վասակի վրա։ Որ ինքը ապահովեց Վասակի դիրքը արքունիքում։

Իրիկնադեմ էր։ Հյուրատան դռանը կանգնեց մի երիտասարդ հեծյալ։ Նրա գեղեցիկ աչքերի մեջ ինչ-որ մի ժպիտ էր ցոլում, դեմքն արտահայտում էր անհամբերություն և կարոտ։ Նա իշխանական հագուստ ուներ և թեթև ասպազենք։ Թեթև էր զինված նաև նրա թիկնապահը։ Երկուսի էլ կերպարանքը, նժույգները մատնում էին նրանց օտարական լինելը։ Նժույգները արագոտն էին և թեթև։ Նրանք արագ իջան։

Թիկնապահը նժույգները կապեց ծառին և հարցրեց նորեկին.

— Հրամա՞ն է, հայտնեմ։

— Ասա Ընծայնոց Արսեն իշխանը, պարսից բանակում ծառայող հայկական այրուձիի։

Թիկնապահը մոտեցավ դռանը և Գյուտի թիկնապահին հայտնեց։ Սա ներս գնաց և վերադարձավ հրավիրելով ներս իշխանին։

— Ողջո՛ւյն,— ասաց նորեկը կանգնելով օթևանի դռանը։

— Բարեողջույն,— պատասխանեց Գյուտը,— նե՛րս հրամայիր, իշխան։

Եվ ընդառաջ գնալով ողջագուրվեց նորեկի հետ։ Կոգակը բարև բռնած սպասեց ողջույնի, որ չուշացավ նորեկի կողմից։

— Ի՞նչ նվաստացում, իշխա՛ն,— վրդովված խոսեց նորեկը,— մենք բանակում իմացանք, որ Միհրներսեհը չի ընդունել քեզ։ Մահվիռոտ գետի մեր սխրագործությունների վա՞րձն էր դա։ Ինչքան շատ ես ծառայություն մատուցում, այնքան շատ են ստորացնում քեզ։

— Հիմա ի՞նչ կա զորագնդում,— հարցրեց Գյուտը։

— Ուխտ արինք զորագնդի հետ միասին կռվել։

Գյուտը խոցվեց։ Արսենը կարծես նրան էր ակնարկում. մինչ նա միամիտ և ազնվաբեն բաժանում էր նրա հետ իր վիրավորված ինքնասիրության զայրույթը։

— Եթե պարսիկներն ատում են ինձ, որովհետև հայ եմ, հայ կմնամ, որովհետև ատում են ինձ,— արժանապատվությամբ ասաց նա։

Գյուտը խառնակ մտքերի մեջ էր։ Նրա ինքնասիրության վիրավորանքն այրում էր նրան։ Բայց նա ելք չէր գտնում։ Նա մի

ճանապարհի վրա էր, որ տանում էր դեպի ստորացում և պատվի կեղտոտում։ Նա եկել էր Վասակի գործի համար։ Նա մեծ հարգանք ու համարում ուներ Վասակի հանդեպ և հույս ուներ, որ նա կըստեղծի տանելի վիճակ իշխանների համար։

— Արդեն ստորացրին մեզ, ուշ է, իշխան,— ասաց նա Արսենին,— հիմա էլ կոչի հրաման են ուղարկում իշխաններին գալ Դուռը ատյանի։ Պատիվներս ընկավ։

— Մաքուր պատիվը չի կեղտոտվի՝ որպիսի ցեխն էլ որ ընկընի։ Ստորացումով պատիվդ մաքուր չես պահի։ Դիմադիր կանգնենք, իշխան, հանենք վրեժը պարսիկներից։ Բավ է, ինչ մաշվեցինք սրանց պատերազմներում։ Հիմա էլ մաշվենք մեր պատերազմում։

Արսենը աղնիվ բարկությամբ նայեց Գյուտին և հայտնեց.

— Վճռեցինք սուրհանդակ ուղարկել մերոնց, որ բարձրացնեն ապստամբությունը։

— Կտուժենք,— ասաց Գյուտը։

— Ջենք տուժի։ Ես թույլ քրիստոնյա եմ, հայրս խառնում է հաճախ կրակն ու սուրբ խաչը. բայց երբ կամքիս վրա են բռնանում, այն կպաշտպանեմ կենաց-մահու կռվով։ Սա հավատի բան չէ, ազատ կամքի բան է։ Գնանք բանակ, իշխան, այստեղ քեզ կնվաստացնեն։

Գյուտը շրթունքները ծռմռեց։

— Ամեն տեղ կնվաստացնեն... Պոռոտախոսությամբ պատիվ չենք պահի, խելքն էլ է պետք. պետք է ճանապարհ հարթել դիրքի և իշխանության հասնելու։

Արսենը լավ չհասկացավ Գյուտի ակնարկը, բայց ինչ-որ ստոր հոսանք անցավ նրա միջով։ Մի բութ պատ էր զգացվում իր և նրա միջև։ Նա էր ենթարկվել ստորացման, բայց կարծես կուլ էր տալիս անպատվությունը։

Նա խոսքը փոխեց.

— Շա՞տ ընդդիմացավ մարզպանը ուրացության պահանջին։

Գյուտը ծամծմեց։

— Մարզպանը չանաց կանխել արհավիրքը։

— Բայց կատարե՞ց իր պարտքը հանդեպ հայրենիքի։

— Ինչպես ամեն հայ։

— Դա լավ է, դա վայել է մարզպանին,— ոգևորվեց Արսենը

նը,— հայրենիքի վտանգը միացրել է ուրեմն մարդպանին և Ապարապետին։

Գյուտը չպատասխանեց։

— Կպատահեն դավաճաններ և ուրացողներ... Մերուժանին չենք մոռացել... բայց հրաշեկ երկաթով կդաղենք այդպիսիներին։

Սա արդեն գրգռում էր Գյուտին։ Նա մոայլվեց և լռեց։

Արսենը վեր կացավ. զգաց ինչ-որ անախորժ, ներքին դիմադրություն։ Չհասկացավ սակայն և հրաժեշտ տվեց Գյուտին։

— Ե՛կ, իշխան, ե՛կ, երբ սրտնեղես,— ասաց նա գնալիս։

— Կգամ,— ասաց Գյուտը անտարբեր ձայնով։

Իշխանը հեռացավ։

***

Արսենը չէր եկել միայն Գյուտին այցելելու։ Նա դուրս գալով նրա մոտից՝ նժույգը քշեց Նյուշապուհի փողոցներով դեպի նրա հյուսիսային թաղամասը, անցավ այգիների պատերի միջով և բավական հեռանալով քաղաքից՝ կանգ առավ մի շքեղ տան առաջ։

Իսկույն դեմ վազեցին սպասավորներ, որ, ինչպես երևում էր, ծանոթ էին նրան և ժպտադեմ բռնեցին նժույգի սանձն ու ասպանդակը, օգնելով իշխանին իջնել։

— Տա՞նն է իշխանը։

— Տանն է, տեր իմ,— ասաց սպասավորներից մեկը ուրախ ձայնով։

Արսենը ըստ երևույթին այս տան սպասված հյուրերից էր։

Նա իջավ և սպասավորի առաջնորդությամբ անցավ երկար միջանցքները մինչև հասավ բակը և գնաց դիմացի ապարանքը։

Նրան դիմավորեց տան տերը՝ ածուխի աչքունքով, գեղածիծաղ մի պարսիկ իշխան, որի հայացքից երևում էր, որ խիստ ուրախ է Արսենի այցելությունից։

— Ա՜յ բարի տեսանք, իշխան,— ասաց նա ընդառաջ գալով և ողջագուրվելով Արսենի հետ, ձեռքից բռնած տարավ պարտեզը։— Գարունը դուրս է եկել կոկոններից ու հողից,— ասաց նա,— վարդը ճանապարհին է, սոխակը՝ հետևից։

— Նոր տաղե՞ր ունես հյուսած,— հարցրեց Արսենը չարաճճի նայելով։

— Ես չեմ հյուսողը, գարունն է հյուսում,— ասաց պարսիկ իշխանը,— շուտով կնստենք կանաչին, մեզ կտանք գինու տաղերին։ Ի՞նչ նոր բան, իշխան։

Արսենը պատմեց։ Պարսիկ իշխանը զարմացավ և տխրեց։

— Է՛, Վախթանգ իշխանը գործ չունի դրանց հետ։ Արյան հոտ է գալիս դրանից։

— Արյան հոտ է գալիս,— կրկնեց Արսենը։

Բարձեր բերին և դրին քանդակեն տաղավարի տակ, բերին աղանդեր և գինի։ Նստեցին խոնչայի շուրջը և սկսեցին մի բանաստեղծական զրույց արեգակի, լուսնի, երկնքի, երկրի, ջրի և կրակի մասին։

Եկավ նվագածուն և սկսեց մեղմ ու քաղցր մի մեղեդի։

Արսենը լսում էր Վախթանգի ներշնչված զրույցը։ Բայց նրա աչքերը ուղղված էին պարտեզի շուրջը կառուցված փոքրիկ տնակների կողմը։ Մի գաղտնիք այնտեղից խլում էր նրա ուշադրությունը, բայց տնակների մոտ ոչ ոք չէր երևում։

Վախթանգը ոգևորվեց։ Նա սկսեց ոգել՝

«Գեղեցիկ, շքեղաշուք, անձնյա,
Հասակագեղ, վեհապայծառ է նա,
Գալիս է գարնան նուրբ թևին,
Բուրում է սեր մանկամարդ ոգին։
Քաջամարտիկ և դեմքով կանգուն,
Ոսկեհուռ վարսակալ է գլխին,
Աչքերին ժպիտն է աստղածոր,
Ոսկեհուռ, ոսկեմատ, ոսկեծին»։

Մինչ նրանք զվարճանում էին գինու և գեղեցկության տաղերով՝ պարտեզի խորքից հնչուն մի ծիծաղ զանգակի պես դողաց գարնանային պայծառ օդի մեջ։ Երկու մանկամարդ աղջիկներ էին, որ գալիս էին դեպի ապարանքը։ Նրանք չէին նկատել Վախթանգին և Արսենին։ Նրանք ընկել էին մի ոսկեդեղին թիթեռի հետևից, որ խույս տալով թռչում էր և իր հետևից գցում աղջիկներին։ Նրանք իրար ձեռից խլելով վրա էին ընկնում թիթեռին, ափերով ծածկում խոտը և հանկարծ, երբ թիթեռը ճողոպրելով թռչում էր։

ճչում էին և վազում դեպի տաղավարը։ Բոլորովին մոտ էին, որ հանկարծ տեսան տաղավարում նստածներին։ Նրանցից մեկը շանթահար կանգնեց Արսենի հանդիման։ Փղոսկրյա ճակատին միագիծ, երկաղեղ մի հոնք կամարում էր նշաձև աչքերը։ Երկար թերթերունքների միջով նա խորը նայեց Արսենին։ Սև գանգուրները ուռած օձերի պես փաթաթվել էին նրա քունքերին, ականջներին, վզին։ Դա մի վայրկյան էր, որից հետո նրա ճոճկան իրանը շրջվեց, և նա փախավ դեպի դիմացի օթևանը։ Նրան հետևեց մյուսը, որ նրանից տարբերվում էր միայն ավելի փոքր մարմնով։

— Ծաղկո՞ւմ է խորիշան, գարո՞ւն է խորիշան,— հառաչեց Վախթանգը,— ո՞վ է նրա հառաչանքի տերը...

Արսենը վերցրեց գինին և լուռ խմեց, աչքերը գցելով գետնին։ Նա զգում էր, որ օթևանի փոքրիկ պատուհանից իրեն էին նայում երկու գլուխներ և անհետանում։ Վախթանգը տարված գինով ու տաղերով՝ հառաչում էր, ոգում և թմբիրի մեջ ընկնում։ Իբրև պարսիկ խմող՝ նա զուսպ էր շարժումներով և խոհուն՝ տրամադրությամբ։ Նա հրամայեց, որ խոնչան տանեն դնեն առվի ափին, մատղաշ սեզի վրա, որ արևերես էր ելել։ Արդեն ծաղկել էին նշենին, սալորենին, դեղձենին, որոնց տրանքից երևում էր սպիտակ ամպաշարքի նման ձյունապատ լեռնաշղթան։ Շուտով Վախթանգը նստած տեղը քնեց. խկուլն բարձեր ու վերմակ բերին փաթաթեցին և թույլ տվին վայելել քունը գարնան մատաղ օդի մեջ։ Նվագածուն մեղմ հնչյուններով օրորում էր նրա քունը։ Այդ պահին տեղից վեր կացավ Արսենը և գնաց պարտեզի խորքը։ Իջնելով գետափը՝ նա նստեց քարին և ականջը տվեց գետի վշշոցին։

Նրան երազական վիճակից հանեց հետևում կանգնած մի ոչ շատ դեռատի աղջիկ, սևազգեստ, խալը այտին։ Նա չորս կողմ էր նայում զգույշ։

— Իշխա՛ն, իշխա՛ն...

— Հա՛, Դիշտրիա, դո՞ւ ես...

— Իշխա՛ն, չգնաս, մնա՛ այս գիշեր։

— Ինչո՞ւ։

— Նա խնդրեց...

Արսենը երազական լռության մեջ աչքերը փակեց։

— Որտե՞ղ պիտի տեսնեմ նրան...

— Ներքևի՛կ օթևանում։ Դիշերը անց, լուսաստղը սարից որ գլուխը կհանի՝ դուրս եկ օթևանից։ Պահակներին կխմացնեմ։

— Լավ... Դիշտրիա՜...։

— Հրամայիր, իշխան...։

— Դիշտրիա՜... ի՜նչ գեղեցկացել է նա...։

— Ե՞րբ չէր գեղեցիկ... Սիրո տերը գեղեցկանում է։

— Նա գեղեցի՜կ է, Դիշտրիա՜, կրակի՜ պես գեղեցիկ։

— Ես գնամ, իշխան, կտեսնեն ինձ,— շուրջը նայելով ասաց Դիշտրիան։

— Գնա՛, Դիշտրիա, և այս տար նրան, թող դնի սրտին,— ասաց Արսենը և մի մանիշակ քաղեց տվեց Դիշտրիային։

— Վա՛յ... խե՜լքը կգնա,— ասաց Դիշտրիան և խլելով մանիշակը՝ անհետացավ թփերի հետև։

Արսենը, որ միշտ այստեղ էր ժամադրվում, վեր կացավ տեղից ու գնաց Վախթանգի մոտ։ Նա նստեց և սկսեց լսել նվագածուին։ Եկավ Դիշտրիան և բերեց մի փոքրիկ մագաղաթե մատենիկ, ոսկետառ ու նկարեն։ Բանաստեղծություններ էին։ Վերցրեց և լսելիքը նվագածուի մեղեդիին՝ սկսեց կարդալ։ Տողերն այրում էին նրան, բայց ավելի այրում էր նրան լուսաստղը, որ պիտի դուրս լողար երկնքում գիշերային նվիրական լռության մեջ...։ Երևակայության մեջ շողշողում էր նա, դողում և գալիս դեպի ինքը, բերելով իր կրակաշող համբույրը...

Արսենը թախծալի քաղցրությամբ հառաչեց աղատվելու համար զգացմունքի հավելվածից։

Հանգիստ շնչում էր Վախթանգը, իր բարի և ուրախ դեմքը երկինք դարձրած, նվագածուն անլուռ առվակի նման ձիգ էր տալիս նվագը, թռչունները ճլվլում էին ծառեծառ ոստոստելով, իսկ երբեմն ականջի տակով բզզալով անցնում էր մեղուն և երկար որոնումներով պատվում կանաչների մեջ։ Իսկ վերևը կապույտ վրանի պես իջնում էր փիրուզ երկինքը՝ անհունացնելով կյանքը, սերը, գեղեցկությունը։

— «Պատերա՛զմ»,— հանկարծ սև ամպի նման եկավ խուժեց Արսենի հոգուն և կայծակեց։ Նրա միտքը գնաց դեպի հեռավոր հայրենիքը, դեպի ուր տանում է արհավիրքի ամպը և պիտի պայթի նրա գլխին։

Նա աչքերը փակեց։

Կթողնի՞ Խորիշային այստեղ, կգնա՞ հայրենիք... Թե՞ կառնի իր նժույգի գավակին և կփախցնի նրան այն հայրենիքը, որի զավակին սիրել է Խորիշան։ Ոչ, Խորիշային ինչպե՞ս կթողնի։ Կռիվը կռիվ է, սերը՝ սեր...

Ճաշից առաջ Վախթանգը զարթնեց։ Նա քնաթաթախ աչքերով նայեց Արսենին և ժպտաց կենսուրախ ու սրտաբաց։

— Քունը խմեց ինձ, ասաց նա ճմլկոտելով։— Գնանք լեռան կողմը ձիավարելու։

— Գնանք,— ասաց Արսենը։

Նժույգները բերին ախոռից։ Իշխանները նստեցին նախշունիկ թամբերին և նժույգները քշեցին հյուսիս, դեպի մանիշակագույն լեռը։ Նրանք բարձրանում էին թփուտներով մթնած մի զառիվերով։ Քանի առաջանում էին, այնքան ճանապարհը դժվարանում էր։ Պատռվածքներից ներքև էին հոսում պղտոր գարնանային ջրեր, գոչգոչելով, ավետելով նոր կյանք։ Հետևում ծխում էր Նյուշապուհը՝ իջնելով դեպի ավազուտ ու աղուտ անապատը։ Հազկերտի ահավոր բանակի խայտաճամուկ վրանները հիշեցնում էին գունագեղ աշնանային անտառ։

Հանկարծ թփուտներից դուրս պրծավ մի այծյամ։

— Քշի՛ր,— գոչեց Վախթանգն ու նետի պես պոկվեց։ Արսենը թռավ հետևից։ Նրանք զենք չունեին և ոչ էլ բարակ։ Միտք չուներ քշելը։ Բայց բնազդական այս արշավը հաճույք պատճառեց նրանց։ Նրանք բարձրացան բավական և այծյամին կորցրին։ Իջան քրտնամխած նժույգներից, որ հևում էին։ Նստեցին թփերի տակ, նժույգների սանձերը ձեռներին։

— Գիտե՞ս ինչն էր, փախավ,— հարցրեց Վախթանգը։

— Ի՞նչը։

— Սե՞րը։ Ժամանակին պիտի տեսնես և որսաս։ Պահը թռավ, սերն էլ ձեռքդ կգնա, ինչպես այծյամն էր։ Սիրո մեջ մարդը որսորդ է։

— Ասել է՝ եթե ես ձեռ գցեցի սերը, ձեռքցս չպե՞տք է փախցնեմ,— հարցրեց Արսենը նշանակալից։

— Որ փախցրիր՝ ամենաանշնորհք մարդն ես և բանաստեղծի ծիծաղին արժանի։

— Որտեղ էլ որ լինի՞, ով էլ որ լինի՞...

— Ո՛րտեղ, ո՛վ էլ լինի...

— Չե՞ս մեղադրի։

— Կուրանա՞մ թե...

— Տո՛ւր ձեռդ,— ասաց ու մեկնեց ձեռը Արսենը։

— Ահա՛,— տվեց ձեռը Վախթանգը։— Գիտե՞ս ինչ է ասում բանաստեղծը։

«Գարո՛ւն էր հետդ ընկած, ո՞ւր էիր, ասա՛,
Գարո՛ւն ես հետն ընկած, ո՞ւր է նա հիմա.
Իմաստուն էիր այնժամ, երբ էիր հիմար,
Հիմար ես դու հիմա, որ իմաստնացար»։

— «Պատերա՛զմ»,— շանթեց կրկին Արսենի հոգում։— Որքա՞ն սիրտ պիտի խորտակի նա։ «Չգա՞ր, չգա՞ր...»,— մրմնջաց նա ինքն իրեն։ Նայեց ներքև, զմրուխտե բլրին Վախթանգի ապարանքը, առուն, հողե ոսկեպարիսպները, որոնց մեջ երազելով փթթում են նշենին, նալորենին ու դեղձենին, որոնց տակին շրջում է նա ինչպես ցերեկային գիշեր և գիշերային լուսաստղ... Եվ այստե՞ղ, հազարավոր փարսախներ հեռու հայրենիքից՝ պիտի պատահեր այդ սերը։ Ինչպե՞ս չի հարցնում նա՝ ո՛վ, ո՛ւմ, ո՛ւր...

Արսենը զգաց, որ թախիծը մտնում է սիրտը և ստվերներ է գցում հոգու մեջ։

Ուզում էր խոսք բանալ պատերազմի մասին, բայց հանկարծ պահանջ զգաց աչքերը փակել։

— «Երբ կգա՝ կկովենք, քանի չի եկել՝ դեռ ապրենք»,— մտածեց նա։

Բայց միաժամ հիշեց Հազկերտին։ Վերակենդանացավ նրա նախանձափրփուր կերպարանքը, նրա օձական հայացքը, նրա վիշապաձայն գոչը՝ Հայաստանի բնաջնջման։ Ատելության կրակը բոցավառվեց Արսենի սրտում, և նա մտքով գնաց իր հայրենի երկիրը, որ հիմա հեռո՞ւ, հեռո՞ւ մշուշ է դառել։ Հազա՞ր հազարավոր երիտասարդներ մահվան են գրվում հիմա այնտեղ, արյունոտվում են մատաղ սրտեր, մանկամարդ կանայք կրծքներին են սեղմում զավակներին՝ աչքերը լայն բացած, սպասելով, թե «ի՞նչ կլինի»։ Հիշեց իր խստակյաց և ասպետական հորը, նրա արծվաքիթ, խրոխտ գեմքը և ձայնը. «Հայրենիքը

չկորցնե՞ս՝ ամենաթանկ բանը»։ Հիշեց, թե ինչպես Գողթան երգիչը մի անգամ ասաց իր երգում.

«Թանկ ինչպես կյանք,
Եվ առավել թանկ,
Ինչպես ազատություն,
Սիրելի՜ ես, ծո՜ւխ ծխանի
Տանն իմ հայրենի»։

Արսենը տխրեց և երեսը դնելով խոնավ հողի վրա՝ սկսեց հոտոտել հողը։ Մտածեց՝ ահա՛ այս հողը բռնի՛ր ու թի՜զ-թի՜զ գնա, միակտուր, միագիծ կհասնես այն վայրը, որի թանկագին անունն է՝ հայրենիք։

— «Պատերազմ»,— շշնջաց նա և երեսը բարձրացրեց հողից։

— Ի՞նչ,— հարցրեց Վախթանգը։

— Ոչինչ,— պատասխանեց Արսենը։

Վախթանգը, որ նույնպես պառկել էր և երկնքին էր նայում, նստեց։

— Դե՛, վե՛ր, գնա՛նք, ժամ է։

Վեր կացան, նստեցին նժույգները և կամաց-կամաց իջան քաղաք։ Խոտի, հողի անուշ համը շրթունքներին, բոլորովին առույգ և կենսալից մտան ապարանք։ Անջուր շատրվանի քարին նստել էին Խորիշան և քույրը։ Խորիշան հոնքերը աղեղի պես լարեց և երկար թերթերունքները նետի պես ուղղեց Արսենին։ Նա նայեց տակից վեր։

Արսենը մարեց այդ հայացքից և աչքերը կախեց։ Կրկին նայեց. Խորիշան նշան էր բռնել կարծես։ Հետո հանկարծ ինչպես նետը բաց թողներ՝ մանր ժպտաց։ Արսենը խոցվեց և հևաց, որ չխեղդվի։ Ոչ մի հոգնություն, որ քաղցր քնի է կոչում մարդու, ոչ մի երազանք, որ թոցնում է մարդու դեպի կախարդական մի աշխարհ այդքան անբացատրելի անուշ չէր, որքան այդ հևքը։ Դա գարնան հևքն էր, որ փչում էր վարդի, հողի, թռչունների, փիրուզ երկնքի և ադամանդյա լուսաստղի շող ու բույրով։

Սեղան գցեցին սրահում։ Այս անգամ սեղանին մասնակցելու եկավ մի անձնյա, հոլանի թևերով և ազնվազարմ տիկին։ Նա տարեց էր և ծանրաշարժ։ Բայց վերին աստիճանի մտերիմ և ջերմ հայացք ուներ։ Նա հարազատ հայացքով համբուրեց Արսենին և նստեցրեց իր կողքին։

— Մոռացե՞լ ես մեզ, ուշ-ուշ ես գալիս։

— Քաշանների պատերազմն է մեղավոր, մայրիկ։ Ո՞վ է իմանում, մի օր էլ բոլորովին չեմ գա։

— Որմիզդը գլխիդ պահապան,— երկյուղով հանդիմանեց Արսենին տիկինը,— ի՞նչ գիտես մարդու սիրտը տխրեցնելը։

«Մահի մեջ է քաջը գեղեցիկ,
Քաջի մեջ է մահը գեղեցիկ,
Ոչինչ չի կապել սերտ իրար հետ՝
Քան մահն ու քաջը գեղեցիկ»։—

Ոգեց Վախթանգը, որի պաշարներն անսպառ էին պարսկական բանաստեղծությանը։

— Ո՞ւր են Խորիշան ու Որմիզդուխտը,— ասաց տիկինը ըսպասուհուն։

— Պարտեզ գնացին։

— Գնա կանչիր։

Սպասուհին գնաց։ Արսենը դողաց, քաղցր ու շնորհակալ նայեց տիկնոջը։ Տիկինը հասկացավ այդ և մանր ժպտաց քթի տակին։

— Տիկի՛ն մայրիկ,— ասաց նա,— մորս ես նման։

— Մայր եմ, ոչ թե նման,— կատակեց տիկինը,— քեզ գողացել է մայրդ և փախցրել Հայաստան։ Հիմա քեզ բաց չեմ թողնի։

— Ես էլ երկու մայր ունեմ,— ասաց Արսենը և փաթաթվեց տիկնոջը։

Դուռը բացվեց, և ներս մտան Խորիշան և Որմիզդուխտը։ Նրանք եկան և նստելով իրենց մոր մի կողմը՝ երկուսով փաթվեցին նրան՝ և սկսեցին գաղտնի աչքի տակով նայել Արսենին։

Տիկինը նրանց մայրն էր, Վախթանգի զոքանչը, որ նրա կնոջ մահից հետո եկել ապրում էր նրա մոտ։ Վախթանգը ուխտ էր արել անամուսին մնալ։ Նա իրեն տվել էր գինու և տաղի։

«Մե՛կ է սերն, երբ շատ է գեղեցիկ,
Եվ մի՛ անգամ է սերը գեղեցիկ»։—

Ոգեց Վախթանգը, որ և իր աշխարհում էր խորասուզված, և այդպես էր մասնակցում զրույցին։

Իսկ իր մոր վզից կախված, աչքերը Արսենին հառած՝ նայում էր նրան Խորիշան։

Արսենը կաշկանդված էր այդ համարձակ, մեծաձայն և այրող հայացքից, որ անմեղ հառած էր նրա աչքերի մեջ և տոգորում էր, խելքահան անում։

Տիկինն զգում էր այդ հայացքը և հազիվ նկատելի ժպտում։ Տիկինը Արսենին տեսել էր առաջին անգամ այն օրը, երբ հայոց այրուձին մտնում էր Նյուշապուհ Հազկերտի բանակը մտնելու և քուշանների դեմ պատերազմելու։ Վախթանգը Արսենի հետ եղել էր այդ պատերազմում։ Եվ մի անգամ, երբ քուշան հեծյալը սուրը իջեցնում էր Վախթանգի գլխին՝ Արսենը վրա էր հասել և մի հարվածով գլորել նրան։ Ահա այդտեղից Վախթանգը մտերմացել էր նրա հետ և դարձրել իր տան բարեկամ։ Երբ նա առաջին անգամ տուն էր բերել Արսենին, տիկինը զարմացել էր.

— Երբ ես տեսա սրան, ասացի սա մեր տուն կգա մի օր։ ահա որ եկավ։

Տիկինը կրկնեց իր այդ խոսքը։

Մինչև ուշ դիշեր տևեց ճաշկերույթը։ Դուրս եկան պարտեզ։ Լուսնի արծաթը պլպլաց սև նոճիների արանքից։ Նրա սառը լույսի եղյամը երազական էր դարձնում պարտեզը, որ շունչ էր քաշում լիակուրծ։

Ժամ էր հանգիստ առնելու։ Տիկինն ու աղջիկները հեռացան իրենց օթևաններին, իսկ Վախթանգն ու Արսենը մնան սրահը և պառկեցին շքեղ անկողիններում։ Վախթանգը քնեց խոսուն ինչ-որ մի քաղցրակի կիսում, և շուտով լսվեց նրա հանգիստ ու անվրդով շնչառությունը։ Արսենը պառկեց անկողնում, որ կրակի պես լափեց նրան. քունը չէր գալիս աչքերին։ Առաստաղին, պատուհանի միջով երևում էր երկնքի մի կտորը, ուր աստղերը կանաչավուն և կապտավուն գույներով գրում էին իրենց հավերժի գիրը։ Գիշերը քնի մեջ շնչում էր խոր, երկրի և երկնքի անհուն կրծքով։ Նա հոսում էր և տանում իր հետ աշխարհը դեպի անհունություն՝

Արսենը սպասում էր ժամադրման պահին։ Լուսաստղին։ Նա կամացուկ դուրս եկավ պարտեզ։ Սառը համբուրեց նրան գիշերվա սև շրթունքը։ Նա գնաց դեպի գետակի ափը և նստեց քարին։ Խոտերը, սպասման ծանրաշարժ ընթացքը, տեսակցության երջանիկ մոտեցումը նրան անհանգստացնում էին։ Համբերությունը հատնում էր, և գիշերը թվում անլույս ու անշարժ։ Մինչ երկնքի

ճախարակը լողում էր աննկատ, բայց հաստատ։ Արսենը հառնում էր վառած մոմի պես։ Չէ, չի գա Դիշտրիան, մի բան կպատահի, մեկը կարթնանա, կխանգարի։ Եվ կփախչի այն երջանկությունը, որ կյանքում ածան չէ և երբեմն անկրկնելի է, ինչպես ծնունդը։

Նայեց բակի կողմը, որտեղից պիտի երևար Դիշտրիան։ Երբեմն մի ստվեր էր լողում այնտեղից։ Բայց աչքի երևույթն խաղույն անհետանում էր։ Ակնապիշ հայացքը ստեղծում էր այդ ստվերները։

Հեռու հորիզոնում, անապատի սևագիշեր խորքում մեռնում էր ոսկեգեն լուսինը՝ պղնձե մահագույնի փոխելով իր հեքիաթային դեմքը։ Եվ ահա,— Արսենը կարծում էր, թե կրկին պարտեզի մեջ երևույթը խաբուսիկ էր՝— մթան մեջ մթնեց մի այլ ստվեր, որ անշարժացավ տարակուսած, թե զգույշ։ Նայեց արևելք։ Լեռան թիկունքից, կրակե թերթերունքները կկոցելով և իր հավերժական հայացքը վեհորեն հառած երկրին՝ դուրս լողաց լուսաստղը։

Նա գալիս էր հպարտ ու վեհաշուք։ Արսենի սիրտը ճմլվեց։ Նա նայեց ստվերի կողմը, որ արդեն օրորվում էր և պարսպի տակով լողում դեպի ինքը։

Նա ընդհուպ մոտեցավ Արսենին և ականջին փսփսաց.

— Անցիր օթևանը. ինքն է, մենակ...

— Առա՛ջ անցիր,— հևաց Արսենը։

— Ե՛կ, շտապի՛ր, զգո՛ւյշ... — առաջ սողալով շշնջաց Դիշտրիան և ձեռքով քաշեց նրան։ Երբ Արսենը մտավ Խորիշայի օթևանը, հետևից դուռը փակվեց, և նա զգաց իրեն մի այնպիսի քաղցր բանտարկության գրկի մեջ, որ ամեն ազատությունից սիրելի էր։

Խորիշան նստել էր գորգի վրա և գլուխը կախել հատակին։ Նրա սև գանգուրները հոսել էին գորգի վրա։ Նա գլուխը բարձրացրեց, նայեց Արսենին, ապա կրկին գլուխը կախեց։ Փղոսկրյա ուսը դուրս ցայտեց նրա զգեստի միջից։ Արսենը մոտեցավ անխոս և նստելով կողքին մեղմ գրկեց նրա ուսը։ Խորիշան դողաց ու ցնցվեց։ Արսենը համբուրեց նրա ուսը և գլուխը դրեց վրան։

— Խորի՞շա... — շշնջաց Արսենը ոչ իր ձայնով, խուլ և շշնջարգել։— Դե խոսի՛ր, մի՛ բա՛ն ասա։

Խորիշան լուռ էր և անշարժ։ Նա հևում էր։

Հանկարծ մի ճապուկ շարժումով, գեղեցիկ օձի նման փարվեց նա Արսենի պարանոցով և սարսռալի դողաց։

Երկու ջերմ համբույրներով նրանք փարվեցին իրար։ Այլևս ոչ մի խոսք չէր կարող արտահայտել այն զգացմունքը, որը բառ չունի իսկապես, որը խոսում է ավելի պերճ, քան մարդկային բոլոր լեզուները։ Արսենն զգաց իր գրկում Խորիշայի մարմնի ջերմ ու նուրբ թավիշը, որ լողում էր նրա կրծքին։ Նա այրում էր ինչպես հրդեհի բոց և խենթացնում։ Աշտանակի մեջ առկայծել սկսեց կարագի ճրագը և մարմրեց, դողաց։ Պատի վրա թրթռացին երկու սիրահարների ստվերները։ Ճրագի լույսն ուշակորույս մարեց։ Օթևանը մթնեց։ Պատուհանի մեջ ուժեղացան աստղերը, ցոլաց շքեղ լուսաստղը։ Իսկ պարտեզի դիմացի անկյունի ատրուշանից լույս տվեց հավերժական կրակը։ Օթևանը կիսալույս, կիսաստվեր՝ դառավ երազական, և ինքնամոռացումը խլեց զույգի զգուշավորությունն ու խելամտությունը...

Ավազի հատիկները ծեծեցին դուռը։ Ժամ էր բաժանման։ Արսենը շարժում արեց, բայց Խորիշան փարվել էր պինդ ու անխոս։

— Խորի՛շա, ժա՛մ է...

Խորիշան հառաչեց, բաց թողեց և կրկին խլեց նրան և համբույրը հպեց նրա համբույրին։

Ավազի հատիկները սաստկացրին իրենց անձրևը։

— Խորի՛շա, ժա՛մ է... ես էլ չեմ ուզում, բայց...

— Թող ինչ ուզում է լինի. կա՛ց, մի՛ գնա,— աղաչեց ապրած կույսը, կարծես վախենալով գրկից բաց թողնել երջանկության ոսկի թռչունը։

Արսենը կրկին ուժով գրկեց ու սեղմեց Խորիշային, և նրանք ինքնամոռացության մեջ ընկան կրկին...

Դուռը ծեծեցին ձեռքով։ Դռան մեջ փսփսալ սկսեց Դիշտրիաշի ձայնը։ Նա շտապեցնում էր։

Արսենը պոկեց իր համբույրը Խորիշայի շրթունքից և վեր կացավ. Խորիշան մնաց հատակին թեքված, մազերը կախ և աչքերը գետնին։

Երազը գնաց, մնաց զարթոնքի մեջ հևացող մանկամարդ կինը, որ իմաստնացավ, մտնելով կյանք...

Արսենը զգույշ գուրս եկավ, ծածկեց դուռը և իջավ աստիճաններից։ Նրան հարվեց Դիշարիան։ Արսենը գրկեց նրան և համբուրեց։ Դիշարիան հառաչեց և պրծնելով նրա գրկից՝ շշնջաց.

— Դե շո՛ւտ, հեռացի՛ր, իշխա՛ն...

— Եթե իմանա՞ս, Դիշարիա, անո՞ւշ Դիշարիա...

Դիշարիան ինքը փարվեց Արսենին և կրկին հառաչեց։

Արսենը արագ անհետացավ խավար պատերի տակով։

Դիշարիան մտավ Խորիշայի սենյակը։ Խորիշան ձեռների մեջ գլուխը թաղած հեկեկում էր։

— Խորիշա՞...— լա՛ց ես լինո՞ւմ։

Խորիշան չպատասխանեց և ընկավ անկողնու վրա ու գլուխը թաղեց բարձի մեջ։

— Աշխարհ մտար, մատա՞ղ քեզ, երանի՞ քեզ...— շշնջաց Դիշարիան և գրկեց Խորիշային,— լա՞ց, լա՞ց, անո՞ւշ է այդ լացը, գարնան անձրև...

Խորիշան վախեցած նայեց Դիշարիային և շշնջաց.

— Իսկ եթե նա գնա ու չգա՞...

— Ինչպե՞ս կարող է, խելո՞ք, ինչպե՞ս կարող է...

— Իսկ եթե պատերազմ գնա։

— Սերդ կպահի նրան։ Դու շատ սիրիր մեկին։

— Ո՞վ է ինձանից ավելի սիրում։

Երկինքը գունատվեց, աստղերը սուզվել սկսեցին կապույտկանաչ թավշի մեջ, աքաղաղները կանչեցին և հեռու փողոցում պայթեց առաջին հեծյալի տրոփը։

Լուսանում էր, որ Խորիշան քնեց։

Զգույշ, անձայն դուրս եկավ Դիշարիան և գնաց դեպի գետակը։ Առավոտյան հովը սվսվաց ծառերի ճյուղերին, գետինը մթան միջից նայում էր լուրջ ու հանելուկային։ Գարունը ծնվել էր ծառերի, թփերի, ծաղիկների մեջ։ Օրը բաց արեց աչքերը։

Դիշարիան հառաչեց և ետ դարձավ օթևանն։

***

Հայկական այրուձիի կյանքում վրդովմունք էր և դրդվածություն։ Անօրինակ ստորացումը, որին ենթարկվել էր Գյու

սախներ հեռու հայրենիքից ապրում էին օտարությունն ու կարոտը՝ այժմ անարգանքի և խայտառակության ենթարկվեցին։

Սրվանձտյա Գարեգին իշխանի վրանում հավաքվել էին մյուս իշխանները։ Ի՞նչ անել, ինչո՞վ պատասխանել այդ հարվածին։ Զգում էին,— և դա առաջին անգամն էր, որ պետք է վրեժխնդիր լինել։

— Լա՜վ են անում,— ասաց դառնությամբ Գարեգին իշխանը,— Սպարապետը Մահվիոռտ գետի վրա փրկում է արյաց պետությունը, տարիներով մեր հայրենիքից հեռու եկել կռվում ենք քուշանների դեմ պարսիկների համար, հարկ ենք վճարում...

Վրանի սյանը հենված, ձեռները կրծքին խաչած՝ դուրս էր նայում վրդովված իշխանը և դառնությամբ ժպտում.

— Մեծ բաներ բաց ենք թողել։ Զորքը չենք կազմել։ Նախարարներին չենք միացրել։

— Լավ են արել, ըմբոստ պատասխան են գրել,— ասաց Արսենը։

— Պատասխան թուղթը ցույց է տալիս, որ մերոնք զարթնել են,— ասաց Գարեգինը։— Մեծ օրեր են այնտեղ։ Վճռել են ապստամբել։ Պետք է պատրաստ լինել այստեղ։ Մեր գլխին կարող են խաղեր խաղալ։

— Կարող են,— ասաց Արսենը։

— Եվ քանի չեն սկսել՝ մենք սկսենք,— ասաց Գարեգինը։

— Ի՞նչ...— համարյա միասին հարցրին մյուսները։

Գարեգինը իսկույն չպատասխանեց։ Քննող հայացքը գցեց գետին և ապա ոչ այնքան պարզ մտքով ասաց.

— ... Զծառայել սրանց...

Քաջ երիտասարդը, որ միշտ կռվի ամենավտանգավոր տեղերն էր որոնել և փրկել դրությունը, զարմացրեց իշխաններին իր կտրուկ առաջարկությամբ։

«Քաջերը խելացի են»,— մտածեց Արսենը, դիտելով Գարեգինին։

Նա չէր ընդունի մի այդպիսի միտք ուրիշի կողմից, բայց Գարեգինի առաջարկը նա ընդունեց, որովհետև հավատաց քաջության։

— Մենք ամեն վճիռ ընդունելու պատրաստ պիտի լինենք,—

շարունակեց Գարեգինը,— մեզ կարող են զինաթափ անել, բանտարկել, ոչնչացնել։ Չպետք է թույլ տանք։

Գարեգինը կատակ չէր անում։ Նրա խոսքը նոր էր, բայց նրան վաղուց էին ճանաչում, ուստի և ընդունեցին։

Ներսեհ իշխանը, որ ուշադրությամբ լսում էր Գարեգինին, ասաց.

— Փորձանքը գալու է, իշխան, ուրեմն ասածդ էլ է գալու, ուզենք՝ չուզենք։ Առաջնորդի՛ր, ես համաձայն եմ։

— Բոլորս էլ համաձայն ենք,— ասացին մյուս իշխանները։

— Տո՛ւր խորհուրդը. ասա ի՛նչպես ե՛րբ կատարենք,— ասաց Արսենը,— ճակատագիրը մեզ մղում է վտանգավոր մի գործի՝ գնանք այր մարդու պես։

— Հետո, մի կարծեք, իշխաններ, որ Հազկերտն ապահով է,— ասաց Գարեգինը,— Հունաստանը նրա համար է թույլ, քանի որ հոներին է սպասում։ Հազկերտն սպասում է և՛ հոներին, և՛ քուշաններին։ Մեր հարվածը, որ հույս ունեմ կռում է այս պահիս Սպարապետը, գործ կտեսնի։ Կտեսնեք, իշխաններ, մի օր մենք հոների կողքին կանգնած կլինենք։

— Հնարավոր է,— ասաց Արսենը,— Սպարապետը կմտածի այդ մասին։

Այս զրույցը աննկատելի լուսավորեց իշխանների հոգին։ Առաջին անգամ նրանք զգացին, որ իրենց հալածում են նրա համար, որ հայ են, առաջին անգամ դա վիրավորեց նրանց և հոգիները լցրեց հպարտությամբ։

— Է՜է՜, իշխանն ե՜ր, իշխանն ե՜ր,— հառաչեց Գարեգինը,— ախտավոր անասունը կհամարձակվե՞ր այդպես խոսել Վասակ Մամիկոնյանի հետ...՝ Վասակ Մամիկոնյանը մեռել է մեր մեջ։ Պետք է հարություն տալ նրան։

— Քանի որ հիշում ենք՝ հարություն առավ,— ասաց Արսենը,— Վասակ Մամիկոնյանը չի մեռել։

— Չի էլ մեռնի,— ասաց Ներսեհը։

— Ճշմարիտ ասված,— խոսեցին մյուսները։

Գարեգին իշխանը ձեռը բարձրացրեց և ասաց հանդիսավոր։

— Ուխտ ենք կազմում և ուխտ ենք անում, կռվել և տեղի չտալ։

— Կռվել և տեղի չտալ,— կրկնեցին իշխանները։

Նրանք ողջագուրվեցին։ Ուխտը կազմվեց։ Նրանք այնպես զգացին, որ ուժ են, և որ այդ ուժին ոչինչ չի կարող դիմանալ։

Նրանք ցրվեցին իրենց վրանները։ Դուրս եկավ Արսենը և շմտավ իր վրանը, մնաց դուրսը։ Նրան խռովում էին մտքերը։ Նոր էին այդ մտքերը, երբեք նրա գլխով չանցած։ Հայրենիքի սերը նրա մեջ կար այնպես, ինչպես կան հյութեր և անդամներ մարմնի մեջ, որոնց չես զգում, հաճախ չգիտես։ Նա նոր զգաց, որ սիրում է իր հայրենիքը, որի համար նա պիտի մեռնի կարիք եղած դեպքում։ Բայց նրա երևակայության մեջ երևաց մի այլ պատկեր, կերպարանքը մի էակի, որին սիրում էր նա, ինչպես ոչ ոքի աշխարհում։ Ի՞նչ կլինի նրա վիճակը, ի՞նչ կլինի իր վիճակը, եթե նրանք բաժանվեն։ Իսկ որ կբաժանվեն՝ դա ճշմարիտ է, ինչպես ճշմարիտ է նա, այն էակը։ Արսենն զգում էր, որ ինքը կանցնի առաջին շարքերը՝ երբ պատերազմն սկսվի։ Նա չի մոռացել և չի մոռանա Հազկերտի անարգանքը։ Մարդ չպետք է լինել, չպետք է ունենալ ամենափոքր արժանապատվություն՝ տանելու այդ ստորացումը, արհամարհանքը ազգային հպարտության։ Ոչ, Արսենը կանցնի առաջին շարքերը։

Նա մտավ վրանը, բայց չէր կարողանում քնել։ Երկար նստեց նա. երկինքը շրջեց իր բյուրավոր աստղերով գամված ճախարակը։ Կրկին Արսենը դուրս եկավ և նայեց հորիզոնին։ Ահա այնտեղ, ուր թանաքի ծովի պես սևացել է անապատը, ձգվում է ճանապարհը դեպի հայրենիք։ Այնտեղ հիմա քնած է հայ ժողովուրդը, ծեր, մանուկ, կին, պատանի, երիտասարդ, հանգակավոր... Քնած են հազար բյուրավոր էակներ, որոնց սպառնում է արհավիրքը։ Ինչո՞վ են մեղավոր այն միամիտ գեղջուկները, որ այս ժամին քնած են ցերեկվա դաշտային ազնիվ աշխատանքի խոնջենքից։ Ինչո՞վ է մեղավոր այն ծծկեր երեխան, որ զարթնել, ծծում է մոր կուրծքը, ձգտելով մեծանալ, ապրել այս լայն աշխարհում, ուր ամենքի համար էլ տեղ կա։

Նայեց Արսենը սև անապատի կողմը և մտովի տեսավ հրպարտ, ինքնասեր Մասիսը, որ ազատության նշանաբանն է իր հայրենիքի։ Նրանից են սովորում իր հայրենիքում մարդիկ բարձր բռնել գլուխը։

Արսենը դառնությամբ հասկացավ, որ իր հայ լինելու համար նա պետք է կռվի։ Հիշեց իր մանկությունը, իրենց ամրոցը, իր

դայակը, որ հեքիաթներ էր պատմում, պատմում էր Արտավազդի, Վահագնի, Արտաշեսի մասին։ Պատմում էր Վասակ Մամիկոնյանի մասին, նրա սխրագործությունները պարսից արքա Շապուհի դեմ։

Արևելքում ցայտեց լուսաստղը... Նայեց Արսենը, և նրա աչքին բացվեց ոչ այն գիշերվա սիրո տապերի պես տապլտկվող կրակե սիրտը, այլ պատերազմի բոցերով բորբոքված մի գունդ, որ հեռուությունն պատճառով փոքր էր երևում, բայց որ մոտենա՝ համաշխարհային հրդեհ կբերի իր հետ։ Արյուն կար այդ աստղի մեջ...

— «Պատերա՛զմ»,— շշնջաց ինքն իրեն Արսենը և բռունցքը սեղմելով տատանեց օդի մեջ։

Այո, պատերազմ՝ ատելի, նախանձափրփուր Հազկերտի դեմ, այդ գոռոզ բռնակալի, որ ուզում է իր կեղտոտ ոտների տակ գցել Հայաստանը։ Պատերազմ նրա իշխան պալատականների դեմ, որ վառում են նրա թունավոր կրքերը Հայաստանի դեմ։

Արսենը թեթևացավ կարծես։ Նա գտավ իր վճիռը։ Պատերա՛զմ,— ուրիշ ոչ մի հնար՛ չկա։ Նա հառաչեց։ Այդ պատերազմի ավերածության և փլատակների տակ նա երևի կթաղի իր զգացմունքը, երևի կկորցնի մի էակ, որին նվիրել էր իր առաջին սերը։

Կարո՞ղ է... Թող հայրենիքը ուժ տա կարողանալու... Նա կրկին հառաչեց, մտավ վրանը և պառկելով թավշանման մորթիների վրա՝ շարունակեց զգալ, որ իր հոգու մեջ նստում է երկվության թախիծը։

Ճամբարում հնչեց պարսկական գալարափողը։ Նրա ձայնը կերկերաց, թռավ բանակների վրայով։ Զարթոնքի փողն էր։ Նա կոչում էր հազարավոր զինվորներին վեր կենալ վարժանքներ կատարելու, թերևս շարժվելու պատերազմ։

Քուշանները գալիս էին արևելյան լեռներից այն կողմ՝ աշխարհավեր փոթորիկի նման...

Իշխանները վեր կացան և դուրս եկան վրաններից։ Նրանք հավաքվեցին։ Պարզվեց, որ նրանք չեն քնել։

Գարեգինն ասաց.

— Վճռեցի այսպես. սուրհանդակ ուղարկել Մպարապետին և հայտնել, որ համերաշխ ենք հայրենիքին և միանում ենք հայրենիքի պատերազմին։

— Հենց այսօր ևեթ,— ասաց Արսենը։

— Հավան ենք,— ասացին մյուսները և ավելացրին, որ պետք է շտապել, քանի հնարավոր է, որ սկսվի քուշանական արշավանքը, և իրենք վճռեն իրենց անելիք։ Պետք էր տեղեկացնել իրենց վճիռը նրանց, ովքեր վճռել էին դիմագրավել մի այնպիսի հզոր ուժի, որպիսին արյաց պետությունն էր։

***

Կոդակը քանի գնաց դիրք ձեռք բերեց պարսիկ մեծամեծների առաջ։ Գյուտը նկատեց, որ նա արդեն թելադրում էր իրեն։ Թելադրում էր, որովհետև այլևս Գյուտի հետ ոչ ոք հաշվի չէր նստում, ոչ ոք չէր մոտենում նրան։ Իսկ Կոդակին կանչում էին ստեպ-ստեպ և անգամ խորհրդակցում հետը։ Դա հաստատվում էր նրանով, որ Կոդակն հետզհետե ավելի էր ամփոփվում իր մեջ և ամեն բան չէր պատմում Գյուտին։ Դա վիրավորական էր, բայց նա ոչինչ չէր կարող անել։ Նա վոնդված իշխան էր այստեղ և պատվիրակ, որ գործ չէր կատարել։ Իսկ Կոդակը ահագին գործ էր տեսել. նախ՝ վերականգնել էր լավ կարծիքը Վասակի մասին։ Նրան դուրս էր բերել կրոնափոխության գործի պարագլուխ։ Խախտել էր վստահությունը Դենշապուհի հանդեպ։ Միհրներսեհը տատանվում էր նրան վերաբեր վճռի մեջ։ Դա պարզ երևում էր նրա ամենօրյա բազմաթիվ հարցապնդումներից Դենշապուհի մասին։

Բայց Կոդակը մի զորավոր թշնամի ուներ այստեղ։ Նա պըղտորում էր մթնոլորտը։ Նա տակնուվրա էր անում Կոդակի և Վասակի ծրագիրները։ Զորեղ հակառակորդ էր նա, որ և մուտք ուներ Միհրներսեհի մոտ և երկար խորհրդակցում էր նրա հետ, և մեծ կապեր ուներ պարսիկ մեծամեծների հետ։ Դա Վարազվաղանն էր, Վասակի փեսան և արյունխնդիր հակառակորդը, հավատափոխ եղած և իր ծառայությունները առաջարկած Միհրներսեհին, վտանգավոր գործիքը Վասակի դեմ։ Նա բնակվում էր Նյուշապուհ քաղաքում և շարունակ այցելում էր նաև բանակը՝ տեսնվելու պարսիկ զորականների հետ, ծանոթանալու նրանց միջոցով բանակի զորավար Մուշկան Նյուսալավուրտի հետ, հույս ունենալով արժանանալ Հազկերտի տեսակցության։

Կոդակն իմացավ նրա բնակարանը և մի օր գնաց մոտը։

Վարազվաղանը ընդունեց նրան իր սրահում, որ կահավորված, զարդարված էր պարսիկ իշխանի ճոխությամբ։ Նա նստած էր բարձերին և իշխանական դիրք էր ընդունել։ Նրա երկար վիզը, ագռավի սևակապույտ խիտ մազերը, նույն գույն հոնքերն ու մորուքը ախորժելի չթվացին Կոդակին։ Կասկածամիտ հայացքը ոչինչ լավ բան չէր հուսադրում։ Կոդակն իր բոլոր խելքն ու խորամանկությունը լարեց գոնե կորզելու նրա որոշ մտադրությունները Վասակի դեմ։ Թեև առաջին հայացքից երևաց, որ դա այնքան էլ դյուրին չէ։

Բավական լռություն տիրեց, և խոսակցությունը չէր սկսվում։

Կոդակը, չնայած որ վերջերս մեծ դիրք էր ձեռք բերել, բայց ջանաց շատ էլ ցույց չտալ և չխրտնեցնել Վարազվաղանին։ Նա բավական հեռու չոքած նստեց և երկու ձեռների ափերը դրեց ծնկներին։ Դա խոնարհության նշան էր։

— Ինչո՞ւ ես եկել,— խզեց լռությունը Վարազվաղանը։

— Եկել էի Խոսրովին ընկերակցելու, իբրև հյուրընկալ։

— Ուրի՞շ...

— Դավեր լարելու քո դեմ,— միանգամից հանկարծ հարձակվեց Կոդակը։

Վարազվաղանը շազդվեց։ Դա հայտնի էր նրան։ Ուստի և անտարբեր հարցրեց.

— Հետո՞, լարեցի՞ր։

— Լարեցի, տեր իմ,— շարունակեց մնալ հանդուգն դիրքում Կոդակը։

— Ո՞ւմ մոտ։

— Միհրներսեհի։

Վարազվաղանը սառը նայեց Կոդակին.

— Բան հաջողվե՞ց։

— Հաջողվեց, տեր իմ։ Հազարապետը, որ կարծում էր, թե Վասակն է ծածուկ թելադրել հայ նախարարներին պատասխան թուղթը և արտաքուստ ցույց է տալիս բարեկամ արյաց տերության, փոխեց իր կարծիքը Վասակի մասին։

— Այն, որ Վասակը Վարդանի հետ չէ՞։

— Հրամայեցիր, այդպես։

Վարազվաղանը շտկվեց տեղում, ուղիղ նայեց Կոդակի աչքերին և երկար զննեց նրան։

— Բայց իմ դեմ ի՞նչ դավեր նյութեցիր։

— Ցույց տվի, որ դու խանգարում ես Վասակի գործին։ Մրցում ես նրա հետ և վարկաբեկում նրան։

— Հավատա՞ց։

— Ոչ, տեր իմ։ Չհավատաց նաև Վասակի անկեղծության արյաց հանդեպ։

— Հիմա ի՞նչ ես կամենում, ինչո՞ւ ես եկել մոտս։

— Քեզ ծառայելու,— անքթիթ նայելով ասաց Կոդակը՝ լուրջ և տխուր դեմք շինելով։

— Վասակից հույսդ կտրեցիր, գալիս ես ի՞նձ ծառայելու։

— Այո։

— Ուրեմն դու ծախու մարդ ես։

— Այո, տեր իմ։ Գործ է, երբեմն այս է հաջողում, երբեմն այն։

Վարազվաղանը քմծիծաղով նայեց Կոդակին.

— Եվ եթե տեղը գա՝ կդավաճանես նաև ինձ...

— Կդավաճանեմ,— համառեց Կոդակը։

Սա գրգռեց Վարազվաղանին։ Սա արդեն չափազանց էր։

— Իսկ ինչո՞ւ կդավաճանես։

— Եթե թուլանաս։ Տեր իմ,— նոր թափ առավ Կոդակը՝ զգալով որ անվրեպ հարվածի տեղն է,— ո՞վ կմնա քեզ հավատարիմ, եթե դու ուժից ընկնես։ Կմնա՞ս հավատարիմ, եթե Միհրներսեհը ընկնի։ Դավաճա՞նը որն է, հավատարի՞մը որը։ Տուր ինձ հաջողակ գործ, ես գործին կլինեմ հավատարիմ։

— Ուրեմն դու քո շահի՛ն ես ծառայում։

— Ինչպես դու՝ քո շահին,— հակահարված տվեց Կոդակը,— ո՞վ է, որ շահ չունի։

Վարազվաղանը նյութը փոխեց.

— Լավ, ինչպե՞ս են գնում Վասակի գործերը Հայաստանում։

— Շատ հաջող։ Կուսակիցներ է հավաքել բավականին։ Հայ նախարարներից շատերը ծածուկ բարեկամ են նրան։

— Հույս կա՞, որ հաջողի նաև այստեղ։

— Կա։ Բայց տակավ։ Նրա գործը փչացրել է պատասխան թուղթը, որ նա չկարողացավ կանխել։ Նա տանուլ կտա։ Քո դիրքն է հիմա հուսալի։ Եթե դու լինեիր՝ դու էլ տանուլ կտայիր։ Բայց չես եղել, տանուլ չես տվել։ Եվ հիմա դու ամուր ես, քանի որ նրա տեղը չես։ Նրանից մեծ հույսեր չկան, իսկ դու կարող ես հույսեր ներշնչել։ Միհրներսեհն ակնարկել է ինձ այդ մասին։

Վարազվաղանը չխոսեց։ Կոդակին հենց այդ լռությունն էր պետք։ Ուրեմն Վարազվաղանը գիտեր Միհրներսեհի՝ նման մի վերաբերմունք իր հանդեպ։

— Դա նկատելի եղավ Հազկերտի ցասումից հետո,— ավելացրեց Կոդակը։

Վարազվաղանը լռեց։ Կոդակը շարունակեց հարձակումը։

— Ահա դա խախտեց իմ հավատը Վասակի ապագային։ Փտած գործ է, տեր իմ։ Այն ցասման օրը ես նկատեցի, որ Միհրներսեհը քեզ ընտրեց։ Երբ ես նրա հետ տեսակցեցի երեկ, զգացի, որ նա քեզ համար է պահում Վասակի պաշտոնը։

Վարազվաղանը սայթաքեց... — կրկին լռեց։

Կոդակը անցավ հետքերը թաքցնելու ճիգերին։

— Մեծ ողորմածություն կանեիր, տեր իմ, եթե ինձ ընդունեիր քո ծառայության։ Դու ինձ հարցրիր, թե շահի՞ս համար եմ ծառայում։ Այո՛, ես անկեղծ խոստովանեցի՝ շահիս համար։ Իմ շահը մեծ մարդու գործի մեջ է։ Սիրում եմ հաջողակ գործը։ Հաջողակ մարդու գործը։

— Իսկ եթե ինձ խաբես... — ժպտաց Վարազվաղանը։

— Թույլ մի՛ տուր, տեր իմ, որ թույլ տաս, պիտի խաբեմ։ Բայց դու խելք ունես՝ ինչո՞ւ պիտի խաբվես։

Կոդակը լավ էր ըմբռնել այն իմաստությունը, որ հաճախ ամենամեծ խորամանկությունը անկեղծությունն է։ Նա ջանում էր ճարպկորեն ոստոստել այս լարի վրա։ Նա որոնում էր առիթը մի քանի իրական ապացույցներ էլ տալ հավատարմության և ըսպասում էր առիթի։ Առիթը հանկարծ եկավ։

Վարազվաղանը հարցրեց.

— Իմ մասին ի՞նչ ես վատաբանել Միհրներսեհին։

— Քո մասին վատաբանել եմ ասելով, որ դու մտադիր ես Վարդանին միանալու, որպեսզի տապալես Վասակին։ Իսկ Վա-

սակը, ասացի, ոչ մի դեպքում չի միանա Վարդանի հետ։ Թեկուզ քեզ տապալելու համար։ Այս դուր եկավ Միհրներսեհին։ Սա մեծ հարված էր քեզ...

— Եվ դու հանդգնում ես մո՞տս գալ... — հանկարծ խստացավ Վարազվաղանը։

— Այո,— շշփոթվեց Կոդակը,— կարծում եմ, որ անկեղծությունս ինձ կփրկի։ Խելացի կլինի՝ եթե ներես ինձ և բարեկամանաս։ Օգուտ չկա, եթե ինձ սպանես այստեղ։ Ես եկա, որովհետև ճանաչում եմ քեզ։ Դու խելացի մարդ ես։

Վարազվաղանը չգիտեր ինչ վճռել։ Նրա մեջ խոսում էին երկու դրդում. իսկույն դուրս վռնդել զազիր ծերուկին. սպասել, լսել նրան՝ գոնե մի բան որսալու համար։ Նրա այս տարակուսանքը կռահեց Կոդակը, և չուշացավ որսալու առիթը.

— Տեր իմ, դու վճռում ես ինձ վռնդել։ Կարող է և այդ կանես։ Բայց ես քեզ հիշեցնում եմ, որ գալու են շատ խառն օրեր։ Վասակը կընկնի, բայց ալիքը կարող է նաև նրան բարձրացնել։ Կարող է քեզ ժպտալ բախտը։ Տուր ինձ առիթը քեզ օգնելու գոնե այն ժամանակ։

— Լավ, աստված քեզ հետ,— մեղմացավ Վարազվաղանը,— կմտածեմ։ Գնա։

— Շնորհակալ եմ, տեր իմ,— ասաց Կոդակը,— բայց ես դեռ չեմ սկսի քեզ ծառայել։ Ես դեռ Վասակի ծառայության մեջ եմ։ Այս մի բանին հավատա։

— Ինչո՞ւ։

— Ստոր գործ է, բայց գեղեցիկ պիտի կատարել։ Պատվի բան է։ Դու ինձ դեռ չես ընդունել քո ծառայության։

Վարազվաղանը ծիծաղեց.

— Իսկ եթե չընդունե՞մ երբեք։

— Կգործեմ քո դեմ,— ծիծաղեց Կոդակը։

Նա զգաց, որ մի բան կոտրվեց Վարազվաղանի մեջ։ Նա գիտեր, որ խորամանկությունը մարդու մեջ վերջ ի վերջո սահման ունի։ Մարդը խելացի և խորամանկ գործելով չի կարող դարձյալ տիրել ամբողջ աշխարհին։ Զգաց նաև, որ իր սահմանին ևս հասավ։ Ուստի և հրաժեշտ խնդրեց։

— Գնա խաղաղությամբ,— ասաց Վարազվաղանը,— եկ տրիշ անգամ՝ զրույց կանենք։

— Կշանամ, տեր իմ,— դժվարացրեց Կոդակը,— կգամ, եթե օգտակար բան գտնեմ քեզ համար։

Նա հեռացավ։

«Խելացի խարդախն էլ իր տեսակի մեջ է վստահելի»,— ասաց մտքում Վարազվաղանը։

Նա սկսեց մտածել, թե ինչ օգուտ եղավ իր զրույցից Կոդակի հետ։ Մեծ մասը խորամանկ խաղեր էին, ուրեմն և անօգուտ։ Բայց մի միտք նրան դուր եկավ, այն, որ Կոդակն ասաց, թե Վարազվաղանը կանցնի Թեկուզ Վարդանի կողմը՝ միայն դա լինի Վասակի դեմ, իսկ սա՝ ոչ։ Դա վտանգավոր միտք էր, եթե Կոդակն իրոք հայտնել է։ Իսկ եթե չի հայտնել, պետք է ապահովել իրեն նման կասկածներից։ Միաժամ նա գտավ, որ Վասակի դիրքը հենց դրանով է ամուր, որ նա Վարդանի հակառակորդն է։ Եվ Վարազվաղանը որոշեց իրեն թշնամի ցույց տալ Վարդանին, թեկուզ և ծածուկ բարեկամանալ վերջինիս հետ՝ Վասակին տապալելու համար։

***

Վարազվաղանն ու Կոդակը չէին կարող նկատել, որ իրենց զրույցը գաղտնի չէ, որ օթևանի պատի դրիշակի հետև ճնճղուկին հետամտող կատվի պես լարվել, ականջ էր դնում Վարազդուխտը, որի գեղեցիկ աչքերը շողշողում էին կիսամութի մեջ հաջող որսի նախաճաշակումով։ Նրան դուր էին գալիս Կոդակի խարդավանքն ու ճիշտ նպատակադրումը։ Նա հասկանում էր Կոդակին և լցված էր գոհունակության և շնորհակալության զգացմունքով դեպի նա։

Երբ Կոդակը գնաց, Վարազվաղանը նայեց հատակին, կամենալով խորհել զրույցի մասին։ Հանկարծ հիշեց մի բան, վեր թռավ, գնաց նայեց դրիշակի մեջ։ Այնտեղ ոչ ոք չկար։ Գոհ մնալով նորից եկավ նստեց տեղը։ Ապա ծափ տվեց։ Մտավ սենեկապետը։

— Նժո՛ւյգ, թիկնապահները բոլո՛ր,— հրամայեց նա։

Մի փոքր անց նա մեկնեց տանից դեպի Միհրներսեհի ապարանքը։

Հենց որ զրույցը վերջացավ՝ Վարազդուխտը ետ թռավ դեպի Վարազվաղանի ննջարանը, ուր նստած էր սրա պարսիկ կինը՝ Միհրդուխտը։ Նա հարցրեց.

— Ի՞նչ էր ասում ծերուկը։

— Գործեր էր խառնում,— գլուխը մեռնի,— պատասխանեց Վարազդուխտը դժգոհ։

— Լավ բանի համար հո՛ չէր գա,— խոսեց ինքն իրեն Միհրդուխտը։

— Մարզպանի կողմից է եկել, դավեր է լարում քեռուս դեմ։ Իրեն թշնամի է ցույց տալիս մարզպանին, ծառայության է ուզում մտնել քեռուս մոտ, որ տակը փորի։

— Վարազվաղանն էլ թակարդն ընկնող պտուղ չի,— դիտեց Միհրդուխտը,— լավ, ի՞նչ ասաց Վարազվաղանը։

— Ասաց՝ տեսնենք։ Նա էլ ուզում է բաներ իմանալ ծերուկից, որ մարզպանին գցի նրա ձեռքով։— Վարազվաղանի կինը իր խորամանկ խաժ աչքերով զննեց Վարազդուխտին։ Նրան կատածի մեջ գցեց Վարազդուխտի հետաքրքրությունը քեռու գործերով։ Ինչպես որ նաև չէր հասկացվում նրա Պարսկաստան գալը։ Եվ հիմա, երբ Վարազդուխտը այսպես չարախոսեց Կոդակի մասին, ավելի խորացրեց կասկածը։ Նա Վարազդուխտին շատ տարիներ առաջ վստահել և օժանդակել էր, անգամ փրկել մահից, բայց այս անգամ այսպես անսպասելի Պարսկաստան գալը և բուռն հետաքրքրություն ցույց տալը Կոդակի և Վարազվաղանի խոսակցության՝ բաց արեց Միհրդուխտի աչքերը, նոր միտք տվեց, որ Վարազդուխտը անշուշտ ինչ-որ դավեր է նյութում։ Վարազդուխտն զգաց այդ կասկածը։ Ուստի և դադարեց Կոդակի մասին խոսելուց։ Նա շատ լավ զգում էր, որ Կոդակը փորում է Վարազվաղանի տակը և կարողանում է Վարազվաղանին զբաղեցնել մի առժամ՝ թերևս հնարավոր լինի մի բան գողանալ նրանից։ Այսպիսի փոխադարձ անվստահությունն ու խարդավանքը անշուշտ չեզոքացնում, անօգուտ էր դարձնում նաև փոխադարձ ճիգերը։ Կողմերն իրար տեսնում էին։ Բայց նրանց հույսն այնքանն էր, որ դիմացինը կարող էր մի անզգույշ քայլով մի նշանափեց գտնե վրիպել և մի բան կտրհել տալ, մի աննշան միտք, շատ նուրբ ակնարկ բաց թողնել, որը կարող էր պատահաբար բաց անել մի շատ կարևոր տեղեկություն։

Վարազդուխտի նպատակը, սակայն, միայն Վարազվաղանը չէր։ Նա կամենում էր կապ ձեռք բերել Միհրներսեհի շրջապատող պարսիկ մեծամեծների հետ։ Դա անկարելի էր։ Նա կին էր,

և կնոջ հետ ոչ մի մեծամեծ չէր նստի ու խոսի պալատական խարդավանքների մասին։ Դա պետք էր անել նրանց կանանց միջոցով։ Այդ էլ հազվագյուտ դեպքում հնարավոր էր. ոչ բոլոր մեծամեծների կանայք հասկանում էին, ուր մնաց զբաղվեին պալատական գործերով։ Վարազդուխտը կամենում էր Միհրներսեհի ականջին հասցնել որոշ բաներ նրա քրոջ միջոցով, որ խելացի և ազդեցիկ կին էր՝ չնայած Միհրներսեհի կրտսեր քույրն էր։ Վարազվաղանի կինը ազգական էր նրան և մուտք ուներ նրա մոտ։ Վարազդուխտն էլ ահա այդ կապով էր ուզում հինել իր ոստայնը և ընկնել Միհրներսեհի քրոջ մոտ։ Դա նրան պետք է հաջողվեր բավական մանվածապատ և խարդախ ճանապարհներով։ Նա չէր կամենում ինքն անձամբ «զգուշացնել» Վարազվաղանին, այլ սկսեց Վարազվաղանի կնոջից։ Այնքան խոսեց Կոդակի դավերի մասին, որ Միհրդուխտն ինքնաբերաբար այդ բոլորն սկսեց պատմել Վարազվաղանին։ Այնքան շատ չարախոսեց Կոդակի մասին, որ մի անգամ Վարազվաղանը հարցրեց, թե որտեղի՞ց գիտե սա այդ բաները։ Միհրդուխտը ցույց տվեց աղբյուրը։ Վարազվաղանն իր մոտ կանչեց Վարազդուխտին։

— Դու Կոդակին ճանաչո՞ւմ ես,— հարցրեց նրան Վարազվաղանը։

— Ճանաչում եմ,— ասաց Վարազդուխտը։

— Ինչո՞ւ է եկել։

— Եկել է Վասակի համար հետախուզելու, թե ինչ է սպասում նրան։ Հայաստանում վախենում են, որ Հազկերտը խիստ պատիժներ պիտի տա բոլորին։

Սա շատ խելքի մոտ թվաց Վարազվաղանին։ Նա մտածմունքի մեջ ընկավ։

— Իսկ նա ինչո՞ւ է վախենում։

— Դե նա հայտնի դուրս չի եկել նախարարների դեմ։ Հազկերտն ի՞նչ իմանա, թե ում կողմն է եղել։

— Հըմ...

— Հետո այն էլ կա, քեռի, որ նա գործ չկատարեց։ Չկարողացավ զսպել նախարարներին, արգելել թուղթը...

— Ի՞նչ կարող էր անել։

— Շատ բան։ Բայց վախեցավ նախարարների մոտ դիրքը կորցնելուց։

— Իսկ հիմա չի՞ վախենում Հազկերտի մոտ դիրքը կորցնելուց։

— Դե վախենում է, որ ուղարկել է Կոդակին։

Վարազվաղանը այդ բացատրություններն ընդունեց իբրև ճշգրիտ։ Եվ նա չգիտեր ինչ մտածեր Վարազդուխտի մասին։ Նա թերահավատ էր դեպի իր քրոջ աղջիկը, ինչպես և առհասարկ դեպի ամեն մի արարած, ինչպես դա սովորական է դավադիրների և թշնամիների համար։ Բայց ինչևէ՝ նրան դուր էին գալիս իր քրոջ աղջկա համարձակ ու խելացի խոսքերը։ Այո, ճշգրիտ էին այդ բացատրությունները։ Բայց ինչո՞ւ էին ճշգրիտ... ինչո՞ւ էր այդքան կենդանի հետաքրքրություն ցույց տալիս Վարազդուխտը դեպի այս գործերը։ Դա էր կասկածելին։

— Է՛, լավ, թեթեորեն ժպտաց Վարազվաղանը,— այդ բաները գիտեիր, ապա ինչո՞ւ ինձ չէիր զգուշացրել նրանից։

— Քե՞զ... մի՞թե չգիտեմ, որ դու առաջին տեսքից էլ մարդուն կճանաչես,— ասաց Վարազդուխտը նույնպես ժպտալով։

Վարազվաղանը հանկարծակի հարց տվեց։

— Իսկ ինձ մոտ ինչո՞ւ եկավ։

— Այդ չգիտեմ... — պատասխանեց Վարազդուխտը, բայց զգաց, որ սխալվեց՝ Միհրդուխտը կարող էր իր ամուսնուն հայտնել, որ Վարազդուխտը ծածուկ լսել է նրա և Կոդակի խոսակցությունը,— ճիշտը կուզե՞ս գլխի եմ ընկնում...

— Ի՞նչ է նրա նպատակը։

— Քեզ գցելը։

— Ինչի՞ց գիտես։

— Դե, քեռի, միամիտ չես՝ ինձ միամտի տեղ դնես։ Ի՞նչ է նրա միտքը... Վասակը գիտեր, որ դու նրան դավում ես այստեղ։ Գիտե, որ քանի կենդանի ես՝ նրա դեմ ես։ Քեզ Միհրհներսեհի աչքում գցելով նա չի հանգստանա։ Նա պիտի աշխատի քեզ մեջտեղից վերացնել։

— Ի՞նչ անել...

— Ես ի՞նչ գիտեմ, սպանել տալ, բանտարկել տալ... ո՞վ իմանա։

— Գլխիցդ դուրս ես տալիս,— ասաց Վարազվաղանը։

— Չգիտեմ, քեռի, ես նրանից վախենում եմ։ Ներս մի՛ թողնի նրան։

— Լավ, այդ բաներն ինչո՞ւ մինչև հիմա ինձ չէիր հայտնում, այլ Միհրդուխտին միայն։

— Դե ես գիտեի, որ ինչ էլ ասեմ՝ պիտի ասես գլխիցդ մի՛ դուրս տա, ինչ էլ հավատացնեմ՝ չպիտի հավատաս։ Քեզ ամեն բան ասացի, քեռի, քրոջդ աղջկան չես հավատում, հավատում ես այդ զզվելի ծերուկին։

— Քեզ հավատում եմ, խելքիդ չեմ հավատում,— ծիծաղեց Վարազվաղանը,— ախր ինձ սպանել տվողը ինչո՞ւ պիտի գար մոտս, հայտնաբերելու իր դիտավորությունները։

— Հենց դրանով է նա ուզում ծածկել...

Վարազվաղանը գլուխը շարժեց։ Ճիշտ էր խոսում Վարազդուխտը։

— Այդ չէ բանը, քեռի,— ավելացրեց Վարազդուխտը,— ես Կոդակի իսկական նպատակները, իհարկե, չգիտեմ. բայց մի բան շատ լավ գիտեմ, որ Կոդակը գիշեր-ցերեկ մարզպանի մոտն է, նրա հետ է փսփսում։ Ինքդ մտածիր՝ ինչ է նրա միտքը քեզ մոտ գալու, մոտեմոտ անելու, եթե միտքը ծուռ չի։

Վարազվաղանը փորձեց հանկարծակիի բերել Վարազդուխտին։

— Իսկ դու ի՞նչ գործ ունես մարզպանի ամրոցում...

— Ես Փառանձեմ տիկնոջ մոտն եմ՝ լինում։ Մարզպանը ծեծում է իր տղաներին, կռվիտ է Փառանձեմի հետ, ատում է նրան, բռնանում։ Ես խղճում եմ տիկնոջը, լինում եմ նրա մոտ։ Ինձ էլ մարզպանը չի սիրում։

— Ո՞ւմ է սիրում նա որ... — հեգնական եղանակով ասաց Վարազվաղանը։

Այս խոսքերը շրջադարձ եղան Վարազդուխտի համար։ Վարազվաղանը սկսում էր համարյա վստահել նրան։

«Խելացի բան չէ ամենքին դավադիր համարելը,— մտածեց նա,— հարյուր դավադիրներից մեկը երբեմն դավադիր չէ»։

— Մնա՛,— ասաց նա Վարազդուխտին,— մոտեցիր Կոդակին, իմացիր նրա բուն դավադրությունը։

Վարազդուխտը հրաժարվեց։

— Ոչ, քեռի, նա ի՞նչ պտուղ է, որ ինձ մի բան ցույց տա։ Հետո՝ նա գիտե իմ մոտ լինելը Փառանձեմ տիկնոջ։

Վարազվաղանը կրկին կորցրեց թելը։ Հանկարծ նա մի ուրիշ միտք հղացավ.

— Շա՞տ է ատում իր ամուսնուն Փառանձեմ տիկինը։

— Այդ արդեն կհասկանաս նրանից, որ ամիսներով իրար չեն տեսնում։

— Կարո՞ղ է պատահել, որ Փառանձեմ տիկինը կամենա ամուսնու մահը նյութել։

Վարազդուխտը նահանջեց.

— Չեմ կարող ասել... դժվար է... նա շատ մեղմ և բարի կին է։

— Իսկ դու կարո՞ղ էիր։

— Ե՞ս... չգիտեմ...։

— Չե՞ս կարող։

— Չեմ կարող, ճիշտն այդ է։

Վարազվաղանը վճռեց մի առժամ իր քրոջ աղջկան պահել մոտը։ Նա ոչինչ չկարողացավ հասկանալ նրանից։ Պետք էր հասկանալ։ Կամ ինքը սխալվում է՝ կասկածելով նրանից, կամ նրա մեջ մի լուրջ բան կա, որ կիսատ, չիմացած նրան բաց թողնել անմտություն էր։ Նա մտախոհության մեջ ընկավ։

— Էհ, ճշմարիտ բաներ ասացիր, մտածենք դրա մասին,— ասաց Վարազվաղանը վճռական, որով և կասկած չթողեց այն մասին, որ գլխի էր ընկել Վարազդուխտի նենգությունները։

Դա մի տեսակ ձերբակալություն էր, տնային արգելք, որից խուսափելը փախուստ պիտի նշանակեր։ Ուստի և Վարազդուխտը համակերպվեց և սկսեց մտածել, թե ինչպես դուրս պրծնի թակարդից։ Իսկ եթե այդ կարելի է՝ մի բան էլ շահած թողնել թակարդը։ Նա նոր միայն զգաց, որ ինքը տարվելով Վասակին տածած իր զգացմունքով, անզգույշ քայլ էր արել մի այնպիսի մարդու հետ գործ ունենալու, ինչպես Վարազվաղանն էր, խարդախությունների մի փունջ։

Նա վճռեց մի կերպ դուրս գալ ցանցից և ուրիշ հնարներ գտնել խարդավելու Վարազվաղանին։

Վարազվաղանը վերջ ի վերջո սկսեց ըմբռնել Կոդակի բուն միտքը։ Նա եկել էր իր մոտ թմրեցնելու իր զգոնությունը և ապա իր ցանցերը գցելու պարսիկ մեծամեծների և խորհրդականների մեջ։ Վարազվաղանը սկսեց ավելի լուրջ վերաբերվել իր քրոջ

աղջկան։ Վարազդուխտն էլ կաշվից դուրս էր գալիս նրա վստահությունը ձեռք բերելու։

Մի անգամ նա Վարազվաղանին ասաց.

— Կոդակը ծախու մարդ է, բայց վերջը էլի ավելի շուտ քեզ կծախի, քան Վասակին, էլի հավատարիմ է Վասակին, քան քեզ։

Սա էլ ճիշտ էր, և Վարազվաղանն այդպես էլ մտածում էր։ Բայց չնայած դրան, նա իր մոտ ընդունել սկսեց Կոդակին՝ ցանկանալով հակել նրան։

Վարազդուխտն զգալով իր քեռու և նրա կնոջ կասկածները՝ մի օր հայտնեց քեռուն, որ կամենում է վերադառնալ տուն։

— Ինչո՞ւ ես գնում,— հարցրեց Վարազվաղանը։

— Դե էլ ի՞նչ մնամ, քեզ տեսնել էի ուզում՝ տեսա,— բացատրեց Վարազդուխտը,— գնամ տուն, մայրիկն էլ մենակ է։

Վարազվաղանը մտածեց։

— Մի՛ գնա դեռ,— ասաց նա,— մնա, քո միջոցով ուզում եմ իմանալ, թե Կոդակը ինչ դավեր է լարելու իմ դեմ։

— Շատ բարի, քեռի։

— Դե, քեզ տեսնեմ։

Երկուսն էլ իրար նայեցին անվստահ ու խոր։

***

Մինչ մարդկային անձնավորություններն ու զանգվածները խլրտում էին՝ ինչպես փոթորկից առաջ քամու հատ-հատ հարվածներից անհանգստանալ սկսող դաշտավայր, ժամանակի անիվը դառնում էր, վճռելու համար օրը արհավիրքի շղթազերծման։ Չէր շտապում նա՝ ժամանակը, չէր էլ դանդաղում։ Նա թռչում էր, երբ մեկ թվում էր, թե դանդաղում է, մեկ՝ որ թռչում է։ Մարդիկ էին, որ չէին տեսնում նրա գաղտնի ընթացքը։ Նա դավադրորեն ծածկում էր ապագայի վարագույրը։ Բոլորը ժամանակին էին նայում, իսկ նա ոչ ոքի չէր նայում։

Այն ժամերին, երբ այստեղ, Նյուշապուհ քաղաքում խարդավում էին Կոդակը, Վարազվաղանը, Միհրներսեհն ու պարսիկ մեծամեծները, երբ քնած զայրույթով զառանցում էր Հազկերտը, երբ իրենց վրանները կոում էին հայ իշխանները կայծակնա-

յին հարվածը պարսից թիկունքին, երբ հեռավոր Հայաստանում գյուղե-գյուղ, ավանե-ավան շրջում էին փախստական շինականները Առաքելի, Սահակի խմբերում, դրդելու ժողովրդին դիմադրել, չտալ հարկերը և վանքե-վանք ընկած Ղևոնդ Երեցը, Եզնիկն ու Եղիշեն քարոզում էին ամուր մնալ հավատքին, իսկ նախարարները վիճելով թե համաձայնելով իրար հետ կազմակերպում էին իրենց զորագնդերը — այդ օրերին Պարսկաստանի աղուտներում ավազները կտրելով թռչում էր Հայաստան Հազկերտի հրովարտակատարը։ Նա տանում էր կոչը հրամանի՝ գալ արքունի Դուռը։ Իսկ դա հղի էր գալիքի անհնարին սարսափներով։ Ոչ մի ուժ, ոչ մի խոսք, ոչ մի հրաման չէր կարող կանգնեցնել վերահաս արհավիրքը։ Նրա շարժիչ ուժերը կուտակվել էին դարերի ընթացքում, նրանք ձգտում, ճնշում էին արգելիչ փակոցները, խաբում էին լավատեսներին, քնեցնում մարդկանց զգոնությունը, ուրախացնում էին այդ ուժերը նյութող մարդկանց և ահա տեղահան անելով պատվարները, կործանելով կամուրջները, տակովն անելով շենները՝ վեր էր կացել հեղեղը և գալիս էր հորձում սևափրփուր։ Արդեն հեռվից լսվում էր նրա խուլ որոտը, որից գետինը դողում էր՝ լավ իմանալով, թե ինչ ուժգին կլինի այդ որոտը, երբ նա կգա և կհարվածի։

Երկու դիմադիր ուժեր շրջում են ողջ երկիրը և լարում են ժողովուրդը։ Նրանցից մեկը գնում, բարձրացնում է բազմություններ, ավանե-ավան, գյուղե-գյուղ, քաղաքե-քաղաք երթերով անցնում, տանելով իր հետ փոշու ամպեր, քրտնքի հոտ և խանդավառ, կրակոտ խոսքեր։ Երբ նա անցնում է հեռանում՝ թողնելով իր անցած ճանապարհի հետքը, ժողովուրդը նոր խոսքի իմաստով արթնացած՝ նայում է նրա հետևից և հանկարծ վազում է, հասնում և գնում հետը ուրիշ ավաններ՝ ինքն ասելու այդ նոր խոսքը։ Մյուսը սողոսկում է իբրև ժանտախտ, ծածուկ, դավադիր հիվանդություն՝ թողնելով հետքից երկյուղ և տարակուսանք։ Արյաց զորաբանակների շաչյունն է լսվում նրա քարոզների մեջ և սահմռկում է գեղջուկը, ետ է քաշվում իր գետնափորը և աչքերը հատակին՝ մտահոգում իր տան, կենդանիների, իր իսկ կյանքի մասին։

Եվ արդեն որտեղի՞ց, ինչպե՞ս, ո՞րի բերանով հորջորջվեցին այս երկու հոսանքը՝ վարդանանք, վասակյանք։ Զգացվում էր

որանց հակամարտը, որ դեռ ծածուկ էր, պատշաճ, լավ չգիտակցված, բայց խորհողը այժմվանից կտեսներ նրանց վախճանական բախման կետը։

***

Քնած ամբոցը՝ Ողականը, զառիվերին կառչած վագրի պես փակել էր աչքերը։ Նրա իրանը լարված էր, և թաթերը, որ ամփոփել էր փորի տակ, սպասում էին որևէ խլրտման, հանկարծ նետելու իրենց ահավոր յատկը և հոշումը։

Իր օթևանում բարձերին հենվել և հատակին անթարթ նայում էր Վարդանը։ Նրա մի փոքր շեղ աչքերը ոլործուն հոնքերի տակից լիքն էին մեծ մտքերով։ Ամբողջ Հայոց աշխարհը գալիս անցնում էր նրա երևակայության մեջ։ Ամենքը, ամենքը սպասում են իրեն, որ հրաշագործի։ Եվ իրոք՝ նա պիտի հրաշագործի։ Ո՞ւմ վրա է նրա հույսը։ Տապալվել է Արշակունյաց գահը, հոները բախում են Բյուզանդիո դարբասները՝ սևամորիկ ամպերի պես խուժելով Հունաստանի վրա։ Չկա Ասորիքը, չկա Հռոմը, չկան Հազկերտին սպառնացող ուժերը։ Բարձրանում է փոթորիկը, և նավը մեն-մենակ օրորվում է հուզվող ալիքների վրա։ Սատար, օգնություն է պետք, ապա թե ոչ նավաբեկությունը ակնհայտ է։

Բայց ո՞ւր է սատար, ո՞ւր՝ օգնություն։

Վերդիր է անում, կշռում է իր հայրենիքի բախտը Վարդանը և միշտ գալիս է այն մտքին, որ օրհասական է լինելու կռիվը, կամ հայ ժողովուրդը կապրի՛, կամ կանհետանա՛։ Չկա միջին վիճակ։ Շապուհի օրերն անցան։ Նա հեքիաթ էր։

Թախիծով էին նայում նրա աչքերը։ Նա լինելով ինքն իր հետ՝ ազատ հանձնվել էր խոհերին և չէր մտածում ոչ ոքի ո՛չ քաջալերել, ո՛չ հուսահատեցնել։ Պետք է ազատվել։ Ով կուզե թող քաջալերվի, ով կուզե թող հուսահատվի։ Եվ Վարդանը խորհում էր ազատության ճանապարհների մասին։

Երկար արձանացած էր Վարդանը։ Նրա արծվային քիթը և պատանդականի գորշ մազերն ու մորթին խստացնում էին նրա ջլուտ, կենտրոնացած դեմքը։

Դեպքերը գլխապտույտ արագությամբ հետևում էին մեկը մյուսին։ Երբեք իր առջև դրված չէր եղել այսպիսի ծանր առեղծ-

վածի լուծումն. թագավորության անկման հետևող քայքայված հին պետությունը կանգնեցնել առաջնակարգ, հզոր տերության դեմ։ Դիմադրելը պետք էր՝ ինչ էլ որ լիներ դրա հետևանքը, բայց ինչպե՞ս ժողովուրդը դներ կյանքի և մահու երկընտրանքի առաջ։

Ոչ, ուժեր են պետք, օգնական ուժեր։ Նա մի ազնիվ, երիտասարդ Արտակ չէ և ոչ էլ քաջամարտիկ Ատոմ։ Նա փորձված, մարտերում թրծված զորական է։ Նա գիտե, թե ինչ է պատերազմը։ Ուժեր են պետք։ Որտե՞ղ որոնել, ո՞ւմ դիմել։ Հույն զորավար Անատոլը Միջագետքում նստած աչքը գցել է Պարսկաստանին՝ կանխելու համար նրա հանկարծակի հարձակումը։ Նա հայերին չի սիրում և նրանց համար մի հույն զինվորի քիթը չի արյունի։ Պարսիկների մեջ ոչ ոք չկա, որ բարեկամական օգնություն ցույց տա հայոց։ Կան այդպիսիները, որոնց մեկի կյանքն է ազատել Վարդանը, մյուսի պաշտոնն է բարձրացնել տվել՝ բարեխոսելով Միհրներսեհի առաջ։ Բայց նրանք այդ ամենը կմոռանան՝ հենց որ կհնչի պարսկական գալարափողը։

Վարդանի հոնքերը միացան մի դժվար կնճռի կծկումով։ Նրա սևեռուն հայացքի մեջ խաղալ սկսեց մի լուսավոր շող։ Նա գտել էր ինչ-որ մի միտք, որ դուրս էր լողացել անգիտության անդունդից։ Դա նրա վաղուցվա փայփայած միտքն էր, և ահա նա կեսգիշերային խոհուն լռության մեջ եկավ, փայլեց նրա ուղեղում։ Նա վեր կացավ և երկար անցուդարձ արեց սրահում։ Նրա ստվերը մերթ անհեթեթ երկար, մերթ անբնական կարճ սկսեց փոփոխվել հատակին և պատերին։ Նա կանգնեց պատուհանի առաջ և դուրս նայեց։ Սևավոր դաշտը գնում էր դեմ առնում մթին լեռների ալիքներին, և բամբակե մշուշը ծածկում էր Տարոնի սրբազան սևաթավիշ հողը։ Ո՞վ գիտե ինչ հրդեհներ պիտի ճայթեն այս դաշտի վրա, ծուխը մլլվի երկինք, և բոցերի մեջ վազեն մայրեր՝ երեխաները գրկներին։ Ավերն ու ավարը պիտի անցնեն երկրի մի ծայրից մյուսը ինչպես ժանտախտ, ինչպես մրրիկ, ինչպես երկրաշարժ։

Ոչ, ուժեր են պետք։ Եվ նրանք կան...

Դռան վարագույրը շարժվեց, և ներս մտավ Վահան Ամատունին։

— Քունս չտարավ,— ասաց նա մռայլ, գիտեի, որ դու էլ չես քնի...

Նստեց դարակի մոտ բարձի վրա և ձեռն առավ մի մագաղաթե մատյան։ Նրա կլոր դեմքը՝ օղակված արծաթափայլ գանգուրներով՝ խոշոր, կլոր աչքերը ավելի մատենագիր էին հիշեցնում, քան Հազարապետ։ Նա սկսեց կարդալ, և շուտով մոռացավ ամեն բան։

Վարդանը կանգ առավ նրա առջև, շարունակելով հայացքը սևեռել իրեն զբաղեցնող նոր մտքի շարժումներին համաձայն։

— Ես մտածում եմ, Հազարապետ,— ասաց Վարդանը կանգ առնելով և մտածելով կրկին,— ես մտածում եմ, որ մենք այլ օգնական ուժերի մասին ևս պետք է հոգանք՝ այնուամենայնիվ։

Վահան Ամատունին թվաց, թե լսեց։

Վարդանը շարունակեց.

— Պատերազմ ի սպառումն՝ դա ինքնին կլինի։ Բայց ինչո՞ւ չփորձենք նաև այլ դաշնակիցներ գտնել։

— Այլ դաշնակիցներ չունենք, քան որոնց դիմել ենք,— արագ պատասխանեց Հազարապետը և մատյանը գրեց դարակը։

Վարդանը չբացատրեց իր միտքը։ Նա գնաց կանգնեց կրկին պատուհանի առաջ։ Ամրոցի դարբասին մի հեծյալ էր մոտենում, լսվում էր նժույգի սմբակների զրնգոցը քարերի վրա։ Հեծյալը մոտեցավ, կայծեր հանեց սալահատակի վրա նժույգի սմբակներով և դադարեց։

Պահակների և նրա մեջ խոսքեր փոխանակվեցին։ Նա մտավ բակը և այլևս չերևաց, որովհետև բակը կողքի էր։

— Ասում ես՝ այլ դաշնակիցներ չունե՞նք,— հարցրեց Վարդանը։

— Ո՞վ է այդ դաշնակիցը,— քմծիծաղ տվեց Հազարապետը և քննեց Վարդանի դեմքը։

— Ոչ դաշնակից, բայց մեզ օգնական ուժ,— պատասխանեց Վարդանը։— Դա հոներն են, Ճորա պահակի դեմ առած հոները։ Նրանք են այժմ Հազկերտի թշնամիները։ Իսկ իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է։

— Բան չի դուրս գա,— գլուխը բացասաբար շարժեց Հազարապետը։ Վայրենի ցեղեր են և ուխտադրուժ։

— Մտածիր այս մասին։ Արհավիրքը մեզ ամեն բան անել կտա։ Երկիրը փրկենք, ում միջոցով կուզի լինի այդ։

— Լավ, ի՞նչ կարող են անել հոները։

— Հոնե՞րն ինչ կարող են անել... Հոները շատ բան կարող են։ Նրանք կողողեն հյուսիսային Պարսկաստանը և Հազկերտի ուժերը կկիսեն քուշանների հետ։ Այն ժամանակ մենք կտանք հարվածը։ Աստված կաջողի...։

— Իսկ Ճորա պահա՞կը, Սպարապետ։

— Ճորա պահակը պիտի քանդվի։ Քանդենք, լցնենք հեղեղը Պարսկաստան։

— Հը՞մ...

— Հապա թողնե՞նք, որ ահռելի պարսկական զորքը ընկնի մեր վրա։ Հանուն ինչի՞։ Մենք հո չենք գնում մեռնելու, մենք գնում ենք ապրելու։

Հազարապետը մտածում էր։ Վարդանի համարձակ ծրագիրները առաջին անգամ չէ, որ զարմացնում էին նրան։ «Տե՞ս, թե որտեղերքն է որոնում»,— մտածեց Հազարապետը։

— Հոները գլխացավանք կդառնան վերջը,— նկատեց նա,— Ճորա պահակը մենակ պարսիկներին չի պահում։ Հեղեղ է, ո՞վ գիտե...

— Հեղեղ է. թող պահեն պարսիկները,— զայրացավ Վարդանը,— ապա մե՞նք պահենք միշտ Ճորա պահակը, որ պարսիկները մե՞ր վրա հարձակվեն... Զբաղմունք տանք, թող զբաղվեն։

— Մի վտանգ կա հոներից,— շարունակեց մի փոքր հետո Վարդանը,— դա Ալանաց Դուռն է, նրա հետև լցված հոները, որ շարունակ բախում են և ջանում կոտրել, լցվել Վրաստան։ Դա չպետք է թույլ տանք...

Սենեկապետը շարժում էր դռան վարագույրը։

— Սենեկապետը,— ասաց Վահան Ամատունին։

Վարդանը ծափ զարկեց։ Մտավ սենեկապետը։

— Տեր իմ, Մելքոնը եկել է, սպասում է։

— Նե՛րս բեր։

Ներս մտավ Մելքոնը, որ կլորիկ ծաղրածու դեմքով, անմազ կզակով մի բավական հասակով մարդ էր։ Հազիվ կարողանալով գեմքին լուրջ արտահայտություն տալ՝ նա խոնարհվեց դռան առաջ և կանգնեց մի ոտից մյուսն ընկնելով անընդհատ։

Վարդանը մոտեցավ նրան և չափեց ոտից գլուխ։

— Հը՞,— ասաց,— հոներենը մոռացե՞լ ես։

— Մոռանամ էլ, Սպարապետ, կսովորեմ, եթե պետք է,— պատասխանեց Մելքոնը և ուրախ դեմքով նայեց Վարդանին։

— Քանի՞ լեզու գիտես,— հարցրեց Վարդանը։

— Գիտեմ ճղբերեն, լիներեն, հեճմատակերեն... ամեն լեզու մի-մի քիչ գիտեմ, տեր իմ։

— Պարսկերենի չա՞փ։

— Դե պարսկերենը մայրական լեզու է, տեր իմ։ Տիզբոնցի եմ։

Վարդանը շրթունքները կծկեց ու սպասեց մի փոքր։

— Գիտե՞ս ինչ պիտի անես։

Երկար կանգ առավ։ Մելքոնը աչքերը հառեց նրան և սպասեց հանգիստ։

— Գիտե՞ս ինչ պիտի անես,— կրկնեց Վարդանը,— այս անգամ պիտի գնաս հոնաց թագավորի մոտ։

— Նժույգների՞ գործով։

— Ոչ, ավելի դժվար գործով։ Բացատրելու, որ հայերս դեմ չենք, եթե նրանք անցնեն Ճորա պահակը։ Միայն պայմանով, որ չհարձակվեն աղվանների, վրացիների և, իհարկե, հայերի վրա։ Թող հարձակվեն պարսիկների վրա՝ Փայտակարանի ուղղությամբ։ Մենք կքանդենք Ճորա պահակը, այստեղից էլ կհարվածենք պարսիկներին։ Մելքոնը տրորվեց կանգնած տեղում։

— Հա, ի՞նչ կա,— հարցրեց Վարդանը։

— Տեր իմ, հոներին համոզելու և շլացնելու համար շուք է պետք, ոսկի, զենք, ձիեր։ Պետք է իշխանական մի անձն, որ ներկայացնի մեր տերությունը։

— Խելացի խոսեցիր։ Հոնաց թագավորը կուզենա խոսել բարձրաստիճան մեկի հետ։ Այդ մարդը կլինի աղվանից Վահան իշխանը։ Կբերես հոների դեսպանին նրա մոտ, կամ նրա հետ կգնաս հոների թագավորի մոտ։ Դա այնտեղ կերևա։

Վարդանը մտածեց մի փոքր,— լավ, վաղվանից ընտրիր օգնականներ, որ մի շաբաթ հետո ճանապարհ ընկնես Հոնաց աշխարհը։

— Մարդ հարկավոր չէ, տեր իմ, նրա պատճառով իրեն էլ կսպանեն, ինձ էլ։ Մենակ որ լինեմ գլուխս կազատեմ։

— Բարի, ինչպես հարմար է։ Գնա, հանգստացիր։

Մելքոնը գնաց։

— Պատերազմը այս տարի չի լինի,— ասաց Հազարապետը։

— Պատերազմն սկսված է...

Հազարապետը հարցական հայացք շինեց։

— Ամա՛ռս կլինի,— կրկնեց Վարդանը։

— Բայց դեռ պատասխան թուղթը պիտի տեղ հասնի։

— Դատարկ բան է, անշուշտ զորքը շարժվում է այս բոպեին։ Պետք է շտապենք։

— Զորքը ո՞ր կողմով է շարժվում,— լարվեց Հազարապետը,— լուր ունե՞ս։

— Հարկավոր չէ լուր։ Զորական գործն այդպես է. արքունիքները խոսում են, իսկ զորքը շարժվում է։

— Բայց ո՞ր կողմից է շարժվում,— կրկնեց հարցը Հազարապետը։

— Աղվանից աշխարհով։ Պարսիկները մեզ կհարվածեն ոչ հարավից, այլ հյուսիսից, որտեղից չենք սպասում։

— Հեռու չէ՞։

— Հյուսիսից՝ տիրելու համար աղվաններին և վրացիներին, զսպելու հոներին—մեր վերջին հույսը։

— Հավանական է,— կենդանացավ Հազարապետը։

— Ապա՞... Շատ եմ վախենում Պարսկաստան կանչվենք։ Կստիպվենք գնալ։ Հարկավոր է հարվածները պատրաստել այստեղ, հիմա և այն ժամանակ և մեր բացակա դեպքում տեղապահ կարգել, դա երկար գործ է — երկար, դժվար... Ո՞վ գիտե նաև գուցե չվերադառնանք։

— Որ չվերադառնանք՝ երկիրը կավերվի։

— Այնպես պիտի անենք, որ չավերվի։

Վարդանի այս հուսադրական, հաղթական մտքերը վառեցին Հազարապետին։ Նա Վարդանին լավ էր ճանաչում, գիտեր նրա բնավորությունը, երբեք չպարծենալ, գլխապտույտ չունենալ։ Եվ ահա, երբ այդպիսի մարդն ասում է, այնպես կանենք, որ չավերվի՝ պետք է հավատալ։ Նա գիտեր Վարդանի անհողդողդ կամքը։ Երբ վճռեց՝ այլևս երկաթի համառությամբ հետամուտ էր լինում իր վճիռն ի կատար ածել և նպատակին հասնել։

Ներս մտավ մի բարձրահասակ, ոչ շատ երիտասարդ անձնավորություն՝ իշխանական արտաքինով։ Նրա մի փոքր շեղ նշաձև աչքերը և դեմքի չորությունը հիշեցնում էին Վարդանին։ Նա նույն-

պես ինքնազուսպ էր և Վարդանի պես շրթունքները սեղմ էր պահում։

Նա մի պահ կանգնեց վարագույրի առաջ։

— Դո՞ւ էիր, մի փոքր առաջ մտար ամրոց,— հարցրեց Վարդանը։

— Ոչ, Սպարապետ, Մելքոնն էր։ Ես գնդումն էի, վազ եկա ամրոց, որ հանգստանամ։

— Շատ չես հանգստանա, պիտի գնաս տեսնես իշխանական գնդերը։ Տեղեկություն ստացա՞ր մյուս իշխաններից։

— Ստացա։ Պատրաստ են։ Գնունյաց, Արշարունյաց, Վանանդյա, Աբեղենից գնդերը։ Տեղեկություն չունեմ Պալունյաց, Խորխորունյաց, և ի՞նչ եմ ասում, մյուսների գնդերից։ Ահավասիկ ցուցակը։

— Սպառազենքի վիճա՞կը...

— Վատ է... Ամեն տեղ թերի է։

Եկվորը լռեց և կանգնած մնաց բարձի մոտ, ուր նրան ցույց էր տվել նստելու Վարդանը։

— Սուրհանդակներ կուղարկես իշխաններին, որ անմիջապես լրացնեն սպառազենքը։ Կգնաս կատուգես, կտեղեկացնես, և մի տասնհինգ օրից հետո կգնամ կընդունեմ գնդերը։

— Հրամանդ ի կատար,— ասաց եկվորը քնաթաթախ հոգնած աչքերը անեռած հատակին։

Նա ըստ երևույթին շատ էր չարչարվում. հոգնել էր և հազիվ էր կանգնում ոտի վրա։ Նրա նիհարած, գեղնած դեմքը ցույց էր տալիս, որ նա կատարում է զինվական ծանր գործ և չի կարողանում հացնել ոչ թե թերանալով, այլ որ գործն ահագին էր և անսպառ։

— Սա քեզ համար Մահվիտոտ գետը չի և ոչ էլ հոնական արշավանքները,— շարունակեց հանդիմանալ Վարդանը,— սա այնպիսի պատերազմ է, որ իմ ու քո հոր հարսանիքը պիտի տեսնենք։

Ու մոտ գնալով քիթը մոտեցրեց նրա քթին, խիստ նայեց և շեշտեց.

— Արյաց տերության դեմ ենք դուրս գալիս, հասկանո՞ւմ ես ասա...

— Հասկանում եմ, Սպարապետ,— պատասխանեց եկվորը հեզ ու խոնարհ, բայց...

— Ի՞նչ, պիտի արդարանա՞ս... Թո՛ղ,— կտրեց Վարդանը,— պատերազմի գործում արդարացում չկա։ Հաղթեցիր՝ արդար ես, պարտվեցիր՝ մեղավոր ես։ Հազկերտը իմ ու քո հոր տղան չէ։ Դո՛ւ ես իմ ու քո հոր տղան։

Հազարապետը ծիծաղեց։

— Դե որ նա քո և իր հոր տղան է, Վարդան, մի՛ շատ կըշտամբիր, տես կաշին ու ոսկորն է մնացել Համազասպ իշխանի։ Եղբայրդ է՝ ներիր։

Վարդանը մեղմ ժպտաց։ Բայց և իսկույն կրկին լրջացավ։

— Ոչ, ախր բանն այն է, որ ժամանակը մեզ չի սպասում. նա կգա գլխներիս կկանգնի Հազկերտի հետ։ Գնդեր ենք կազմում առանց սպառազենքի։ Դու գիտե՞ս թե ինչ պահեստ է պետք։ Պատերազմը պիտի գնա ի սպառումն հակառակորդի։ Այլապես կորած ենք։

Վարդանը լուռ անցուդարձ արեց օթևանում, հետո եկավ և կանգնեց Հազարապետի առաջ.

— Ուշանո՞ւմ ենք, Հազարապետ, հանցավո՞ր կերպով ուշանում ենք...

Հազարապետը վեր նստեց։

— Մի՞թե լրջորեն կարծում ես անպատճա՞ռ այս ամառ կսկսվի պատերազմը։

— Պատերազմն սկսված է, ասացի, Հազարապետ, հին զորական ես, հասկացիր այս։ Թշնամին թշնամու դեմ որոշվե՞ց՝ պատերազմն սկսված է։

Հազարապետը սթափվեց կարծես այս մտքից։ Այո, իրավացի է Սպարապետը։ «Զարմանալի են զորականները, ինչպես լավ են զգում պատերազմը»,— մտածեց նա։

— Պատերազմը ճակատամարտ չէ։ Ճակատամարտը վերջն է պատերազմի։ Կանգնա՞ծ է պարսից բանակը Ապար աշխարհում, կանգնա՞ծ է Փայտակարանում, դավադրո՞ւմ է Հազկերտը արքունիքում. փրփրո՞ւմ է մեր դեմ։ Վերջապես կազմո՞ւմ է համալրումներ իր բանակին։— Ուրեմն պատերազմն սկսված է։ Երբեք վաղ չէ,— սկսիր պատրաստվելը՝ ահա զորականի խոսքը։

. . Համազասպը երկյուղած ու հարգանքով լսում էր իր եղբայր Սպարապետին։

— Ճշմարիտ է, Սպարապետ, ես թերացա սպառազենքի մեջ։ Թերևս կարելի էր այդ կողմում ճնշում անել իշխաններին։ Բայց ես ժամանակը գործ դրի ստուգելով գնդերի ռազմունակությունը։ Մեկ-մեկ ստուգել եմ զինվորներին։ Հետո՝ գիշերային զորախաղեր անել տվի տաժանելի ձորերում։ Ստուգեցի նժույգների սըմբակներն ու կոճերը։ Ոչ մի վիրավորում։ Փայլուն արշավներ եղան։ Դաշտային գրոհներ կազմեցի. շատ գոհացուցիչ էին։ Դե ես իմ ուշադրությունը դարձրի նախ մարտիկների ընտրության։ Առանց մարտունակության ինչի՞ է պետք սպառազենքը։ Ժամանակը դրա վրա կորավ։

Վարդանը լսում էր ուշադրությամբ։ Նրան դուր էր գալիս Համազասպի հեզ ու խելացի բացատրությունները։ Բայց դարձյալ գոհանալ բանը նրա բնավորության մեջ չկար։

— Լավ է, բայց սակավ է։ Ամեն ինչ միասի՛ն, միաժամանա՛կ։ Մարդի՛կ գտիր, անե՛լ տուր։ Գործը մի՛ վերցնի մենակ քո վրա։ Բայց հսկի՛ր, հսկե՛լ տուր, ստուգի՛ր, ստուգե՛լ տուր։ Հոգինե՛րը հանիր։

— Դե, ճշմարիտ է, ի՞նչ խոսք,— համաձայնեց Համազասպը համեստորեն,— կաշխատեմ ասածիդ պես։

— Այո՛, այո՛, ա՜յ... դեռ կաշխատես, կաշվիցդ էլ դուրս կգաս՝ կտեսնես, որ սակավ է, սակավ է։ Պատերազմը խժռող գազան է։ Աչքդ խփեցիր բացիր՝ արդեն սպառել է ամեն ինչ։ Դե, գնա քնիր, որ վաղը հազար գործ ունես։

— Գնամ,— շարժվեց Համազասպը դեպի դուռը. բայց մեջտեղում կանգնեց և ասաց.

— Մոկաց Արտակ իշխանից լուր չկա, Սպարապետ։

— Սուրհանդակ ուղարկե՞լ ես...

— Ուղարկել եմ Ռշտունյաց ամրոցը։ Շտապ հանել եմ տրվել այնտեղից։ Գնացել է իր աշխարհը, բայց այնուհետև լռել է։

— Ձեպով երկրորդ սուրհանդակ ճամփիր, թող իսկույն ևեթ լուր տա գնդի մասին։ Քնա՞ծ է, թե նրան էլ պիտի դրդենք։

— Առավոտ կուղարկեմ սուրհանդակ,— ասաց Համազասպը։

— Այս իսկ պահիս ուղարկիր,— կտրեց Վարդանը։— էլի քնեցի՞ր...

Համազասպը թախծալի ժպտաց։ Նա ասատիկ հոգնած էր։ Հանկարծ նա գունատվեց, երերաց և ընկավ ուշաթափ։

— Վա՛հ, ի՞նչ եղավ,— վրա թռավ Հազարապետը։

— Ոչինչ,— անվրդով ասաց Վարդանը,— հոգնած է։

— Ջո՛ւր բեր,— հրամայեց Հազարապետը սենեկապետին, որ թրմփոցի վրա ներս էր վազել։ Նա դուրս գնաց։

Վարդանն սկսեց անցուդարձ անել, երբեմն միայն հայացքը սահեցնելով ուշաթափ Համազասպի կողմը։

Սենեկապետը ջուր բերել ավեց, որով ցնցղեցին Համազասպի ճակատն ու դեմքը։ Սա ուշքի չէր գալիս։ Միջամտեց Հազարապետը, որ մի փոքր էլ վախեցած էր։ Տագնապով նայեց Վարդանին։ Վարդանը չմոռացավ ուշաթափվածին և ապատում էր, որ վերջացնեն գործողությունները։ Վերջապես Համազասպը սթափվեց և նստեց։ Նրան ջուր տվին, խմեց, չորս կողմ նայեց, թախծալի ժպտաց, հետո վեր կացավ և սենեկապետի օգնությամբ դուրս գնաց։

Վարդանը նրա հետևից ասաց.

— Սուրհանդակն իսկույն ուղարկիր։ Առավոտ վաղ եկ մոտս։

Համազասպը գնաց։

— Խե՜ղճ իմ Համազասպ։ Շատ է հոգնում։

Վարդանը հանգիստ նայեց Հազարապետին և ինչ-որ այլ մտքով տարված՝ ասաց.

— Ուրեմն դեռ չորս գնդերից կա քիչ թե շատ բավարար տեղեկություն։ Մնացածներն ապատիկ են... Ո՜չ, տանո՜ւլ կտանք, ամե՜ն ինչ տանուլ կտանք այսպես։— Սենեկապե՛տ,— կանչեց դեպի դուռը։

Սենեկապետը ներս վազեց.

— Նժույգը թող դուրս քաշեն։

— Ո՞ւր ես գնում,— անհանգստացավ Հազարապետը։

— Խորխորունյաց նախարարի մոտ, այն կողմը խուլ է ինչ-որ...

— Այո, կարծես թե...

— Պատի լռություն է տիրում այդ աշխարհում։ Կասկածելի է...

— Բայց հիմա՞ պիտի գնաս։

— Վազն ուրիշ գործ ունեմ։ Եվ հետո... անձամբ տեսնեմ վիճակը։

— Մի փոքր հանգստացի՛ր։

— Հնար չկա։ Դու մնա՛, ես կգամ վաղը կամ մյուս օր,— հետո դիմեց սենեկապետին։— Կպատվիրես, որ Համազասպ իշխանին թողնեն քնել մինչև լուսաբաց. թող հանգստանա։ Շատ հոգնած գործից էլ օգուտ չկա։ Հազարապետ,— դարձավ նա Ամատունուն գործնական շեշտով,— կազմել տուր թղթեր Դիմաքսենից։ Առավեղենից և Զյունական իշխաններին։ Նրանք լավ տեղյակ չեն գործին, թող գործի անցնեն։

— Բարի, Սպարապետս,— ասաց մտերմական պաշտոնականությամբ Հազարապետը և ժպտաց։

Վարդանը հրաժեշտ տվեց և գնաց հագնվելու։

Մի փոքր անց ամրոցի բակում դուփեցին նժույգները, դուրս եկան դարբասից և հետզհետե հեռանալով գիշերային ճանապարհի ուղղությամբ՝ լռեցին։

— «Անդադար հոգի»,— մտածեց Հազարապետը և վերցնելով մատյանը սուզվեց նրա երևակայական աշխարհը։

Շուտով նրա ծեր աչքերի արծաթաբաշ գլուխը խոնարհվեց մատյանի վրա, և օրերով լի ծերունին նիրհեց հենց այդ դիրքում։

***

Ամբողջ գիշերը Վարդանը ձիավարում էր։ Բզնունյաց ծովից փչում էր սառը քամի և խլացնում ճանապարհի շուրջն ամեն մի ձայն։

Վարդանը մտքերում կորած՝ աչքը գետին էր գցել և միևնույն կետին նայելով նրան թվում էր, թե գետինը ետ է հոսում գետի նման։ Նա սկսեց նիրհել։

Զգոն էր միայն Արծվին։ Երբեմն շրջվում էր և նայում ետ։ Ոչ ոք, ոչ մի շունչ, ոչ գազան, ոչ թռչուն։ Երբեմն մարդկային կերպարանքներ էին ցցվում որևէ բլրի ծայրին, որ սկզբում գուրս էին վազում խավարի միջից, պատրաստվում արձակել իրենց նետը կամ նիզակը, հետո անշարժանում, քարանում և մոայլ հայացքով ճանապարհ դնում նրանց։ Աստղերը հեռուն փողփողացող

մանր բոցերի նման դողդողում էին, ծորելով երկրի վրա ցուրտ և օտար, աղոտ լույս։

Նժույգները մերթ զուգաձայն և մերթ իրար կոտրող դոփյունով միաչափ ու այլաչափ վազում էին, տեղ-տեղ դանդաղելով և քայլք առնելով։

Քամին ականջի մեջ փչելով հեռավոր մարտի կամ ալեկոծության, վայնասունի հնչյուններ՝ տագնապ էր բերում հոգուն։ Քարերի տակ, բլուրների կատարներին, փոսերի մեջ փսփսոցներ էին և շշունջներ։ Երբեմն՝ թվում էին դավադիր։

Վարդանը նիրհելով, երբ նժույգը թռչում էր որևէ առվի կամ փոսի վրայից, զարթնում էր և շուրջը նայում։ Ոչինչ չէր երևում, բացի անվերջ, անսպառ, առատ քարաբեկորներից։ Երբեմն որսում էր աչքով դիմացը կանգնած՝ խաբուսիկ մարդակերպ քարաբեկորները և փորձված աչքով կռահելով նրա ինչ լինելը՝ կրկին գլուխը կախում էր և նիրհում։ Մի տեղ միայն, աջակողմյան հարթության վրա նկատեց մի սևինք, որ երևաց և արագ սուզվեց գիշերային խավարի մեջ։

— Թա՛ք, թա՛ք, թա՛ք, թա՛ք... Թքա՛, թքա՛, թքա՛, թքա՛,— թմբկահարում էին նժույգները և քուն բերում։ Մի տեղ Վարդանի նժույգը կանգնեց, ականջները ցցեց և ապա կրկին վազեց առաջ։ Վարդանը զարթնեց և ընազդաբար նայեց դեպի ձախ։ Մոտակա բլրի լանջով կրկին մի սևինք սողում էր նույն ուղղությամբ, ինչ-որ իրենցը։

Ետ նայեց։

— Հա՛, Սպարապե՛տ... — մոտ թռավ Արծվին։

— Մեզ հետապնդում են,— ասաց Վարդանը հասարակ եղանակով։

— Գիտեմ, Սպարապետ,— նույն եղանակով ասաց Արծվին անվրդով՝ բաց, գանգրահեր գլուխը բարձր բռնած և սաղավարտը գոտկից կախած, որ լավ որսա գիշերային ձայները։

Վարդանն այլևս դադարեց քնելուց։ Բայց և չէր անհանգստանում։ Երբեմն միայն աչքի տակով նայում էր աջ կամ ձախ և ասպանդակում։

Նրանք երկար ձիավարեցին, և դեռ ոչինչ չպատահեց։ Իրո՞ք հետապնդում էին նրանց...

Վարդանը ականջը կախել էր քամու փսփսոցին, որ տիրել էր բոլոր ձայներին։ Համատարած «ը՛ս՛ս՛սս» ձգվող սոսափյունի մեջ երբեմն ընկնում էր մի ընդհատվող, դիպչող «ը՛թ, ը՛թ» անող ձայն, քարի գլորվելու, սմբակի դոփելու, կամ զենքի շրխկոցի բնույթի։

Վարդանը կանգնեցրեց նժույգը, նայեց Արծվիին.

— Կարծում ես մի՞ հոգի է...

— Միշտ մի քթքթոց է քամու մեջ։

Վարդանը ասպանդակեց և կրկին գլուխը կախելով նժույգի բաշին՝ սկսեց նիրհել։ Լուսաստղը վեր լողաց։ Երկինքը մթնեց, բլրաշարքերը սևացան, բայց մի փոքր հետո երկնքի հում լույսը գորշացրեց բոլոր առարկաները։ Արևելքը գունատվեց։ Աջ կողքից ուղեկցել սկսեց սևաստվեր մի հեղեղատ, որ մերթ հեռանում էր, մերթ մոտենում։ Նրանք անցել էին այդ հեղեղատը դեռ շատ առաջ, երբ նա աննշան էր։ Հիմա նա քանի գնում խորանում էր։ Արծվին շարունակ նայում էր այն կողմը։ Հեղեղատը միտում էր պտույտ տալ, անջատվել իրենցից և թեքվել դեպի լիճը՝ հալվելով նրա հարթ եզերքների մեջ։

Վարդանը կանգնեց.

— Ջերևա՞ց...

— Անձդ պահիր, Սպարապե՛տ,— անհանգիստ մի տեսակ հրամայեց Արծվին և իր նժույգը մոտեցնելով Վարդանի նժույգին մտավ նրա և հեղեղատի միջև՝ պատվարելով նրան։— Քշի՛ր,— ծղրտաց Արծվին։

Ինչ-որ քար գլորվեց կարծես ձախակողմը։ Կամ գուցե քամին էր խաբն տվեց լսելիքի մեջ։ Արծվին սակայն տագնապով աջ էր նայում շարունակ։

Հանկարծ Վարդանի գլխին շատ մոտիկ օդը շաչեց։

— Նետ էր... — սրվեց Վարդանը։

Մինչ Արծվին կպատասխաներ կամ Վարդանը շարժում կաներ՝ երկրորդը տխրաձայն նվաց կրկին նրա գլխի մոտ։ Պարզ էր. նետաձիգը հեղեղատի մյուս ափին էր, որ օգտվելով իր և Վարդանի միջև ընկած ձորակից, մտել էր քարի հետևը և այնտեղից նետահարում էր։

Արծվին ցատկեցրեց նժույգը, թռավ դեպի ձախ և դառնալով դեպի հեղեղատը, տեղ որոնեց անցնելու։

— Ետ կաց, չես կարող,— հրամայեց Վարդանը։

Բայց Արծվին լսեց. նա կատաղել էր, իսկ այդպիսի բոպե-ներին նա խելագարվում էր։ Նա մի երկու պտույտ գործեց հեղե-ղատի ափին։

Նետաձիգը իրար հետևից նետահարում էր։ Մի նետ մխվեց Վարդանի ձախ ձեռի մեջ, բայց թեք։ Վարդանը պոկեց նետը։ Արծ-վին նժույգի գլուխն ուղղեց դեպի հեղեղատը։

— Մի՛, ասում եմ քեզ, ե՛տ արի... չես կարող,— գոչեց Վար-դանը։

Բայց Արծվին իրեն նժույգով մեկ նետեց հեղեղատը։ Ան-շուշտ նա ջարդվեց այնտեղ քարերի մեջ։ Վարդանը քշեց այն կողմ, թեև նետաձիգը շարունակում էր իր դարանակալի գործը։ Հեղեղատի մեջ ըստ երևույթին անցուղի կար։ Քարեր գլորվեցին։ Արծվին նրա միջով քշելով նժույգը՝ տեղ էր որոնում դուրս գա-լու։ Գտավ։ Դուրս ելավ մյուս ափը և սկսեց դիվական թռիչքնե-րով դեսուդեն ընկնել։ Մեկը քարերի արանքից դուրս պրծավ և որտեղից որ էր, կարծես գետնի տակից հանեց նժույգը և քշեց դեպի լճափի հարթությունները։ Արծվին ընկավ հետևը։ Արդեն բա-վական լույս էր, և երևում էր երկու ճարպիկ հեծյալների օրհա-սական արշավը։ Նրանք մերթ հեռանում էին իրարից, մերթ մո-տենում։ Փախչողը մերթ ետ էր ծռվում և բաց թողնում նետը։ Արծվին այդ ժամանակ մոտենում էր, բայց փախչողը, որի նը-ժույգը վազկան էր և կատաղի, թոցնում էր նրան քամու պես։ Վերջապես Արծվին հասավ նրան։ Փախչողը հանեց սուրը և հար-ձակվեց Արծվիի վրա։ Պսպղաց նաև Արծվիի սուրը։ Սկսեցին պտույտ տալ, ծառանալ իրար վրա, հարվածներ իջեցնել իրար վրա, որ վահանները կասեցնում էին։ Փախչողը զոռեց, տաքա-ցավ և հանկարծ թեքվեց վայր և սուրը վեր բարձրացնելով հար-վածեց Արծվիին։ Բայց Արծվին սրով կասեցրեց, ետ ցատկեց, մի ահագին պտույտ անելով եկավ, թռավ հակառակորդի կողքով և հանկարծ սրով ձաղկեց հակառակորդին։ Սա ընկավ։ Նրա նժույ-գը գլուխը բարձրացրեց ու փախավ։ Արծվին իջավ, կռացավ ըն-կածի վրա։ Հակառակորդը թանձր հոնքերով և թավ ընչացքներով չլուտ, ոչ երիտասարդ մարտիկ էր։ Նա ընկած էր և բերանը բաց նայում էր Արծվիին։

— Ո՞վ ես,— հարցրեց Արծվին՝ կռանալով նրա դեմքին։

Մեռնողը չխոսեց և շարունակեց նայել Արծվին։ Նրա հայացքը պղտորվում էր։

— Որտեղացի՞ ես, ասա, արագ թաղեմ,— գոչեց Արծվին՝ ոտը դնելով նրա ծնկան։

Մեռնողը շրթունքները շարժեց, հազաց և բերանից բաց թողեց փրփրած արյան կոհակը։ Նա կոծկաց։

— Ասա՛, ո՞վ է ուղարկել քեզ։

— Նախարարը,— խռպոտ լփռտեց մեռնողը և սեղմած բռունցքն սպառնալի թափահարեց Վարդանի կողմը։ Բռունցքը սակայն թուլացավ և զարկվեց գետնին։

— Սպարապետի՞ն էիր սպանում...

Մեռնողը խառացնում էր։

— Սպարապետի՞ն... հը՞, շա՛ն որդի... դե՛ գնա։

Մեռնողը ցնցվեց, փորձ արեց նստելու, կրկին ընկավ մեջքի վրա, հետո կողքի և գլուխը թաղելով թևի տակ, մյուսը անհեթեթ տարածելով հետևը գետնին անշարժացավ։

Արծվին տնտղեց նրան ոտից գլուխ, կռացավ նայեց դեմքին, մոտից, հեռվից խուզարկեց աչքով նրա հագուստը և նստելով նժույգը, արյունոտ սուրը ձեռից կախ, քշեց դեպի Սպարապետը, որը հանգիստ արշավում էր հեղեղատի մյուս կողմը։ Արծվին նժույգը վարեց դեպի հեղեղատի վերջավորությունը և պտույտ անելով՝ սլացավ դեպի Վարդանը։

— Հա, ո՞վ էր, ի՞նչ էր,— հարցրեց Վարդանը վիրավոր ձեռը թափ տալով և արյունը թոցնելով։

Արծվին խկույն ձեռը տարավ նժույգի գավակը, թամբի տակից դուրս քաշեց մի տոպրակ և հանելով վիրակապը վազեց Վարդանի վերքին և զգույշ մաքրելով կապեց։

— Նժույգը վիրավոր է,— ասաց Վարդանը։

— Վիրավո՞ր... — խոցված ցնցվեց Արծվին և նայեց Վարդանի նայած կողմը, իր նժույգի գավակին։

— Վա՜յ աչքս կուրանա, վա՜յ աչքս կուրանա, ի՞նձ գար վերքը. գետի՛նը մտնեմ ես...

Այս ասելով իջավ նժույգից և, արցունքները կաթեցնելով ու խմելով, սկսեց սրբել նժույգի վերքը և վիրակապին ինչ-որ խմոր գեղ քսելով՝ կպցրեց վերքին։

Հետո հեծկլտաց։

— Հա, ի՞նչ է,— կիսաժպիտ ու կիսաբարկացած հարցրեց Վարդանը։

— Ասել է, վերքը վրան քշում էի խեղճ անասունիս... բա խի՞ղճ է...

Ու թևով սրբեց ծռմռված բերանը։

Վարդանը, որ ճանաչում էր Արծվիին և գիտեր նրա կարծր բնավորությունը, գորովանքով դիտեց նրա երեխայական այս թուլությունը և քթի տակ ժպտաց։

— Դե՛, ճանապա՛րհ։

Արծվին հառաչեց և թռավ նժույգի մեջքին։

Գնացին։

Վարդանը հանկարծ մի բան հիշողի պես արագ ետ շրջվեց.

— Հա, չիմացա՞ր ով էր։

— Մեռավ, տեր իմ։ Հարցրի՝ ով է ուղարկել, ասաց նախարարը, բայց խոխոռաց, բան չհասկացա։

— Նախարա՞րը... — հետաքրքրվեց Վարդանը և շրթունքները սեղմեց,— ո՞ր իշխանը տեսնես։

— Ոշտունցու հագուստ էր, Սպարապետ, բայց... ոտի փաթաթանը այս կողմի մարդու էր։

— Ո՞ր։

— Խորխոռունցու։ Սուրն էլ այս կողմի էր։

— Ասել է քո նկատումով խորխոռունցի՞ էր։

— Չեմ իշխում ասեմ, Սպարապետ։ Երկու տեղի նշանները խառն էին։

— Է՛հ,— հառաչեց Վարդանը և ինքն իրեն շարունակեց տխուր և դառն,— մխիթարական չէ՝ թե խորխոռունցի էր և ոչ ոշտունցի կամ ոշտունցի էր և ոչ խորխոռունցի։ Հայ էր և նախարարի ուղարկած դարանակալ։ Է՛հ,— գլուխը թափ տվեց դառնությամբ և ասպանդակեց նժույգը։

Այժմ նրանք ընկել էին լճի եզերքը և գնում էին խաղաղ ընթացքով։ Վարդանը նայում էր լճին, որի ափերի մարգարտանման փրփուրները երիզում էին ժանեկավոր ժապավեններով։ Ալիքները գլորվելով դեպի ափը՝ ոլորվում, կոտրվում և գալիս փշրվում էին արծաթ հուլունքների շեղջերով։ Տեղ-տեղ ալիքների վրա կոհակների մեջ սուզվում, դուրս էր լողում ճայի գլուխը։ Հյուսիսարևելքում Սիփանը փռել էր իր սպիտակ վրանը։

Ճանապարհն օրորել սկսեց Վարդանին։ Նա աչքերը կիսափակ՝ հայացքով գծելով գետինը, որ ետ էր հոսում ծաղկավառ գորգի պես, սկսեց նղղալ ինչ-որ մեղեդի։ Հետո ձայնը բարձրացրեց ավելի.

— «Լո՜ւյս, լո՜ւյս, լո՜ւյս,
Բարի՜ լուսալույս,
Արևագալի՜ լույս»։

Արծվին վերագտավ իր մշտական տրամադրությունը։ Կրկին բերանը կիսովին բաց, ցուցադրելով ցոլուն ճերմակ ատամնաշարը, նայեց իր թեթև հեգնական, բայց ուրախ ու անմեղ աչքերով։ Նրան դուր էր գալիս իր Սպարապետի հեթանոսական երգը։

Արդեն նժույգները փնչացնում և փրփրակալած ու քրտնամբխած երբեմն քարշ էին տալիս ոտները։ Արևի ոսկեգունդը հուրհրաց ծովի վրա։ Կրակեցին ալիքները և ծիծաղելով սկսեցին խայտալ։ Դիմացը ծովի ափին շառագունել էր իշխանական քաղաքը և պարսպապատ ամրոցը։ Ծուխերը կապտավուն ու բարակ հոլովվում էին դեպի վեր։

Ճանապարհին մի փոքրիկ գյուղի գետնափոր խրճիթների կտուրներին նստած էին մի խումբ ծերունիներ և զրույց էին անում։ Վարդանը մտավ գյուղ, և երբ անցավ ծերունիների մոտով, նրանք վեր կացան արագ և երեսները խաչակնքեցին։ Վարդանն անցավ՝ չնկատելով այդ։ Դռնից դուրս նայեց և նախ՝ Վարդանին և ապա՝ Արծվին դիտեց ու մանր ծիծաղեց մի դեռատի ոսկեհեր աղջիկ։ Խրճիթներից մեկից հասնում էր նոր ձու ածած հավի կըշկըշոցը։ Մի շուն՝ այն է պիտի սկսեր հաչել՝ ետ մտածեց, ծմրաց և կիսահաչ բերանով հորանջեց մնաց։

Դուրս եկան գյուղից, գնացին դեպի քաղաքը։

Երբ մոտեցան, քաղաքադռան պահակներն իրար անցան և ընդառաջելով կանգնեցին խոնարհ։

— Տա՞նն է խորխոռունյաց տերը,— հարցրեց Վարդանը։

— Ինչպես հրամայեցիր, Սպարապետ։

Վարդանը նժույգը քշեց քաղաքադռնից ներս։ Քաղաքի ժողովուրդը նայեց և ճանաչելով նրան՝ հոսանք տվեց երկու կողքից։ Երիտասարդներն իրար անցած, հետաքրքիր, հևալով շրջա-

պատեցին Վարդանին։ Նրանցից մեկը անկարող էր զսպել իրեն՝ սրտատրոփ ասաց.

— Սպարապե՞տ...

Վարդանը սուր նայեց նրան և հազիվ զսպեց ժպիտը։

Մյուսները քաջալերվեցին և ավելի սեղմեցին օղակը։

— Տա՞ր մեզ, Սպարապետ,— ձայն տվեց մի համարձակը։

Մյուսները վրա բերին.

— Տա՞ր, տա՞ր, տա՞ր...

— Մենք էլ ենք ուզում։

Վարդանը անպատշաճ համարեց ուրիշ իշխանի քաղաքում ցույց տալ իրեն տեր ու տնօրեն, ուստի՝ միայն բարյացակամ նայեց երիտասարդներին և ասպանդակեց նժույգը։ Շտապով նա կանգ առավ միջնաբերդի դռանը։

Դուրս եկավ Գագիշոն և պատշաճ արժանապատվությամբ ներս հրավիրեց Վարդանին։ Նա ավելի ուշադիր, ուրախ և ակնածու վերաբերվեց Վարդանին, քան Արտաշատում։ Դա կասկածելի թվաց Վարդանին։ Նա լարվեց և սկսեց աննկատելի հետևել Գագիշոյի ամեն մի հայացքին ու շարժումներին։ Բայց Գագիշոն համոզիչ հանգիստ էր և ուղիղ էր նայում Վարդանի աչքերի մեջ։ Ո՞րն էր «նախարարը», որ դուրս էր թռել սպանված դարանակալի խուզոտ կոկորդից... Ի՞նչ Ռշտունյաց երկրի հագուստ էր, ի՞նչ կասկածելի խորխորատնցու ոտաշոր։ Եվ սահմա՞նը, ուր պատահեց դեպքը։ Բայց որտեղի՞ց էր սկսել հետապնդել դարանակալը։ Սրանք դժվար հարցեր էին։

Գագիշոն Վարդանին առաջնորդեց իր սրահը, որ ծովահայաց գողտրիկ սենյակ էր, արևի լույսով հարբած։ Գագիշոն սրահը զարդարել էր ամենաընտիր մորթիներով, որոնց մեջ աչքի էր ընկնում երիտասարդ վագրի մորթին՝ նրա բարձի հետևի պատին փակցրած։ Սրան հովանի էր անում իր փռած թևերով ճախրող արծիվը։ Անկյուններում դրած էին բագիններ հիշեցնող եռոտանի բրոնզե պատվանդաններ, որոնց բաժակները լիքն էին ծովի ծիծաղկոտ, գույնզգույն խճաքարերով։ Դարակներում դրած էին ոսկեկազմ մատյաններ։ Իսկ հատակը ծաղկաշար գորգերի նուրբ մանրանկարները խտիտ էին բերում նայողի աչքերին։

Գագիշոն բարձ հրամցրեց Վարդանին և մի ժպտով, որ

անախորժ էր նրա գեմքին, բայց և զուրկ չլինելով խելքից հաճելի էր՝ ողջությունը հարցրեց։ Ապա անցան գործին։

— Հազվագյուտ ես երևում իմ աշխարհում, Սպարապետ,— ասաց Գադիշոն։

— Ժամանակը գողանում է մարդու կյանքը,— ասաց Վարդանը,— թերանում ես, չես հասնում, ուշանում ամեն տեղ։

— Մտքովս չէր անցնի, որ կհրամայես մեր կողմերը,— ասաց Գադիշոն։

— «Հեռացնում է իրենից»,— անցավ Վարդանի գլխով։

— Այնպես անակնկալ եկար... մինչ եթե իմանայի, խընդրակներ կուղարկեի նախարարներին, միասին կհանդիպեինք քեզ, կերթայինք որսի։

Վարդանը հառաչեց.

— է՛, որսն էլ անցավ, որսորդն է՛լ... տաժանելի օրեր եկան, պետք է հաշիվ տանք երկրին։

Գադիշոն փակ հայացքը պտտեցրեց հատակին և լռեց։

— Զորագունդդ կազմո՞ւմ ես,— հարցրեց Վարդանը։

— Նո՞ր, նո՞ր, Սպարապետ։ Չեմ կարծում, թե այս տարի պատերազմ ունենանք։

— Ունենանք չունենաք՝ զորագունդը վնաս չի տա,— նկատեց Վարդանը լուրջ շեշտելով։

— Կանենք, մի անհանգստանա, Սպարապետ։

Վարդանը չգիտեր ինչից սկսել, որ կարողանար պարզել դարանակալի առեղծվածը։ Խոսակցությունը չէր կպչում։ Երկու կողմն էլ հանգիստ չէին խղճով։ Վարդանը մտածում էր դարանակալի մասին, բայց չէր կարողանում կռահել Գադիշոյի մտքերը։ «Արդյո՞ք սա...»։ Շատ էր Գադիշոն հանգիստ և շատ էր երկար նայում Վարդանին այնպիսի ազատ, համառ, մնայուն հայացքով, որ դժվար էր նրա մեջ մի նշույլ որսալ ինչ-որ դարանամուտ մտքի։ Այդ հայացքը խոսում էր, մտածում։ Այդ հայացքը նայում էր բոլորովին անկախ Գադիշոյի զրույցից և նայում էր ընդմեջ Վարդանի աչքերից, թափանցելով ավելի հեռուն։ Նա խոսում էր մի բան և մտածում այլ բան։ Դա պարզ էր, բայց Գադիշոն առհասարակ ծածկամիտ, ինքնամփոփ մարդ էր։ Այդ գիտեր Վարդանը։ Նա, իհարկե, ոչ մի ակնարկ չարեց դարանակալի մասին։ Բայց զարմանում էր, թե ինչու Գադիշոն չի ակնարկում

սպանվածի մասին։ Չգիտե՞ դեռ... Չի՞ կամենում... Թերևս դեռ լուրը չի հասել։ Հնարավոր է... Շատ կասկածելի թվաց Վարդանին Գադիշոյի անուշադրությունը Վարդանի ձեռքի վերքին։ Մանավանդ որ արյունը վերքից դուրս ծծվել՝ թրջում էր նրա վիրակապը։ Եվ չհասկացվեց այդ ակնհայտ հանգամանքն ստիպեց Գադիշոյին, թե նոր նկատելով՝ նա հարցրեց.

— Այդ ի՞նչ արյուն է, Սպարապետ, հո վայր չե՞ս ընկել նժույգից։

— Դրա նման մի բան եղավ։

Եվ նայեց Գադիշոյին։ Սա, որ սկսել էր հետաքրքրվել — այդպես թվաց գոնե Վարդանին — նորից պաղեց։ Վարդանն աշխատեց խոսքը չշարունակել տեսնելու համար, թե Գադիշոն որքան է հետաքրքրվում իր վերքով։

Խոսքը փոխեց.

— Ինչպե՞ս էր մարզպանի տրամադրությունը մեր հեռանալուց հետո, կարողանո՞ւմ էր պարսիկների հետ գլուխ դնել։

— Պարսիկների հետ դյուրին է,— ասաց Գադիշոն.— հայերի հետ ասա։

— Ի՞նչ կար հայերի հետ,— հարցրեց անտարբեր եղանակով Վարդանը։

— Հայերը քիչ էր մնում դավաճանի տեղ դնեն նրան։

Վարդանը զգաց, որ Գադիշոն կամենում է իրեն որսալ։ Եվ երբ Գադիշոն սկսեց մի թեթև դատափետել Վասակին իր նիզակակցությունը ծածկելու համար, Վարդանը պաշտպանվեց նրանով, որ փոխանակ Վասակին պաշտպանելու՝ սկսեց ավելի խիստ դատափետել նրան։ Եվ սրանով հույս ուներ թմրեցնել Գադիշոյի զգոնությունը, բայց խորամանկ Գադիշոն կռահեց այդ քայլը և համաձայնեց Վարդանի հետ։ Դա արդեն պարզ էր։ Պարզ էր, թեև անկասկած չէր։ Բայց և այս խոսակցությունից անկախ՝ Գադիշոն աչքը չէր հեռացնում Վարդանի ձեռքի վերքից։ Մի անգամ հարցրել էր և ստացել էր անորոշ պատասխան. անզգույշ էր, կրկին հարցնել։

Վարդանը սակայն զգում էր դավադրական մի մթնոլորտ։ Ինչին, ո՛ւմ էր վերաբերում, դժվար էր կռահել։ Նա սկսեց ուշիուշով հետապնդել Գադիշոյի հայացքին, թե որքան և ինչ հետաքրքրությամբ է նա կանգ առնում իր վերքի վրա։

— Ե՞րբ դուրս եկար Ողականից,— հարցրեց Գադիշոն։

— Գիշերս։

— Ուրեմն ամբողջ գիշեր ձիավարել ես։ Հոգնած կլինես։ Նախաճաշ հրամայիր և անմիջապես պառկիր։

Գադիշոն «սկսեց», բայց և լավ «վերջացրեց»։

— Ոչինչ, հանգիստ եմ եկել,— ասաց Վարդանը։

— Հանգիստ կլինեիր,— համաձայնեց Գադիշոն,— ճանապարհը հարթ է, նժույգները անխափան ընթանում են. թեև մութն էր գիշերս և նժույգը կսայթաքեր դյուրին,— «փակեց» հարցը։ բայց հարմար «բացեց» Գադիշոն։

Վարդանը ծածուկ հարված տվեց։

— Ամեն բան կպատահի... եթե պիտի պատահի...

— Հա՜...մ,— համաձայնեց Գադիշոն։

Բայց ժամանակ էր գործի անցնելու։ Վարդանը բացատրեց իր գալու նպատակը։ Պարզապես ասաց, որ եկել է զորատես անելու։

Գադիշոն դժկամ, բայց արտաքին հոժարությամբ սենեկապետին հրամայեց.

— Խորեն իշխանին պատվեր տուր ինձանից, թող զորագունդը հանի ծովափ։

Սենեկապետը աչքի տակով երկար նայեց Վարդանին, նշանակալից երկար պահեց հայացքը և ապա տարակուսածի պես դանդաղ հեռացավ։

Երբ դուրս եկան միջնաբերդից, բազմությունը մոմռաց, տարուբերվեց քանդվող պատի պես և հանկարծ պատռվեց դեպի Վարդանը։

Գադիշոն մռայլ նայեց բազմության։ Բայց սա հափշտակված մղվում էր դեպի Սպարապետը։ Դուրս եկան դաշտ։ Այրուձին ու հետևակը շարք-շարք կանգնել էին ծովափի գծով։ Երբ Վարդանը մոտեցավ, նրա մոտ շտապեց երիտասարդ Խորեն Խորխոռունի իշխանը և խոնարհաբար համբուրեց Վարդանի ձեռը։ Վարդանը համբուրեց նրա քաց գլուխը։ Վարդանը վաղուց էր ճանաչում նրան։

— Քաջառո՞ղջ են Ատոմ իշխանը, Արտակը,— հարցրեց նա ամոթխած ժպիտով և գորովալի աչքերն ուղղելով Վարդանին։

— Սպասում են գնդերիդ,— ասաց Վարդանը,— մոռանալով իր մի փոքր առաջվա հետախուզական մտահոգությունները։

Նա չէր կարողանում այլ բաների մասին մտածել, երբ տեսնում էր զորքը։ Նա առաջ գնաց դեպի այրուձին։ Նժույգները անհանգիստ «այո-այո» էին անում գլուխներով՝ քշելով ճանճերը։ Հազարավոր երիտասարդ խստահայաց դեմքեր զարձել էին Վարդանին։ Նրանք կերպավորվում էին իրրև մի տեսակ մարդակերպ արծիվներ՝ իրենց քթերով ու հպարտ դիմագծերով։ Բավական էր մի հրաման, և նրանք կգզեին, կկտրատեին ամեն ինչ։

Վարդանը խաչակնքեց նրանց։ Մարտիկները կրկնեցին նույնը։

— Քաջառո՞ղջ եք, տղայք,— հարցրեց Վարդանը։

— Քաջառողջ, Սպարապետ,— թնդաց զումը։

Վարդանը գորովալի հայացքով գնաց նրանց առջևով և անցավ հետևակին։ Դրանք նիզակներին հենված, քաջոտն ու լայնաթիկունք մարտիկներ էին, վահանների հետ դեմքերը ծածկած, որ երբեմն ցցում էին դուրս և նայում։

Վարդանը հրամայեց Խորենին, որ գնդերը շրջապատեն իրեն։

Խորենը հրամայեց։ Գնդերը օղակեցին Վարդանին։ Նա դիմեց նրանց.

— Տղայք, ես գիտեմ, որ ձեր մեջ մի հատ վախկոտ մարդ չկա։ Լա՛վ ջանք արեք, նժույգներդ խնամեցե՛ք, վարժա՛նք արեք, դժվարին օրեր են սպասում մեզ։ Ձեր իշխանը, տեր Գադիշոն և ձեր մոտիկ հրամանատարը՝ Խորեն իշխանը երեսները պարզ կընայեն մեր ժողովրդին։ Ձեզ ուժ կտա և կպահպանի ձեզ հայրենիքի սերը։ Լա՛վ եղեք։

— Պատվերդ կատա՛ր, Սպարապե՛տ,— գոչեց մի մարտիկ կաս-կարմիր կտրելով։

Գնդերը թնդացին բարեմաղթություններով։

Վարդանը ետ շրջվեց դեպի Գադիշոն։

— Տեսքը, սպառազինությունը հուսալի է։ Սպա՞,— դարձավ Խորենին։

Խորենը հրամայեց.

— Զորագնդե՞ր, միաշա՞ր։

Զորագնդերը ետ բացվեցին և կրկին գնացին իրենց տեղերը։

Խորենն սկսեց զանազան զորախաղեր։

Մարտիկները վահանները պարզած, նիզակները ցից, թրուշ-կոտելով, բայց դանդաղ մղվեցին առաջ, ապա նիզակները հոլովելով հետզհետե արագացրին քայլերն ու հանկարծ խուժեցին դեպի բլուրն ի վեր։ Այնտեղ նրանք պատռվեցին մի քանի մասերի և արագ շրջապատեցին բլուրը և ամեն կողմից վեր վազելով իրենց մեջ սեղմեցին թշնամու երևակայական գունդը։ Նրանք ցցեցին իրենց նիզակները բլրին՝ հաղթական գոչյուններով։

Սրանց հետևից՝ այրուձին։ Հեծյալների դեմքերը կծկումներով կապտեցին, ու հանկարծ պոկվեց գունդը դեպի ընդարձակ ծովեզերը։ Ավազն ու խիճերը պարեցին նրանց ոտների տակ, նժույգները կարկտեցին գետինը, և մի ակնթարթում գունդը սեվացավ հեռվում իբրև ամպի ստվեր, որ սողում էր ծովեզերին։ Նույն կարգով ետ դառավ գունդը, բայց կիսաճանապարհին մասմաս պատռվեց, առաջ անցան մասերը, կրակված եկան սլացան և ահագին հեղեղատից թռան, գնացին իրենց տեղը։ Ապա սկսվեց հետևակի և այրուձիի խառնամարտ։ Գնդերը իրար մեջ անցան և սկսեցին հարվածել իրար, պտտվել, գոռալ, մրրկել։ Սրելի զրնգոցները վահաններին, ձիերի խրխինջը, նիզակների կոփյունները, ահռելի ոռնատրոփը, փոշին իրար խառնվեցին։

— Ավա՛ռտ,— գոչում էր Խորենը, բայց ոչ ոք չէր լսում։

Դրոշակակիրները ճոճեցին դրոշները։ Դա ազդեց։ Իսկույն մարտը դադարեց, և գնդերը հազալով ու հևալով գնացին իրենց տեղերը կանգնեցին։

Խորենը քրտնած, կարմրած՝ նժույգը քշեց դեպի Վարդանը։ Սա ետ դարձավ և ուրախ ժպտով նայեց Գադիշոյին։

— Քաջամարտիկ գնդեր ունես, իշխան։

— Եվ քաջամարտիկ հրամանատար,— ակնարկելով Խորենին ասաց Գադիշոն։

Զորքը, մարտի գեղեցկությունը, խենթ երիտասարդությունը մի պահ մոռացնել էին տվել խուլ հակառակորդների ներքին թույնը, և նրանք գոհ ու թարմ նայում էին գնդերին և իրար։

— Մահվիռոտին մասնակիցներ կան,— ասաց Գադիշոն Վարդանին։

— Ո՞ւր են,— ուրախացավ Վարդանը։

Խորենը ձայնեց.

— Մահվիոոտի մարտիկները առա՛ջ։

Իսկույն հետևակագնդից և հեծյալ գնդից դուրս եկան բավական մարտիկներ և եկան դեպի Վարդանը։

Նրանք ժպտացին և խոնարհ ողջունեցին Վարդանին։

— Քաջառո՞ղջ եք, տղա՛յք,— հարցրեց նա։

— Աստված կյա՛նք տա, Սպարապետ,— ասաց մեկը նրանցից։

Մյուսները կրկնեցին։

— Դե՛, աստված պահապան ձեզ. լա՛վ եղեք, լա՛վ տեսնեմ ձեզ առաջիկա պատերազմին։

Մարտիկները աչքներն ու ականջները սրեցին։

— Շուտով արյաց դեմ ենք գնալու,— ասաց Վարդանը,— հայրենիքի համար։

— Հայրենիքի համար,— կրկնեց մարտիկը,— ամեն բանի համար արյուն ենք թափել, հայրենիքի համար կյանքներս էլ կտանք։

Սուր նայեց նրան Վարդանը,— քեզ տեսե՞լ եմ Մահվիոոտում։

— Մանուկի հետ, Սպարապե՛տ,— ուրախացած վրա բերեց խոսողը,— նա, որ թուրն իջեցրեց քուշանի վրա, հենց այն է՝ մեկ ուրիշը նրան նետահարում էր, նրան էլ ես վերջացրի։ Դու մտիկ տվիր ինձ...

Վարդանը նոր հիշեց այդ վայրկյանը։ Ճշմարիտ էր. բայց նա մոռացել էր այդ։

— Ոչինչ, պարտքս կվճարեմ մի օր,— կատակեց Վարդանը։

— Դու մեզ մի բան ես պարտ, Սպարապետ,— ասաց մարտիկը,— որ կյանքդ լավ պահես, մեր գլխին կանգնած լինես։

— Ամե՛ն, ամե՛ն,— ասաց Խորենը, որ բոլորովին խանդաղատանք էր դառել այս ջերմ զրույցից։

— Դե, ապրե՛ք, որդի՛ք,— ասաց Վարդանը։

— Տեղնե՛րդ,— հրամայեց Խորենը մեղմաձայն։

Մարտիկները գնացին։ Նրանց ճկուն պողպատ մեջքերը, մկանուտ ոտներն ու աշխույժ քայլերը ցույց էին տալիս, թե ինչպիսի մարտիկներ էին։

Վարդանը ուրախ նայեց Գադիշոյին։ Բայց սա ամպել էր արդեն... Նրանք հրաժեշտ տվին գնդերին և հեռացան։

— Գնդերը մարտական վիճակի են,— ասաց Վարդանը,— տա աստված՝ մյուսները ևս նմանվեն սրանց։

Գադիշոն չխոսեց։ Նրան մտահոգեց այն ջերմ ընդունելությունը, որ ցույց տվեց իր զորագունդը մի օտար նախարարի։ Ի՞նչ անենք, որ նա Սպարապետ է։ Սպարապետին ընտրել են. վաղը կարող են հեռացնել։ Նա զգաց, որ վասակյանների առաջ լեռնանում են ժողովրդական զանգվածները, որ ամեն տեղ ջերմ դիմավորում են այս մարդուն։ Նա մտածում էր իր գնդերը իր ձեռն առնելու մասին։ Դուր չեկավ նրան բնավ նաև Խորենի խանդավառությունը Վարդանի հանդեպ։ Նա լուրջ արգելք պիտի լիներ հետագայում, երբ տերունական զորքը կազմվեր։

Նրանք խոսելով անցան ծովափը։

— Ինչպե՞ս է ժողովրդի տրամադրությունը,— հարցրեց Վարդանը,— դավաճաններ եղա՞ն։

— Ոչ,— պատասխանեց Գադիշոն խուլ ձայնով։

— Դավաճանները մեծ գլխացավանք են դառնալու մեր գլխին մի օր,— ասաց Վարդանը,— կհաղթենք և տեսնենք դրանց դատաստանը։

— Իսկ եթե պարտվենք, թերևս դավաճանները մեզ փրկեն,— կծեց Գադիշոն։

— Որ պարտվենք՝ միևնույն է, թե ով է հարվածում մեզ. դավաճա՞նը, թե պարսիկը, երկուսն էլ մեզ թշնամի են։

Բայց Վարդանին զբաղեցնում էր դարանակալը։ Նրան չէր ազդել ոչ վտանգը և ոչ վերքը. նա շատ էր եղել թե վտանգներում և թե շատ վիրավորվել։ Նրան հետաքրքրում էր, թե ո՞վ է այն «իշխանը», որ ուղարկել էր դարանակալին։ Կատակի համար չէր լինի. կնշանակի կար մի լուրջ, հիմնավոր դրդապատճառ՝ կամենալ վերցնել մեջտեղից Սպարապետին՝ հայրենիքին սպառնացող վտանգի պահին։

Եվ երևի այդ իշխանը մենակ չէր։ Եվ այդ դավադրության թելերը գնում են շատ հեռու, թերևս Արտաշատ, Տիզբոն...

Գադիշոյի ամբողջ ընթացքը, նրա մռայլ դեմքը, բազմանշանակ, բարդ հայացքը մի բան ասում էին, որ նա է ուղարկել դարանակալին։

Վարդանը համարյա համոզվեց դրանում։

Սակայն երբ նա ցանկություն հայտնեց իսկույն ճանապարհ ընկնել դեպի Արծրունյաց աշխարհը, Գադիշոն ասաց.

— Գիշերը մի՛ գնա, վտանգավոր է։

— Ի՞նչ կա որ...

— Ավազակներ են հայտնվել վերջերս։ Մեկը շարունակ թափառում է իմ ու քո աշխարհների մեջ։ Շատ եմ հետապնդում՝ չի աջողվում բռնել։

Սա գծից հանեց Վարդանին։

Ուրեմն դարանակալը ավազա՞կ էր հասարակ ու աննպատակ։ Կարող էր և այդ պատահել...

Բայց ավազակին ինչո՞ւ պիտի «նախարարն ուղարկեր»։ Կամ ի՞նչ շահ ավազակին՝ այդպես ասել։ Ի՞նչը կփրկեր նրան մահից։

Սա էլ հիմա ավելի հաստատեց, որ դարանակալը այստեղից է ուղարկված։ Եվ հետո՝ անցավ կես օր, ոչ մի լուր սպանվածի մասին։ Գոնե իրեն ոչ մի բան չեն հայտնում։

Բայց ի՞նչ էր ուշտունցու հագուստը... Արդյոք այնտեղից չի՞ ուղարկված։ Բայց ո՞վ պիտի ուղարկեր։ Արտակ Ուշտունին իր հետն էր առաջին իսկ գիշերից, երբ ստացվեց հրովարտակը։

Գնացին ամրոց։ Արդեն ճաշի ժամ էր։ Տրվեց ճոխ ճաշ։ Գադիշոն մի փոքր զվարթ երես ցույց տվեց, չմոռանալով հյուրընկալի պարտականություններն ու պատշաճավոր քնդունելության կանոնները։

Նրանք խոսում էին արյաց պետության մասին։

— Բայց դժվար գործ ենք հանձն առնում,— ասաց Գադիշոն,— ամեն բան կարող է պատահել։

— Ամեն բան կարող է պատահել,— կրկնեց Վարդանը՝ ավելի շեշտելով Գադիշոյի ասածը,— բայց մենք չենք, որ կսկսենք պատերազմը, այլ Հազկերտը։ Ո՞ւմ օձիքը բռնեա։ Բայց պատերազմը նա կսկսի, մենք կվերջացնենք։

— Տա՛ աստված,— հորանջեց Գադիշոն։

Ճաշից հետո քնեցին։

Արծվին դուրս չեկավ միջնաբերդից։ Նա անբացակա հսկում էր Վարդանին անգամ սրահի դռանը՝ ամենևին ցույց չտալով, որ նկատում է Գադիշոյի թիկնապահի խոժոռ հայացքները, որով սա արտահայտում էր իր դժգոհությունը նրա անվստահության։

Իրիկնադեմին, երբ աղջամուղջը մոխրագույն շղարշի նման

ծածկեց երկիրը, Վարդանը ցանկություն հայտնեց մեկնելու։ Գադիշոն կրկին զգուշացրեց նրան գիշերային ճանապարհորդությունից։

— Ավազակներին որ նայենք՝ ամրոցից դուրս չպիտի գանք,— ասաց Վարդանը,— լավ զորականներ կդառնանք...

— Հյուրընկալի պարտքն է զգուշացնելը,— ասաց Գադիշոն,— եթե ոչ՝ մի մարդ նրանք են, մի մարդ՝ մենք։

Ներս մտավ մի անձնյա, հարգևոր պառավ, կլորերես, խոշոր աչքերի խելացի հայացքով, սաստիկ նման Գադիշոյին։ Նա իր գիրուկ, ճերմակ ձեռը մեկնեց Վարդանին և խաչակնքեց նրանց։ Վարդանը համբուրեց նրա ձեռը։

— Ապրե՛ս, որդի՛ս,— ասաց պառավը և նստեց բարձին ու բարյացակամ հայացքն ուղղեց Վարդանին։

— Քաջառո՞ղջ ես, իշխանուհի՛ մայրիկ,— հարցրեց Վարդանը պառավին, որի հետ, ինչպես երևում է, վաղուց էր մոտ ծանոթ, և իրար համակրում էին։

— Փառք ամենակալին, որդի, դու մեր գլխին անպակաս լինես՝ քաջառողջ ենք ու կանք։ Ինչպե՞ս է Մեծ Տիկինը։

— Հիվանդացավ վերջին ժամանակներս։

— Ինչո՞ւ, կուրանամ ես։

— Հավատի լուրը շփոթեց միտքը, ջերմ եկավ վրան։

— Ամենքս էլ շփոթված ենք, Սպարապետ,— ասաց մեծ տիկին իշխանուհին,— ի՞նչ պիտի լինի վերջներս, դատաստանի օրն է հասնում։ Երկու զավակս՝ Գադիշոն և Խորենը կռվի մեջ կլինեն։

— Ամենքս կռվի մեջ կլինենք, իշխանուհի՛ մայրիկ, դուրսը մարդ չի մնալու։ Ազգի կռիվ է։ Զոհրակիս բերել եմ տալիս Հունաստանից։

— Ասում են, բայց Գագիշոս հակառակ է կռվին։ Խորենիս հետ գիշերները մինչև լույս կռիվ են տալիս։ Գադիշոս խելացի է, բայց Խորենս չի համոզվում։ Խորենս ուզում է, որ պատերազմ լինի։

— Պատերազմն ինքն էլ է ուզում լինել,— ծիծաղեց Վարդանը։

— Իսկ ծնո՞ղն ինչ է ասում։ Նրանք այնտեղ վիճում են, դու հիմա մեր սիրտը հարցրու։

Վարդանը ժպտալով նայեց իշխանուհուն և ասաց.

— Ապա կթողնե՞ս, որ տունդ ատրուշան դնեն, կրակ պաշտես։

— Աստված տնի՞ց-օջախի՞ց հեռու անի,— երկյուղած ասաց մեծ տիկին իշխանուհին։— Դատաստանի օրը տեսնեմ, այդ չը-տեսնեմ։

Գադիշոն լսում էր այս խոսակցությունը և մռայլվում։ Ուրեմն Վարդանը մտավ նաև իր ընտանիքը... Ամենուրեք նա՛, նա՛ և նա՛... Իսկ որտե՞ղ են իրենք՝ վասակյանք...։

Գադիշոն ցանկություն հայտնեց Վարդանին ուղեկցել նրան և այցելել Արծրունյաց իշխանին։ Խորենը ևս։ Մութն ընկավ։ Վարդանը խնդրեց, որ նժույգները քաշեն։ Բերին նժույգները, նստեցին, և Վարդանը հրաժեշտ տվեց մեծ տիկին իշխանուհուն։ Երբ դուրս եկան միջնաբերդից, քաղաքի փողոցներն ու կտուրները ծեփված էին բազմությամբ։

— Եկա՜վ, եկա՜վ,— ձայնեցին այս ու այն կողմից և խոնըվեցին Վարդանի շուրջը։ Նա անցնում էր իբրև կախարդական մի անձնավորություն։ Լսվում էին հառաչանքներ, բարեմաղթություններ, խաչակնքում էր ամբողջ բազմությունը։

Վարդանը իր ուղեկից իշխաններով շրջեց Բզնունյաց ծովի հյուսիսային եզերքը և մտավ Արծրունյաց սահմանը։

***

Ողական ամրոցի ներքին հարկաբաժիններից մեկում երիտասարդ սեպուհներ էին հավաքվել Մելքոնի գլխին և զրուցում էին։ Դրանք գիշերային մարզիկներ էին, նոր էին քնից վեր կացել և սպասում հերթափոխ սեպուհներին, որ իրենք գնան գնդի գիշերային զորախաղին։ Դրանք կռիվներում և զորական արշավանքներում թրծված ու կոփված մարտիկներ էին, բոլորն էլ արևառ, «ոչ ընտանի» մարդկանց դեմքերով։ Նրանք լսում էին Մելքոնի ինչ-որ մի պատմությունը և մերթ քրքիջի պոռթկումով խլացնում էին օթևանը։ Ըստ երևույթին Մելքոնը շատ ծիծաղելի բանի մասին էր խոսել։

— Ինչպե՞ս է եղել, ինչպե՞ս է եղել,— հարց տվին պատմողին մի քանիսը։

— Դե ասում է էլի՞, ձիու մեզի մե՞ջ,— ասաց մի կարճահասակ սեպուհ՝ սևուկ աչքերը պսպղացնելով չարաճճի ծիծաղով։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛,— կոպիտ հռհռացին սեպուհները, և այս ամենի մեջ լսվում էր իր սաստիկ բամբ ձայնով մի գիրուկ սեպուհի ծիծաղը, որ գոգռում էր, ինչպես սայլը քարուքանդ զառիվայրից վայր իջնելիս։

— Լսե՛ք, իրեն կանչեցեք, թող պատմի,— ասաց սևուկը։

— Լա՜վ, քնա՛ծ կլինի,— ասաց Մելքոնը։

— Չէ՛, չէ՛, կանչենք։

— Ապա՛ գնացեք բերեք։

Գնացին։ Զանցավ մի քանի րոպե՝ ներս բերին Մանուկին, այն մարտիկին, որին վիրավորել էր վարժանքի ժամին սրախաղով հափշտակված ընկերը՝ Վարդանի ամրոց գալու օրը։ Մանուկը քնաթաթախ աչքերը տրորելով նայեց սեպուհներին։

Սրանք բարձրագոչ քրքջացին։

Մանուկը, որ չէր հասկանում բանի էությունը, հարցական ու մռայլ նայեց նրանց։

— Մանո՛ւկ, ապա պատմիր. ինչպե՞ս եղավ այն ձիու մեզի պատմությունը։

Մանուկը դժգոհ, որ դատարկ բանի համար իրան թարժած են արել քնից, կշտամբեց համեստ ձայնով։

— Ախր, սեպուհնե՛ր, վարժանքից հոգնած եմ, դրա համար քնից կվերկացնե՞ն...

— Լա՛վ, լա՛վ, էլի կգնաս քնես։ Պատմի՛ր,— ստիպեց Մելքոնը։

— Ո՞վ է այդ բաները խոսել, Աբգա՞րը։

— Աբգա՛րը,— ասաց սևուկ սեպուհը կամենալով գրգռել Մանուկին։

Աբգարը նրան վերք տվողն էր։

— Նա ինձ հանգիստ չի թողնի, մինչև չուտի մի օր։

— Կուտեցնես, դա հետո, դու պատմիր, թե ինչպես եղավ։ Մեզը խմեցի՞ր,— հարցրեց Մելքոնը։

Բոլորը մի պոռթկումով քրքջացին։

— Դե, մի՛ ձեռ առնեք, սեպուհներ։

— Ձեռ չենք առնում, պատմի՛ր,— ստիպեց Մելքոնը։

Մանուկը քթի տակ չարաճճի ժպտաց.

— Ես ընկա մի քանի քուշանի հետևից։ Դե մի երկուսին շարեցի իրար հետևից։ Մին էլ հետևիցս, ախր դրանք անիծած սովորությամբ ունեն, փախչելիս քշում են, անապատի փոսերն ընկնում կորչում. դու մտիկ ես տալիս դեմդ, իսկ նրանք հետևիցդ են քամու պես հասնում ու կալմեջ անում։ Հա, թե ոնց եկան հետևիցս, մեջ առան ինձ՝ չիմացա։ Մինը թուրը վրա բերեց։ Վահանս դեմ տվի՝ թուրը կոտրվեց։ Սուտ վիրավորի խաղ արի, ընկա, գլորվեցի փոսը։ Հիմի սպասում եմ որ ահա՛, ահա՛ թրերը կիջեցնեն գլխիս։ Նժույգովս տարվեցին։ Կողքանց մտիկ եմ անում, որ իրար ձեռից ուզում են խլել։ Մտիկ տալու ժամանակ տեսնեմ նրանցից մինը աչքի տակով իմ կողմս մտիկ տվեց։

— Դու մե՛զը ասա, մե՛զը,— կորեց Մելքոնը՝ աչքով անելով սեպուհներին։

— Մեզը, ո՞նց մեզը։ Դե գլուխս փոսի մեջ էր, մեզը լիքը բերնեբերան։ Ձիերի կապած տեղն էր եղել՝ վերջը տեսա։ Գլուխս ձեռաց կոխեցի մեզի մեջ։ Դե կուլ գնաց։

Քրքիջի պայթոցը խլացրեց Մանուկին։

— Հետո՞։

— Հետո էլ ի՞նչ։ Երևի կարծեց անիծածը, թե շունչս տվի։ Նժույգովս եղան։ Հենց մի ոլորք չանթեցի, ական թոթափել վեր թռա դրանց նժույգներից մինի մեջքին ու քշեցի վրա։ Մեկին զարկեցի, մյուսները ցրեցի, փախա բանակ։

— Իսկ Սպարապետի՞ն ինչպես ազատեցիր,— հարցրեց ավելի լուրջ տրամադրված մի սեպուհ։

— Լավ, դա պատմելու բան չէ,— գլուխը ուսերի մեջ կոխեց և դուրս փախավ Մանուկը։

Հետևից քրքջացին։

— Շատ բաներ ունի,— ծիծաղեց Մելքոնը,— չի ուզում պատմել։

Սեպուհներից լուրջը գլուխը շարժեց։

— Բայց Սպարապետին ազատելը մեծ գործ է։

— Բա՞... — ձգեց Մելքոնը լուրջ։

— Չէ, իսկապես, չլիներ Մանուկը՝ Սպարապետը ձեռից գնացել էր։

— Գնալո՞ւ պես...

— Դա Մահվիրոտի կռվի՞ն էր։

— Մահվիոտի։ Ասենք,— կանգ առավ Մելքոնը և աչքերը կկոցեց,— Մահվիոտի կովին ազատվեց ոչ մենակ Սպարապետը, այլ պարսից զորքը։ Չէ, դրուստ։ Ես տեսա։ Ինձ Սպարապետն ուղարկել էր հետախուզության։ Ես գիշերն անցա ավազուտները, մտա թամարիսկները՝ թաքնվեցի։ Ավելի առաջ գնալու հնար չըկար։ Մնացի, որ գիշերն անցնեմ մյուս ավազուտը։ Բայց անիծած քուշաններին հետախուզելը անտանելի բան է։ Քամու պես, մին էլ տեսար, ավազներից դուրս պրծավ մի հեծյալ խումբ, քշեց վրա, զարկեց ու կորավ։

— Մեզ պես,— նկատեց մի սեպուհ։

— Չէ, սպասի՛։ Նրանցը ուրիշ է։

— Գալիս է մյուսը, չգիտես հիմի սա առաջվա՞նն էր, թե ուրիշը։ Ական թոթափել խմբվում, ձեռաց ցրվում են՝ չես կարողանում թիվը գտնել։ Գիտեք, էլի։ Պարսից բանակը մտել էր անապատ։ Մուշկան Նյուսալավուրտը շատ առաջ քաշեց զորքը, խորացավ անապատի մեջ։ Քուշաններին էլ այդ էր պետք։ Սկսեցին փոքրաթիվ խմբերով կծոտելը։ Զարկեցին փղերին, ու մինչ պարսից հեծյալը վրա հասավ՝ քուշաններն անհետացան։ Դե պարսիկ հեծյալը, գիտեք, դեմառդեմ լավ է կռվում։ Քուշանները զարկում են ու փախչում, որ հետևիցն ընկնես։ Ընկնում ես հետևիցը՝ նա սկսում է փախչելիս նետահարել, արյունաքամ անել։

— Դա գիտենք։

— Հա, իհարկե։ Չէ, ասում են, թե ի՞նչ դուրս եկավ։ Մուշկանը զորքը կանգնեցրեց մի շարքի և սպասում էր ճակատամարտի։ Ճակատամարտ չեղավ։ Քուշանները հա՛ կծում էին, հա՛ փախչում, փախչելիս էլ կծում — լկեցին պարսից զորքը։ Ահա այդ պահին էր՝ Վարդանը հայոց այրուձին հավաքեց, միացրեց սրան մի գունդ էլ պարսիկ հեծյալ, զարկեց քուշաններին ու հանկարծ էլ շրջվեց ու փախուստի ձև տվեց։ Քուշանները ընկան հետևները։ Վարդանը փախավ, ճեղքեց պարսից զորքի ճակատը, շարունակեց փախչելը։ Քուշանները տարվեցին, խրվեցին պարսից բանակը։ Վարդանը Արծվիին թոցրեց Մուշկանի մոտ և պահանջեց շրջապատել քուշաններին։ Մուշկանը շրջապատեց։ Այն ժամանակ Վարդանը գիրթ շարժումով շրջվեց ու հարվածեց քուշաններին։ Բայց քուշաններին կոտրելը հեշտ չէր։ Պետք էր արագ ջարդել, թե չէ՝ դուրս կպրծնեին։ Այստեղ էր, որ Վարդանը բա-

նեցրեց իր սիրած ոլորքը։ Հայոց այրուձիով խրվեց քուշանների ամենախիտ շարքերը։

— Հա, նա գիտե այդ բաները։

— Մի պահ է՛լ, և այրուձին կուլ պիտի գնար։ Սասանեց այրուձին, ու այն է՝ պիտի ետ կանգներ, Վարդանը ինքն իրեն նետեց առաջ ու շրջապատվեց մի քանի զինվորների հետ՝ Արծվին էր, Մանուկը, Աբգարը և մյուսները։ Այստեղ հենց ճակատի վերքից Արծվիի աչքերը արյունով լցված չտեսավ քուշանին, որ թուրը վրա էր բերում Վարդանի հետևից, Մանուկը թռավ ու գլորեց քուշանին։ Այրուձին հասավ, զարկեց քուշաններին։ Սրանք սասանեցին և մաս-մաս դեսուդեն փախան։ Այրուձին պատառ-պատառ նրանց բաժանեց որ՝ այդ ժամանակ էլ պարսից զորքը վերջացրեց գործը։

— Ապրի Մանուկը,— ասաց մի սեպուհ։

— Դու Սպարապետին ասա,— ասաց Մելքոնը,— թե ինչպես հասկացավ տրագ հարվածի տեղը և փրկեց մարտը։

Լրջադեմ սեպուհն առաջ եկավ և ձեռքը ճակատին խփելով ասաց.

— Դրանք դեռ ոչինչ, ինձ համար Սպարապետը մի բանով է թանկ։ Այ, մի անգամ ինչ պատահեց։ Նյուշապուհ քաղաքումն էր։ Հավաքված էին պարսից մեծամեծները։ Խոսք եղավ Մահվիռոտի կռվի մասին։ Գովեցին հայոց այրուձին, Սպարապետին։ Մեծամեծներից մեկը,— ճանաչում եք,— Նուշիրվանը, որ ատում է հայերին, վերցրեց թե. «Մենք Վարդանին սիրում ենք նրա համար, որ Վարդանը հայի նման չէ»։ Հենց այս ասելը գիտեր. մի ապտակ շառաչեց նրա այտին, որ կայծեր թռան։ «Ապիրա՛ռ,— գոռաց Սպարապետը,— հերիք չէ՞ հաչես հայի վրա»։ Իրար անցան, վիրավորվեցին, մեկը Սպարապետին է զսպում, մյուսը Նուշիրվանին, սա գոռաց. «Հիմա ես լուրը կտանեմ Հազկերտին»։— «Ես էլ հե՛նց դրա համար կերցրի,— ասաց Սպարապետը,— որ լուրը տանես, որ նա էլ իմանա։ Թող ամե՛նքն իմանան, որ հայը հայի է նման և ոչ պարսիկի»։

— Հոգո՞ւն մեռնեմ Սպարապետի,— գոչեց մի երիտասարդ սեպուհ։— Դա ամենից լավն էր։ Եթե ոչ՝ քաջեր ամեն տեղ կան։

Սեպուհները, որ կատակներով էին սկսել, վերջացրին լուրջ խոհերով։ Պատմող լուրջ սեպուհը դառնությամբ շարունակեց.

— Ճանաչում եմ մի պաշտոնյայի, հայ էր, պարսկական ծառայության մեջ. հայերեն չէր խոսում մեզ հետ, թեև լավ գիտեր։ Մի օր հարցրի՝ ի՞նչ ազգից ես. ասաց՝ «մի ժամանակ հայ էի»։ «Իսկ հիմա պնակալեզ շուն ես»,— ասացի նրան։

— Զապտակեցի՞ր։

— Զուզեցա ձեռս կեղտոտել։

Ամբոցի դարբասը ուժգին բախեցին։ Հետո կրկին։ Դարձյալ։ Եվ ավելի ուժգին...

— Սա՞ ինչ բան է... Պահակները քնա՞ծ են։

— Քնած են, որ...

— Վե՛ր կացեք, ձա՛յն տվեք։

Սեպուհները իրար անցան և դուրս թափվեցին բակը։

— Ո՞վ է...

— Բացե՛ք, շո՛ւտ...

Պահակները քնաթաթախ վեր թռան։

Մելքոնը հարձակվեց նրանց վրա.

— Քնա՞ծ եք, ավանակնե՛ր...

— Ո՞վ է՞ է՞...— ձիգ տվեց աշտարակից պահակապետը։

— Բացե՛ք, սուրհանդա՛կ։

— Ներքև՛ իջեք, տեսե՛ք,— հրամայեց պահակապետը։

Դարբասը երգող ձայնով ձիգ ճռնչաց, զարկվեց պատին։ Նժույգները կոփեցին քարերը։ Մտնողներից մեկը բարձրաձայն հրամայեց.

— Զարթեցրե՛ք Սպարապետին։ Շո՛ւտ։

Վերև վազեցին սեպուհները։

— Ո՞ւր, ո՞ւր, ո՞ւր,— գոռաց պահակը Վարդանի սրահի միջանցքում։

— Շատ մի խոսի,— քամահրեց սեպուհներից մեկը և վազեց դեպի սրահի դուռը։

— Ախր ո՞ւր եք քշում։ Սպարապետն այնտեղ չէ,— գոռաց պահակը։

— Ապա ո՞ւր է։

— Սենեկապետին հարցրեք։

Գլուխը դուրս բերեց Հազարապետը և խռպոտ, անախորժած ձայնով հարցրեց.

— Ի՞նչ կա, ինչո՞ւ եք աղմկում։

Դուրս եկավ պատշգամ։

Իսկույն նրան ընդառաջ վազեց սուրհանդակներից մեկը և տվեց մի մագաղաթ։

Հազարապետը քնաթաթախ նայեց մագաղաթին, որ չէր էլ կարող կիսամթան մեջ կարդալ։

— Ի՞նչ է սա,— հարցրեց բարկացած։

— Մարզպանն ուղարկեց, Հազկերտը կոչի հրաման է տվել բոլոր իշխաններին հրամայում է անմիջապես մեկնել Պարսկաստան, արքունի Դուռը ատյանի։ Սա հրովարտակի պատճենն է։

— Հա՜... ա՜յ թե ինչ,— մտահոգ խոսեց Հազարապետը,— ա՜յ թե ինչ...

Եվ ապա դարձավ սուրհանդակին։

— Բայց Սպարապետը գնացել է ուրիշ տեղ։

— Մարզպանը հրամայեց շտապել, ապա թե ոչ ասաց՝ պարսից զորքը շարժվում է Հայաստան։

— Կաթողիկոսն ո՞ւր էր, երբ հրովարտակն եկավ,— հարցրեց Հազարապետը։

— Էջմիածին։

— Գիտե՞ հրովարտակի մասին։

— Ոչ։

— Ապա ինչո՞ւ իմաց չեն տվել։

— Մարզպանն ասաց, որ դա կաթողիկոսին չի վերաբերում, սա պարսից տերության գործ է։ Հրամանն արքայական է։

— Լավ, գնացե՛ք ներքև,— հրամայեց հազարապետը և դարձավ սեպուհներին,— անմիջապես, ճեպով սուրհանդակ ուղարկել Սպարապետի հետևից։

— Այստեղ էր, գնա՞ց... — հարցրին սեպուհները։

— Դա ձեզ չի վերաբերում,— գոչեց Հազարապետը,— շո՛ւտ հետևից հասեք։ Գնաց Խորխոռունիք։

Սեպուհները վազեցին ներքև։

Հազարապետը հսկեց, որ ճեպընթացը գուրս գա։ Երբ սրա նժույգը ծեծեց սալահատակը, նա գնաց սրահը և մագաղաթը մոտեցնելով ճրագին՝ սկսեց կարդալ։ Նա հևաց, կիսատ թողեց, կրկին մոտեցրեց աչքերին հրովարտակի պատճենը։

Այ թե ինչ...

***

Հազկերտի կոչի հրամանը մրրիկի պես մտավ Հայաստան։ Նա սպառնալից էր, չարագուշակ մռայլ։

Կոչի հրամանով, պարսից Դուռն էին կանչվում մարզպանը, Արծրունյաց, Խորխոռունյաց, Մամիկոնեից, Մոկաց, Ռշտունյաց, Վահևունյաց, Անձևացյաց տերերը և Հազարապետը։ Սրանով Հազկերտը գլխատում էր հայ նախարարությունը։

Եվ ի՞նչ էր սպասվում այդ կոչի հրամանից... Կարող էր Հազկերտը բանտարկել իշխաններին, թերևս և ոչնչացնել և ապա զորքերով ողողել Հայաստանը։ Հետո՝ ի՞նչ կպատահեր իրենց՝ հայ իշխաններին։ Կարո՞ղ էին բռնադատվել հանձնելու երկիրը և իշխանությունը՝ հավատի ուրացության քողի տակ։ Կգիմանայի՞ն մեծ նեղությունների, խոշտանգումների...

Տարակուսանքն ու երկյուղը համակեց շատերին։ Ամենից շատ խրախանքման մեջ էր կաթողիկոսը՝ նախ համարելով իրեն հավատի գործի անմիջական պատասխանատու արքայի առաջ և ապա, որ նախարարությունը իբրև դիմադիր ուժ՝ կարող էր փորձության ենթարկվել, տեղի տալ և եկեղեցին թողնել մենակ։

Տեղեկանալով կոչի հրամանի մասին՝ կաթողիկոսը անմիջապես կոչ ուղարկեց մարզպանին և նախարարներին՝ իբրև հայրենյաց ուխտին գրված զինվորների, գումարվել Էջմիածին, վճռելու իրենց անելիքը։

Կաթողիկոսը հրաժարվեց գումարվել Արտաշատում, ուր վասակի և նրա կողմնակիցների ազդեցությունը կասկածելի մթնոլորտ էր ստեղծել, նա կարծում էր, որ Էջմիածինը ավելի ազատ վայր է խնդիրները վճռելու համար։

Նախարարներից Վարդանի կողմնակիցները նույն նկատառումներով բարվոք համարեցին Էջմիածնում ժողովվել։

Արդեն գիշերվանից մայրաքաղաքի դուռը բացվում էր ստեպ-ստեպ՝ քաց թողնելով նախարարների շքախմբերը դեպի Էջմիածին։ Նրանց հետևից վազեցին վանականները, ագռավների թևերի պես թոցնելով գիշերային քամու դեմ իրենց զգեստների սև քղանցքները։ Նրանց առաջնորդում էր Գրիգորիոս վանահայրը ծերունի վանականի հետ։

Նոր էր նրանց փոշին իջնում պարսից ելնող ճանապարհի վրա, որ քաղաքից դուրս եկան ժողովրդական խմբեր, որոնք շրջապատելով Հովակիմ դարբնին և Աբրահամ պապիկին, հարց ու փորձ էին անում պատահածի մասին։ Հովակիմ դարբինը խոսելու հետ վեր ու վար թափահարելով իր գոգնոցի նմանող մորուքը՝ շատ լրջորեն բացատրում էր եղելությունը։ Խմբերը դուրս գալով քաղաքի դռնից, իրար մոտեցան պարիսպների տակ, որ արդեն ժողովատեղի էր դառել այնտեղ խռնված շինականների համար, որոնք այժմ շրջապատել էին Առաքելին։ Սա նստել էր մի կլոր, մեծ քարի վրա և երկու ափերը դրած իր մեծ սրի դաստակին՝ գլուխը հենել իր ձեռքերի վրա, խորհում էր։ Նրա մոտ խոտի վրա թիկն էին տվել Սահակը, Եզրասը և Զարեհը։

Հովակիմ դարբինը իր բազմությամբ մոտեցավ Առաքելին և լուռ կանգնեց նրա դիմաց։ Առաքելը միայն շտկվեց ու սուր հայացքը գամեց նրա աչքերի մեջ։ Նրանք լռեցին։

Նրանց շուրջը կազմվեց մի ամբապինդ պարիսպ անհանգիստ և տարակուսած բազմությունից, որ հարցական հայացքներով ըսպասեցին երկուսի խոսելուն։ Արդեն Առաքելը, Հովակիմ դարբինը, Աբրահամ պապիկը, Եզրասը, Սահակը, ինչպես նաև սրանց շրջապատող Վարաժը, Մարկոսը, Գոռնակ Սիմավոնը՝ աննկատելի կերպով դառնում էին ժողովրդական շարժման ղեկավար կենտրոնը,— որը դեպքերի զարգացման ծավալման հետ զուգընթաց հետզհետե որոշվում, ձևավորվում էր, իմաստ ստանում։ Սրանց մեջ,— այդ ամենքն էին զգում,— սկսում էր ղեկավար զգալ իրեն Առաքելը։ Ողբերգական դեպքը, որ նրան դուրս շպրտեց իր տնից ու տեղից, փախստական վիճակը և զինվորյալի ուխտը նրան իրոք որ դարձրին ղեկավար։ Նա գիտեր, որ իր համար այլևս խաղաղ և օրինական կյանք չկա մինչև աշխարհի, իրերի փոխվելը, որ նրան սպասում է արյունալի, փոթորկոտ մի կյանք, որ կարող էր վերջանալ իր վերջով թերևս։ Այս հուսահատ և նաև հուսալից վիճակը նրան իրոք որ ներշնչում էր իսկական զինվորյալի ոգի։ Եվ Առաքելին այդպես էլ ընդունելով բազմությունը՝ ձգտում էր դեպի նա։

Նախարարների և հոգևորականների ճանապարհվելը էջմիածին՝ առանց ժողովրդին հրավիրելու այնտեղ, շատ բնական և հասկանալի բան էր։ Բայց այսպիսի մի դաժան արհավիրքի ժա-

մանակ ժողովրդից հեռու հավաքվելը և որոշումներ կայացնելը, երբ խնդիրը վերաբերում էր երկրի գոյության, անհանգստացրեց ժողովրդին։ Ի՞նչ կվճռեին... ի՞նչ կձեռնարկեին... Կմնայի՞ն հավատարիմ այն ուխտին, որ կնքեցին տաճարում նամակի պատասխանի ժամին... Չէ՞ որ մեջները կային այնպիսի հակառակորդներ, ինչպես Վահեվունյաց նախարարը, Գադիշոն, ուրիշները, և վերջապես մարզպանն ինքը։ Ճիշտ է, նախարարները երդվեցին հավատարիմ մնալ հայրենիքին, պաշտպանել այն։ Կկատարեի՞ն իրենց տված խոսքը։

Տարակուսանքներով և անհանգիստ հարցերով շրջապատեցին Առաքելին և մյուս ղեկավարներին։

— Գնացին վճիռը դնելու, Առաքե՛լ շինական,— ասաց Հովակիմ դարբինը։

— Գնացի՞ն... — ցածրաձայն ասաց Առաքելը և կրկին ծնոտը դրեց սրի դաստակին դարսած ձեռների վրա։

Հովակիմ դարբինը կարծես լիովին հասկացավ Առաքելին և լուռ մնաց կանգնած։ Նրա փոխարեն բազմությունից լսվեցին խառն ձայներ։

— Իշխաններն ու սևավորները գնացին վճիռ դնելու։ Բա մենք չիմանա՞նք, թե ինչ վճիռ կհանեն։

— Երկրի տերերն են, կանեն։ Էստեղ, մե՞նք ինչ։

— Ո՞նց թե մենք ինչ։ Մեր երկիրն է ձեռից գնում։

— Տեղդ ծանր կաց, կանեն ինչ որ պետքն է։

— Կանեն, վե՞ր ընկի էստեղ փալասի կտորի պես։ Բա մենք էստեղ բան չե՞նք։

— Էդ մեզ չեն հարցնի։

— Ո՞նց թե մեզ չեն հարցնի։ Բա ո՞վ պիտի կռվի։

— Զորքը։

— Զորքը մենակ ո՞նց կարող է։ Էդ զորքն էլ մենք չե՞նք։

— Իշխանությունն իրենցն է՝ հրամանն իրենցն է։

— Դե ասա գնանք ջո՛ւրը լցվենք։

Պինդ սեղմած շարքից մեկը գլուխը դուրս հանեց ու շիկնելով ձայնեց.

— Ջուրն ինչո՞ւ ենք լցվում։ Մենք էլ մեր գործը կանենք։

— Ի՞նչ, գնանք Էջմիածի՞ն։

— Էջմիածի՞ն։

— Էջմիածի՞ն գնում, ժամ պատարա՞գ անեմ, հավատի կռի՞վ տամ։

— Հավատի կռիվ ինչի՞ ես տալիս։ Դու քո կռիվը կռվի, թշնամիներս մեկ է։

— Հա՛, հա՛, մեջտեղը հայրենիքն է, երկիրն է, զինվորյալ ենք։

— Արդար է,— լսվեց ամեն կողմից։

— Արդար է, բայց հիմի ի՞նչ եք անում։

— Ի՞նչ, գնանք հետները, ասենք կռվեն։ Էն պատասխանը, որ տվին թագավորին, կռիվ չի՞։ Կռիվ է ու արյուն է, պիտի կռվենք։

— Է, ո՞վ է կռվի դեմ...

Առաքելը գլուխը բարձրացրեց սրի դաստակին հենած ձեռների վրայից ու վճռական նայեց վիճողներին ու բազմության։

— Սպասե՛ք,— բարձրացրեց ձեռը Թեթևակի,— նրանք իշխանավորներ են, գնացին իրենց գործին։ Նրանք մեզ չեն հարցնի։ Կարող է վերջը հարցնեն, թե շատ նեղը մնան։ Էդ էլ կտեսնենք։ Հիմի մեր անելիքն ի՞նչն է։ Մենք ռամիկ ենք, ուզում ենք դուրս գալ, մեր երկիրը պաշտպանել։ Իմացեք, առանց նրանց չենք կարող։ Մենակ թե նրանց հետ՝ մեր գործը պիտի լավ իմանանք։ Վեր կկենան մեզ պես, կկռվեն՝ լավ, չե՞ն վեր կենա, չե՞ն կռվի — մե՛նք պիտի կռվենք։ Հիմի գնանք տեսնենք ինչ են անում, մեր անելիքը վճռենք, անել տանք՝ ինչ կարող ենք։

— Արդա՛ր է,— լսվեց այս ու այն կողմից։

— Ճշմարի՛տ, գնանք։

— Գնա՛նք,— վճռեց բազմությունը։

Էջմիածնի ճանապարհից հապշտապ մարդիկ էին դալիս։ Մոտեցան։ Դրանք շինականներ էին, որոնց մտահոգ ու շփոթված կերպարանքները մատնում էին, որ ինչ-որ արտակարգ բան է պատահել կամ գնում են մի տեղ, ուր դեպքերը պիտի տեղի ունենան։ Նրանք տեսնելով դեպի Էջմիածին գնացող բազմությունը, մի պահ կանգ առան։

— Հա՛, ի՞նչ կա,— հարցրեց Առաքելը։

— Ո՞ւր են արտաշատցի զինվորյալները,— հարցրին նրանք,— իմացած եղեք. նախարարները գնում են թագավորին հնազանդվելու։

— Ո՞վ տաց,— հարցրեց Առաքելը։

— Ողջ էջմիածինն է խոսում։ Ժողովուրդը հավաքվել է էջմիածին, չի թողնում։ Դուք է՛լ հասեք։

— Գնանք տեսնենք ինչ լուր է,— շտապեցրեց Առաքելը։

Բազմությունը թափով գնաց։

Երբ Վասակը լուր ստացավ, որ բոլոր նախարարները և հոգևորականները արդեն հավաքվել են, համարեց, որ ժամ է նաև իրեն շարժվելու։ Նա վերցրեց հետը այդ օրերը միշտ իր մոտ հյուրընկալվող Գադիշոյին, և երկուսով ճանապարհ ընկան դեպի էջմիածին։

Այրարատյան դաշտը լցված էր եկող՝բերքի բոլոր բույրերով։ Թեժ արևը հալվել էր խաղողի այգիների հողե պարիսպների, փոշոտ ճանապարհների և հեռավոր լեռների լանջերի մոտ։ Մասիսի վիհն ու պատառոտուն լանջերը լցված էին կապույտ ստվերներով։ Ճանապարհը, որով գնում էին Վասակն ու Գադիշոն, ոլորվում էր շամբերի արանքով։ Օդում և խոտերի մեջ մնջում էին թռչունները։ Այնպիսի անդորր էր շուրջը՝ կարծես ոչինչ չէր պատահել ու չէր պատահելու։

Մի կարավան էր օրորվում հարավից։ Նառը հպարտ նայեց Վասակին և արհամարհանքը մշուշոտ ու խեթ աչքերում ցայտեց։ անցկացավ։ Կարավանապետը և իր օգնական ուղտապանները վայր թռան ուղտերից և բերանքսիվայր ընկան դետին, երբ հավասարվեցին Վասակի և Գադիշոյի անցնելուն։

Վասակը կանգնեցրեց նժույգը և նշան արեց կարավանապետին, որ մոտ գա։ Կարավանապետը խիստ սևադեմ, պնդակազմ ալեխառն մի մարդ՝ մոտ վազեց և բարև բռնած կանգնեց ճանապարհի եզրին։

— Որտեղի՞ց եք գալիս,— հարցրեց Վասակը։

— Տիզբոնից, տեր մարզպան,— պատասխանեց կարավանապետը ակնածանքով։

— Չորք տեսա՞ր ճանապարհին։

— Տեսա. Նյուշապուհ էին գնում։

Վասակը նժույգին խթեց ակամա։

— Շա՞տ էին,— հետաքրքրվեց նա։

— Քառասուն, հիսուն հազար։ Ջայն կար, որ Հազիերտը գնում է քուշանների դեմ։

Ջոր ու անշնորհակալ Վասակը նժույգը քշեց։

Գադիշոն հետևեց նրան։ Արագ անցան։

— «Նյուշապո՜ւհ» է գնում, իսկ լրտեսներս զբոսնո՜ւմ են... Թերևս շրջվի այս կողմ... — ասաց Վասակը։

— Հաղիվ թե,— հանգիստ ասաց Գադիշոն։

— Խարդախ է օձը։

— Բայց խելացի էլ է,— բացատրեց Գադիշոն,— եթե զենքի ուժով կամենար գործը գլուխ բերել, հրովարտակով չէր սկսի։ Նա սպասում է պատասխանի։ Նախ կամենում է խաղաղ միջոցներով։

Վասակին զարմացնում էին Գադիշոյի անվրդով ու ինքնուրույն դատողությունները։ Նա ազդվեց այդ պնդաճակատ ու ինքնամփոփ մարդուց, որ երբեք չէր կորցնում իրեն։

Կոչնահարության ուժեղ ձայներ էին լսվում։ Վասակը կանգնեցրեց նժույգը։

— Էջմիածնից է,— ասաց Գադիշոն։

— Այնտեղ գնաց նա, չսպասելով մեզ և արդեն սկսե՞լ...։

— Այո՜...

Վասակը հուսահատ շարությամբ նայեց Գադիշոյին։

— Ի՞նչ, ուրեմն նա պիտի ամբողջ ազգը ոտքի՞ հանի։ Զաբեհավանից պարսիկ զո՞րք բերել տամ։

— Այդպես միայն գործի կանցնես,— ասաց Գադիշոն։

— Գնանք էջմիածին, ես կարգելեմ նրան խոսվել երկիրը, դուրս կվռնդեմ այն խելագար երեցին։ Նա էլ անշուշտ այնտեղ է։

Խոսքը Ղևոնդ Երեցի մասին էր։ Ու մինչ նրանք մոտենում էին էջմիածնին՝ ճանապարհի աջակողմից նրանց դիմաց դուրս եկավ մի հսկայական երթ ահագին բազմության, որի գլուխ էր անցել Ղևոնդ Երեցը։ Հազարգլուխ վիշապի պես սողում էր նա Վասակի կողմը սև ու թանձր։ Այդ բազմահազար ամբոխը հավաքվել էր դաշտավայրի շեներից և գնում էր դեպի էջմիածին։

Հանկարծ բազմությունը ցնցվեց, և հազարավոր դեմքեր դարձան դեպի դիմացը։ Այնտեղից հորձում էր մի ավելի մեծ բազմություն, որի գլուխ էին անցել Վարդանը և մյուս նախարարները։ Նա ժայթքելով գալիս լափում է ամեն ինչ և աջ ու ձախ բազուկներն արձակում, խուժում փողոցներն ու անցքերը։ Բազմությունը ալիք-ալիք եկավ խառնվելու Ղևոնդ Երեցի զանգվածին։ Վարդան Մամիկոնյանն ու նախարարները գալիս էին զանգվածի ուժով

մղված։ Վարդանի ահեղ կերպարանքը եկավ դեպի Վասակը և բազմության հետ նկարվեց նրա դիմաց։ Վռամը քաշվեց դեպի Վասակը, Գադիշոն ձեռքը բարձրացրեց բազմության վրա՝ հանդարտեցնելու շարժումով։ Երկու բազմությունները իրար լափելով միացան երկու հեզեղի պես և կուլ տվին նախարարներին։ Վասակը սարսափեց, սարսռաց։

Իշխանները մտան տաճար։ Մռայլ կամարները իրենց սառն ու խունավ շնչառությամբ ճնշեցին եկվորներին, իսկ տաճարի դասը սևացել էր այնտեղ լցված հոգևորներով։ Նրանցից մի մասն էլ հավաքված էր երկրի զանազան գավառներից, ինչպես և կոչի հրամանի մեջ հականե անվանե նշված նախարարներից զատ՝ եկել էին նաև այլ նախարարներ, որոնք անհանգստացել էին կոչի հրամանից։

Կաթողիկոսը դարձավ իշխաններին.

— Հնազա՞նդ եք կոչի հրամանին, գնալ Պարսկաստան։

Ճնշող լռությունը կլանեց ամեն մի շնչառություն։

— Տե՛ր մարզպան, դո՛ւ պատասխան տուր. հնազա՞նդ ես կոչի հրամանին։

— Ես մարզպան եմ, հպատակ եմ արքային։ Ուրիշ ի՞նչ վճիռ կարող եմ տալ...

— Եվ դու, տե՛ր Արծրունյաց, ավագդ նախարարաց, նաև դո՞ւ հնազանդ ես կոչին։

— Չկա ուրիշ ելք, տեր հոգևոր, պետք է գնա՛լ՝ թերևս այդ է բարին։

— Բարին այդ չէ,— բարձրացրեց ձայնը կաթողիկոսը զայրույթի շեշտով և հազիվ պահելով իրեն, որ չգոչի,— բարին չէ՛ այդ միայն... Քրիստոսի պա՛կը նահատակության կարող եք ընդունել նաև այստեղ...

— Քրիստոսի պակը կընդունենք այնտեղ, տեր հոգևոր,— ասաց Ներշապուհը,— մի՞թե կա տարակուսանք այս մասին...

Կաթողիկոսը տարակուսանքով նայեց մյուսներին.

— Հարցմունք եմ անում նաև ձեզ, տանուտյա՛ր և իշխա՛ն Աշխարհին հայոց։ Ո՞րն է լավագույնը՝ գնա՞լ թե չգնալ։ Տեր Մամիկոնեից, տո՛ւր պատասխան առաջի աստուծո և ժողովրդյան։

— Հարկ է։ որ գնանք, հոգևոր տեր։

Ամենքը դարձան դեպի նա ներշնչված և զարմացած։

— Պետք է գնանք, հոգևոր տե՛ր,— բացատրեց Վարդանը,— թերևս այնտեղ իր բնում խեղդենք արհավիրքը։— Ժամանակ շահենք։

— Իսկ եթե փորձությունը չփոթմունք ծնի ձեր հոգիների մեջ։ Եթե որևէ մեկը թուլանա ոգո՞վ։

— Թուլացյալ ոգիները, նախքան կանցնեն թշնամու կողմը՝ կոչնչանան մեր ձեռքով,— սպառնալի շեշտով ու մռայլ զորակոչի հանգիստ եղանակով ասաց Վարդանը։

Բոլոր իշխանները ակամա ակնածանքով նայեցին նրան։

Կաթողիկոսը բարձրացրեց ավետարանը, որ բռնել էր մինչ այդ, և ասաց.

— Օ՛ն, ուրեմն, տյա՛րք, երդվեցե՛ք այս ավետարանիս վրա, որ հավատարիմ կմնաք աստուծո և ժողովրդյան։ Տե՛ր մարզպան, տե՛ր Արծրունյաց, տե՛ր Մամիկոնեից...

Վասակը, Ներշապուհը, Վարդանը իրար հետևից մոտեցան ավետարանին և ձեռները վրան դնելով մեկ-մեկ, իրարու հետ հայտնեցին։

— Երդվում եմ։

— Երդվեցին մյուսները ևս։

Տիրեց այն հանդիսավոր և ծանր լռությունը, որ հետևում է բռնադատված և աղետալի ձեռնարկներից առաջ։ Սակայն վանքի ներսում գտնվածները լսել սկսեցին հետզհետե աճող մի իրարանցման աղմուկ, որ հասավ դրսից։

— Ժողովո՞ւրդ, գնո՞ւմ են,— լսվեց վանքի մուտքի մոտից մի անհանգիստ և գրգռիչ ձայն։

— Գնո՞ւմ են...

Բազմությունն իրար անցավ և ուժեղ մռլտոցով խեղդեց այս խոսակցությունը։ Մարդիկ սկսեցին սեղմվել դեպի վանքի մուտքը։

— Լո՛ւռ կացեք այնտեղ,— հրամայական շեշտով գոչեց մի ռեպուհ վանքի մուտքի մոտից։

Բազմությունը մի պահ սպասեց։

— Տյա՛րք և տանուտյա՛րք,— ասաց կաթողիկոսը,— հատկություն է մարդկային բնույթի՝ գայթակղություն, փորձություն սատանայի, թուլացում ոգու կամա թե ակամա, հայտնի թե ծածուկ... Տեսե՛ք, ձե՛զ դատելու է Աշխարհն հայոց։ Հավատարի՛մ

մնացեք ձեր հայրենիքին և սուրբ հավատին։ Զորավիգ ձեզ ժողովո՛ւրդն հայոց. ձեզ ոգի՝ ոգիները բյուրավոր։ Գնացե՛ք, երթա՛ք խաղաղությամբ։

— Մնա՛ք խաղաղությամբ,— ասացին նախարարները և համբուրելով կաթողիկոսի աչը՝ շարժվեցին դեպի տաճարի մուտքը և հենց որ երևացին՝ մի թափով բազմությունը վազեց նրանց առաջ։ Նախ՝ լսվեց անորոշ աղմուկ, որից ոչինչ չէր հասկացվում։ Թիկնապահները փորձեցին ճանապարհ բանալ իշխանների համար, բայց բազմությունը փակեց նրանց ճանապարհը։ Սա մի նոր հանդգնություն էր Արտաշատի տաճարի դեպքերից հետո։ Վասակը սևացավ զայրույթից. նայեց Գադիշոյին, որ նույնպես զայրացավ, բայց ոչինչ չխոսեց։ Ու մինչ կվճռեր մի բան ձեռնարկել՝ հանկարծ լսվեց Առաքելի ազդու բարձր գոչը.

— Ժողովո՛ւրդ, դե՛մ կանգնիր, չգնա՛ն...

— Ճանապա՛րհ, ճանապա՛րհ... — սաստում էին թիկնապահները մտրակները շաչեցնելով օդի մեջ և նժույգները քշելով բազմության վրա։

Բազմությունը սակայն տեղի չտվեց, ընդհակառակը, զայրացավ և հարձակվեց թիկնապահների նժույգների վրա, ողողեց նրանց, գնաց շրջապատեց նախարարներին։

Վասակը և նախարարներից ոմանք նշան արին թիկնապահներին, որ հեռացնեն բազմության։

— Թո՛ւյլ տվեք,— ձայնեց Վարդանը թիկնապահներին և կանգնեց բազմության առաջ։

Բազմությունը խռնվեց Վարդանի դեմ։

— Ի՞նչ է ձեզ վրդովում, եղբայրնե՛ր,— հարց տվեց Վարդանը՝ հազիվ զսպելով ակամա զայրույթը բազմության այս անպատշաճ վարմունքից։

Իսկույն Առաքելը ճեղքեց արտաշատցի և ակոռեցի զինվորյալների շարքը և գնաց առաջ կանգնեց։

— Ո՞ւր եք գնում... — հարցրեց նա մռայլ կշտամբանքով։

Ամեն ինչ պապանձվեց։ Անշուշտ հանդուգն շինականը դաժանորեն պիտի տուժեր։ Այլևս սա՛նց կացավ նախկին դեպքերի հանդգնությունից։ Բայց Առաքելը, հավատարիմ զինվորյալի — իրեն առաջ գցոզի — կանոնին, զինվորյալի մշուշը աչքե-

բում մթնած և մահվան հանդեպ անզգա, գնաց ընդհուպ մոտեցավ Վարդանին։

— Ո՞ւր եք գնում... — համառ ու չոր ձայնով հանդգնեց նա և երբ միաժամանակ տեսավ պոռթկալու մոտ Վասակի զարյացած դեմքն ու թունավոր աչքերը՝ արհամարհական շեշտով նեռեց.

— Մենք գլխներիցս անցած մարդիկ ենք, իշխաններ, մեզ մահով չեք վախեցնի,— ու կոպիտ դարձավ կրկին Վարդանին.

— Գնում եք բռնավորի դուռը. ապա ո՞ւմ եք թողնում աշխարքը։

— Աշխարհը թողնում ենք ուխտյալ զինվորյալ ժողովրդին հայոց,— մռայլ հանգստությամբ պատասխանեց Վարդանը։

— Մենք բոլորս զինվորյալ ենք, Սպարապետ,— համառեց Առաքելը,— բայց ի՞նչ իմանանք, թե մեզ չե՞ն դավաճանի դավաճանները։

— Ո՞վ դավաճանի, աշխարհը հո ինքն իրեն չի դավաճանի, շինական աստծո,— պատասխանեց Վարդանը։— Ձեր կամքը ձեր ձեռին է։ Գործեցեք՝ ինչպես կամենաք։

— Մի՛ք գնա,— ասաց Առաքելը,— հանեք աշխարհքը բռնավորի դեմ, կելնենք բոլորս։

— Մի՛ք գնա, մի՛ք գնա,— բազմաձայն արձագանքեցին նրան ամեն կողմից։

Վարդանը ձեռը բարձրացրեց, որ լռեն ու լսեն իրեն։

— Վանեցե՛ք ամեն տարակուսանք և կասկած,— ասաց նա վճռական ձայնով,— մենք երդվել ենք աշխարհի առաջ և կրկին կերդվենք, որ Հայոց աշխարհը չենք տա բռնավորին։

— Երդվեցե՛ք,— ձայնեցին չորս կողմից։

— Հոգու պարտք աշխարհքի առաջ, իշխաննե՛ր. երդվեցե՛ք,— ձայն տվեց Աբրահամ պապիկը։

— Երդվում եմ ահա աշխարհի առաջ,— խաչակնքեց Վարդանը երեսը,— և վկայում եմ, որ բոլոր իշխանները երդվել են։

Վասակը արդեն դողում էր զայրույթից։ Մեկ փորձեց զայրույթը թափել, հրամայել զորքին, որ ոչնչացնեն հանդուգն շինականներին, բայց նա կրկին զգաց այն հոգեկան արտակարգ կաշկանդումը, որ պատճառում էր նրան ժողովրդի համատարած

ցասումը, որով և պապանձվել էին շուրջը մյուս նախարարները։ Եվ նա զսպեց իրեն, լռեց։

— Մնացեք հոգով անդորր,— ասաց Վարդանը մեղմ և տխուր նայելով Առաքելին և ապա բազմության,— աշխարհը թողնում ենք արքունական զորքին և զինվորյալ ժողովրդին,— կրկնեց նա հատուկ շեշտով, հետո նստեց նժույգը և ձեռը տարածեց օդում.

— Վստահեցնում եմ և կրկին երդվում ձեր և աշխարհի առաջ. չենք ուրանա մեր աշխարհը։ Եթե ուրանանք, թող աշխարհն էլ մեզ ուրանա։

— Կո՛չ ենք կոչում ձեզ, իշխաններ, դիմադրեցեք բռնավորին,— կրկին հանդգնեց Աբրահամ պապիկը։

Զինվորյալները առաջ մղվեցին։

— Սպարապետ.— գոչեց առաջ գալով Առաքելը,— գնացեք ու իմացեք,— կմեռնենք՝ աշխարհքը չենք ուրանա...։

— Չե՞նք ուրանա, չե՞նք, չե՞նք, չե՞նք...։

Սկսվեց ուժեղ կոչնահարություն։

— Տե՛ր, ուղղյա զգնացս նահատակաց,— ձայնեց Ղևոնդ Երեցը և խաչը բարձրացրած միացավ նախարարների երթին։

Բազմության հոսանքի մեջ սաղավարտներ եռացին դեպի Վարդանը։ Դա զինվորներ էին, որ այս դեպքի համար դրել էին իրենց սաղավարտները՝ իբրև նշան մարտական պատրաստության։

Երբ նախարարները անցնում էին, մարտիկներն առաջ եկան ու շրջապատեցին նրանց։

Վարդանը կանգ առավ և բարձրաձայն դիմեց նրանց.

— Տղայք, չթողնեք ժողովրդին անպաշտպան, ետ գանք՝ չգանք, ձեզ ենք թողնում ժողովուրդն հայոց։

— Մենք զինվորյալ ենք, Սպարապետ,— գոչեց մի մոայլ զինվոր,— մեր արյունը ժողովրդին։

— Պի՛նդ կացեք, մենք կանգնած ենք,— գոչեցին զինվորները։

— Դե՛, երկար արև՛ ձեզ։ Մնա՛ք բարյավ,— ասաց Վարդանը։

Մարտիկները վրա ընկան և սկսեցին իրար ձեռից խլելով համբուրել նրա աչքը, նժույգի աչքերը, սանձը։

Լսվեց հեծկլտոց։ Դա կանայք էին, որ բազմության մեջ հառաչանքով նայում էին Վարդանին։

— Սրտապի՛նդ կացեք, իշխաններ,— գոչեց վերջին անգամ նախարարներին Աբրահամ պապիկը,— մեռեք՝ մենակ դավաճան ետ չգաք։

Վարդանը խոր խոցված նայեց զինվորներին և բազմության։

— Պաշտպանե՛ք հայրենին,— գոչեց բազմությունը։

— Մահ հայրենին ուրացողին,— սպառնալից գոչեց Աբրահամ պապիկը։

Այս և այսպիսի ձայներ ուղեկցում էին իշխաններին Վաղարշապատի փողոցով։ Նախարարները դուրս եկան քաղաքի պարըսպից և ճանապարհ ընկան դեպի Արտաշատ՝ այնտեղից մեկնելու Պարսկաստան։ Ժողովուրդը գնաց հետևերը ճանապարհ դնելու։

Նախարարները Վարդանի և ժողովրդի աննախընթաց անմիջական վերաբերմունքի մեջ տեսնելով ժողովրդի հանդգնությունը՝ շատ վրդովվեցին, տեսնելով, որ կոխկրտվեց անջրպետը իշխանի և շինականի միջև։ Բայց և զգացին, որ այդ բանը քննելու ժամը չէր այլևս, որ հասել են տարաժամ, տարադեպ օրեր։ Վարդանի կողմնակիցները մինչև անգամ գտնում էին, որ այս պահիս համար դա հարկավոր է։

Ղևոնդ Երեցը նկատեց Վասակի դեմքին չարամիտ կնճիռներ, զգաց, որ նա կամենում է խափանել երթը։ Արծվային մագիլների նման ձեռքի մատներով խլեց նրա նժույգի սանձը և գոչեց դողահար.

— Մի՛ կանգնիր հակառակ աշխարհին, այլևս մեզ երկյուղալի չեն ոչ իշխան, ոչ թագավոր։ Մեր խիղճն է մեզ դատավոր։

Բազմությունը լսեց այս և ալիք-ալիք սեղմվեց Վասակի և Ղևոնդ Երեցի շուրջը։

Վռամն սկսեց մտրակահարել աջ ու ձախ, սակայն ոչ ոք ծեծվողներից չէր հեռանում։ Սկսվեց մի արտասովոր, անհասկանալի մղումն։ Մարդիկ վազում էին, թեև ընկնում մտրակի հարվածների տակ և չէին սազում զրկել իրենց այդ տեսարանից։ Հետևի շարքերը չհասկանալով կատարվածը, ոգևորված Վասակի ներկայությունից՝ գոչում էին.

— Մարզպանը զինվորյալ է գնում, մարզպանը զինվորյալ է գնում։

Իսկ Ղևոնդ Երեցը ցնցում էր նժույգի սանձը և չնայած Վասակի ճիգերին հեռացնելու նրան, ինչպես նաև նժույգի խրտնելուն, բայց նա ոգորում էր.

— Ե՛կ զինվորյալ, առաջնորդի՛ր ժողովուրդը հայրենյաց պատերազմին։

— Տե՛ր մարդպան, չենք կարող ընդդեմ գնալ աշխարհին և ճշմարտության, մի՛ կանգնիր հանդիման,— գոչեց Վարդանը։

Բազմությունը կատաղի թափով օրորվեց, քանդվեց ու բեկոր-բեկոր եկավ սեղմվեց Վասակին։ Գոռոց էր միայն լսվում, մի անընդհատ ջրվեժի ահեղադղորդ գոռոց, որ սպառնում էր ոչնչացնել, եթե միայն — վա՜յ Վասակին — մի ակնթարթ նա ցույց տար որևէ հակառակություն։ Վասակը շարժում արեց, որ նժույգն ազատի Ղևոնդ Երեցի մագիլներից, սակայն իզուր եղան նրա ջանքերը։ Նրա նժույգը սեղմվել էր արդեն բազմության զանգվածի մեջ։ Նժույգը փնչացնում, ծառս էր ելնում, կոխկրտում էր մարդկանց ոտները։ Իսկ չորս կողմից ավելի ու ավելի ճնշում էին մարդկային զանգվածի հեռավոր ալիքները։

Վարդանը գլխով նշան արեց բազմության շարժվել դեպի Մասիսի կողմի փողոցով։

— Առա՜ջ, առա՜ջ,— որոտաց բազմությունը և հոսանք առավ դեպի Վաղարշապատի հարավային դուռը։ Հոսանքը տարավ բոլորին, ինչպես նաև Վասակին, որի նժույգի սանձին կպել էին Ղևոնդ Երեցի պողպատե մատները։ Վասակը սարսափից համակերպված գնաց առաջ և դադարեց ընդդիմանալուց։ Նրա կատաղությունը ճնշվել էր կենդանական սարսափից։ Նա նոր հասկացավ, որ իր կյանքը վտանգված է, և սքեց։ Նա նման էր որսորդների խիտ շարքով օղակված գայլի, որ սարսափից անդիմադիր մղվում է առաջ դեպի մահ։ Նա ջանում էր չնայել Գագիշոյին, որից ամաչում էր իր այս անօրինակ նվաստացման համար։ Միայն իր հետևից զգում էր Վռամի մոնչոցները։ Երբեմն նա հատուկտոր լսում էր Գագիշոյի ձայնը։ Նախարարը խոսում էր Վռամի հետ, ինչպես հավասարի հետ։ Այս բանն ավելի ազդեց Վասակին, և երկյուղը ավելի թափանցեց նրա սիրտը։ Մարդիկ հավասարվում են և հասարականում մեծ վտանգների պահին։

— Գի՛նդ կպիր թամբին,— գոչեց Վռամը Գագիշոյին։

— Նժույգը խրտնում է, հեռո՛ւ քաշվեք,— դարձավ Գադիշոն բազմության, որ սեղմում էր նրա նժույգն ու ոտները՝ հսկայական աքցանի պես։

— Մի՛ խոսիր, տե՛ր,— հանդիմանեց Վռամը։

Գադիշոն նայեց Վռամի գունատված դեմքին և նոր հասկացավ, որ իր հասկացած վտանգից ավելի մեծ սարսափի մեջ են իրենք։

Երթն իր ուռած վիշապի իրանը սեղմելով քաղաքադռան անցքի մեջ՝ սողում էր դուրս։ Երկար տևեց անցումը։ Հազարավոր գլուխներ իրար էին զարկվում, բռունցքներ բարձրանում, արմունկներ ճնշում իրար։ Դռան երկու կողմի կավե պատը փլավ, գետը ճռնչաց, դուրս ընկավ։ Պահակները հեռու փախան։ Մեբուկ պահակապետը մղվեց դեպի քարուքանդող բազմությունը բազուքի հայհոյանքով, սակայն նրան խլեցին ու տարան հետները։

Երբ դուրս եկան դաշտ, Վարդանը նշան արեց, որ կանգնեն։ Երկար ժամանակ տևեց, մինչև բազմությունը կանգ առավ։ Դառնալով Ղևոնդ Երեցին՝ Վարդանը գոչեց.

— Արձակի՛ր տեր մազպանին։

Ղևոնդ Երեցը շարունակեց բռնել սանձը։

— Արձակի՛ր,— սաստեց Վարդանը։

— Տե՛ր Մամիկոնեից,— աղաղակեց Ղևոնդ Երեցը,— եթե ձեր մարզպանը հավատարիմ է ուխտին, ինքը կգա մեզ հետ, ինքը կհեռանա։

— Տեր մարզպանը հավատարիմ է ուխտին,— ասաց Վարդանը,— արձակի՛ր։

— Աստվա՛ծ արձակի նրան,— թափ տալով սանձը բաց թողեց ձեռը Ղևոնդ Երեցը,— ահա՛ արձակեցի ես։ Գնա խաղաղությամբ։

— Օ՜ն, ճանապա՜րհ, տե՛ր մարզպան և դո՛ւ, իշխան,— դարձավ նաև Գադիշոյին Վարդանը։

— Մնա՛ք խաղաղությամբ,— կեղծ հանգստությամբ գոչեց Վասակը և նժույգի գլուխը թեքեց դեպի Արտաշատի կողմը։

Բազմությունը ճեղքվեց և ճանապարհ բացեց նրան։ Վասակը սաղ էությամբ նողկանք ու սարսափ զգաց այդ քրտնահոտ, ծանրահև, տաքացած զանգվածից և անցավ արագ, դուրս եկավ նրա միջից, ինչպես բանտից։

— Փա՜ռք աստուծո,— մռմռաց Վռամը։

Երբ մի փոքր անցան, ետ նայեցին։

Բազմությունը սև ամպի պես լողում էր դեպի Արաքսի կողմը։ Նա գնում էր ավելի ուշելու, ծավալվելու։ Վասակը լավ զգաց նրա ուժը և մտադրությունը.

— Մազապուրծ եղանք,— ասաց Գադիշոն։

Վասակը դեռ շարունակում էր խուսափել Գադիշոյի հայացքից, կարծես եթե նայեր նրան՝ կոչնչանար։ Ամոթանքը, նվաստացման զայրույթը, անճարության դառնությունը կաշկանդել էին նրան։ Խոսել անգամ չհամարձակվեց։ Խոսել կարելի էր այստեղ միայն հզոր բռնակալի արժանապատվությամբ և իշխանությամբ, երբ խոսում ես ու արյունը հոսում է։ Այդպիսի խոսք էր պետք ասել այժմ այնպիսի մի նախարարի, որ կուսակից էր դառել նրան և նայում էր նրան իբրև առաջնորդի։ Առաջնորդը մեռավ ամբոխի աքցանների մեջ, մի խելագար երեցի երկաթե մագիլների սեղմիչներում։ Հիմա մի բան միայն արժեք կտար, որ նա խոսեր.— անմիջապես բարձրացնել գետին ընկած մարդպանական կոչումը։ Դա կարելի չէր այլևս ընկնելով ըմբոստացած ամբոխի մեջ, Վռամի մտրակներով և իր նժույգի սմբակներով։ Կարելի չէր նաև այն դանդաղ ու մանվածապատ, խոհեմ ու նրբանկար գործելակերպով։ Հիմա հարկավոր էր զորական ուժ, զենք, կախաղաններ և արյունհոսություն։ Այդ բորբոքված, խելագար արյունը պետք էր թափել, պետք էր քամել արյունը հազարավոր մարդկանց բորբոքված սրտերից ու երակներից։ Արյունն է այժմ աղմկում, ըմբոստանում, անպատվում, դիմադարձ կանգնում։

— Արյո՜ւնը, միայն արյո՜ւնը,— շարունակեց բարձրաձայն Վասակը։

— Մի՛ վրդովի սիրտդ,— մխիթարեց Գադիշոն,— գարնան հեղեղ է. առաջ կխելագարվի, հետո կսմքի հեղեղատի մեջ։ Կպատահի՜, իշխանություն է։

Գադիշոյի մեղմ փիլիսոփայությունն այս անգամ սաստիկ գրգռեց Վասակին։ Նա այժմ արդեն մղվեց նայելու նրան, խոսելու հետը և զայրույթից կատաղած գայլի պես աչքերը գամեց նրա աչքերի մեջ.

— Իշխանությո՜ւն, ասում ես. ո՛չ, սա իշխանություն չէ։ Խլենք իշխանությունը և հետո դուրս գանք աշխարհ։

Գադիշոն մտրակեց իր նժույգը, որ սա կարողանար հասնել արդեն քառատրոփ ընթացող Վասակի նժույգին։ Վասակը թոցրեց իր նժույգը և աչքերը կատաղի սրի պես շողացրեց Գադիշոյի վրա։ Նրա ծռված շրթունքներից գոչումներ էին թռչում։ Նա ջանում էր արշավի թափի մեջ ցրել իր մտքերը, որ բարձրաձայն արտահայտվել էին միտում։ Այդ մտքերը վտանգավոր էին, նա ճգնում էր բաց չթողնել։ Բայց երբ մի անգամ նա պարզ վերապատկերացրեց մի փոքր առաջվա դեպքը, կորցրեց իրեն և գոչեց։

— Ե՛ս եմ, ե՛ս եմ «այն մարդը»...

Նա ակնարկում էր Գադիշոյի այն խոսքը, որ ասում էր. թե՝ ո՞վ էր այն մարդը, որ ձեռք կբերի ուժեղ իշխանություն։

Երբ վազքը դադարեց, Վասակը նշան արեց Վռամին, որ հեռվից հետևի իրեն և Գադիշոյին։

— Տե՛ր Խորխոռունյաց, ահա հարցում քեզ՝ առաջի աստծո և մարդկան, կամենո՞ւմ ես մենք անցնենք իշխանության գլուխ։ Ես և դու։

— Կամենում եմ, տեր մարզպան,— պատասխանեց Գադիշոն ծխական ձայնով։

— Երդվի՛ր։

— Երդվո՛ւմ եմ առաջի աստուծո և մարդկան։

— Բայց պետք է ուրացնել տանք ողջ երկիրը։

— Հասկացա, տեր մարզպան։

— Միաբա՞ն ես։ Վճռական։

— Միաբա՛ն եմ։

— Ուխտի՛ր։

— Ուխտո՛ւմ եմ։

Գադիշոն աշխուժացավ.

— Տե՛ր մարզպան. ես տեսա բոլորը. տեսա անիշխանությունը։ Ես վճռական մարդ եմ։ Կամ մենք նախարար ենք, և նա ժողովուրդ է, կամ մենք աղբ ենք, աղբանոց թափելու։ Բա՛վ է։ Շատ հանդուրժեցինք այդ խելագար Մամիկոնյանին։

— Ա՛յդ, ա՛յդ։ Ա՛յդ եմ ասում. խելագա՛ր Մամիկոնյանին։ Պետք է ջնջե՛լ նրան երկրի երեսից։ Նրա՛ն և իր կուսակիցներին։ Ասա վերջին անգամ. ուրանո՞ւմ ես,— հանկարծ հարվածեց Վասակը։

— Ուրանում եմ, քանի որ ոչ մի բանի չեմ հավատում։

— Դե, օ՛ն, ուրեմն։ Մենք ստեղծում ենք ուժեղ նահանգ Պարսկաստանի մեջ։ Իսկ հետո... կտեսնենք... Սա երկար կտևի, սիրելի Գաղիշո, սրա ջուրը շատ է... Գուցե մի քանի տարի...

— Դա կտեսնենք։

***

Պարսկաստան մեկնելու նախընթաց գիշերը Վարդանը իր մոտ կանչեց ուխտին հավատարիմ նախարարներին գաղտնի խորհրդակցության։ Հրավիրված էին Ներշապուհ Արծրունին, Մոկաց Արտակը, Ատոմ Գնունին, Հազարապետը, Անձևացյաց Շմավոնը, Արշավիր Արշարունին, Հմայակ Մամիկոնյանը՝ Վարդանի եղբայրը։ Վարդանը բացատրեց, որ վտանգը շատ լուրջ է՝ խրոխտ բովին գնալ պարսից Դուռը, կանգնել արքայական ատյանի առջև երկրից հեռու, թշնամի բռնակալի քմայքին հանձնված։

— Վիճակը տագնապալից է հույժ,— ասաց Վարդանը,— մարզպանի կուսակիցները կարող են թուլանալ, դավաճանել և տապալել դիմադրությունը, մինչդեռ միահամուռ դիմադրությունը կդժվարացներ Հազկերտին դիմել խստագույն միջոցներին և դա ելքի դուռ կբանար մեզ համար։

— Տեր Մամիկոնեից, մի՞թե բարվոք չէր, եթե մնայինք այստեղ և մերժեինք արքայի ատյանը,— ասաց Արշավիրը,— միևնույն չէ՞, որ չենք ընդունելու հավատուրացությունը ատյանում։

— Ատյանում պիտի բռնադատենք։ Նաև մենք, այո։ Թերևս՝ խելքի բերենք խելագարին։

Նախարարները չհամոզվեցին։ Այդ զգաց Վարդանը։ Նա լռեց մի պահ և խոսեց ավելի պարզ և վճռական։

— Չանսալ կոչի հրամանին, չգնալ ատյան՝ կնշանակի թույլ տալ, որ պարսից զորքը իսկույն շարժվի դեպի մեր աշխարհը։ Իսկ սա կնշանակի անկազմ ժողովուրդը վաղաժամ հանել պարսից կանոնավոր զորքի դեմ և գլխովին ջախջախել տալ խառնիճաղանջ դիմադրությամբ։ Պետք է գնանք ատյան։ Թեպետև մեր գնալով ատյան՝ մենք հրավիրում ենք մահու վտանգը մեզ վրա։ Բայց գուցե և միայն բանտարկություն։ Թերևս՝ թեև շատ է դժվարին՝ հաշտության եղը։ Սակայն մի բան ստույգ է, որ կձգձգենք գործը։ Մինչև լրիվ կհավաքենք զորքը և ապստամբվելու պատ-

բաստվող ժողովրդական ուժերը։ Զգձգել, ժամանակ շահել,— ահա՛ մեր ուժը, մեր խելքը, եթե ունենք։ Պարսիկների գործը ձգձգել, մերը՝ արագացնել։ Եվ հենց վաղվանից։ Եվ այնպես պիտի աշխատենք, իբրև թե մյուս օրն է ճակատամարտը։ Ահա, այարք, իմ միտքը։

Վարդանը խոսում էր, բայց միաժամ զննում էր նախարարների հայացքները։ Նրանց լռությունը մատնում էր ներքին շատ ավելի խոր տարակուսանքներ։ Թեթև չէր նաև Վարդանի հոգին, բայց նա զսպում էր իրեն և ջանում չպղտորել նրանց միտքը արհավիրքի մեծության խորհրդածություններով։ Նա նման էր ուժեղ մշուշի միջով խումբն առաջնորդող ուղեցույցի, որ ոգորում է փրկության հնարքները ստեղծելու համար, բայց որը գիտե, թե որքան համարյա անկարելի է չգտել փրկության, և որը ոգորում է անպայման հասնել դրան։

Վարդանը փորձիչ աչքերով կրկին զննեց նախարարներին և ապա հարցը սուր դրեց։

— Թերևս կա՞ ձեր մեջ մեկը, որ հակամետ է զիջել Հազկերտին...

— Եվ ո՛չ ոք... Ինչպե՞ս,— խթանված ցնցվեցին Ատոմը և Աբտակը միաժամանակ։

Խոսեց Ներշապուհը.

— Տեր Մամիկոնեից. մենք ևս հայրենասերներ ենք։ Մենք ևս չենք զիջի Հազկերտին։ Մեզ մտահոգում է միայն արհավիրքի մեծությունը։ Մեր ուժերը շատ են սակավ...

— Այո, շատ են սակավ... Բայց հո ամեն դեպքում կհարկադրվե՞նք ընդունել պատերազմը...

— Կհարկադրվենք,— ասաց Ներշապուհը։

Վարդանը անցավ վերջին խոսքին.

— Նաև կարող են մեզ ոչնչացնել։ Պատրաստ եղեք նաև սրբա՛ն։ Այնպես, իբրև թե միայն ա՛յս պիտի պատահի։ Գնացողներից մնացողներիդ ավանդ։ Շուտափույթ կազմել տերունական զորքը նախարարական զորագնդից։ Տեր Գնունյաց, քեզ վրա է ընկնում այդ գործի գլխավորումը։ Ինչպես և Համազասպ իշխանի վրա՝ հանդերձանքն ու ռազմապաշարը։ Արշարունյաց տերը, ինչպես և Մյուսները կմիավորեն նախարարներին։ Ահա բոլորը, այարք։ Ուխտյալնե՞ր ենք։

— Ուխտյալներ ենք։

— Դե՛, ձեզ օգնական աստվա՛ծ։ Վաղվանից գործի՛։

Նախարարները հանգստացան ըստ երևույթին։

— Մի վերջին խոսք ևս,— ասաց Վարդանը,— մի՛ մոռանաք ռամկին, քաշեցեք ռամկին գործի մեջ։ Բարձր հրահանգ.— չթույլ տաք թշնամիներին ժողովրդին վաղաժամ, խռովությամբ կռվի հանեն։ Թեթևացրեք վիճակը։ Իմացեք, ռամիկը մեր հո՞ւսկ վերջին հույսն է։

— Ինչպես երևում է,— հառաչեց Արշավիրը։

***

Վասակի ամրոցում կրկնվում էր այն ամենօրյան, որ կրկնվել էր տարիների ընթացքում։ Խաղաղ մի տխրություն միշտ ուղեկցում էր բնակիչների այդ առօրյային։ Ոչ մի դեպք,— գոնե արտաքուստ չէր վրդովում ամրոցի մռայլ կյանքը։ Բաբիկն ու Ներսիկն էին, որ երբեմն հեռանալով ամրոցից գնում էին որսի և վերադառնում հոգնած ու պատմում իրենց մորը՝ Փառանձեմ տիկնոջը՝ անտառների ու լեռնաձորերի նորությունները։

Սակայն այդ առերևույթ, մռայլ հանգստության քողի տակ երբեմն ստվերների պես սահում էին մարդիկ, լսվում էին փսփսոցներ, գաղտնի իրար անցնում և կրկին դադարում։

Փառանձեմ տիկինը շարունակում էր ապրել միանձնուհու կյանքով — իր օրիորդական հասակի փայփայած բաղձանքը, որ մնաց անկատար մարզպանի հետ ամուսնանալու պատճառով։ Երբ հիմա, երբ Վասակը շատ հազվադեպ էր լինում իր ամրոցում, Փառանձեմը մի այլ ձևով էր վարում միանձնուհու կյանք։ Ի բնե իմելացի և զարգացած կին՝ իր վիշտը թաղում էր ընթերցանության և զավակների կրթության հոգսերի մեջ։

Առավոտը մառախլապատ էր։ Մեգը թավալվելով ձորեձոր, սարեսար՝ բացում խփում էր սևամութ անդունդներն ու ծործորները։ Ամրոցի թերակղզին՝ մերթ աջակողմը, մերթ ձախակողմը կախվում էր անդնդից այդ բացուխուփի պահին։ Ճանապարհի բարակ շիկափայլ թելը ոլորվում, տեղ-տեղ կորչում էր և հետզհետե բարձրանում հասնում ամրոցը։ Հրդեհն էր ասես ճարակում

հինավուրց անտառները, որոնք բարդ-բարդ մշուշներ էին ծխում դեպի երկինք։

Փառանձեմ տիկնոջ օթևանում, նեղ պատուհանի գոգին կիսաթեք նստած էր Զվիկը և եռանդուն, սուր աչքերը հառել էր դեպի անդունդը։ Նա աչքերը կկոցել էր և ինչ-որ բան էր նշմարում ճանապարհին, անդնդի հատակում։ Ըստ երևույթին որոշեց, թե ինչ էր նշմարածը, ետ նստեց և գլուխը օրորելով նայեց օթևանի հատակին։ Ժպտաց յուրովի հեգնական դառնությամբ և կրկին նայեց դեպի դուրս։ Հեռուն, հեռուն որդի դանդաղությամբ եռում էին երկու սևինք, որ քանի գնում ավելի որոշ էին ճոճվում։

Զվիկը չնկատեց ինչպես ներս մտավ Փառանձեմը։ Նա իր լուրջ ու թախծալի սև աչքերը հառեց պատուհանին նստած Զվիկին և առանց կանգ առնելու սահեց գորգի վրայով դեպի գլխավոր բարձը, որի առաջ մի գրակալ էր դրած։ Նա վերցրեց մատյանը, որ հանգչում էր գրակալին, և բաց արեց նշան դրած էջը, որ կարդա։ Մագաղաթի չոր շրշյունից Զվիկը ետ նայեց և ուղղվեց իր տեղում։

— Ինչի՞ն ես նայում, Զվի՛կ,— հարցրեց մեղմ, կրծքի ձայնով Փառանձեմը։

Զվիկը, անհանգիստ և մի տեսակ խնայելով Փառանձեմին՝ աչքերը վախով, նրան ասաց.

— Գալի՞ս է...

Փառանձեմը հանկարծ ձեռները բարձրացրեց և վախեցած նայեց Զվիկին։

— Սիրտս վաղուց էր վկայել,— ասաց Փառանձեմը,— վաղուց է սիրտս կախ, միտքս մոլոր։ Զավակներս Պարսկաստան չտանի՞...

Հուզմունքը խեղդեց նրա կոկորդը, և նա լռեց։

— Լավ, քանի՞ տարի պիտի ուսում առնեն այդ քանդվածում, եթե, աստված չանի, տանի Բաբիկին ու Ներսիկին։

— Բանը ուսումը չէ, բանը պարսիկ դարձնելն է։ Այնքան պիտի պահի, որ պարսիկ դառնան, իրենց մայրենի հողը մոռանան, մորը մոռանան, դառնան իր պես... չգիտեմ ի՛նչ...

Վերջին խոսքերը Փառանձեմն ասաց՝ իրենից էլ պահելով այն միտքը, որ այրում էր նրա ուղեղը։ Նրա մեջ ծնվել էր ու անունդ էր առնում այդ միտքը, որ սկզբում տարտամ ու անա-

թորժ՝ հեռաշհեան դառել էր որոշ ու անհանգստացնող։ Ո՞ւր է նայում, ինչի՞ն է ձգտում Վասակը։ Նա չի սիրում հայ նախարարներին, չի ծածկում այդ, ատում է Մամիկոնյաններին, հատկապես Վարդանին։ Ինչո՞ւ համար։ Նրանց ատելությա՞ն համար պարսից բռնակալության։ Իսկ եթե ատում է Վարդանին և մյուսներին, որոնք պահպանում և պաշտպանում են հայրենի երկիրը, հողը, ի՞նչ է ապա ինքը Վասակը, ո՞ւմ է պաշտպանում... Փառանձեմը ճանաչում էր նրան, գիտեր նրա կրքերն ու բնավորությունը։ Լավ բան չի խոստանում այդ բնավորությունը։ Վասակը մի օր ցույց կտա իր ողջ ներքինը։ Եվ երևի արդեն դավում է։

Փառանձեմին վշտացնում և գաղտնի մաշում էին Վասակի այդ արատները, որոնք, զգում էր նա, աղետ պիտի բերեն մի օր երկրին։ Եվ եթե Վասակը բռնակալ, անտանելի մարդ, անհավատարիմ ամուսին էր իր ամրոցում, գոնե ազգի գործերում լիներ հավատարիմ, անձնվեր, օգտակար։ Այդ էլ չկար։ Իսկ դա մեծ վերք էր հայրենասեր տիկնոջ համար։

Նրան մեծ վիշտ էր պատճառում նաև այն, որ իր զավակներին ևս Վասակը տանում էր դեպի այլասերված կյանք, պոկում հայրենի հողից, ստիպում ծառայել հայ ժողովրդի թշնամի Հազկերտին։

Կգա շուտով, կկանգնի իր գլխին, կպահանջի իր զավակներին, չի նայի մայրական զգացմունքներին և պոկելով նրանց իր սրտից՝ կտանի հեռավոր, օտար, թշնամի երկիր, կկորցնի նրանց այնտեղ։ Այլևս ե՞րբ կգան իր զավակները, նրանք ի՞նչ կերպարանքով կգան, պահպանա՞ծ կլինեն իր ավանդները, հավատարի՞մ կլինեն իրենց հայրենիքին, լեզվին, իրենց հարազատ ժողովրդին։

Ներս վազեցին Բարիկն ու Ներսիկը։ Նրանք հուզված և վախեցած տեսք ունեին։

— Մայրի՛կ, գալի՞ս է... — ասաց Ներսիկը դողալով։

— Թող գա՛, ձագո՛ւկս, ինչո՞ւ ես դողում,— հազիվ ինքն իրեն զսպելով, գրկեց Ներսիկին Փառանձեմը,— նրա գալը քեզ համար ի՞նչ։

Փառանձեմը զգում էր, որ անզոր խոսքեր էր ասում։

— Մայրի՛կ, ես քեզ չե՞մ ուզում թողնել, ես կմեռնե՞մ առանց քեզ,— սկսեց հեկեկալ Ներսիկը։

— Չեմ թողնի, որ տանի, մի՛ վախենա. ո՞ւր պիտի տանի քեզ առանց ինձ,— ջանում էր հանգստացնել Փառանձեմը Ներսիկին, որ եղնիկի աչքերը երկյուղով հառել էր մոր աչքերին և ապավեն էր որոնում։

— Փախչե՛նք, Բաբի՛կ,— վազեց դեպի Բաբիկը և բռնելով նրա թևը՝ ասաց Ներսիկը։

— Չենք գնա, ինչո՞ւ պիտի փախչենք,— ասաց Բաբիկը մոայլ վճռական ձայնով և շարունակեց նայել պատուհանից դուրս։

Փառանձեմն անհանգստացավ։

— Բաբիկ սիրելի՛, հոգո՛ւդ մատաղ, չկռվես, կսպանի ձեզ։

— Սպանի՛ թող... նա ինձ սպանե՛լ է արդեն,— ասաց դառնությամբ Բաբիկը։

— Չէ՛, մի՛ ասի, կատաղի է նա, գիտես հորդ բնավորությունը։ Բաբի՛կ, խնդրում եմ, զգո՛ւյշ պահիր քեզ,— աղաչեց Փառանձեմը։

Սակայն Բաբիկը չէր լսում։ Նա թողեց պատուհանը և առաջ եկավ օթևանի մեջտեղ։

— Մեկը նրան հարց տա,— ասաց նա կշտամբանքի եղանակով,— ի՞նչ ես տանում զավակներդ մի երկիր, որի դեմ վեր են կացել մեր իշխանները, մեր ազգը։

Փառանձեմը խոցվեց մինչև սրտի խորքը.

— Ա՜խ, իմ խե՜ղճ զավակներս...

Ամրոցի բակում իրար անցան։ Ինչպես երևում էր, տեսել էին Վասակի գալը։ Դարբասը բացվեց, և նժույգները ծեծելով սալաքարերը՝ հանկարծ դադարեցին։

Սպասավորներն իրար անցան, վազեց գույնը թռած սենեկապետը, Փառնավազը, դուրս գնաց պատշգամ մինչև իսկ Զվիկը։ Բայց Փառանձեմը, Բաբիկը և Ներսիկը մնացին ներսը։

Վասակը վեր նայեց՝ որոնելով իր զավակներին, բայց տեսնելով, որ նրանք չկան, մի փոքր անհանգստացած հարցրեց.

— Երեխաներն ո՞ւր են։

Նա միշտ իր զավակներին երեխա էր ասում, ինչպես և Փառանձեմը։

— Ներսն են, տե՛ր մարզպան,— պատասխանեց սենեկա-

պետը վախեցած, կարծես իրենից պիտի պահանջվեր բացատրություն, թե ինչո՞ւ իր զավակներն իրեն չեն դիմավորում։

— Հիվանդ հո չե՞ն։

— Ոչ,— ավելի վախեցած պատասխանեց սենեկապետը։

Վասակը մռայլվեց և ինքն իրեն մռմռաց։ Նա խոցվեց։ Որքան որ դաժան էր նա և անգութ, որքան էլ որ ընդունակ էր անգամ վայրի ծեծի ենթարկելու իր զավակներին, այնուամենայնիվ նա նրանց սիրում էր և մինչև անգամ բուռն, ջերմագին։ Բայց որ չէր տեսնում նրանց փոխադարձությունը, տխրում էր։ Իսկ երբ նրանք հակառակում էին, նա կատաղում էր և այնօրվա ծեծը առաջինը չէր։ Կարելի էր ասել, որ նրա սերն անմիջապես փոխվում էր մոլեգին ատելության, և նա պատրաստ էր սպանել իր զավակներին։ Նա բռնակալ էր իր սիրո մեջ։

Վասակը բարձրացավ իր օթևանը և մտնելով ներս՝ կանգնեց նայեց չորս կողմը։ Ոչի՛նչ բան, ոչ մի առարկա իր սովորական տեղը չէր փոխել։ Ոչ մի բան իրեն ոչ մի նոր վերաբերմունք ցույց չէր տալիս։ Իսկ այդ «բանը» կարող էր և պետք էր, սպասելի էր, որ ցույց տար նրան այդ վերաբերմունքը։

— Ոչ ոք չի՞ մտել ներս,— հարցրեց Վասակը բարկությամբ սենեկապետին։

— Ոչ ոք, տեր իմ,— պատասխանեց սենեկապետը, չհասկանալով Վասակի հարցմունքի իմաստը։

— Բաբիկը, Ներսիկը... մի անգամ է՞լ չեն ուզել մտնել այստեղ,— հարցրեց նա։

— Ոչ։

— Արգելե՞լ ես։

— Ինչպես չթողնեի, որ մտնեին, տեր իմ,— արդարանալու ձայնով ասաց սենեկապետը։

Վասակը լռեց և շար ու ծանր գնաց նստեց իր գահույքին, որ մաքրած էր փոշուց, ինչպես և ողջ օթևանը, քանի որ ստրկահոգի և ջերմեռանդ սենեկապետը՝ ոչ օրինակ այլոց՝ ողջ ամրոցում, միակ մարդն էր, որ հոգատար մաքրել էր տալիս փոշուց մարզպանի օթևանը։ Այդպես նստած Վասակը նայեց իր օթևանին, անհյուրընկալ առարկաներին, շողոքորթ սենեկապետին։ Կարծես ոչինչ չէր փոխվել այն օրից, երբ նա այստեղ նստած խոսում էր Կոդակի հետ, երբ այստեղից հրամաններ էր ուղարկում իր զա-

վակներին, որ պարսկերեն սովորեն, և ծեծում նրանց։ Ոչ, չէր փոխվել այստեղ ոչինչ։ Նույն բռնակալն էր ինքը, նույն մենավոր մարդը իր շուրջը լռած և իր հետ հայտնի թե ծածուկ պայքարող հոգիների մեջ։

Նա դառնացավ և ապա զայրացավ։ Հետո դարձավ սենեկապետին.

— Իսկ ինչո՞ւ չէին մտնում այստեղ Բաբիկն ու Ներսիկը, ապա նրանք մի մատյան, մի բան չե՞ն ուզել վերցնել։

— Չեն ուզել վերցնել, տեր իմ,— ավելի տխրեցրեց և զայրացրեց Վասակին սենեկապետը՝ կրկին շեշտը դնելով իր բարեխիղճ ծառայության վրա՝ չհասկանալով, թե որքան խոցվում է Վասակը այն բանից, որ իր զավակները ոչ մի կապ, ոչ մի հիշողության ապացույց չեն ունեցել իր հետ, իր մասին։

Կարծես մեռած է նա, և իր վրա դրած է մի սառը տապանաքար, որի միջով չի անցնում իր սիրելիների կամ խորթ մարդկանց վերաբերմունքը։ Այո, կենդանի մեռած։

Չի հայտնվում նաև իր կինը, որին ճիշտ է, նա չի արգելել մտնել իր օթևանը, բայց և նա չի մտել ոչ մի պատահական, անդամ անհրաժեշտ դեպքում։

«Ինչպես որ կենդանի մարդիկ չեն մտնում մեռածի գերեզմանը»,— դառնությամբ խոսեց ինքն իրեն Վասակը։

Նա երկար լռեց և իրեն հաշիվ չտալով, թե ինչ արժեք ուներ այդ, սպասեց, որ մի բան փոխվի այս ծանր, անախորժ վիճակում։ Եվ ինչպես միշտ լինում էր նրա հետ նման դեպքերում, որ նա իսկույն կրքի էր ընկնում, վայրենանում, կատաղում, այժմ էլ բարկացած հրամայեց սենեկապետին, որ կանչի իր մոտ Բաբիկին ու Ներսիկին։ Սենեկապետը գնաց։ Սիրո և զայրույթի, դառնության և կատաղության նոպան սկսվեց դեռ իր զավակները ներս չմտած։ Բռնությունը, որ նրա առաջնորդիչ ուժն էր և միջոցը՝ պետք է պոռթկար, որ նա կամ գործ տեսներ, կամ հանգստանար։ Ու նա անհամբեր սպասում էր Բաբիկի ու Ներսիկի մտնելուն։ Նրանք ուշանում էին։ Ի՞նչ, դեռ մտածում են գալ, թե չգա՞լ, դեռ հարց է, թե կամենում են տեսնել իրենց հորը, թե ո՞չ...

Ներս մտան Բաբիկն ու Ներսիկը։ Նրանք սառը ողջունեցին և կանգնեցին դռան մեջ։ Վասակը դառնացած ու կատաղի նայեց նրանց և հեռաց, չկարողանալով խոսք գտնել սկսելու։

— Հեռո՞... — վերջապես խոսեց Վասակը։

Բաբիկն ու Ներսիկը լռեցին։

— Ուրիշ ոչի՞նչ չունեք ասելու ինձ... պիտի կանգնե՞ք դռան մեջ սպասավորի պես...

— Ի՞նչ անենք,— հարցրեց Ներսիկը վախեցած։

— Չգիտե՞ք ինչ անեք,— ավելի դառնացավ Վասակը։

— Վախենում ենք՝ էլի ծեծես,— ասաց Ներսիկը և աչքերը թաքցացան։

— Ծեծե՞մ... իսկ ինչու՞ եմ ծեծում։

— Ի՞նչ իմանամ,— աչքերը միամիտ արտահայտությամբ հոր աչքերին հառած ասաց Ներսիկը։

Սա զինաթափ արեց Վասակին։ Նա զորովանքով նայեց Ներսիկին և ասաց.

— Ե՛կ մոտս։

Ներսիկը գնաց և փաթաթվեց Վասակին։ Վասակը համբուրեց նրան։ Ապա նայեց Բաբիկին։

— Իսկ դու ի՞նչ ես ուզել։ Չե՞ս մոռացել...

— Ո՛չ,— ասաց Բաբիկը շղսպված ատելությամբ և հիշաչարությամբ։

— Ինչո՞ւ չես մոռացել։

— Ես չեմ մոռացել, որ մի ցածհոգի հայուկի առաջ խայտառակ արիր մորս։

— Ո՞վ է ցածհոգի հայուկը։

— Փառնավազ է, ինչ քարուքացախ է։

Վասակը զսպեց իրեն և մինչև անգամ զարմացավ ինքն իր վրա։ Հոգեկան կարկամություն եկավ բռնեց նրա կիրքն ու զայրույթը այն պահին, երբ նա սպասում էր, որ ահա հիմա կոչընչացնի հանդուգն պատանուն։

Նա հանգիստ հանդիմանական եղանակով ասաց.

— Ինչո՞ւ ես միշտ այդպես կոպիտ ու անհաշտ։ Ե՞րբ պիտի տաշվես։ Իշխան մարզպանի զավակ ես, ոչ թե անբան ռամիկի։

— Ես, իհարկե, ռամիկ չեմ, բայց ես հայ եմ։ Իսկ այդ սինլրքորը իմ պատիվն է վիրավորում։ Նա ինձ ավելի է ուզում դարձնել, քան թե պարսիկը կաներ։ Նա քծնում է, լիզում, ուզում է, որ ես էլ քծնեմ, լիզեմ։

Վասակը խոժոռ ու տխուր լսում էր նրան և չգիտեր ինչ անել։ Իր զավակը շատ ավելի էր զարգացել, քան նա սպասում էր։ Եվ որտեղի՞ց էր գալիս այդ զարգացումը, եթե ոչ այն էակից, որ այս րոպեիս հպարտ նստել է իր օթևանում և չի երևում։

— Իսկ ինչպե՞ս պիտի ապրես պարսիկների հետ,— հարցրեց Վասակը խոժոռ։

— Տեսնենք խաղաղ ապրելը ավելի շո՞ւտ կգա, թե պատերազմը,— քմծիծաղ տվեց Բաբիկը։

Վասակը լարվեց.

— Ի՞նչ պատերազմ...

— Հայրենիքի պատերազմը։

— Քեզ ո՞վ ասաց, թե պատերազմ է լինելու։

— Ողջ Սյունիքն է խոսում այդ մասին։ Դու ինքդ ապա ինչո՞ւ ես Սպարապետի հետ միասին դիմադարձ կանգնել Հաղկերտին։

— Իսկ քո ի՞նչ գործն է, թե ինչ են անում նախարարները։

— Է՞, հայրիկ, Սպարապետը հրաման տա վեր կենալու, ողջ երկիրը վեր կենա՝ ես կմնա՞մ անգործ։ Դու կմնա՞ս։

Վասակին այնպես թվաց, թե ապտակը կայծակեց իր երեսին։

— Շանսատակ կանեմ քեզ, լակո՛տ։ Ո՞վ է հրամայողը, Սպարապե՞տը, թե՞ մարզպանը։ Դու մարզպանի առաջ Սպարապետի անո՞ւն ես տալիս։ Դո՛ւրս կորի իսկույն և պատրաստվի՛ր, վաղը գնում ենք Պարսկաստան։ Դո՛ւ ես,— դարձավ Ներսիկին։

Ներսիկը բռնեց հոր թևը.

— Չէ՞, հայրիկ, չէ՞. Հաղկերտը կսկսի հայերին նեղել, շարշարել, պատերազմ է լինելու. մեզ տանում ես թշնամու երկի՞ը...

— Գնա, պատրաստվի՛ր,— հրամայեց Վասակը։

Ներսիկն սկսեց լաց լինել։

— Երանի Սպարապետի որդուն, նա պիտի գա կռվելու,— ասաց Ներսիկը։

Վասակն այնպես հարվածեց Ներսիկին, որ գլուխը դիպավ պատին։ Նա ընկավ։ Արյունը ցայտեց նրա բերանից թքախառն ու հորդ։ Ներսիկն սկսեց խեղդվել։ Վասակը վրա ընկավ, բռնեց նրա արյունաթաթախ գլուխը և գրկելով բերեց իր բարձի մոտ։ Ապա նստած տեղը սկսեց համբուրել Ներսիկին։

— Լա՛վ, հանգստացի՛ր,— ասաց խլաձայն ու խոժոռ։

Բայց ավելի խոժոռ, չար և միաժամ լուռ կշտամբանքով նայում էր Բաբիկը, որի դեմքը մի կծկում անգամ չարեց այն պահին, երբ Վասակը հարվածեց Ներսիկին։

— «Մոր կտո՞րն է...»,— մտածեց Վասակը դառնությամբ ու զայրալի։

Նա կանչեց սենեկապետին։

— Պատրաստե՛լ տուր նժույգները, ճանապարհի պաշա՛ր և համհա՛րզը. վաղը չէ մյուս օրը ճանապարհվում ենք Պարսկաստան։

Բաբիկը դուրս վազեց։ Նա՛ կարծես փախավ։

— Ո՞ւր, ո՞ւր,— հետևից կանչեց Վասակը։

Նա հրամայեց սենեկապետին.

— Ե՛տ բեր լակոտին... Վռա՛մ...

Վռամը երևաց դռան մեջ։

— Ե՛տ բեր...

Ներսիկը լաց էր լինում, բայց նկատելով հոր այլայլումը՝ սարսափից դադարեց և ընկավ հոր ոտները։

— Հայրի՛կ, մի՛ անիր, հայրի՛կ, խնայի՛ր նրան...

Վռամը ներս բերեց Բաբիկին։

Վասակը մոտ վազեց նրան և սպառնալի հարցրեց.

— Դու լսեցի՞ր, որ գնում ենք Պարսկաստան։

— Լսեցի,— պատասխանեց Բաբիկը խոժոռ և հանգիստ։

— Ապա ո՞ւր ես փախչում։

— Ոչ մի տեղ։ Ո՞ւր պիտի փախչեմ մայրիկից։— Եվ Բաբիկը ուղիղ նայեց Վասակի աչքերին։

— Մայրիկի՞ց։ Պարսկաստան պիտի գնաս։ Էլ ի՞նչ մայրիկ։

— Ապա նրան ինչպե՞ս պիտի թողնեմ մենակ։

— Ինչո՞ւ մենակ։

— Ախր ես մենակ ինչպե՞ս գնամ Պարսկաստան։

— Ես որ հետդ եմ՝ դու մենա՞կ ես։

Բաբիկը ծանր հևաց և գլուխն օրորեց.

— Չգիտեմ, հայրիկ, ի՞նչ ես ուզում մեզանից։

— Ձեզանից այն եմ ուզում, որ դուք զորական ուսում առնեք և բարձր պաշտոնյաներ դառնաք։ Իսկ դուք համառում եք և վայրենանում։ Չե՛մ թույլ տա այդ։ Պատրաստվեցե՛ք, որ վաղը առավոտ կանուխ գնում ենք։ Հիմա գնացեք ձեր օթևանը։

Բաբիկն ու Ներսիկը դուրս եկան Վասակի մոտից սաստիկ վրդովված։ Նրանք անմիջապես գնացին Փառանձեմի մոտ։ Երբ հայտնեցին նրան այս լուրը, նա գունատվեց և ձեռքը տարավ դեպի սիրտը։ Դա զարհուրելի էր նրա համար։ Մինչև այժմ նա խուլ դիմադրությամբ պայքարում էր իր երեխաներով. հիմա, երբ արդեն գնում էին այդ հենարանները, և նա մնալու էր մենակ՝ ում կունենա՞ր արդյոք պայքարելու բացեիբաց։

Փառանձեմը հուզմունքից չգիտեր ինչ անել։ Հարվածը ըստացնում էր, բայց քանի չէր հասել, դեռ չէր զգացվում այդքան դաժան. բայց երբ հասավ, հիմա զգացվեց նրա ուժը։ Փառանձեմը մի շարժում արեց, որ վեր կենա և գնա Վասակի մոտ։

— Ի՞նչ անեմ, ինչպե՞ս առաջն առնեմ,— հոգեկան մեծ խռովքի մեջ դարձավ նա Զվիկին։

Ներսիկը փաթաթվեց մորը.

— Գնա խնդրի՛ր, մայրի՛կ, խնդրի՛ր մեզ չտանի, ես չե՛մ կարող գնալ։

— Ա՜խ, ձագուկներս,— հառաչեց Փառանձեմը և կանգ առավ։

— Նրան խնդրել չարժի,— ասաց Բաբիկը մռայլ,— նա իր խոսքը կանի՝ կտանի, իզուր տեղը մայրիկը իրեն կգցի նրա առաջ։

— Իսկ դու կգնա՞ս,— հարցրեց Ներսիկը վախեցած։

— Չեմ գնա,— ասաց Բաբիկը վճռական։

— Ի՞նչ, պիտի հակառակե՞ս,— վախեցավ Փառանձեմը,— Թող, ի սեր աստծո, բան չբանաս գլխիդ։

— Ինչ ուզում է անի՝ չեմ գնա...

Փառանձեմը ծնկները ծեծեց հուսահատ։

Նա չգիտեր ինչ վճիռ ընդունել. համաձայնվե՞լ, որ իր զավակները գնան. դա մահ էր նրա համար։ Բայց նա սարսափում էր նաև նրանից, որ Բաբիկը հակառակի հորը և կատաղի ծնողը մոլուցքի մեջ վնաս տա նրան։

Ամբողջ գիշերը Փառանձեմը անցկացրեց օթևանում շրջելով։ Բաբիկն ու Ներսիկը նստած էին անքուն և հետևում էին մոր տրտունջին։ Նրանք խոսք չէին գտնում մորը հանգստացնելու, քանի որ իրենք ևս անհանգիստ էին։

Լուսինը դուրս լողաց լեռների խորքից։ Նրա թախծալի լույսը կախվեց քարափներից ահագին ձորի մթության վրա։ Անդնդում խավարի մեջ մոմոում էր գետը։ Տխուր ծկլթում էր գիշերահավը։ Փառանձեմի սիրտը փղձկաց։ Նա կուզենար լիասիրտ ու բարձրաձայն լինել։ Բայց այդ տխուր սփոփանքից էլ նա զրկվեց։ Նրա վշտի ամեն մի նշանը պիտի տանջեր իր ճանապարհորդ զավակներին։ Նա չէր կամենում նրանց վիշտ պատճառել։ Ուստի և զսպեց իրեն և գնաց նստեց իր բարձին։

— Եկե՛ք մոտս,— ասաց նա նրանց՝ մոտ քաշելով գրակալը, որի վրա հանգչում էր իր զավակների սիրած մատյանը՝ Մովսես Խորենացու պատմությունը։— Եկե՛ք, զավակներս։

Բաբիկն ու Ներսիկը գնացին նստեցին մոր կողքին։

Փառանձեմն սկսեց կարդալ։ Թե ինչո՞ւ սկսեց կարդալ և ինչո՞ւ ընթերցման այդ ձևն ընդունեց՝ մի փոքր տարօրինակ թվաց տղաներին։ Բայց նրանք ազդվեցին մոր ջերմեռանդ լռությունից և ենթարկվեցին նրան։

Փառանձեմը կարդաց մեծ շնչով։ Հայրենաշունչ պատմահոր գիրքը կրակի պես այրել սկսեց, երբ խոսում էր այն մասին, որ մեր ազգը թեև փոքր ածու է, բայց նրա մեջ ևս գործվել են մեծ գործեր հիշատակության արժանի։ Նա խոսում էր հայկազյան թագավորների մասին, որոնք չգիտեին, թե ինչ է ստրկությունը։ Նա պատմում էր Տիգրան Մեծի մասին, որ Հռոմի դեմ հաղթական պատերազմներ վարեց։

— Ասել է՝ մեր նախնիները կռվել են,— մտորմունքով ասաց Բաբիկը։— Մեր ազգի բախտն այդպես է սկսվել, հենց մեր նախահայրը կռվով է հիմք դրել մեր ազգին,— ասաց Փառանձեմը՝ ուրախ, որ Բաբիկի միտքը գնաց դեպի պատմությունը և մոռանում է իր վիշտը։

— Հենց մի գլուխ բռնակալնե՛ր, բռնակալնե՛ր,— խոսեց դառնությամբ Բաբիկը,— գալիս են մեզ ստրկացնելու։ Բայց լավ է, մերոնք էլ կուրծք են դնում և ոչնչացնում են թշնամուն։

— Հազկերտին էլ պիտի ոչնչացնել հենց Հայկ Նահապետի թշնամի Բելի պես,— մեջ մտավ Ներսիկը։

— Նրան էլ կոչնչացնենք,— ասաց Բաբիկը։

Փառանձեմը շարունակեց ոգել։ Արա Գեղեցիկն ու Շամիրամը գրավեցին տղաների ուշադրությունը։ Փառանձեմը բացատրեց

որ թշնամին երբեմն էլ գեղեցիկ միջոցներով է ուզում ստրկացնել։ Պետք է արիություն և առաքինություն ունենալ։

— Ո՛չ մի գեղեցիկ կին հայրենիք չարժի,— ասաց Փառանձեմը,— ո՛չ մի հարստություն, փառահեղ կյանք, ո՛չ մի պատիվ ու փառք։ Հայրենիքը ամեն բանից բարձր է, և նրա գինը չի չափվի ոչ մի աշխարհային գանձով։

Ներսիկն հանկարծ հեկեկաց։

— Ինչո՞ւ ես լալիս, մատա՛ղս,— հազիվ զսպելով իր արցունքները հարցրեց Փառանձեմը,— մի՛ լար, սիրունի՛կս, այս ամենը կարդում եմ, որ միտներդ պահեք, ինձ չմոռանաք, չմոռանաք մեր ազգը, մեր լեզուն։

— Բայց մի՞թե պիտի գնանք, ես չե՞մ ուզում գնալ, չե՞մ ուզում, հասկանո՞ւմ ես, չե՞մ ուզում,— բարձրաձայն լացեց Ներսիկը։

— Մի՛ լաց լինի, մատա՛ղ, կգաս, հո այնտեղ չե՞ս մնա,— ասաց Փառանձեմը և գրկեց Ներսիկին։

— Այնտեղ կմնանք, էլ ետ չե՞նք գա,— մղկտալով ասաց Ներսիկը։

Փառանձեմը թաղեց նրա դեմքը իր կրծքի մեջ և սկսեց օրոր-քել նրան։ Ներսիկը հեկեկում էր և ցնցվում։ Փառանձեմի սիրտը ճմլվեց. հանկարծ հիշեց, թե ինչպես Ներսիկի երեխա ժամանակ նա այդպես գրկում էր նրան։ Այն ժամանակ նա չէր հասկանում, թե ինչու էր լալիս։ Բախտավոր լաց էր այն, իսկ հիմա՞...

Փառանձեմը նայեց Բաբիկին։ Սա մռայլ, հոնքերը կիտած, նայում էր պատուհանից դուրս։

— Ի՞նչ է գլուխը մտել պարսկերե՛ն, հա պարսկերե՛ն, պարսից զորական արվե՛ստ, պարսից պաշտոնյա՛,— վրդոված խոսեց նա։— Չգիտե՞ մեր նախնիների գործերը, անո՞ւն չունենք մենք, ա՞զգ չենք։ Ի՞նչ է մտածում...։

— Նա ուզում է մեզ հայրենադավ դարձնել,— շարունակեց Բաբիկը,— կայրվե՛մ կրակի վրա՝ չեմ մոռանա հայրենիքս։

— Հա, մատա՛ղ, հավատարիմ եղիր հայրենիքիդ,— շեշտով խոսեց Փառանձեմը։

— Սպարապետի՛ն կգնամ ծառայեմ։ Նա մեր ազգի պաշտպանն է։

— Սպարապետը՝ մե՞ծ հայրենասեր է, նրա՛ն ապավինեցեք,— ասաց Փառանձեմը,— նա իր որդուն բերել է տալիս պատերազմ։

— Երանի նրա որդուն,— ասաց Ներսիկը,— գնանք Պարսկաստան՝ կմտնեմ նրա զորագունդը։

— Չխոսեք այդ բաները ձեր հոր մոտ, ի սե՛ր աստծո, կոպտանի ձեզ։

— Թո՛ղ սպանի։ Թող ինձ Սպարապետը զինվոր ընդունի։ Նրա որդու հետ լինեմ՝ թող հայրս ինձ սպանի։

— Մայրի՛կ,— հանկարծ վեր կացավ տեղից Բաբիկը,— մայրիկ, ի՞նչ է սրա միտքը, ուրանա՞լ հայրենիքը...

— Ա՛խ, Բաբի՛կ, մատաղ, մի՛ ասի, թող ես առաջ մեռնեմ՝ հետո այդ լինի,— ասաց Փառանձեմը։

— Ապա ինչո՞ւ է կատաղում, երբ Սպարապետի անունն ենք տալիս, ինչո՞ւ է նրան դեմ։

— Մարդպան է, վախենում է իր պաշտոնից,— բացատրեց Փառանձեմը։

— Իսկ Սպարապետի՞ն, Սպարապետի՞ն ինչու է ատում,— բարկացած շեշտեց Բաբիկը,— ի՞նչ է արել նրան Սպարապետը։

— Սպարապետը անձնազոհ մարդ է, նրան ո՞վ կարող է ատել, նա մեր հայրենիքի պաշտպանն է։ Եթե նրան ատում է ձեր հայրը, մեծ մեղք է գործում։ Ա՞խ, աստվա՛ծ հասնի ինձ ու ձեզ։ Խե՞ղճ զավակներս...

Փառանձեմը տխուր նայեց իր որդիներին և գլուխն օրորեց։

Բայց գիշերն անցնում էր, հետևյալ օրը Բաբիկն ու Ներսիկը ճանապարհ կընկնեին։ Հարկավոր էր, որ նրանք քնեն։ Հոգատար մայրը դրա մասին էր մտածում։

— Է՛, պառկեցե՛ք. քնեցե՛ք, զավակնե՛րս,— ասաց նա, թեև նա կկամենար, որ վերջին գիշերը երկարեր մինչև հավիտյան, չդար սևամութ առավոտը։

— Ո՞չ, ո՞չ,— մայրի՛կ, մենք չենք քնի,— մերժեց Ներսիկը և փարվեց մոր կրծքին։

Նա այդ գիշեր բոլորովին երեխայացել էր։ Իսկ սա ավելի էր խոցում խեղճ մոր սիրտը։ Իսկ Բաբիկը իր մտքերի հետ էր։ Նա ինչ-որ վճիռներ էր գծում իր հոգու մեջ, պայքարի վճիռներ, որով և հիմիկվանից պատրաստվում էր դիմագրավել հորը։

— Չե՛մ գնա,— հայտնեց նա վճռական շեշտով։

Փառանձեմը վախեցած նայեց համառ տղային և անհանգիստ վեր կացավ տեղից։ Ու մինչ Բաբիկը վրդովված ման էր գալիս՝ նա հետևելով նրան հորդորում էր, որ ետ կենա սուր վարմունքներից։ Բայց նա գիտեր, որ հենց այդ ետ կենալն էր մեծ աղետը իր համար, որից սարսափում էր նա՝ բաժանվե՛լը իր զավակներից։

Տանջալի գիշերը մռայլ թռչնի պես կախվել էր ամրոցի վրա, այն օթևանի վրա, ուր Փառանձեմը անձկությամբ սպասում էր իր զավակների և հոր ընդհարման։

Տղաները թմրեցին վերջապես և ընկնելով բարձերին, հենց տեղնուտեղը քնեցին։ Զվիկը ծածկեց նրանց, Փառանձեմի հետ միասին նստեցին նրանց գլխավերևը՝ հսկելու և վերջին անգամ դիտելու նրանց։

Փառանձեմը աչքը չէր հեռացնում զավակներից։ Նայում էր նրանց և մեկ-մեկ միտը բերում նրանց երեխայությունը, մանկությունը։ Հիշում էր իր երազները, որ նրանք կդառնան ուսյալ, իմաստասեր մարդիկ, կընթերցեն լավագույն մատենագիրներին, կճանապարհորդեն Աղեքսանդրիա, Հռոմ, Բյուզանդիա, կբանան դպրոցներ, գրել կտան մատենագիրներին հայոց պատմություն, իրենք կգրեն, կնվիրվեն որևէ գիտության։ Ամուսնու կոպտությունները ու բացահայտ սառնությունը նա տանում էր մինչև հիմա այս երազներով օրորված։ Հիմա այդ երազները ցնդում են։ Նա պիտի ապրի անլույս, անհույս կյանքով, լքված, մենակ և արհամարհված։ Արհամարհված այն ժամանակ, երբ նա ինքը ամենին էլ չի կամեցել բռնակալի կինը լինել, խուսափել է։ Եվ հիմա զուրս է գալիս, որ ինքը բեռ է այս տանը և արհամարհանքի է զատապարտված իր արհամարհանքին արժանացած ամուսնու կողմից։

Փառանձեմը լցվեց և լաց եղավ դառնագին։ Զվիկը նոր միայն սիրտ արեց ինքը ևս ձայնակցելու իր տիկնոջը։ Նա սկսեց հեկեկալ։ Այսպես դեռ երկար նրանք լաց էին լինում՝ ինչպես գերեզմանի վրա՝ մինչև թմրեց նրանց վիշտը և սրտերը մի փոքր թեթևացան։

Այնժամ Փառանձեմը կրկին բաց արեց Խորենացու գիրքը և սկսեց կիսաձայն կարդալ։ Նա կարդում էր աղոթքի նման, ինչպես

հիվանդների գլխին։ Բայց գիրքը իր դյուցազներգական նյութով և բարձր հոգեկան թռիչքով այնքան համակեց նրան, որ նա սկսեց ավելի բարձրաձայն ոգել։ Կարծես նա պայքար էր մղում չարի դեմ, որ հարձակվել էր նրա վրա բռնակալ մագիլներով խեղդելու նրա ոգին։ Նա կարդալով կռիվ էր մղում նաև իր հոգեկան թուլացման դեմ ու ճիգ էր անում հաղթելու նաև ինքն իրեն։ Եվ ահա բարձրաձայն ոգումը նրան քաջալերեց, նոր ուժ տվեց դիմագրավելու մեծ նեղությանը։ Նա զգաց, որ ինքը ևս պարտավոր է մասնակցել այն մեծ պատերազմին, որ ահա մոմռում է հեռու հորիզոններում և շուտով կգա կճայթի իր երկրի վրա։ Հետզհետե նա հասկացավ, որ իր պայքարն ամուսնու հետ միայն ընտանեկան գժտություն չէ, այլ դրա վրա բարձրանում է այն հակամարտության ոգին, որ ահա տոգորել է ողջ երկիրը։ Փառանձեմը պարզ տեսավ, որ ինքը ևս հայրենիքի պաշտպանության ճանապարհն է բռնում, որ իր զավակները ևս նույն տեղն են գնում։ Նա մտածեց, որ ահա Հայաստանից ճանապարհ են ընկնում նաև մյուս պաշտպանները՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ։ Մտածեց, որ երբ լսեր էին գալիս, թե ողջ երկիրը վեր է կացել բռնակալության դեմ և պատրաստ է արյուն թափել, բայց պաշտպանել հայրենիքը, չկորցնել ազատությունը՝ դա վերաբերում է նաև իրեն և իր որդիներին։

Փառանձեմը բարձր կարդաց վերջին խոսքերը պատմության և ապա խաչակնքելով իր քնած զավակներին՝ ասաց.

— Է՛, դուք է՛լ գնացեք ուխտյալ զինվոր. աստված այդպես էր կամեցել։

Զվիկը կրկին հեկեկաց և ընկավ քնած տղաների ոտները։

Բայց այդ պահից հետո Փառանձեմը կերպարանափոխվեց։ Նրա դալուկ գեմքը լրջացավ և կրկին լցվեց այն մշտական հպարտությամբ, որով նա համակում էր ամենքին։ Լուսացավ։ Նրա հոգեկան գիշերը, ինչպես և ամրոցը շրջապատող մութը փարատվեց, և առավոտը նայեց օտար, նորեկի աչքերով։ Եվ այն վաղվան օրը, որ Փառանձեմի համար պիտի գար իբրև սևամութ օր՝ եկավ հանգիստ, համակերպ մի զգացումով։ Փառանձեմը նոր կարոտով նայեց անգորը շնչող իր զավակներին։ Նրանք այժմ նոր լույսով պսակվեցին սիրասուն մոր աչքերին։ Այլևս ոչ միայն իր զավակները, այլ զավակները այն ազգի, որ այս պահիս զինվոր են դար-

վում։ Հիմա այլ սիրով սիրեց նրանց զինվորագրված մայրը և թեթևություն զգաց։ Եվ երբ նրանք զարթնեցին, Փառանձեմը խոնարհվեց և նրանց համբուրեց իբրև մարտիկների, որ ահա վեր կենան, կգնան մարտ՝ մեռնելու կամ ազատագրելու իրենց ժողովուրդը։

— Լավ հանգստացա՞ք,— հարցրեց Փառանձեմը զսպված հոգատարությամբ։

— Իսկ դու չե՞ս քնել,— հանդիմանեց Բաբիկը։

— Ես հանգստացել եմ, մատա՛ղս, իմ մասին մի՛ հոգա։

— Ինչո՞ւ չպիտի հոգամ,— առարկեց Բաբիկը,— հիմիկվանից դենը մեր հոգսը դո՛ւ ես։

— Է՜, Բաբիկ,— հառաչեց Փառանձեմը,— մեր հոգսը մեծ է և ինձանից մեծ բյուր-հազար անգամ։ Ողջ ազգն է հոգսի մեջ։

— Ճշմարիտ է,— ասաց Ներսիկը, որ զարթնել էր, բայց աչքերը խուսի մտածում էր,— մենք հիմա պիտի կռվենք մեր ազգի փրկության համար։

Բաբիկը սակայն համառ մտածում էր իր վիճակի մասին։ Նա չէր կարողանում վճիռ ընդունել մորից բաժանվելու։ Նրա մեջ կռվում էին հակամարտ ուժերը։

Նախաճաշ բերին, սակայն ոչ ոք մոտ չեկավ։ Փառանձեմը խնդրեց տղաներին, որ ուտեն. բայց նրանք հազիվ ճաշակեցին։ Հուզմունքը խլացրել էր քաղցը։

Բակում աշխույժ էր։ Սպասավորները կրում, կապում, մեջ էին բերում խուրջիններ, արկղներ։ Ճանապարհի խոհարարը՝ մռայլագեմ չոր մի արարած՝ բարկացած կարգադրում էր։ Ճանապարհի խոհանոցը ողջ գիշեր կազմվում էր և դեռ պատրաստ չէր։ Հանգերձապետը դասավորում ու կապում էր հագուստները, ուրիշները գնում էին բժշկական դարմանները, ջրի սրվակները, անկողնու մորթիներ, վրաններ։ Այդ բոլորը բեռնվում էր ջորիների մեջքին։ Շուտով սալահատակած բակում կարկուտեցին նժույգները։ Եկավ սենեկապետը և հայտնեց, որ մարզպանը հրամայեց Բաբիկին ու Ներսիկին հագնվել, դուրս գալ բակը։ Ներսիկը հեկեկաց, իսկ Բաբիկը ասաց, որ չի գնալու։ Սենեկապետը չոր նայեց նրան և ասաց, որ վատ կլինի վերջը, մարզպանը զայրացած է, թող հագնվեն։ Նա գնաց և չհայտնեց այս մասին Վասակին։ Սակայն երբ

տղաներն ուշացան, Վասակը եկավ Փառանձեմի օթևանը։ Սենեկապետը հետևեց նրան։

— Ի՞նչ է, պահում ես, որ վա՞նք ուղարկես. ինչո՞ւ չեն գալիս,— դիմեց նա Փառանձեմին։

— Նրանք կգան,— ասաց Փառանձեմը առանց նայելու Վասակին։

— Բայց ինչո՞ւ հագնված չեն,— խոժոռ աչքերով հարցրեց Վասակը և դարձավ սենեկապետին.— զգեստները բե՛ր։

Սենեկապետը գնաց։ Տիրեց ծանր լռություն, որ թվում էր արճիճի պես նստեց նրանց կրծքին։ Վասակը շատ բան ուներ ասելու, ինչպես և Փառանձեմը, բայց խոսք չէին գտնում ասելու։ Սենեկապետն ուշանում էր։

— Ինչո՞ւ են սրանք հակառակում,— հարցրեց Վասակը Փառանձեմին, առանց նայելու նրան։

— Ջեն ուզում գնալ Պարսկաստան,— պատասխանեց Փառանձեմը պարզ ու սառն։

— Դո՛ւ ես սովորեցրել նրանց, որ դիմադարձ կանգնեն ինձ,— ասաց Վասակը։

— Ես ի՞նչ սովորեցնեմ նրանց։ Նրանք հիմա ամեն բան հասկանում են։

— Որ չպիտի գնալ Պարսկաստա՞ն...

— Գնալ՝ չգնալ...

Վասակը հապիվ պահեց իրեն և կրկին հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ են նրանք ինձ դեմ...

— Դու ավելի լավ կիմանաս,— ասաց Փառանձեմը և դեմքը բարձրացրեց Վասակի հայացքի հանդիման, նայեց ուղիղ նրա աչքերին։

— Ի՞նչ եմ իմանում ես... — սպառնալի հարցրեց Վասակը։

— Քո զավակներն են, ինչ որ մտցրել ես նրանց հոգու մեջ, այն էլ տեսնում ես նրանց մեջ։

— Ե՞ս եմ մտցրել նրանց հոգու մեջ, որ իմ առաջ նրանք հիշեն այն սրիկայի անունը...

— Ո՞վ է այդ սրիկան,— ծառացավ զայրացած Փառանձեմը սուր նայելով ամուսնուն։

— Քո այդ Սպարապետ ասած արարածը...

— Սպարապետն ազգի պաշտպա՛ն է,— ասաց Փառանձեմը,— ինչպե՞ս է լեղուդ դառնում...

Դեռ չէր վերջացրել Փառանձեմը, որ Վասակի հարվածը վայր գցեց նրան։ Պալատական ու իշխանական շրջանների ատյաններում վայելուչ ու կիրթ խոսող, վարվող մարզպանը իր տան անկյուններում ցույց էր տալիս իր լեռնական, բռնակալ, վայրի և անզուսպ կատաղի բնույթը։ Փառանձեմն ընկավ դեմքն արյունած։ Հպարտ կինը ոչ մի ծպտուն չհանեց։ Զարմանալի հանգիստ պահեցին իրենց Բաբիկն ու Ներսիկը։ Իսկ Զվիկն ու սենեկապետը, որ վարժ էին նման տեսարանների, առաջինը տխուր նայեց Վասակին, իսկ երկրորդը աչքերը հատակին՝ սպասում էր, որ ավարտվի «խրատումը»։

— Հագցրե՛ք սրանց և դո՛ւրս բերեք բակը,— հրամայեց Վասակը և դուրս գնաց։

Բակում հավաքվել էին ամրոցի բնակիչները օգնելու, ծառայելու և դիտելու։ Վասակը մի հայացք նետեց բեռնատար ձիերին, շորիներին ու նժույգներին և դարձավ դեպի Փառանձեմի օթևանը.

— Ո՞ւր են Բաբիկն ու Ներսիկը, թող շտապեն։

Սենեկապետը եկավ և հայտնեց, որ չեն գալիս։

Վասակը աչքով արեց Վռամին, որ աչքը նրան՝ հրամանի էր սպասում։

Վռամը մտրակը խրեց գոտկի մեջ և սլացավ դեպի Փառանձեմի օթևանը։

— Հագե՛ք շորերդ,— հրամայեց նա Բաբիկին ու Ներսիկին։

— Գնա՛, չենք գալիս,— գոչեց Բաբիկը։

— Հագի՛ր, Բաբիկ,— ասաց տխուր ու մեղմ Փառանձեմը,— Ներսի՛կ, հագի՛ր։

— Մայրիկ, չե՞մ ուզում, չե՞մ ուզում, հասկանո՞ւմ ես, չե՞մ ուզում,— հեծկլտաց Ներսիկը և վազեց գրկեց մորը։

Փառանձեմը հանգիստ ձայնով համոզեց նրան, որ հագնվի։

— Հագնվի՛ր, հագնվի՛ր, Բաբիկ։

— Մայրի՞կ... — լացակումեց վերջապես բարձր Բաբիկը։

— Գնացե՛ք, զավակներս, դուք այսօրվանից զինվորյալ եք ազգի,— հորդորեց մայրը հազիվ զսպելով արցունքը և օգնեց սենեկապետի բերած զգեստները հագնել։

Բաբիկը հագավ։ Ներսիկը հետևեց նրան։ Նրանք նոր հա-

գուստներ հագած՝ կանգնեցին Փառանձեմի առաջ։ Թշվառ մայրը ոտից գլուխ նայեց նրանց, նայեց անհուն կարոտով, մեծ գորովանքով և ափսոսի մի այնպիս վշտով, որ միայն այն էակը կարող է արտահայտել, որ գիտե, թե վերջին հայացքն է գցում իր ամենաթանկ հարազատների վրա և շուտով, մի քանի բոպե անց նրանք հավիտյան կանհետանան։ Նա գրկեց նրանց միասին, սեղմեց կրծքին, խուլ հառաչեց և ջերմ համբուրեց։ Բաբիկն ու Ներսիկը փարվեցին մորը և սկսեցին կարոտով համբուրել նրան։ Հետո նրանք համբուրվեցին Զվիկի հետ, որ լաց էր լինում։ Փառանձեմը ժպտաց նրանց և ձեռքերը բռնած դուրս տարավ։ Այստեղ նա հպարտ ու խիստ նայեց բակում հավաքվածներին, առանց մի հայացք նետելու իր ամուսնուն։ Վռամը ձեռքը գցեց հեռացող տղաների մեջքներին, որ առաջ մղի նրանց։

— Թո՛ղ, ձե՛ռքդ,— խփեց նրա ձեռքին Բաբիկը։

Նա իջավ, մոտեցավ իր նժույգին։ Նայեց նրան, նայեց շուրջը, նայեց մորը և ասաց մռայլ ու տխուր.

— Մնաք բարյավ...

— Գնաս բարով, ճանապարհդ ի բարի՞ն,— ասացին կանգնածները։

Նժույգներն անհանգստացան։ Վասակը բարձրացավ պատշգամբ, մոտեցավ Փառանձեմին և բռնեց նրա ձեռը.

— Հանգի՛ստ եղիր, նրանք կվերադառնա՛ն։

Փառանձեմը չպատասխանեց։

— Դե՛, մնա՛ս բարյավ,— ասաց նա։

— Գնաս բարյա՛վ,— հազիվ լսելի շշնջաց Փառանձեմը։

Վասակը փաթաթվեց, համբուրեց նրան և արագ իջավ պատշգամից։

Նժույգները զգալով բաց դարբասի շունչը՝ սրընթաց դուրս թռան։ Կարավանը հեռացավ և շուտով ընկղմեց անդունդը։

Դեպի Պարսկաստան...

***

Երկարաձիգ կարավանը, որ բաղկացած էր հայ նախարարներից, նրանց թիկնապահներից, սպասավորներից, շարժվում էր Պարսկաստանի տխուր անապատներով դեպի Նյուշապուհ։ Կարավանի մեջ էին Վասակ Սյունին, Վարդան Մամիկոնյանը, Ներշա-

պուհ Արծրունին, Վահան Ամատունին, Արտակ Ռշտունին, Գագիշո Խորխոռունին, Մոկաց Արտակը, Ապահունյաց Մանեճը, Անձևացյաց Շմավոնը։

Ճանապարհի ձանձրույթն ու հոգնությունը հոգեկան խռովքի հետ միասին դժվարացնում, դառնացնում էին գնացքը։

Վասակը գնում էր մեկուսի, ջանալով ոչ ոտեպ հանդիպել Վարդանին։ Նա սիրով մոտ էր թողնում մյուս նախարարներին և սկսում շատ զգույշ գայթակղել նրանց։ Նա մոռայլ էր ներկայացնում Հազկերտի տեսակցությունը և հույս չէր թողնում որևէ մեղմության։ Նա խտացնում էր առանց այն էլ իրոք սպառնալի վիճակի խստությունը և աննկատելի սարսափ էր գցում նախարարների մեջ։

Վասակը գնում էր կարավանի առջևից։ Նա իր խոհանոցային և այլ սպասարկման գրաստները թողել էր հետևում, մյուս նախարարների նույն գրաստների հետ, բայց մի թեթև սպասարկման գրաստ գնում էր նրան մոտիկ տարածությունից՝ անմիջական պետքերի համար։ Բաբիկը ու Ներսիկը գնում էին նրա հետևից։ Նրանք հոգնած տեսք ունեին, այրվել էին արևից և քամուց։ Այստեղ, ճանապարհին շատ բաներ գրավում էին նրանց ուշադրությունը, և նրանք հետաքրքիր աչքերով նայում էին, իրար աչքով անում։ Բայց ամենից շատ նրանք ետ-ետ էին նայում խիստ ուշադիր։ Նրանց գրավում էր Վարդան Մամիկոնյանը, որ առանց գիրքի ու աստիճանի՝ հետևում էր Վասակին՝ խառն մյուս նախարարների հետ։ Նա մերթ առաջ էր ընկնում, մերթ հավասարվում նրանց և միշտ իրեն պահում էր պարզ ու հասարակ, հակառակ Վասակի, որ ամենուրեք դիրք էր պահում և հրամայական խոսքերով հասկացնում իր մարզպանական աստիճանը։ Բաբիկն ու Ներսիկը որսում էին Վարդանի ամեն մի շարժումը։ Ջանում էին լսել նրա ամեն մի խոսքը։ Վարդանը դառել էր նրանց պաշտամունքի կուռքը։ Նրանք մոռանում էին իրենց վիճակը և կարողացան դիմանալ մորից անջատվելու վշտին՝ շնորհիվ Վարդանին մերձ լինելուն։ Այնքան ամիսների ցնորքը՝ տեսնել հայոց Սպարապետին՝ ահա իրականացել էր։ Եվ այդ երջանկությունը տևում էր ամբողջ շաբաթներ։ Ճիշտ է, Վասակը խստագույնս հրամայել էր նրանց չմոտենալ նախարարներին, չխոսել նրանց հետ, ինչպես որ նույն հրամանը տվել էր Վռամին ու այլ թիկ-

նապահների, որ հսկեն Բաբիկին ու Ներսիկին այս բանում։ Սակայն սրանք առիթը գտնում էին Վարդանին ավելի մոտ ձիավարելու և լսելու նրա խոսակցությունը։ Երբեմն հաջողվում էր որսալ Վարդանի խոսքերը, երբ իրենք մոտ էին լինում նրան, իսկ երբ հեռավորությունը կտրում էր Վարդանի խոսքի թելը, նրանք վշտանում էին։ Վասակի հսկողությունը ճնշում, զայրացնում էր պատանիներին։ Նրանք իրենց զգում էին կալանավորների պես, մանավանդ ու այնպիսի մի էակ, ինչպես Սպարապետն էր, դառել էր խիստ արգելքի հրապույր։ Նրանք անիծում էին իրենց բախտը, որ չէին կարողանում լիովին վայելել մեծ մարդու ներկայությունը, թերևս և ծանոթությունը, որի մասին երազում էին, բայց ահա դա էլ դառել էր անհասանելի մի բան։

Կարավանը գնում էր Նյուշապուհ, և ճանապարհը քանի գնում անհրապույր էր դառնում։ Աջակողմը շարունակ իր գորշ ու լայնշի թաթերն էր մեկնում մեծ Իրանյան անապատը։ Երբեմն ավազի մրրիկը խորշակի շունչը փչելով սկսում էր ֆր կոծապարը։

Տխրում էր Վարդանը։ Քանի՞ քանի՞ անգամ նա ճանապարհ է ընկել դեպի Ապար աշխարհը, շտապել այնտեղ կռվելու քուշանների դեմ Հազկերտի և դեռ նրա նախորդի համար։ Գոնե առաջները մի նպատակ կար, գոնե այն ժամանակ տերություն էր պաշտպանում նա, ծառայում էր պարսիկներին՝ իր հայրենիքի որոշ ազատությունը պաշտպանելու «վարձատրությամբ...»։ Ի՞նչ ստացվեց այդ բարեխիղճ ծառայությունից։ Ահա այս երկար, անվերջ, ձանձրալի և անփառունակ երթը դեպի ատյան։ Ատյա՞ն, դա՞տ... ինչի՞ համար։ Որ նա պաշտպանում է իր հայրենի՞քը, ազատությո՞ւնը...

Ահա իր դիմաց, իրենց առաջ ընթանում է «մարզպանը Հայոց աշխարհի»... ջերմեռանդ պաշտոնյան Հազկերտի... Որ չի կամենում զոհել մի ոսկի իր զարդերից ի սեր հայրենիքի ազատության։ Ի՞նչ է մտածում նա. ի՞նչ պիտի ձեռնարկի նա արքունիքում։ Եթե դեպքը բերի, մի՞թե նա չպիտի զոհի իր մարզպանական իշխանությունը հայրենիքի բարօրության համար։

Ո՞վ գիտե...

Գարնան արևը այրում էր, ծարավ էր բերում օրվա տապը և քուն։ Գաղիշոն առաջ էր ընկել և խոսում էր Վասակի հետ, իսկ մյուս նախարարները նիրհում էին իրենց նժույգների վրա։ Վար-

դանը նայում էր տխրատեսիլ անապատին և մտածում իր անելիքների մասին։ Երբեմն նա հայացքը գցում էր Բաբիկի ու Ներսիկի վրա։ Նա չէր հարցրել, բայց գլխի էր ընկնում, որ Վասակը նրանց տանում է կամ արքունիքի ծառայության, կամ պարսկական կըրթության։

— Եթե նրա հետ խոսեիր, ի՞նչ կհարցնեիր,— հարցրեց Ներսիկը Բաբիկին։

— Կհարցնեի նրա դեմքի սպիի մասին։ Տեսնես ո՞ր կռվումն է վիրավորվել։

— Ինչ էլ երկա՞ր է,— ասաց Ներսիկը և ետ նայեց։— Նայի՛ր։

Բաբիկը ետ նայեց, և նրա հայացքը հանդիպեց Վարդանի հայացքին։ Բաբիկը խիստ ու խոր նայեց Վարդանին. այսինքն՝ մի կարծիր թե ես կռվել չեմ իմանում. ես քո հեծյալներից պակաս չեմ լինի, երբ կռիվն սկսվի։

Վարդանը նայեց, զգաց այդ հայացքը, բայց Բաբիկի մտքերն ընդունեց իբրև հակառակ զգացմունքի ցոլքեր։ Նա տհաճությամբ աչքերը շրջեց Ներսիկի վրա։ Սա կոտրած ժպիտով, ամոթխած նայեց և աչքերը կախեց.

«Փոքրն ավելի հեզահամբույր է, քան մեծը»,— մտածեց Վարդանը և սկսեց մտածել իր որդու մասին։

Բայց քանի գնում էին առաջ, քանի այսպիսի հայացքի հանդիպումներ էին տեղի ունենում՝ այնքան Վարդանը վարժվում էր պատանիներին։ Նա հիմա ավելի խղճում էր նրանց, քան քամահրում իբրև պաշտոնի գնացողների։

Վասակը Գադիշոյի հետ ճանապարհին երկար-բարակ վերդիր անելով իրենց վիճակը, գուշակելով արքունիքում պատահելիքն ու գալիքը՝ հնարներ էին մտածում շոր դուրս գալու այս դեպքից։

— Կարող է արքան բռնի ուրացումը հրամայել,— ասաց մի օր Վասակը։

— Արդեն իսկ պիտի հրամայի,— քմծիծաղով ասաց Գադիշոն՝ իբրև մի բանի մասին, որ անխախտ, անշուշտ պիտի կատարվեր։

Վասակը ետ նայեց. Վարդանը նույնպես խոսում էր նախարարների հետ և կարծես նույնպես զգուշանալով։ Երևի նա էլ էր մտահոգվել գալիքով և հնարներ էր որոնում։

— Մեր ուրացումը կլինի,— ասաց Վասակը,— դու ինձ խոսք ես տվել,— նա նայեց փորձիչ աչքերով Գադիշոյին,— կուրանան Գյուտը և թերևս մի երկու հոգի բանակում։ Երկրում կան պատրաստ և ուրիշները։ Բայց սրա՞նք, սրա՞նք, այս տարոնացի՞ն, այն մորթը դուրս տված աղվե՞սը...

Գադիշոն ժպտաց.

— Հիմա այլևս արժեք չունի, թե ո՞վ կդիմադրի։ Հիմա մենք այլևս նախարարներ չենք, քանի որ ժողովուրդ և երկիր չունենք։ Մենք նոր պիտի ստանանք դրանք, եթե ուրանանք։

— Ոչ, մենք արժեք ենք դեռ,— առարկեց Վասակը,— մենք պետք է երկրին տանք օրինակը, և հայերը մե՛ր խոսքով ավելի հեշտ կզիջեն, քան պարսիկների։ Մենք արժեք ենք և կարող ենք շատ բարձր արժեք դառնալ, եթե խելացի լինենք։ Ժամն է բարի և հաջող...

— Ես սպասում եմ երկպառակության,— ասաց Գադիշոն։

— Ես ևս,— և դա ավելի կբարձրացնի մեր կուսակիցներին,— ասաց Վասակը նենգավոր աչքերը ցոլացնելով ագահ և ուրախ։

Գադիշոյին մի տեսակ անախորժ եկավ գիշատիչ գազանի այդ սառը ժպիտը Վասակի աչքերում։ Այդ աչքերի մեջ նա տեսավ տիրակալի, իշխանության ձգտողի, եսական երջանկության հետևից վազողի խանդավառությունը, դավաճանության սաղմերը... Դավաճանություն հենց իրեն՝ Գադիշոյին։

Վասակը չուշացավ Գադիշոյի մեջ ուժեղացնելու այդ կասկածը։ Նա ասաց.

— Մեր կշիռը կբարձրանա Դենշապուհի և մյուս աղբերի կողքին, կբարձրանա նաև այդ «հերոսների» մոտ։ Հազկերտը մեզ կտա ավելի բարձր իշխանություն։ Կարծում ես մեզ կանչելով մեր վիճակը վատթարացա՞վ։ Ոչ... Մենք հիմա կարող ենք ամենահանդուգն բաների ձգտել։ Ժամն է պատեհ, Գադիշո՞ սիրելի։ Դու հավատարի՞մ ես։

— Հավատարիմ եմ,— պատասխանեց Գադիշոն՝ հասկանալով, որ նման հանդիսավոր հարցմունքներին միշտ Վասակը որևէ անցք բաց էր անում իր հոգեկան աշխարհից։— Հավատարիմ եմ, ասա՛։

— Եթե հավատարիմ ես՝ դե ուրեմն լսիր. բարձր իշխանությունը, որի մասին խոսեցինք մի օր Այբարատյան դաշտում, այժմ ահա գալիս է իր ոտով ինձ ու քեզ։ Եթե ունենք խելահասություն — չեմ ասում գութ... եթե ունենք տերունական մարդու անվրդով սիրտ, ահա օրն հասնում է։ Օ՜ն, դեպի գործ։

— Ի՞նչ պիտի անենք...

— Ուրացման համաձայնությունը տանք ես ու դու՝ դեռ Հազկերտը մեզ հրամանը չտված։

— Իսկ նախարարնե՞րը ինչ կասեն...

— Դա կանենք գաղտնի, Միհրներսեհի մոտ...

Գադիշոն քմծիծաղ տվեց.

— Դա կունենա՞ արժեք... չեմ հասկանում...

— Կունենա արժեք,— ասաց Վասակը,— Սպարապետը պետք է դիմադրի Հազկերտին։ Զուր չտվեց հրահանգը՝ կազմել տերունական զորքը։ Երկրի ապստամբությունը պատրա՞ստ է, իշխա՛ն։ Միհրներսեհը կստանա դրա լուրը։ Բայց նա չի կամենա պատերազմ։ Նրա համար շատ ավելի ձեռնտու է հայերի խաղաղ ուրացումը մեր ձեռքով։ Մենք մեծ արժեք ենք, սրանում ամենևին մի կասկածի...

— Ապրենք՝ տեսնենք...

Բաբիկն աչքով արեց Ներսիկին, որ ուշադրությամբ լսի, Սպարապետը խոսում է.

Վարդանը վերջացնում էր, ըստ երևույթին, իր խոսքը։ Պատանիները լսեցին։

— Մենք չենք անի՝ ժողովուրդը կանի։ Սա աշխարհի գործ է, իշխանություն չէ։ Տերունական զորքը և ժողովրդական գնդերը կանեն։

— Բայց ժողովուրդը առանց մեզ գործ չի տեսնի,— առարկեց Վահան Ամատունին։

— Է՜է՜, Հազարապետ,— ծիծաղեց Վարդանը,— մահը հանձրն առնողը միշտ գործ կտեսնի։ Խանգարողը կյանքի երկյուղն է։ Հուսա՛. Գնունին և մյուսները շնորհունակ զորավարներ են։

— Տա՜ աստված, տա՜ աստված,— բարեմաղթեց ծերունի Հազարապետը գլուխն օրորելով։

Նվ պատահմամբ նայեց Բաբիկին և Ներսիկին։

— Ո՞ւր է տանում սրանց,— հարցրեց Հազարապետը։

Վարդանը կիսաժպիտ նայեց Հազարապետին։

Բաբիկը շատ սպասեց, որ Վարդանը մի խոսք ասի իրենց մասին, բայց սա լռեց։

— Շատ է մտախոհ,— ասաց Հազարապետը ակնարկելով Վասակին,— մտահոգ է իր պաշտոնի համար, եթե ոչ կյանքը մի կերպ կազատի։

— Պաշտո՛նը պիտի գցի դրան,— նկատեց Վարդանը, բազմանշանակ և հառաչեց.

— Է՛, սո՞ւտ է... — ասաց Հազարապետը։

***

Երբ կարավանը մոտեցավ Նյուշապուհ քաղաքին, Վասակը սուրհանդակ ուղարկեց Միհրներսեհին հաղորդելու, որ ժամանում են մարզպանը և հայ նախարարները։ Նա պատրաստվում էր շքեղ երթով մտնել Նյուշապուհ, Հազկերտի արքունիքը։ Վաղուց օրինականացած սովորույթ էր, որ երբ հայոց այրուձին հայ նախարարների գլխավորությամբ Հայաստանից ժամանում էր պարսից մայրաքաղաքը կամ թագավորանիստ որևէ բնակավայր, թագավորը նրանց ընդառաջ մարդ էր ուղարկում և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը։ Գնդի հանդեսը ինքն էր անձամբ դիտում։ Եվ առաջ, քան պատերազմն սկսվելը, հայոց գնդի Պարսկաստան գալու առթիվ մեծ շնորհակալություն էր հայտնում և իր պալատականների ու մեծամեծների մոտ գովաբանում էր նրանց և հիշում էր եկածների նախնիների գործերը և հականե անվանե մարդկանց քաջությունները պատմում էր նրանց։

Վասակը հույս ուներ և ամենևին չէր կասկածում, որ նույն ընդունելությունը կլինի նաև այս անգամ։ Նա համոզված էր, որ Գյուտն ու Կողակը այնքան շտկած կլինեն իր գործը, որ գոնե Միհրներսեհը պատշաճ ընդունելություն ցույց կտա, եթե չի կամենա մյուս նախարարների հանդեպ սիրալիր լինել։

Քաղաքամերձ մի տեղում Վասակը կանգ առավ, սպասեց, որ բոլոր նախարարները հավաքվեն և դիմեց Վարդանին։

— Սպասենք, մինչև սուրհանդակը լուր բերի ընդունելության մասին։

— Մեզ չեն ընդունի հին կարգով,— ասաց Վարդանը,— մենք նրանց համար այլևս նախարարներ չենք, այլ հասարակ մարդիկ։

Վասակը հազիվ պահելով չարության զգացմունքը, սառը լռությամբ երեսը դարձրեց մի կողմ։ Վարդանը հասկացավ այդ չարությունը և ասաց.

— Ասված է կոչի հրամանի մեջ. «Սյունյաց տոհմից Վասակ անուն, Մամիկոնյան տոհմից Վարդան անուն...» մյուսներն էլ մեզ նման... Մարդը մեզ արդեն զրկել է նախարարությունից և տոհմերս է հիշում...

— Եվ մենք պետք է ո՞խ պահենք դրա համար արքայի դեմ... — հարցրեց թթու արտահայտությամբ Վասակը։

— Տեր մարզպան, թողություն արա ինձ, բայց ես հույս չունեմ, թե մենք այսօր կարող ենք ստիպել արքային մեզ շքեղ ընդունելություն ցույց տալ... ոխ չպահելով։

— Մեր բռնած դիրքը կստիպի Միհրներսեհին վճարել մեզ հարկուպատշաճ պատիվը,— համառեց Վասակը։

— Երանի հուսացելոց... Այն ժամանակ սպասենք այստեղ մի ամիս... — հեգնեց Վարդանը և իջավ նժույգից։

Նրան հետևեցին մյուս նախարարները։ Վարդանը նստեց մի քարի վրա և նժույգի սանձը հանձնեց Արծվիին։ Վասակը չէր իջնում։ Նա նվաստություն էր համարում դա։ Բայց երբ սուրհանդակը ուշացավ, նա՝ հրամայեց սպասավորներին, որ նստելու տեղ հարդարեն իր համար։ Սրանք մի շքեղ գորգ փռեցին ճանապարհից դուրս ավազի վրա, բարձեր դրին վրան։ Վասակն իջավ և գնաց նստեց գորգին։ Նա հրավիրեց բոլոր իշխաններին նստել իր մոտ, գորգին։ Հազարապետը և Գադիշոն գնացին, նրանց հետևեցին և մյուս իշխանները, բացի Վարդանից և Արտակից։

— Տե՛ր Մամիկոնեից, տե՛ր Մոկաց, հրամայեցեք,— հրավիրեց Վասակը՝ ցույց տալով իր կողքին բարձը։

— Շնորհապարտ եմ, տեր մարզպան,— հրաժարվեց Վարդանը,— ես այսպես էլ հանգիստ եմ։

Սուրհանդակը չէր երևում։ Մինչև Միհրներսեհի ապարանքը հազիվ լիներ մի չորս հինգ փարսախ, և սուրհանդակի նժույգը կարող էր շատ արագ վերադառնալ։ Վարդանը համբերությամբ սպասում էր՝ ամենևին հույս չունենալով, թե ընդունելություն է լի-

նելու։ Անհամբեր և անհանգիստ էր Վասակը, որ պարզ նկատում էր, թե Վարդանը ճիշտ էր գուշակել։ Նա տեսնում էր, որ ժամանակն անցավ և ոչ մի սուրհանդակ չկա։

— Իսկ սուրհանդա՞կն ինչու է ուշանում...

— Հյուրընկալնե՞ր է որոնում... — ծիծաղեց Արտակը։

— Իրո՞ւ թե ճշմարիտ չէ... — քմծիծաղ տվեց Վարդանը։

Դիմացը ծխում էր քաղաքը։ Երևում էին մարդկային կերպարանքներ, հեծյալներ էին ելումուտ անում քաղաքադռնից, գալիս կարավանի մոտով նայում նրանց, անցնում, բայց ոչ ոք չէր մոտենում։

— Գնա՛նք, տե՛ր մարզպան,— ասաց Հազարապետը հեգնական թույնը ձայնի մեջ,— մեզ ոչ ոք չի դիմավորելու։

— Սպասենք սուրհանդակին... — խուլ ու զայրացած ասաց Վասակը։

Սուրհանդակն եկավ՝ նժույգը փրփրած։

— Ինչո՞ւ ուշացար, ավանակի՛ գլուխ,— հարձակվեց նրա վրա Վասակը։

Սուրհանդակը չշփոթվեց։ Նա միայն թևքով սրբեց քրտինքն ու ասաց.

— Միհրներսեհի դռանը ինձ ետ տվին, տեր մարզպան...

— Չհայտնեցի՞ր, թե ով է գալիս... — ընդհատեց նրան Վասակը։

— Ցավն այն է, որ հայտնեցի, տեր մարզպան... բայց չլսեցին... ասացին՝ գիտենք, թե ով է գալիս, ե՛տ գնա...

— Ինքնագլո՞ւխ ասացին, ովքե՞ր էին այդ ասողները։

— Դռան պահակները... Ես պնդեցի, որ իմաց տան արարողապետին։ Արարողապետն եկավ և ասաց՝ Հազարապետը չի հրամայել ընդառաջ գնալ, թող մտնեն քաղաքը։

Վարդանը վեր թռավ ու նստեց նժույգը։ Նա զայրույթի շեշտով ասաց.

— Վե՛ր կացեք, տյա՛րք... քանի շատ ընկնենք պատիվների հետևից, այնքան վատ կանպատվեն մեզ...

Նախարարները վեր կացան։ Վեր կացավ նաև կոտրված Վասակը։

— Եվ ինչների՞ս է պետք պարսիկների պատիվն ու հյուրընկալությունը,— խոսեց Վարդանը դառն զայրույթով,— հարսա-

նի՞ք ենք գալիս, թե խնամախոս։ Չէ՞ որ մեզ կանչել են դատի, ոչ թե մեծարանքի։

— Բայց կա պատշաճավորություն,— առարկեց Վասակը։

— Անասունը չգիտե պատշաճավորություն... Անասունը մի բան գիտե միայն, որ կերը կոխես երախը...

Վասակին խիստ անդուրեկան էր Վարդանի անարգական խոսքերը իր մեծարանքի առարկա պարսից արքունիքի հասցեին. բայց ժամը տարաժամ էր, և նա կուլ տվեց։ Եվ նա կրկին դարձավ սուրհանդակին...

— Բայց դու չասացիր, թե ինչո՞ւ ուշացար։

— Տեր մարզպան, ինձ որ մերժեցին Միհրներսեհի ապարանքում, ես գնացի հայոց այրուձին, հայտնեցի ձեր գալուստը, ասացի գուցե թե մի բան անեն մեր իշխանները։

— Վատ չես մտածել,— ասաց Հազարապետը։

— Ավելորդ բաներ են... ոչ մի ընդունելություն պետք չէ,— պայրացավ Վարդանը,— մենք գնում ենք կռվելու և ոչ թե համբուրվելու։

Վասակի դեմքի մկանները կծկվեցին։ Նա աչքի տակով խեթ նայեց Վարդանին և թուքը կուլ տվեց։

Եվ առաջին անգամ Վասակի կյանքում ծագեց մի այսպիսի ստորացնող առեղծված, ո՞ւր իջեանել...

«Այդպե՞ս էին ընդունվել հայ նախարարները պարսից Դռան կողմից...»,— մտածեց նա դառնությամբ։

Վասակի սուրհանդակի խելքը ավելի լավ էր կտրել՝ դիմել հայոց այրուձիին։ Դրա հետևանքն այն եղավ, որ հայ իշխանները Սրվանձտյա Գարեգին իշխանի գլխավորությամբ, ամբողջ այրուձիով ընդառաջ եկան ժամանող նախարարներին։ Դա մի հանդուգն քայլ էր Գարեգինի համար։ Նա ենթարկվում էր Մուշկան Նյուսալալուրտ զորավարին։ Նա ինքնագլուխ հանել էր իր այրուձին և բերել ընդառաջ նախարարներին։

Եվ ահա Նյուշապուհ քաղաքաղռնից դուրս հոսելով հայոց այրուձին գալիս էր արագատրոփ ընթացքով՝ ծածանելով հայկական դրոշը։

Որքան էլ Վարդանը հակառակ էր ընդունելության որևէ ձևի՝ առավել ևս հանդիսավոր, բայց երբ տեսավ իր հարազատ այրուձին, սիրտը ճմլվեց և անկարող զսպել հին հեծյալ զինվորի կիրքը՝

հուզված ակամա նժույգի սանձը քաշեց։ Նժույգը ծառացավ և տեսնելով իր դեմ եկող նժույգների զանգվածը՝ սկսեց խաղալ ու սանձակոծ վազքի շարժումներ անել։ Վասակը նստեց նժույգը, նրան հետևեցին մյուս նախարարները, և կարավանը շարժվեց դեպի դիմավորող հայոց այրուձին։ Երբ սա մի փոքր մոտեցավ, հազարավոր դեմքեր սկսեցին օրորվել ու խայտալ։ Այս կողմ նայեցին արծվաքիթ, ամրակազմ և սլացիկ զինվորներ, որ միաժամ թախծալի և համառ հայացքներ ունեին և ավելի շարժուն, աշխույժ, քան ճահճային տենդերից դեղնած պարսիկ զինվորները։ Նրանց նժույգներն էլ ջոկվում էին իրենց թեթև, բայց պողպատ կազմվածքով և անհանգիստ, անսանձ եռոցքով։ Մի փոքր տարածություն ևս, և երկուստեք իրար եկող խմբերը կանգ առան իրար դեմ։

— Բարյա՜վ որ գաք,— բացականչեց Սրվանձտյա Գարեգին իշխանը՝ սուրը հանելով պատյանից և բարձրացնելով օդի մեջ։

Երկուստեք սրերը մերկացրին։

— Բարեողջույն,— ասաց Վասակը։

— Ողջո՜ւյն, ողջո՜ւյն,— ասաց Վարդանը։

Մյուսները ևս նույն ողջույնը տվին։ Առաջ եկավ Սրվանձտյա իշխանը ողջագուրվեց Վասակի հետ և ապա ջերմագին համբուրեց Վարդանի ձեռը, որն իսկույն խլեց նրա գլուխը և զգացված համբուրեց։ Մյուսները ևս երկուստեք ողջագուրվեցին։

Վարդանը նայեց այրուձիին։ Հազարավոր խանդավառ հայկական դեմքեր փայլեցին կարոտագին ժպիտներով։

— Սպարապե՜տ... Սպարապե՜տ... — կարոտակեզ ձայներով հորձանք տվին հեծյալ մարտիկները և տարբերայնորեն շրջապատեցին Վարդանին։ Դա դուր չեկավ Վասակին. բայց զգացմունքների հորդումը խորտակեց ամեն կարգապահական կանոն ու հրաման։ Գարեգինը ներողամիտ ժպիտով նայեց մարտիկներին և աչքերը կախեց գորովալի ժպիտով։

— Առողջ եք, տղայք,— ասաց Վարդանը մարտիկներին։

— Դու առողջ լինես՝ մենք առողջ ենք,— ձայն տվեց մի գեղեցկադեմ բարձրահասակ մարտիկ՝ կարմրելով ամոթխածությունից։

— Ինձ ի՞նչ կա, ես միշտ պիտի առողջ լինեմ,— կատակեց Վարդանը, որ միշտ զորք տեսնելիս մոռանում էր ամեն վիշտ ու հոգս։— Ո՞չ մի կորուստ չկա,— հարցրեց Գարեգինին։

— Ոչ մի, Սպարապետ, առողջ են։

— Գլխավորը առողջությունն է,— ասաց Վարդանը ժպտալով։

Մի պահ լռեցին։

Բայց մարտիկները չէին կարողանում հանգիստ նայել Վարդանին։ Շատերի կարոտալի աչքերը արցունքոտվել էին։

— Սպարապե՛տ, Սպարապե՛տ. սիրելի...

— Ջմեռա՛նք, էլի տեսա՛նք...

Վարդանը սթափվեց իրեն պաշարած մտքերից ու զգացմունքից։ Նա դարձավ Գարեգինին.

— Դե՛։

Գարեգինը բարձրաձայն հրամայեց.

— Զորագո՛ւնդ ի շա՛ր։

Այրուձին շարվեց ճանապարհի մի կողմը։ Վասակն առաջ ընկավ, նրան հետևեցին մյուս նախարարները, ապա այրուձին, վերջը սպասավորական կազմը, և երթը շարժվեց դեպի Նյուշապուհ։ Մտան քաղաքը և այնտեղից գնացին դեպի պարսից բանակի ճամբարը։

Ընդարձակ դաշտի երեսը եղևնու անտառի նման տարածվել էր Հազկերտի բանակի ճամբարը։ Հարյուր հազարանոց զորքը նկել շոքել էր ահագին տարածության վրա և եռում էր մարդկային բազմության շարժումներից։ Արևի շողերից պսպղում. էին զենքերը ու ասպասարքերը։ Խառնագույն վրանները անդադար բացվում փակվում էին անհանգիստ զինվորների ելումուտից։ Բանակը բաժանված էր մի քանի հատվածների՝ ըստ զենքի։ Մի հատվածում տարածվել էր ծանրազեն, վահանակիր, զրահավոր հեռանազորը, որ սևախավար ամպի պես ծածկել էր դաշտի լայնքը լեռների ստորոտից մինչև հարթավայրը։ Հետևազորին հաջորդում էր մյուս հատվածը. դա հեծյալ գնդերն էին, որոնց նժույգների տասնյակ հազարավոր ալեծածան բաշերը գզգզվում էին հովի հարվածներից։ Ապա գալիս էր մյուս հատվածը։ Դա ահռելի փղերի երամակներն էին՝ ոմանք մեջքները մերկ, մյուսները մեջքներին ամրացրած կուռ աշտարակներ՝ այնտեղից թշնամուն նետահարելու հարմարանքներով։ Փղերի մեջն ու շուրջը վխտում էր մատյան գունդը՝ այն տասնհազարանոց զորամասը, որ միշտ պահպանում էր իր տասը հազար թիվը թե՛ խաղաղ և թե՛ պա-

տերազմի ժամանակ՝ կրած կորուստները իսկույն ևեթ անխափան համալրվելով, որի համար և կոչվում էր մատյան գունդ, այսինքն՝ անմահների գունդ։ Ճամբարի արանքներում հազարավոր կապերտների ծածկերով խոնված էր բանակային շուկան, ուր հնդիկ, պարսիկ, հույն, հայ, ասորի վաճառականներ ու մատակարարներ ծախում էին զորքին ամեն տեսակ մթերք ու զենքի մասեր։ Այդտեղ կային պայտառներ, կոշկակարներ, համետագործներ, դարբիններ , դերձակներ՝ բոլորը ի սպաս բանակին։

Ճամբարի հեռավոր ծայրին մի վրան էր հաստատված ծառատունկերի խտության մեջ, հսկայական բազմաթև արծվի փռված-քով և բրգաձև ու կոնաձև զանազան բաժիններ ի մի հյուսած։ Վրանի այդ մասերը գույնզգույն էին՝ փերուզ, վարդագույն, կանաչ։ Նրանք մետաքս էին՝ նրբաթել բանված, կոկ ու նկարեն։

Դա Հազկերտի բանակային պալատն էր։ Քուշանների դեմ վարած բազմամյա պատերազմը նրան միշտ հանում էր Տիզբոնի խորշակահար հնոցներից և հաճախ բերում Ապար աշխարհ՝ բանակվելու բանակի հետ։ Տեղական ներկայությունները թելադրել էին նրան հիմնել այս ինքնատիպ վրան-պալատը, որի ձևը թերևս քուշաններից էր վերցրել։

Մուշկան Նյուսալավուրտի վրանից մի հեծյալ սլացավ դեպի հայոց այրուձին։ Դա մի հասարակ սեպուհ էր։ Նա մոտեցավ Գարեգինին և լսելի ձայնով նրան ասաց.

— Զորավարը հարցնում է, թե ինչո՞ւ առանց հրամանի հանեցիր այրուձին...

Գարեգինը չպատասխանեց։

Վարդանը սառը և հասարակ ձայնով ասաց.

— Զքվի՛ր...

Սեպուհը շվոթվեց, ուզեց բան ասել, բայց երբ ուշի-ուշով նայեց Վարդանին, հանկարծ ճանաչեց և գլուխը կախեց։ Եվ ապա առանց հետևելու երթին՝ նա ետ մնաց և դանդաղաքայլ հեռացավ դեպի Նյուսալավուրտի վրանը։

Հայոց այրուձին նախարարների հետևից գնաց իր ճամբարը։ Իջան նժույգներից և գնացին վրանները։ Դրանք կապերտներից սարքած վրաններ էին լեռնային ժողովրդի ոճով նախշած։ Վասակն առանձնացավ մի վրանում և անմիջապես թիկնապահին ու զուրհանդակին ուղարկեց քաղաք՝ որոնելու Գյուտին և Կոչ-

գակին։ Գադիշոն կասկած չհարուցելու համար՝ չգնաց նրա մոտ, այլ մնաց Վարդանի հետ։ Վարդանը նստելով իրեն հրամցրած բարձին՝ նայեց իր առջև կանգնած և նստած իշխաններին։ Դրանք վեց հոգի էին։ Նրանց մեջ աչքի էր ընկնում Սրվանձտյա իշխան Գարեգինը իր կտրիճ երիտասարդի թարմ տեսքով, որի սուր հայացքը և սեղմ շրթունքները ազդում էին մարդու։ Նրա կողքինը մի գունատ և տխրադեմ երիտասարդ էր՝ Քաջբերունյաց իշխան Ներսեհը, որ թախծալի նայում էր Վարդանին։ Երրորդը, որին նույնպես լավ էր ճանաչում, Ընծայնոց իշխան Արսենն էր՝ մշտաժպիտ ու անհոգ։

— Ինչպե՞ս եք հարմարվել, ինչպե՞ս եք անցկացնում կյանքներդ,— հարցրեց Վարդանը։

— Անց ենք կացնում կյանքներս,— ասաց Անձրևացյաց Շմավոն իշխանը հեգնական կատակով։

— Հարուստին ենք հարստացնում,— հառաչեց Արսենը՝ իր աշխույժ կապտաչյա դեմքը կծկելով և խոսքը փոխեց.—Հայրենիքո՞ւմ ինչ կա, Սպարապետ, տե՞ղն է հայրենիքը, մի՞տն ենք մենք...

— Հայրենիքում գործերը լավ չեն. գիտեք Հաղկերտի հրովարտակը ուրացության և մեր պատասխանը։ Կանչված ենք գատի։

Իշխանները լարվեցին։

— Մենք լսել ենք, բայց մանրամասն չգիտենք։ Ի՞նչ բան է,— հարցրեց Արսենը։

Վարդանը պատմեց։ Իշխանները լսեցին և անհանգստացած իրար նայեցին։

— Տյարք, սա պատերա՞զմ է,— վեր թռավ տեղից և բացականչեց Արսենը։

— Ինչո՞ւ պատերազմ, տեր Ընծայնոց,— չհամաձայնեց Գաղիշոն,— թերևս հաշտության դուռ բացվի։

— Հրովարտակն այնպես է գրած, որ ոչ մի հաշտության ելք չի կարելի գտնել։ Պատերազմի առաջ ենք,— ասաց զարմացած Արսենը։— Ի՞նչ կասես, տեր Սրվանձտյա։

Գարեգինը չպատասխանեց, այլ շարունակեց սուր հայացքով զննել Գադիշոյին։ Նրան Հայաստանից գիտեր, բայց չէր տեսել նրան, և լավ կարծիք չէր հայտնվել նրա մասին։ Ոմանք էլ ասել էին, որ հպարտ է ու ինքնասեր։

Վարդանը սրտնեղություն զգաց Գագիշոյի խաղաղասիրությունից և դուրս եկավ վրանի առաջ՝ մի փոքր մենակ մնալու։

Իսկույն նրան շրջապատեցին զինվորները։ Նրանցից շատերը Վարդանի կռիվներում եղել էին, և անձամբ նրանց ճանաչում էր Վարդանը։

— Հա՛, տղերք,— մոտ գնաց Վարդանը,— սրտներդ նեղանո՞ւմ է այստեղ։

— Ապա չի՞ նեղանում, Սպարապետ,— ասաց խելացի դեմքով մի համեստ մարտիկ։— Հայրենիքից հեռու, ընտանիքից հեռու։

— Ծառայությունն էլ օտար,— վրա բերեց մի ուրիշը։

— Շատ են նեղություն տալիս, Սպարապետ,— մեջ մտավ մի այլ մարտիկ. ճանապարհ բաց անելով և առաջ գալով դեպի Վարդանը,— հուպ տաս՝ հոգիները կտան, բայց էլի ծիծաղում են մեզ վրա, հայհոյանքներ են տալիս, անպատիվ անում։

Վարդանը գլուխը կախ լսում էր իր մարտիկների գանգատները և տխրում։ Քանի՜ քանի՜ այսպիսի մարտիկներ ընկել են Մահվիռոտի անապատում այդ ծաղրող պարսիկներին ազատելով մահից։

— Դիմացեք մինչև վրեժը,— ասաց նա չար ու խուլ ձայնով և ապա դաշույնի հայացքը շրջեց բոլորի հայացքների մեջ,— կգա՜ օրը վրեժի...

Նա առաջ գնաց դեպի բանակը։ Մարտիկները շրջապատած նրան գնացին հետևից։ Վարդանը շատ էր սիրում իր այրուձին, սիրում էր մտնել հեծյալների բազմության մեջ, զրուցել հետները։ Դա նրա հին սովորությունն էր։ Իսկ այսօր նա հոգեկան պահանջ ուներ հանգստացնելու իր ներքին ալեկոծությունը, մոռանալու դառնությունը, որ հարյուրավոր սարեր ու ձորեր կտրել եկել էր դատվելու իր խղճի ազատության համար։

Իսկ ներսում, Սրվանձտյա Գարեգին իշխանի վրանում շարունակվում էր զրույցը։

Գագիշոն պատմում էր Հայաստանի դեպքերի մասին։ Հայոց այրուձիի իշխանները առանձին կասկած չտանելով, միամիտ հարցուփորձ էին անում նրան։ Գագիշոն պատմեց պատասխանի թղթի կազմելը, Այրարատյան դաշտի ժողովրդական ըմբոստությունները, նախարարների անարգումը, սկսեց թանձրացնել այդ

շարժումը իբրև անիշխանություն և վտանգավոր, խելագար արարքներ։

Իշխանները լսում էին հետաքրքիր և մի փոքր շփոթված։ Միայն նրանցից Սրվանձտյա Գարեգին իշխանը կասկածով և տհաճությամբ նայում էր Գադիշոյին։ Նա չէր կարողանում հասկանալ, թե ի՞նչ կար ավելի ճշմարիտ, քան արել էին հայ նախարարները և ժողովուրդը։ Ուրիշ ի՞նչ պետք էր անել, երբ մի ժողովրդի զրկում են ինքնությունից։

— Ո՞ւր մնաց Սպարապետը,— հարցրեց Ընծանյոց իշխանը՝ նայելով դուրս։

— Է՜, Սպարապետն է, մի անգամ որ տեսավ իր այրուձին՝ կմտնի մեջները և կսկսի զրույցը,— ասաց համեստ ու տխրադեմ Քաջբերունյաց իշխան Ներսեհը։

— Բայց հոգնած կլինի ճանապարհից, կանչենք հանգստյան օթևան։

— Նա հենց մարտիկների մեջ էլ հանգստանում է,— ծիծաղեց Անձևացյաց Շմավոն իշխանը։

— Ի՞նչ է մտածում Սպարապետը,— հարցրեց Արսենը հետաքրքիր,— կարո՞ղ ենք պատերազմել։

— Նա բռնել է ապստամբության ուղին՝ առանց զորքի, առանց հարևանների օգնության, մեն-մենակ մի աղգով,— ասաց Գադիշոն հայացքը հարևանցի ու արագ նետելով դեպի Սրվանձտյա իշխանը, որի լռությունը և խեթ, օտար հայացքը, թերահավատ արհամարհանքը դուր չեկան Գադիշոյին։ Բայց և զգաց, որ իր դիմացինը հեղինակավոր տեղ է գրավում զորագնդում և իշխանների մեջ։ Նրանց մեջ զարթնեց մի խուլ հակառակություն։ Ուստի և Գադիշոն վերապահ և ինքնամփոփ դիրք բռնեց։

— Ապագան չկտրած ձմերուկ է,— ասաց Գադիշոն կատակի տալով,— տեսնենք ի՞նչ կբերեն դեպքերը. պատերա՞զմ, թե խաղաղություն։

— Պատերազմն էլ մենք ենք բերելու, խաղաղությունն էլ,— խոսեց Գարեգինը հանգիստ եղանակով՝ հազիվ ցույց տալով ներքին հեգնանքը։

Գադիշոն շրջվեց դեպի նա։

— Ինչպե՞ս կարող ենք մենք բերել։ Մենք արյաց ուժը չունենք, մենք չենք տնօրինում մեր բախտը։

— Եթե ուրանանք մեր երկիրը, իշխանությունը՝ կլինի խաղաղություն, չուրանանք՝ պատերազմ, ի՞նչ առանձին խելքի բան է,— արդեն զգալի հեգնանքով ասաց Գարեգինը։

Գադիշոն հասկացավ, որ գաղտնի նահանջի տեղը չի և պետք է մի լավ հարված տալ, ուստի և ասաց.

— Ուրանալ չուրանալը պետք է ազգովին լինի. տեսնենք բոլո՞ը կուրանան. բոլո՞ը չեն ուրանա։

— Ճշմարիտ է...

— Հա՜... բանն էլ ա՛յդ է...

Նրանք իրար նայեցին արդեն նոր ծնված ատելությամբ։

Զար և մռայլ դիտում էր սրանց և անմասնակից ունկնդրում Ներշապուհը, որին արդեն հայտնի էր Գադիշոյի ներքինը, գոնե այնքան, որ նրան հայտնի չէր, թե Գադիշոն կգնա՞ ապստամբների հետ։

Վարդանը զրուցելով անցել էր գնդի վրանների խորքերը և մտել մի վրան։ Մարտիկները լցվել էին ներս։ Իսկ մնացյալ մարտիկները կանգնել էին վրանի շուրջը և մի կերպ լսում էին վրանի խոսակցությունները։

Վարդանը նստել էր նժույգի թաղիքի և զորականի թիկնոցի վրա և թամբին հենված լսում էր մի հարյուրապետի պատմվածքը վերջերս պատահած մի մարտի մասին, ուր պարսիկների գնդերին խառն կռվել էր նաև հայոց այրուձին։ Նա հետաքրքրական մանրամասներով նկարագրում էր հայոց այրուձիի մի շատ բարդ և ճարպիկ նահանջի մասին, որի հաջողությունից ոչ ոք պարսիկներից հույս չի ունեցել։ Հարյուրապետը բաց կապտագույն աչքերով մի հիսնամյա տղամարդ էր. իրեն պահում էր ծանր և հարգանք լրջությամբ և պատմում էր առանց պարծանքի, այլ միայն իբրև կռիվ վարելու հնարքներ։ Վարդանը լսում էր նրան։ Երևում էր, որ պատմողն ու Վարդանը հին զորականների բարեկամական կապով էին կապված։ Վարդանն այնքան էր սիրում իր այրուձին ու նրա մարտիկներին, որ մոռանում էր իր իշխանական դիրքը և դառնում էր հասարակ մարտիկ, երբ խոսում էր մարտիկների հետ։

Հարյուրապետ Արշամը պատմում էր, թե ինչպես Գարեգին իշխանը հայոց այրուձին բաժանել էր չորս մասի և ամեն մասին հրամայել էր իրար օգնելով նահանջել այնպես, որ միշտ մի կամ

երկու մաս կանգնում նետահարում են հարձակվող քուշանների հեծելազորը, իսկ մնացյալ մասը կամ մասերը արագ ետ են քաշվում և կանգնում. իսկ այդ միջոցին կանգնած մասերն են նահանջում, սրանց հետապնդող քուշանական հեծյալները կանգ են առնում դիմադրող մասերի առաջ, և այսպես մինչև հենակետը հասնելը։

— Դա նման է մեր հնարքներին,— ասաց Վարդանը հորանջելով։ Նա ժպտաց։ Հոգնած էր։

— Սպարապետ,— խոսքը փոխեց Արշամը,— չեմ իշխում հարցնելու. ինչո՞ւ եք եկել, ճշմարի՞տ է, որ Հազկերտը հրամայել է հավատներս ուրանանք։

— Ճշմարիտ է,— պատասխանեց Վարդանը։

Արշամը կոտրած ժպիտով սպասեց նրան, որ շարունակի և բացատրի, թե հետո՞, ի՞նչ է ասում դրան ի պատասխան։ Բայց Վարդանը լռեց և տխուր ու մռայլ գլուխը կախեց։

— Ախր, տեր իմ, ինչպե՞ս կարող ենք հավատներս ուրանալ, դա ասել է՝ պարսի՞կ դառնանք...

— Այո, պարսիկ դառնանք,— շեշտով կրկնեց Վարդանը։

Մարտիկներն իրար նայեցին. չհասկացան արդյոք Վարդանը համակե՞րպ է դրան, ընդունո՞ւմ է պարսից կրոնը, թե՞ դեմ է։ Արշամը աչքերը կախեց գետին։

Տիրեց տխուր լռություն, որի ընթացքում Արշամը գեռ սպասում էր, որ Վարդանը մի բան խոսի։

— Ջավակնե՛ր,— պարզ հայացքով նայեց Վարդանը զինվորներին,— Հազկերտը հավատը չէ, որ պահանջում է։ Նա պահանջում է, որ ուրանանք հայրենիքը, մեր ազատությունը։ Հավատքի բան չէ, հայրենիքի բան է։

— Է, հայրենիքն ո՞վ կուրանա, Սպարապետ,— վրդովվեց Արշամը։

Մարտիկները հավանության նշաններ արին։

— Ճիշտ է,— հաստատեց Վարդանը,— հայրենիքը ուրացանք՝ ասել է տվինք ամեն բան։

— Հիմի հասկացանք,— պնդեց Արշամը։ Բայց Վարդանը հոգնած փակում էր աչքերը։

Վրանի դռնից մարտիկները ներս խցկվեցին՝ ամաններով ջուր բերելով։

— Ջի՞ լվացվելու,— հարցրին շշնջալով մարտիկները։

Արշամը ձեռով արեց նրանց, որ հեռանան։

Վարդանը քնել էր։ Նրան ծածկեցին զորական վերարկուով։

— Դե՛, դո՛ւրս,— հրամայեց Արշամը։

Մարտիկները զգույշ հեռացան։ Դուրս եկավ նաև Արշամը։ Արծվին, որ նժույգները տեղավորել էր, այժմ եկել էր իր Վարդանին հսկելու։ Նա կանգնեց վրանի դռան։ Արշամը շատ զգույշ փսփսաց նրա ականջի տակ։

— Ա՛յ թե ինչ մտքի է, հնազանդ չէ Հազկերտին։

— Հնազա՞նդ... Սպարապետին չեք ճանաչո՞ւմ,— կշտամբեց Արծվին և մի փոքր հեռացավ դռնից։

Մարտիկները կրկին պաշարեցին Արշամին և Արծվին։

— Ի՞նչ պիտի անի Սպարապետը, սեպուհ։

— Կանի՞, կանի՞ Սպարապետը,— ծիծաղեց Արծվին։

— Դե՛մ կանգնի, դիմադրի՛,— բարկացավ մի զինվոր,— տուն, տեղ, հայրենիք թողել եկել ենք այս քանդվածը, արյուն ենք թափում՝ հերիք չի՞, ի՞նչ է ուզում մեր խղճից... գազանը։

— Գազան ասիր պրծա՞ր,— ասաց մի մարտիկ։

— Գազանն ափսոս չի՞,— վրա բերեց մի ուրիշը,— գազանը երախտիք գիտե. առյուծի վերքը մի որսորդ լավացրել է, առյուծը նրան ձեռ չի տվել։

— Կմեռնենք՝ չենք ուրանա հայրենիքը,— ասաց առաջին մարտիկը։

— Ճշմարի՞տ խոսք, հավատ՝ ասել է հայրենի,— խոսեցին խմբով բոլորը։

— Տնա՞շենի մարդիկ,— խոսեց կրկին Արշամը,— շոգին՝ վառվի, ցրտին՝ փետացի, կռվին՝ միսդ կեր, թե ինչ է ազատ մընաս, երկիր ունենաս, դա է՞լ չթողնեն։ Անաղուհա՛ց անօրեն...

— Ժողովուրդը ողջ վեր է կենում,— ասաց Արծվին,— վճիռ է դրած՝ որ երկիրը պիտի պաշտպանվի։

— Պիտի վճի՞ռ դնեն, որ հասկանանք,— ասաց Արշամը,— ես իմ ձեռով իմ որդուն կսպանեմ, թե դավաճան դուրս գա...

Հետո նայեց շուրջը և ասաց.

— Դե՛, ցրվե՛ք, ցրվե՛ք, տեսնենք վաղվա օրը ինչ կբերի։

Մարտիկները ցրվեցին։

Իշխանների վրաններից սպասավորներ եկան Վարդանին հրավիրելու օթևան, բայց Արշամը բացատրեց, որ նա քնած է մարտիկների վրանում։ Դա նշանակում է, որ չէր կարելի նրան տեղահան անել։ Վարդանի այս սովորությունները գիտեին գնդում։ Ուստի և հեռացան։

Մութն ընկավ. ճամբարը լռեց։

Վասակը անքուն սպասում էր իր վրանում Գյուտին և Կոդակին։ Նրան այրում էր վրանի հողը. նա իրեն չափազանց ստորացած էր տեսնում, որ իրեն չեկան դիմավորելու, որ ինքը նստած է մյուս նախարարներին և իշխաններին հավասար միևնույն օթևանում, այն էլ վրանում։ Նա, որ եղել էր ապարանքներում և պալատներում, որի հետ Միհրներսեհը բազմիցս տեսակցել էր, խորհրդակցել, որ միշտ հյուրընկալվել էր, պատիվների արժանացել՝ այժմ պիտի կրեր այս նվաստացումը։ Եվ ո՞ւմ պատճառով։ Մի քանի տաքարյուն և անհեռատես մարդկանց, որ կարծում են, թե կարող են դիմագրավել արյաց մեծ տերության։ Նա վայրկյան առաջ կամենում էր դուրս գալ այս նախարարների և զորագնդի միջից, ժամ առաջ կուզենար հայտնի կացուցանել պարսից արքունիքին, որ ինքը հակամետ է ուրացության, որ ինքը նրանց մարդն է։

Ներս մտավ Գադիշոն։

— Չե՞ս քնել, տեր մարզպան,— հարցրեց նա մի փոքր քըմծիծաղով։

— Սպասում եմ մերոնց... տեսնեմ ինչ են արել։ Լավ չէ, որ մենք խաոն իջևանեցինք սրանց հետ։ Տեսակցություններ կունենանք պարսից մեծամեծների հետ, թերևս Միհրներսեհի հետ։ Իսկ դա այստեղ անհնարին է։

— Ուզում ես տեղափոխվե՞լ։

— Անշուշտ, անտարակույս...

Երկար անցուդարձ էր անում Վասակը, մինչև բարկությունն իջավ։ Բայց միևնույն է. իր վիճակը մնում էր նույնը, Կոդակը միայն կարող էր մի բան փոփոխել, եթե մինչ այդ պարսիկներից կոչի հրաման չգար։

Բայց կարող էր կոչի հրաման գալ՝ ներկայանալ ատյանի, դատի, դատավարության... Պետք էր շտապել խուսափել որևէ պատահարից։ Ոչ, մնում էր Կոդակը, կրկին Կոդակը...

Բայց դեռ ո՞ւր էին իսկական վիրավորանքները։ Դեռ ի՞նչ էր սպասում նրան... Վասակը դառնանում էր ավելի ու ավելի։ Ի՞նչ անել, ի՞նչ կարելի է անել... Կարծես նոր միայն զգաց, թե որքան սարսափելի էր եղել իրենց կանչելը Պարսկաստան։ Վասակը կշտամբեց իրեն, դատափետեց, որ թույլ է գտնվել։ Չէր եղել ավելի դաժան և վճռական։ Նա նոր միայն տեսավ պարզ, որ իր դեմ են ոչ միայն հայերը, այլև պարսիկները։ Նոր էր տեսնում, որ դիմադիր ուժերն աճում են օրերի հետ։ Որ պետք է լարել ամենամեծ ուժերը, վերջին ճիգերը գործ դնել։ Եվ պետք է գտնել նոր շրջություն, նոր նպատակադրում։ Դա, իհարկե, այս գիշեր չի լինի. դա պահանջում էր երկար ժամանակ մտածելու, հնարելու, գտնելու...

Հետևյալ առավոտ, երբ ճամբարը զարթնեց, նախարարները հավաքվեցին Գարեգինի վրանում։ Նրանք սպասում էին, որ Հազկերտից կամ գոնե Միհրներսեհից սուրհանդակ կգա հրավիրելու տեսակցության կամ հրաման՝ գնալ ատյան դատի։ Բայց ոչ այս եղավ և ոչ այն։ Պարսից Դուռը սպանիչ լռություն էր պահպանում։ Անկարելի էր կարծել, որ պարսից իշխանությունը չէր տեսել կամ իմացել հայ նախարարների ժամանումը։ Ամեն ինչ դիտել, տեսել էին և հետևում էին յուրաքանչյուր շարժման։ Բայց դիտմամբ էին պահպանում մեռելային լռությունը, որ խորը անարգեն, խիստ ազդեն, ստորացնեն հայերին։

— Պարսիկները անարգում են մեզ, բայց մենք չենք անարգվում,— ասաց Վարդանը,— թող լռեն մի քանի տարի։ Նստեցեք այստեղ թեկուզ հավիտյանս հավիտենից։

Նախարարները հավանություն տվին։

— Տեսնենք որի՛ շունչն է երկար,— ավելացրեց Վարդանը։

***

Հայ նախարարների անտեսումը, կատարյալ արհամարհանքի ցույցը տևեց մի քանի օր։ Ոչ մի սուրհանդակ, ոչ մի պաշտոնյա չերևաց։ Զարագույժ լռություն էր տիրում արյաց Դուռն, բանակի ճամբարի, Միհրներսեհի ապարանքի կողմը։ Հայոց այրուձիի ճամբարում տիրում էր լարված, բայց արժանապատիվ տրա-

մադրություն։ Վարդանը զուսպ ու հանգիստ զրուցում էր նախարարների ու իշխանների հետ, ավելի շատ մարտիկների հետ, և ցույց չէր տալիս ներքին խռովքը։ Նա իր անձի համար չէր մտահոգվում։ Մտածում էր, որ կարող են երկրի համար անսպասելի աղետներ ծագել։ Նշանները լուրջ էին։

Արսենը վերադարձավ ճամբար։ Նրան Վախթանգը հայտնել էր, որ տեսնվել է Արամայիդիի հետ, խոսել Միհրներսեհի հետ։ Հազարապետը մերժել է տեսնվել հայ նախարարների հետ՝ քանի դեռ Հազկերտը ինքը չի կանչել նրանց իր մոտ ատյանի։ Բայց Վախթանգը բերել էր մի շատ կարևոր տեղեկություն Միհրներսեհի և Դռան մտադրությունների մասին։ Միհրներսեհը հայտնել էր, որ Հազկերտը սպառնացել է բոլոր նախարարներին սպանել տալ կամ ուղարկել աքսոր, բայց պետք է Միհրներսեհի միջոցով՝ ամեն կերպ խափանել այդ սպառնալիքը և դատի ձև տալ գործին։

Վասակը գնաց,— այս առաջին անգամն էր,— Վարդանի վրանը։ Նա զայրացած էր այս վիճակից և չէր կարողանում զսպել իրեն։ Նա այս բոլորի մեջ մեղադրում էր Վարդանին։ Ուստի և նրան ասաց.

— Մինչև ե՞րբ պիտի նստենք այստեղ ձիերի մեջ, Սպարապետ։

— Մինչև որ իսկական ձիերը հասկանան, որ մենք ձիերի մեջ նստելու չենք եկել։

— Դուռը չի գա մեզ, մենք պիտի գնանք Դուռը։

— Տեր մարզպան, թողությո՛ւն արա անպատշաճությանս, ես չեմ գնա Դուռը։

— Դու գրգռում ես պարսիկներին։

— Ոչինչ, նրանք էլ մե՛զ են գրգռում։

— Ապա ինչո՞վ պիտի վերջանա այս անարգանքը։

— Թող հաստատգլուխները իրենք հոգան այդ մասին,— և Վարդանը վեր կացավ զայրույթով,— ես չեմ անարգվածը, անարգվել են նրանք։

— Դու մտադիր ես ուրեմն ցասման հասցնել գործը,— ձայնը բարձրացրեց Վասակը։

— Ոչ,— ձայնը ցածրացրեց դիտմամբ Վարդանը, Վասակին վիրավորելու համար,— ես ուզում եմ խելամտության կոչել այս կատաղած ցուլերին։

Վասակը մշմշում էր զայրույթից, բայց նրան զինաթափ էր անում Վարդանի համառ ու վճռական խոսքը։

— Այն ժամանակ,— ասաց Վասակը,— ես կգործեմ ինչպես իմ խիղճը կներշնչի։

— Դու գիտես, տեր մարզպան, ես ոչնչից երկյուղ չունեմ։

— Քո անձի համար կարող ես, բայց երկրի համար...

— Եթկրի՛ համար,— գոչեց զայրույթով Վարդանը,— երկրի՛ համար երկյուղ չունեմ։

Նա գունատվեց։

***

Վարդանի վրանը եկան Աշուշա բդեշխը և Աղվանից իշխան Վահանը՝ իրենց ուղեկցող այլ սեպուհների հետ։ Նրանք ողջագուրվեցին օտարության մեջ վիճակակիցներին հատուկ ջերմությամբ։ Երբ նստեցին, Վարդանը ժպտաց բոլորին։

— Մահը մարդով հարսանիք է։

— Ճշմարիտ է, Սպարապետ,— ասաց աղվանից իշխան Վահանը։

Վարդանը նրանց հարցուփորձ արեց Վրաստանի, Աղվանքի և Հայաստանի մասին իբրև իրենցից հետո եկողների։ Աշուշան ասաց, որ հանգիստ է ամեն տեղ։ Սպասում են։

— Փոթորիկը հետո կլինի,— ասաց աղվանից իշխան Վահանը։

— Կկանխենք փոթորիկը,— ասաց Աշուշան։

— Ուրացությա՞մբ,— ոչ առանց հեգնանքի հարցրեց Վարդանը։

— Ոչ, հավատի պաշտպանությամբ,— լուրջ և նույնպես ոչ առանց հեգնանքի ասաց Աշուշան,— աշխարհը անհնարին չէ։

— Տա աստված,— ասաց Վարդանը։

Լռեցին։

— Եթե մարզպանը մեզ օգնի մի փոքր,— ասաց Աշուշան Վարդանին առանձին,— գործը ավելի դյուրին գլուխ կգա։

— Ի՛նչ անի...

— Խսկույն չզիջի։

— Չեմ հասկանում։ Իսկույն չզիջի, ուրեմն հետո՞ զիջի,— նեղսրտեց Վարդանը։

— Կասեմ առանձին,— փակեց խոսքը Աշուշան։

Միհրներսեհի կարգադրությամբ վրաց և աղվանից իշխաններին տեղավորեցին հայերից հեռու մի այլ վրանախմբում և հսկում էին, որ նրանք հաղորդակից չլինեն հայերի հետ։

***

Առավոտ էր։ Հայ նախարարները նստած էին Սրվանձտյա իշխանի վրանում և արդեն վարժված իրենց վիճակին՝ խոսում էին, երբ տեսան, որ մի հեծյալ նժույգը թոցրած գալիս էր դեպի հայոց այրուձին։ Նա մինչև վերջը քշեց և նժույգի սմբակները խրելով գետնի մեջ, հանկարծ կանգնեց։ Դա պարսիկ սուրհանդակ էր։

— Արքայից արքան հրամայեց ձեզ ներկայանալ իրեն և իսկույն ևթ։

— Անխախտ, անհապաղ,— ասաց Արսենը նուրբ հեգնանքով և վեր կացավ,— է, գնանք հարսանիք. կամ ջուր պիտի կրենք, կամ փայտ...

— Պատասխան թղթի պատասխանը պիտի տանք,— ասաց Ներսեհ իշխանը և դարձավ Սրվանձտյա իշխանին,— կտա՞նք լավ պատասխան, իշխան...

— Կտանք մեր պատվին արժանի պատասխան,— ասաց չար եղանակով Սրվանձտյա իշխանը,— քուշանների կռվում արյուն ենք թափում պարսիկ բռնավորի համար, մի՞թե արյուն չունենք մեր հայրենիքի համար։

— Մեռնե՞մ հայրենիքին,— հառաչեց կարոտով տխրագեմ Քաջբերունյաց իշխան Ներսեհը։— Ինչո՞ւ չունենք։

Իշխանները վեր կացան։ Սուրհանդակը շտապեցնելու համար նախարարներին՝ խթեց իր նժույգը։ Սակայն նախարարները՝ Վարդանի տված նշանի համաձայն՝ նժույգներին տվին արժանավայել դանդաղ ընթացք և քանի մոտենում էին պալատին՝ ավելի

դանդաղում էին, տալով իրենց երթին հանդուգն ցույցի հանդիսավոր կերպարանք։

Առջևից գնում էր Վասակը իր շքախմբով։

Պալատի դռներին նրանց հանդիպեցին շատ սառն։ Ջեղան ողջույնի խոսքեր։ Ողջունեցին նաև նախարարները և լուռ, լարված մտան պալատի միջանցքը։ Նրանց կանգնեցրին։ Նվաստիչն այն էր, որ Ներսում լռություն էր։ Մինչև անգամ վարագույրի ճեղքից երևում էր ժողովականների ահագին բազմություն, որ անշարժ սպասողական դիրք էր ընդունել։ Այնտեղ ոչ մի բան չէր շարժվում։

Վերջապես վարագույրը բացվեց և արարողապետը իր արհեստի շինծու մկանային կիսաժպտով հայտնվեց և ներս տարավ նախարարներին։

Քար լռությունը դիմավորեց նրանց։

Ժողովականների կիսաբոլոր շրջապատի մեջ, պատշաճ հեռավորության, բարձրադիր հարթակի վրա, բարձերին բազմած ու հենած հևում էր Հազկերտը։ Նա անձնյա, կլորիկ, ոչ շատ բարձրահասակ մարդ էր, խոյաքիթ, համարյա անմորուս։ Ամենից անախորժը նրա բոլորակ խոշոր աչքերն էին գունատ, փայլուն, լեզված դեմքին։ Նա կանաչ պատմուճան ուներ հագին — «փիրահեն» և ոսկեհուռ սև բեհեզ անդրավարտիք—«վեշի» և գլխին ատամնավոր բուրգի ձևի ոսկեհուռ թագ, որի ճակատին բոլորակ գնդակ կար՝ ի նշան լուսնի և արեգակի։

Հազկերտի մոտ նստած էր միայն Միհրներսեհը, որ ցից քարաբեկորի նման անշարժացել էր և իր բարձունքից նայում էր անփոփոխ իր ընտրած մի կետին և մռայլվում։ Նրա դիմացը մովպետան մովպետն էր նստած, իսկ մյուս պալատականները բավական հեռուն կանգնած էին՝ բոլորը բարև բռնած։

Պալատի սրահը լուսավորված էր բարձրից և արևի ոսկի ժապավենները կախված, ընկած էին Հազկերտի առջև։ Բազմանկար պատերն ու գորգերի ծաղիկները թունավոր գեղեցկություն էին տալիս ահավոր ատյանին և չէին կարողանում մեղմել շարագույժ վոթորկի սպառնալիքը գարնանային ժպտալի դաշտ հիշեցնող սրահում։

Արարողապետը կոպիտ ու անակնկալ կերպով կանգնեցրեց նախարարներին ու իշխաններին ուղիղ դռան շեմքին։ Նրանցից աջ

ու ձախ կանգնեցրեց նաև վրաց և աղվանից իշխաններին, որոնց առանձին էին բերել և առանձին կանգնեցրել, երկյուղ ազդելու և ապա սիրաշահելով անջատելու հայերից։ Հարյուրավոր դաժան հայացքներ հառեցին նրանց։ Բայց ամենից ավելի դժնդակը Հազկերտի հայացքն էր, անքթիթ, սև, աչքերը չար, որոնցից թույն էր կաթում։

Պատասխան թուղթը կարդացել էին և մրրիկն սկսվում էր։ Ու հենց որ հայ նախարարները ներս մտան՝ Հազկերտը ցցեց գլուխը ակնոցավոր օձի չարահայաց լարումով և նայեց նրանց։

Միհրներսեհը նայեց իրենից մի փոքր հեռու կանգնած ատենապետին։ Սա առաջ եկավ։

— Կարդա մեղապարտների անվանացանկը։

Ատենապետը բացեց ոլործուն մագաղաթը։

— Ո՛չ աստիճան իշխանական, ո՛չ պատվանուն, այլ տոհմը և անունը,— քարե խոսքերով արտասանեց Միհրներսեհը։

Ատենապետը կարդաց.

— Սյունյաց տոհմ՝ Վասակ անուն։ Արծրունյաց տոհմ՝ Ներշապուհ անուն, Ռշտունյաց տոհմ՝ Արտակ անուն, Խորխոռունյաց տոհմ՝ Գադիշո անուն, Մամիկոնյան տոհմ՝ Վարդան անուն, Մոկաց տոհմ՝ Արտակ անուն, Ապահունյաց տոհմ՝ Մանեհ անուն, Ամատունյաց տոհմ՝ Վահան անուն, Անձևացյաց տոհմ՝ Շմավոն անուն։

— Ովքե՞ր են, այստե՞ղ են. առա՛ջ գան,— դաժանորեն հրամայեց Միհրներսեհը, որը թեև լավ ճանաչում էր նրանց։

Նախարարներն ու իշխանները առաջ գնացին։

Հազկերտը նայեց Միհրներսեհին և աչքերով նշան արեց նրան։ Միհրներսեհը ձեռքով մոտ կանչեց Խոսրովին, վերցրեց Հազկերտի առջև գցած մագաղաթի փաթեթը և երկարեց նրան։ Խոսրովը վրա վազեց, խլեց մագաղաթը և կանգնեց սպասելու.

— Կարդա՛,— հրամայեց Միհրներսեհը կիսաձայն։

Համաձայն պարսից սովորության՝ գործին տրվում էր դատի կերպարանք՝ վեր հանելու համար արդարությունը։

Խոսրովը դառնաձայն և թունոտ շեշտով կարդաց հայոց պատասխան թուղթը։

Թեև ատենավոր պալատականներն ու մեծամեծները մի անգամ լսել էին այդ թղթի ընթերցումը, սակայն երբ այն ընթերցվեց

թղթի հեղինակների ներկայության, ազդեցությունը շատ մեծ եղավ։ Բոլորը կատաղած նայում էին նախարարներին և ամենից խիստ Վարդանին, նույնպես Վասակին, որոնց լավ ճանաչում էին։ Մի մկան անգամ չշարժվեց Վարդանի դեմքին։ Նա կանգնած էր անշարժ, բարձր բռնած գլխով, աչքերը հատակին՝ հպարտ ու վեհ։ Նա գեղեցիկ էր։ Մահվիոտի հերոսը արձանացել էր մեջտեղը և կարծես մի գուսան լուռ պատմում էր, ոգում նրա սխրագործությունների վեպը։

Մովպետան մովպետը, որը մինչ այդ եռում էր կրակին դրած կաթսայի նման, վեր թռավ տեղից և բազկատարած մղվելով դեպի Հազկերտը՝ գոչեց դառնաձայն.

— Դատապարտե՛լ Արմինիան... Հրամա՛ն ինձնից. գնա՛ երկիրն ապստամբ, որ չի ճանաչում ինձ, հաղթիր նրան.— այսպե՞ս է ասում Մազդան...

Մովպետան մովպետը շրջվեց դեպի մոգերը։ Նրանք մռնչալով առաջ մղվեցին և Երեանիվայր ընկնելով՝ գոչեցին.

— Դատապարտե՛լ Արմինիան... Նա՛ է ըմբոստը, նա՛ մոլորեցնողը մյուս ցեղերին։

Պարսիկ պալատական մեծամեծները լռել էին։ Նրանք նենգավոր հայացքներով նայում էին իրար և չանում գուշակել իրար միտք։ Տարբեր էր ազդել նրանց պատասխան թուղթը։ Մի փոքր առանձին կանգնած մի նրբադեմ իշխան, տարեց և մի փոքր վատառողջ՝ նայեց հարևանցի իր կողքին կանգնած Վախթանգին, որի հեգնական աչքերում մի կայծ էր շողում։ Նա որսաց հայացքը և մոտ սահեց նրան։

— Ի՞նչ աներկյուղություն,— շշնջաց նրա ականջին շատ զգույշ։

— Աներկյուղությո՞ւն,— զարմանքի շեշտով հարեց Վախթանգը,— ասա խե՛լք, ճարտարաբանությո՞ւն,— ավելացրեց խոհուն աչքերը կկոցելով,— լա՛վ, զգույշ,— զգուշացրեց նա,— ցուլերը չգրգռվեն։

Մյուս իշխանները սակայն մոլեգնած տեսք ունեին։ Թղթի համարձակ, հանդուգն խոսքը, անվեհեր վճիռները կատաղեցնում էին նրանց։

Խոսրովն ավարտեց ընթերցումը։ Տիրեց տաժանելի լռություն։ Ամենքը սպասեցին, որ Հազկերտը կխոսի։ Եվ սպասվում էր, որ

եթե նա խոսի արյունը կգնա... Բոլորը նայեցին նրան՝ իրենք իսկ սարսափելով։ Եվ ահա նա հանկարծ ժայթքեց հնոցի պես։

— Դիմադարձությո՞ւն, ապստամբությո՞ւն,— որոտաց դառնաձայն,— դուք հանդգնեք ծաղրական թո՞ւղթ ուղարկել ինձ... ինձ ուղարկել ծաղրական թո՞ւղթ... խոսել համարձակվե՞ք, սպառնալիքնե՞ր կարդալ... ինչի՞ վրա դրիք ձեր հույսը, թե ես այնպես չե՞մ ջնջի ձեզ, որ ձեր ատելի հոտն անգամ չմնա աշխարհում։ Հույների՞, քուշանների՞, ձեր աստծո՞ւ, ձեր քաջությա՞ն վրա հույս դրիք... խոսեցե՞ք, ինչի՞ վրա...

Հազկերտի խոսքերը բոցի ցոլքումներով նետվեցին դեպի պալատականները, և սրահը հրդեհվեց։

Հանկարծ Հազկերտը այլանդակվեց, այլայլվեց։

— Չէ, դուք ասացեք, թե ինչպե՞ս հանդգնեցիք... ինչպե՞ս հանդգնեցիք. խոսեցե՞ք...

Վարդանը ձայն տվեց.

— Ինչպես հրամայեցիր, տեր, մենք կխոսենք...։

— Խոսեցե՛ք,— աչքերը արյունով լցված խայթեց նրան Հազկերտը,— թե ինչպես հանդգնեցիք, գրեցիք թուղթը։ Խոսեցե՞ք...

— Չենք լռի, մենք կխոսենք...

— Դե խոսեցե՞ք, խոսեցե՞ք։ Ինչո՞ւ եք լռում... Դուք ապրստամբնե՛ր եք, հանդուգն դավաճաններ... Դո՛ւք...։

Պալատականներն իրար անցան։ Հազկերտը այնպես էր ջղաձգորեն խեղդվում՝ արյունը գլուխը տված, որ երկյուղ կար, թե կկաթվածահարվի։ Նա կապտեց, սևացավ։ Վեր թռավ տեղից, տատանվեց, նրան բռնեցին։ Մթնոլորտը շիկացավ։

Հանկարծ մի պարսիկ իշխան՝ անկարող զսպել իրեն՝ մեջ վազեց և կրքի ու մոլուցքի մեջ գոչեց.

— Փղե՞րը բեր, տե՛ր արքա, ոտնակո՛խ արա սրանց...։

— Փղե՞րը, ոտնակո՞խ,— հափշտակվելով իշխանի մոլուցքից՝ որոտաց ատյանը։

— Փղե՞րը,— հրամայեց Հազկերտը՝ մոլուցքի մեջ տարերայնորեն ենթարկվելով բոլորին։— Փղե՞րը...

— Պերո՞զ իշխան, վտանգավոր է,— լսվեց նրա հետևից մի զգուշացնող ձայն։ Սակայն իշխանը դուրս վազեց, ճանապարհին հրելով հայ նախարարներին։ Արարողապետը վազեց և ձեռքով

բոթեց նախարարներին դուրս։ Սակայն նրանք դիմադրեցին և մը-նացին տեղները։ Պերոզ անվանված իշխանը ըստ երևույթին շատ ազդեցիկ էր և հեղինակավոր։ Նրա ելույթը լարեց ու սրեց բոլորին։

Պալատականներն իրար անցան։ Նրանց միջից առաջ եկավ մի զինվորական, կարճահասակ ու կոճղի նման հաստատուն։ Նրա ծաղկատար լիքը այտերը եռացող ջրի պես խլխլացին, վզի երակներն ուռեցին, և նա կաս-կարմիր կտրած՝ ուզեց խոսել։ Բայց Հազկերտի դեմքը ծռմռվում էր, նա կատաղի և խելագար աչքերով սաստեց նրան։

Վրդովված զորականը առաջ անցավ դեպի Հազկերտը։ Նրան անհանգստացրեց Հազկերտի հրամանը, որ եղավ Պերոզի դերդմամբ։

— Մուշկան զորավար, զգո՞ւյշ,— լսվեց հետևից մի պալատականի զգուշացնող ձայն։

— Զորավա՛ր, զգո՞ւյշ,— հետևեցին այլ ձայներ։

Մուշկան զորավարը սակայն չէր դադարում միջամտելու փորձ անել։ Խելագարությունն ակներև էր։ Մի զորական ներս վազեց և Մուշկանի ականջին հայտնեց, որ Հազկերտի հրամանով ճամբարն իրար է անցել, մատյան գունդը փղերով պիտի գա։

Ներս վազեց Պերոզը, որ գտել էր իր ծառայության աստիճանի բարձրացման միջոցը, քաջալերվեց մովպետան մովետից։ Շշուկներ լսվեցին ժողովականների մեջ։ Ամենքը գիտեին Հազկերտի խելագարությունները, բայց այսօր չափազանց էր այդ և խայտառակ։ Նրանք աչքով էին անում Պերոզին, որ դադարի, բայց սա մոլգնել էր և կատաղի ցուլի պես աչքերն արյունակալած գոռում էր։

Մուշկանը կատաղի աչքերով մոտեցավ Պերոզին։ Նա, իբրև հրամանատար և զորավար, լավ էր հասկանում, թե ինչ է նշանակում փղերը մեջ բերել և կատաղեցնել նրանց՝ նախարարներին ոտնակոխ անել տալով։ Փղերը կարող էին ոտնակոխ անել նաև պալատը։ Դա շատ վտանգավոր բան էր, որ կարելի էր թույլ տալ ռազմադաշտում, և այնտեղ էլ փղերը բաց թողնելուց հետո շատ էր դժվար նրանց կրկին հանգստացնելը։ Բայց որքան Մուշկանը ճիգ էր թափում խոսք հասկացնել Պերոզին, սա ավելի էր խելագարվում։

Մուշկանն աչքայլվեց և առաջ վազեց դեպի Հազկերտը։ Նա խեղդվում էր զայրույթից։

— Տեր արքա, հրաման տուր վերադարձնեմ փղերը։

Հազկերտը կատաղել էր։ Նա փնչացնում էր, ֆշշում։ Նա ցից նստեց բարձերի մեջ և շուրջը նայեց թունալից ու չար։ Հետո ասաց.

— Գիտունն ե՞ր եք, իմաստունն ե՞ր, ատյա՞ն եք... Քննեցե՛ք, դատեցե՛ք, վճի՛ռ գրեք։

— Տե՛ր արքա,— ասաց մի պալատական,— սրանք հույներին են ապավինել։ Որպեսզի կտրենք սրանց ապավենը, դարձրու սրանց մեր օրենքին, և սրանք կհնազանդվեն մեզ։

Առաջ վազեց կատաղի Պերոզը.

— Բայց ի՞նչ է սա, ինչո՞ւ են սրանք այսպես ապերասան, ինչո՞ւ չեն խոնարհվում, ընկճվում, ինչո՞ւ են խստապարանոց։ Ինքնիշխան այսքան... Ա՛յս հասկացրեք ինձ, ա՛յս, ա՛յս... Վերևից են նայում մեզ,— մռնչաց բողոքարկու, թունոտ շեշտով Պերոզը,— ստորնագույն են համարում մեզ, գոռոզ ազգ է, գոռոզ ոգի,— և դեմքը ծամածռելով ատելությամբ ծղրտաց,— կոխկրտե՛ե՛ե՛լ այդ ոգին, տրորե՛ե՛ե՛լ, ջնջե՛ե՛ե՛լ, ահա վճիռը։ Ազգովին ուրացումն, և անհապաղ, իսկույն։ Եթե ոչ՝ ի՞նչ, հայերի կա՞մքը պետք է հարցնենք...

Միհրներսեհը խոր գլուխ տվեց Հազկերտին և դիմեց նախարարներին.

— Ինչո՞ւ եք լռում , ինչո՞ւ չի լսվում ոչ մի խոսք աղերսանքի... Մարզպան էիր,— դարձավ Վասակին,— խոսիր, ասա. այսպե՞ս կպատասխանեն արքայից արքայի Հազարապետին։

— Ես ունեմ պատասխան,— ասաց Վասակը մռայլ,— բայց այսօր, այս փղերի թոհուբոհի մեջ անկարող եմ խոսել...

— Կգա տեղը՝ կխոսե՞ս...

— Կխոսեմ այնտեղ...

— Դո՛ւ խոսիր այնժամ,— դարձավ Միհրներսեհը Վարդանին,— ասա պատասխան թուղթը։ այսպե՞ս կգրեն արքայից արքային...

Վարդանն առաջ եկավ։ Նրա սառնասիրտ կերպարանքը, հանգամանքով և եռանդալի հայացքը ակամա գամեց իր վրա ողջ

ատյանի ուշադրությունը։ Նախարարները լարվեցին. Վասակն անհանգստացավ։ Գադիշոն բազմանշանակ նայեց Վասակին՝ հասկացնելով նրան թույլ չտալ, որ Վարդանը խոսի իրենց փոխարեն։ Բայց Վասակը հասկացրեց, որ «թող խոսի»... Վարդանն ասաց.

— Որքան վերջապես տվիք հնար՝ ես կխոսեմ...— և մի պահ արժանապատվությամբ լռեց, հետո խոսեց հանդարտ.— Թող հայտնի լինի քեզ, տեր Հազարապետ, որ ես գիտեմ, թե գտնվում եմ արյաց զորությունը ստեղծողի առջև, բայց և գիտեմ, թե ի՛նչ ենք գրել։ Թող հայտնի լինի արյաց արքային, որ մենք կկռվենք արյաց տերության արտաքին թշնամիների դեմ, կտանք տերունական հարկը... Բայց այսքա՛նը միայն... Բայց այն, որ ավանդենք ստացել մեր նախնիներից— մեր հայրենիքը, մեր ազատությունը, մեր իշխանությունը,— դա չենք տա ոչ ոքի։ Ահա այդ ենք գրել մենք։ Հաճո՞ է՝ թողեք գնանք ազատ ապրենք մեր նախնիների երկրում։ Հաճո չէ՞՝ ահա մենք, ահա դուք, արե՛ք, ինչ որ կամենում եք։ Թուղթը գրված է։ Եվ ինչ որ գրված է՝ չի ջնջվի։

— Դու կկամե՞ս հանդգնել...— մռնչաց Հազկերտը,— որ...

Վարդանը ընդհատեց նրան.

— Մի՛, արքա՛... Առաջ, քան մեր գալն այստեղ, մենք խոսք վճռել ենք մեր մահն ու կյանքը։

Հանկարծ հեռվից լսվեց մի խուլ, սպառնալից դղորդ։ Դա դետինն էր, որ տնքալ սկսեց փղերի ահավոր դոփյուններից։ Մատյան գունդը գալիս էր։ Անգամ ատյանը սարսափահար եղավ և սահմռկած սպասում էր, թե ինչպես պիտի տեղի ունենա հայ նախարարների ջախջախումը ամենի գազանների թաթերի տակ։

Այնպես թվաց, թե ժամանակը կանգնեց։ Գերագույն վայրկյանն էր, որ պիտի վճռեր կյանք կամ մահ։ Սասանեցին բոլոր նախարարները։ Այժմ, երբ մահը կանգնեց նրանց առաջ իրենց բոլոր խկությամբ։ Վարդանը միայն թվում էր անայլայլ։ Բայց և նա սարսվեց։

— Տե՛ր արքա, հրամայի՛ր— ասաց Պերոզը գազանատեսին կրկին։ Մի՛հրնեքանեք վեր թռավ և խոնարհված կանգնեց Հազկերտի առաջ.

— Տե՛ր իմ, թո՛ղ այսօր փղերը, դի՛ր սրանց զնդա՛ն, թող նրանց զգան սարսափը։

— Արժան է և իրա՞վ,— մռնչաց ողջ ատյանը։

— Ինդա՞ն...— գոչեց դողահար Հազկերտը,— ինդա՛ն դրեք սրանց...

— Արժան է և իրա՞վ,— կրկնեց ողջ ատյանը։

— Փտեցնեմ ինդանում, խոշտանգ-խոշտանգ մաշեմ սրանց, որ իմանան, թե ինչ է արյաց զորությունը,— գոչեց Հազկերտը։

— Արժա՞ն է և իրավ,— երեքնեց ատյանը։

Միհրներսեհը նշան տվեց։ Ներս վազեցին ներքինի դահճապետը սպիտակազգեստ դաժան դահիճների հետ, բերելով գործիքներ ու շղթաներ։ Նրանք արագ շղթայեցին նախարարներին։ Նախարարները հիշեցին Վարդանի խոսքը երկրից հեռանալու պահին. «Թերևս աքսոր, բանտ... ժամանակ շահենք»։ Եվ կառչեցին այդ հույսին։ Վասակը վայրկենաբար մտածեց՝ վերջին պահին բացահայտվել, փրկել դրությունը։

Միհրներսեհը նշան արեց, որ դեռ սպասեն, և նայեց Հազկերտին։ Հազկերտը սպասեց մի փոքր և ասաց.

— Իմ հրամանն է, ընդունեցե՛ք զրադաշտը։ Ոչինչ բան չի խախտի իմ վճիռը։ Դուք հանցանք եք գործել և միայն ձեր պիղծ հավատի ուրացությամբ կարող եք քավել։ Ուրացեք։ Իսկ եթե չեք կատարի հրամանս, բոլորիդ խոշտանգելով մեռցնել կտամ, զորք կուղարկեմ, ավերել կտամ ձեր երկիրը, Սագաստան կուղարկեմ աքսոր ձեր զավակներին ու կանանց։— Տարե՛ք,— հրամայեց դահիճներին։

Դահճապետը նշան տվեց, և դահիճները դուրս տարան կապված նախարարներին։

Միհրներսեհը կրկին նշան արեց արարողապետին, սա մոտեցավ նրան, որը ցածրաձայն հրամայեց.

— Աշուշային և Վահանին հետ պահիր՝ ցնոր հրամանս։

— Փրկվեցին,— շշնջաց Վասակը Գադիշոյին։

Այս նկատեցին հայ նախարարները։

Արարողապետը հենց դռների մեջ առանձնացրեց Աշուշային և Վահանին։

— Ո՛չ դեռ,— շշնջաց Գադիշոն խորը նայելով փրկվածներին, որոնց տարան այլ ուղղությամբ։

***

Հայ նախարարներին դուրս բերին ատյանից շղթայակապ և պահակներով շրջապատ։ Պալատի առջևի հրապարակում լայնաշրջան գծով կանգնել խռնվել էր ամբոխը։ Մեջտեղը բացած ասպարեզը բռնել էին մատյան գնդի փղերն ու զորքը՝ պատրաստի կատար ածել Հազկերտի հրամանը՝ կոխկրտել նախարարներին։ Ամբոխը նախաճաշակելով արյունային տեսարանի գազանական հաճույքը՝ ալեկոծվեց։ Սակայն երբ տեսավ, որ նախարարներին անց են կացնում փղերի միջով և մտադիր են տանել ուրիշ վայր, մռնչաց, աղաղակեց.

— Կոխկրտե՛լ, կոխկրտե՛լ...

Փղերը տատանվեցին, կնճիթները ցցեցին վեր, հողը թաթերով փորեցին և սկսեցին հարձակման շարժումներ անել։ Այդ տեսնելով, Մուշկան Նյուսլավուրտը բռունցքով սպառնաց ամբոխին և դարձավ մատյան գնդին.

— Դա՛ռ, դեպի ճամբա՛ր։

Մատյան գունդը շարժվեց։ Փղերը համրատատան, բլուր-բլուր գնացին։

Հայ նախարարներին տարան խառնիճաղանճ և խուժադուժ ամբոխի միջով ուժեղ պահակների օղակով։ Վասակը գունատվեց և մռայլադեմ նայելով ամբոխին՝ սկսեց սուր հայացքով հարվածել նայողներին։ Գադիշոն գլուխը կախել էր, բայց հանգիստ էր։ Սրվանձտյա Գարեգինը հրամայական շեշտով սաստում էր ամբոխին, նրա կողքից գնում էր Արտակը և աչքի տակով դիտում Վարդանին, որ ընթանում էր հոյակապ հասակի բնական հպարտությամբ ու վեհությամբ։ Մի տեղ, երբ շարախնդաց ամբոխը քրքջում էր, որ հանկարծ տեսնելով Վարդանին՝ ակամա լռեց ու աչքերը լայն բացած հետևեց նրա ընթացքին։ Հանդարտ, քաջին վայել բարությամբ նայում էր նա ամբոխին և պահում էր իրեն տիրական դիրքի մեջ։ Ընդոստ ու գրգռիչ հանդգնությամբ երեսը շրջում էր այս ու այն կողմ Ներշապուհը և շրթունքները շարժում։

Ողբերգական էին հայոց այրուձիի մարտիկները։ Իրենց վրանքերից զանազան ուղիներով եկել խռնվել էին ամբոխի մեջ և գընում էին կալանավոր նախարարների կողքով դեպի քաղաք և չէին կարողանում զսպել իրենց վիշտն ու ցասումը։ Նրանց հետ գնում

Էր Արշամը՝ հայոց այրուձիի հարյուրապետը, որի հետևից ընթանում էին հայ մարտիկները։ Նրանք գնում էին շփվելով պատի պես կանգնած, երբեմն էլ երթին ընկերացող ամբոխին, առանց ուշք դարձնելու, թե ո՞ւմ են հրում, ում ոտը կոխում։ Նրանք գրգռված էին վերին աստիճան և շարժումներից երևում էր, որ պատրաստվում են վտանգավոր գործողությունների դիմել։ Այդ նկատեց Գարեգինը և աչքով արեց Արշամին, որ կանխի դեպքը։ Սա ետ դարձավ և սաստեց մարտիկներին.

— Հանգի՛ստ, բան-ման չանե՞ք...

— Ձեռ չենք տա, սեպուհ, բայց եթե մեկնումեկին դիմինչև վերջին մարդս կփչանանք, կսրբե՞նք ամեն ինչ, վկա [illegible] ված կենդանի։

— Հոտնե՞րը կկտրենք,— ավելացրեց ուրիշը։

Հայ մարտիկները արյունակալած աչքերով նայեցին Արշամին և ոչինչ չհասկացան։ Եվ ահա մի տեղ, երբ ամբոխից մեկը քար բարձրացրեց և նետեց նախարարների վրա, մարտիկները մի մարդու պես հարձակվեցին նետողի վրա և ոտնատակ տվին։ Ամբոխը ոչխարի հոտի պես հորձանք տվեց այս ու այն կողմ։ Պահակազորից զատվեց մի խումբ և հարձակվեց մարտիկների վրա։ Սկսվեց մի կատաղի ծեծ։ Երթը կանգ առավ։ Ամբոխը, որ փախել էր, եկավ և օղակեց կռվողներին։ Հայ մարտիկները թույլ չտվին հարձակվող պահակներին ձեռներեցությունը պահել. անմիջապես նոր թափով գրոհեցին նրանց վրա և սկսեցին հարվածներով վանել իրենցից։ Ամբոխը չհամարձակվեց օգնել պահակներին։

— Սպարապե՛տ,— դիմեց Վարդանին Հազարապետը։

— Թո՛ղ, զինվորյալներին մի՛ արգելք,— պատասխանեց Վարդանը։

Երկու կողմից վիրավորներ ընկան, բայց տեղի չէր տալիս և ոչ մի կողմը։ Գործը կարող էր երկարել և մեծանալ, եթե պահակապետը ձայն չտար իր զինվորներին ետ քաշվել։ Հայ մարտիկները ետ չմնացին, այլ արյունոտ ու կատաղի օղակեցին նախարարներին և ուղեկցելով նրանց՝ կանգնեցին պաշտպան։ Ամբոխը չհամարձակվեց այլևս ծաղրի խոսք ասել նրանց կամ վիրավորել գործողությամբ։ Պահակապետը զգալով, որ իր պարտականությունը լավ չի կատարել և կալանավորներին չի կարողացել ան-

վրթար տեղ հասցնել, կուլ տվեց հայ մարտիկների վարմունքը։ Նախարարներին անցկացրին Նյուշապուհ քաղաքի փողոցներով և տարան զնդան։ Դա մի մռայլ և կիսագետնափոր շենք էր, բարձր, անթուրծ, հողե աղյուսներից և ցեխից շինած պարիսպներով։ Նախարարներին անցկացրին ամուր դարբասով և մտցրին բակը։ Դիմացը ավելի փոքր մի դուռ տանում էր դեպի գետնափոր մութ բավիղը։ Դա էր զնդանը։ Կիսախավարը, որ լույսից եկողներ համար թանձր էր թվում, հետզհետե պարզվեց և տխուր ու ունայի գետնահարկը իր տամուկ ու ծանր օդով պաշարեց նը- բազմախոռոչ պատերով։ Հատակը հող էր և ցեխ, հնար չը- նստելու, ո՛ւր մնաց պառկելու։

Նախարարները մի պահ լուռ ու տատամսած նայեցին իրենց շուրջը, զննեցին պատերն ու խոռոչները և ապա խմբվեցին Վարդանի և Վասակի շուրջը՝ բնազդաբար նրանցից սպասելով այն հարցի պատասխանը, թե ի՞նչ պետք է անել։

— Տե՛ր Մամիկոնեից,— խոսեց զուսպ կշտամբանքով Վասակը,— մինչև այստեղ լռեցինք և հանդուրժեցինք անարգանքն ու պատիժը։ Բայց մինչև ե՞րբ...

— Մինչև ե՞րբ...— կրկնեց Վարդանը,— այդ գիտեք ինքներդ...

— Իսկ ի՞նչ է վերջը...

Վերջը թող ասեն պարսիկները, թերևս մեզանից ոմա՛նք... Բայց գոնե ինձ համար վերջն ասված է։

Վասակը չխոսեց, մյուսները լռեցին։ Զգացվում էր, որ երկուսը դեռ բաներ ունեն ասելու, և սպասեցին, որ ասեն։

— Պետք է հաշտության խոսք գտնել արքայի հետ,— ասաց Վասակը։

— Գտի՛ր հաշտության խոսքը,— ասաց Վարդանը անբարյացակամ,— ես ոչ մի խոսք չունեմ այլևս։

Գուցե պայթեր մի թունդ վեճ երկու հակառակորդների միջև, եթե ներս չգար մի բարձրահասակ, գեր ու դաժան մարդ՝ գավազանը ձեռին։ Նրան ուղեկցում էր մի կորամեջք նիհար մարդ, երկար մորուքով։ Սա ձեռքին մի ջահ ուներ, որ բարձր բռնած լուսավորում էր զնդանը։ Լույսը ավելի մռայլացրեց զնդանի չարագուշակ տեսքը։ Բարձրահասակը, որ ըստ երևույթին բանտապետն

էր, լուռ ու խոժոռ հայացքը պտտեցրեց բանտարկյալների վրա, մտքում հաշվեց նրանց թիվը, մեկ-մեկ տնտղեց ամեն մեկին և նոր շրջվեց դնաց։ Մյուսը, որ ուղեկցում էր և նրա օգնականն էր, հետևեց նրան մինչև դուռը, որ բավական հեռու էր, և մի փոքր անց վերադարձավ, կանգնեց, նայեց չորս կողմ, հատակին ու գրնաց։ Իսկույն նրանից հետո ներս մտան չորս հոգի՝ ծառաներ, որ փսիաթներ բերին փռեցին հատակին։ Կրկին ներս եկավ բանտապետի օգնականը՝ նայեց փսիաթներին և գոռաց ծառաների վրա.

— Ինչո՞ւ բերիք փսիաթները... կապերտներ պիտի բերեք միայն...

— Տանե՞նք փսիաթները,— հարցրեց խորհրդավոր ձայնով ծառաներից մեկը։

— Էլ ի՞նչ տանեք, կապերտները բերեք և բարձեր։

Ու մինչ ծառաները կբերեին նրա պահանջածը՝ նա կանգնեց և սկսեց խորը նայել նախարարներին։ Ծառաները բերին կապերտները և փռեցին փսիաթների վրա։ Նրանցից մինը բերեց մի մեծ կարաս և դրեց անկյունը։ Օգնականը մոտեցավ, հոտ քաշեց կարասից և գոռաց բերողի վրա.

— Սա ջո՞ւր է, թե՞ գինի, անասունի՛ կտոր։

Ծառան սառեց տեղնուտեղը։ Օգնականը դիմեց այն խորհրդավոր ձայնով խոսող ծառային.

— Տա՛ր սա, ջո՛ւր բեր։

Ծառան տարավ կարասը և վերադարձավ մի այլ կարասով։ Բանտապետի օգնականը հրամայեց հաց ևս բերել և ինքը դուրս գնաց։ Ծառաները բերին հացը ևս, այլ ջրամաններ ու պարագաներ և դուրս գնացին։

— Է՛, հյուրասիրվե՛նք,— ասաց Վարդանը մռայլ և նստեց կապերտին։

Արտակը նստեց նրա կողքին։ Ներշապուհը ևս մոտեցավ նրանց։ Վասակն առանձնացավ Գադիշոյի և Ռշտունյաց Արտակի հետ։ Մնացյալները՝ հոգնած թե մարմնապես և թե հոգեպես՝ ընկան կապերտների վրա։ Վասակը մտածում էր, որ հնար գտներ Կոդակին տեսնել կամ կապ հաստատել՝ իմանալու, թե նա ի՛նչ է արել իր համար և ի՛նչ կարող է անել։ Գյուտի հետ ժամանակ չեղավ առանձին տեսնվելու և խոսելու ընդհանուր թոհուբոհի մեջ։

Հիմա՞ միայն հնար կար խոսելու նրա հետ, բայց դեռ չէին ընտեցացել և տեղավորվել զնդանում։ Նա կուզենար խորհրդակցել մյուսների հետ, բայց վերջին օրերս և այդ օրը մանավանդ՝ նախարարները մի տեսակ շփոթ և անտրամադիր հոգեվիճակումն էին։ Չէին խոսում, գործունեություն չէին ցույց տալիս։

Վարդանը կամեցավ ջուր խմել։ Արտակը վեր թռավ իսկույն և գավը մոտեցնելով կարասին՝ ուզեց ջուր վերցնել։ Նա նկատեց, որ գինի է և ոչ ջուր, ինչպես կարգադրել էր բանտապետի օգնականը։ Երբ Վարդանը գավը ձեռն առավ՝ ասաց.

— Սա տարօրինակ մարդ է։

— Տարօրինակ է,— ասաց Արտակը։

Մյուսները ևս ուշադրություն դարձրին օգնականի հակասական կարգադրությունների վրա։

Շուտով օրը մթնեց, և զնդանի խավարը գրկեց բանտարկյալներին։ Նրանք լուռ էին, ամեն մեկը իր մտքի հետև։ Միայն Հազարապետն էր, որ բարձրաձայն աղոթում էր։

Ներս մտավ բանտապետի օգնականը՝ ջահը ձեռին։ Արտակը դիմեց նրան և ջուր պահանջեց։ Բանտապետի օգնականը ձայն չհանեց, իսկույն գնաց դուրս և վերադարձավ մի մեծ կուժ ջրով։

Աշուշային և Վահանին տարան պալատական վրանի հետևի մի հարկաբաժին և մեղմորեն հրավիրեցին նստել ու թողին մենակ։

— Է՛, բանտ տարան նրանց, ասել է՝ տանուլ տվին,— ծիծաղեց Աշուշան։

Վահանը զարմացած նրան նայեց։

— Այո, տանուլ տվին,— կրկնեց Աշուշան բոլորովին լուրջ։

— Մեզ բաժանեցին հայերից,— ասաց Վահանը,— ի՞նչ է նպատակը... և խաժ աչքերի ծանր հայացքը բևեռեց Աշուշայի աչքերի մեջ։

— Ինչ որ է՝ մեր հոգու փրկությունը չէ,— մռմռաց Աշուշան մռայլ ու մտահոգ։

— Կարծո՞ւմ ես, որ մեզ չեն ստիպի ուրանալ։

Աշուշան դառն ժպտաց.

— Իսկ դու կարծում ես Միհրներսեհը կհավատա՞ մեր կամ նրանց ուրացությանն։

— Ապա ինչո՞ւ է ստիպում։

— Միհրներսեհը խաղեր է սարքում. նա գիտե որ մեր կեղծ ուրացությունը մեր ժողովուրդները իբրև ճշմարիտ կընդունեն։

Ներս նայեց պարսիկ սպասավորը և արագ շարժումով լայն բացեց վրանի ծածկոցը։ Ներս եկավ մի ծերունի։ Աշուշան ճանաչեց նրան։ Դա Միհրներսեհի մտերիմն էր, Վռամ պալատականը։ Նա անվրդով էր։ Նայեց բարի հեգնոտ հայացքով իշխաններին և ինքը նստելով մի բարձի, հրավիրեց նստել նաև նրանց։

— Անպատշաճ բաներ եղան,— ասաց նա թեթև եղանակով,— բայց հայերն էին մեղավոր։ Համոզեցեք նրա՛նց, վերջանա գնա գործը։

— Ինչպե՞ս համոզենք, իշխան, երբ հայերը վճռել են չուրանալ,— ասաց Վահանը։

— Եվ ի՞նչ էլ հարկ կա, որ ուրանան,— մտախոհ քմծիծաղով ասաց Վռամ պալատականը՝ համարյա անկեղծ։

Վահանը զարմացած նայեց Վռամին։ Աշուշան գլուխը կախեց։

— Այո՛,— շարունակեց Վռամը,— ուրանալու հարկ չկա։ Համոզեցեք հայերին թող կեղծ ուրացությամբ հնազանդություն ցույց տան, դուք էլ նրանց պես, ու վեր կացեք գնացեք ձեր երկիրը։ Արքայի հրաման է, չի կարելի գետին գցել, այ սա լավ խորհեցեք։

Եվ երկար արծարծեց այս միտքը Վռամը, որի խոսքը լսելով՝ Աշուշան ոչ մի շարժում չարեց, ոչինչ չխոսեց։ Վահանը միայն տարակուսորեն նայում էր մերթ Վռամին, մերթ Աշուշային։ Իսկ Վահանի այս տարակուսանքն ու զարմանքը ավելի աճեցին, երբ Վռամը հանգիստ վեր կացավ, որ գնա, իսկ Աշուշան ոչինչ չառարկեց և ոչինչ չխոստացավ։

— Էհ, բարեմաղթում եմ հաջողություն և ուղղություն։ Բարյավ մնաք։

— Երթաս բարի, իշխան,— ասաց հաշտ ձայնով Աշուշան։

Երբ Վռամը հեռացավ, Վահանը տարակուսած դարձավ դեպի Աշուշան։

— Ճշմարիտ է խաբում,— ասաց Աշուշան,— հավատը չի ուրացվի, բայց կարող է կեղծվել։

— Եվ ինչ էլ պարզ հասկացրեց այդ,— ծիծաղեց Վահանը,— խորամանկ միջոց ցույց տվեց։

— Ապա ի՞նչ, կարծում ես խելք մենակ մե՞նք ունենք։

Ներս մտան դահիճներ՝ մի զինվորական հրամանատարի և զինվորների հետ և շղթաներով ու մուրճերով արագ շղթայեցին Աշուշային ու Վահանին։

— Հրամայեցեք բա՛նտ,— ասաց հրամանատարը քաջի անտարբերությամբ։

Վրաց և աղվանից իշխանները գնացին վիրավորված ու դառնացած։

***

Մինչ հայ նախարարները վրաց և աղվանից իշխանների հետ անարգանքի և նեղությունների ենթարկված տառապում էին զընդանում՝ նրանց բարեկամներն ու թշնամիները սկսել էին աշխույժ գործունեություն՝ նրանց ազատելու կամ ոչնչացնելու։

Վարազվաղանը շատ էր պտտում Միհրներսեհի ապարանքի մեջն ու շուրջը, տեսակցում նրա և այլ մեծամեծների հետ՝ թարմացնելով իր առաջարկները՝ պարսից արքունիքին ծառայելու։ Վասակի բանտարկությունը մյուս նախարարների հետ խոսք ու զրույց էր բացել մեծամեծների շրջանում, որ Հազկերտը Հայաստանի նոր մարզպան կնշանակի։ Սա թև էր տվել Վարազվաղանին։ Նա ուղղակի դնում էր իր թեկնածությունը պարսիկ իշխանների առաջ և խնդրում էր այդպես ներշնչել և Միհրներսեհին։

Չէր քնում և Կոդակը։ Նա լարեց իր բոլոր ուժերը, վերակոչեց իր ընդունակությունները։ Այժմ կամ երբեք։ Նա վճռեց փրկել Վասակին։ Վարազվաղանին մոտեմոտ անելը, որ նրա համար անորոշ նպատակներ ուներ, նրան օգտակար եղավ մի բոլորովին պատահական դեպքով։ Նա մի օր տեսել էր Վարազդուխտին և իմացել էր, որ նա լինում է Վախթանգ իշխանի մոտ Վարազվաղանի կնոջ և Վախթանգի զոքանչի կապով։ Ուրեմն Վարազդուխտը կարող էր Վախթանգին բաներ խնդրել...

Հայ նախարարների բանտարկության երկրորդ օրը ներս մտավ բանտապետի օգնականը և կանչեց Ընծայնոց Արսենին։ Երբ նա զարմացած վեր կացավ, օգնականն ասաց, որ նրան դուրսը

կանչում են։ Նախարարները նույնպես զարմացան։ Արսենին զատելը մյուսներից լավ նշան չհամարեցին և մինչև իսկ սկսեցին կասկածել Արսենի թուլացման և ինչ-որ գաղտնի կապերի մեջ։ Արսենը դուրս եկավ զնդանից և դռանը տեսավ Վախթանգին, որ նրժույգ էր բերել նրա համար։

— Գնանք տո՛ւն, կասեմ ինչն ու ինչպեսը,— ասաց Վախթանգը և արագ քշեց իր նժույգը։

Արսենը հասավ հետևից։

— Վարազդուխտն էր մոտս,— ասաց Վախթանգը,— նա եկավ աղաչեց, որ քեզ ազատել տամ։ Ա՜յ, իսկական հայրենակցուհի...

— Չէի սպասի...— ասաց Արսենը։

— Դե բարիքը գալիս է այնտեղից, որտեղից չենք սպասում։

— Ի՞նչ կա դուրսը,— հարցրեց Արսենը։

— Գնանք, պատմեմ։

Ճանապարհին Վախթանգը Արսենին պատմեց այդ օրերի դեպքերն ու նորությունները։

Բայց Վարազդուխտի վարմունքը բավական բարդ մի հանգույց էր եղել։ Դա սկսվել էր Կոդակից։ Սա կարողացել էր ծածուկ տեսնվել Վարազդուխտի հետ և նրան խորհուրդ տալ, որ գնա Վախթանգի մոտ և նրան աղաչի դիմել Միհրներսեհին՝ ազատելու Վասակին։ Սա հնարավոր էր, քանի որ Խորիշայի մայրն ու Վարազվաղանի կինը քույրեր էին, և Վարազդուխտը այս կապով հաճախ էր լինում նրանց տանը։

Վարազդուխտը սակայն ավելի խորամանկ և խելացի էր վարվել։ Նա գնացել էր Վախթանգի մոտ և խնդրել, որ ազատել տա... Ընծայնոց Արսեն իշխանին։ Դա միջոց էր ծածկելու համար բուն նպատակը՝ Վասակը։ Կոդակը չգիտեր, որ Վախթանգի մոտ է լինում Արսենը։ Վախթանգը համաձայնել էր՝ ասելով, որ ինքը թեև չէր մտածել այդ մասին, բայց զգում էր, որ դա իր պարտականությունն է։ Վախթանգը գնացել էր Միհրներսեհի քրոջ՝ Աբամայիդիի մոտ, որ Վախթանգի տիկնոջ հորաքույրն էր և նրան խնդրել՝ համոզելու Միհրներսեհին Արսենին ազատել։ Իբրև «հավատի մեջ թուլացած» մի հայ իշխանի, որին կարելի կլինի գործիք դարձնել մյուսներին ևս թուլացնելու։

Վախթանգը, ինչպես և տիկինը շատ մոտ անձնավորություններ էին Արամայիդիին, որ ազդեցիկ կին էր և Միհրներսեհի սիրելին։ Նա շատ տարիներ առաջ կրկին փրկել էր Վարազդուխտի կյանքը Վարազվաղանի հետապնդումից։

Վախթանգն ու Արսենը հասան ապարանք և իջան նժույգներից։

Դռանը սպասում էր տիկինը։ Արսենը մոտեցավ փաթաթվեց տիկնոջը և համբուրեց նրա ձեռքը։ Ներս գնացին։

— Ա՜խ, տանջում են ձեզ,— ասաց տիկինը։

— Տանջում են,— ասաց Արսենը։

— Բերա՜նս չորանա,— ասաց տիկինը,— Արամայիդիի մոտ էի՝ ասաց, նախարարներին պետք է փղերին կոխկրտել տան երկու օրից հետո...

— Կոխկրտե՞լ,— շնչասպառ հարցրեց Վախթանգը։

— Որովհետև ուշացել են արքայի հրամանը կատարել... Ա՜խ, ի՜նչ դաժան մարդիկ են...

Արսենը սառեց մնաց։ Նրան այրեց ամոթանքը, որ ինքը զընդանից հեռացավ։ Հիմա, երբ այս բոլորը լսեց, իսկույն հարեց նոր մտքի՝ ազատել բանտարկյալներին մահից։ Բայց ինչպե՜ս...

Վախթանգը գնաց իր օթևանը։ Տիկինը նստեցրեց իր կողքին Արսենին և սկսեց հարցուփորձ անել նրան։ Նա շատ էր կարոտում Արսենին՝ տոգորելով իր զգացմունքը մայրական սիրո աստիճան։

— Ո՞ւր են Խորիշան, Որմիզդուխտը,— հարցրեց Արսենը։

— Իրենց օթևանում,— ժպտաց տիկինը,— մեզ մոտ հյուր է Վարազդուխտը։

— Ո՞վ է Վարազդուխտը։

— Վարազվաղանի քրոջ աղջիկը։ Քեզ էր ուզում տեսնել։ Դու էլ փոքձանքն ընկար։

— Ի՞նչ է ուզում։

— Ուզում է, որ իրեն ազատես Վարազվաղանի ճանկերից. չի թողնում Սյունիք վերադառնալ, վնասել է ուզում խեղճ աղջկան. կասկածներ ունի, թե աղջիկը դավադրում է։ Սպասիր, գնամ բերեմ մոտդ՝ խոսեցրու,— ասաց տիկինը կատակ դավադրական ժպիտով,— էլ ի՞նչ ենք երկար-բարակ խոսում։

Նա արագ վեր կացավ և գնաց։

Իսկույն ներս տահեց Խորիշան և ընկավ Արսենի գիրկը։ Նրա դեմքը կլորացել էր, ավելի գեղեցկացել և աչքերում ավելի իմաստ կար, քան աղջիկ ժամանակ։ Նա հեկեկաց։

— Ինչո՞ւ ես լալիս, Խորիշա,— հարցրեց Արսենը տխուր։

— Իմացա՞ր լուրը...

Խորիշան պինդ սեղմվեց Արսենի կրծքին և համբուրեց նրան.

— Եթե քեզ էլ դիպչեն, ես հետդ կգամ, կասեմ քրիստոնյա եմ...

Ներս մտան տիկինն ու Վարազդուխտը։ Տիկինն աչքով արեց Խորիշային, որ հեռանա։ Խորիշան մնաց մի փոքր։

— Հայրենակիցներ եք,— ասաց տիկինը,— բան կունենաք իրար հետ խոսելու։

Եվ դարձավ Վարազդուխտին։

— Մի քաշվիր, իշխանը մեր տան մարդն է և քեզ կընդունի։ Համարձակ խոսիր, նա քո խնդիրքը կկատարի։

Վարազդուխտը գլուխը կախեց և չշարժվեց տեղից։ Տիկինը դուրս եկավ, նրան հետևեց Խորիշան։ Արսենը զննեց Վարազդուխտին ոտից գլուխ և մի անախորժ բան զգաց, թեև նրան շլացրեց վերջինիս գեղեցկությունը։

— Առա՛ջ եկ, խոսի՛ր,— ասաց Արսենը։

Վարազդուխտը ակամա երկյուղ ու պատկառանք զգաց իշխանի առջև։ Միաժամ նա ինչ-որ խղճի խայթ զգաց այն դերի համար, որ ստանձնել էր այդ պահին խաղալու։ Բայց երբ հիշեց, թե ինչի և ում համար է եկել, սթափվեց։ Առաջ գալով մի փոքր՝ նա չոքեց նստեց գորգի վրա և գլուխը կախեց։

— Իշխան, ես մի խնդիրք ունեմ մոտդ,— ասաց նա,— աղաչում եմ, միջնորդիր տիկնոջը ինձ ընդունել տա Արամայիդիի մոտ։ Ոչմարիտն ասեմ՝ ուզում եմ Վարազվաղանից գանգատվեմ։

— Ինչո՞ւ, նա քո այրումակիցը չէ՞,— հարցրեց Արսենը զարմացած։

— Նա ինձ ուզում է սպանել. հասկացել է, որ ես օգնում եմ նախարարներին, զնդան լուրեր տալով նրանց բանտապետի օգնականի միջոցով։ Երեկ Վարազվաղանը գնաց Միհրներսեհի մոտ և լուր տարավ, որ նախարարները վճռել են նահատակվել և չու-

բանալ։ Միհրներսեհը մտադիր է վաղը փղերի ոտների տակ ոչընչացնել բանտարկյալներին։

— Լավ, շատ էլ Վարազվաղանը կեղծ է ուրացել՝ ի՞նչ շահ Միհրներսեհին հեռացնել Վարազվաղանին։

Վարազդուխտը շփոթվեց։ Նա Արսենի խելքի մասին մեծ պատկերացում չունեցավ այս տեսակցության պահին, բայց նա գիտեր, որ երբեմն հենց այդպիսիներն են պատահմամբ դժվար թակարդներ գցում մարդու ոտի տակ։ Վարազդուխտը չկորցրեց սառնասրտությունը և պատասխանեց.

— Նա խանգարում է Վասակին, որ նա հայերին դարձնի կըրակապաշտ, որ ինքը բռնի նրա տեղը։ Իսկ ինքը նրա արժեքը չունի, ամենքը Հայաստանում լսում ու սիրում են Վասակին, իսկ նրան անիծում են։

— Իսկ Վասակն իրո՞ք այդպիսի գործերի վրա է,— հարցրեց Արսենը։

— Աստված հեռու տանի. այդպես պիտի ասեմ, որ համոզվի։ Ես Վարազվաղանին պիտի մատնեմ... Պիտի ասեմ, որ նա արքունի գանձեր է գողացել և լցրել իր տունը, և դա ճշմարիտ է։ Կասեմ կեղծ ուրացած է...

Արսենը համարյա համոզվեց։ Նա լուռ դիտում էր Վարազդուխտին, զարմանում էր նրա այդքան աչքաբացության, համարձակության վրա։ Ինչ-որ բան նրան դուր չէր գալիս նրա մեջ. բայց դրան ևս լուրջ նշանակություն չտվեց։

Վախթանգը չլինելով թեպետ մեծ և ազդեցիկ իշխան, բայց տիկնոջ կապերով մուտք ունենալով Արամայիդիի և Միհրներսեհի մոտ կարևոր դիրք էր գրավել պալատում։ Նրան սիրում էին շատերը, ոմանք էլ հարգում նրա տաղերի համար։

Արսենը խնդրեց Վախթանգին և տիկնոջը, որ Վարազդուխտին տանեն Արամայիդիի մոտ և շտապեն, որովհետև դա վերաբերում է նաև հայ նախարարների կյանքին...

Նրանք կատարեցին Արսենի խնդիրքը։

Վարազդուխտը շատ խոնարհ և համեստ ձևով Վախթանգի և տիկնոջ օգնությամբ մուտք ունեցավ Արամայիդիի մոտ։ Վերջինս նրանց ընդունեց իր հյուրատանը։ Արամայիդին բարձրահասակ, նիհար հասակավոր կին էր։ Նրա խելացի, սուր աչքերը զննում էին

Ն մտածում։ Նա խորը նայեց Վարազդուխտին, և երբ սա հանգրուրեց նրա ձեռը՝ նա իր չոր ձեռքով մեղմակի ետ մղեց սրան և ճակատը կնճռոտելով հարցրեց.

— Սպասիր, դու ինձ մոտ եղե՞լ ես տարիներ առաջ։

— Եղել եմ, տիկին,— ասաց Վարազդուխտը։

— Վարազվաղանը քեզ հետամտում էր, ուզում էր սպանել։

— Հիմա էլ է ուզում սպանել, տիկի՛ն,— ասաց Վարազդուխտը։

Տիկինը վեր կացավ և Վարազդուխտին տարավ ուղղակի Միհրներսեհի մոտ, Հազարապետը նստած էր իր բարձին և օշարակ էր ըմպում՝ կարդալով մի մատյան, որ նրան շատ էր գրավել։ Երբ ներս մտան, նա գլուխը բարձրացրեց և ժպտաց, որ նման էր դաժան ծամածռության։

— Եկ, մոտեցիր,— ասաց նա Վարազդուխտին։

Վարազդուխտը չհամարձակվեց առաջ գնալ։ Այն ժամանակ Արամայիդին բռնեց նրա թևը և առաջ տարավ, ինքը նստեց Միհրներսեհի կողքին։ Արամայիդին հաղորդեց Միհրներսեհին Վարազդուխտի խնդիրքը։

— Ինչո՞ւ է ուզում սպանել,— հարցրեց Միհրներսեհը։

— Ամեն Սյունիքից եկողի կասկածում է, թե մարզպանի կողմից է եկել իրեն սպանելու։ Ես նրա քրոջ աղջիկը, ինչ էլ որ լինի՝ մի՞թե ձեռս կգնա իմ հարազատին։ Նաև էլ Վասակը օգտակար մարդ է արյաց տերության...

— Նստիր մոտս, պատմիր, ի՞նչ էր անում Վասակը Հայաստանում։

— Կրոնափոխության գործն էր հաջողեցնում։ Եվ լավ հաջողացրեց։ Մի քանի իշխաններ ծածուկ կրոնափոխ են հիմա։ Ինքը վաղուց կրոնափոխ է։ Վախենում են Վարդանից՝ չեն հայտնում։ Թաքց ապա քանը իմանալով Վարազվաղանը վախենում է իր դիրքը կորցնել Հազարապետի առաջ և ուզում է ոչնչացնել նրան։ Դե դա իր գործն է, բայց գոնե ինձանից վա՛զ գա։

Միհրներսեհը դաժան կերպարանք ընդունեց և լռեց։ Վարազդուխտը զգաց, որ Միհրներսեհին զրաղեցրեց Վասակը, բայց Վարազդուխտը իր դիտավորությունները թաքցնելու համար սկսեց Վարազվաղանի մասին խոսել։ Պատմեց նրա բռնությունները, անցյալը, գողությունները, շահասիրությունը։

— Լավ, գնա, աղջիկս,— ասաց Միհրներսեհը թեև սառը, բայց կարծես մի բան համոզված պես։

«Աղջի՛կս»,— սա մնաց Վարազդուխտի ականջում...»

Երբ նա գլուխը խոնարհելով դուրս ելավ, ներս մտավ Վախթանգը։

— Ի՞նչ են անում նախարարները։ Երևի ծածուկ լուր կունենաս...— սուր նայեց Վախթանգին Միհրներսեհը։

— Զինվորագրության ճանապարհն են բռնում։ Իսկ զինվորագրությունն էլ... գիտես, հայ են. դրանց համար մահ չկա, երբ զինվորյալ են գրվում։

— Վարդան Սպարապետն ի՞նչ է անում։

— Հենց Վարդան Սպարապետը բոլորին գրել կտա զինվորյալ։ Իմ միտքն այսքան է բանում, տեր իմ, որ մեղմացնես նրանց պատիժը։

— Վաղը փղերն արձակում ենք դրանց վրա...— ասաց Միհրներսեհը մտածկոտ։

— Բայց Վասակը, մյուսները ուրացած են, տե՛ր։

— Երբ այդպիսի հայտնություն գա նրանց կողմից...— Միհրներսեհը չշարունակեց խոսքը։

Արամայիդին և Վախթանգը վեր կացան։ Զգացին, որ «եղանակը մեղմեց...»։

***

Բանտարկյալների կյանքը զնդանում՝ քանի գնաց՝ դառավ անտանելի։ Խոնավությունը, միջատները, ծանր օդը և անարգալից վիճակը, մյուս կողմից էլ հայրենիքին սպառնացող վտանգը՝ մաշում ու տանջում էր նրանց։

Վասակը մի քանի անգամ դիմեց Վարդանին և մյուսներին՝ ելք գտնել ազատվելու։ Վարդանն ամեն անգամ փակում էր նրա բերանը՝ ասելով, որ ելք չկա բացի ուրացությունից, իսկ ուրանալ նա չի կամենում։

Հենց նույն գիշեր, երբ Վարազդուխտը գնացել էր Միհրներսեհի մոտ, զնդանում բանտարկյալները անհանգիստ էին։ Շատ էր ներս ու դուրս անում բանտապետը, կարծես ավելի սարսափեցնելու համար կանգնում, երկար նայում էր նրանց և հետո առանց

մի բան ասելու՝ հեռանում։ Նույնն անում էր և նրա օգնականը։ Եվ ահա, երբ մի անգամ բանտապետը դուրս գնաց, նրա օգնականը ոտը կախեց, ետ մնաց և ապա վերադարձավ բանտարկյալների մոտ։ Նա բան էր ուզում հայտնել, բայց ըստ երևույթին խիստ զգուշանում էր։

— Մո՛տ եկ, բարեկամ,— ասաց նրան Վարդանը։

Օգնականը մոտեցավ։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Վարդանը,—ի՞նչ եք անդադար ելումուտ անում։

— Ոչինչ, իշխան...— ասաց օգնականը և խոր նայեց Վարդանին։

— Մեզ պիտի սպանե՞ն,— կատակ ու լուրջ հարցրեց Վարդանը։

— Այո, իշխան, վաղը պետք է փղերին կոխկրտել տան... Արքան զայրացել է, որ ուշացրել եք ուրացումը։

— Լա՛վ, գնա՛,— հրամայեց Վարդանը։

Բանտապետի օգնականը հեռացավ։

Վարդանը գլուխը օրորեց.

— Ասել է՝ սպասո՛ւմ են դեռ...

Բանտապետի օգնականը գնաց, բայց և իսկույն ետ դարձավ։

— Ներո՛ղ եղիր, իշխա՛ն,— ասաց նա,— մի խոսք ասեմ ձեզ։ Դուք և՛ իշխան եք, և՛ բանտարկյալ։ Այսօր կաք, իսկ վաղը ջախջախված կլինեք փղերի ոտների տակ։ Ի՞նչ բան է ուրացությունը... Ո՞վ է մտնում ձեր սիրտն՝ իմանալու, թե ճշմարիտ եք ուրացել թե կեղծ։ Հայտնեցե՛ք հնազանդություն և գնացեք ձեր երկիրը՝ պաշտեցեք ձեր աստծուն։ Ոչ առաջինն եք, ոչ վերջինը։

Վարդանը հրացայտ աչքերով զննեց բանտապետի օգնականին։ Սա ետ-ետ գնաց և հեռացավ։ Բոլոր լուռ էին։ Ըստ երևույթին բանտապետի օգնականի պես մտածողներ կային։ Վասակը նկատեց այդ բազմանշանակ լռությունը և լարվեց։ Բեկում նկատեց բոլորի մեջ։

Կես-գիշերից անց էր։ Կրկին եկավ բանտապետի օգնականը։ Նա զգույշ մոտեցավ Հազարապետին և ասաց, որ եկել էր Արսեն իշխանը մի այլ պարսիկ իշխանի հետ և հանձնարարել է իրեն՝

հայտնել նախարարներին, որ մահապատիժը տեղի կունենա վաղը, թող նախարարներն շտապեն՝ ինչ-որ անելու են...

Բանտապետի օգնականը մթության մեջ շրթունքները մոտեցրեց Հազարապետի ականջին և շշնջաց.

— Ի սեր քրիստոսի, ազատեցեք ձեր հոգիները...

Հազարապետը հարցրեց.

— Դու ի՞նչ ես, ո՞վ ես...

— Ես քրիստոնյա եմ... հավատամ և խոստովանիմ...

— Գնա հայտնիր, որ մտածում ենք այդ մասին։ Օգնականը գնաց։

Լույսը բացվում էր... Բացվում էր ահեղ օրը։ Պետք էր շտապել... Հազարապետը մոտեցավ նախարաներին և շշնջալով ասաց.

— Օրհասը հասավ... Վճռենք մեր անելիքը...

Մութի մեջ իրար եկան նաև Վասակն ու իր կուսակիցները։ Իրադարձությունների դաժան ու մերկ հանգամանքները թույլ էին տալիս արդեն մի փոքր բացարձակ գործել։ Գադիշոն, Գյուտը, Ռըշտունին, նաև Մանեճը՝ նրանք ևս խոսեցին իրենց մեջ.

— Գիշերն անցնում է. ի՞նչ ենք վճռելու...

Սրանց մոտեցավ Աշուշան Վահանի հետ։

— Իշխաննե՛ր,— ասաց նա վճռական եղանակով,— ժամ է ՀՀիր կայացնելու։

— Ի՞նչ վճիռ կտայիր դու, իշխան,— դարձավ նրան Վասակը։

— Կեղծ ուրացություն։ Միևնույն է՝ վերջը կհանգենք դրան։ Վտանգավոր է պատեհ ժամը բաց թողնելը։

— Հը՞մ... Կհամոզվի՞ «ճառ»,— հարցրեց Վասակը։

— Կհամոզվի։ Պետք է համոզվի...

Աշուշան գնաց դեպի Վարդանը։ Նրա հետևից գնացին բոլոր վասակյանք։

Բանտի նեղ լուսանցքով ներս թափանցած լույսը, որ բակում վառվող սրբազան կրակից էր գալիս, ծամածուռ գծերով լուսավորեց Վարդանի շուրջը հավաքված նախարարներին։ Աշուշան և Վարդանը տխուր ժպտացին իրար։

— Դու եկար ուրացությո՞ւն առաջարկելու,— խլաձայն հարցրեց Վարդանը։

— Հասկացար միտքս, Սպարապետ,— ասաց Աշուշան,— կեղծ ուրացություն... Առերես...

— Եվ մե՞ծ հույսեր ունես դրանից։

— Մե՞ծ, խոստովանք լինի։

Վարդանը մի փոքր ուշացրեց խոսքը։

— Ուրանալ առերես և անկեղծ ուրացություն ցույց տալ այստեղ՝ կնշանակի երեխաների տեղ դնել պարսիկներին։ Ուրանալ առերես և անկեղծ ուրացություն ցույց տալ մեր ժողովուրդներին՝ կնշանակի, որ մենք իրոք ծախել ենք նրանց։

— Տե՛ր Մամիկոնից. ահեղ է ժամը. վճռիր,— ասաց Վասակը։

— Դու վճռե՞լ ես,— հարցրեց Վարդանը դառն շեշտով։

— Ես սպասում եմ ամենքիդ։

Լռությունը եղավ պատասխանը։ Երկար ժամանակ չէր լսվում ոչ մի խոսք։ Ոչ ոք չէր շարժվում անգամ։ Եվ իրոք դրությունը շատ էր լուրջ։ Կատաղի Հազկերտը ի կատար կածեր իր սպառնալիքը։ Պետք էր կամ շտապել մի բան անել, կամ վճռել ընդունել մահը։ Իսկ ի՞նչ կլիներ հայրենիքի վիճակը։

Ներշապուհը նայեց Հազարապետին։

— Ի՞նչ անենք, Հազարապետ։ Ես մահից չեմ վախենում, բայց երկիրը...

— Ոչ ոք այստեղ մահից չի վախենում,— բարձր պատասխանեց Հազարապետը,— եթե կա մի բան, որից վախենում ենք ամենքս, դա հայրենիքն է...

— Ի՞նչ ես ուզում ասել,— հարցրեց Վարդանը սպառնալի ձայնով։

— Իմ ասելիքը նույնն է, ինչ որ քոնը,— պատասխանեց Հազարապետը։

— Ուրացությունը խղճի գործ չէ, տյարք,— ասաց Վարդանը շար ու խոպոտ ձայնով,— խիղճն ազատ է, նա կհաշտեցնի ինքն իր մեջ իր գործը։ Մեր ուրացությունը նշան է տերունական գործի։ Առերե՞ս կեղծիք, ասում եք դուք։ Ուրեմն կեղծիքը պետք է լինի կեղծիք։ Այստեղ կեղծիք և այնտեղ կեղծիք։ Ոչ մի կերպ ոչ ոք չը-պետք է իմանա իսկությունը։ Անշուշտ այդպես։ Ուրիշ հնար չկա։

— Ոչիշ հնար չկա,— ասաց Ներշապուհ Արծրունին,— մենք գերի ենք։ Մեզ չեն պահի բանտում երկար, որ ժամանակ շահենք։ Վաղը մեր վախճանն է։ Ի՞նչ կլինի վիճակը երկրում։

— Գոնե այնտեղ միաբանություն կա, միաբանություն իրենց և կարծեցյալ երդվյալներիս միջև։ Իսկ ուրացությունը կերկպառակի երկիրը, կոչնչանա անմիաբան, խառնիճաղանճ պատերազմի մեջ։ Իսկ այս մեր խստորեն գաղտնի կեղծ ուրացությամբ ինչպե՞ս երևանք աշխարհի առաջ, ո՞ւմ ի՛նչ բացատրենք, ո՞ւմ ինչպես վստահեցնենք, որ չենք զիջել հայրենիքը։ Ամեն ինչ կըխառնաշփոթվի, ամեն ինչ կտանք թշնամուն, մինչ մենք երդվել ենք ժողովրդի առաջ չզիջել ոչինչ...

Առաջ եկավ Աշուշան։

— Ճշմարիտ է, Սպարապետ,— ասաց նա,— ճշմարիտ է։ Բայց կենդանի մնալն էլ մի հաղթություն է։ Կեղանի մնալ՝ կնշանակի ապագայի տերը լինել։

— Մեզ չե՞ն ոչնչացնի,— քմծիծաղեց Վարդանը։— Ոչնչացնելու որ լիներ, երեկ կոչնչացներ, փախցրեց խելագար ժամը։ Հիմա մեր գործը Միհրներսեհի ձեռին է։ Իսկ նրա գլուխը այնպես չէ խառն, և քուշանները այնպիսի մի գործ չեն ստեղծել նրա համար, որ մեզ ձեռ տա։ Մենք այնքան էլ հեշտ կուլ գնացող պատառ չե՞նք, այդ գիտե՞... Նա հիմա սուտ հավատով դեպի սուտ ուրացումը՝ ճշմարիտ մոգեր ու զորք կդնի հետներս և կճամփի առուն... Եվ ճգնաժամը տեսեք այնտե՞ղ, երբ մոգերն ու զորքը կըմտնեն ժողովրդի մեջ... Ահա սա է ահավորը...

Վասակը մոտեցավ Վարդանին։

— Տեր Մամիկոնեից, դու ևս հաստատ գիտես, որ երկիրը ոտնատակ կերթա։ Ուրիշ հնար չկա։ Ընդունենք ուրացությունը... Առերես...

— Այո, այո,— վրա բերին Գաղիշոն, Գյուտը, Արտակ Ռըշտունին, Մանեճը։

— Ընդունենք առերես, օգնությամբ աստծո հասնենք երկիրս ժամանակ կշահենք։

— Իսկ դուք, ի՞նչ եք վճռում,— դիմեց Վարդանը յուրայիններին։

Ներշապուհն առաջ եկավ։

— Տեր Մամիկոնեից, մենք վճռում ենք ընդունել կեղծ ուրացումը, իսկ եթե դու կարծում ես՝ թե հայրենիքին և քեզ դավաճանողներ կան, մենք բոլորս կգանք հետդ ջուրն ու կրակը։ Վճռի՛ր։

— Մենք ստիպված ենք ընդունել,— ասաց Հազարապետը,— երկրի փրկության համար։

— Սպարապետ, անձի համար չեն արվի, բայց հայրենիքի համար կան շատ բաներ, որ կարվեն։ Երեք ժողովուրդ մեզ են նայում փրկության։ Նրանց փրկության համար ամեն բան կարելի է զոհել։ Ապրենք, ապրեցնենք։

Վասակը ձայնը բարձրացրեց.

— Վերջապես ի՞նչ ես անում այդ հայրենիքի փրկության համար։

Վարդանը բռնկվեց.

— Ի՞նչ, կարծում եք ես կա՞նգ կառնեմ որևէ հնարի առաջ հայրենիքի փրկության համար... Շատ ենք եղել փոթորիկներում և շատ ենք ճամփա բացել փրկության։ Բարի՛։ Համաձայն եմ, և այս մեղքն էլ ո՛չ ձեր, թող ի՛մ վզին ընկնի։ Սակայն պայման։ Երբ հասնենք հայրենիք, անմիջապես դուք ևս կբացվեք ինձ հետ ժողովրդի առաջ։

— Երդվում ենք,— ասացին իշխանները։

— Այո, երդվում ենք,— ասաց Վասակը,— որ երբ հասնենք հայրենիք բացեիբաց պաշտենք մեր աստծուն։ Ե՛կ, համոզվիր։

— Ահա այդ էր իմ դժվարս, ա՛յդ է, որ կհամոզի ինձ։ Այդպես համաձայն եմ։

— Երդվում ենք աստծով և մեր հայրենի սուրբ երկրով,— հանդիսավոր սրբագործեց Հազարապետը։

— Երդվում ենք,— կրկնեցին բոլոր նախարարները։

Հազարապետը կանչեց իր մոտ բանտապետի օգնականին և պատվիրեց, որ կանչի բանտապետին։ Եկավ բանտապետը և ուրախ նայեց բանտարկյալներին։ Հազարապետը հանձնարարեց բանտապետին, որ հայտնի Միհրներսեհին իրենց վճիռը։

Բանտապետը գնաց։

***

Ողջ Նյուշապուհ քաղաքը հավաքվել էր ճամբարի մերձ դաշտավայրը՝ դիտելու հայ նախարարների մահապատիժը։ Արդեն փղերին պատրաստում էին գրգռիչ նյութերով՝ կնդրուկով և գինով։ Նրանք գետինն էին փորփրում և կնճիթները ցցում։ Մեծ շփոթ էր և իրարանցում հայոց այրուձիի մեջ։ Մարտիկները կատաղած էին։ Բաբիկն ու Ներսիկն էին միայն հանգիստ և խանդավառ վիճակի մեջ։ Ուրեմն նրանց հայրը զինվորյալների հետ է... Դա բարձրացրեց նրանց ոգին։ Հայ մարտիկների հետ նրանք ևս գնացին դաշտը՝ հրաժեշտ տալու իրենց հորը և մյուս նախարարներին։ Ծանր էր լինելու տեսարանը, բայց նրանք սրտապընդվեցին՝ իբրև զինվորյալի զավակներ։

Ամբոխը որոտաց։ Դա նշան էր, որ բերում են իշխաններին։ Հայ մարտիկները սեղմվեցին մի կողմ՝ պատրաստ ամեն տեսակ անմտածված քայլերի։ Նախարարները երևացին։ Բայց փղերը դեռ ճամբարումն էին։ Ամբոխի զարմանքը շատ մեծացավ, երբ նախարարներին նժույգներով քաղաքի միջով տարան հայոց այրուձի և մեծ պատիվներով հրավիրեցին իջևանել։ Նախարարները լվացված, հագնված չէին, բայց չունեին զնդանից ելած կալանավորների տեսք։ Նրանք միայն շղթայազերծ էին։ Նրանք տարօրինակ կերպարանք ունեին։ Նրանց մեջ Վասակը, Գագիշոն, Ոշտունին, Գյուտը, Մանեճը գնում էին լուրջ ու զուսպ, հաղթվ թաքցրած ուրախությամբ։ Բայց կոտրված և տխուր էին Արտակը, Ներշապուհը, Հազարապետը, Շմավոնը։ Իսկ Վարդանը երևի երբեք իր կյանքում այդքան այլայլված երևույթ չէր ունեցել։ Միշտ սովոր վտանգներին, միշտ գործ ունենալով կյանքի-մահի գործերին, միշտ ինքն իր առաջ հոգով ազատ ու հանգիստ՝ առաջին անգամ կյանքում նա ճնշում էր ինքն իրեն։ Առաջին անգամ նա խաբում էր իրեն և ուրիշներին, կեղծում, խարդախում։ Նա զգում էր խղճի այնպիսի սուր խայթ, այնքան ամոթանք, որ պատրաստ էր գետինը մտնել և չերևալ ոչ միայն իր մարտիկներին, որ զարմացած և լարված նայում էին իրեն, այլև որևէ արարածի աշխարհիս երեսին։

Ամբոխը նայում էր փղերի կողմը։ Կարծում էր, թե փղերը ուշացան։ Զայնեցին այն կողմ, բայց ոչ ոք չէր շարժվում փղերի

կողմից։ Տեսնելով, որ նախարարներին չեն կոտորում, ամբոխը քարեր վերցրեց ու պատրաստվեց քարկոծի։ Հայ մարտիկները վազեցին ճամբար իրենց զենքերին ու նժույգներին։ Եվ վերադարձան սպառնալի շարժումներով։ Մթնոլորտը շիկացավ։ Մի փոքրիկ նշան, մեկի խոսքը, և ահա կոտորածը կսկսվեր։ Դրությունը փրկեց բանտապետը, որ պահակներին հսկում էր։ Նա կանգնեցրեց իր նժույգը և գոռաց.

— Պատի՞վ տվեք նախարարներին. նրանք ընդունեցին մազդեզանց կրո՞նը։

— Հո՜-ո՜-ո՜... ընդունեցի՞ն,— մռնչաց ամբոխը։

— Մազդեզանց կրո՞նը,— գոռաց բանտապետը ավելի ուժգին,— պատի՞վ տվեք նրանց։

Ամբոխը քարերը վայր նետեց և խուլ որոտով հարձակվեց նախարարների վրա, սկսեց համբուրել նրանց ձեռները, նժույգների սանձերը, բաշերը։ Նախարարները շատ ջանացին ազատվել նրանցից՝ չհաջողվեց։ Հայ մարտիկները ցավից ու ամոթանքից կուչ գալով՝ քարացած նայեցին նախարարներին։ Մոտ վազեց Արշամը Վարդանին, նայեց նրան զննող աչքերով և նրա աչքերում նկատեց անհուն, դանբացատրելի, խորը տխրություն։ Վարդանը տեսավ, թե ինչպես մարտիկները իրար սեղմվեցին և հանդիմանական, օտար հայացքներով հետևում էին իրեն։

Բաբիկն ու Ներսիկը իրար ձեռ սեղմելով կանգ առան և հետևվեցին Վասակին։ Ծա հանգիստ գլխով նշան արեց նրանց, որ գնան ճամբար։

Երբ նախարարները իջան ճամբարում, նրանց չմոտեցան մարտիկները։ Միայն իշխանական վրանների սպասավորները նժույգները քաշեցին և բաց արին վրանների վարագույրները։

Վարդանն շտապեց ներս գնալ վրանը, որ չզգա իր վրա նետված հայացքները, որ այրում էին նրան։ Նա չէր կարողանում տանել նաև իր բախտակիցների հայացքները։ Արտակը շատ էր գաղտնի և հայտնի նայում նրան, ցույց տալով, որ կամենում է խոսել հետը, բայց Վարդանը նրանից թերևս ավելի էր խուսափում, քան մյուսներից։ Ներշապուհը մռմռում էր ինքն իրեն, իսկ Շմավոնը դաժանացել էր։ Այդ լռակյաց և ըստ երևույթին անհաղորդակից նախարարը, որ մինչև այժմ համարյա չէր մասնակցում ոչ մի վճռի, սկսեց դժգոհել կեղծ ուրացության քայլից։ Նա մտավ

Վարդանի վրանը և մոայլ նստեց նրա մոտ։ Շուտով ներս եկան Ներշապուհն ու Արտակը Հազարապետի առաջնորդությամբ։

— Զուր ընդունեցինք, պետք է հրաժարվեինք, թող փղերի ոտների տակ կոխկրտել տային... Հիմա մենք ի՞նչ երեսով պիտի դուրս գանք մեր հարազատների ու ժողովրդի առաջ,— ասաց Շմավոնը։

— Է՛, չպարծենա՞նք,— հառաչեց Վարդանը,— շատ իմաստուն ու քաջ մարդիկ գիտեմ, որ ընկել են Թակարդը։ Մենք ևս ընկանք։ Երևի մի տեղ սխալվել՝ պարծեցել ենք։ Դժվար բան է հայրենիքը. ամեն մարդ չի կարող ունենալ։

Վարդանը խոսում էր հոգու այրող դառնությամբ։ Նախարարները լսում էին անխոս, քանի որ համաձայն էին և իրենց սրտից էր և հետո՝ կամենում էին միջոց տալ, որ նա Թեթևացնի լցված սիրտը։

— Ինչո՞վ պիտի վերջանա այս տաժանքը,— սրտնեղեց Վարդանը,— ե՞րբ պիտի գնանք տուն։

— Դու ասա, Սպարապետ, թե ի՞նչ են խորհում նրանք...— ասաց Արտակը՝ ակնարկելով Վասակյաններին։

— Ես չգիտեմ ինչ են խորհում, բայց պայմանը պայման է, հայրենիք հասնելուն պես պետք է հայտնենք մեր կեղծ ուրացությունը,— ասաց Վարդանը։

Այդ միջոցին սուրհանդակ եկավ և հայտնեց Վասակին, որ Միհրներսեհը հրավիրում է նրան իր ապարանքը և խնդրում է շնորհ բերել զավակներով։ Վասակը ուրախացած այդ հրավերից՝ հրամայեց սուրհանդակին սպասել վրաններում, մինչև ինքը կըհագնվի։

— Սա ինչ շրջումն էր բախտի անիվի,— հեգնեց Հազարապետը։

— Զուկը գտավ իր ջուրը,— ասաց Ներշապուհը,— փղերի ոտներից բարձրացավ մինչև մարզպանական նոր պարգևների ու խոստումների...

Սուրհանդակի հետ եկել էին մի խումբ Միհրներսեհի ապարանքի բարձր կարգի սպասավորներից և զորականներից, որ շքեղ հագնված էին։ Նրանք սպասում էին Վասակի վրանի դռան։ Վասակը հագնվում էր։ Նա հրամայեց Թաբիկին և Ներսիկին, որ հագնվեն նույնպես։

— Իսկ մե՞նք ինչու գանք...— հարցրեց Բաբիկը դժկամ։

— Շո՛ւտ, շո՛ւտ հարցնելու ժամանակ չէ,— շտապեցրեց Վասակը։

— Մենք չենք ուրացել, մեզ ինչպե՞ս կընդունի Միհրներսեհը,— առարկեց Ներսիկը՝ ահով նայելով հորը։

Վասակը աչքերը ուղղեց Ներսիկի վրա.

— Շո՛ւտ, հագնվեցե՛ք։

Բաբիկը մոայլ հնազանդեց, նրան հետևեց Ներսիկը, և երբ բոլորը պատրաստ էին, Վասակը դուրս եկավ վրանից։ Դուրսն սպասում էին Գադիշոն, Գյուտը, Ռշտունին և Մանեճը։ Արդեն սրանք չէին ծածկում իրենց մտերմությունը և զատվելը Վարդանի մտերիմներից։ Ուրացության հանգամանքը շատ հարմար եղավ նրանց։ Որոշված էր կեղծ ուրացություն։ Ուրեմն և նրանք «կեղծում» էին... Ի՞նչ կար դատապարտելի՝ եթե նրանք «վարպետորեն» են կեղծում և այդպես էլ ցույց տալիս։ Նրանք ձեռք բերին այդ իրավունքը։ Մանավանդ որ Վարդանը ինքը ևս շատ լավ պետք է հասկանար և ընդուներ, որ մի թեթև կասկածի տեղիք, և ահա ամբողջ գործը վտանգի մեջ էր։ Եվ որ Վարդանն ինքը պարտավոր էր «վարպետորեն» կեղծել...

Իր վրանի դռնից Վարդանը դիտում էր Վասակի ճանապարհվելը Միհրներսեհի ապարանքը։ Սա, իհարկե, վճռական հանգամանք չէր։ Ուրացած մարդպանը, հասկանալի էր, որ կրկին պատվի արժանացավ և ավելի մոտ պիտի գտնվեր Միհրներսեհին, քան մյուսները։ Միհրներսեհը հավատացել էր նախարարների ուրացությանը... Ամեն, ամե՛ն կողմից Վասակի և յուրայինների համար բարենպաստ դառան պայմանները։ Վարդանը պետք է լռեր... մինչև հայրենի՛ք... Դեռ որքան ճանապարհ կար մինչև հայրենիք, և դեռ ինչե՞ր կարող էին անել Վասակի կուսակիցները...

Վասակը ուրախադեմ հրաժեշտ տվեց նախարարներին և նստեց նժույգ՝ ուղղվելու դեպի Միհրներսեհի ապարանքը։ Եվ իր ընթացքին շքեղ երթի երևույթ տալու համար նժույգը քշեց շատ դանդաղ։ Երբ նա ծածկվեց քաղաքի փողոցներում, Արշամը, որ մի խումբ մարտիկների հետ դիտում էր տեսարանը, ասաց նրանց.

— Շատ է ուրախացել, գնում է ուրացության վարձն ստանալու։

— Սպարապետը կոտրված է,— նկատեց մի մարտիկ։

— Մահացու մեղք է գործել։ Իհարկե, կկոտրվի,— ասաց Արշամը և մռմռալով հեռացավ։

Մարտիկները մնացին շվարած։

— Սպարապետն էլ մեզ թողեց... հառաչեց մի մարտիկ։

Նրանք ճնշված ու տխուր ցրվեցին։

Օրն անցնում էր շատ ճնշված հոգեկան վիճակի մեջ։ Վարդանը պառկած էր վրանում և ոչ ոքի հետ այլևս չէր խոսում։ Ճաշ բերին, բայց նա չկարողացավ ճաշակել։ Ամենածանրը Վարդանի համար իր մարտիկների մոտ լռելն էր, ծածկելը կեղծիքը։ Նա մի օրում նիհարեց և դեղնեց իբրև ամիսների հիվանդ։ Երբեք նա կյանքում այդքան դառնության չէր զգացել։

Երեկոյան դեմ մի խումբ մոգեր եկան և ատրուշան դրին հայոց այրուձիի ճամբարի գլխին։ Պարսից բանակից զորքը եկավ դիտելու։ Նրանք ծիծաղում էին և բարեկամական ցույցեր էին անում հայ մարտիկներին, որոնք սառը հայացքներով նայում էին նրանց և թողնում անպատասխան։ Մոգերից մեկը մոտեցավ նախարարական վրաններին և կամենում էր մտնել Վարդանի մոտ, բայց Արտակը ետ մղեց նրան ասելով.

— Մի՛ մտնի նրա մոտ, նա չի ընդունում։

Մոգը ետ դարձավ։ Նա՝ այդ բոլորը համարում էր անընտելություն, ուստի և նշանակություն չտվեց։

Շուտով լսվեց մոգերի աղոթքը։ Նրանք ընտելացնում էին ճամբարը...

— Սկսեցի՞ն... դասը,— դառնորեն կատակեց Վարդանը, երբ ներս մտավ Արտակը։

Արտակը նայեց Վարդանին, նրա այլայլված ու տանջված դեմքին և կանգնեց նրա գլխավերևը։ Նա ևս տանջվել էր և ապրում էր սոսկալի վիրավորանքը, բայց չէր կարծում, թե Վարդանը այդքան կազդվի։

— Սպարապետ,— ասաց նա,— չի՞ եղել, որ ամենամեծ վտանգի մեջ ընկնես, որից փրկվելու հույս չունենաս։ Ի՞նչ ես արել այն պահին։

— Այնտեղ ես իմ տերն էի, մարտնչում էի և դուրս գալիս,— ասաց Վարդանը,— նա կռիվ էր, սա միմոսություն է։

— Կգնանք հայրենիք, կսրբենք այս կեղծիքը...

— Միայն թե դավանանք չհամարվենք, չթուլանա երկիրը,— ասաց Վարդանը,— եթե ոչ՝ հավատքը ռազմական գործերում տեղ չունի։

— Մենք կեղտոտեցինք մեր մարտիկների խիղճը, մեր ժողովրդի հոգին,— դառնությամբ ասաց Վարդանը։— Չպետք է հոգին սովորեցնել այսպիսի բաներ...

— Գնանք հայրենիք և մեր արյամբ ծածկենք մեր մեղքը, թող ուրիշներն արդար խղճով ապրեն։

— Ի՞նչ կասես մարզպանի մասին... խոսքը փոխեց Արտակը։

— Մարզպանը մոտեմոտ է անում այստեղ։ Ես այնտեղ կը-փորձեմ նրան, եթե նա ճշմարի՞տ է ուրացել...

***

Արդեն գիշերային «մթացյալ» ժամն էր, որ գնում էր դեպի «շաղավոտն», որ Վասակից սուրհանդակ եկավ և հայտնեց, որ Հազկերտն ու Միհրներսեհը որոշել են նախարարների ուրացման և զրադաշտական կրոն ընդունելը մեծաշուք հանդեսով հավերժացնել։ Սահմանված է հետևյալ կարգը. նախարարները, հայոց այրուձին առավոտ վաղ հենց որ կսկսվի «այգն» ժամը՝ կազմ ու պատրաստ պիտի լինեն, որ ներկայանան մեծ մովպետան մովպետին ճամբարի մեծ դաշտում, ուր կկատարվի նրանց առաջին երկրպագումը արևին ողջ պարսից բանակի, Հազկերտ արքայի, պարսից մեծամեծների հետ միասին. ապա կլինի մեծ ատյան Հազկերտի պալատում։

Վարդանին կարծես բութ գործիքով հարվածեցին.

Բայց նա դառնորեն ասաց.

— Է՛, երբ միմոռությունն ընդունեցինք՝ միմոսի խաղերն էլ պիտի ընդունենք։

***

Շքեղազգեստ մի այրուձի, մոգերի և իշխանների հետ եկավ հայոց գնդի ճամբարը և հագնված նախարարներին առաջնորդեց դաշտ, ուր պիտի տեղի ունենար արևապաշտության ծեսը։ Լայնարձակ դաշտը ծփում էր ահագին բանակի մարտիկների, նժույգների,

փղերի շարժումներից։ Ափից դուրս եկած գետերի պես հորդում էին զորագնդերը տեղ որոնելով դաշտում։ Փոշին բարձրացել էր և ճոճվում էր զորքի գլխավերևը։ Ամպերը ծծվում էին ոսկեհեղուկով։ Ժամը մոտեցավ։

Հայ նախարարները, Վարդանը և Վասակը, հայոց այրուձիի գլուխ անցած գնացին և տեղ բռնեցին բանակի երկու թևերի մեջ, որը գրկեց նրանց ահագին վիշապի ուժգնությամբ։

Հանկարծ հարյուրավոր փողհարներ ու թմբկահարներ գալարափողերը հնչեցնելով և թմբկահարելով եկան Հազկերտի պալատից դեպի հրապարակը։ Նրանց հետևեց Հազկերտը մեծ շքախմբով, որի մեջն էին Միհրներսեհն ու պալատականները, մովպետան մովպետը և զորավար Մուշկան Նյուսալավուրտը։ Բանակը ողջույն աղաղակեց, և դա նման էր փոթորկահար անտառի որոտին։ Երբ երթը մոտեցավ, ողջ բանակը զենքերը և դրոշակները խոնարհեցրեց ի պատիվ Հազկերտի։ Նա գալիս էր հաղթական, նժույգի համրաքայլ ընթացքով։ Նա զարդարված էր ակնակուռ թագով և ոսկեկար ակնեղեններով հելուզված պատմուճանով։ Միհրներսեհը ևս զարդարվել էր կարմիր պատմուճանով՝ ոսկենկար երիզների շքեղ գծերով։ Հազկերտի հետևից գնում էին պալատականները, բոլորը տոնական զգեստներով, սրածայր գլխարկներով։ Հազկերտը եկավ և կանգ առավ հայ նախարարների առջև հրապարակի վրա։ Նրա կողքին կանգնեց Միհրներսեհը, մյուս կողքին մովպետան մովպետը՝ շրջապատված մի քանի ականավոր մոգերով։ Հայ նախարարներին, որոնք կանգնած էին պարսից զորքի շարքի մեջ, առաջարկեցին դուրս գալ և մոտենալ Հազկերտի շքախմբին։ Դա պատիվ էր նորադարձներին...

Հազկերտն ու շքախումբը իջան նժույգներից, իսկույն սպասավորները նժույգները ետ պահեցին։ Հնչեց մի գալարափող՝ կերկերաձայն, դժոխային ուժով, ժանգոտ ու ատելի... Արևելքը շառագունել էր և մերձ էր արևի ծագումը։ Լեռան մեջքին պատրույգի պես կայծեց և հանկարծ ժայթքեց ոսկեվառ արևը։ Ողջ բանակը իր Հազկերտով ու հարյուր հազարանոց մարդկանցով ընկավ բերանքսիվար գետնին։

Մովպետան մովպետը վազեց առաջ դեպի արևը և բազկատարած գոչեց.

— Ա՜հմի եադ, ա՜հմի Մազդաո[1]... Պաշտեմք զԱհուրամազդա, զարդար Տէրն արդարության, պաշտեմք զԱմշասպանդս՝ զպահպանիչս և զտուիչս բարեաց... Որ կողմն են ջուրք, ծառք, կենդանեաք, նար ոգին բնութեան, որ կողմն է Ահուրամազդա, որ ստեղծեաց զայդ ոգին, որ կողմն էին Զրադաշտ, Քաւա Վիշդասպա, Ֆրաշոշդրա և Ջամասպա և ամենայն նախնի կրակաքուրմք...

Ամեն ինչ պապանձվեց, մեռավ։ Ամբողջ աղոթքի ժամին չըշարժվեց մի ծեղ անգամ։ Վարդանը իրեն զգում էր ինչպես մղձավանջային մի երազի մեջ։ Նա՝ երեսը դեպի՝ դեղնել էր։ Արտակն ու Ներշապուհը բռնել էին նրա երկու կողմը, որ հանկարծ մի բրունկում չունենա։

Մովպետան մովպետը ավարտեց աղոթքը, նշան արեց, որ բոլորը ոտքի ելնեն և սկսեց կոկորդային, կերկերաձայն մի մեղեդի, որին կցեցին իրենց ձայնը հազարավոր մոգեր։ Մեղեդին ծավալվեց գնաց ողջ բանակը և ահա փոթորկեց, որոտաց համայն պաշտում արևի մեղեդին։ Կարծես երկիրը երգեց։ Մեղեդիի շարժման հետ ողջ բանակը ճոճում էր իր նիզակները, սրերը, վահաններն ու դրոշները, ցնցում երկնքի դեմ, և այդ ողջը շողշողում էր լուսաճաճանչ ծովի պես։

Մեղեդին գնաց, պտտվեց, դարձավ և լռեց։ Դաշտը շունչ առավ։ Հազկերտը սուրը դրեց պատյանը, թեքվեց ետ, նայեց հայ նախարարներին և այրուձիին, հավանության նշանով գլուխը շարժեց և նժույգի գլուխը դարձրեց դեպի դաշտը։ Պալատականներն անմիջապես կիսաշրջան բոլորվեցին նրա շուրջը։ Նա ետ նայեց և ինչ-որ ասաց պալատականներից մեկին։ Սա թեքվեց դեպի նախարարները և մոտենալով Վասակին՝ խոնարհ գլուխ տվեց և ասաց.

— Արքայից արքան հրամայեց ձեզ այս երեկո շնորհ բերել պալատը։ Իսկ այժմ զորահանդես է ձեր պատվին։ Մնացեք։

— Շնորհապարտ ենք, տեր,— ասաց Վասակը փայլելով ուրախությունից։

Պալատականը նժույգը քշեց ետ, դեպի շքախումբը։ Վասակը դարձավ նախարարներին.

— Մեծ պատիվ է, տյա՛ր...»

---

[1] Ես եմ, որ ես եմ Մազդաոն։

Երևում էր, որ նա անկարող եղավ զսպել իր խիստ ուրախությունը։ Դա նկատեց Վարդանը և խենթ նայեց նրան։ Վասակն զգաց իր սայթաքումը, բայց շատ էլ նշանակություն չտվեց դրան։ Նա զբաղված էր ավելի մեծ նպատակների հեռանկարներով։ Նրան թվում էր, թե հիմք դրվեց իր երազների իրականացման, և այսօր դրա առաջին օրն է։

Նա արքայաբար նայեց նախարարներին և նժույգի գլուխն ուղղեց դեպի Միհրներսեհի կողմը։ Նրան հետևեց իր շքախումբը։

— Արքայական շուք է ընդունում,— ասաց Հազարապետը։

Գադիշոն լսեց այդ և պատասխանեց.

— Նա հենց արքայաբար էլ ծնվել է։

— Դու իմ ասածն ես հաստատում, տե՛ր խորխոռունյաց...

Այդ միջոցին Հազկերտի շքախմբի մոտից անջատվեց Մուշկան Նյուսալավուրտը և նժույգը քշելով դեպի ասպարեզը՝ բարձրացրեց մսուտ ձեռը և ուժգին ձայնով գոչեց։

— Հանդեսի երթո՞վ, օ՞ն առաջ։

Գալարափողերը կրկին հնչեցին, թմբուկները դոփեցին և դաշտավայրի հեռու ծայրից բանակի աջ թևը պոկվեց և սկսեց գալ անցնելու Հազկերտի առջևից։ Գալիս էր վահանակիր, նիզակավոր, աղեղնաձիգ հետևակը։ Նա մոտենում էր համրատատան ճոճումով և դղրդացնելով գետինը։ Եկան անցան մոխրագեմ, դեղին, սև ու թուխ զանազան դեմքերով զորականներ, որոնցից մեծամասը կոփվել էր արյունոռուշտ կռիվներում և կոտորածներում։ Նրանց աչքերի հայացքները դաժանացել էին բազմաթիվ քաղաքների կործանումների և անթիվ անմեղ զոհերի ճիչերի մեջ։

Երկար ժամանակ տևեց մինչև անցավ հետևակը, որին հետևեցին հեծյալների գնդերը, որ եկան անցան խառնիճաղանճ հրոսաքմբերի նման։ Դրանք կատաղի մարդիկ էին, պատրաստ նժույգների սմբակների տակ ոտնակոխ անելու ամեն արարածի։

Վարդանը նայում էր նրանց և մտքում պատկերացնում էր այն առիթը, որ իր այրուձիի գլուխն անցած՝ պիտի մխրճվեր նրանց շարքերն ու թափեր կարկտահար հասկերի պես։

Վերջապես պետք է անցնեին մատյան գունդն ու փղերը՝ Հազկերտի զորքի պարծանքը։ Մուշկան Նյուսալավուրտը ապահովության համար հեծյալների ամուր շարքերով պարսպեց Հազկերտի և շքախմբի առջևի գիծը, հետո միայն ձեռը բարձրացրեց ի նշան

հրամանի, որ փղերը բերեն։ Փղապետը ծղրտաց մի հսկայամարմին փղի աշտարակից, հետո ձեռքի սրածայր ձողը պտտեցրեց օդի մեջ։ Փիղը տատանվեց մի կողմ, շրջվեց ետ, հետույքով առաջ եկավ։ Փղապետը ձողով հարվածեց նրա երկու ականջի մեջտեղը։ Փիղը կատաղեց, կնճիթը բարձրացրեց և շրջվելով ետ՝ վազեց պղրդացնելով գետինը։ Փղապետի օրինակով եկան մյուս փղերը։ Նրանք վազում էին և նրանց մեջքին ճոճվում էին ատամնավոր աշտարակները՝ մարտիկներով լի։ Հետո եկան փղերին ուղեկցող հեծյալներ, որոնք նիզակներով գրգռում էին նրանց։ Դրությունը վտանգավոր դարձավ։ Հազկերտին մի փոքր ետ խնդրեցին։ Փղերը այս ու այն կողմ թեքվելով, երբեմն դեպի հանդիսատեսները վազելով առաջ եկան և նիզակավոր հեծյալներից հալածվելով մի կերպ անցան ուղիղ գիծը։

Մուշկան Նյուսալավուրտին կանչեցին Հազկերտի մոտ։ Նա սլացավ եկավ։ Հազկերտն ինչ-որ բան հրամայեց նրան։ Մուշկանը նայեց հայոց այրուձիի կողմը։ Վասակին մոտեցավ մի պալատական զորական հեծյալ և հայտնեց, որ Հազկերտը հրամայում է հայոց այրուձին դուրս գա և մի անգամ անցնի իր առջևով։

Վասակն իսկույն գործի անցավ.

— Հատուկ պատիվ է, շո՛ւտ արեք... Սպարապե՛տ...

Վարդանը չէր կամենում կատարել Հազկերտի հրամանը։ Բայց ժամանակ չկար, ո՛չ Վարդանին համոզելու, ո՛չ էլ ապասելու մի ամենափոքր պահ անգամ։ Վարդանը հասկացավ, որ տեղը չէր այլևս նախարարներին վտանգելու։ Գլխով արեց Սրվանձտյա Գարեգինին, որ իր օգնականն էր այրուձիի մեջ։ Գարեգինը իսկույն դարձավ մոայլ մարտիկներին.

— Իմ հետևի՛ց, օ՜ն ա՜նդր...

Ու թռավ քամու պես դեպի դաշտի ծայրը։

Մարտիկներն ասպանդակեցին նժույգներն ու հասան նրա հետևից։ Գարեգինը հասկացավ Վարդանին, կամ նրան թվաց թե հասկացավ։ Երբ հասան դաշտի ծայրը՝ նա նժույգի գլուխը շրջեց դեպի ասպարեզ և հրամայեց.

— Առավե՛լ։

Ու ինքը ցատկեց կանգնեց թամբի վրա, սլացավ դեպի ասպարեզը։ Նրա հետևից մի քանի մարտիկներ ևս կանգնած սրար-

շավ եկան անցնելու։ Հասնելով Հազկերտին՝ հանեցին սրերը և օդում ճոճելով խառնաձայն, սուր աղաղակներով մրիկի նման սրյացան։ Դա տեսեց այնքան կարճ, որ հազիվ կարողացան տեսնել։ Գարեգինն այդ արեց իբրև ատելության և իրենց գերազանցությունը ցույց տալու նշան։

Վարդանը հասկացավ այդ և թեթևացավ մի փոքր։ Բայց նա նկատեց պարսիկ մեծամեծների և մանավանդ Պերոզի ատելությամբ սևացած դեմքերը։ Բայց և Վարդանն անչափ դոհ մնաց և անգամ չարախնդաց կերպով նայեց Պերոզին, երբ Գարեգինը այրուձին կրկին ետ բերեց և այդ պահին ասպարեզի միջով անցնող հետևազորի մի ջոկատի վրա քշեց։ Ջոկատը կարծելով, թե հայոց այրուձին գնաց վերջացրեց երթը, անցնում էր ասպարեզի միջով դեպի ճամբարը։ Բոլորը տատամսեցին, քարացան, կարծելով, որ զորամասը կընկնի նժույգների տակ։ Բայց այրուձին ճարպկորեն թռավ նրանց բոլորի միջով, չնայած որ նրանք դեսուդեն փախան և անվթար անցան, անհետացան դաշտի մյուս ծայրին։ Հետո իսկույն երևացին և հանգարտ քայլով եկան իրենց տեղը։

Հազկերտը նրանց գոհունակության նշան արեց։

Վասակը զվարթ ընդունեց այդ նշանը, և աչքերը ուրախության փայլով լցվեցին։

Նյուսալավուրտը նշան տվեց երթի ավարտման։ Փողերը փչեցին ավարտ, և զորքը սպասեց Հազկերտի շարժվելուն։ Հազկերտը ձեռը բարձրացրեց, նայեց զորքին և ապա նշան տվեց ու ինքը շարժվեց դեպի պալատ։

Բազմությունները ազատեցին դաշտավայրի երեսը, որի վրա փոշին դեռ երկար ճոճվում էր մեգի նման։

Վարդանն ու նախարարները վերադարձան ճամբար։

***

Հազկերտի պալատի հետևակողմում ընդարձակ վրան-դահլիճի մեջ շրջանաձև նստել էին Հազկերտը, պալատականները, արյաց բանակի հրամանատարները, մովպետան մովպետը, մոգերը և հայ նախարարները։ Տրվում էր ճոխ ընթրիք ի պատիվ նորագարձ նախարարների։ Բոլորը նստած էին ծալապատիկ, մետաքսյա ոսկեկար ներքնակների ու բարձերի վրա, ամեն մեկի առաջ դրած

էին խորտիկներով, մրգերով ու ըմպելիքներով զարդարված փոքրիկ խոնջաներ, որոնցից ճաշակում էին հյուրերը։ Իսկ մեջտեղը պտտվում էին շքեղազարդ զգեստներով սպասավորներ։

Հազկերտը նստած էր բարձրադիր հարթակի վրա փռած գորգերին ու բարձերին՝ կիսաշրջան բոլորված մեծամեծների մեջ։ Նրան մոտ նստել էին Միհրներսեհն ու մովպետան մովպետը։ Մի փոքր հեռու տեղավորվել էր Մուշկան Նյուսալավուրտը և այլ զորականներ։

Հայ նախարարները շատ էլ հեռու չէին մեծամեծներից։ Նոր էին նստել, որ Միհրներսեհը ցույցի համար մի պալատականի միջոցով իր մոտ հրավիրեց Վասակին։ Սա վեր կացավ և շատ կարևոր ու լուրջ դեմքով գնաց-նստեց Միհրներսեհի կողքին։

Հազկերտը ձեռը բարձրացրեց։ Դահլիճը անմիջապես պապանձվեց։ Նա դիմեց հայ նախարարներին.

— Է՛, «բարեկամացանք հավասարվեցանք», ասում է առածը,— խոսեց նա,— հիմա դուք պարսիկ եք։ Մեր ու ձեր մեջ այլևս խտիր չկա։ Այլևս հույները չեն կարող ձեզ դիմել միաբանելու իրենց հետ։ Գնացեք և ուժեղացրեք մեր ու ձեր Երանը։ Եվ Ահուրամազդան ձեզ օգնական։

— Արդա՞ր է,— ասաց ողջ դահլիճը։

— Տե՛ր մարզպան,— շարունակեց Հազկերտը,— քեզ եմ հանձնում երկրի ղեկը, դու պիտի դարձնես մազդեզանց կրոնին ողջ Արմենիան։ Գնա՛ խաղաղությամբ և գործիր աստվածների օգնականությամբ։

— Հնազանդ եմ, տե՛ր արքա,— ասաց Վասակը հոտնկայս և խոնարհվելով երկրպագություն արեց։

— Տե՛ր Սպարապետ,— դիմեց Վարդանին,— իսկ քեզ հանձնում եմ հայերի զորքը. շտապ կկազմես և կբերես քուշանների դեմ։ Քաջերի տեղը պալատը չէ, այլ ռազմադաշտը։

Վարդանը սառը գլուխ տվեց և նստեց իսկույն։

Այնուհետև սկսվեց զվարճախոսություններ ու ընդհանուր զրույց։

— Ուրախացրեք մի փոքր մեզ,— հրամայեց Հազկերտը։

Ներս մտան նվագածուները և սկսեցին նվագել ուրախ եղանակներ։ Դրանց հետևեցին կիսամերկ կանայք, որոնք մեջ եկան և

պարեցին պորտապարեր ու այլ ոչ վայել կաքավումներ։ Վարդանը չէր նայում և չէր ուտում։ Նա իր մոտ էր նստեցրել Արտակին և Ներշապուհին և խնդրել էր իրեն զբաղեցնել, որ ակամա շուրջը չընայի շատ։

Նա նայեց պալատականների կողմը և հանկարծ նրա հայացքը հանդիպեց Պերոզի հայացքին։ Նրանք խոժոռ ու համառ նայեցին իրար։ Վարդանը հիշեց նրա խոսքերը հայերի գոռոզության և նրանց ոգին կոխկրտելու մասին։ Երկուսն էլ օձային սառնությամբ ժպտացին իրար և լավ հասկացան իրար...

— Պերոզը քեզ է նայում,— նկատեց Արտակը։

— Այո՜... այսօր նրա տոնն է...— դառնացավ Վարդանը,— տեսնենք վա՜ղը...

Մինչև կես-գիշեր տևեց խնջույքը, որից հետո Հազկերտը վեր կացավ և գնաց իր հանգստյան օթևանը։

Հույները ևս ցրվեցին։

***

Միհրներսեհը ծանր ու մեղմ ծափ տվեց։ Ներս եկավ սենեկապետը։

— Վրաց բդեշխին,— ասաց քնկոտ ու անշեշտ։

Մինչև Աշուշայի գալը նա աչքերը փակեց և սկսեց շրթունքները լամլամորել, կարծես ատամների տակ մի փոքրիկ պատառ կուլ էր գնացել, և նա ավարտում էր ծամելը։

Դռան հետևը թեթև խլրտոց լսվեց։ Սենեկապետը վարագույրը անձայն ճեղքեց և խոնարհվելով ճամփա ցույց տվեց Աշուշային։

Միհներսեհը աչքերը կկոցեց, սուր նայեց նրան և հետզհետե ժպտաց, որ ավելի դաժանորեն ծամածռեց նրա դեմքը։ Աշուշան խոնարհություն արեց և կանգնեց դռան մոտ։ Միհրներսեհը նիհար ձեռքի թեթև նշանով մոտ հրավիրեց նրան և ցույց տվեց մի բարձ։ Աշուշան նստեց։ Նա ճանապարհի հագուստով էր և զինված կեռ սրով։

— Քեզ հրավիրեցի՛, իշխան, որ հայտնեմ ուրախություն մի բանի համար, որ մինչև օրս պահել էի վերջին պահին։

— Հուսամ, թե ուրախությունը վերաբերում է Երանին, տեր հազարապետ,— ասաց Աշուշան զվարթերես։

— Այո, Վրաստանին,— կատակ ձևով ուղղեց Միհրներսեհը,— ուրախ եմ հայտնելու քեզ, իշխան, որ արքայից արքան հատկապես նշեց Վրաստանի կատարյալ հավատարմությունը՝ ոչ յորինակ Հայաստանի, որից հույս չունենք ոչ արքայից արքան և ոչ՝ ես։ Հավատարիմներով աղքատ դուրս եկանք, իշխա՛ն։— Հազարապետը գլուխը թեթև օրորեց։— Քեզ հրավիրեցի, իշխան պարզապես հայտնելու, որ շշտապես գնալ տուն։ Վրաստանը չի ապստամբի, չի միանա հայերին, և քեզ համար գործ չկա այնտեղ անելիք։ Դու մնա՛ մեզ մոտ։

Աշուշան ցնցվեց։

— Ես մնամ այստե՞ղ...— հազիվ հևոցը զսպելով շշընչաց նա։

— Այո, արքան կամենում է երբեմնակի խորհրդակցել քեզ հետ գործերի մասին։

Աշուշան քաջ ծանոթ լինելով Միհրներսեհի խարդավանքներին՝ դժվարին ճիգով զսպեց իրեն և լուռ խոնարհություն արեց գլխով։

Միա՞կ խելացին,— գիտե՞ր այդ...

Երկու պետական գործիչները հասկացան իրար։ Եվ լռեցին։

***

Վասակը Բաբիկի և Ներսիկի հետ խոսում էր իր անելիքների մասին։ Զարմանալի հաղորդակից էր դառել նա այս վերջին երկու օրը։ Նա հայտնեց նրանց անսպասելի մի բան. այն, որ նրանց ետ է տանելու Սյունիք։

— Վայ, հայրի՞կ, ես այնպե՞ս կարոտել եմ տա՞նը, մայրիկի՞ն, ամրոցի՞ն, երկրի՞ն,— ասաց Ներսիկը և սկսեց վեր-վեր թռչել։

— Դե, պատրաստվեցեք, վաղը մեկնում ենք,— պատվիրեց նա։

— Ապա ինչո՞ւ բերիր,— հարցրեց Բաբիկը։

— Դե, ոչինչ, երկիր, աշխարհ տեսաք։

— Լավ բաներ չտեսանք,— ասաց Բաբիկը,— արևի ու կրակի

պաշտամունք տեսանք, ծուխ շատ կուլ տվինք ատրուշաններում։

— Լռի՛ր այդ մասին,— սաստեց Վասակը և խոժոռ նայեց Բաբիկին։

— Ես լռած եմ ու կամ։ Կխոսենք տանը։

Այդ միջոցին եկավ Միհրներսեհի սենեկապետը և հրավիրեց Վասակին նրա մոտ։ Վասակը մեծ հաճույքամբ գնաց։ Նրան ուրախացնում էր Միհրներսեհի մտերմությունը, որ շահել էր վերջին օրերը։ Եվ ջանք էր անում ջերմացնել այդ մտերմությունը, հաստատել և օգտվել դրանից։

Երբ մտավ Միհրներսեհի մոտ, նրան գտավ ինչ-որ լուրջ մտախոհ վիճակում։ Միհրներսեհը ժպտաց դեմքի արհեստական կծկումով և կրկին անցավ լուրջ արտահայտության։ Վատ նշան էր...

— Քեզ կանչել էի մի թեթև բան հաղորդելու։ Արքան պատանդ է ուզում։

— Պատա՞նդ...— հարցրեց Վասակը դեռ լավ չկարողանալով ընդգրկել Միհրներսեհի հայտնածը իր լրջությամբ։

— Պատանդը՝ դե ի՞նչ պատանդ. հասարակ սովորություն։ Նա ինձ հարցրեց, թե ում վերցնենք նախարարներից, ես ասացի, որ քանի որ դա լուրջ բան չէ՝ թող մարզպանի որդիները համարվեն պատանդ։ Նրանք եկել են զորական ուսման, առանց այն էլ մնում են, ի՞նչ հարկ կա նախարարներից պահել մեզ մոտ։

Վասակը հևաց հուզմունքից։ Նա հազիվ կարողացավ պահել արտաքին սառնասրտությունը։ Նա հարցրեց.

— Եթե սովորություն էր՝ կարելի էր նախարարներից վերցնել պատանդը...

— Է՛, ի՞նչ հարկ նախարարներին պահել այստեղ, երբ նրանք գործ ունեն Հայաստանում։ Հետո՝ Վարդանը կյանքը կտա՝ պատանդ չի տա իրեն, թեկուզ մի հարազատի։ Եվ այն էլ կա, որ գլխացավանք հարկավոր չէ, պատանդ կվերցնենք բոլորովին հավատարիմ մարդուց, ի՞նչ գործ ունենք կասկածելիներից։ Հավատարիմը դու ես, տե՛ր մարզպան... Հետո՝ հարմար էլ է ինձ համար։ Ես Բաբիկին ու Ատրներսեհին սիրում եմ իմ որդիներիս չափ։ Կմնան, զորական արվեստ կսովորեն, դու էլ Հայաստանում կնվիրվես մեր գործին։ Իրար ճանաչում ենք, վստահ ենք։ Դու՝ ուրիշ, նախարարները՝ ուրիշ... Տե՛ս, պատանդ է մնում նաև Աշուշա թդեշխը։

— Աշուշա՞ն...— չնայած իր սեփական հարվածին՝ կայծակնահարի պես եղավ Վասակը։

— Այո, արքայից արքան չգիտեմ ինչու այդպես հրամայեց։

Վասակն զգաց, որ խեղդվում է։ Նա ասաց.

— Ես երջանիկ եմ, որ իմ վրա ես այդքան վստահ... Ես Բաբիկին ու Ատրներսեհին բերել էի ոչ միայն զորական կրթության, այլ որ նվիրեի քեզ, քո ապարանքին մոտ լինելու համար... բայց...

— Նրանք կապրեն իմ ապարանքում... Ես նրանց ոչ մի տեղ չեմ թողնի, որ գնան նեղություններ կրեն։ Ոչ, նրանք լավ ուսում կառնեն իմ մոտ։— է՛, շատ ուրախ եմ, որ դու էլ իմ չափ ուրախ ես։— Որոշեցինք՝ վաղը մեկնում եք։ Մինչև մեկնելը զավակներդ քո մոտ են, մեկնելուցդ հետո իմ զավակներն են։ Գնա, տես, գուրգուրի՛ր, կարոտդ ա՛ռ, մատա՛ղ։

Վասակը զվարթերես գլուխ տվեց Միհրներսեհին և դուրս գընաց նրա մոտից։ Երբ հասավ իր օթևանը, ուր սպասում էին նրան Բաբիկն ու Ներսիկը, նա մի անասելի ցավ զգաց կրծքի տակ։ Նա նոր զգաց, որ շատ է սիրում իր զավակներին և շատ սիրում, որովհետև կորցնում է նրանց... Կորցնում է, քանի որ դեռ բոլորովին հայտնի չէ, թե ինչպես կգնա Հայաստանում ուրացության գործը, ի՞նչ կասի հայոց ժողովուրդը, անգամ այս նախարարները։ Կարո՞ղ կլինի ինքը համոզել նրանց, որ կեղծ ուրացությունը երկար պահեն, գաղտնի մնան քրիստոնյա, չխանգարեն իրեն ուրացության գործը առաջ տանելու...

Մտատանջության, տարակուսանքի, հուզմունքի նյութը շա՛տ...

— Հայրի՛կ, ի՞նչ ասաց Միհրներսեհը,— հարցրեց Ներսիկը։

Վասակը լռեց և միայն խորին կարոտով նայեց իր զավակին։

— Հայրի՛կ, քեզ հետ եմ...

— Չե՞ս տեսնում, վատ բան է ասել աղվեսը,— ասաց Բաբիկը։

Վասակը ներս կանչեց սպասավորին և հրամայեց նժույգ տան։

— Հայրիկ, գնո՞ւմ ենք,— հարցրեց Ներսիկը։

Վասակը չպատասխանեց։

— Հայրիկ, մենք կպատրաստվենք։

Վասակը կրկին չպատասխանեց և դուրս ելավ։

Նա գնում էր ճամբար, Գադիշոյի մոտ։

— Ջսիրեցի Պարսկաստանը,— ասաց Բաբիկը,— խարդախ մարդիկ են։

— Գնանք մեր երկիրը, մտնենք Սպարապետի զորագունդը,— ասաց Ներսիկը,— նա ուրացած չէ։

— Դու այդպե՞ս նկատեցիր... չէ՞... ես էլ...

— Իսկ հայրիկը ուրացել է։

— Հայրիկը տանն էլ ուրացած էր,— ասաց Բաբիկը,— ես ոչ քեզ էի ասում, ոչ մայրիկին, որ չտխրեք։

— Որ հասնենք Սյունիք՝ փախնենք Տարոն, Սպարապետի մոտ։

— Ինչպե՞ս կփախչես. ետ կբերեն։

— Էլի կփախչեմ... ես չեմ կարող կրակապաշտ դառնալ, մայրիկը կմեռնի վշտից,— ասաց Ներսիկը և արտասվեց։

***

Միհրներսեհը Նյուսալավուրտ զորավարի և մոգպետի հետ կազմում էր Հայաստան ուղարկվող մի ռազմական կարավան։ Կազմը՝ նախարարներն էին, մոգեր և պարսիկ զորամաս։ Պատրաստությունները տեսնվում էին հայոց այրուձիի ճամբարի մոտերքում։

Խառնաշփոթ էր չորս կողմը։ Նախարարները, մոգերը և պարսիկ զորավարները շարունակ իրար էին դիպչում, որ զայրացնելու չափ անախորժ էր նախարարների համար։

Նախարարները հավաքված էին Հայոց Այրուձիի ճամբարում, Սրվանձտյա Գարեգինի վրանի առջև, ուր նժույգով եկավ Վասակը։ Նրան ուղեկցում էր Աղվանքի իշխան Վահանը, որ աչքի տակով ծածուկ նայում էր նրա գունատ, այլայլված դեմքին։

— Մարզպանին բան է պատահել,— ասաց Գարեգինը։

— Պատա՞նդ են վերցրել...— հարեց իսկույն Վարդանը՝ տագնապալի ձայնով և վեր կացավ տեղից։

Ուզեց շարժվել դեպի Վասակը, բայց կանգ առավ՝ նկատելով նրա մտադրությունը՝ չմոտենալ նախարարներին։ Եվ իրոք՝ Վասակը գնաց Գադիշոյի վրանը։ Վահանը մոտեցավ նախարարներին

— Մարզպանի երկու զավակներին պատանդ վերցրեց Միհրներսեհը,— ասաց նա նժույգից իջնելով։

— Եվ Աշուշայի՞ն...— վրա բերեց Վարդանը խորապես զգացված։

— Այո...

Բոլորը լուռ՝ գլուխները կախեցին։ Հարվածը թե Վասակին և թե Աշուշային ուժեղ էր և ոմանց համար անսպասելի։

Երկար ժամանակ դառն լռությունը ճնշում էր և թույլ չէր տալիս խոսելու.

— Ուրախ եմ գոնե, որ ճշմարիտը ես եմ, որ պարսիկներին ոչնչից ոչինչ չի կարելի զիջել։— Որովհետև նրանց չի կարելի խաբել։— Որովհետև նրանք ոչ ոքի չեն հավատում։— Որովհետև հենց իրենք ամենքին են խաբում։ Նրանց հետ կռվելն է միայն կարելի։— Որովհետև նրանք միայն կռվում են... Սակայն և բնա՛վ, բնա՛վ ուրախ չեմ, որ երկու պատանիներ պատանդ են մնում մեր հետևից, և մանավանդ Աշուշայի համար ուրախ չեմ, որովհետև նա պարսիկների բարեկամը չէ։

Մի փոքր լռեց և ապա.

— Ափսո՞ս Աշուշային. մենք՝ Վրաստանի հետ՝ կորցրինք նրան... Ափսո՞ս...

***

Յոթ հարյուր մոգեր, Միհր մոգպետի գլխավորությամբ, մի ընտիր հեծելազունդ՝ հայ նախարարների հետ միասին հրաժեշտ էին տալիս Հազկերտին և Միհրներսեհին պալատի առաջ, որ ճանապարհ ընկնեն Հայաստան։ Հայոց այրուձին իր նախկին հրամանատար իշխանների հետ մնում էր պարսից բանակում։ Դեռ Հազկերտը հրամայել էր նախարարներին, որ լրացուցիչ գնդեր կազմեն և ուղարկեն բանակ՝ քուշանների պատերազմի համար։ Սրվանձտյա Գարեգինը, Արսենը և մյուսները կանգնած էին հրապարակում իրենց նժույգների հետ։ Հայոց այրուձին նույնպես կազմ պատրաստ էր։ Նրանք կամենում էին մի փոքր տեղ ուղեկցել մեկնողներին։

Մինչ Հազկերտը դուրս կգար պալատից ընդունելու հրաժեշտի ողջույնները՝ հավաքվածները վերջին տեսակցության խոսքերն էին

ուղղում իրար։ Վարդանը մի կողմ տարավ Գարեգինին և ասաց.

— Հավատարիմներին հայտնիր կեղծ ուրացությունը, քաջալերի՛ր։ Մի ամսից հետո մենք սահմանից դուրս կգանք. այդ օրերը այրուձին փախցրու, ինչպես հնար կլինի։

— Հրամանդ ի կատար,— ասաց Գարեգինը,— ե՞րբ կապրստամբեք...

— Տեսնենք, աստված ինչպես կհաջողի։ Ժողովրդից եմ սպասում. նա ինձ պետք է սատար լինի...

— Գիտե՞ս, որ այրուձիից քսան մարտիկ և մի քանի քահանաներ փախել են,— ասաց Գարեգինը։

— Ե՞րբ։

— Երբ մենք բանտից դուրս եկանք և իմացվեց մեր ուրացությունը։

— Նրանք հիմա լուրը տարա՞ն Հայաստան,— ասաց սարսափը աչքերին Վարդանը,— կսկսվի՞ այնտեղ...

— Թող սկսվի...

— Բայց ամոթա՞նքը, մեր անարգանքը...

Եվ Վարդանը հուզված հառաչեց։

Փողերը փչեցին։ Բոլորը հեծան նժույգները և կազմ պատրաստ շարվեցին։ Դուրս եկավ Հազկերտը՝ Միհրներսեհի և մյուս պալատականների հետ։ Բոլորը երկրպագեցին նրան։ Հազկերտը ձեռը բարձրացրեց և ասաց նախարարներին.

— Ձեզ եմ հանձնում յոթ հարյուր մոգեր և մի գունդ զորք և հրամայում եմ նրանց օգնությամբ շուտափույթ վերջացնել դարձը մազդեզանց օրենքի և իսկույն ևթ վերադառնալ զորագնդերով՝ պատերազմ քուշանների դեմ։

— Հրամանդ ի կատար,— ասաց Վասակը բոլորի փոխարեն։

Առաջ եկավ մովպետան մովպետը և խոսեց.

— Մինչև նավասարդից նավասարդ պետք է փակված լինեն բոլոր եկեղեցիները, նրանց գույքերը հանձնվեն արքունիքին։ Քահանաները չպետք է համարձակվեն իրենց տներում ուսուցանել ժողովրդին։ Նախարարների կանայք պետք է մոգական կրթություն ստանան։ Կմտցնենք բազմակնությունը։ Աղջիկները պետք է ապրեն իրենց հայրերի հետ և քույրերը եղբայրների հետ։ Այս ամենը մի տարվա գլուխ պետք է կատարված լինեն։ Գնացեք խաղաղությամբ։

Նրան փոխարինեց Մուշկան Նյուսալավուրտը, որ ուժեղ ձայնով հրամայեց.

— Արյաց գո՜ւնդ օ՜ն առա՜՜՜ջ ...

Հեծյալ գունդը շարժվեց իր հրամանատարի հետևից։ Նրան հետևեցին նախարարները, որոնց հետ գնացին՝ իբրև արտակարգ պատիվ՝ Միհրներսեհը և Մուշկան Նյուսալավուրտը։ Երթը անցավ քաղաքի բազմամարդ փողոցներով։ Երբ հասան Միհրներսեհի ապարանքին, երթը կանգ առավ, որ Միհրներսեհը բաժանվի։ Այդ միջոցին ապարանքից դուրս վազեցին Բաբիկն ու Ներսիկը։ Նրանք եկան և պետք է անցնեին նախ Վարդանի մոտից։ Բաբիկը Վարդանին ասաց.

— Մեզ տար քո գունդը, Սպարապետ։

Վարդանը զարմացած նայեց Բաբիկին և լավ չլսեց կամ չհասկացավ նրան։

Բաբիկն ու Ներսիկը վազեցին Վասակի մոտ և գանգատվեցին որ ոչ նժույգ են տալիս նրանց և ոչ էլ բաց են թողնում դուրս։ Նա ցույց տվեց երկու ուժեղ զորականների, որ նրանց հետևում էին։

— Դուք պիտի մնաք այստեղ,— ասաց Վասակը։

— Ինչո՞ւ...— զարմացան Բարիկն ու Ներսիկը։

— Դուք պիտի մնաք ուսում ստանալու...

— Ոչ մի ուսում հարկավոր չէ, մեզ տար,— ասաց Բաբիկը հուզված ու վախեցած։

Միհրներսեհը սպասում էր։ Անհարմար էր կանգնեցնել նրան... Վասակը գողության մեջ բռնվածի պես կարմրեց, զայրացավ և հրամայեց.

— Իսկույն ևթ գնացեք ապարանք Հազարապետի մոտ։

— Հայրի՜կ, չենք մնա, կգնա՜նք,— լացեց Ներսիկը։

— Նա մեզ թողնում է, որ սպանեն մեզ...— ասաց Բաբիկը։

— Դե՛, շո՛ւտ, ե՛տ դառեք;— հրամայեց Վասակը,— ես շուտով կվերադառնամ,— նա իջավ նժույգից, գրկեց համբուրեց նրանց, ապա խոնարհ ողջունեց Միհրներսեհին և Մուշկանին։

— Դե,— ասաց զայրագին նա իր զավակներին,— գնացե՛ք։

Նա հրաժեշտի մի շարժում ևս արեց Միհրներսեհի և Մուշկանի կողմը և ձեռով արեց, որ կարավանը շարժվի։ Բաբիկն ու Ներսիկը բարձրաձայն լաց եղան, զորականները բռնեցին նրանց, որ

շարժվեն, նախարարները հրաժեշտի խոսքեր ասացին Միհրներսեհին ու Մուշկանին, Միհրներսեհը դաժան հայացքով շտապեցրեց, որ կարավանը շարժվի։

Վերջապես Բաբիկին և Ներսկին քաշեցին ապարանք, և Վասակը կրկին նշան տվեց, որ շարժվեն։ Ապա նա ողջագուրվեց Սբրվանձտյա Գարեգինի, Արսենի և մյուսների հետ։ Ողջագուրվեցին նաև մյուս նախարարները։

— Դե՛, ճանապա՛րհ,— ասաց Վարդանը ծանր զգացմունքով։

Հայրենիքը վառ պատկերացավ նրա հոգում։ Այն հայրենիքը, որ Այրարատյան դաշտավայրում սրբագործեց Արտաշատի վՃիռը։

Ինչպե՞ս պիտի հանդիպի իրեն հայոց ժողովուրդը... Արդեն փախած զինվորներն ու քահանաները գույժը տարան, հրդեհեցին երկիրը։ Վարդանին պատկերացավ այդ հրդեհը և ահավոր մայրը, կինը, զավակը և հազարավոր կրակե մարդիկ դուրս վազեցին նրա երևակայության մեջ։ Նրանք այրող կշտամբանքով նայեցին նրան և ցնցեցին գլուխները։

— Ա՞յդ է ձեր ուխտը...

Գեմիրճյան Դերենիկ Կարապետի

ՎԱՐԴԱՆԱՆՔ

Գիրք առաջին

Գեղ. խմբագիր՝ Ա.Ճ. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ. Եղանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ա. Ղուկասյան

Պատվեր 671 Տիրաժ 50000

Հանձնված է արտադրության 13/III 1968 թ.։ Ստորագրված է տպագրության 15/VII 1968 թ.։ Թուղթ տպագրական № 2, 60×84 1/16, հրատ. 22,6 մամ.։ տպագր. 27,75 մամ.=23,31 պայմ. մամ.։ Գինը՝ 80 կ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան փող. 91։